

Ա Ջ Դ Ա Գ Ի Ր

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ» ԲԱՅ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ


թողարկողի անվանումը

ՀՀ, ք. Երևան, Ամիրյան 23/1, հեռ. (+374 10) 510 910, ֆաքս (+374 10) 538 904, էլ. փոստ
bank@aeb.am

արժեթղթերի դասը (տեսակը)	սովորական բաժնետոմս (բաժնային արժեթուղթ)
արժեթղթերի ձևը	ոչ փաստաթղթային
արժեթղթերի քանակը	342,466 հատ
արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)	2500 ՀՀ դրամ
արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը	856,165,000 ՀՀ դրամ

ՏԵՂԱԲԱՇԽՈՂ՝ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱՋԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ
ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ:



ՀՀ ԿԲ Նախագահի 08.06.2016թ
թիվ 1/39264 որոշմ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ





		Էջ
	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ	4
Բաժին 1.	ԱՄՓՈՓԱԹԵՐԹ	6
1	Տեղեկատվություն Բանկի և Բանկի գործունեության վերաբերյալ	6
2	Բանկին և արժեթղթերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը	13
3	Բանկի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները	15
4	Բանկի աուդիտն իրականացնող անձի և խորհրդատուների ինքնության մասին համառոտ տեղեկություններ	17
5	Բանկի կառավարման մարմնի անդամները, աշխատակիցները և խոշոր բաժնետերերը	17
6	Առաջարկվող կամ կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության համար նախատեսված արժեթղթերի հիմնական վիճակագրական տվյալները	19
7	Արժեթղթերի առաջարկի և (կամ) դրանց առևտրին թույլտվության համակողմանի նկարագիրը	19
8	Այլ էական տեղեկություններ ըստ բանկի հայեցողության, որոնք նշված չեն նախորդ կետերում	20
9	Ամփոփ ֆինանսական տվյալներ	20
Բաժին 2.	ԹՈՂԱՐԿՎՈՂ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	22
1	Ռիսկային գործոններ	22
2	Հիմնական տեղեկատվություն	23
3	Տեղեկատվություն կապված առաջարկվող (կարգավորվող շուկայում առևտրին թույլատրվող) արժեթղթերի հետ	24
4	Առաջարկի ժամկետները և պայմանները	32
5	Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը	38
6	Վաճառող բաժնետերերը	39
7	Թողարկման և առաջարկի ծախսերը	39
8	Լրացուցիչ տեղեկատվություն	39
Բաժին 3.	ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	40
1	Անկախ աուդիտորները	40
2	Ռիսկային գործոններ	40
3	Տեղեկատվություն Բանկի մասին	46
4	Բիզնեսի նկարագիրը	52
5	Բանկի խմբի կառուցվածքը	60
6	Բանկի հիմնական միջոցները	61
7	Բանկի կապիտալ ռեսուրսները (պասիվները)	62
8	Հետազոտական աշխատանքները և զարգացման ուղղությունները	63
9	Արտոնագրերը և լիցենզիաները	64
10	Զարգացման վերջին միտումները	64





11	Շահույթի կանխատեսումը կամ գնահատումը	65
12	Բանկի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները	67
13	Վարձատրությունները և պարգևավճարները	81
14	Կառավարման մարմինների գործունեությունը	83
15	Աշխատակիցները	83
16	Խոշոր բաժնետերերը և հսկող անձինք	87
17	Փոխկապակցված անձանց հետ գործարքները	88
18	Տեղեկատվություն Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին	89
19	Լրացուցիչ տեղեկատվություն	91
20	Էական պայմանագրերը	98
21	Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը	98
22	Այլ տեղեկատվություն	98
23	Մասնակցությունն այլ անձանց կապիտալում	98
	Հավելված	100

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ազդագրում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի բովանդակությունը:

Ստորագրող անձինք՝

Սարիբեկ Սուքիասյան (անուն, ազգանուն)	Խորհրդի նախագահ (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>12.05.2016թ.</u> (ամսաթիվ)
Արամ Մելիքյան (անուն, ազգանուն)	Խորհրդի անդամ, Խորհրդի նախագահի տեղակալ (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>12.05.2016թ.</u> (ամսաթիվ)
Լուիզա Պետրոսյան (անուն, ազգանուն)	Խորհրդի անդամ, Խորհրդի քարտուղար (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>12.05.2016թ.</u> (ամսաթիվ)
Իննա Յաքարովա (անուն, ազգանուն)	Խորհրդի անդամ (պաշտոն)	 (ստորագրություն)	 (ամսաթիվ)
Ռուբեն Հայրապետյան (անուն, ազգանուն)	Խորհրդի անդամ (պաշտոն)	 (ստորագրություն)	 (ամսաթիվ)
Արմեն Նալչյան (անուն, ազգանուն)	Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>12.05.2016թ.</u> (ամսաթիվ)
Ռուբեն Բադալյան (անուն, ազգանուն)	Վարչության նախագահի տեղակալ-գանձապետ, Գործադիր տնօրենի տեղակալ-գանձապետ (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>12.05.2016թ.</u> (ամսաթիվ)
Օնիկ Չիչյան (անուն, ազգանուն)	Վարչության նախագահի կորպորատիվ և մանրածախ բիզնեսի գծով տեղակալ, Կորպորատիվ և մանրածախ բիզնեսի գծով տնօրենի տեղակալ (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>12.05.2016թ.</u> (ամսաթիվ)

Արտակ Առաքելյան (անուն, ազգանուն)	Վարչության նախագահի գործառնական գծով տեղակալ, Գործառնական գծով տնօրենի տեղակալ (պաշտոն)	 (ստորագրություն) 18.05.2016թ. (ամսաթիվ)
Աստղիկ Մանրիկյան (անուն, ազգանուն)	Վարչության նախագահի միջազգային և զարգացման գծով տեղակալ, Միջազգային և զարգացման գծով տնօրենի տեղակալ (պաշտոն)	 (ստորագրություն) 18.05.2016թ. (ամսաթիվ)
Դավիթ Ազատյան (անուն, ազգանուն)	Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ (պաշտոն)	 (ստորագրություն) 18.05.2016թ. (ամսաթիվ)
Հայկ Ավետիսյան (անուն, ազգանուն)	Վարչության անդամ, Ռազմավարության և ռիսկերի կառավարման վարչության պետ (պաշտոն)	 (ստորագրություն) 18.05.2016թ. (ամսաթիվ)
Վրեժ Զհանգիրյան (անուն, ազգանուն)	Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ (պաշտոն)	 (ստորագրություն) 18.05.2016թ. (ամսաթիվ)
Արամայիս Գալստյան (անուն, ազգանուն)	Վարչության անդամ, Պլաստիկ քարտերի վարչության պետ (պաշտոն)	 (ստորագրություն) 18.05.2016թ. (ամսաթիվ)
Արմեն Նալչյան (անուն, ազգանուն)	Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն (պաշտոն)	 (ստորագրություն) 18.06.2016թ. (ամսաթիվ)



ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Ամփոփաթերթը դիտվում է որպես Ազդագրի ներածական համառոտ նկարագրություն:

Ներդրողն առաջարկվող բաժնետոմսերում ներդրում անելու որոշումը կայացնելիս պետք է ընթերցի ամբողջ Ազդագիրը:

Ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության համար պատասխանատու անձը պատասխանատվություն է կրում ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար միայն այն դեպքում, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է Ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում:

Ներդրողը կարող է ձեռք բերել Ազդագիրը և Ազդագրին կից ներկայացվող փաստաթղթերը փաստաթղթային տարբերակով Բանկի գլխավոր գրասենյակում և մասնաճյուղերում, իսկ էլեկտրոնային տարբերակով՝ Բանկի ինտերնետային էջում՝ www.aeb.am:

Սույն Ազդագրում ներկայացված անձանց անձնական տվյալները ներկայացված են այդ անձանց համաձայնությամբ:

1. Տեղեկատվություն Բանկի և Բանկի գործունեության վերաբերյալ

1.1. Բանկի լրիվ ֆիրմային անվանումն է

հայերեն՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

անգլերեն՝ «ARMENIAN ECONOMY DEVELOPMENT BANK» OPEN JOINT STOCK COMPANY

ռուսերեն՝ «БАНК РАЗВИТИЯ ЭКОНОМИКИ АРМЕНИИ» ОТКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО

Բանկի կրճատ ֆիրմային անվանումն է

հայերեն՝ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ

անգլերեն՝ «ARMECONOMBANK» OJSC

ռուսերեն՝ «АРМЭКОНОМБАНК» ОАО

1.2. Բանկի կազմակերպական-իրավական ձևը՝ բաց բաժնետիրական ընկերություն:

1.3. Բանկի պետական գրանցման վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Ամիրյան 23/1, գրանցման համարը՝ 1:

1.4. Բանկի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Ամիրյան 23/1,

1.5. Կապի միջոցները՝

հեռ. (+374 10) 510 910

ֆաքս (+374 10) 538 904

էլ. փոստ bank@aeb.am

ինտերնետային կայք www.aeb.am

Բանկի հիմնադրման երկիրը՝ Հայաստանի Հանրապետություն:

1.6. Բանկին առնչվող և բաժնետոմսերում ներդրումների հետ կապված հարցերի դեպքում ներդրողները կարող են կապվել «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ

Ռազմավարության և ռիսկերի կառավարման վարչության պետ Հ. Ավետիսյանի հետ հետևյալ հեռախոսահամարով՝ (+374 10) 510 976:

1.7. Թողարկողի համառոտ պատմությունը.

Բանկը (նախկին ԽՍՀՄ Բնակսոցքանկի հայկական հանրապետական բանկ) Հայաստանի Հանրապետության պետական բանկերից առաջինն է վերակազմավորվել բաժնետիրական բանկի:

1991թ. փետրվարի 14-ի ՀՀ Մինիստրների խորհրդի №115 որոշմամբ ԽՍՀՄ Բնակսոցքանկի հայկական հանրապետական բանկի հիման վրա ստեղծվել է Հայաստանի Հանրապետության պետական ակցիոներական կոմերցիոն բանկը (Հայպետկոմբանկ):

1991թ. օգոստոսի 9-ի ՀՀ Մինիստրների խորհրդի №509 որոշմամբ բանկը վերակազմավորվել է Հայաստանի Հանրապետության պետական կոմերցիոն բանկ (Հայպետկոմբանկ) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ գրանցվելով ՀՀ Կենտրոնական բանկում 1991թ. օգոստոսի 26-ին (գրանցում Թիվ 1):

1992թ. նոյեմբերի 16-ին բանկը ՀՀ ԿԲ-ից ստացել է բանկային գործառնություններ իրականացնելու №1 լիցենզիա:

1992թ. դեկտեմբերի 4-ին բանկը ՀՀ ԿԲ-ից ստացել է արտարժույթով գործառնություններ իրականացնելու Գլխավոր լիցենզիա №13:

1993թ. դեկտեմբերի 28-ին ՀՀ ԿԲ վարչության նստի որոշմամբ (արձանագրություն №40) Հայպետկոմբանկը վերագրանցվել է Հայաստանի էկոնոմիկայի զարգացման բաժնետիրական բանկի (Հայէկոնոմբանկ) (գրանցում՝ Թիվ 1/35)՝ ստանալով Թիվ 1/35 բանկային գործառնությունների իրականացման Արտոնագիր:

1994թ. հունվարի 21-ին բանկը ՀՀ ԿԲ-ից ստացել է արտարժույթով գործառնություններ իրականացնելու Գլխավոր լիցենզիա №13:

1995թ. ապրիլի 6-ին բանկը ՀՀ ԿԲ-ից ստացել է Թիվ 1 արտարժույթով գործառնություններ իրականացնելու Գլխավոր արտոնագիր:

1996թ. հոկտեմբերի 31-ին բանկը ՀՀ ԿԲ-ից ստացել է բանկային գործունեության լիցենզիա Թիվ 1:

1998թ. հունիսի 8-ին բանկը ՀՀ ԿԲ-ից ստացել է բանկային գործունեության լիցենզիա Թիվ 1:

2001թ. նոյեմբերի 14-ին բանկը ՀՀ ԿԲ-ից ստացել է բանկային գործունեության լիցենզիա Թիվ 1:

2002թ. Բանկի բաժնետոմսերը ցուցակվել են «ՆԱՍԴԱԲ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի «B» հարթակում, կանոնադրական հիմնադրամը համալրվել է 300 մլն դրամով:

2003թ. Կանոնադրական հիմնադրամը համալրվել է 200 մլն դրամով:

2004թ. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի ու Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի (EBRD) միջև կնքվեց պայմանագիր, որով սկսվեց Բանկի կանոնադրական կապիտալում ՎԶԵԲ-ի մասնակցության գործընթացը, որի արդյունքում ՎԶԵԲ-ի մասնակցությունը Բանկի կանոնադրական կապիտալում կազմել է 25%+1 բաժնետոմս:

2005թ. Կանոնադրական հիմնադրամը համալրվել է 633.3 մլն դրամով:

2007թ. Փետրվարին Moody's Investors Service միջազգային վարկանիշային ընկերությունը ՀՀ բանկային համակարգում առաջին անգամ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն շնորհեց ֆինանսական կայունության E+ և երկարաժամկետ ՀՀ դրամով ու արտարժույթով ավանդների B1 վարկանիշներ, երկուսն էլ Stable Outlook-ով (կայուն

հեռանկար): Ապրիլին, վերանայելով շնորհված վարկանիշները, Moody's Investors Service միջազգային վարկանիշային ընկերությունը Բանկին արժանացրել է ավելի բարձր՝ ֆինանսական կայունության D- և ՀՀ դրամով և արտարժույթով երկարաժամկետ ավանդների Ba3 վարկանիշների, երկուսն էլ Stable Outlook-ով (կայուն հեռանկար):

2009թ. Բանկը դարձել է «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի անդամ:

2011թ. Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկն իրենց գործառնություններով հնարավոր առավելագույն ժամկետով (ևս երեք տարով) երկարաձգեց իր մասնակցությունը (25% +1 բաժնետոմս) «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի կանոնադրական կապիտալում: Բանկը դարձել է "VISA" միջազգային վճարահաշվարկային համակարգի անդամ:

2013թ. Բանկը ստացել է ISO/IEC 27001:2005 (Տեղեկատվության անվտանգության կառավարման համակարգ) հավաստագիր: «MoneyGram» վճարահաշվարկային համակարգը «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ին շնորհեց «Գերազանցության որակ» երկարաժամկետ և արդյունավետ համագործակցության հավաստագիր: Գերմանական Commerzbank AG-ն «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ին շնորհեց «Որակի գերազանցության» մրցանակ՝ 2013թ. միջազգային փոխանցումների բարձր որակ ապահովելու, ինչպես նաև անթերի և արագ իրականացնելու համար:

2014թ.: Ասիական Զարգացման Բանկը Առևտրի ֆինանսավորման ծրագրի շրջանակներում «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ին շնորհեց «Հայաստանում առաջատար գործընկեր բանկ» մրցանակ:

2014 թվականի դեկտեմբերի 3-ին Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկը (ՎԶԵԲ), պարոն Սարիբեկ Սուքիասյանը, պարոն Ռոբերտ Սուքիասյանը, պարոն Խաչատուր Սուքիասյանը եւ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն կնքել են բաժնետոմսերի գնման պայմանագիր, որով ՎԶԵԲ-ը համաձայնել է վաճառել իր 233,335 սովորական բաժնետոմսերը հինգ հավասար մասնաբաժիններով (46,667 ամեն տրանշ) հինգ տարվա ընթացքում՝ սկսած 2014 թվականի դեկտեմբերից մինչև 2019-ի մարտի 2-ը:

2015 թ. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն դարձել է արժեթղթերի հաշվարկային համակարգի անդամ: «MoneyGram» վճարահաշվարկային համակարգը «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ին շնորհել է «Պրոֆեսիոնալիզմի և Հայաստանում փոխանցման ծառայությունների զարգացմանը նպաստելու համար» հավաստագիր: «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի և Ղազախստանի «ԲՏԱ բանկ» ՓԲԸ-ի ղեկավարների միջև ստորագրվեց երկու բանկերի միացման հուշագիր՝ ՀՀ-ում գրանցված և գործունեություն իրականացնող «ԲՏԱ բանկ» ՓԲԸ-ն «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ին միացնելու նպատակով:

2016թ. մարտի 18-ին կայացած «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ և «ԲՏԱ բանկ» ՓԲԸ բաժնետերերի ժողովներում որոշում կայացվեց «ԲՏԱ բանկ» ՓԲԸ-ն «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ին միացնելու վերաբերյալ: 06.05.2016թ.-ին ՀՀ Կենտրոնական բանկը նախնական հավանություն է տվել միացման պայմանագրի կնքմանը:

Բանկին տրված լիցենզիաները և արտոնագրերն անժամկետ են:

1.8. Բանկի ռազմավարությունը

Բանկի ռազմավարական թիրախը՝ որպես ունիվերսալ կառույց շարունակական զարգացման ապահովումն է՝ մատուցելով հաճախորդներին միջազգային չափանիշներին

համապատասխան բանկային ծառայություններ, ապահովելով Բանկի հաճախորդների և բաժնետերերի շահերի պաշտպանվածությունը:

Բանկի գերակա նպատակը հաճախորդներին բազմաբնույթ և որակյալ ծառայությունների ամբողջական փաթեթի մատուցումն է՝ տարածաշրջանային ներկայացվածության ընդլայնման, բիզնեսի կառավարման ժամանակակից մեթոդների և տեղեկատվական տեխնոլոգիաների արդի ձեռքբերումների կիրառման միջոցով առավելագույնս նպաստելով տնտեսության զարգացմանը, ապահովելով Բանկի շահութաբեր գործունեությունը և համապատասխան զարգացումն ու աճը:

Բանկի՝ որպես կայացած և հեռանկարային ֆինանսական կառույցի, գնահատականը պետք է համարել նաև «Moody's Investors Service» ընկերության կողմից «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ին ռեյտինգների շնորհման, ինչպես նաև ISO/IEC 27001:2005 (Տեղեկատվության անվտանգության կառավարման համակարգ) հավաստագրի ստացման փաստը, որը մեծ հեռանկարներ է բացում բանկի միջազգային ճանաչման, միջազգային ֆինանսավարկային կառույցների հետ համագործակցության էլ ավելի խորացման և բանկի հետագա զարգացման տեսանկյունից:

Նախատեսելով զարգացման բոլոր ոլորտների թե՛ քանակական, թե՛ որակական աճ, շարունակվելու է մեծ ուշադրություն դարձվել ռիսկերի կառավարման համակարգի, ներքին հսկողության համակարգի, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի, կորպորատիվ կառավարման արժեքների զարգացմանը, բանկային ծառայությունների մատուցման տեխնոլոգիաների կատարելագործմանը, միջազգային գործառնությունների, ինչպես նաև միջազգային ֆինանսավարկային կառույցների հետ համագործակցության ընդլայնմանը:

Բանկի ռազմավարության հիմնական խնդիրները բխում են բանկի ֆինանսական քաղաքականության գլխավոր խնդիրներից՝ պահպանել և ավելացնել բանկի ընդհանուր կապիտալը, ապահովել բանկի կայուն իրացվելիությունը, արդյունավետ կառավարելով բանկի ֆինանսական միջոցները, ապահովել եկամուտների այնպիսի մակարդակ, որը թույլ կտա ոչ միայն փոխհատուցել անհրաժեշտ ծախսերը, այլ նաև ձևավորել բավարար պահուստներ՝ լուծելով բանկի կապիտալիզացիայի խնդիրները:

Բանկն իր առաքելությունը տեսնում է որպես միջազգային չափանիշներով ռիսկերի կառավարման գործուն համակարգով, առաջընթաց տեխնոլոգիաներով զարգացող, օրինապաշտ, թափանցիկ կառույցի զարգացում, որը իր գործունեությամբ նպաստում է ոչ միայն ՀՀ բանկային համակարգի կայունությանը, այլև երկրի տնտեսության զարգացմանը:

Որպես ունիվերսալ բանկային կառույց՝ փոխշահավետ պայմաններով, օգտագործելով իր լայն մասնաճյուղային ցանցը, ստանձնած բոլոր պարտավորությունների կատարում թե՛ հաճախորդների, թե՛ գործընկերների /ներքին, միջազգային/ նկատմամբ՝ մատուցելով բանկային ծառայությունների ամբողջական փաթեթ, վերջինիս մշտական ընդլայնմամբ և բազմազանմամբ, միջազգային չափանիշներին մոտեցմամբ:

Որպես գործատու՝ արդյունավետ կադրային քաղաքականության վարմամբ, ապահովել իր աշխատակիցների մասնագիտական առաջընթացը և բարեկեցությունը՝ նրանց աշխատանքային գործունեության և ունակությունների համաձայն:

1.9. Բանկի կանոնադրական կապիտալը և վերջինիս կառուցվածքը

Բանկի փաստացի համալրված կանոնադրական հիմնադրամի չափը կազմում է 3,167,022,500 ՀՀ դրամ, որը ներառում է 1,266,809 սովորական բաժնետոմս, յուրաքանչյուրը 2,500 ՀՀ դրամ անվանական արժեքով:

Բանկի հայտարարած բաժնետոմսերի քանակը կազմում է 2,000,000 սովորական բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 2500 դրամ անվանական արժեքով:

Առ 01.01.2016թ. բաժնետերերի կողմից վճարված է կանոնադրական կապիտալի 100%-ը:

Առ 01.04.2016թ. Բանկի սովորական բաժնետոմսերի սեփականատերերի քանակը կազմում է 3,031 բաժնետեր:

1.10. Բանկի բիզնեսի նկարագիրը (մատուցված ծառայությունները)

Համաձայն Բանկի կանոնադրության.

1.Բանկը ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կարող է իրականացնել հետևյալ ֆինանսական գործառնությունները.

ա/ ընդունել ցպահանջ և ժամկետային ավանդներ.

բ/ տրամադրել առևտրային և սպառողական վարկեր, այդ թվում՝ տալ հիփոթեքային վարկեր, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ.

գ/ տրամադրել բանկային երաշխիքներ և ակրեդիտիվներ (վարկային նամակներ).

դ/ բացել և վարել հաշիվներ, այդ թվում՝ այլ բանկերի թղթակցային հաշիվներ.

ե/ մատուցել այլ վճարահաշվարկային ծառայություններ և (կամ) այլ կերպ սպասարկել հաճախորդների հաշիվները.

զ/ թողարկել, գնել (զեղչել), վաճառել և սպասարկել արժեթղթեր, նման այլ գործառնություններ կատարել.

է/ ինվեստիցիոն (ներդրումային) և բաժանորդագրական գործունեություն իրականացնել.

ը/ մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անձանց արժեթղթերն ու ներդրումները (հավատարմագրային (լիազորագրային) կառավարում).

թ/ գնել, վաճառել և կառավարել բանկային ոսկի և ստանդարտացված ձուլակտորներ և հուշադրամ.

ժ/ գնել և վաճառել (փոխանակել) արտարժույթ, այդ թվում՝ կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ.

ժա/ իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ),

ժբ/ ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ.

ժգ/ մատուցել ֆինանսական և ինվեստիցիոն խորհրդատվություն,

ժդ/ ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքերի հետ ստացման գործունեություն,

ժզ/ իրացնել ապահովագրական վկայագրեր և (կամ) պայմանագրեր, օրենքով սահմանված կարգով իրականացնել ապահովագրական գործակալի գործառնություններ,

ժէ/ իրականացնել «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով նախատեսված այլ գործառնություններ:


2. Բանկը նշված գործառնությունները կատարում է ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով:

3. ՀՀ Կենտրոնական բանկի թույլտվությամբ Բանկը կարող է իրականացնել նաև այնպիսի գործունեություն կամ գործառնություններ, որոնք բխում են կամ սերտորեն կապված են բանկային գործունեության հետ:
4. Նշված գործառնությունները Բանկը կատարում է պայմանագրերի հիման վրա, որոնցում սահմանվում են կողմերի իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը, տոկոսադրույքները, արտոնությունները, տույժերը, պարտավորությունների ապահովման ձևերը, որոնք չեն հակասում ՀՀ օրենսդրությանը:
5. Բանկն իրավունք ունի իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտավորություններ, լինել հայցվոր և պատասխանող դատարանում:
6. Առանց ՀՀ Կենտրոնական բանկի նախնական համաձայնության Բանկին արգելվում է այնպիսի գործարքներ կամ գործառնություններ իրականացնելը, որոնց արդյունքում Բանկի մասնակցությունը՝
 - ա/ մեկ այլ անձի կանոնադրական հիմնադրամում 4.99 տոկոս և ավելին է,
 - բ/ մեկ այլ անձի կանոնադրական հիմնադրամում գերազանցում է Բանկի ընդհանուր կապիտալի 15%-ը,
 - գ/ բոլոր անձանց կանոնադրական հիմնադրամներում գերազանցում է Բանկի ընդհանուր կապիտալի 35%-ը :
 Սույն կետով նախատեսվածը կարգավորվում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով:
7. Բանկն իրավունք ունի թղթակցային հաշիվներ բացել այլ բանկերում:

31.12.15թ. դրությամբ Բանկը թղթակցային հաշիվներ ունի տեղական և միջազգային 23 բանկերում:

Կարևորելով դրամական փոխանցումների համակարգի ընդլայնման դերը՝ Բանկն անդամակցում է հետևյալ միջազգային արագ դրամական փոխանցումների համակարգերին. «MoneyGram», «Anelik», «Ria Money Transfers», «Sigue Money Transfer», «IntelExpress», «Unistream», «Converse Transfer» և «Golden Money Transfer» համակարգերով՝ իր հաճախորդին տալով ընտրության լայն հնարավորություն:

1.11. Բանկի կազմակերպական կառուցվածքը ներկայացվում է ստորև.



1.12. Բանկի տրամադրության տակ եղած ակտիվների համարժեքությունը և պիտանելիությունը.

№	Ցուցանիշի անվանումը	2015	2014	2013
1	Ակտիվներ, այդ թվում՝	108,395,188	91,919,011	74,163,340
2	Եկամտաբեր ակտիվներ	94,418,175	81,910,484	61,385,771
3	Հաճախորդներին տրված վարկեր	59,175,240	52,057,388	40,693,742
4	Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	7,128,134	5,147,575	2,521,027
5	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	8,866,001	6,168,289	7,145,525
6	Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	27,550,590	22,354,455	17,866,741
7	Կանխիկ դրամական միջոցներ	9,133,956	5,392,027	8,466,289
8	Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	0	54,263	0
9	Հակադարձ հետգնման պայմանագրեր	832,166	1,255,797	1,379,833
10	Ներդրումներ ասոցիացված	0	194,991	245,192

	կազմակերպություններում			
11	Եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը (%)	87.11%	89.11%	82.77%

Արժեզրկված (չաշխատող) վարկերի և փոխատվությունների կառուցվածքը.
(հազ. դրամ).

Վարկերն ըստ ոլորտների	31.12.2015թ	31.12.2014թ	31.12.2013թ
Սպառողական	18,876,453	19,097,594	12,891,853
Ոչ ժամկետանց	18,428,482	18,847,555	12,807,495
Ժամկետանց	447,971	250,039	84,358
Առևտուր	10,716,641	11,597,481	8,719,094
Ոչ ժամկետանց	10,264,384	11,596,120	8,689,872
Ժամկետանց	452,257	1,361	29,222
Արտադրություն	9,206,363	7,018,876	7,546,671
Ոչ ժամկետանց	9,184,161	7,013,698	7,535,777
Ժամկետանց	22,202	5,178	10,894
Շինարարություն	4,268,965	1,479,100	752,081
Ոչ ժամկետանց	4,268,965	1,479,100	752,081
Ժամկետանց	0	0	0
Հիփոթեքային	3,216,232	3,195,868	3,189,897
Ոչ ժամկետանց	3,197,640	3,176,142	3,183,773
Ժամկետանց	18,592	19,726	6,124
Գյուղատնտեսություն	1,939,702	1,773,552	1,978,443
Ոչ ժամկետանց	1,914,548	1,766,227	1,973,852
Ժամկետանց	25,154	7,325	4,591
Այլ ճյուղեր	11,953,275	8,631,475	6,433,148
Ոչ ժամկետանց	11,901,529	8,629,288	6,294,101
Ժամկետանց	51,746	2,187	139,047

Արժեզրկված (չաշխատող) վարկերի վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Բանկի հրապարակվող հաշվետվություններին կից ծանոթագրություններում (Ծանոթագրություն 16 Հաճախորդներին տրված վարկեր):

2. Բանկին և արժեթղթերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

2.1. Ռիսկերի կառավարման գործընթացը բաղկացած է հետևյալ փուլերից՝ Բանկի գործունեության ընթացքում հնարավոր ռիսկերի նույնականացում, գնահատում, հսկողություն, հաղորդակցում-հաշվետվություն և գնահատված ռիսկերին արձագանքում: Ընդ որում ռիսկերին արձագանքման փուլն իրականացվում է ռիսկից խուսափման, ռիսկի նվազեցման, ռիսկի ընդունման կամ ռիսկի փոխանցման տարբերակներով: Տնտեսամաթեմատիկական մոդելավորման գործիքների կիրառման, գործընթացների կանոնակարգման, վերլուծության, կանխատեսման և ներքին հսկողության համակարգի մշտական կատարելագործման արդյունքում՝

Բանկը հնարավորություն է ստանում ռիսկերի կառավարման համակարգի միջոցով ապահովել ռիսկ-եկամուտ օպտիմալ հարաբերակցությունը՝ Բանկի զարգացման կշռադատված ռազմավարության պայմաններում բացառելով կամ նվազագույնի հասցնելով Բանկի գործունեության ընթացքում հնարավոր ռիսկերով պայմանավորված կորուստները և ապահովելով գործող նորմատիվային դաշտի պահանջները: Բանկի ռիսկերի կառավարման համակարգը ներքին և արտաքին միջավայրերում տեղի ունեցող փոփոխություններին, բանկի ռազմավարական խնդիրներին և իրականացվող գործառնությունների ծավալային և որակական բնութագրերին համապատասխանեցնելու նպատակով ռիսկերի կառավարման ոլորտը կանոնակարգող ներքին իրավական ակտերը պարբերաբար վերանայվում են:

Համաձայն ««ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ռիսկերի կառավարման քաղաքականության» պահանջների, հաշվի առնելով Բանկային վերահսկողության բազելյան կոմիտեի և GARP-ի (Generally Accepted Risk Principles) ռիսկերի կառավարման սկզբունքները՝ բանկում մշակվել և ներդրվել են հետևյալ հիմնական ռիսկատեսակների գնահատման և կառավարման մոդելները.

- վարկային ռիսկ,
- շուկայական ռիսկ
 - ✓ տոկոսադրույքների փոփոխման ռիսկ,
 - ✓ արտարժույթային ռիսկ,
 - ✓ գնային ռիսկ,
- իրացվելիության ռիսկ,
- գործառնական ռիսկ,
- Հեղինակության ռիսկ,
- Վարակի ռիսկ,
- Ռազմավարական ռիսկ,
- Օրենսդրական, նորմատիվային դաշտի փոփոխության ռիսկ,
- Երկրի ընդհանուր և տնտեսական միջավայրի ռիսկ:

Բանկին առնչվող ռիսկերի վերաբերյալ առավել մանրամասն ներկայացված է սույն Ազդագրի Բաժին 3-ի («Բաժնետոմսեր թողարկողի մասին տեղեկատվություն») 2-րդ կետում («Ռիսկային գործոններ»):

- 2.2. Բաժնետոմսերում ներդրումները կապված են որոշակի հավանական ռիսկերի հետ, ուստի ներդրում կատարելու վերաբերյալ որոշում ընդունելուց առաջ ներդրողները պետք է մանրակրկիտ ուսումնասիրեն և վերլուծեն ներդրման հետ կապված և Ազդագրում բացահայտված հավանական ռիսկերը, ինչպես նաև ներկայացված այլ տեղեկատվությունը: Անհրաժեշտ է, այնուամենայնիվ, հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ Ազդագրում ներկայացված հնարավոր ռիսկերի ցանկը սպառիչ չէ և հավանական է նաև անկանխատեսելի բնույթի որոշակի այլ ռիսկերի առաջացումը և հետևաբար ներդրողը ներդրման վերաբերյալ որոշում կայացնելիս պետք է լիարժեք գիտակցի ներդրման էությունը և առաջնորդվի նաև իր սեփական փորձով, նպատակներով և սպասումներով:

Ներկայացված ռիսկերից յուրաքանչյուրը կարող է որոշակի բացասական ազդեցություն ունենալ ինչպես Բանկի վիճակի, այնպես էլ շուկայում առկա իրավիճակի վրա՝ արդյունքում հանգեցնելով շուկայում բաժնետոմսերի

շրջանառելիության՝ իրացվելիության անկմանը: Բանկի կողմից որպես առավել էական ռիսկեր դիտարկվում են.

ա) Բաժնետոմսերի իրացվելիության ռիսկը, որը կարող է առաջանալ շուկայում ձևավորված իրավիճակի կտրուկ փոփոխության կամ Բանկի ֆինանսական վիճակի վատթարացման հետևանքով, որի արդյունքում, բաժնետոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը՝ հանգեցնելով դրանց գնի անկմանը: Ներդրողը կարող է շուկայական տվյալ իրավիճակում առկա բաժնետոմսերի ցածր իրացվելիության պատճառով հնարավորություն չունենալ վաճառելու բաժնետոմսերը առանց էական կորուստների կամ ընդհանրապես հնարավորություն չունենալ դրանք վաճառելու:

բ) Արտարժույթային ռիսկը, որը կարող է առաջանալ փոխարժեքի կտրուկ տատանումների հետևանքով, որոնք կարող են էապես ազդել ինչպես Բանկի, այնպես էլ արժեթղթերի շուկայի վրա: Բաժնետոմսերը գնանշվելու և վճարվելու են ՀՀ դրամով, ուստի, այն ներդրողների համար, որոնց ֆինանսական հոսքերն այլ արժույթով են, տվյալ բաժնետոմսերը պարունակում են զգալի արտարժույթային ռիսկեր:

գ) Տոկոսադրույքի ռիսկը, որը կարող է հետևանք լինել շուկայում գործող տոկոսադրույքների կտրուկ փոփոխության, ինչը որպես այլընտրանքային ներդրման ուղղություն, անուղղակիորեն ազդում է բաժնետոմսերի գների վրա:

դ) Բանկի հեղինակության ռիսկը, որը անմիջական ազդեցություն ունի բաժնետոմսերի գրավչության և գնի վրա:

Թողարկվող արժեթղթերին առնչվող ռիսկերի վերաբերյալ առավել մանրամասն ներկայացված է սույն Ազդագրի Բաժին 2-ի («Թողարկվող բաժնետոմսերի մասին տեղեկատվություն») 1-ին կետում («Ռիսկային գործոններ»):

3. Բանկի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները

Բանկն իր գործունեությունն իրականացնում է համաձայն Բանկի խորհրդի կողմից հաստատված հեռանկարային զարգացման ծրագրերի՝ դրանցում սահմանված նպատակների, սկզբունքների, գործունեության հիմնական ուղղությունների և խնդիրների լուծման ուղիների: Բանկի գործունեությունը մշտապես գտնվում է խորհրդի և գործադիր մարմնի ուշադրության ներքո, որոնք օպերատիվ արձագանքում են ներքին գործոնների, արտաքին միջավայրի և շուկայական իրավիճակների փոփոխություններին՝ համապատասխանեցնելով Բանկի կողմից առաջարկվող ծառայությունները և դրանց սակագները շուկայի պահանջներին, Բանկի կողմից իրականացվող գործառնությունների հսկողական մեխանիզմները՝ գործող օրենսդրական դաշտի պահանջներին:

Բանկի՝ որպես կայացած և հեռանկարային ֆինանսական կառույցի, գնահատականը պետք է համարել նաև ISO/IEC 27001:2005 (Տեղեկատվության անվտանգության կառավարման համակարգ) հավաստագրի ստացման փաստը, որը մեծ հեռանկարներ է բացում բանկի միջազգային ճանաչման, միջազգային ֆինանսավարկային կառույցների հետ համագործակցության էլ ավելի խորացման և բանկի հետագա զարգացման տեսանկյունից:

Բանկի գործունեության կարևորագույն գնահատականներից է 2015թ.-ի արդյունքներով ապահովված 368,787 հազ. դրամ շահույթը:

2015թ.-ի վերջին ապահովվեց կապիտալի 11.0 մլրդ դրամ մակարդակ՝ հիմնականում ձևավորված շահույթի հաշվին՝ վերագնահատման պահուստների զգալի նվազման պայմաններում:

2015թ., նախորդ տարվա համեմատ, բանկի ակտիվներն աճել են 16.9 մլրդ դրամով կամ մոտ 18.4%-ով՝ կազմելով մոտ 108.8 մլրդ դրամ, ընդ որում՝ եկամտաբեր ակտիվներից հաճախորդներին տրված վարկերն աճել են 7.2 մլրդ դրամով կամ մոտ 13.8%-ով՝ կազմելով 59.2 մլրդ դրամ, իսկ հաճախորդների նկատմամբ պարտավորությունները՝ 4.4 մլրդ դրամով կամ 7.7%-ով՝ կազմելով մոտ 62.0 մլրդ դրամ, ինչը վկայում է բանկի նկատմամբ հաճախորդների վստահության շարունակական աճի մասին:

2014թ.-ին շահույթը կազմել է 886,023 հազ. դրամ 2013թ.-ի ցուցանիշի համեմատ աճելով 23.6%-ով, կապիտալն աճել է 77.1 մլն դրամով կամ 0.7%-ով՝ կազմելով 11.1 մլրդ դրամ:

2014թ., նախորդ տարվա համեմատ, բանկի ակտիվներն աճել են 17.8 մլրդ դրամով կամ մոտ 24.0%-ով՝ կազմելով մոտ 92.0 մլրդ դրամ, ընդ որում՝ եկամտաբեր ակտիվներից հաճախորդներին տրված վարկերն աճել են 11.4 մլրդ դրամով կամ մոտ 28.0%-ով՝ կազմելով 52.1 մլրդ դրամ, իսկ հաճախորդների նկատմամբ պարտավորությունները՝ 13.1 մլրդ դրամով կամ 29.6%-ով՝ կազմելով 57.5 մլրդ դրամ, ինչը վկայում է բանկի նկատմամբ հաճախորդների վստահության շարունակական աճի մասին:

2013թ.-ին շահույթը կազմել է 716,701 հազ. դրամ 2012թ.-ի ցուցանիշի համեմատ աճելով ավելի քան երկու անգամ, կապիտալն աճել է 1.6 մլրդ դրամով կամ 17.0%-ով՝ կազմելով 11.1 մլրդ դրամ:

2013թ., նախորդ տարվա համեմատ, բանկի ակտիվներն աճել են 10.3 մլրդ դրամով կամ 16.1%-ով՝ կազմելով 74.2 մլրդ դրամ, ընդ որում՝ եկամտաբեր ակտիվներից հաճախորդներին տրված վարկերն աճել են 7.3 մլրդ դրամով կամ 21.9%-ով՝ կազմելով 40.7 մլրդ դրամ, իսկ հաճախորդների նկատմամբ պարտավորությունները՝ 8.2 մլրդ դրամով կամ 22.5%-ով՝ կազմելով 44.4 մլրդ դրամ, ինչը վկայում է բանկի նկատմամբ հաճախորդների վստահության շարունակական աճի մասին:

Նախատեսելով զարգացման բոլոր ոլորտների թե՛ քանակական, թե՛ որակական աճ, շարունակվելու է մեծ ուշադրություն դարձվել ռիսկերի կառավարման համակարգի, ներքին հսկողության համակարգի, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի, կորպորատիվ կառավարման արժեքների զարգացմանը, բանկային ծառայությունների մատուցման տեխնոլոգիաների կատարելագործմանը, միջազգային գործառնությունների, ինչպես նաև միջազգային ֆինանսավարկային կառույցների հետ համագործակցության ընդլայնմանը:

31.03.2016թ. դրությամբ Բանկի կապիտալը կազմել է մոտ 19.7 մլրդ դրամ՝ աճելով տարվա վերջի համեմատ 31.2%-ով: Այլ ցուցանիշների գծով 2016թ. ընթացքում՝ (մինչև Ազդագրի գրանցման ներկայացման օրը) Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի էական փոփոխություն տեղի չի ունեցել և Բանկը պահպանում է ակտիվների և այլ հիմնական ցուցանիշների աճի միտումները:

«ԲՏԱ բանկ» ՓԲԸ-ն «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ին միացնելու նպատակով 2015թ. ստորագրված հուշագրի համաձայն՝ 2016թ. մարտի 18-ին կայացած «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ և «ԲՏԱ բանկ» ՓԲԸ բաժնետերերի ժողովներում որոշում կայացվեց «ԲՏԱ բանկ» ՓԲԸ-ն «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ին միացնելու վերաբերյալ: 06.05.2016թ.-ին ՀՀ Կենտրոնական բանկը նախնական հավանություն է տվել միացման պայմանագրի կնքմանը:

Գործունեության համար անհրաժեշտ բոլոր արտոնագրերը և լիցենզիաներն ուժի մեջ են, դատական հայցեր, որոնք էական ազդեցություն են ունեցել կամ ունենալու Բանկի ֆինանսական վիճակի և շահութաբերության վրա առկա չեն, կազմակերպական էական փոփոխություններ չեն սպասվում:

4. Բանկի աուդիտն իրականացնող անձի և խորհրդատուների ինքնության մասին համառոտ տեղեկություններ

Բանկի 2013թ.-ի և 2014թ.-ի աուդիտն իրականացրել է «Դելոյթ Արմենիա» ՓԲԸ-ն, որի գտնվելու վայրը և կապի միջոցներն են.

«Դելոյթ Արմենիա» ՓԲԸ

Գործադիր տնօրեն՝ Սրբուհի Հակոբյան

ՀՀ, ք. Երևան 0002, Ամիրյան 4/6, հեռ. +374(10) 52 65 20, ֆաքս +374 (10) 52 75 20, www.deloitte.ru:

Բանկի 2015թ.-ի գործունեության աուդիտն իրականացնում է «Դելոյթ Արմենիա» ՓԲԸ-ն:

5. Բանկի կառավարման մարմնի անդամները, աշխատակիցները և խոշոր բաժնետերերը

5.1. Թողարկողի կառավարման մարմնի անդամները.

Բանկի կանոնադրությամբ սահմանված են Բանկի կառավարման հետևյալ մարմինները.

- Բաժնետերերի ընդհանուր ժողով (այսուհետ՝ Ընդհանուր ժողով), որը Բանկի կառավարման բարձրագույն մարմինն է,
- Բանկի խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ), որն ընտրվում է բաժնետերերի ընդհանուր ժողովում,
- Բանկի գործադիր տնօրենը, որն ի պաշտոնե վարչության նախագահն է,
- Բանկի վարչությունը (այսուհետ՝ Վարչություն):

Բանկի խորհուրդը կազմված է հինգ անդամներից.

№	անունը, ազգանունը	գբաղեցրած պաշտոնը	փորձառությունը
1	Սարիբեկ Սուքիասյան	Խորհրդի նախագահ	25 տարի
2	Արամ Մելիքյան	Խորհրդի անդամ, Խորհրդի նախագահի տեղակալ	29 տարի
3	Լուիզա Պետրոսյան	Խորհրդի անդամ, խորհրդի քարտուղար	11 տարի
4	Իննա Յաքբարովա	Խորհրդի անդամ	33 տարի
5	Ռուբեն Հայրապետյան	Խորհրդի անդամ	14 տարի

Բանկի վարչությունը կազմված է 10 անդամներից.

№	անունը, ազգանունը	գբաղեցրած պաշտոնը	փորձառությունը
1	Արմեն Նալչյան	Վարչության նախագահ,	31 տարի

		Գործադիր տնօրեն	
2	Ռուբեն Բադալյան	Վարչության նախագահի տեղակալ-գանձապետ, Գործադիր տնօրենի տեղակալ-գանձապետ	13 տարի
3	Օնիկ Չիչյան	Վարչության նախագահի կորպորատիվ և մանրածախ բիզնեսի գծով տեղակալ, Գործադիր տնօրենի կորպորատիվ և մանրածախ բիզնեսի գծով տեղակալ	14 տարի
4	Արտակ Առաքելյան	Վարչության նախագահի գործառնական գծով տեղակալ, Գործադիր տնօրենի գործառնական գծով տեղակալ	11 տարի
5	Աստղիկ Մանրիկյան	Վարչության նախագահի միջազգային և զարգացման գծով տեղակալ, Գործադիր տնօրենի միջազգային և զարգացման գծով տեղակալ	10 տարի
6	Դավիթ Ազատյան	Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ	14 տարի
7	Հայկ Ավետիսյան	Վարչության անդամ, Ռազմավարության և ռիսկերի կառավարման վարչության պետ	11 տարի
8	Վրեժ Զհանգիրյան	Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ	9 տարի
9	Արամայիս Գալստյան	Վարչության անդամ, Պլաստիկ քարտերի վարչության պետ	8 տարի
10	Նարինե Կարապետյան	Վարչության անդամ, Վարկավորման վարչության պետ	10 տարի

5.2. Բանկի աշխատակիցները.

Բանկի աշխատակիցների ընդհանուր թիվը 31.12.15թ. դրությամբ կազմում է 904 աշխատակից:

5.3. Բանկի խոշոր բաժնետերերը.

№	ազգանունը, անունը, հայրանունը	մասնակցություն
---	-------------------------------	----------------

1	Սուբիասյան Սարիբեկ Ալբերտի	25.9%
2	Սուբիասյան Խաչատուր Ալբերտի	14.38%
3	Սուբիասյան Ռոբերտ Ալբերտի	14.97%
4	Սուբիասյան Էդուարդ Ալբերտի	11.18%
5	Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ	11.05%

6. Առաջարկվող կամ կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության համար նախատեսված արժեթղթերի հիմնական վիճակագրական տվյալները

արժեթղթերի տեսակը՝ *սովորական բաժնետոմս (բաժնային արժեթուղթ)*

արժեթղթերի քանակը՝ 342,466 հատ

արժեթղթերի ընդհանուր ծավալը (շուկայական արժեքով)՝ 5,000,003,600 ՀՀ դրամ

արժեթղթերի ընդհանուր ծավալը (անվանական արժեքով)՝ 856,165,000 ՀՀ դրամ

արժեթղթերի անվանական արժեքը՝ 2,500 ՀՀ դրամ

արժեթղթերի արժույթը՝ ՀՀ դրամ

արժեթղթերի նպատակը՝ միջոցների ներգրավում

միջոցների օգտագործման նախատեսվող ուղիները՝ *Թողարկողի կողմից բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքում ներգրավված դրամական միջոցները հիմնականում ուղղվելու են փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորմանը, սպառողական վարկերի տրամադրմանը և պետական արժեթղթերում ներդրումների իրականացմանը:*

7. Արժեթղթերի առաջարկի համակողմանի նկարագիրը

Թողարկվող բաժնետոմսերի տեղաբաշխումն իրականացվելու է բաց բաժանորդագրության միջոցով:

Համաձայն օրենսդրության՝ Բանկի կողմից բաց բաժանորդագրության միջոցով քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխման դեպքում Բանկի բաժնետերերը չունեն բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի ձեռքբերման նախապատվության իրավունք: Եթե տեղաբաշխվող բաժնետոմսերի դիմաց վճարումն իրականացվելու է դրամական միջոցներով, ապա Բանկի կանոնադրությամբ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի համար կարող է նախատեսվել քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի ձեռքբերման նախապատվության իրավունք՝ իրենց պատկանող քվեարկող բաժնետոմսերի քանակին համամասնորեն:

Տեղաբաշխվող բաժնետոմսերի դիմաց վճարումն իրականացվելու է դրամական միջոցներով: Բանկի կանոնադրությամբ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի համար քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի ձեռքբերման նախապատվության իրավունք (իրենց պատկանող քվեարկող բաժնետոմսերի քանակին համամասնորեն) նախատեսված չէ: Թողարկմանը զուգահեռ բաժնետերերի կողմից տնօրինվող բաժնետոմսերի վաճառք չի նախատեսվում:

8. Այլ էական տեղեկություններ ըստ բանկի հայեցողության, որոնք նշված չեն նախորդ կետերում

Բանկի կանոնադրական հիմնադրամին, բաժնետերերին, շահույթի բաշխմանը և կառավարման մարմիններին վերաբերող լրացուցիչ տեղեկատվություն կարելի է ստանալ Բանկի կանոնադրության 3-6 գլուխներում:

9. Ամփոփ ֆինանսական տվյալներ

հազ. դրամ

№	Ցուցանիշի անվանումը	2015	2014	2013
	Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	449,266	816,796	716,701
	Սեփական կապիտալի միջին մեծություն*	11,868,510	11,075,369	10,166,736
	Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE), %	3.79%	7.37%	7.05%
	Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	449,266	816,796	716,701
	Ընդհանուր ակտիվների միջին մեծություն*	98,438,680	84,528,828	69,653,244
	Ակտիվների շահութաբերություն (ROA), %	0.46%	0.97%	1.03%
	Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	449,266	816,796	716,701
	Գործառնական եկամուտ	6,304,775	6,785,457	5,989,751
	Զուտ շահույթի մարժա (NPM), %	7.13%	12.04%	11.97%
	Գործառնական եկամուտ	6,304,775	6,785,457	5,989,751
	Ընդհանուր ակտիվների միջին մեծություն*	98,438,680	84,528,828	69,653,244
	Ակտիվների օգտագործման գործակից (AU), %	6.40%	8.03%	8.60%
	Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	98,438,680	84,528,828	69,653,244
	Սեփական կապիտալի միջին մեծություն*	11,868,510	11,075,369	10,166,736
	Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM)	8.29	7.63	6.85
	Զուտ տոկոսային եկամուտ	4,540,923	4,249,360	3,735,624
	Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	86,711,786	71,793,014	57,444,897
	Զուտ տոկոսային մարժա (NIM)	5.24%	5.92%	6.50%
	Տոկոսային եկամուտ	9,858,009	8,342,889	7,236,646
	Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն*	86,711,786	71,793,014	57,444,897
	Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն	11.37%	11.62%	12.60%
	Տոկոսային ծախսեր	5,317,086	4,093,529	3,501,022

	Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր*	81,036,954	72,584,134	58,822,982
	Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	6.56%	5.64%	5.95%
	Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	449,266	816,796	716,701
	Բաժնետոմսերի միջին կշռված թիվը	933,335	933,335	933,335
	Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	0.48	0.88	0.77
	Սպրեդ	4.81%	5.98%	6.65%

*միջին եռամսյակային

ԲԱԺԻՆ 2. ԹՈՂԱՐԿՎՈՂ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1. ՌԻՍԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ

Բաժնետոմսերի թողարկման սույն առաջարկը նպատակ է հետապնդում ավելացնել Բանկի կանոնադրական կապիտալը՝ բարձրացնելով բանկի, որպես ֆինանսական կառույցի, գործունեության հուսալիությունը և արդյունավետությունը, սուր մրցակցության պայմաններում առկա մարտահրավերներին դիմակայման և մրցունակության բարձրացման հնարավորությունները:

Բաժնետոմսերում ներդրումները կապված են որոշակի հավանական ռիսկերի հետ, ուստի ներդրում կատարելու վերաբերյալ որոշում ընդունելուց առաջ ներդրողները պետք է մանրակրկիտ ուսումնասիրեն և վերլուծեն ներդրման հետ կապված և Ազդագրում բացահայտված հավանական ռիսկերը, ինչպես նաև ներկայացված այլ տեղեկատվությունը: Անհրաժեշտ է, այնուամենայնիվ, հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ Ազդագրում ներկայացված հնարավոր ռիսկերի ցանկը սպառիչ չէ և հավանական է նաև անկանխատեսելի բնույթի որոշակի այլ ռիսկերի առաջացումը և հետևաբար ներդրողը ներդրման վերաբերյալ որոշում կայացնելիս պետք է լիարժեք գիտակցի ներդրման էությունը և առաջնորդվի նաև իր սեփական փորձով, նպատակներով և սպասումներով:

Բանկը կձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցառումները, որպեսզի նվազեցնի ստորև նշված ռիսկային գործոնների բացասական ազդեցությունը: Այնուամենայնիվ, քանի որ շատ դեպքերում նշված ռիսկային գործոնները Բանկի հսկողությունից դուրս են, ապա այս ցուցակով չսահմանափակվող ռիսկերի բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով ձեռնարկված միջոցառումների արդյունավետությունը չի երաշխավորվում Բանկի կողմից:

Ներկայացված ռիսկերից յուրաքանչյուրը կարող է որոշակի բացասական ազդեցություն ունենալ ինչպես Բանկի վիճակի, այնպես էլ շուկայում առկա իրավիճակի վրա՝ արդյունքում հանգեցնելով շուկայում բաժնետոմսերի շրջանառելիության՝ իրացվելիության անկմանը, Բանկի եկամուտների կրճատմանը և ծախսերի ավելացմանը, ինչն էլ իր հերթին կարող է հանգեցնել բաժնետոմսերի գների իջեցմանը: Բանկի կողմից որպես առավել էական ռիսկեր դիտարկվում են.

ա) Բաժնետոմսերի իրացվելիության ռիսկը, որը կարող է առաջանալ շուկայում ձևավորված իրավիճակի կտրուկ փոփոխության կամ Բանկի ֆինանսական վիճակի վատթարացման հետևանքով, որի արդյունքում, բաժնետոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը՝ հանգեցնելով դրանց գնի անկմանը: Ներդրողը կարող է շուկայական տվյալ իրավիճակում առկա բաժնետոմսերի ցածր իրացվելիության պատճառով հնարավորություն չունենալ վաճառելու բաժնետոմսերը առանց էական կորուստների կամ ընդհանրապես հնարավորություն չունենալ դրանք վաճառելու:

բ) Արտարժույթային ռիսկը, որը կարող է առաջանալ փոխարժեքի կտրուկ տատանումների հետևանքով, որոնք կարող են էապես ազդել ինչպես Բանկի, այնպես էլ արժեթղթերի շուկայի վրա: Բաժնետոմսերը գնանշվելու և վճարվելու են ՀՀ դրամով, ուստի, այն ներդրողների համար, որոնց ֆինանսական հոսքերն այլ արժույթով են, տվյալ բաժնետոմսերը պարունակում են զգալի արտարժույթային ռիսկեր:

գ) Տոկոսադրույքի ռիսկը, որը կարող է հետևանք լինել շուկայում գործող տոկոսադրույքների կտրուկ փոփոխության, ինչը որպես այլընտրանքային ներդրման

ուղղություն, անուղղակիորեն ազդում է բաժնետոմսերի գների վրա:

դ) Բանկի հեղինակության ռիսկը, որը անմիջական ազդեցություն ունի բաժնետոմսերի գրավչության և գնի վրա:

2. ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2.1. Կապիտալիզացիա և պարտավորություններ

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ կապիտալիզացիան 31.03.16թ. դրությամբ.

հազ. դրամ

ա.	կանոնադրական կապիտալ	3,167,022.5
բ.	էմիսիոն եկամուտ	3,168,003
գ.	կուտակված շահույթ (վնաս)	2,785,361
դ.	սեփական կապիտալ	18,467,988

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ պարտավորությունները 31.03.16թ. դրությամբ.

հազ. դրամ

դ.	երկարաժամկետ պարտավորություններ, որոնք ենթադրում են տոկոսային ծախս, այդ թվում՝	11,219,354
	երաշխավորված պարտավորություններ	7,186,846
	չերաշխավորված պարտավորություններ	4,032,508
	ապահովված պարտավորություններ	0
	չապահովված պարտավորություններ	11,219,354
ե.	կարճաժամկետ պարտավորություններ, որոնք ենթադրում են տոկոսային ծախս, այդ թվում՝	68,801,608
	երաշխավորված պարտավորություններ	16,246,692
	չերաշխավորված պարտավորություններ	52,554,916
	ապահովված պարտավորություններ	3,250,000
	չապահովված պարտավորություններ	65,551,608
զ.	արտահաշվեկշռային և պայմանական պարտավորություններ, այդ թվում՝	5,946,607
	երաշխավորված պարտավորություններ	0
	չերաշխավորված պարտավորություններ	5,946,607
	ապահովված պարտավորություններ	0
	չապահովված պարտավորություններ	5,946,607

2.2. Առաջարկի նպատակը և ներգրավվող միջոցների օգտագործումը

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետոմսերի հերթական 13-րդ թողարկման և տեղաբաշխման հիմնական նպատակը Բանկի կանոնադրական կապիտալի ավելացումն է ՀՀ արժեթղթերի շուկայում միջոցների ներգրավմամբ՝ բարձրացնելով բանկի, որպես ֆինանսական կառույցի, գործունեության հուսալիությունը և արդյունավետությունը, սուր

մրցակցության պայմաններում առկա մարտահրավերներին դիմակայման և մրցունակության բարձրացման հնարավորությունները: Թողարկողի կողմից բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքում ներգրավված դրամական միջոցները հիմնականում ուղղվելու են փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորմանը, սպառողական վարկերի տրամադրմանը և պետական արժեթղթերում ներդրումների իրականացմանը:

Հնարավոր ներգրավվող համախառն գումարների մեծությունը Բանկի գնահատմամբ կկազմի 5,000,003,600 ՀՀ դրամ:

Հնարավոր ներգրավվող գումարների մեծությունը ենթակա է տեղաբաշխման ըստ օգտագործման հետևյալ նախատեսվող ուղղությունների (ըստ առաջնահերթության).

- ✓ փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորում,
- ✓ սպառողական վարկեր,
- ✓ հիփոթեքային վարկեր,
- ✓ պետական արժեթղթեր,
- ✓ այլ:

Հնարավոր ներգրավվող գումարները չեն նախատեսվում օգտագործվել Բանկի բնականոն գործունեության շրջանակներից դուրս ակտիվների ձեռքբերման համար, այլ բիզնեսների հայտարարված ձեռքբերումների նպատակով կամ պարտավորությունների գծով հատուցումների, պարտավորությունների մարման կամ վերաֆինանսավորման նպատակով:

3. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԿԱՊՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԵՏ

ա. Արժեթղթերի տեսակը և դասը, ներառյալ արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (ISIN) կամ այլ նմանատիպ տարբերակիչ ծածկագիր (առկայության դեպքում).

- ✓ առաջարկվող արժեթղթերի դասը (տեսակը) սովորական բաժնետոմս (բաժնային արժեթուղթ),
- ✓ արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (ISIN)՝ AMHEZBS10ER5

բ. Երկիրը, որի օրենսդրության համաձայն են թողարկվել տվյալ արժեթղթերը,

Բանկի սովորական անվանական բաժնետոմսերը թողարկվել են Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, և դրանց շուրջ ծագող վեճերը, այդ թվում՝ դատական, ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

գ. Արժեթղթերի ձևը (փաստաթղթային կամ ոչ փաստաթղթային): Ոչ փաստաթղթային արժեթղթերի դեպքում պետք է նշել այն իրավաբանական անձի անվանումը, որը վարում է այդ ոչ փաստաթղթային արժեթղթերի ռեեստրը.

ոչ փաստաթղթային, «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» բաց բաժնետիրական ընկերություն, «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ հաշվի օպերատոր՝ «ԱՐՄԵՆԲՐՈՎ» ԲԲԸ:

դ. Մեկ արժեթղթի անվանական արժեքը և քանակը (առկայության դեպքում).

Մեկ արժեթղթի անվանական արժեքը՝ 2,500 ՀՀ դրամ

քանակը՝ 342,466 հատ:

ե. Թողարկման արժույթը՝ ՀՀ դրամ

գ. Արժեթղթերից բխող ներքոհիշյալ իրավունքների նկարագրությունը (ներառյալ՝ իրավունքների սահմանափակումները) և այդ իրավունքների իրականացման գործընթացը, մասնավորապես՝

1. Շահութաբաժնի ստացման իրավունքները (շահութաբաժնի ստացման կոնկրետ օրերը, շահութաբաժին ստանալու սահմանափակումները և ոչ ռեզիդենտների կողմից ստացման գործընթացը, շահութաբաժնի հաշվարկման մեթոդները, վճարման պարբերականությունները և մեթոդները)։

Համաձայն Բանկի կանոնադրության .

1. ԲԱՆԿԻ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՈՒՄԸ

- ✓ Իր գործունեության արդյունքում Բանկի ստացած շահույթը ենթակա է հարկման՝ օրենսդրության համաձայն: Բանկը կարող է շահութաբաժիններ վճարել միայն տարեկան արդյունքներով:
- ✓ Օրենսդրությամբ սահմանված հարկերը և պարտադիր մյուս վճարումները կատարելուց հետո ձևավորվում է Բանկի տրամադրության տակ մնացած շահույթը, որի բաշխումն իրականացվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ շահութաբաժինների վճարման, կանոնադրությամբ սահմանված ֆոնդերի համալրման, Բանկի զարգացման նպատակով:
- ✓ Բանկի բաժնետերերի տարեկան շահութաբաժինների վճարման վերաբերյալ որոշումն ընդունում է բաժնետերերի ընդհանուր ժողովը, որով սահմանվում են վճարման չափը և ժամկետները: Շահութաբաժինների վճարումը կատարվում է համաձայն Բանկի Խորհրդի հաստատած կարգի (կարգը տեղադրված է բանկի ինտերնետային կայքի՝ www.aeb.am, «**Բաժնետերեր և ներդրողներ**» բաժնում):
- ✓ Բանկի բաժնետերերին շահութաբաժիններ բաշխելն արգելվում է, եթե դրանք բաշխելու պահին Բանկի կրած կորուստները (վնասները) հավասար են այդ պահին Բանկում առկա չբաշխված զուտ շահույթի գումարին կամ գերազանցում են այն:

Համաձայն «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ տարեկան արդյունքներով շահութաբաժինների վճարման» կարգի.

Բանկը շահութաբաժիններ է վճարում Բանկի գործունեության տարեկան արդյունքներով: Շահութաբաժինների վճարման չափը, կարգը և ժամկետները սահմանվում են տարեկան ժողովի որոշմամբ՝ Բանկի Խորհրդի ներկայացմամբ: Ժողովն իրավունք ունի որոշում ընդունել շահութաբաժիններ չվճարելու վերաբերյալ՝ հաշվի առնելով Բանկի զարգացման խնդիրները: Շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեն տվյալ տարվա տարեկան ընդհանուր ժողովի մասնակիցների ցուցակում ընդգրկված Բանկի բաժնետերերը՝ Բանկի գլխավոր գրասենյակից և մասնաճյուղերից: Շահութաբաժինները հաշվարկվում են բաժնետոմսերի անվանական արժեքի նկատմամբ և վճարվում են Բանկի զուտ (կուտակված) շահույթից:

Բաժնետերերը շահութաբաժինները ստանալու համար, ներկայացնում են.

- ✓ ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթուղթ կամ օրենքով սահմանված նոտարի վավերացմամբ տրված լիազորագրով կամ ժառանգումը հիմնավորող փաստաթղթերով (նոտարական, կտակով և այլն),
- ✓ իրավաբանական անձի դեպքում՝ պետ. ռեգիստրի գրանցման վկայականի պատճեն կամ միասնական պետական գրանցամատյանից տրված քաղվածքը (տվյալ փաստաթղթերը կարող են չպահանջվել, եթե Բանկը սահմանված կարգով ստացել է տվյալ տեղեկատվությունը էլեկտրոնային տարբերակով), գրավոր հանձնարարական շահութաբաժինը հաշվին փոխանցելու վերաբերյալ, ստորագրված և կնքված իրավասու մարմնի կողմից: Իրավահաջորդության դեպքում ներկայացվում են օրենքով պահանջվող բոլոր հիմնավորող փաստաթղթերը (պատճենները կցվում են ցուցակներին):

Ոչ ռեգիդենտ (ոչ հաշվետեր հանդիսացող) բաժնետերերը, Բանկի Հաճախորդների սպասարկման կենտրոնական գրասենյակի (վարչության) Վարկ-ավանդային բաժնի կողմից, ժողովի ավարտից տասնհինգօրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում են հասանելիք շահութաբաժինների վերաբերյալ և տնօրինում իրենց շահութաբաժինը համապատասխան գրավոր տրված հանձնարարականով :

2. Ձայնի իրավունքները.

Համաձայն Բանկի կանոնադրության.

1. Բանկի յուրաքանչյուր սովորական բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքները: Սովորական բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերն իրավունք ունի.

- ✓ մասնակցել Բանկի ընդհանուր ժողովին վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով,
- ✓ մասնակցել Բանկի կառավարմանը,
- ✓ ժողովներում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձին,
- ✓ հանդես գալ առաջարկություններով բաժնետերերի ընդհանուր ժողովում,
- ✓ Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով,

2. Արտոնյալ բաժնետոմս ունեցող բաժնետերերն իրավունք ունեն մասնակցել Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովին առանց ձայնի իրավունքի,

3. Անձը կամ փոխկապակցված անձինք Բանկի կանոնադրական հիմնադրամում կարող են օրենքով սահմանված կարգով նշանակալից (ուղղակի և անուղղակի) և այլ մասնակցություն (ոչ նշանակալից) ձեռք բերել միայն ՀՀ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ: Տվյալ անձը պետք է բավարարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

3. Նույն դասի բաժնեպատկանների տեղաբաշխման դեպքում նախապապովության իրավունքները.

Նույն դասի բաժնեպատկանների տեղաբաշխման դեպքում նախապապովության իրավունքները կարգավորվում են «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի Հոդված 47-ով.

Ընկերության կողմից բաց բաժանորդագրության միջոցով քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխման դեպքում Ընկերության բաժնետերերը չունեն քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի ձեռքբերման նախապատվության իրավունք: Եթե տեղաբաշխվող բաժնետոմսերի դիմաց վճարումն իրականացվելու է դրամական միջոցներով, ապա Բանկի կանոնադրությամբ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի համար կարող է նախատեսվել քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի ձեռքբերման նախապատվության իրավունք՝ իրենց պատկանող քվեարկող բաժնետոմսերի քանակին համամասնորեն: Տեղաբաշխվող բաժնետոմսերի դիմաց վճարումն իրականացվելու է դրամական միջոցներով: «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ կանոնադրությամբ՝ բաց բաժանորդագրության միջոցով տեղաբաշխվող բաժնետոմսերի դիմաց վճարումը դրամական միջոցներով իրականացվելու դեպքում Բանկի քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի համար քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի ձեռքբերման նախապատվության իրավունք չի նախատեսված:

4. Լուծարման դեպքում մնացած գույքից բաժին ստանալու իրավունքները.

Համաձայն Բանկի կանոնադրության.

Համաձայն ՀՀ օրենսդրության և Բանկի կանոնադրության սովորական բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերն իրավունք ունի Բանկի լուծարման դեպքում ստանալ գույքի իր հասանելիք մասը: ,

Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի Հոդված 31-ի՝ սնանկ ճանաչված բանկի լուծարման դեպքում Բանկի պարտավորությունները մարվում են լուծարային միջոցների հաշվին, հետևյալ հերթականությամբ՝

ա) առաջին՝ ադմինիստրացիայի, լուծարային կառավարչի կողմից սույն օրենքով սահմանված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ և հիմնավորված ծախսերը, այդ թվում՝ աշխատավարձը՝ Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված նախահաշվի շրջանակներում.

բ) երկրորդ՝ այն պարտատերերի պահանջները, որոնք բանկին վարկ, փոխառություն են տրամադրել կամ բանկում ավանդ են ներդրել կամ բանկային հաշվին դրամական միջոցներ են մուտքագրել բանկում ադմինիստրացիա նշանակվելուց հետո, բացառությամբ պարտատիրոջ և Կենտրոնական բանկի միջև կնքված պայմանագրով սահմանված դեպքերի.

գ) երրորդ՝ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիների, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց Հայաստանի Հանրապետության դրամով բանկային ավանդները և բանկային հաշիվներին առկա մնացորդները՝ մինչև 10 միլիոն դրամի չափով, իսկ արտարժույթային ավանդների (հաշիվների) դեպքում՝ 5 միլիոն դրամին համարժեք չափով: Մեկ անձի՝ բանկում մեկից ավելի ավանդներ (հաշիվներ) ունենալու դեպքում նրա բոլոր ավանդները միավորվում են, և դրանց հանրագումարը համարվում է մեկ ավանդ, իսկ ապահովագրական ընկերությունների լուծարման դեպքում՝ կյանքի ապահովագրական պայմանագրերից բխող պահանջները, եթե ապահովագրական ընկերությունն իրականացնում է կյանքի ապահովագրություն, և ոչ կյանքի ապահովագրական պայմանագրերից բխող պահանջները, եթե ապահովագրական ընկերությունն իրականացնում է ոչ կյանքի ապահովագրություն.

դ) չորրորդ՝ բանկի այլ պարտավորությունները, բացառությամբ երկրորդ հերթում ընդգրկված բանկային ավանդների և բանկային հաշիվների մնացորդների.

ե) հինգերորդ՝ պետական բյուջեի և համայնքների բյուջեների նկատմամբ բանկի պարտավորությունները, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ պարտադիր վճարումները.

ե.1) վեցերորդ՝ ստորադաս փոխառություններից բխող պահանջները.

զ) յոթերորդ՝ բանկի մասնակիցների պահանջները:

Բանկի պարտատերերի պահանջների բավարարման հերթականության «գ», «դ» և «ե.1» ենթակետերով սահմանված պարտատերերի թվից բացառություն են կազմում բանկի մասնակիցները և բանկի հետ կապված անձինք, որոնց նկատմամբ բանկի պարտավորությունները բավարարվում են «գ» ենթակետով սահմանված հերթում:

Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի Հոդված 75¹-ի բանկի լուծարման դեպքում Բանկի պարտավորությունները մարվում են լուծարային միջոցների հաշվին, հետևյալ հերթականությամբ՝

առաջին հերթին՝ լուծարային հանձնաժողովի անդամների կողմից օրենքով սահմանված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ և հիմնավորված ծախսերը, այդ թվում՝ աշխատավարձը.

երկրորդ հերթին՝ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիների, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց բանկային ավանդները և բանկային հաշիվներին առկա մնացորդները: Մեկ անձի՝ բանկում մեկից ավելի ավանդներ (հաշիվներ) ունենալու դեպքում նրա բոլոր ավանդները միավորվում են, և դրանց հանրագումարը համարվում է մեկ ավանդ.

երրորդ հերթին՝ չորրորդ, հինգերորդ և վեցերորդ հերթերում չընդգրկված՝ բանկի այլ պարտավորությունները.

չորրորդ հերթին՝ պետական բյուջեի և համայնքների բյուջեների նկատմամբ բանկի պարտավորությունները, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ պարտադիր վճարումներ.

հինգերորդ հերթին՝ ստորադաս փոխառություններից բխող պահանջները.

վեցերորդ հերթին՝ բանկի մասնակիցների պահանջները:

Սույն մասով սահմանված՝ բանկի պարտատերերի պահանջների բավարարման հերթականության երկրորդ, երրորդ և հինգերորդ հերթերով սահմանված պարտատերերի թվից բացառություն են կազմում բանկի մասնակիցները և բանկի հետ կապված անձինք, որոնց նկատմամբ բանկի պարտավորությունները բավարարվում են վեցերորդ հերթին:

5. Հեղզնման պահանջի իրավունքները

Համաձայն Բանկի կանոնադրության.

Սովորական բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերն իրավունք ունի ձեռք բերել իրեն պատկանող բաժնետոմսերի հետգնման պահանջի իրավունք, եթե՝

- ✓ որոշում է ընդունվել Բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու մասին, և տվյալ բաժնետերը քվեարկել է Բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու դեմ կամ այդ հարցերով քվեարկությանը չի մասնակցել.

- ✓ կանոնադրության մեջ լրացումներ կամ փոփոխություններ են կատարվել, կամ հաստատվել է կանոնադրությունը նոր խմբագրությամբ, որի հետևանքով սահմանափակվել է նշված բաժնետերի իրավունքները, և նա դեմ է քվեարկել կամ չի մասնակցել այդ հարցի քվեարկությանը:

6. Փոխարկման իրավունքները.

Առաջարկվող արժեթղթերը փոխարկման իրավունքներ չեն ենթադրում:

է. Եթե առաջարկվող արժեթղթերը նոր թողարկում են, ապա իրավասու մարմնի որոշման համառոտ բովանդակությունը այդ նոր թողարկման մասին.

Արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման ընթացակարգի վերաբերյալ որոշումն ընդունել է Բանկի Խորհուրդը: Համաձայն Բանկի Խորհրդի 26/02-02.06.2016թ. որոշման՝ որոշում է կայացվել թողարկել 342,466 հատ 2,500 ՀՀ դրամ անվանական արժեքով սովորական բաժնետոմսեր և տեղաբաշխել դրանք յուրաքանչյուրը 14,600 ՀՀ դրամ գնով:

ը. Արժեթղթերի ազատ շրջանառելիության սահմանափակումների նկարագրությունը.

Թողարկման հետ կապված սահմանափակումները հետևյալն են.

Անձը կամ փոխկապակցված անձինք Բանկի կանոնադրական հիմնադրամում կարող են օրենքով սահմանված կարգով նշանակալից (ուղղակի և անուղղակի) մասնակցություն ձեռք բերել միայն ՀՀ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ: Տվյալ անձը պետք է բավարարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

ՀՀ Կենտրոնական բանկի կողմից դիմումի մերժման հիմք են հանդիսանում հետևյալ փաստերի առկայությունը.

ա/ անձը դիտավորությամբ կատարված հանցագործություն կատարելու համար դատվածություն ունի.

բ/ անձն օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով զրկվել է ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից.

գ/ անձը սնանկ է ճանաչվել և չմարված (չներված) պարտավորություններ ունի.

դ/ անձի գործողությունները նախկինում հանգեցրել են Բանկի կամ այլ անձի սնանկացմանը.

ե/ տվյալ անձը կամ փոխկապակցված անձինք անցյալում կատարել են այնպիսի արարք, որը ՀՀ Կենտրոնական բանկի հաստատած ուղեցույցով հիմնավորված՝ ՀՀ Կենտրոնական բանկի կարծիքով հիմքեր կան կասկածելու, որ տվյալ անձի՝ որպես բանկի բարձրագույն կառավարման մարմնի որոշումների կայացման ժամանակ ձայնի իրավունք ունեցող անդամի, գործողությունները կարող են հանգեցնել Բանկի սնանկացման կամ ֆինանսական վիճակի վատթարացման, կամ հեղինակության և գործարար համբավի վարկաբեկման.

զ/ տվյալ գործարքն ուղղված է կամ հանգեցնում է, կամ կարող է հանգեցնել ազատ տնտեսական մրցակցության սահմանափակմանը.

է/ տվյալ գործարքի հետևանքով Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձը և նրա հետ փոխկապակցված անձինք ՀՀ բանկային

շուկայում տվյալ գործարքի հետևանքով ձեռք են բերում գերիշխող դիրք, որն իրենց հնարավորություն է տալիս կանխորոշել օրենսդրությամբ Բանկին թույլատրված գործառնությունների կամ դրանցից թեկուզ մեկի շուկայական սակագները կամ պայմանները.

ը/ փաստաթղթերը ներկայացվել են ՀՀ Կենտրոնական բանկի սահմանած ձևի և կարգի խախտումներով կամ ներկայացված փաստաթղթերում կամ տեղեկություններում արտացոլվել են կեղծ կամ անարժանահավատ տեղեկություններ.

թ/ տվյալ գործարքի հետևանքով Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերող մասնակիցը կամ նրա հետ փոխկապակցված անձը ՀՀ Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով գտնվում է ֆինանսական վատ վիճակում կամ նշանակալից մասնակցի կամ նրա հետ փոխկապակցված անձանց ֆինանսական վիճակի վատթարացումը կարող է պատճառ հանդիսանալ Բանկի ֆինանսական վիճակի վատթարացման, կամ Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձանց և (կամ) նրանց հետ փոխկապակցված անձանց գործունեությունը կամ Բանկի հետ նրանց փոխհարաբերությունների բնույթը ՀՀ Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով կարող է խոչընդոտել ՀՀ Կենտրոնական բանկի կողմից արդյունավետ վերահսկողության իրականացմանը կամ թույլ չի տալիս բացահայտելու կամ արդյունավետ կառավարելու Բանկի ռիսկերը.

ժ/ անձը չի ներկայացնում իր կողմից ներդրվող միջոցների ծագման օրինականության վերաբերյալ բավարար և ամբողջական հիմնավորումներ (փաստաթղթեր, տեղեկություններ և այլն).

Սույն կետով սահմանված սահմանափակումները չեն տարածվում «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն հաշվետու թողարկող հանդիսացող բանկի կանոնադրական կապիտալում մասնակցության ձեռքբերման վրա, եթե դա կատարվել է ֆոնդային բորսայում և չի գերազանցում բանկի կանոնադրական հիմնադրամի 20 տոկոսը, իսկ գերազանցելու դեպքում ՀՀ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ:

Արժեթղթերի ազատ շրջանառելիության սահմանափակումները հետևյալն են.

Թողարկվող (սույն ազդագրով վաճառքի առաջարկվող) արժեթղթերը ֆոնդային բորսայում կարող են շրջանառվել ֆոնդային բորսայում առևտրին թույլտվություն ստանալուց հետո: Արտաբորսայական շուկայում արժեթղթերը կարող են օտարվել մասնավոր գործարքի միջոցով:

Շուկայում առևտրին թույլատրված արժեթղթերով գործարքների իրականացման վերաբերյալ սահմանափակումները սահմանված են «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի Հոդված 129-ով և ՀՀ Կենտրոնական բանկի 2012թ. թիվ 331Ն որոշմամբ: Մասնավորապես.

Շուկայում առևտրին թույլատրված արժեթուղթն արգելվում է վաճառել տվյալ շուկայից դուրս, բացառությամբ հետևյալ դեպքերի.

1. մասնավոր գործարքների դեպքում, որոնց կողմերը նախապես հայտնի են.

- ✓ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից կնքվող գործարքները,
- ✓ թողարկողի կողմից իր թողարկած արժեթղթերի հետգնման կամ ձեռքբերման գործարքները,

- ✓ արժեթղթերը հանձնելու առաջարկի շրջանակներում բաժնային արժեթղթերով կատարվող գործարքները:

2. արժեթղթերի տեղաբաշխման շրջանակներում տեղաբաշխողների կողմից իրականացվող գործարքների դեպքում,

3. շուկայում առևտրին թույլատրված արժեթուղթն այլ կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության և վաճառելու դեպքերում:

թ. Արժեթղթերը հանձնելու պարտադիր առաջարկ անելու պարտավորության նկարագրությունը, ինչպես նաև այն դեպքերի նկարագրությունը, երբ նման պարտավորությունը բացակայում է.

Արժեթղթերը հանձնելու պարտադիր առաջարկ անելու պարտավորությունը, ինչպես նաև նման պարտավորության բացակայության դեպքերը կարգավորվում են «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի Գլուխ 15-ով:

Յուրաքանչյուր անձ, որը թողարկողի բաժնային արժեթղթով մեկ կամ ավելի գործարքի հետևանքով դառնում է տվյալ դասի արժեթղթերի ավելի քան 75 տոկոսի սեփականատեր, պարտավոր է տվյալ դասի բոլոր արժեթղթերն իրեն հանձնելու առաջարկ անել: Նշված պահանջը տարածվում է նաև այն դեպքի վրա, երբ Հաշվետու թողարկողի դիմումի հիման վրա օպերատորի կողմից դադարեցվել է թողարկողի արժեթղթերի առևտուրը կարգավորվող շուկայում: Այս դեպքում արժեթղթերը հանձնելու պարտադիր առաջարկը պետք է ներկայացվի թողարկողի այն բաժնետերերի կողմից, որոնք կողմ են քվեարկել կարգավորվող շուկայում թողարկողի արժեթղթերի առևտրի թույլտվության դադարեցման որոշմանը: Ընդ որում, կարգավորվող շուկայում թողարկողի արժեթղթերի առևտրի թույլտվության դադարեցման որոշմանը կողմ քվեարկած բաժնետերերը ընտրում են ներկայացուցիչ, որը կիրականացնի արժեթղթերը հանձնելու պարտադիր առաջարկն իրենց անունից:

Անձը պարտավոր է արժեթղթերը հանձնելու առաջարկի հայտարարագիրը Կենտրոնական բանկ ներկայացնել համապատասխան գործարքի կատարմանը հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում, որի արդյունքում անձը դարձել է տվյալ դասի արժեթղթերի ավելի քան 75 տոկոսի սեփականատեր:

Արժեթղթերը հանձնելու պարտադիր առաջարկ անելու պահանջը չի տարածվում այն դեպքերի վրա, երբ՝

- ✓ անձը դարձել է տվյալ դասի արժեթղթերի ավելի քան 75 տոկոսի սեփականատեր տվյալ ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման արդյունքում.
- ✓ անձը դարձել է տվյալ դասի արժեթղթերի ավելի քան 75 տոկոսի սեփականատեր՝ իր կողմից տվյալ դասի բոլոր արժեթղթերի համար արժեթղթերը հանձնելու ոչ պարտադիր առաջարկի արդյունքում.
- ✓ արժեթղթերը ձեռք են բերվել ներդրումային ծառայություններ մատուցող անձի կողմից տեղաբաշխման նպատակով.
- ✓ անձը տվյալ դասի արժեթղթերի 75 տոկոսը գերազանցող մասը դրանց ձեռքբերման օրվանից՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, օտարում է այն անձին, որը «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 151-րդ հոդվածի համաձայն չի համարվում համատեղ գործելու համաձայնությամբ հանդես եկող անձ և պայմանով, որ այդ ժամկետի ընթացքում տվյալ արժեթղթերի թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողով չի գումարվում:

Ժ. Արժեթղթերից ստացվող եկամուտների հարկման կարգի ամբողջական և մանրամասն նկարագիրը.

Ռեզիդենտ իրավաբանական անձանց համար Բաժնետերերի բաժնետոմսերից ստացվող եկամուտների հարկումը կատարվում է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի Հոդված 5-ի, Հոդված 7-ի և Հոդված 26-ի համաձայն: Մասնավորապես.

Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է հարկատուի ստացած շահաբաժինների գումարի չափով, այսինքն՝ շահաբաժինները (բաժնետոմսերից ստացվող եկամուտները) չեն հարկվում շահութահարկով:

Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց դեպքում հարկումը կատարվում է՝ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի Հոդված 5-ի, Հոդված 26-ի, Հոդված 53 -ի և Հոդված 57-ի համաձայն: Մասնավորապես.

Այս դեպքում շահաբաժինները (բաժնետոմսերից ստացվող եկամուտները) ենթակա են շահութահարկով հարկման որպես պասիվ եկամուտներ՝ 10% դրույքաչափով: Հարկումը կատարվում է հարկային գործակալի (բանկի) կողմից՝ եկամտի վճարման աղբյուրի մոտ (ոչ ռեզիդենտին վճարվող եկամտի ընդհանուր գումարից):

Ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար բաժնետոմսերից ստացվող եկամուտների հարկումը կատարվում է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի Հոդված 5-ի, Հոդված 7-ի համաձայն:

Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց դեպքում բաժնետոմսերից ստացվող եկամուտների հարկումը կատարվում է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի Հոդված 5-ի, Հոդված 7-ի, և Հոդված 9 -ի համաձայն: Մասնավորապես.

Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ հարկ վճարողի հարկվող օբյեկտի որոշման ժամանակ համախառն եկամուտը նվազեցվում է ստացված շահաբաժինների չափով, այսինքն՝ շահաբաժինները (բաժնետոմսերից ստացվող եկամուտները) չեն հարկվում եկամտային հարկով:

4. ԱՌԱՋԱՐԿԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1) Առաջարկի պայմանները, առաջարկի վիճակագրությունը, ակնկալվող ժամանակացույցը և այն գործողությունները, որոնք անհրաժեշտ են առաջարկից օգտվելու համար.

ա. Թողարկման և (կամ) առաջարկի ընդհանուր ծավալը.

Առաջարկի ծավալն ամբողջությամբ բաղկացած է թողարկվող 342,466 հատ սովորական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 2,500 ՀՀ դրամ անվանական արժեքով, որոնց ընդհանուր գումարային ծավալը շուկայական արժեքով կազմում է 5,000,003,600 ՀՀ դրամ (յուրաքանչյուրը 14,600 ՀՀ դրամ շուկայական գնով), անվանական արժեքով՝ 856,165,000 ՀՀ

դրամ (յուրաքանչյուրը 2,500 ՀՀ դրամ անվանական արժեքով), որն ամբողջությամբ ենթակա է բաժանորդագրության:

բ. Առաջարկի իրականացման սկիզբը և ավարտը (ներառյալ՝ ժամկետների ցանկացած հնարավոր փոփոխություններ).

Բաժնետոմսերի տեղաբաշխման սկիզբ է համարվում ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սույն Ազդագրի գրանցման օրվան հաջորդող 6-րդ աշխատանքային օրվա ժամը 09:00-ն, իսկ ավարտ՝ 30.09.2016թ. ժամը 16:00-ն: Մինչև նշված ժամկետը բաժնետոմսերի ամբողջ ծավալի բաժանորդագրության դեպքում Բանկը դադարեցնում է բաժանորդագրության գործընթացը:

Ազդագիրը կիրառարակվի տեղեբաշխումից առնվազն 3 աշխատանքային օր առաջ՝ Բանկի կայքում www.aeb.am:

Տեղաբաշխման ժամկետների վերաբերյալ հնարավոր փոփոխությունները կարող են կատարվել Բանկի խորհրդի որոշմամբ:

գ. Առաջարկից օգտվելու համար դիմելու գործընթացի մանրամասն նկարագրություն.

Բաժնետոմսերի դիմաց վճարումը կատարվում է դրամով, «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ում բացված 163003702772 հաշվեհամարին միանվագ մուտքագրման կամ փոխանցման կարգով: Մինչև կապիտալի ավելացումը ՀՀ Կենտրոնական բանկում գրանցելը գումարը փոխանցվում է ՀՀ Կենտրոնական բանկում կանոնադրական հիմնադրամի համալրման նպատակով բացված թիվ 103002401638 կուտակային հաշվի վրա:

Բաժնետոմսերի ձեռքբերման/բաժանորդագրման նպատակով ներդրողը «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ներկայացնում է բաժանորդագրության հայտ (այսուհետ՝ հայտ) և համապատասխան հաշվին կատարված վճարումը կամ փոխանցումը հավաստող փաստաթուղթ:

Հայտն առնվազն պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.

- ✓ Ներդրողի անունը և ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, բնակության վայրը, ստորագրությունը (իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, գտնվելու վայրը, իրավասու (լիազորված) անձի ստորագրությունը),
- ✓ ձեռքբերվող բաժնետոմսերի քանակը,
- ✓ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ հաշվի օպերատորի կողմից բացված անձնական հաշվի համարը:

Հայտին կից ներկայացվում են.

- ✓ ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթղթի (առկայության դեպքում սոցիալական քարտի կամ հանրային ծառայության համարանիշ պարունակող փաստաթղթի) պատճենները (կամ տեղեկանք հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ)
- ✓ իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման վկայականը (ՀՀ պետական ռեգիստրում գրանցված ռեգիդենտ իրավաբանական անձի, ոչ ռեգիդենտ իրավաբանական անձանց ՀՀ-ում ստեղծված մասնաճյուղերի և ներկայացուցչությունների դեպքում նաև գործող ղեկավարի գրանցման ներդիրը) կամ միասնական պետական գրանցամատյանից տրված քաղվածքը , լիազորված անձի դեպքում նաև լիազորագիրը:

Հայտ ներկայացրած անձինք գրանցվում են հատուկ այդ նպատակով բացված գրանցամատյանում, իսկ վավեր Հայտերը բավարարվում են ըստ ներկայացման ժամկետի հերթականության:

Բաժանորդագրման հայտը կհամարվի վավեր միայն ձեռք բերվող բաժնետոմսերի դիմաց լրիվ վճարման պահից:

դ. Այն հանգամանքները, որոնց դեպքում առաջարկը կարող է հետաձգվել կամ չեղյալ հայտարարվել.

Առաջարկի հետաձգման կամ չեղյալ հայտարարման դեպքերը կարգավորվում են «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի Հոդված 20-ով և Հոդված 21-ով:

1. Եթե տեղաբաշխողը տեղաբաշխման ընթացքում ներկայացնում է ազդագրի լրացում, որը կապված է ազդագրում ներառված տեղեկատվության էական փոփոխության, նոր էական հանգամանքի կամ փաստի ի հայտ գալու հետ, ապա նա ներդրողի պահանջով պարտավոր է չեղյալ համարել ներդրողի տված ակցեպտը և հետ վերադարձնել բաժանորդագրության ընթացքում նրանից ստացված միջոցները կամ հետ գնել մինչև լրացման ներկայացումը ներդրողին վաճառված արժեթղթերը՝ առնվազն նրա կողմից արժեթղթերի ձեռքբերման գնով:

Հետգնման պահանջը պետք է տեղաբաշխողին ներկայացվի գրավոր: Հետգնման պահանջի ներկայացման ժամկետը սահմանվում է 5 աշխատանքային օր՝ ազդագրի լրացման հրապարակումից հետո:

Արժեթղթերի հետգնումը և տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցների վերադարձն իրականացվում են պահանջը ներկայացնելուց հետո՝ առավելագույնը 10 աշխատանքային օրվա ընթացքում:

2. Կենտրոնական բանկն իր որոշմամբ կասեցնում է տեղաբաշխման ընթացքը, եթե՝

- ✓ տեղաբաշխման ընթացքում խախտվել են օրենքի և (կամ) հրապարակային առաջարկը կարգավորող այլ իրավական ակտերի պահանջները.
- ✓ տեղաբաշխման ընթացքում չեն պահպանվել ազդագրում սահմանված հրապարակային առաջարկի պայմանները.
- ✓ ազդագիրը պարունակում է էական սխալներ և ապակողմնորոշիչ տեղեկություններ, կամ նրանում էական փաստ է բաց թողնված կամ խեղաթյուրված:

3. Տեղաբաշխումը կասեցնելու որոշումը պետք է պարունակի հայտնաբերված խախտումները և բացթողումները վերացնելու հանձնարարական և դրա կատարման ժամկետները, որի կատարումից հետո Կենտրոնական բանկի թույլտվությամբ տեղաբաշխումը կարող է շարունակվել:

4. Տեղաբաշխողի նախաձեռնությամբ տեղաբաշխման ընթացքը կարող է կասեցվել միայն Կենտրոնական բանկի համաձայնությամբ՝ առավելագույնը 10 աշխատանքային օրով: Եթե կասեցման ժամկետն ավարտվելու պահից՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, տեղաբաշխումը չի շարունակվում, ապա տեղաբաշխողը պարտավոր է դադարեցնել տեղաբաշխումը և վերադարձնել տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցներն արժեթղթերը ձեռք բերած անձանց՝ կասեցման ժամկետի ավարտից 10 աշխատանքային օրվա ընթացքում:

5. Տեղաբաշխողը պարտավոր է տեղաբաշխումը կասեցնելու և շարունակելու, տեղաբաշխումը դադարեցնելու և դրա ընթացքում ստացված միջոցները վերադարձնելու

մասին տեղեկատվությունը հրապարակել առնվազն այն միջոցներով, որոնցով հրապարակվել է հրապարակային առաջարկի մասին հայտարարությունը:

Առաջարկի հեղաձգման կամ չեղյալ հայտարարման դեպքում գումարների հետ վերադարձն իրականացվում է բաժանորդագրության հայտ ներկայացրած անձի դիմումի հիման վրա, դիմումում նշված եղանակով՝ կանխիկ կամ անկանխիկ՝ փոխանցելով դիմումում նշված հաշվեհամարին:

ե. Բաժանորդագրության նվազեցման հնարավորությունը, ինչպես նաև այդ պարագայում դիմորդների (հայտ ներկայացրած ներդրողների) կողմից վճարված գումարները հետ վերադարձնելու եղանակը և ձևը.

Տեղաբաշխումն իրականացվելու է հետևյալ պայմաններով.

Բաժանորդագրությունը համարվում է կայացած տեղաբաշխման ցանկացած ծավալների ապահովման դեպքում:

Հայտերը բավարարվում են ըստ ներկայացման ժամանակագրական հերթականության: Բաժնետոմսերի տեղաբաշխման ընթացքում գնման նախապատվության իրավունք չի նախատեսվում: Բանկի բաժնետոմսերում ներդրողն իր կողմից Տեղաբաշխողին ներկայացված Հայտի բավարարման մասին տեղեկացվում է Հայտի ներկայացման պահին:

Հայտ ներկայացրած ներդրողների բաժանորդագրության նվազեցումն իրականացվում է հետևյալ կերպ.

- եթե ներկայացված հայտերում նշված բաժնետոմսերի քանակը գերազանցում է տեղաբաշխման ենթակա բաժնետոմսերի քանակը, ապա առաջնայնությունը տրվում է ավելի վաղ ներկայացված հայտերին:
- տեղաբաշխման ենթակա բաժնետոմսերի քանակին համապատասխան քանակությունը լրացնող վերջին հայտը կարող է բավարարվել մասնակիորեն:

Այս դեպքում դիմորդների (հայտ ներկայացրած ներդրողների) կողմից վճարված գումարները վերադարձվում են դիմորդին՝ նրա կողմից Բանկ ներկայացված դիմումի հիման վրա:

գ. Այն նվազագույն և առավելագույն գումարները, որոնք կարող են նշվել ձեռքբերման (բաժանորդագրության) հայտերում: Այդ սահմանաչափերը կարող են նշվել կամ որպես արժեթղթերի նվազագույն և առավելագույն թույլատրելի քանակներ, կամ որպես ձեռքբերման նվազագույն և առավելագույն թույլատրելի համախառն գումարներ.

Բաժնետոմսերի բաժանորդագրության նվազագույն և առավելագույն մեծությունների (Գնման հայտերում նշվող գումարների) վերաբերյալ սահմանափակումներ չկան:

է. Այն ժամանակաշրջանը, որի ընթացքում հայտը կարելի է հետ կանչել՝ նախապեսելով, որ ներդրողները կարող են հետ ստանալ բաժանորդագրության վճարները.

Ներդրողների կողմից ներկայացված հայտերը հետկանչման ենթակա չեն:

ը. Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելու մեթոդները (պարբերականությունը, բանկային հաշիվները և այլն) և ժամկետները, ինչպես նաև արժեթղթերը ստանալու մեթոդները և ժամկետները, արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք ստանալու ձևը.

Բաժնետոմսերի դիմաց վճարումները կատարվում են՝ մուտքագրվելով կամ փոխանցվելով Բանկում բացված 163003702772 հաշվեհամարին:

Բաժնետոմսերի սեփականության իրավունքը գրանցվում է «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» բաց բաժնետիրական ընկերության կողմից, իսկ սեփականության իրավունքը հավաստող քաղվածքները տրամադրվում են «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ հաշվի օպերատոր հանդիսացող կազմակերպության կողմից հաստատված կարգով և ժամկետներում: Ներդրողը սեփականության իրավունքի գրանցման, ինչպես նաև սեփականության իրավունքը հավաստող քաղվածքի տրամադրման դիմաց վճարում է համաձայն «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ հաշվի օպերատորի կողմից սահմանված սակագների: Գնորդի՝ բաժնետոմսի նկատմամբ սեփականության իրավունքը ծագում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայում կամ ՀՀ ԿԲ կողմից լիցենզավորված ցանկացած այլ պահառուի մոտ գնորդի անունով այդ բաժնետոմսի գրանցման պահից, սակայն դրանից բխող իրավունքները գնորդը կարող է իրացնել տեղաբաշխման ամբողջ գործընթացի ավարտից ու Բանկի ընդհանուր ժողովի կողմից տեղաբաշխման արդյունքներն ամփոփելուց և լրացուցիչ բաժնետոմսերի թողարկման հետևանքով Բանկի կանոնադրական կապիտալի փոփոխությունն արտացոլող կանոնադրությունը (նոր խմբագրությամբ կանոնադրությունը) ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցելուց հետո:

Բաժնետոմսերը գնորդի հաշվին փոխանցելու վերաբերյալ հանձնարարականը Բանկը «Արմենբրոկ» ԲԲԸ-ին (Կենտրոնական դեպոզիտարիա) է ներկայացնում Բանկի կանոնադրական կապիտալի փոփոխությունն արտացոլող կանոնադրությունը (նոր խմբագրությամբ կանոնադրությունը) ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

թ. Առաջարկի արդյունքների հրապարակման ձևի և ժամկետների ամբողջական նկարագրությունը.

Բաժնետոմսերի թողարկման և տեղաբաշխման արդյունքները հրապարակվում են Բանկի ինտերնետային կայքում տեղաբաշխման ավարտի օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

ժ. Նախապատվության իրավունքից օգտվելու գործընթացի նկարագրությունը.

Բաժնետոմսերի տեղաբաշխման ընթացքում գնման նախապատվության իրավունք չի նախատեսվում, գնման հայտերը բավարարվում են ըստ ներկայացման ժամկետի հերթականության:

2) Տեղաբաշխման պլանը

ա. Բաժնետոմսերի առաջարկն ուղղված է ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձանց: Բանկի բաժնետոմսերի առաջարկն իրականացվելու է բաց բաժանորդագրության և ազատ վաճառքի սկզբունքով՝ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ միջոցով:

բ. ըստ թողարկողի ունեցած տվյալների Բանկի խոշոր բաժնետերերից յուրաքանչյուրը՝ Սուքիասյան Սարիբեկը, Սուքիասյան Խաչատուրը, Սուքիասյան Ռոբերտը և Սուքիասյան Էդուարդը նախատեսում են բաժանորդագրվել առաջարկվող արժեթղթերի 5 և ավելի տոկոսին:

գ. Բանկի բաժնետոմսերում ներդրողն իր կողմից Տեղաբաշխողին ներկայացված Հայտի բավարարման մասին տեղեկացվում է Հայտի ներկայացման պահին:

դ. Մանր ներդրողների, ինստիտուցիոնալ ներդրողների կամ թողարկողի աշխատակիցների համար առանձին տրանշ նախատեսված չէ:

ե. Գնման հայտերը բավարարվում են ըստ ներկայացման ժամանակագրական հերթականության:

Եթե ներկայացված հայտերում նշված բաժնետոմսերի քանակը գերազանցում է տեղաբաշխման ենթակա բաժնետոմսերի քանակը, ապա առաջնայնությունը տրվում է ավելի վաղ ներկայացված հայտերին:

Տեղաբաշխման ենթակա բաժնետոմսերի քանակին համապատասխան քանակությունը լրացնող վերջին հայտը կարող է բավարարվել մասնակիորեն:

Հայտը կարող է մերժվել հետևյալ դեպքերում.

- ✓ Բաժնետոմսերի ձեռքբերման/բաժանորդագրման նպատակով ներդրողի կողմից ներկայացված փաստաթղթերը թերի են կամ կեղծ,
- ✓ տվյալ ներդրման համար օրենսդրությամբ պահանջվում է ՀՀ Կենտրոնական բանկի նախնական համաձայնության ստացում և Կենտրոնական բանկը մերժել է նախնական համաձայնության տրամադրումը,
- ✓ տեղաբաշխման ենթակա բաժնետոմսերի քանակն սպառվել է:

Այս դեպքում դիմորդների (հայտ ներկայացրած ներդրողների) կողմից վճարված գումարների հետ վերադարձման նպատակով Տեղաբաշխողի հաշվից համապատասխան գումարը վճարվում է ներդրողին:

3) Առաջարկի գինը

ա. Բանկի խորհրդի կողմից «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ կողմից թողարկվող բաժնետոմսերի տեղաբաշխման գինը սահմանված է 14,600 ՀՀ դրամ:

Բաժանորդագրության ընթացքում «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ կողմից մատուցվող խորհրդատվական և բաժանորդագրության գործընթացի հետ կապված այլ ծառայությունների դիմաց ներդրողը որևիցե ծախս չի կատարում: «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ հաշվի օպերատորի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարները գանձվում են համաձայն հաշվի օպերատորի կողմից սահմանված սակագների, որոնց հետ ներդրողը կարող է ծանոթանալ «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով՝ www.nasdaqomx.am:

բ. Առաջարկի գինը ներդրողին հասանելի է դառնում սույն ազդագրի միջոցով:

4) Տեղաբաշխումը

ա. Բաժնետոմսերի երաշխավորված տեղաբաշխում (անդերռայթինգ) չի իրականացվելու:

բ. այն անձանց անվանումները և գտնվելու վայրերը, որոնք համաձայնել են իրականացնել չերաշխավորված տեղաբաշխում, այդ թվում՝ լավագույն ջանքերի սկզբունքով տեղաբաշխում.

Բաժնետոմսերի չերաշխավորված տեղաբաշխումն իրականացվելու է «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ կողմից:

« ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ » ԲԲԸ,

ՀՀ, ք. Երևան 0002, Ամիրյան 23/1:

գ. երաշխավորված և չերաշխավորված տեղաբաշխողների հետ կնքված պայմանագրերի էական պայմանները և տեղաբաշխման համար գանձվող միջնորդավճարները: Եթե երաշխավորված տեղաբաշխման պայմանագիրը թողարկման ոչ լրիվ ծավալն է ընդգրկում, ապա պետք է նշել թողարկման այն մասը, որը չի ծածկում այդ պայմանագիրը: Այսպես պետք է նշել նաև յուրաքանչյուր տեղաբաշխողի մասը տեղաբաշխման ընդհանուր ծավալում.

Բաժնետոմսերի չերաշխավորված տեղաբաշխումն իրականացվելու է «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ կողմից:

դ. երբ է կնքվել կամ երբ է նախատեսվում կնքել երաշխավորված տեղաբաշխման (անդերոայթինգի) պայմանագիրը.

Բաժնետոմսերի երաշխավորված տեղաբաշխում (անդերոայթինգ) չի իրականացվելու:

ե. Բաժնետոմսերի բաժանորդագրության դիմաց վճարումները կատարվում են դրամով, «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ում բացված 163003702772 հաշվեհամարին միանվագ մուտքագրման կամ փոխանցման կարգով: Բաժնետոմսերի գրանցման և հաշվառման նպատակով արժեթղթերի համապատասխան հաշիվները բացվում են «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ հաշվի օպերատորների միջոցով, որոնց ցանկը և հասցեները տեղադրված են «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ պաշտոնական ինտերնետային կայքում www.nasdaqomx.am:

5. ԱՌԵՎՏՐԻՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԵՎՏՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1) Առաջարկվող արժեթղթերի մասով հետագայում հայցվելու է «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ «Բ» հարթակում (ցուցակում) առևտրին թույլտվություն: Առևտրին թույլտվության հայցը կարող է նաև չբավարարվել: Առևտրին թույլտվության հայցը ներկայացվելու է տեղաբաշխման ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում: Արժեթղթերի ցուցակման մասին որոշման կայացման գործընթացը կանոնակարգված է «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԱՅ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման» կանոնների 16-րդ գլխով:

2) Բանկի բաժնետոմսերը ցուցակված են «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ «Բ» հարթակում (ցուցակում):

3) Առաջարկվող կամ առևտրին թույլտվության առարկա արժեթղթերի մասով երկրորդային շուկայում իրացվելիություն ապահովելու (շուկա ստեղծող հանդիսանալու) պարտավորություն ունեցող անձինք չկան:

4) Գնի կայունացմանն ուղղված միջոցառումներ չեն նախատեսվում:

6. ՎԱՃԱՌՈՂ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԸ

Սույն ազդագրի միջոցով ներկայիս բաժնետերերին պատկանող բաժնետոմսերի վաճառքի առաջարկ չի նախատեսվում: Առաջարկը վերաբերում է միայն Բանկի կողմից լրացուցիչ տեղաբաշխվող սովորական անվանական բաժնետոմսերին:

7. ԹՈՂԱՐԿՄԱՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿԻ ԾԱԽՍԵՐԸ

Հնարավոր ներգրավվող զուտ գումարների մեծությունը հաշվարկվում է որպես հավաքագրված համախառն գումարների և հավաքագրման նպատակով կատարված ծախսերի տարբերություն: Հնարավոր հավաքագրվող համախառն գումարները Բանկի գնահատմամբ կկազմեն 5,000,003,600 ՀՀ դրամ: Հավաքագրման նպատակով կատարված ծախսերը հետևյալն են՝ ազդագրի գրանցման պետական տուրքը՝ 50.0 հազ. դրամ:

8. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

- 1) ներկայացվող տեղեկատվության հետ կապված խորհրդատուներ չեն ներգրավվել:
- 2) Անկախ աուդիտորի կողմից սույն բաժնի տվյալները առանձին աուդիտի ենթարկված չեն:
- 3) Փորձագետ կամ խորհրդատու, որի կարծիքը օգտագործվել է հայտարարագրում կամ երրորդ անձանցից վերցված տեղեկատվություն՝ առկա չէ:

ԲԱԺԻՆ 3. ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1. ԱՆԿԱԽ ԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԸ

1) Բանկի 2013թ.-ի, 2014թ.-ի և 2015թ.-ի աուդիտն իրականացրել է «Դելոյթ Արմենիա» ՓԲԸ-ն, որի գտնվելու վայրը և կապի միջոցներն են.

«Դելոյթ Արմենիա» ՓԲԸ

Գործադիր տնօրեն՝ Սրբուհի Հակոբյան

ՀՀ, ք. Երևան 0002, Ամիրյան 4/6, հեռ. +374(10) 52 65 20, ֆաքս +374 (10) 52 75 20, www.deloitte.ru:

«Դելոյթը» ապրանքանիշ է , որը համախմբում է ավելի քան 200,000 մասնագետների աշխարհի ավելի քան 151 երկրներում գործող անկախ ընկերություններում, ովքեր համագործակցելով միմյանց հետ տրամադրում են աուդիտի, ձեռնարկության ռիսկերի կառավարման, ֆինանսական, հարկային և իրավաբանական խորհրդատվական ծառայություններ իրենց հաճախորդներին:

«Դելոյթ Արմենիա» ՓԲԸ-ն հանդիսանում է «Դելոյթ ԱՊՀ Հոլդինգ Լիմիթեդ»-ի մասը, որն իր հերթին մտնում է «Դելոյթ Տուշ Տոմացու Լիմիթեդ»-ի կազմի մեջ:

2) Եթե պատմական ֆինանսական ժամանակաշրջանում բանկի աուդիտորները փոփոխվել են, հեռացվել են կամ նորից չեն ընտրվել որպես աուդիտոր, ապա նշել դրա հիմնական պատճառները.

Պատմական ֆինանսական ժամանակաշրջանում բանկի աուդիտորները չեն փոփոխվել :

2. ՌԻՍԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ

Բանկում ներդրված ռիսկերի կառավարման ճկուն համակարգը ենթարկվում է շարունակական կատարելագործման՝ ելնելով կայուն, հուսալի, արդյունավետ և ապահով գործունեության ծավալման նպատակներից: Բանկում ձևավորված ռիսկերի կառավարման համակարգի զարգացման և կատարելագործման հերթական փուլը Բանկի գործունեության և այն կանոնակարգող ներքին իրավական ակտերի համապատասխանեցումն էր ISO/IEC 27001:2005 (Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգ) միջազգային ստանդարտի պահանջներին:

Ռիսկերի կառավարման գործընթացը բաղկացած է հետևյալ փուլերից՝ Բանկի գործունեության ընթացքում հնարավոր ռիսկերի նույնականացում, գնահատում, հսկողություն, հաղորդակցում-հաշվետվություն և գնահատված ռիսկերին արձագանքում: Ընդ որում ռիսկերին արձագանքման փուլն իրականացվում է ռիսկից խուսափման, ռիսկի նվազեցման, ռիսկի ընդունման կամ ռիսկի փոխանցման տարբերակներով: Ակտիվների և պասիվների կառավարման գործընթացի հիմքում ընկած են մշակված և շարունակաբար կատարելագործվող մաթեմատիկական մոդելների միջոցով իրականացվող վերլուծությունները՝ ուղղված կառավարման արդյունավետության բարձրացմանը և ռիսկերի զսպման մեխանիզմների կիրառմանը: Տնտեսամաթեմատիկական մոդելավորման գործիքների

կիրառման, գործընթացների կանոնակարգման, վերլուծության, կանխատեսման և ներքին հսկողության համակարգի մշտական կատարելագործման արդյունքում՝ Բանկը հնարավորություն է ստանում ռիսկերի կառավարման համակարգի միջոցով ապահովել ռիսկ-եկամուտ օպտիմալ հարաբերակցությունը՝ Բանկի զարգացման կշռադատված ռազմավարության պայմաններում բացառելով կամ նվազագույնի հասցնելով Բանկի գործունեության ընթացքում հնարավոր ռիսկերով պայմանավորված կորուստները և ապահովելով գործող նորմատիվային դաշտի պահանջները: Ռիսկերի կառավարման հիմնական սկզբունքները, առանձին ռիսկատեսակների գնահատման և կառավարման մոտեցումները, մեթոդաբանությունները և մոդելները սահմանված են բանկի ներքին իրավական ակտերում՝ զուգակցելով դրանք բանկի համախառն ռիսկի գնահատման և դրա օպտիմալ կառավարման միջոցառումների սահմանմամբ: Բանկի ռիսկերի կառավարման համակարգը ներքին և արտաքին միջավայրերում տեղի ունեցող փոփոխություններին, բանկի ռազմավարական խնդիրներին և իրականացվող գործառնությունների ծավալային և որակական բնութագրերին համապատասխանեցնելու նպատակով ռիսկերի կառավարման ոլորտը կանոնակարգող ներքին իրավական ակտերը պարբերաբար վերանայվում են:

Համաձայն ««ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ռիսկերի կառավարման քաղաքականության» պահանջների, հաշվի առնելով Բանկային վերահսկողության բազելյան կոմիտեի և GARP-ի (Generally Accepted Risk Principles) ռիսկերի կառավարման սկզբունքները՝ բանկում մշակվել և ներդրվել են հետևյալ հիմնական ռիսկատեսակների գնահատման և կառավարման մոդելները.

- **վարկային ռիսկ:** Վարկային ռիսկը վարկի, հաշվարկված տոկոսի կամ դրանց մի մասի պայմանագրով սահմանված ժամկետներից ուշացման կամ անվերադարձելիության հնարավոր վտանգն է՝ պայմանավորված վարկառուի ֆինանսական վիճակի վատթարացմամբ, գրավի արժեզրկմամբ և նման այլ պատճառներով:
- **շուկայական ռիսկ**
 - ✓ **տոկոսադրույքների փոփոխման ռիսկ:** Տոկոսադրույքի փոփոխման ռիսկը շուկայում տոկոսադրույքների փոփոխության բացասական ազդեցության հավանականությունն է Բանկի զուտ տոկոսային եկամտի և կապիտալի տնտեսական արժեքի վրա:
 - ✓ **արտարժույթային ռիսկ:** Արտարժույթային ռիսկը արտարժույթի փոխարժեքների տատանման արդյունքում Բանկի կորուստներ կրելու հավանականությունն է:
 - ✓ **Գնային ռիսկը** որևէ բորսայում(ներում) ցուցակված, բանկի հաշվեկշռում շուկայական ընթացիկ գներով արտացոլվող ֆինանսական գործիքների շուկայական գների անբարենպաստ փոփոխությունների հետևանքով Բանկի կողմից ֆինանսական կորուստներ կրելու վտանգն է՝ պայմանավորված ինչպես տվյալ կապիտալի գործիքի և դրա թողարկողի, այնպես էլ շուկայում շրջանառվող կապիտալի գործիքների շուկայական գների ընդհանուր տատանումների հետ կապված գործոններով (տվյալ կապիտալի գործիքի գծով երկար կամ կարճ դիրքի առկայության պայմաններում):
- **իրացվելիության ռիսկ:** Իրացվելիության ռիսկը հավանականությունն է, որ բանկն ի վիճակի չի լինի ճիշտ ժամանակին բավարարել իր պարտատերերի պահանջներն՝ առանց լրացուցիչ կորուստներ կրելու:

- **գործառնական ռիսկ:** Գործառնական ռիսկը սահմանվում է որպես ուղղակի կամ անուղղակի կորուստների վտանգ՝ առաջացած կամ պայմանավորված Բանկի անձնակազմի ոչ համարժեք /արհեստավարժության պակաս/, կամ սխալ /պատահական, միտումնավոր/ գործողություններով, բանկային գործընթացների կազմակերպման և կատարման թերություններով, խափանումներով /սարքավորումների տեխնիկական անսարքություն, ընթացակարգերի անկատարություն/, ինչպես նաև անբարենպաստ արտաքին միջավայրի գործողություններով և իրավիճակներով /խարդախություն, տարերային աղետ/:
- **Հեղինակության ռիսկը** Բանկի բարի համբավի, հասարակական կարծիքի և հաճախորդների և/կամ գործընկերների կողմից վերաբերմունքի վատթարացման հետևանքով հնարավոր կորուստների վտանգն է:
- **Վարակի ռիսկը** որևէ տնտեսվարող սուբյեկտի մոտ կամ տնտեսության ոլորտում առաջացած խնդիրների հնարավոր շղթայական ազդեցությունն է այլ տնտեսվարող սուբյեկտ(ներ)ի կամ տնտեսության ոլորտ(ներ)ի վրա, որը կարող է բացասաբար անդրադառնալ Բանկի գործունեության վրա:
- **Ռազմավարական ռիսկը** հեռանկարային զարգացման ուղղության սխալ ընտրության և սխալ ռազմավարական որոշումների կայացման ռիսկն է, որի արդյունքում ռազմավարական զարգացման նպատակների իրականացումը կարող է հանգեցնել կորուստների կամ չի կարող ապահովել կանխատեսվող արդյունքները:
- **Օրենսդրական, նորմատիվային դաշտի փոփոխության ռիսկը** կարող է ոչ բարենպաստ ազդեցություն ունենալ Բանկի գործունեության վրա, խստացնելով կամ բարդացնելով գործընթացները, ներառյալ հարկային դաշտի փոփոխությունը իր երկակի ազդեցությամբ՝ թե՛ Բանկի հաճախորդների, թե՛ Բանկի հարկման ռեժիմի փոփոխության առումով:
- **Երկրի ընդհանուր և տնտեսական միջավայրի ռիսկը** (քաղաքական, սոցիալական և այլ գործոններ)՝ ենթադրում է զարգացման տարբեր սցենարների պայմաններում Բանկի հնարավոր միջոցառումների, անհրաժեշտ գործողությունների և գործելակերպի կարգավորում:

Բանկում ներդրված մեթոդաբանությունը հնարավորություն է տալիս գնահատել և օպտիմալ կառավարել **վարկային ռիսկը**՝ որպես էկզոգեն փոփոխականներ ներառելով նաև էքսպերտային գնահատականները և նպաստելով վարկի տրամադրման հիմնավորված որոշումների կայացմանը: Բանկի վարկային պորտֆելի կառուցվածքի հնարավոր տարբեր փոփոխությունների ազդեցությունները Բանկի գործունեության ընթացիկ ցուցանիշների վրա վերլուծվում և գնահատվում է սթրես թեստավորման և տարբեր հավանական սցենարների դիտարկման միջոցով: Վարկային ռիսկի կառավարման արդյունավետ համակարգի շնորհիվ բանկի վարկային պորտֆելը շարունակում է պահպանել ավանդական բարձր որակը և ցածր ռիսկայնության աստիճանը:

Վարկային պորտֆելի որակական վերլուծությունն ըստ ոլորտների ռիսկայնության ներկայացված է հետևյալ աղյուսակում.

Վարկերն ըստ ոլորտների	մնացորդ (հազ. դրամ)
Սպառողական	18,876,453
Ոչ ժամկետանց	18,428,482
Ժամկետանց	447,971
Առևտուր	10,716,641
Ոչ ժամկետանց	10,264,384
Ժամկետանց	452,257
Արտադրություն	9,206,363
Ոչ ժամկետանց	9,184,161
Ժամկետանց	22,202
Շինարարություն	4,268,965
Ոչ ժամկետանց	4,268,965
Ժամկետանց	0
Հիփոթեքային	3,216,232
Ոչ ժամկետանց	3,197,640
Ժամկետանց	18,592
Գյուղատնտեսություն	1,939,702
Ոչ ժամկետանց	1,914,548
Ժամկետանց	25,154
Այլ ճյուղեր	11,953,275
Ոչ ժամկետանց	11,901,529
Ժամկետանց	51,746

Տոկոսադրույքների փոփոխության ռիսկը գնահատվում է միջազգային պրակտիկայում լայն տարածում գտած «GAP մոդելի» միջոցով՝ տոկոսադրույքների փոփոխման նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների դիսբալանսի և ժամկետայնության ճեղքվածքների վերլուծության հիման վրա: «Դյուրացիայի մոդելի» հիման վրա տոկոսադրույքի փոփոխման ռիսկը գնահատվում է ակտիվների և պարտավորությունների միջին կշռված ժամկետայնության ցուցանիշների կիրառմամբ՝ դիտարկելով դյուրացիան որպես տոկոսադրույքների փոփոխության նկատմամբ ակտիվների և պարտավորությունների ներկա արժեքների զգայունության գնահատման գործիք: Իրականացվում է նաև առանձին արժույթներով արտահայտված ակտիվների և պարտավորությունների ճեղքվածքների վերլուծություն՝ զուտ տոկոսային եկամտի վրա դրանց տոկոսադրույքների փոփոխության ազդեցության տեսանկյունից: Նշված մոդելները հնարավորություն են տալիս իրականացնել ակտիվների և պարտավորությունների օպտիմալ կառավարում՝ հեջավորելով տոկոսադրույքի ռիսկը:

Ստորև ներկայացված է 31.12.15թ. դրությամբ բանկի զուտ տոկոսային եկամտի և կապիտալի զգայունությունը տոկոսադրույքների հնարավոր փոփոխությունների նկատմամբ.

2015թ.				
Արժույթ	Փոփոխություններ հիմնական տոկոսադրույքներում	Զուտ տոկոսային եկամտի զգայությունություն	Կապիտալի զգայությունություն	Ընդամենը
ՀՀ դրամ	100	-	(256,885)	(256,885)
ԱՄՆ դոլար	100	(19,963)	-	(19,963)
ՀՀ դրամ	(100)	-	272,936	272,936
ԱՄՆ դոլար	(100)	19,963	-	19,963

Բանկում **իրացվելիության ռիսկի** կառավարումն իրականացվում է ակտիվա-պասիվային գործառնությունների՝ ըստ ժամկետների և ծավալների տեղաբաշխվածության կարգավորման և օրական դրամական հոսքերի համապատասխանեցման միջոցով՝ պահպանելով իրացվելիության և շահութաբերության օպտիմալ հարաբերակցությունը: Ժամկետայնության ճեղքվածքների հիմնադրույթի կիրառման հիման վրա Բանկում ներդրված իրացվելիության ցուցանիշների գնահատման և կառավարման մեթոդաբանությունը հնարավորություն է ընձեռում հաշվարկված ակնթարթային, մինչև 90 օր և մինչև 1 տարի կուտակային իրացվելիության ցուցանիշների ժամանակային շարքերի հիման վրա գնահատել ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ճեղքվածքների ազդեցությունը Բանկի իրացվելիության վրա, որը հիմք է հանդիսանում ակտիվների և պարտավորությունների կառավարման օպտիմալ որոշումների կայացման համար: Սթերս թեստավորման սցենարային մոդելը հնարավորություն է տալիս գնահատել իրացվելիության նորմատիվների վրա շոկային տարբեր հնարավոր իրավիճակների ազդեցությունը: Բանկի կողմից ներգրավված ցպահանջ և ժամկետային միջոցների կենտրոնացումների ռիսկի գնահատման տնտեսամաթեմատիկական մոդելը, քվանտիլային վերլուծության հիման վրա, հնարավորություն է տալիս գնահատել ֆիզիկական և իրավաբանական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդների կենտրոնացումների մակարդակները՝ կիրառելով մշակված կենտրոնացումների գործակիցները և հաճախորդների միջև ավանդների բաշխվածության վերլուծական գրաֆիկները:

Ստորև ներկայացված է իրացվելիության ճեղքվածքի վերլուծությունը 31.12.15թ. դրությամբ.

Հոդվածի անվանումը	Մարմանը մնացել է							Ընդամենը
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-3 ամիս	3 ամսից 1 տարի	Ընդամենը մինչև 1 տարի	1 -ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Ընդամենը 1 տարուց ավել	
Զուտ դիրք	4,314,938	(12,838,722)	(7,827,352)	(16,351,136)	23,451,671	3,699,488	27,151,159	10,800,023
Կուտակային տարբերություն ակտիվների և պարտավորությունների միջև	4,314,938	(8,523,784)	(16,351,136)	(16,351,136)	7,100,535	10,800,023	10,800,023	-

Բանկում **արտարժույթային ռիսկի** կառավարումն իրականացվում է կիրառելով միջազգային պրակտիկայում ընդունված VAR մեթոդաբանությունը, ինչպես նաև սթրես թեստերի սցենարային վերլուծության մեթոդները: Սթրես թեստերի սցենարային վերլուծություններում դիտարկվում է արտարժույթի փոխարժեքի կտրուկ տատանման ազդեցությունը նորմատիվների վրա: Բանկի արտարժույթային քաղաքականությունը միտված է արտարժույթային ռիսկերի արդյունավետ կառավարման ապահովմանը՝ զուգակցելով այն արդարացված ռիսկի մակարդակի հետ:

Ստորև ներկայացվում է 31.12.15թ. դրությամբ Բանկի զգայունությունը ՀՀ դրամի՝ ԱՄՆ դոլարի, Եվրոյի, Ռուբլու փոխարժեքի 10% աճի կամ նվազման հանդեպ.

	Փոխարժեքի փոփոխություն	Ազդեցություն շահույթի վրա նախքան հարկումը		Փոխարժեքի փոփոխություն	Ազդեցություն շահույթի վրա նախքան հարկումը	
		Արժևորում	Արժեզրկում		Արժևորում	Արժեզրկում
ԱՄՆ դոլար	10%	153,135	(153,135)	10%	81,199	(81,199)
Եվրո	10%	378	(378)	10%	1,040	(1,040)
ՌԴ ռուբլի	10%	4,369	(4,369)	10%	(4,660)	4,660

Գնային ռիսկի հնարավոր նվազագույն մակարդակն ապահովվում է հետևյալ միջոցառումների շրջանակներում.

- ✓ ֆինանսական շուկայի կառուցվածքային, ծավալային և գնային ցուցանիշների դինամիկայի, առանձին ֆինանսական գործիքների իրացվելիության վերլուծություն, առկա միտումների բացահայտում,
- ✓ հնարավոր կորուստների գնահատում,
- ✓ հեջավորման գործիքների կիրառում,
- ✓ ֆինանսական գործիքների գծով լիմիտների (ըստ կապիտալի գործիքներով գործառնության տեսակի, ըստ դիլերի, ըստ թողարկողի, stop-loss) սահմանում,
- ✓ կապիտալի գործիքների փաթեթի բազմազանեցում (դիվերսիֆիկացիա)՝ ըստ թողարկողի, տնտեսության ճյուղերի, ժամկետայնության և այլն:

Բանկային հիմնական և օժանդակ բիզնես-գործընթացների յուրաքանչյուր բաղադրիչ գործառնությունը պարունակում է որոշակի մակարդակի **գործառնական ռիսկ**, որը կարող է հանգեցնել ինչպես փոքր, այնպես էլ Բանկի համար էական չափերի հասնող կորուստների, որով էլ պայմանավորված է գործառնական ռիսկի արդյունավետ կառավարման կարևորությունը և առաջնային նշանակությունը բանկերի համար: Գործառնական ռիսկի հսկողության արդյունավետ համակարգի կիրառումն այդ ռիսկի օպտիմալ կառավարման կարևորագույն գործոններից է, որն ապահովվում է օրական հսկողության իրականացման, պարբերական և թեմատիկ ստուգումների միջոցով գործող կանոնակարգվածության մակարդակի պատշաճության գնահատման, կանոնակարգման կարիք ունեցող գործառնությունների վերհանման, հնարավոր ռիսկերի բացահայտման և պատասխանատու մարմիններին դրանց մասին տեղեկացման միջոցով:

Հեղինակության ռիսկն արտահայտվում է ֆինանսական և բիզնես ռիսկերի ազդեցության ներքո Բանկի հեղինակության վատթարացմամբ: Ֆինանսական և բիզնես ռիսկերը կառավարելիս հաշվի է առնվում դրանց պոտենցիալ ազդեցությունը հեղինակության ռիսկի վրա: **Վարակի ռիսկը** գնահատվում է արտարժույթային, վարկային, իրացվելիության, տոկոսադրույքի փոփոխման և գնային ռիսկերի համատեղ դիտարկման միջոցով: Վարակի ռիսկի գնահատման համար կիրառվում է սթրես թեստավորում, որի սթրես թեստերի սցենարները (շուկային վիճակի լրջությունը, ռիսկատեսակների միջև փոխկապվածությունը և այլն) կազմվում են էքսպերտային եղանակով:

Օրենսդրական, նորմատիվային դաշտի փոփոխության ռիսկի կառավարումը ենթադրում է իրավասու մարմինների հետ համագործակցություն և համապատասխան վերլուծական տեղեկանքների պատրաստում, Բանկի արագ և ճկուն արձագանքման միջոցառումների իրականացում:

Ռիսկերի վերաբերյալ առավել մանրամասն բացահայտումները ներկայացված են Բանկի հրապարակվող հաշվետվություններին կից ծանոթագրություններում (Ծանոթագրություն 32):

3. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ

1) Բանկի պատմությունը և զարգացումը

ա. բանկի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, գրանցված ապրանքանիշերը: Եթե բանկի կանոնադրությամբ տրված են բանկի անվանման տարբերակներ օտար լեզուներով, նշվում են նաև դրանք: Եթե բանկի գործունեության ընթացքում փոփոխվել է նրա անվանումը կամ բանկը վերակազմակերպվել է, ապա ներկայացնել այդ մասին տեղեկատվություն:

Բանկի լրիվ ֆիրմային անվանումն է.

հայերեն՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ» ԲԱՅ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

անգլերեն՝ «ARMENIAN ECONOMY DEVELOPMENT BANK» OPEN JOINT STOCK
COMPANY

ռուսերեն՝ «БАНК РАЗВИТИЯ ЭКОНОМИКИ АРМЕНИИ» ОТКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ
ОБЩЕСТВО

Բանկի կրճատ ֆիրմային անվանումն է

հայերեն՝ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ

անգլերեն՝ «ARMECONOMBANK» OJSC

ռուսերեն՝ «АРМЭКОНОМБАНК» ОАО

Բանկի կազմակերպական-իրավական ձևը՝ բաց բաժնետիրական ընկերություն:

Բանկի գրանցված ապրանքանիշ՝ Բանկի ապրանքային նշանը (Մտավոր սեփականության գործակալության գրանցման վկայագիր № 13637):

1987թ. ստեղծված նախկին ԽՍՀՄ Բնակարարական Հայկական Հանրապետական Բանկի հիման վրա ՀՀ Նախարարների խորհրդի 14.02.91թ. թիվ 115 որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության պետական ակցիոներական կոմերցիոն բանկը (1991-93թթ. «Հայպետառքանկ» ՓԲԸ) 1993 թվականի դեկտեմբերի 28-ն վերագրանցվել է որպես «Հայաստանի Էկոնոմիկայի զարգացման բաժնետիրական բանկ»: Հայէկոնոմբանկի բաժնետերերի 1995թ. մարտի 14-ին կայացած ընդհանուր ժողովի որոշմամբ այն վերակազմավորվել է «Հայաստանի Էկոնոմիկայի զարգացման բանկ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ):

բ. Բանկի պետական գրանցման վայրը և համարը.

Բանկի պետական գրանցման վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Ամիրյան 23/1, գրանցման համարը՝ 1:

գ. ստեղծման ամսաթիվը և փաստացի գործունեություն ծավալելու ժամանակահատվածը (եթե հնարավոր է որոշել).

Բանկը /նախկին ԽՍՀՄ Բնակարարական հայկական հանրապետական բանկ/ Հայաստանի Հանրապետության պետական բանկերից առաջինն է վերակազմավորվել բաժնետիրական բանկի.

1991թ. փետրվարի 14-ի ՀՀ Մինիստրների խորհրդի No115 որոշմամբ ԽՍՀՄ Բնակարարական հայկական հանրապետական բանկի հիման վրա ստեղծվել է Հայաստանի Հանրապետության պետական ակցիոներական կոմերցիոն բանկ (Հայպետկոմբանկ):

Բանկը փաստացի գործունեությունն սկսել է իրականացնել 1987թ.-ից մինչ օրս՝ շուրջ 29 տարի:

դ. բանկի գտնվելու վայրը, օրենսդրությունը, որի ներքո բանկը գործունեություն է ծավալում, բանկի հիմնադրման երկիրը, կանոնադրությամբ նշված գտնվելու վայրը, փաստացի գործունեություն ծավալելու վայրը, եթե տարբերվում է կանոնադրությամբ նշված գտնվելու վայրից, կապի միջոցները (հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ), ինտերնետային կայքը,

Բանկի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Ամիրյան 23/1:

Բանկի հիմնադրման երկիրը՝ Հայաստանի Հանրապետություն:

Օրենսդրությունը, որի ներքո թողարկողը գործունեություն է ծավալում՝ ՀՀ օրենսդրություն: Կապի միջոցները՝

հեռ. (+374 10) 510 910

ֆաքս (+374 10) 538 904

էլ. փոստ bank@aeb.am

ինտերնետային կայք www.aeb.am

31.12.2015թ. Բանկն ունի 40 մասնաճյուղ, որոնցից 39-ը՝ ՀՀ տարածքում և 1-ը՝ ԼՂՀ-ում՝ Ստեփանակերտ քաղաքում:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացվում է մասնաճյուղերի գործունեության հասցեները.

	ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՑԵ
1	«ՇԵՆԳԱՎԻԹ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 0026, ք. Երևան, Գարեգին Նժդեհի փող 28
2	«ՍՊԱՆԴԱՐՅԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 0001, ք. Երևան, Աբովյան փող. 22
3	«ԽՈՐՀՐԴԱՅԻՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 0056, ք. Երևան, Նորքի 1-ին մ/շ, 14/15 շենք
4	«ԱՐԱԲԿԻՐ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 0057, ք. Երևան, Կոմիտասի փող. 57 շենքի թիվ 23 շինություն
5	«ԷՐԵՐՈՒՆԻ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 0005, ք. Երևան, Արցախի փող. 24
6	«ՄՅԱՍՆԻԿՅԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 0025, ք. Երևան, Իսահակյան փող. 12
7	«ՇԱՀՈՒՄՅԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 0088, ք. Երևան, Մազմանյան փող. հ.5
8	«ՄԵՏԱՔՍ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 0065, ք. Երևան, Սեբաստիայի փող. 23ա
9	«ՏԻԳՐԱՆ ՄԵԾ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 0018, ք. Երևան, Տիգրան Մեծի փ., թիվ 49 և թիվ 49 շինություն
10	«ԿԵՆՏՐՈՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 0010, ք. Երևան, Արամի փ. թիվ 3 և 5 շենք
11	«ԷՐԵՐՈՒՆԻ-1» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 0087, ք. Երևան, Տիտոգրադյան փ. 14
12	«ԽՈՐՀՐԴԱՅԻՆ-1» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 0062, ք. Երևան, Գյուրջյան փ. 10
13	«ՆԱԻՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 0015, ք. Երևան, Պարոնյան փ. 21
14	«ԱՋԱՓՆՅԱԿ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 0078, ք. Երևան, Մարգարյան 6
15	«ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 0047, ք. Երևան, Նորք-Մարաշ համայնք, Նորքի 8 փ. N 1 բնակելի տուն
16	«ՌՈՍԻԱ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի պող., թիվ 16
17	«ԶԵՅԹՈՒՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 0069, ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն համայնք, Դ. Անհաղթի փ. թիվ 11/1 և 11/2
18	«ՍԱՐԱՋՈՎ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի պող. 25 շենք թիվ 27 շինություն
19	«ՆՈՒԲԱՐԱՇԵՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ 0071, ք. Երևան, Նուբարաշեն 7 փողոց, համար 2
20	«ԳՅՈՒՄՐԻ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 3104, ք. Գյումրի, Աբովյան փող. N 244
21	«ՎԱՆԱՁՈՐ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 2001, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի պող. թիվ 59
22	«ԱԲՈՎՅԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 2207, ք. Աբովյան, Ինտերնացիոնալի փող. 1 շենք,

		թիվ 29-32 շինություն
23	«ԱՐՏԱՇԱՏ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 0701, ք. Արտաշատ, Աթարբեկյան փող. 135/2
24	«ԱՐՄԱՎԻՐ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 9001, ք. Արմավիր, Զիվանու փող. 8
25	«ՀՐԱԶԴԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 2301, ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, Սահմանադրության հրապ. թ.2/3
26	«ԷՋՄԻԱԾԻՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 1101, ք. Էջմիածին, Մաշտոցի փող. 8 և Մաշտոցի փող թիվ 8ա/28 խանութ
27	«ՍԵՎԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 1501, ք. Սևան, Նաիրյան փող. 141-3
28	«ԹՈՒՄԱՆՅԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 1701, ք. Ալավերդի, Թումանյան փողոց 44 բանկ
29	«ԱՇՏԱՐԱԿ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 0201, ք. Աշտարակ, Ներսես Աշտարակեցու հրապարակ
30	«ՆԱԻՐԻ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 2401, ք. Եղվարդ, Երևանյան փող. 10ա
31	«ՄԱՐՏՈՒՆԻ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 1401, ք. Մարտունի, Գ.Նժդեհի փող. 2ա
32	«ՍՊԻՏԱԿ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 1804, ք. Սպիտակ, Շահումյան 5
33	«ԳՈՐԻՍ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 3201, ք. Գորիս, Մաշտոցի փող. 4
34	«ԱՐՅԱԽ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ԼՂՀ, 0008, ք. Ստեփանակերտ, Ազատամարտիկների 21
35	«ԱՐԱՐԱՏ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 0602, ք. Արարատ, Շահումյան փող. 58
36	«ԻՋԵՎԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 4001, ք. Իջևան, Անկախության փ. թիվ 1Բ
37	«ՇԻՐԱԿ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 3126, ք. Գյումրի, Պ. Սևակի փող., թիվ 2 շենք, թիվ 3 տարածք
38	«ԵՂԵԳՆԱՁՈՐ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 3601 ք. Եղեգնաձոր, Նարեկացի փող. թիվ18
39	«ԳԱՎԱՌ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 1201, ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ N10
40	«ՀՐԱԶԴԱՆ-ՄԻԿՐՈ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 2302, ք. Հրազդան, Միկրոշրջան թաղամաս թիվ 78/12 խանութ

Բանկը ՀՀ տարածքում և տարածքից դուրս գրանցված ներկայացուցչություններ չունի:

Մասնաճյուղերին տրված լիազորությունները գործում են անժամկետ: Մասնաճյուղերի կառավարիչները և գլխավոր հաշվապահները ՀՀ ԿԲ սահմանված կարգով անցնում են լիցենզավորում:

Ե. Բանկի բիզնեսի զարգացման մեջ տեղի ունեցած կարևոր դեպքերը՝ ըստ բանկի:

Բանկը (նախկին ԽՍՀՄ Բնակարկային կառուցման հանրապետական բանկ) Հայաստանի Հանրապետության պետական բանկերից առաջինն է վերակազմավորվել բաժնետիրական բանկի:

1991թ. փետրվարի 14-ի ՀՀ Մինիստրների խորհրդի №115 որոշմամբ ԽՍՀՄ Բնակարկային կառուցման հանրապետական բանկի հիման վրա ստեղծվել է Հայաստանի Հանրապետության պետական ակցիոներական կոմերցիոն բանկը (Հայպետկոմբանկ):

1991թ. օգոստոսի 9-ի ՀՀ Մինիստրների խորհրդի №509 որոշմամբ բանկը վերակազմավորվել է Հայաստանի Հանրապետության պետական կոմերցիոն բանկ (Հայպետկոմբանկ) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ գրանցվելով ՀՀ Կենտրոնական բանկում 1991թ. օգոստոսի 26-ին (գրանցում ԹԻՎ 1):

1992թ. նոյեմբերի 16-ին բանկը ՀՀ ԿԲ-ից ստացել է բանկային գործառնություններ իրականացնելու №1 լիցենզիա:

1992թ. դեկտեմբերի 4-ին բանկը ՀՀ ԿԲ-ից ստացել է արտարժույթով գործառնություններ իրականացնելու Գլխավոր լիցենզիա №13:

1993թ. դեկտեմբերի 28-ին ՀՀ ԿԲ վարչության նստի որոշմամբ (արձանագրություն №40) Հայպետկոմբանկը վերագրանցվել է Հայաստանի էկոնոմիկայի զարգացման բաժնետիրական բանկի (Հայէկոնոմբանկ) (գրանցում՝ ԹԻՎ 1/35)՝ ստանալով ԹԻՎ 1/35 բանկային գործառնությունների իրականացման Արտոնագիր:

1994թ. հունվարի 21-ին բանկը ՀՀ ԿԲ-ից ստացել է արտարժույթով գործառնություններ իրականացնելու Գլխավոր լիցենզիա №13:

1995թ. ապրիլի 6-ին բանկը ՀՀ ԿԲ-ից ստացել է ԹԻՎ 1 արտարժույթով գործառնություններ իրականացնելու Գլխավոր արտոնագիր:

1996թ. հոկտեմբերի 31-ին բանկը ՀՀ ԿԲ-ից ստացել է բանկային գործունեության լիցենզիա ԹԻՎ 1:

1998թ. հունիսի 8-ին բանկը ՀՀ ԿԲ-ից ստացել է բանկային գործունեության լիցենզիա ԹԻՎ 1:

2001թ. նոյեմբերի 14-ին բանկը ՀՀ ԿԲ-ից ստացել է բանկային գործունեության լիցենզիա ԹԻՎ 1:

2002թ. Բանկի բաժնետոմսերը ցուցակվել են «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի «B» հարթակում, կանոնադրական հիմնադրամը համալրվել է 300 մլն դրամով:

2003թ. Կանոնադրական հիմնադրամը համալրվել է 200 մլն դրամով:

2004թ. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի ու Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի (EBRD) միջև կնքվեց պայմանագիր, որով սկսվեց Բանկի կանոնադրական կապիտալում ՎԶԵԲ-ի մասնակցության գործընթացը, որի արդյունքում ՎԶԵԲ-ի մասնակցությունը Բանկի կանոնադրական կապիտալում կկազմի 25%+1 բաժնետոմս:

2005թ. Կանոնադրական հիմնադրամը համալրվել է 633.3 մլն դրամով:

2007թ. Փետրվարին Moody's Investors Service միջազգային վարկանիշային ընկերությունը ՀՀ բանկային համակարգում առաջին անգամ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն շնորհեց ֆինանսական կայունության E+ և երկարաժամկետ ՀՀ դրամով ու արտարժույթով ավանդների B1 վարկանիշներ, երկուսն էլ Stable Outlook-ով (կայուն հեռանկար): Ապրիլին, վերանայելով շնորհված վարկանիշները, Moody's Investors Service միջազգային վարկանիշային ընկերությունը Բանկին արժանացրել է ավելի բարձր՝ ֆինանսական կայունության D- և ՀՀ

դրամով և արտարժույթով երկարաժամկետ ավանդների Ba3 վարկանիշների, երկուսն էլ Stable Outlook-ով (կայուն հեռանկար):

2009թ. Բանկը դարձել է «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի անդամ:

2011թ. Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկն իրենց գործառնություններով հնարավոր առավելագույն ժամկետով (ևս երեք տարով) երկարաձգեց իր մասնակցությունը (25% +1 բաժնետոմս) «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի կանոնադրական կապիտալում: Բանկը դարձել է "VISA" միջազգային վճարահաշվարկային համակարգի անդամ:

2013թ. Բանկը ստացել է ISO/IEC 27001:2005 (Տեղեկատվության անվտանգության կառավարման համակարգ) հավաստագիր: «MoneyGram» վճարահաշվարկային համակարգը «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ին շնորհեց «Գերազանցության որակ» երկարաժամկետ և արդյունավետ համագործակցության հավաստագիր: Գերմանական Commerzbank AG-ն «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ին շնորհեց «Որակի գերազանցության» մրցանակ՝ 2013թ. միջազգային փոխանցումների բարձր որակ ապահովելու, ինչպես նաև անթերի և արագ իրականացնելու համար:

2014թ.: Ասիական Զարգացման Բանկը Առևտրի ֆինանսավորման ծրագրի շրջանակներում «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ին շնորհեց «Հայաստանում առաջատար գործընկեր բանկ» մրցանակ:

2014 թվականի դեկտեմբերի 3-ին Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկը (ՎԶԵԲ), պարոն Սարիբեկ Սուքիասյանը, պարոն Ռոբերտ Սուքիասյանը, պարոն Խաչատուր Սուքիասյանը եւ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն կնքել են բաժնետոմսերի գնման պայմանագիր, որով ՎԶԵԲ-ը համաձայնել է վաճառել իր 233,335 սովորական բաժնետոմսերը հինգ հավասար մասնաբաժիններով (46,667 ամեն տրանշ) հինգ տարվա ընթացքում՝ սկսած 2014 թվականի դեկտեմբերից մինչև 2019-ի մարտի 2-ը:

2015 թ. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն դարձել է արժեթղթերի հաշվարկային համակարգի անդամ: «MoneyGram» վճարահաշվարկային համակարգը «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ին շնորհել է «Պրոֆեսիոնալիզմի և Հայաստանում փոխանցման ծառայությունների զարգացմանը նպաստելու համար» հավաստագիր: «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի և Ղազախստանի «ԲՏԱ բանկ» ՓԲԸ-ի ղեկավարների միջև ստորագրվեց երկու բանկերի միացման հուշագիր՝ ՀՀ-ում գրանցված և գործունեություն իրականացնող «ԲՏԱ բանկ» ՓԲԸ-ն «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ին միացնելու նպատակով:

2016թ. մարտի 18-ին կայացած «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ և «ԲՏԱ բանկ» ՓԲԸ բաժնետերերի ժողովներում որոշում կայացվեց «ԲՏԱ բանկ» ՓԲԸ-ն «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ին միացնելու վերաբերյալ: 06.05.2016թ.-ին ՀՀ Կենտրոնական բանկը նախնական հավանություն է տվել միացման պայմանագրի կնքմանը:

Բանկին տրված լիցենզիաները և արտոնագրերն անժամկետ են:

2) Ներդրումները

ա. պատմական ֆինանսական ժամանակաշրջանի ընթացքում և դրանից հետո մինչև ազդագիրը գրանցման ներկայացնելու պահը կատարված էական ներդրումների նկարագիրը, ներառյալ՝ ներդրումների ծավալը.

Չկան:

բ. այն էական ներդրումների նկարագիրը, որոնք ընթացքի մեջ են, ներառյալ՝ այդ ներդրումների տարածքային տեղաբաշխումը (ներքին, օտարերկրյա) և ֆինանսավորման աղբյուրները (ներքին, արտաքին).

Ձկան:

գ. տեղեկատվություն բանկի ապագա էական այն ներդրումների մասին, որոնց կատարման ուղղությամբ բանկի կառավարման համապատասխան մարմինները ստանձնել են պարտավորություն, ինչպես նաև դրանց ֆինանսավորման աղբյուրները (ներքին, արտաքին):

Ձկան:

4. ԲԻԶՆԵՍԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1) Հիմնական գործունեությունը

ա. բանկի գործառույթների և հիմնական գործունեության նկարագիրը և դրանց վրա ազդող հիմնական գործոնները՝ պատմական ֆինանսական ժամանակաշրջանում վաճառված ապրանքների կամ մատուցված ծառայությունների հիմնական տեսակները.

Հայէկոնոմբանկը հանդիսանում է ՀՀ բանկային համակարգի արդյունավետ զարգացող, օղակներից մեկը, որը վերջին տասնյոթ տարիներին գործել է շահույթով: Նշվածը հատկանշական է, հաշվի առնելով ՀՀ տնտեսության զարգացման ընդհանուր իրավիճակը և բանկային համակարգում դրսևորված միտումները:

Բանկի համար առավել կարևոր գործունեությունը ֆինանսական միջնորդության՝ միջոցների ներգրավման և տեղաբաշխման, իրականացումն է, որը զուգորդվում է բանկային այլ բազմաբնույթ ծառայությունների մատուցմամբ:

Հանդիսանալով ունիվերսալ բանկ, Հայէկոնոմբանկը գործունեություն է ծավալում բանկային ծառայությունների մատուցման բոլոր ոլորտներում: Բանկը իր կայուն զարգացող դիրքերն ունի թե արտարժույթային, թե արժեթղթերի, թե միջբանկային շուկաներում: Որպես ունիվերսալ կառույց, բանկը ակտիվ գործունեություն է ծավալում թե վարկավորման, թե ծառայությունների մատուցման, թե փոխանցումների նոր գործիքների, թե պլաստիկ քարտերի սպասարկման ոլորտներում:

Բանկը ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կարող է իրականացնել հետևյալ ֆինանսական գործառնությունները.

ա/ ընդունել ցպահանջ և ժամկետային ավանդներ.

բ/ տրամադրել առևտրային և սպառողական վարկեր, այդ թվում՝ տալ հիփոթեքային վարկեր, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ.

գ/ տրամադրել բանկային երաշխիքներ և ակրեդիտիվներ (վարկային նամակներ).

դ/ բացել և վարել հաշիվներ, այդ թվում՝ այլ բանկերի թղթակցային հաշիվներ.

ե/ մատուցել այլ վճարահաշվարկային ծառայություններ և (կամ) այլ կերպ սպասարկել հաճախորդների հաշիվները.

զ/ թողարկել, գնել (զեղչել), վաճառել և սպասարկել արժեթղթեր, նման այլ գործառնություններ կատարել.

է/ ինվեստիցիոն (ներդրումային) և բաժանորդագրական գործունեություն իրականացնել.

ը/ մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անձանց արժեթղթերն ու ներդրումները (հավատարմագրային (լիազորագրային) կառավարում).

թ/ գնել, վաճառել և կառավարել բանկային ոսկի և ստանդարտացված ծուլակտորներ և հուշադրամ.

ժ/ գնել և վաճառել (փոխանակել) արտարժույթ, այդ թվում՝ կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ.

ժա/ իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ),

ժբ/ ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ.

ժգ/ մատուցել ֆինանսական և ինվեստիցիոն խորհրդատվություն,

ժդ/ ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքերի հետ ստացման գործունեություն,

ժզ/ իրացնել ապահովագրական վկայագրեր և (կամ) պայմանագրեր, օրենքով սահմանված կարգով իրականացնել ապահովագրական գործակալի գործառնություններ,

ժէ/ իրականացնել «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով նախատեսված այլ գործառնություններ:

Բանկը նշված գործառնությունները կատարում է ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով:

ՀՀ Կենտրոնական բանկի թույլտվությամբ Բանկը կարող է իրականացնել նաև այնպիսի գործունեություն կամ գործառնություններ, որոնք բխում են կամ սերտորեն կապված են բանկային գործունեության հետ:

Նշված գործառնությունները Բանկը կատարում է պայմանագրերի հիման վրա, որոնցում սահմանվում են կողմերի իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը, տոկոսադրույքները, արտոնությունները, տույժերը, պարտավորությունների ապահովման ձևերը, որոնք չեն հակասում ՀՀ օրենսդրությանը:

Բանկն իրավունք ունի իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտավորություններ, լինել հայցվոր և պատասխանող դատարանում:

Առանց ՀՀ Կենտրոնական բանկի նախնական համաձայնության Բանկին արգելվում է այնպիսի գործարքներ կամ գործառնություններ իրականացնելը, որոնց արդյունքում Բանկի մասնակցությունը՝

ա/ մեկ այլ անձի կանոնադրական հիմնադրամում 4.99 տոկոս և ավելին է,

բ/ մեկ այլ անձի կանոնադրական հիմնադրամում գերազանցում է Բանկի ընդհանուր կապիտալի 15%-ը,

գ/ բոլոր անձանց կանոնադրական հիմնադրամներում գերազանցում է Բանկի ընդհանուր կապիտալի 35%-ը :

Սույն կետով նախատեսվածը կարգավորվում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով:

Բանկն իրավունք ունի թղթակցային հաշիվներ բացել այլ բանկերում:

Բանկն ինքն է որոշում ներգրավվող ավանդների, տրամադրվող վարկերի տոկոսադրույքները և միջնորդավճարների չափը:

Բանկը երաշխավորում է իր հաճախորդների և թղթակից բանկերի ավանդների, հաշիվների և գործառնությունների գաղտնիությունը և ամբողջականության պահպանումը:

Բանկում գտնվող հաճախորդների դրամական միջոցների (ներառյալ քաղաքացիների ավանդները) և այլ գույքի վրա կարող է կալանք դրվել և բռնագանձում տարածվել միայն Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ստորև ներկայացվում է պատմական ֆինանսական ժամանակաշրջանում վաճառված ապրանքների կամ մատուցված ծառայությունների հիմնական տեսակները.

Միջոցների ներգրավում

Բանկը ֆիզիկական և իրավաբանական անձանցից ընդունում է ժամկետային և ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով և արտարժույթով:

Բանկը հաճախորդներին առաջարկում է ավանդներ՝ տարբերակված ըստ նպատակների, ժամկետների, տոկոսադրույքների և տոկոսների վճարման հաճախականության:

Վարկեր և միջոցների այլ տեղաբաշխումներ

Բանկն իրականացնում է վարկավորման հետևյալ տեսակները՝ առևտրային վարկերի տրամադրում՝ բիզնեսի վարկավորում (այդ թվում՝ վարկային գծերի, օվերդրաֆտների, երաշխիքների, փաստաթղթային ակրեդիտիվների տրամադրում), բնակարանի ձեռքբերման և նորոգման հիփոթեքային վարկերի, ավտովարկերի, անշարժ գույքի գրավադրմամբ սպառողական վարկերի, լոմբարդային վարկերի, պլաստիկ քարտերով վարկային գծերի, ինչպես նաև սպառողական այլ վարկերի տրամադրում:

Արտարժույթի և արժեթղթերի առքուվաճառք

Բանկը կատարում է արտարժույթի, ՀՀ պետական պարտատոմսերի առ ու վաճառքի գործարքներ:

Գանձապետարանի սպասարկում

Բանկն իրականացնում է ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետարանի դրամարկղային սպասարկում:

Բանկային փոխանցումներ

Բանկը 1996թ.-ից սկսած անդամակցում է S.W.I.F.T. միջազգային համակարգին:

31.12.15թ. դրությամբ Բանկը թղթակցային հաշիվներ ունի տեղական և միջազգային 23 բանկերում, ինչը հնարավորություն է տալիս ապահովել Բանկի հաճախորդների վճարահաշվարկային սպասարկումը ցանկացած արժույթով և վճարային գործիքով:

Հաշվի առնելով ֆիզիկական անձանց դրամական փոխանցումների ծավալների աճը՝ Բանկն առանձնապես կարևորում է դրամական փոխանցումների համակարգերի կատարելագործումը և ընդլայնումը: Կարևորելով դրամական փոխանցումների համակարգի ընդլայնման դերը՝ Բանկն անդամակցում է հետևյալ միջազգային արագ դրամական փոխանցումների համակարգերին. «MoneyGram», «Anelik», «Ria Money Transfers», «Sigue Money Transfer», «IntelExpress», «Unistream», «Converse Transfer» և «Golden Money Transfer»՝ իր հաճախորդին տալով ընտրության լայն հնարավորություն:

Պլաստիկ Քարտեր

Պլաստիկ քարտերի տրամադրում և սպասարկում, որոնց թողարկման ու սպասարկման համակարգերի կատարելագործումը Բանկի համար հանդիսանում է զարգացման գերակա

ուղղություններից մեկը՝ հաշվի առնելով ներկա պայմաններում բնակչության կողմից աճող պահանջարկը և անկանխիկ վճարումների ավելացմանն ուղղված պետության քաղաքականությունը:

Հանդիսանալով “Արմենիան քարդ” (ԱրՔա) ընկերության բաժնետեր և համակարգի լիիրավ անդամ՝ Բանկը թողարկում է ArCa GOLD PARADOX, ArCa Classic, ArCa կենսաթոշակային, ArCa BUSINESS, ArCa Junior, ArCa ADIDAS բանկային վճարային քարտեր:

2002 թվականի ընթացքում Բանկը դարձել է MasterCard վճարային համակարգի ասֆիլիացված անդամ: Բանկը թողարկում է Cirrus/Maestro, MasterCard Standard, MasterCard Gold և MasterCard Business քարտեր:

2011 թվականին Բանկը դարձել է VISA International վճարային համակարգի անդամ և թողարկում է VISA INFINITE, VISA PLATINUM, VISA GOLD, VISA BUSINESS, VISA CLASSIC, VISA CLASSIC PRO BONO, VISA CLASSIC PLUS, VISA ELECTRON և VISA ELECTRON կենսաթոշակային քարտեր:

Հաշվետու տարվա ընթացքում Բանկը շարունակեց վճարային քարտերի սպասարկման, տեխնիկական վերազինման և թարմացման աշխատանքները:

31.12.2015թ. դրությամբ Բանկի կողմից թողարկվում են և սպասարկվում Master, Visa և ArCa վճարային համակարգերի քարտեր:

Հանրային ծառայությունների դիմաց վճարների ընդունում

Հաճախորդներին վճարահաշվարկային ծառայությունների համալիր մատուցման նպատակով՝ Բանկը խթանում է հարկերի, տուրքերի, էլեկտրաէներգիայի, հեռախոսավարձի և այլ հանրային ծառայությունների դիմաց ֆիզիկական և իրավաբանական անձանցից վճարների ընդունումը:

Բանկն իր ծառայությունների մատուցումը կատարում է իր գլխավոր գրասենյակի, մասնաճյուղերի, բանկոմատների միջոցով:

բ. արդյո՞ք նախատեսվում է նոր ապրանքների արտադրություն կամ նոր ծառայությունների մատուցում: Այնքանով, որքանով գաղտնիք չէ, ներկայացնել այդ նոր ապրանքների կամ ծառայությունների զարգացման փուլը:

Բանկի արդյունավետ զարգացման կարևորագույն գրավականը նրա կողմից կատարվող գործառնությունների հստակ կանոնակարգումն ու օպտիմալացումն է, ինչպես նաև մատուցվող ծառայությունների բազմազանումը և սպասարկման որակի բարելավումը: Բանկի կողմից նոր ծառայությունների առաջարկը և մատուցումը իրականացվում է շուկայում սպառողների կողմից ներկայացված պահանջմունքի ուսումնասիրության հիման վրա: Բանկի նոր առաջարկների վերաբերյալ տեղեկատվությունը տեղ է գտնում ինտերնետում՝ Բանկի տնային էջում, ինչպես նաև գլխավոր գրասենյակի և մասնաճյուղերի սպասարկման սրահներում:

Մասնավորապես, նախատեսվում է ապահովել ֆինանսական բնույթի համալիր ծառայությունների մատուցում՝ ներառյալ տարբեր բնույթի խորհրդատվությունը: Օրինակ, բանկը, կատարելով ֆինանսական շուկաների վերլուծություն, խորհրդատվություն է մատուցում իր հաճախորդներին նշված բնագավառի վերաբերյալ՝ նպաստելով արդյունավետ ներդրումային գործունեությանը և այլն:

Բանկում մեծ ուշադրություն է դարձվում մատուցվող ծառայությունների շրջանակի ընդլայնմանը՝ բարձրացնելով դրանց որակը և ձգտելով յուրաքանչյուր հաճախորդին մատուցել ծառայությունների համալիր փաթեթ: Մատուցվող ծառայությունների բազմազանման շնորհիվ նախատեսվում է ներգրավել հաճախորդներ տնտեսության առավել արդյունավետ զարգացող ճյուղերից՝ հարաբերությունները կառուցելով անհատական մոտեցման սկզբունքներով: Վճարահաշվարկային գործունեության կատարելագործման ուղղությամբ բանկում լուրջ աշխատանքներ են տարվում՝ նպատակ ունենալով դրանք կատարել միջազգային չափանիշներին համապատասխան որակով և ժամկետներում: Բանկը նախատեսում է պլաստիկ քարտերի գծով նոր ծառայությունների մատուցում, ֆակտորինգային գործառնությունների ընդլայնում: Ընդլայնվելու են աշխատանքները չեկերի, ակրեդիտիվների և միջազգային վճարամիջոցների այլ ձևերի սպասարկման ակտիվացման ոլորտներում, հատկապես ՎՋԵԲ-ի հետ Trade Facility ծրագրի ներդրման, ՄՖԿ-ի հետ կնքած «Առևտրի խթանման և երաշխիքների տրամադրման» և Ասիական Զարգացման Բանկի հետ կնքած արտաքին առևտրի ֆինանսավորման վարկային գծի տրամադրման պայմանագրերի արդյունքում:

Բանկի կողմից նախատեսվում է նոր տեխնոլոգիաների ներդրում, որոնց համար պլանավորվում են անհրաժեշտ կապիտալ ներդրումներ, ինչը, արդյունքում, կբարձրացնի տեխնիկական հագեցվածությունը՝ համապատասխան հետևանքներով:

2) Հիմնական շուկաները

ա. թողարկողի արտադրանքների սպառման և ծառայությունների մատուցման հիմնական շուկաների նկարագիրը՝ ներկայացնելով ապրանքների և ծառայությունների յուրաքանչյուր խմբից ստացվող եկամուտները: Ներկայացնել նաև շուկաների տարածքային բաժանումը (ներքին, արտաքին, ըստ երկրների և այլն),

բ. եթե որևէ բացառիկ գործոն ազդել է թողարկողի հիմնական գործունեության կամ հիմնական շուկաների վրա, ապա ներկայացնել այդ փաստը.

Հայէկոնոմբանկը իր գործունեությունը ծավալում է ՀՀ ֆինանսաբանկային շուկայում, որի զարգացման միտումներն ուղղված են կորպորատիվ կառավարման սկզբունքների ներքո կայուն բանկային համակարգի ձևավորմանը, արդյունավետ դրամավարկային քաղաքականության վարման, կարգավորիչ նորմատիվային դաշտի սահմանման հիման վրա, ինչը արդյունքում կհանգեցնի միջազգային չափանիշներին մոտեցմանը, թե բանկային ծառայությունների մատուցման, թե կիրառվող տոկոսադրույքային քաղաքականության առումով:

Շուկան զարգանում է ազատ մրցակցության պայմաններում, ՀՀ ԿԲ կողմից վարվող դրամավարկային քաղաքականության շրջանակներում:

Հայէկոնոմբանկը, նշված շուկաներում, իր հաճախորդներին առաջարկում է բանկային ծառայությունների ընդգրկուն փաթեթ, ներառյալ ավանդավարկային, վճարահաշվարկային սպասարկումը:

Բանկը տրամադրում է տարբեր տեսակի վարկեր, օվերդրաֆտներ և այլն, գործունեություն է ծավալում ֆինանսական շուկայում, իրականացնելով արժեթղթերի և արտարժույթի առք ու վաճառք, կատարում է փոխանցումներ, տրամադրում և սպասարկում է պլաստիկ քարտեր:

Բանկային գործառնությունները կատարելիս, օգտվում է միջազգային վճարումների SWIFT համակարգից, միջազգային արագ դրամական փոխանցումների համակարգերից, ինչպես նաև Ռոյտերս դիլինգ և Բլումբերգ համակարգերից և այլն:

Բանկը ծառայություններ է մատուցում, օրենսդրությամբ սահմանված կարգով, հաշվի առնելով տարիքային դասակարգումը, անկախ սոցիալական պատկանելիությունից և իրավական կարգավիճակից:

Հաշվետու, ինչպես և նախորդ երկու ֆինանսական տարիների ընթացքում բանկի եկամտի 80%-ից ավելին ապահովվել է տոկոսային և ոչ տոկոսային եկամուտների հաշվին՝ հիմնականում վարկային և արժեթղթերում ներդրումներից, արտարժույթային գործառնություններից և մատուցված ծառայություններից:

Ստորև բերված աղյուսակներում ներկայացված են բանկի հիմնական գործունեությունից ստացված եկամուտների կառուցվածքը.

(հազ. դրամ)

ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ		2014	Տեսակարար կշիռը (%)	2015	Տեսակարար կշիռը (%)
1	Վարկեր հաճախորդներին	7,253,122	86.93	8,248,220	83.67
2	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	791,400	9.49	1,068,268	10.83
3	Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	97,842	1.17	128,183	1.30
4	Հակադարձ հետգնման պայմանագրեր	200,269	2.40	413,252	4.19
5	Այլ տոկոսային եկամուտ	256	0.01	86	0.01
Ընդամենը		8,342,889	100.0	9,858,009	100.0

(հազ. դրամ)

ՈՉ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ		2014	Տեսակարար կշիռը (%)	2015	Տեսակարար կշիռը (%)
1	Կոմիսիոն եկամուտներ	1,508,982	52.46	1,460,908	58.24
2	Զուտ (վնաս)/օգուտ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից և պարտավորություններից	130,157	4.52	(242,318)	-9.66
3	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով զուտ օգուտ	171,314	5.96	6,347	0.25
4	Արտարժույթային զուտ եկամուտ	747,117	25.97	885,591	35.30
5	Ստացված տույժեր և տուգանքներ	176,364	6.13	290,758	11.59
6	Թանկարժեք մետաղների վաճառքից և վերագնահա-	37,804	1.31	1,969	0.08

	տումից օգուտ				
7	Եկամուտ դրամաշնորհներից	507	0.02	507	0.02
8	Այլ եկամուտներ	104,260	3.63	104,762	4.18
Ընդամենը		2,876,505	100.0	2,508,524	100.0

Հաշվետու տարում բանկը շարունակել է իր որդեգրած քաղաքականությունը հաճախորդների բնագավառում՝ պահպանելով փոխշահավետության սկզբունքը՝ հաճախորդներին առաջարկել բանկային ծառայությունների ընդգրկուն փաթեթ, մշտապես նորացնելով և բազմազանելով այն, բարելավելով ծառայությունների մատուցման որակը:

2015թ.-ի Բանկի առավել հատկանշական ձեռքբերումներից է ՀՀ-ում գրանցված և գործունեություն իրականացնող «ԲՏԱ բանկ» ՓԲԸ-ն «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ին միացնելու նպատակով «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի և Ղազախստանի «ԲՏԱ բանկ» ՓԲԸ-ի ղեկավարների միջև երկու բանկերի միացման հուշագրի ստորագրումը:

Հաշվետու տարում Բանկը շարունակեց ակտիվ համագործակցությունը միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ, ինչի շնորհիվ խորացվեց ու ընդլայնվեց համագործակցության շրջանակները, գործող ծրագրերը, ինչպես նաև ծավալվեց գործակցություն նոր բանկային ծառայությունների ոլորտում: «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ և «BLUEORCHARD MICROFINANCE FUND» LLC ներդրումային ընկերության միջև կնքվեց 3.0 միլիոն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր, որով ներգրավված միջոցներն ուղղվելու են փոքր և միկրո բիզնեսի վարկավորմանը:

Բանկն իր զարգացման ներկա փուլում կարևորում է համարժեք մրցունակության մակարդակի ապահովումը հետևյալ շուկայական հատվածներում.

- փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորում,
- խոշոր բիզնեսի վարկավորում,
- սպառողական վարկավորում,
- բնակարանային հիփոթեք,
- միջազգային առևտրի սպասարկում՝ ներառյալ դրամական փոխանցումներ, ակրեդիտիվներ, երաշխիքներ
- ավանդների ներգրավում (տարբերակված ըստ ժամկետների, արժույթների և տոկոսների վճարման հաճախականության),
- հանրային ծառայությունների վճարների սպասարկում,
- պլաստիկ քարտերի տրամադրում և սպասարկում:

Առևտրային վարկերի տարամադրման և վճարահաշվարկային սպասարկման շուկայական հատվածում բանկերի միջև մրցակցությունը բավականաչափ կոշտ է, որի պարագայում Բանկի կողմից նախատեսվում է ապահովել ֆինանսական բնույթի համալիր ծառայությունների մատուցում՝ ներառյալ տարբեր բնույթի խորհրդատվությունը, որը Բանկի գործունեության ռազմավարական գերակայություններից է:

Բանկը, ելնելով միջոցների ներգրավման և տեղաբաշխման միտումներից ու գնահատվող հնարավորություններից, իր ռազմավարության թիրախներից դիտարկում է մանրածախ բանկային ծառայությունների մատուցումը, բանկային սպասարկումների և ծառայությունների մատչելիության ու հասանելիության ապահովումը սպառողների լայն շրջանակի համար, որի արդյունքում Բանկն իր ամուր դիրքը կհաստատի ՀՀ բանկային շուկայում:

Բանկը հետամուտ լինելով իր որդեգրած՝ միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ հարաբերությունների խորացման և ընդլայնման քաղաքականությանը՝ շարունակելու է միջազգային ֆինանսական շուկաներից միջոցների ներգրավման որդեգրված ռազմավարությունը, որը նախատեսում է ակտիվ համագործակցություն հանրապետությունում միջազգային ֆինանսավարկային ծրագրեր իրականացնող կազմակերպությունների հետ: Բանկը կշարունակի և կընդլայնի համագործակցությունը միջազգային ծրագրերի շրջանակներում՝ ՎՋԵԲ, ՄՖԿ, Գերմանա-հայկական հիմնադրամ (ԳՀՀ), Սևծովյան Առևտրի և Զարգացման Բանկի, Ասիական Զարգացման Բանկի, «BLUEORCHARD MICROFINANCE FUND» LLC ներդրումային ընկերության հետ: Բանակցություններ կվարվեն նաև միջազգային այլ կառույցների հետ՝ համագործակցության ակնկալիքով:

գ. Բանկի մրցակցային դիրքի նկարագրությունը:

Բանկի մրցակցային առավելությունների շարքում հարկ է նշել հետևյալը.

- ◆ Բանկում ինստիտուցիոնալ ներդրողների առկայությունը, որոնք հետապնդում են երկարաժամկետ նպատակներ և խնդիրներ՝ նպատակաուղղված Բանկի հետագա զարգացմանը:

- ◆ Բանկի կառավարման արդյունավետ համակարգը, որում հստակ ամրագրված են յուրաքանչյուր կազմակերպական միավորի գործառնության խնդիրները և որոշված են դրանց պատասխանատվության սահմանները:

- ◆ Ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգը, դրա հուսալիության բարձր աստիճանը, որը հնարավորություն ունի ժամանակին բացահայտելու առաջացող ռիսկերի բնույթը, դրանց հնարավոր ազդեցության մակարդակը և առաջարկելու դրանց չեզոքացման ուղիները:

- ◆ Կորպորատիվ կառավարման արդյունավետ համակարգը, որի շրջանակներում ամրագրված են Բանկի Խորհրդի և Վարչության պաշտոնատար անձանց ֆիդուցիար պատասխանատվությունը:

- ◆ Բանկային նոր ինովացիոն ծառայությունների նպատակաուղղվածությունը և նմանատիպ ծրագրերի իրացման հաջողված փորձը: Բանկի մրցունակության բարձրացման առանցքային գործոններից է տեղեկատվական տեխնոլոգիաների անհրաժեշտ բաղադրիչների յուրացումը, ծառայությունների մատուցումը, տեխնոլոգիաների միջազգային չափորոշիչների և համաշխարհային լավագույն փորձի վրա կառուցումը, որի արդյունքում Բանկում մշակվում ու ներդրվում են ինովացիոն և արդյունավետ պրոդուկտներ:

- ◆ Արտաքին միջավայրի ազդակների արագ արձագանքման արդյունավետ համակարգը, մասնավորապես՝ տնտեսության իրական հատվածում ընթացող գործընթացների և բանկային սպասարկումները, ծառայությունների ոլորտում տոկոսադրույքների ու սակագների փոփոխությունների նկատմամբ համարժեք արձագանքումը: Այդ նպատակով՝ Բանկը մշտապես իրականացնում է մարքեթինգային ուսումնասիրություններ և հարցումներ, պարբերաբար կազմակերպվում են հանդիպումներ հաճախորդների հետ: Դրա շնորհիվ Բանկը վարում է սակագնային և տոկոսադրույքային ճկուն քաղաքականություն և առաջարկում է շուկայում առավել մատչելի ու մրցունակ պայմաններ և սակագներ:

- ◆ Բանկի աշխարհագրության և մասնաճյուղային ցանցի ինտենսիվ զարգացումը երկրի բոլոր մարզերում: 2015 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի մասնաճյուղերի թիվը

կազմում է 40՝ մոտեցնելով Բանկի կողմից մատուցվող ծառայությունները հաճախորդների առավել լայն շրջանակի:

◆ Միջազգային ֆինանսական կառույցների հետ արդյունավետ համագործակցությունը: Բանկը համագործակցում է մի շարք կազմակերպությունների հետ, որոնց թվում են պատկանում՝ Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկը (ՎԶԵԲ), ՄՖԿ, Գերմանա-հայկական հիմնադրամը (ԳՀՀ), Սևծովյան Առևտրի և Զարգացման Բանկը, Ասիական Զարգացման Բանկը, «BLUEORCHARD MICROFINANCE FUND» LLC ներդրումային ընկերությունը և այդ շրջանակը առաջիկայում կընդլայնվի:

◆ Բանկի կառավարման բարձրագույն և միջին օղակներում բավարար ներուժ ու փորձ ունեցող կադրային պոտենցիալի առկայությունը, որն ունակ է լուծել Բանկի հեռանկարային զարգացման ծրագրով սահմանված խնդիրները:

◆ Բանկի կառավարման բոլոր օղակներում գործունեության բավարար կանոնակարգվածության աստիճանը:

◆ Բանկային ծառայությունների և սպասարկումների լայն սպեկտրը, Բանկի ուժեղ ու կայուն դիրքերը մանրածախ ծառայությունների ոլորտում, որոնց շնորհիվ Բանկը դինամիկ և հաստատուն ձևով ընդլայնում է ծառայությունների և սպասարկումների ծավալները:

◆ Բանկի կողմից հաճախորդների թիրախային խմբերի տարանջատումն ըստ բիզնեսի ոլորտների վարման առանձնահատկությունների ու քաղաքացիների շրջանում ըստ սոցիալական, աշխարհագրական, տարիքային և այլ չափորոշիչների, որի արդյունքում առաջարկվում է յուրաքանչյուր խմբին համարժեք նպատակային համալիր, բարձրորակ բանկային ծառայությունների շրջանակ:

◆ Անմիջապես հաճախորդների սպասարկման համար պատասխանատու աշխատակիցների վերապատրաստման ծրագրերը, որի շնորհիվ նաև բարելավվում է սպասարկման որակը և աճում հաճախորդների թվաքանակը:

◆ Բաժնետիրական ընկերության կարգավիճակում հանդես եկող <<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ-ի ձևավորված դրական վարկանիշը և աճող հեղինակությունը:

Ստորև ներկայացվում է որոշ հիմնական ցուցանիշների գծով 31.12.2015թ. դրությամբ Բանկի մասնաբաժինը շուկայում.

№	Ցուցանիշը	Մասնաբաժինը շուկայում /%/
1	Ընդհանուր ակտիվներ	3.07%
2	Վարկային ներդրումներ	2.74%
3	Ընդհանուր պարտավորություններ	3.27%
4	Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	3.24%
5	Ընդհանուր կապիտալ	1.96%

5. ԲԱՆԿԻ ԽՄԲԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

1) Եթե բանկը խմբի անդամ է, ապա համառոտ ներկայացնել խմբի կառուցվածքը և բանկի տեղը այդ խմբում,

Բանկը որևէ խմբի անդամ չի հանդիսանում: Բանկի հիմնական բաժնետերեր և «ՍԻԼ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ հիմնադիր հանդիսացող Սուքիասյանների ընտանիքը փայամասնակցություն ունի նաև հետևյալ ընկերություններում.

Կազմակերպության անվանումը	Գտնվելու վայրը
1. <<Նարեկ>> ՍՊԸ	Երևան, Մ. Խորենացու 30/1
2.<< Սիլ Կոնցեռն>>ՍՊԸ	Երևան 0018, Տ. Մեծի պող., 3-րդ նրբ. 62
3.<<Երևանի Արաղաց>> ԲԲԸ	Երևան, Նար-Դոսի փող. 2
4.<<Սպորտ Թայմ>> ՍՊԸ	Երևան 0018, Տ. Մեծի պող., 3-րդ նրբ. 62
5.<<Երևանի Զովք Գործարան>> ԲԲԸ	Երևան, Արտաշեսյան 99
6.<< Սատուրն Շինմոնտաժ>> ՍՊԸ	Երևան, Տ. Մեծի 3-րդ նրբ. 62
7. <<Բջնի Գրուպ>> ՍՊԸ	Զարենցավան, Գործարանային փող. 8
8.<<Նոյ Գրուպ>> ՍՊԸ	Երևան, Գետառի 4
9. <<Սիլ Ինշուրանս>> Ապահովագրական ՓԲԸ	Երևան, Տ. Մեծի պող. 39
10.<<Սիլ հանքային ջրերի գործարան>> ՍՊԸ	ՀՀ ք. Երևան Գետառի 4/8
11.<<Գոգո Ինթերնեյշնլ>> ՍՊԸ	Երևան, Տ. Մեծի պող. 49
12. << Առաջ>> ՍՊԸ	Երևան, Գետառի 4/8
13. <<Պոլիպլաստ>> ԲԲԸ	Երևան. Օդեսայի փողոց
14.<<ԳՈՂՈ Պլազա>> ՍՊԸ	ք. Երևան, , Տ. Մեծի պող. 3-րդ նրբ. 60
15. <<Մելնիցա Պլազա>> ՍՊԸ	Երևան. Նար-Դոսի 2
16.<<Երևան կահույք>> ԲԲԸ	Երևան, Չեյուսկինցիների 62
17. <<Գորվետկա Վան>> ՍՊԸ	ՀՀ ք. Երևան Գորվետկա 4
18. <<Երևան Ինկասացիա>> ՍՊԸ	ՀՀ ք. Երևան Մազմանյան 5

2) Ներկայացնել բանկի դուստր ընկերությունների ցանկը, ներառյալ անվանումը, հիմնադրման երկիրը, յուրաքանչյուր դուստր ընկերությունում բանկի մասնակցության չափը:

Բանկը դուստր ընկերություններ չունի:

6. ԲԱՆԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

1) Ներկայացնել տեղեկատվություն բանկի տրամադրության տակ գտնվող և մոտակայում պլանավորվող էական մեծություն կազմող հիմնական միջոցների (շենքեր, շինություններ, հողամաս, սարք, սարքավորում և այլն) վերաբերյալ, ներառյալ վարձակալած գույքը: Եթե որևէ հիմնական միջոց ընկերությանը սեփականության իրավունքով չի պատկանում, կամ նրա նկատմամբ սեփականության իրավունքը սահմանափակված է (մասնավորապես՝ եթե գրավ է դրված), ապա համառոտ ներկայացվում են այդ հիմնական միջոցի օգտագործման պայմանները և (կամ) օգտագործման սահմանափակումների բնույթը: Նշել նաև պլանավորվող էական մեծություն կազմող հիմնական միջոցների ֆինանսավորման աղբյուրները (ներքին, արտաքին): Հիմնական միջոցը համարվում է էական մեծություն

կազմող, եթե դրա արժեքը գերազանցում է թողարկողի հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի 10 և ավելի տոկոսը:

**<<ԳՅՈՒՄՐԻ>> ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ շենք
31.12.2015թ. դրությամբ**

	/դրամ/
Սկզբնական արժեք /ներառյալ վերա նորոգումները մինչև վերակառուցումը/	32,310,958.0
Մաշվածություն	26,244,643.0
Մնացորդային արժեք	6,066,315.0
Գլումրի մասնաճյուղի վերակառուցում	723,779,952.0
Ընդհանուր	729,846,267.0

2) Նկարագրել արդյո՞ք հնարավոր են այնպիսի փոփոխություններ, որոնք կարող են սահմանափակել բանկի կողմից հիմնական միջոցների օգտագործումը.

ՉԿԱՆ

7. ԲԱՆԿԻ ԿԱՊԻՏԱԼ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ (ՊԱՍԻՎՆԵՐԸ)

1) տեղեկատվություն բանկի սեփական կապիտալի մասին և ընթացիկ և ոչ ընթացիկ պարտավորությունների մասին,

Բանկի պասիվները 31.12.2015թ. դրությամբ կազմել են 108,792.2 մլն. դրամ, որի 10.1%-ը կամ 11,033.3 մլն դրամը կազմում է սեփական կապիտալը, իսկ 89.9%-ը ընդամենը պարտավորությունները:

Սեփական կապիտալի 21.1%-ը կամ 2,333.3 մլն դրամը կազմել է կանոնադրական կապիտալը, 54.3%-ը կամ 6,000.0 մլն դրամը՝ գլխավոր պահուստը, 0.2%-ը կամ 19.1 մլն դրամը՝ վերագնահատման պահուստները և 24.3%-ը կամ 2,680.9 մլն դրամը՝ չբաշխված շահույթը:

Ընդամենը պարտավորությունների խոշորագույն հոդվածները հաճախորդների նկատմամբ և բանկերի ու այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորություններն են, որոնք կազմել են ընդամենը պարտավորությունների համապատասխանաբար 63.4%-ը կամ 61,978.8 մլն դրամ և 29.6%-ը կամ 28,903.6 մլն դրամ:

Բանկը իր եռամսյակային միջանկյալ և տարեկան հաշվետվությունները հրապարակում է բանկի ինտերնետային կայքի՝ www.aeb.am, <<Հաշվետվություններ>> բաժնում, որտեղից կարելի է սեփական կապիտալի և ընդամենը պարտավորությունների մասին առավել ընդգրկուն տեղեկատվություն ստանալ:

2) բանկի դրամական հոսքերի առաջացման աղբյուրները և գումարները, ինչպես նաև ազատ ոճով նկարագրվում են այդ դրամական հոսքերը,

Բանկի դրամական հոսքերը գոյանում են նրա հիմնական գործունեությունից, այն է վարկերի տրամադրում, ավանդների ներգրավում, արժեթղթերի առք ու վաճառք, արտարժույթի առք ու վաճառք, վճարահաշվարկային ծառայությունների մատուցում, փոխանցումներ և այլն:

Բանկի 2015թ. դրամական հոսքերի հիմնական գումարներն արտացոլված են ստորև.

հազ. դրամ

Անվանում	2014թ.	2015թ.
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ նախքան գործառնական ակտիվներում կամ պարտավորություններում փոփոխությունները	1,502,140	1,225,376
Գործառնական գործունեությունից առաջացած դրամական միջոցներ նախքան շահութահարկով հարկումը	6,379,216	783,879
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	6,020,224	434,514
Ներդրումային գործունեությունում օգտագործված զուտ դրամական միջոցներ	(653,267)	(3,407,058)
Ֆինանսական գործունեությունից ստացված/(Ֆինանսական գործունեությունում օգտագործված) դրամական միջոցներ	(1,299,471)	8,487,286
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	4,487,714	5,196,135
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբի դրությամբ	17,866,741	22,354,455
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջի դրությամբ	22,354,455	27,550,590

Բանկը իր եռամսյակային միջանկյալ և տարեկան հաշվետվությունները հրապարակում է բանկի ինտերնետային կայքի՝ www.aeb.am, <<Հաշվետվություններ>> բաժնում, որտեղից կարելի է դրամական հոսքերի մասին առավել ընդգրկուն տեղեկատվություն ստանալ:

3) արդյո՞ք բանկն ունի փոխառություն ներգրավելու պահանջ,

Բանկային գործունեությունը իրենից ներկայացնում է ֆինանսական միջնորդություն՝ միջոցների ներգրավման և տեղաբաշխման իրականացում, ուստի կարելի է ասել, որ ցանկացած պարագայում բանկի համար միջոցների ներգրավումը հանդիսանում է առաջնային և հիմնական խնդիր:

4) կապիտալ ռեսուրսների օգտագործման այն սահմանափակումները, որոնք կարող են ուղղակի կամ անուղղակի էապես ազդել բանկի գործունեության վրա:

ԶԿԱՆ

8. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատմական ֆինանսական ժամանակաշրջանի համար բանկի կողմից հետազոտական և զարգացման աշխատանքներին ուղղված քաղաքականությունը, ներառյալ՝ բանկի կողմից

Ֆինանսավորվող հետազոտական և զարգացման աշխատանքներին ուղղված ծախսերի մեծությունը: (կարող են նաև ներկայացվել այնպիսի հետազոտական և զարգացման աշխատանքներ, որոնք կապված չեն բանկի գործունեության հետ):

ԶԿԱՆ:

9. ԱՐՏՈՆԱԳՐԵՐԸ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԸ

Բանկի գործունեության իրականացման հատուկ թույլտվությունների (լիցենզիաների) և արտոնագրերի վերաբերյալ տեղեկություններ՝ նշելով գործունեության համապատասխան տեսակները, տրման ամսաթվերը, գործողության ժամկետները.

ԶԿԱՆ:

10. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԵՐՋԻՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Բանկի արտադրած մատուցած ծառայությունների ծավալների աճի կամ նվազման միտումները, դրանց ինքնարժեքի և վաճառքի գների միտումները վերջին հաշվետու ֆինանսական տարվա ավարտից մինչև ազդագրի ներկայացման օրն ընկած ժամանակահատվածի համար: Ներկայացվում են միայն այն միտումները, որոնք ըստ բանկի էական են և (կամ) ողջամիտ ներդրողը կկարևորեր ներդրումային որոշումներ կայացնելիս:

Նախորդ հաշվետու տարվա վերջի համեմատ, Բանկի կողմից մատուցված ծառայությունների ծավալների և ծառայությունների սակագների փոփոխությունները պայմանավորված են տնտեսության ներքին և արտաքին հատվածներում ընթացող փոփոխություններով, մրցակիցների կողմից համանման պորտուկլների գծով առաջարկվող սակագներով, ինչպես նաև Բանկի մրցակցային դիրքի ամրապնդման և առաջխաղացման հնարավորություններով: Մասնավորապես վերանայվել են՝ դրամական փոխանցումների իրականացման և չեկերի սպասարկման պայմանները, սոցիալական փաթեթի սպասարկման նպատակով բացված հաշվի միջոցների դիմաց վճարվող տարեկան տոկոսադրույքը (սահմանվել է 0.1%), հնամաշ և վնասված դրամանիշերի փոխանակման սակագինը (ԱՄՆ դոլար, ԵՎՐՈ և ՌԴ ռուբլու համար սահմանվել է 3%), արտարժույթի դրամանիշերի համար հնամաշության չափանիշները, պլաստիկ քարտերի տրամադրման և սպասարկման պայմանները, քարտային հաշվի դրական մնացորդի վրա հաշվարկվող տարեկան տոկոսադրույքի կիրառման պայմանները (կիրառվում է եթե վճարային քարտի միջին ամսական մեծությունը գերազանցում է 500.000 ՀՀ դրամը, հաշվարկվում է մինչև վճարային պլաստիկ քարտի գործողության ժամկետի ավարտը), արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում մատուցվող ծառայությունների սակագները և այլն:

Ողջամիտ ներդրողի ներդրումային որոշման կայացման նպատակով՝ Բանկը ներկայացնում է հաշվետու տարվա ակտիվապասիվային ցուցանիշների և շահույթի ծավալային

աճը, որոնք արտացոլում են Բանկի կառավարման մարմինների կողմից ռազմավարության իրականացման արդյունավետությունը:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացվում են Բանկի ակտիվապասիվային հիմնական ցուցանիշները և շահույթը.

(հազ. դրամ)

Միջոցների ներգրավում	31.12.2013	31.12.2014	31.12.2015	Աճ/նվազում 31.12.2015-31.12.2014	
				դրամ	%
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	17,696,025	22,314,296	26,052,003	3,737,707	16.8
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	44,391,776	57,525,303	61,973,987	4,448,684	7.7
Ստորադաս փոխառություն	-	-	4,425,604	4,425,604	-

(հազ. դրամ)

Միջոցների տեղաբաշխում	31.12.2013	31.12.2014	31.12.2015	Աճ/նվազում 31.12.2015-31.12.2014	
				դրամ	%
Հաճախորդներին տրված վարկեր	40,693,742	52,057,388	59,175,240	7,117,852	13.7
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	7,145,525	6,168,289	8,866,001	2,697,712	43.7

(հազ. դրամ)

	2013	2014	2015	Աճ/նվազում 2015-2014	
				դրամ	%
Շահույթ	716,701	816,796	449,266	-367,530	-45.0

Բացի վերը բերված ֆինանսական ցուցանիշները, Բանկը որպես հաշվետու թողարկող, իր արժեթղթերի սեփականատերերին է ներկայացնում նաև եռամսյակային և տարեկան հաշվետվություններ, որոնք տեղադրված են բանկի ինտերնետային կայքի՝ www.aeb.am՝ <<Բաժնետերեր և ներդրողներ>> բաժնում:

11. ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ ԿԱՄ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

1) այն հիմնական սկզբունքների կամ վարկածների նկարագիրը, որոնց հիման վրա իրականացվել է շահույթի կանխատեսումը կամ գնահատումը: Շահույթի կանխատեսումը կամ գնահատումը պետք է համադրելի լինի բանկի պատմական ֆինանսական ժամանակաշրջանի համար ներկայացված ֆինանսական հաշվետվությունների հետ.

Սույն կետում նշված տեղեկությունները ընդամենը կանխատեսումներ են և ներդրումային որոշումներ կայացնելիս չպետք է հիմնվել դրանց վրա:

Առաջիկա տարվա՝ 2016թ., համար բանկը պլանավորել է ստանալ 1,000.8 մլն. դրամի զուտ շահույթ : Շահույթի կանխատեսումը (պլանավորումը) իրականացնելիս բանկը հիմնվել է հետևյալ հիմնարար սկզբունքների վրա.

1. Բանկի ակտիվների կայուն աճի ապահովում, հիմնականում եկամտաբեր ակտիվների՝ վարկերի և արժեթղթերի աճի հաշվին: Վարկային ներդրումների աճը ապահովվելու է նոր վարկատեսակների առաջարկի, տնտեսության նոր հեռանկարային ոլորտների վարկավորման, սպառողական և հիփոթեքային վարկավորման, միջազգային կառույցների հետ իրականացվող վարկային ծրագրերի բազմազանման և ավելացման հաշվին:
2. Բանկի պարտավորությունների, ըստ այդմ ցպահանջ և ժամկետային ռեսուրսների կայուն աճի ապահովում՝ միջազգային ծրագրերով և միջազգային կառույցներից նոր ռեսուրսների ներգրավում և ներքին շուկայից ներգրավված ռեսուրսների ծավալների կայուն աճի ապահովում:
3. Բանկի ռեսուրսների տեղաբաշխում բարձր եկամտաբերություն ունեցող ակտիվներում (վարկեր հաճախորդներին)՝ ընդունելի մակարդակի վրա պահելով բանկի ռիսկերը, պահպանելով բանկային գործունեությունը կարգավորող ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված տնտեսական նորմատիվները:
4. Հեռանկարային հաճախորդների շրջանակի էական աճի ապահովում, ի հաշիվ մատուցվող ծառայությունների բազմազանման և տեխնոլոգիաների կատարելագործման, միջազգային չափանիշներով նոր բանկային գործիքների առաջարկի /նոր տեխնոլոգիաներով վարկեր, ավանդներ, վճարահաշվարկային ծառայություններ/:
5. Վերը նշվածների արդյունքում տոկոսային եկամուտների, մատուցվող ծառայություններից ստացվող միջնորդավճարների աճ :
6. Բանկի արդյունավետ տարածքային քաղաքականության վարում՝ ապահովելով նոր մասնաճյուղերի գործարկումը, գործող մասնաճյուղերի վերանորոգումը և վերազինումը, տեխնիկա-տեխնոլոգիական, տեղեկատվական համակարգերի արդիականացումը:

2) այն գործոնները, որոնց վրա բանկի կառավարման մարմինները ազդելու հնարավորություն ունեն և այն գործոնները, որոնց վրա ազդելու նման հնարավորությունը բացակայում է.

Բանկի կառավարման մարմինները հնարավորություն ունեն ազդելու (կառավարելու) Բանկի գործունեության և շահույթի վրա ազդող հետևյալ հիմնական գործոնների վրա.

1. Բանկի կողմից ներգրավվող և տեղաբաշխվող միջոցների ծավալների կառավարում,
2. Բանկի ռիսկերի ընդունելի մակարդակի պահպանում և կառավարում,
3. Բանկի տեխնիկա-տեխնոլոգիական և տեղեկատվական բազայի արդիականացմանն ուղղված ներդրումներ,
4. Կադրային քաղաքականություն, այդ թվում՝ բանկի անձնակազմի վարձատրության, պատրաստման և վերապատրաստման ծախսեր,
5. Նոր պրոդուկտների թողարկում,
6. Տարածքային քաղաքականություն,
7. Բանկի գործունեության ապահովման ծախսեր,
8. Նոր բանկային պրոդուկտների ներդրման ծախսեր,

9. Գովազդային գործընթաց և այլն:

Բանկի կառավարման մարմինները կարող են արձագանքել, սակայն հնարավորություն չունեն ազդելու Բանկի գործունեության և շահույթի վրա ազդող հետևյալ հիմնական գործոնների վրա.

1. քաղաքական, տնտեսական ռիսկի գործոններ (բանկային ավանդների և վարկերի առաջարկի ու պահանջարկի և դրանից բխող տոկոսադրույքների փոփոխության վարքագիծ, արժեզրկման ու փոխարժեքի վարքագիծ),
2. հարկային և օրենսդրական փոփոխության այլ ռիսկեր,
3. երկրի ֆինանսական շուկայի կայունության ռիսկ,
4. անհաղթահարելի ուժի ազդեցության գործոններ (արտակարգ դրության հայտարարելը, հաղորդակցության միջոցների աշխատանքների դադարեցումը, բնական աղետները, պատերազմը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Բանկի բնականոն գործունեությունը) և այլն:


12. ԲԱՆԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

1) Բանկի կառավարման մարմինների սխեմատիկ կառուցվածքը և յուրաքանչյուր մարմնի իրավասություններն ու պարտականությունները.

Բանկի կառավարման մարմիններն են (ներկայացվում է ըստ կանոնադրության).

1. Բաժնետերերի ընդհանուր ժողովը, որը Բանկի կառավարման բարձրագույն մարմինն է,
2. Բանկի խորհուրդը, որն ընտրվում է բաժնետերերի ընդհանուր ժողովում,
3. Բանկի գործադիր տնօրենը, որն ի պաշտոնե վարչության նախագահն է,
4. Բանկի վարչությունը:

Կառավարման մարմինների սխեմատիկ կառուցվածքը ներկայացվում է ստորև.



Բանկի կառավարման մարմիններին վերապահված իրավասություններն են (ներկայացվում է ըստ կանոնադրության)։

6.7. Բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությունները՝

ա/ Բանկի Կանոնադրության հաստատումը, դրա մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, Բանկի կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ,

բ/ Բանկի վերակազմակերպումը.

գ/ Բանկի լուծարումը.

դ/ ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը.

ե/ Բանկի խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Բանկի խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Բանկի խորհրդի անդամների ընտրության հարցը Բանկի արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Բանկի խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.

զ/ հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը,

է/ խորհրդի ներկայացմամբ Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը.

ը/ Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթի և վնասի բաշխման հաստատումը: Տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը.

թ/ օրենքով նախատեսված դեպքերում բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունք չկիրառելու մասին որոշման ընդունումը.

ժ/ ընդհանուր ժողովի վարման կարգը,

ժա/ հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը.

ժբ/ օրենքով սահմանված դեպքերում Բանկի գույքի օտարման և ձեռք բերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը (Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 50%-ից ավելին):

Բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանն օրենքով վերապահված հարցերը չեն կարող նրա կողմից փոխանցվել ընկերության գործադիր մարմնին:

6.14. Բանկի խորհուրդն իրականացնում է Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ բացառությամբ այն հարցերի, որոնք օրենքով և կանոնադրությամբ վերապահված են ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը:

6.22. Բանկի խորհրդի բացառիկ իրավասություններն են՝

ա/ Բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ՝ Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը.

բ/ ընդհանուր ժողովի տարեկան և արտահերթ նիստերի գումարումը, օրակարգի հաստատումը, ինչպես նաև դրանց գումարման և անցկացման կազմակերպման հետ կապված՝ նախապատրաստման աշխատանքների իրականացման ապահովումը.

գ/ Բանկի գործադիր մարմնի (վարչության) անդամների նշանակումը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը.

դ/ Բանկում ներքին հսկողության ստանդարտների սահմանումը, Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ձևավորումը, նրա տարեկան աշխատանքային ծրագրի

հաստատումը, ներքին աուդիտի աշխատակիցների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը.

ե/ Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի ու կատարողականի հաստատումը.

զ/ Բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքի և աշխատատեղերի հաստատումը.

է/ շահութաբաժինների վճարման վերաբերյալ ընդհանուր ժողովին առաջարկությունների ներկայացումը, այդ թվում՝ շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակի կազմումը, որում պետք է ընդգրկվեն Բանկի այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ Բանկի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ:

ը/ Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և ընդհանուր ժողովին ներկայացումը.

թ/ ընդհանուր ժողովի հաստատմանը Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի ներկայացումը.

ժ/ Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձին վճարման չափի սահմանումը.

ժա/ Բանկում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում անհրաժեշտության դեպքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը.

ժբ/ Բանկի կողմից օրենքով սահմանված ֆինանսական գործառնությունների իրականացման կարգը սահմանող ներքին իրավական ակտերի ընդունումը.

ժգ/ Բանկի տարածքային և ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների հաստատումը, Բանկի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների միջև գործառնության պարտականությունների բախշումը.

ժդ/ Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և կարգերի սահմանումը.

ժե/ Բանկի պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.

ժզ/ բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով Բանկի կանոնադրական հիմնադրամի չափի ավելացումը.

ժէ/ Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշման ընդունումը,

ժը/ դուստր և կախյալ ընկերությունների ստեղծումը, այդ ընկերություններին մասնակցությունը, եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում

ժթ/ Բանկի կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը,

ի/ գույքի շուկայական արժեքի որոշումը օրենքով սահմանված կարգով,

իա/ օրենքով նախատեսված դեպքերում տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը

իբ/ Բանկի գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը (Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-50 %-ի չափով),

իգ/ Բանկի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծման և դադարեցման մասին որոշումների ընդունումը,

իդ/ Բանկի կողմից բաժնետերերի ժողովի հետ կապված տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի մասին, ներառյալ ծանուցման մամուլի միջոցի ընտրության որոշումը,
իե/ խորհրդի անդամների վարձատրության չափի սահմանումը,
իզ/ առևտրային կազմակերպությունների միությունների հիմնադրումը և մասնակցությունը,

իէ/ օրենսդրությամբ սահմանված այլ իրավասությունների իրականացումը:

Բանկի խորհրդի բացառիկ իրավասությանը կանոնադրությամբ վերապահված հարցերը չեն կարող նրա կողմից փոխանցվել Բանկի գործադիր մարմնին:

6.29. Բանկի գործադիր տնօրենը (Վարչության նախագահը), որպես իր բացառիկ իրավասություն, ներկայացնում է Բանկը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում, Բանկի անունից կնքում է գործարքներ, գործում է Բանկի անունից առանց լիազորագրի, տալիս է լիազորագրեր:

6.30. Բանկի գործադիր տնօրենը (Վարչության նախագահ).

ա/ տնօրինում է Բանկի գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները, իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

բ/ աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Բանկի աշխատակիցներին,

գ/ Բանկի աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,

դ/ կատարում է Բանկի վարչության նախագահի տեղակալների և վարչության անդամների միջև պարտականությունների բաշխում,

ե/ լուծում է կանոնադրությամբ իրեն վերապահված այլ հարցեր, իր իրավասության շրջանակներում իրականացնում այլ գործառնություններ:

6.31. Բանկի վարչությունը կազմվում է գործադիր տնօրենից (Վարչության նախագահից), նրա տեղակալներից, գլխավոր հաշվապահից, ինչպես նաև Բանկի այլ պաշտոնատար անձանցից, որոնք նշանակվում են Բանկի խորհրդի կողմից:

6.32. Բանկի վարչությունը.

ա/ խորհրդի հաստատմանն է ներկայացնում Բանկի խորհրդի կողմից հաստատվող ներքին իրավական ակտերը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, Բանկի վարչակազմակերպական կառուցվածքը.

բ/ ապահովում է ընդհանուր ժողովի և Բանկի խորհրդի որոշումների կատարումը,

գ/ իրականացնում է Բանկի գործունեության ընթացիկ ղեկավարումը,

դ/ կազմակերպում է ընդհանուր ժողովի, Բանկի խորհրդի և իր կողմից ընդունված որոշումների կատարումը,

ե/ գումարում է իր նիստերը ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ,

զ/ իր իրավասության շրջանակներում սահմանում է Բանկի կողմից մատուցվող ծառայությունների սակագները, դրամարկղային սպասարկման, դրամի ու Բանկի այլ արժեքների պահպանումը, հաշվառումն ու հաշվետվությունը և իրականացնում է դրանց վերահսկողությունը,

է/ սահմանում է ակտիվային ու պասիվային գործառնությունների գծով տոկոսադրույքների քաղաքականությունը,

ը/ վերահսկում է օրենսդրության պահպանումը Բանկում և նրա կառուցվածքային ստորաբաժանումներում,

թ/ նախապես քննարկում է վարչության կողմից Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի և Բանկի խորհրդի քննարկմանը ներկայացվող հարցերը,

ժ/ քննարկում է վերստուգումների, ստուգումների նյութերը, Բանկի ստորաբաժանումների ղեկավարների հաշվետվությունները,

ժա/ հաստատում է բանկի աշխատողների և մյուս ստորաբաժանումների ղեկավարների և աշխատողների իրավունքների ու պարտականությունների մասին հրահանգները,

ժբ/ կատարում է Բանկի պաշտոնատար անձանց նշանակում իր իրավասության շրջանակներում,

ժգ/ քննարկում է գործադիր տնօրենի (Վարչության նախագահի), վարչության անդամների և Բանկի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից վարչության քննարկմանը ներկայացված այլ հարցերը:

Այն հարցերը, որոնք օրենքով կամ կանոնադրությամբ չեն սահմանվել որպես ընդհանուր ժողովի, խորհրդի կամ ներքին աուդիտի ստորաբաժանման իրավասությանը պատկանող, պատկանում են գործադիր տնօրենի (վարչության) իրավասությանը:

2) կառավարման մարմինների անդամների անունը, ազգանունը, բնակության վայրը, զբաղեցրած պաշտոնը, իրավասություններն ու պարտականությունները, նրանցից յուրաքանչյուրի ծավալած գործունեությունը բանկի կազմից դուրս՝ ազդագիրը գրանցման ներկայացնելու պահին.

Տեղեկություններ բանկի կառավարման մարմինների վերաբերյալ.

Պաշտոնը	Ա. Ա. Հ., ծննդյան ամսաթիվը, մասնագիտությունը, քաղաքացիությունը, հասցեն	Վերջին հինգ տարվա ընթացքում զբաղեցրած պաշտոնները	Իրավասություններ և պարտականություններ
Բանկի խորհրդի նախագահ	Սուքիասյան Սարիբեկ Ալբերտի, ծնված 1965թ., ինժեներ-տնտեսագետ, տնտեսագիտության թեկնածու, Քաղաքացիությունը՝ ՀՀ, հասցե՝ ք. Երևան, Չավարյան 6, բ.1/ 5	1998թ. առ այսօր ԲԲԸ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» խորհրդի նախագահ:	Սահմանված է ՀՀ օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ
Բանկի խորհրդի անդամներ	Մելիքյան Արամ Ռոբերտի ծնված 1963թ., տնտեսագետ, Քաղաքացիությունը՝ ՀՀ, հասցե՝ ք. Երևան, Մոլդովական փող. 22. 15բն.	27.09.2007թ.-28.06.2012թ. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Ներքին աուդիտի վարչության պետի տեղակալ, 29.06.2012թ.-31.07.2012թ. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի նախագահի թեկնածու	Իրավասություն՝ սահմանված է Բանկի կանոնադրությամբ: Պարտականություններ՝ 1. Բանկի վարչության գործունեության ընդհանուր հսկողություն 2. Բանկի ներքին և արտաքին աուդիտի գործունեության ընթացքում ի հայտ եկած խնդիրների/ոխսկերի/ նկատմամբ ընդհանուր հսկողության իրականացում 3. Բանկի ռեսուրսների

			ներգրավման և տեղաբաշխման ընդհանուր հսկողություն 4. Բանկի անձնակազմի կառավարման արդյունավետության ընդհանուր հսկողություն 5. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի գործընթացի ընդհանուր հսկողություն 6. Բանկի հաշվապահական հաշվառման և հաշվապահության քաղաքականության նկատմամբ ընդհանուր հսկողություն 7. Բանկի իրավական գործընթացների նկատմամբ ընդհանուր հսկողություն
Իննա Յաքբարովա, ծնված 1965թ., տնտեսագետ, Քաղաքացիությունը՝ Բելառուսիայի Հանրապետություն, հասցե՝ ՌԴ, ք. Մոսկվա, Սպիրիդոնովկա փ., 22/2 շ., 48 բն.	2007թ.-ի հունվար – 2007թ.-ի հունիս ՎՋԵԲ, Գլխավոր գրասենյակ, Ռիսկերի կառավարում 2007թ.-ի հուլիս – 2014թ. հունիս ՎՋԵԲ, ՌԴ, Մոսկվա, Գլխավոր բանկիր, Ֆինանսական հաստատությունների ՌԴ-ի թիմ 2006թ. հունվարից առ այսօր Բելառուսի Ալիվարիա (Կարլսբերգ խումբ) գարեջրի գործարանի Խորհրդի անդամ, ՎՋԵԲ ներկայացուցիչ 2013թ. հունիսից առ այսօր Թաթարստանի Սպուրտ բանկում Խորհրդի անդամ, ՎՋԵԲ ներկայացուցիչ 2014թ. հունիսից առ այսօր Կառավարության հետ հարաբերությունների ավագ խորհրդատու, փոխտնօրեն, ՎՋԵԲ 07.03.2016թ. առ այսօր «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ խորհրդի անդամ	Իրավասություն՝ սահմանված է Բանկի կանոնադրությամբ: Պարտականություններ՝ Բանկի գործունեության ընթացքում միջազգային փորձի ներդրման աշխատանքների համակարգում:	
Պետրոսյան Լուիզա Աշոտի, ծնված 1982թ., տնտեսագետ-մաթեմատիկոս, Քաղաքացիությունը՝ ՀՀ, հասցե՝ ք. Երևան, Գր.	03.12.2008թ.-31.01.2011թ. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Միջազգային գործառնությունների վարչության Թղթակցային հարաբերությունների և փաս-	Իրավասություն՝ սահմանված է Բանկի կանոնադրությամբ: Պարտականություններ՝ 1. Բանկի վարչության գործունեության ընդհանուր հսկողություն 2. Բանկի ներքին և արտաքին աուդիտի գործունեության ընթացքում ի հայտ եկած խնդիրների/զիսկերի/	

		վարչության պետի տեղակալ 14.06.2013թ առ այսօր «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ խորհրդի անդամ, Խորհրդի Քարտուղար:	նկատմամբ ընդհանուր հսկողության իրականացում 3. Բանկի ռեսուրսների ներգրավման և տեղաբաշխ- ման ընդհանուր հսկողություն 4. Բանկի կորպորատիվ կառավարման սկզբունքների զարգացման համակարգում 5. Միջազգային հարա- բերությունների ընդհանուր հսկողություն 6. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի գործընթացի ընդհանուր հսկողություն
Հայրապետյան Ռուբեն Աշոտի, ծնված 1980թ., տնտեսագետ Քաղաքացիությունը՝ ՀՀ հասցե՝ ք. Երևան, Մխչյան փ. 25/3 տ.		24.07.2006թ.-08.11.2010թ. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ «ԽՈՐՀՐԴԱՅԻՆ» մասնաճյուղի կառավարիչ, 09.11.2010թ.-23.05.2013թ. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Վարկավորման և միջոցների ներգրավման վարչության պետ, վարչության անդամ /ընդգրկված է՝ 07.06.2011թ./: 24.05.2013թ.-22.05.2014թ. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ գործադիր տնօրենի տեղակալ 23.05.2014թ.-29.06.2014թ. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ գործադիր տնօրենի խորհրդական 30.06.2014թ. առ այսօր «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ խորհրդի անդամ:	Իրավասություն՝ սահմանված է Բանկի կանոնադրությամբ Պարտականություններ՝ 1. Բանկի վարչության գործունեության ընդհանուր հսկողություն 2. Բանկի ներքին և արտաքին աուդիտի գործու- նեության ընթացքում ի հայտ եկած խնդիրների/զիսկերի/ նկատմամբ հսկողության իրականացում 3. Բանկի ռեսուրսների ներգրավման և տեղաբաշխ- ման ընդհանուր հսկողություն 4. Պլաստիկ քարտերի թողարկման քաղաքականութ- յան ընդհանուր հսկողություն 5. Բանկի ռազմավա- րության ընդհանուր հսկո- ղություն 6. Հաճախորդների դի- մում-բողոքների նկատմամբ ընդհանուր հսկողություն /Օմբուդսմեն/ 7. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի գործընթացի ընդհանուր հսկողություն

Բանկի խորհրդի անդամներ	Պ Ա Շ Տ Ո Ն Ը	
	բանկում	վերջին հինգ տարում բանկից դուրս

Սուքիասյան Սարիբեկ Ալբերտի	Խորհրդի նախագահ	«ՍԻԼ-Կոնցեռն» ՍՊԸ Խորհրդի անդամ
Մելիքյան Արամ Ռոբերտի	Խորհրդի նախագահի տեղակալ	«Արպարագոն Ինտերնեյշնլ» ՍՊԸ հիմնադիր
Իննա Յաբբարովա	Խորհրդի անդամ	ՎԶԵԲ, ՌԴ, Մոսկվա, Գլխավոր բանկիր, Ֆինանսական հաստատությունների ՌԴ-ի թիմ, Բելառուսի Ալիվարիա (Կարլսբերգ խումբ) գարեջրի գործարանի Խորհրդի անդամ, ՎԶԵԲ ներկայացուցիչ, Թաթարստանի Սպորտ բանկում Խորհրդի անդամ, ՎԶԵԲ ներկայացուցիչ, Կառավարության հետ հարաբերությունների ավագ խորհրդատու, փոխտնօրեն, ՎԶԵԲ
Պետրոսյան Լուիզա Աշոտի	Խորհրդի անդամ, Խորհրդի քարտուղար	-
Հայրապետյան Ռուբեն Աշոտի	Խորհրդի անդամ	-

Պաշտոնը	Ա. Հ. Ա., ծննդյան ամսաթիվը, մասնագիտությունը, քաղաքացիությունը, հասցեն	Վերջին հինգ տարվա ընթացքում զբաղեցրած պաշտոնները	Իրավասություններ և պարտականություններ
Գործադիր տնօրեն (Վարչութ. նախագահ)	Նալչյան Արմեն Տիգրանի, ծնված 1967թ., տնտեսագետ Քաղաքացիությունը՝ ՀՀ հասցե՝ ք. Երևան, Վ. Վաղարշյան 20/1, 24 բն.	19.07.2007թ.-04.10.2010թ. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Մասնաճյուղերի կառավարման վարչության պետ, 05.10.2010թ. առ այսօր «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ գործադիր տնօրեն (վարչության նախագահ):	Իրավասության՝ սահմանված է ՀՀ օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ Պարտականություններ՝ 1. տնօրինում է Բանկի գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները և գործարքներ է կատարում Բանկի անունից. 2. ներկայացնում է Բանկը ՀՀ-ում և արտասահմանում, 3.գործում է առանց լիազորագրի,

			4.տալիս է լիազորագրեր, 5.սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում աշխատանքային, 6.Խորհրդի հաստատմանն է ներկայացնում իր տեղակալների թեկնածությունները, 7.Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Բանկի Վարչության կանոնակարգը, 8.իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը, 9.կատարում է Բանկի վարչության նախագահի տեղակալների և վարչության անդամների միջև պարտականությունների բաշխում, 10.օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և ազատում Բանկի աշխատակիցներին, 11.Բանկի աշխատակիցների նկատմամբ, համաձայն Խորհրդի հաստատած կարգի, կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ, 12. լուծում է Բանկի կանոնադրությամբ իրեն վերապահված այլ հարցեր:
Վարչության անդամներ	Բաղալյան Ռուբեն Անատոլիի, ծնված 1979թ.,տնտեսագետ Քաղաքացիությունը՝ ՀՀ հասցե՝ ք. Երևան, Նարեկացի 31շ. 23 բն.	20.01.2010թ.-17.01.2011թ. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ գործադիր տնօրենի տեղակալ (վարչության նախագահի տեղակալ), 18.01.2011թ.-06.02.2011թ.	Իրավասություններ և պարտականություններ՝ Ապահովում է Կանոնադրության 6.32 կետով սահմանված գործառնությունների իրականացումը (տես ազդագրի Բաժին 3, կետ 12, ենթակետ 1)

		տեղակալ) 01.06.2015թ.-ից առ այսօր «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ գործադիր տնօրենի տեղակալ- գանձապետ (վարչության նախագահի տեղակալ- գանձապետ)	
Զիյան Օնիկ Գևորգի, ծնված 1977թ., տնտեսագետ Քաղաքացիությունը՝ ՀՀ հասցե՝ ք. Երևան, Նորք Մարաշ 11 փող. 75 տուն	25.01.2010թ-08.09.2013թ <ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ> ԲԲԸ Հաճախորդների սպասարկման վարչության պետ 09.09.2013թ-04.05.2014թ <ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ> ԲԲԸ <ԱՐԱԲԿԻՐ> մասնաճյուղի կառավարիչ 05.05.2014թ-22.05.2014թ. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Վարկավորման վարչության պետ 23.05.2014թ.-01.06.2015թ. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ գործադիր տնօրենի տեղակալ (վարչության նախագահի տեղակալ) 01.06.2015թ.-ից առ այսօր «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ կորպորատիվ և մանրածախ բիզնեսի գծով տնօրենի տեղակալ (վարչության նախագահի կորպորատիվ և մանրածախ բիզնեսի գծով տեղակալ)	Իրավասություններ և պարտականություններ՝ Ապահովում է Կանոնադ- րության 6.32 կետով սահմանված գործառույթ- ների իրականացումը (տես ազդագրի Բաժին 3, կետ 12, ենթակետ 1)	
Առաքելյան Արտակ Արմենակի ծնված 1981թ., ՏԳԹ, տնտեսագետ, Քաղաքացիությունը՝ ՀՀ հասցե՝ ք. Էջմիածին, Վազգեն Առաջինի փող. 382. 3բն.	20.07.2007թ.-05.10.2010թ. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Մասնաճյուղերի կառավարման վարչության պետի տեղակալ, 06.10.2010թ.-01.06.2015թ. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ, Տարածքային կառավարման վարչության պետ 07.02.2011թ.-01.06.2015թ. <<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ վարչության անդամ: 01.06.2015թ. առ այսօր «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ գործառնական գծով տնօրենի տեղակալ (վարչության նախագահի գործառնական գծով տեղակալ)	Իրավասություններ և պարտականություններ՝ Ապահովում է Կանոնադ- րության 6.32 կետով սահմանված գործառույթ- ների իրականացումը (տես ազդագրի Բաժին 3, կետ 12, ենթակետ 1)	

	Մանրիկյան Աստղիկ Մեսրոպի, ծնված 1982թ., արևելաագետ մագիստրոս, բիզնես վարչարարության մագիստրոս Քաղաքացիությունը՝ ՀՀ հասցե՝ Երևան, Տիգրան Մեծի 36դ-16	03.04.2009թ.-13.02.2011թ. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ, Հաճախորդների սպասարկման վարչության VIP հաճախորդների սպասարկման բաժնի հաշվապահ-գանձապահ 14.02.2011թ.-08.09.2011թ. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ, Հաճախորդների սպասարկման վարչության VIP հաճախորդների սպասարկման բաժնի հաշվապահ-գանձապահ/գլխավոր/ 09.09.2011թ.-01.06.2015 «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ, Միջազգային գործառնությունների վարչության պետի ժ/պ, վարչության պետ 01.06.2015թ. առ այսօր «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ միջազգային և զարգացման գծով տնօրենի տեղակալ (վարչության նախագահի միջազգային և զարգացման գծով տեղակալ):	Իրավասություններ և պարտականություններ՝ Ապահովում է Կանոնադրության 6.32 կետով սահմանված գործառույթների իրականացումը (տես ազդագրի Բաժին 3, կետ 12, ենթակետ 1)
	Ազատյան Դավիթ Նորայրի, ծնված 1981թ. Ճարտարագետ Քաղաքացիությունը՝ ՀՀ հասցե՝ ք. Երևան, Ֆրունզե 141 տուն	10.10.2006թ.-16.01.2011թ. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Ներքին աուդիտի վարչության Բանկի գործունեության և ռիսկերի կառավարման վերահսկողության բաժնի գլխավոր աուդիտոր, 17.01.2011թ.-18.07.2011թ. ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Ներքին աուդիտի վարչության պետ, 19.07.2011թ. առ այսօր՝ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ գլխավոր հաշվապահ Հաշվապահական հաշվառման վարչության պետ (վարչության անդամ): 12.03.2008թ.-11.03.2013թ. «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ խորհրդի անդամ:	Իրավասություններ և պարտականություններ՝ Ապահովում է Կանոնադրության 6.32 կետով սահմանված գործառույթների իրականացումը (տես ազդագրի Բաժին 3, կետ 12, ենթակետ 1)

	Ավետիսյան Հայկ Միշայի ծնված 1979թ., ՏԳԹ, տնտեսագետ-մաթեմատիկոս, Քաղաքացիությունը՝ ՀՀ հասցե՝ ք. Էջմիածին, Ռ. Եսայանի փող. 23 տուն	01.07.2006թ.-02.02.2011թ. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Ռազմավարության և ռիսկերի կառավարման վարչության Ռիսկերի կառավարման բաժնի պետ, 03.02.2011թ. առ այսօր ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ, Ռազմավարության և ռիսկերի կառավարման վարչության պետ 07.02.2011թ. առ այսօր <<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ վարչության անդամ, 21.01.2009թ.- առ այսօր «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ, Խորհրդի անդամ:	Իրավասություններ և պարտականություններ՝ Ապահովում է Կանոնադ- րության 6.32 կետով սահմանված գործառույթ- ների իրականացումը (տես ազդագրի Բաժին 3, կետ 12, ենթակետ 1)
	Ջհանգիրյան Վրեժ Գագիկի ծնված 1980. Իրավաբան Քաղաքացիությունը՝ ՀՀ հասցե՝ ք. Երևան, Կ. Ունեցու փող. 16/1տուն	10.10.2007թ.-27.02.2008թ. Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմում՝ որպես ՀՀ Նախագահի վերահսկողական ծառայության 1-ին բաժնի գլխավոր մասնագետ: 01.02.2013թ.-16.03.2014թ.- <<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ Անվտանգության վարչության Տեղեկատվական անվտանգության բաժնում որպես բաժնի պետ: 17.03.2014թ.-31.12.2014թ.- <<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ Անվտանգության վարչության Տեղեկատվական անվտանգության բաժնում որպես վարչության պետի տեղակալ-բաժնի պետ: 01.01.2015թ.-19.01.2015թ.- <<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ Իրավաբանական վարչության Բանկային գործառնությունների իրավական ապահովման բաժնում որպես վարչության պետի տեղակալ-բաժնի պետ: 20.01.2015թ.-ից առ այսօր - <<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ Իրավաբանական Վարչության պետ: 02.02.2015թ. առ այսօր <<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ վարչության անդամ:	Իրավասություններ և պարտականություններ՝ Ապահովում է Կանոնադ- րության 6.32 կետով սահմանված գործառույթ- ների իրականացումը (տես ազդագրի Բաժին 3, կետ 12, ենթակետ 1)
	Գալստյան Արամայիս Արծրունու ծնված 1986թ. տնտեսագետ Քաղաքացիությունը՝ ՀՀ	10.07.2008թ.-01.08.2010թ. <<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ <<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ	Իրավասություններ և պարտականություններ՝ Ապահովում է Կանոնադ- րության 6.32 կետով սահմանված գործառույթ- ների իրականացումը (տես ազդագրի Բաժին 3, կետ 12, ենթակետ 1)

	06.09.2011թ. <<ԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ Ներքին աուդիտի վարչության աուդիտոր 07.09.2011թ.-23.01.2013թ. <<ԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ Հաշվապահական հաշվառման վարչության Ամփոփ հաշվետվությունների բաժնի պետ - գլխավոր հաշվապահի տեղակալ 24.01.2013թ.-31.10.2013թ. <<ԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ Ներքին աուդիտի վարչության գլխավոր աուդիտոր 01.11.2013թ.-ից առ այսօր՝ <<ԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ Պլաստիկ քարտերի վարչության պետ 01.06.2015թ. առ այսօր <<ԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ վարչության անդամ:	ների իրականացումը (տես ազդագրի Բաժին 3, կետ 12, ենթակետ 1)
Կարապետյան Նարինե Ժանի ծնված 1980թ. տնտեսագետ Քաղաքացիությունը՝ ՀՀ հասցե՝ ք.Երևան, Դավթաշեն 3-րդ թաղ. 14շ. 41 բն	06.07.2005թ.-01.07.2006թ. <<ԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ Վարկավորման վարչության Առևտրային վարկերի մասնագետ 01.07.2006թ.- 27.10.2008թ.<<ԱՅԷԿՈՆՈՄԲԱՆ>> ԲԲԸ Վարկավորման վարչության Առևտրային վարկերի գլխավոր մասնագետ 27.10.2008թ.-14.04.2016թ. <<ԱՅԷԿՈՆՈՄԲԱՆ>> ԲԲԸ Վարկավորման վարչության Խոշոր վարկերի տրամադրման բաժնի պետ 14.04.2016թ.-ից առ այսօր՝ <<ԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ Վարկավորման վարչության պետ 02.06.2016թ. առ այսօր <<ԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ վարչության անդամ:	Իրավասություններ և պարտականություններ՝ Ապահովում է Կանոնադրության 6.32 կետով սահմանված գործառույթների իրականացումը (տես ազդագրի Բաժին 3, կետ 12, ենթակետ 1)

Բանկի վարչության անդամներ	Պ Ա Շ Տ Ո Ն Ը	
	բանկում	վերջին հինգ տարում բանկից դուրս
Նալչյան Արմեն Տիգրանի	Գործադիր տնօրեն (Վարչության նախագահ)	-

Բաղայան Ռուբեն Անատոլիի	Գործադիր տնօրենի տեղակալ-գանձապետ (Վարչության նախագահի տեղակալ-գանձապետ)	-
Չիչյան Օնիկ Գևորգի	Կորպորատիվ և մանրածախ բիզնեսի գծով տնօրենի տեղակալ (Վարչության նախագահի կորպորատիվ և մանրածախ բիզնեսի գծով տեղակալ)	-
Առաքելյան Արտակ Արմենակի	Գործառնական գծով տնօրենի տեղակալ (Վարչության նախագահի գործառնական գծով տեղակալ)	-
Մանրիկյան Աստղիկ Մեսրոպի	Միջազգային և զարգացման գծով տնօրենի տեղակալ (Վարչության նախագահի միջազգային և զարգացման գծով տեղակալ)	-
Ազատյան Դավիթ Նորայրի	Գլխավոր հաշվապահ Վարչության անդամ	12.03.2008թ.- 11.03.2013թ. «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ խորհրդի անդամ
Ավետիսյան Հայկ Միշայի	Ռազմավարության և ռիսկերի կառավարման վարչության պետ Վարչության անդամ	21.01.2009թ.- առ այսօր «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ, խորհրդի անդամ
Ջհանգիրյան Վրեժ Գագիկի	Իրավաբանական վարչության պետ Վարչության անդամ	-
Գալստյան Արամայիս Արծրունու	Պլաստիկ քարտերի վարչության պետ Վարչության անդամ	-
Կարապետյան Նարինե Ժանի	Վարկավորման վարչության պետ Վարչության անդամ	-

3) կառավարման մարմնի անդամների միջև ազգակցական կապը (արդյո՞ք նրանք միևնույն ընտանիքի անդամներ են, ազգակցական կապի բնույթը).

Կառավարման մարմինների միջև ազգակցական կապեր չկան:

4) կառավարման մարմնի յուրաքանչյուր անդամի մասին հետևյալը՝

ա. մասնագիտությունը (որակավորումը),

բ. ազդագիրը գրանցման ներկայացնելու պահին նախորդող 5 տարվա ընթացքում ո՞ր ընկերություններում կամ կազմակերպություններում և ինչպիսի՞ ղեկավար պաշտոններ է զբաղեցրել բանկի տվյալ կառավարման մարմնի անդամը: Այստեղ պետք չէ ներկայացնել բանկի դուստր ընկերություններում այդ անդամների զբաղեցրած ղեկավար պաշտոնները.

Տեղեկությունները ներկայացված են ազդագրի Բաժին 3, կետ 12, ենթակետ 2-ում:

գ. ազդագիրը գրանցման ներկայացնելու պահին նախորդող 5 տարվա ընթացքում խարդախության համար դատվածության մասին,

ՉԿԱ

դ. արդյո՞ք բանկի կառավարման մարմնի անդամները ազդագիրը գրանցման ներկայացնելու պահին նախորդող 5 տարվա ընթացքում որևէ առնչություն ունեցել են որևէ սնանկության, լուծարման կամ սնանկ ճանաչված անձի ակտիվների կառավարման գործընթացների հետ: Եթե այո, ապա տալ դրա նկարագիրը,

ՈՉ

ե. արդյո՞ք բանկի կառավարման մարմնի անդամները ազդագիրը գրանցման ներկայացնելու պահին նախորդող 5 տարվա ընթացքում պատասխանատվության ենթարկվել են պետական որևէ մարմնի կամ կարգավորող (վերահսկող) մարմնի կողմից և արդյո՞ք նրանք դատարանի կողմից զրկվել են որևէ թողարկողի կառավարման մարմնի անդամի պաշտոն զբաղեցնելու իրավունքից: Եթե այո, ապա տալ դրա նկարագիրը,

ՈՉ

5) արդյո՞ք հնարավոր է շահերի բախում որպես բանկի կառավարման մարմնի անդամ բանկի նկատմամբ իր պարտականությունների և իր անձնական շահերի միջև: Եթե այո, ապա պարզ ձևով նկարագրել այդ: Շահերի բախման բացակայության դեպքում՝ նշել առանձին դրույթ այդ մասին,

Բանկի և նրա կառավարմանը մասնակցող անձանց միջև Ազդագրի ներկայացման պահի դրությամբ շահերի բախում չկա:

6) կա՞ր արդյոք որևէ պայմանավորվածություն խոշոր բաժնետերերի, հաճախորդների, մատակարարների կամ այլ անձանց հետ, համաձայն որի որևէ անձ ընտրվել կամ նշանակվել է բանկի կառավարման մարմնի անդամ: Եթե այո, ապա տալ դրա նկարագիրը:

ՈՉ

13. ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՐԳԵՎԱՎՃԱՐՆԵՐԸ

1) բանկի կառավարման մարմինների յուրաքանչյուր անդամի կողմից բանկից և նրա դուստր ընկերություններից որպես վարձատրություն և պարգևավճար ստացված գումարները՝ ներառյալ նրանց օգտին կատարված ցանկացած ձևով փոխհատուցումները (կուտակային կենսաթոշակային հատկացումները, ապահովագրական վճարները, բաժնետոմսերի ձեռքբերման օպցիոնները և այլն),

2) բանկի կողմից բանկի կառավարման մարմինների անդամների օգտին կատարված կենսաթոշակային վճարումները՝ ընդհանուր գումարով.

Պաշտոն	Անուն, ազգանուն, հայրանուն	2015թ. ընթացքում ստացած աշխատավարձ և դրան հավասարեցրած այլ վճարումներ
Խորհրդի նախագահ	Սուքիասյան Սարիբեկ Ալբերտի	61,677,698.00
Խորհրդի նախագահի տեղակալ	Մելիքյան Արամ Ռոբերտի	25,900,714.00
Խորհրդի անդամ, Խորհրդի քարտուղար	Պետրոսյան Լուիզա Աշոտի	23,015,487.00
Խորհրդի անդամ	Հայրապետյան Ռուբեն Աշոտի	21,578,570.00
Գործադիր տնօրեն	Նալչյան Արմեն Տիգրանի	61,441,035.00
Գործադիր տնօրենի տեղակալ-գանձապետ	Բադալյան Ռուբեն Անատոլիի	24,334,079.00
Կորպորատիվ և մանրածախ բիզնեսի գծով տնօրենի տեղակալ	Զիչյան Օնիկ Գևորգի	15,604,242.00
Գործառնական գծով տնօրենի տեղակալ	Առաքելյան Արտակ Արմենակի	16,478,810.00
Միջազգային և զարգացման գծով տնօրենի տեղակալ	Մանրիկյան Աստղիկ Մեսրոպի	16,469,754.00
Հաշվապահական հաշվառման վարչության պետ - գլխավոր հաշվապահ	Ազատյան Դավիթ Նորայրի	23,533,525.00
Ռազմավարության և ռիսկերի կառավարման վարչության պետ	Ավետիսյան Հայկ Միշայի	15,987,859.00
Իրավաբանական վարչության պետ	Զհանգիրյան Վրեժ Գագիկի	12,987,817.00
Պլաստիկ քարտերի վարչության պետ	Գալստյան Արամայիս Արծրունու	12,476,863.00
Վարկավորման վարչության պետ	Կարապետյան Նարինե Ժանի	8,125,358.00

14. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1) կառավարման մարմինների յուրաքանչյուր անդամի՝ տվյալ պաշտոնում պաշտոնավարման սկիզբը և ավարտը.

Ներկայացված է ազդագրի Բաժին 3, կետ 12, ենթակետ 2-ում:

2) տեղեկատվություն այն մասին, թե արդյո՞ք կառավարման անդամները չունեն պայմանագրեր բանկի կամ նրա դուստր ընկերությունների հետ այն մասին, որ իրենց պաշտոնավարման ժամկետի ավարտից հետո պետք է ստանան պարգևավճար կամ լրավճար: Եթե նման պայմանագրեր առկա չեն, ապա առանձին դրույթով նշել դրանց բացակայության մասին,

Նման պայմանագրեր չկան:

3) առկայության դեպքում ներկայացնել բանկի աուդիտի կոմիտեի կամ աշխատավարձերի (վարձատրության) կոմիտեների մասին տեղեկատվություն, ներառյալ կոմիտեների անդամների անունը, ազգանունը և կոմիտեների իրավասությունները և պարտականությունները: Նման կոմիտեները կազմված են լինում բանկի կառավարման մարմինների անդամներից և ստեղծվում են կոնկրետ խնդիրների լուծման նպատակով,

Նման կոմիտեներ բանկում չկան:

4) նշել արդյո՞ք բանկը բավարարում է իր ստեղծման երկրում ընդունված կորպորատիվ կառավարման սկզբունքներին (նման սկզբունքների առկայության դեպքում):

Բանկը բավարարում է ՀՀ Կառավարության հաստատած կորպորատիվ կառավարման սկզբունքներին (կանոնագրքին) և Բանկի կորպորատիվ կառավարման տարեկան հայտարարագիրը տեղադրված է բանկի ինտերնետային կայքի՝ www.aeb.am՝ <<Կորպորատիվ կառավարում>> ենթաբաժնում:

15. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ

1) պատմական ֆինանսական ժամանակաշրջանում ընդգրկված յուրաքանչյուր ֆինանսական տարվա կտրվածքով աշխատակիցների միջին տարեկան թվաքանակը կամ այդ թվաքանակը տարվա վերջի դրությամբ.

Պատմական ֆինանսական ժամանակաշրջանում Բանկի աշխատակիցների թվաքանակը հետևյալ է.

31.12.2013թ. դրությամբ՝ 947 հոգի,
 31.12.2014թ. դրությամբ՝ 936 հոգի,
 31.12.2015թ. դրությամբ՝ 904 հոգի:

2) հնարավորինս թարմ տեղեկատվություն բանկի կառավարման մարմնի յուրաքանչյուր անդամին պատկանող՝ բանկի բաժնային արժեթղթերի և այդ արժեթղթերի նկատմամբ օպցիոնների առկայության մասին՝ նշելով նրանցից յուրաքանչյուրին պատկանող արժեթղթերի դասը, քանակը, տոկոսը ընդհանուրի մեջ և այլն,

Ա.Ա.Հ.	Պաշտոն	Մասնակցության չափը բանկի կանոնադրական կապիտալում
Սուքիասյան Սարիբեկ Ալբերտի	Խորհրդի նախագահ	արժեթղթերի դասը (տեսակը)՝ սովորական բաժնետոմս (բաժնային արժեթուղթ) արժեթղթերի քանակը՝ 328,049 հատ տոկոսը ընդհանուրի մեջ՝ 25.9%
Մելիքյան Արամ Ռոբերտի	Խորհրդի նախագահի տեղակալ	արժեթղթերի դասը (տեսակը)՝ սովորական բաժնետոմս (բաժնային արժեթուղթ) արժեթղթերի քանակը՝ 331 հատ տոկոսը ընդհանուրի մեջ՝ 0.026%
Իննա Յաբբարովա	Խորհրդի անդամ	-
Պետրոսյան Լուիզա Աշոտի	Խորհրդի անդամ, Խորհրդի քարտուղար	արժեթղթերի դասը (տեսակը)՝ սովորական բաժնետոմս (բաժնային արժեթուղթ) արժեթղթերի քանակը՝ 147 հատ տոկոսը ընդհանուրի

		մեջ՝ 0.012%
Հայրապետյան Ռուբեն Աշոտի	Խորհրդի անդամ	արժեթղթերի դասը (տեսակը)՝ սովորական բաժնետոմս (բաժնային արժեթուղթ) արժեթղթերի քանակը՝ 138 հատ տոկոսը ընդհանուրի մեջ՝ 0.011%
Նալջյան Արմեն Տիգրանի	Գործադիր տնօրեն (Վարչության նախագահ)	արժեթղթերի դասը (տեսակը)՝ սովորական բաժնետոմս (բաժնային արժեթուղթ) արժեթղթերի քանակը՝ 398 հատ տոկոսը ընդհանուրի մեջ՝ 0.031%
Բադալյան Ռուբեն Անատոլիի	Գործադիր տնօրենի տեղակալ-գանձապետ (Վարչության նախագահի տեղակալ-գանձապետ)	-
Զիչյան Օնիկ Գևորգի	Կորպորատիվ և մանրածախ բիզնեսի գծով տնօրենի տեղակալ (Վարչության նախագահի կորպորատիվ և մանրածախ բիզնեսի գծով տեղակալ)	արժեթղթերի դասը (տեսակը)՝ սովորական բաժնետոմս (բաժնային արժեթուղթ) արժեթղթերի քանակը՝ 100 հատ տոկոսը ընդհանուրի մեջ՝ 0.008%
Առաքելյան Արտակ Արմենակի	Գործառնական գծով տնօրենի տեղակալ (Վարչության նախագահի գործառնական գծով տեղակալ)	-
Մանրիկյան Աստղիկ Մեսրոպի	Միջազգային և զարգացման գծով տնօրենի տեղակալ (Վարչության նախագահի միջազգային և զարգացման գծով տեղակալ)	արժեթղթերի դասը (տեսակը)՝ սովորական բաժնետոմս (բաժնային

		արժեթուղթ) արժեթղթերի քանակը՝ 108 հատ տոկոսը ընդհանուրի մեջ՝ 0.009%
Ազատյան Դավիթ Նորայրի	Գլխավոր հաշվապահ Վարչության անդամ	-
Ավետիսյան Հայկ Միշայի	Ռազմավարության և ռիսկերի կառավարման վարչության պետ Վարչության անդամ	արժեթղթերի դասը (տեսակը)՝ սովորական բաժնետոմս (բաժնային արժեթուղթ) արժեթղթերի քանակը՝ 101 հատ տոկոսը ընդհանուրի մեջ՝ 0.008%
Զհանգիրյան Վրեժ Գագիկի	Իրավաբանական վարչության պետ Վարչության անդամ	արժեթղթերի դասը (տեսակը)՝ սովորական բաժնետոմս (բաժնային արժեթուղթ) արժեթղթերի քանակը՝ 1,049 հատ տոկոսը ընդհանուրի մեջ՝ 0.083%
Գալստյան Արամայիս Արծրունու	Պլաստիկ քարտերի վարչության պետ Վարչության անդամ	արժեթղթերի դասը (տեսակը)՝ սովորական բաժնետոմս (բաժնային արժեթուղթ) արժեթղթերի քանակը՝ 80 հատ տոկոսը ընդհանուրի մեջ՝ 0.006%
Կարապետյան Նարինե Ժանի	Վարկավորման վարչության պետ, Վարչության անդամ	արժեթղթերի դասը (տեսակը)՝ սովորական բաժնետոմս (բաժնային արժեթուղթ) արժեթղթերի քանակը՝

		51 հատ տոկոսը ընդհանուրի մեջ՝ 0.004%
--	--	---

3) նկարագրություն այն մասին, թե ինչ ծրագրեր են գործում՝ կապված աշխատակիցներին բանկի կապիտալում մասնակցության հնարավորություն ընձեռելու հետ:

Նման ծրագրեր չկան:

16. ԽՈՇՈՐ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԸ ԵՎ ՀՍԿՈՂ ԱՆՁԻՆՔ

1) այնքանով, որքանով հայտնի է բանկին, խոշոր բաժնետերերի (բացառությամբ թողարկողի կառավարման մարմինների անդամների) անունը, ազգանունը, նրանցից յուրաքանչյուրի մասնակցության չափը: Եթե չկան խոշոր բաժնետերեր, ապա առանձին նշել այդ փաստը,

Բանկի խոշոր բաժնետերերն են.
Սուքիասյան Խաչատուր՝ 14.38%,
Սուքիասյան Ռոբերտ՝ 14.97%,
Սուքիասյան Էդուարդ՝ 11.18,
Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ՝ 11.05%:

2) տեղեկատվություն այն մասին, թե արդյո՞ք բոլոր խոշոր բաժնետերերին պատկանող բաժնետոմսերից յուրաքանչյուրը տալիս է ձայնի միևնույն իրավունքը,

Բոլոր խոշոր բաժնետերերին պատկանող բաժնետոմսերից յուրաքանչյուրը տալիս է ձայնի միևնույն իրավունքը:

3) այնքանով, որքանով հայտնի է բանկին, տեղեկատվություն այն մասին, թե արդյո՞ք բանկն ուղղակիորեն կամ անուղղակիորեն գտնվում է հսկողության տակ: Եթե այո, ապա նշել հսկողների անվանումը (անունը, ազգանունը) և նույնականացման համար անհրաժեշտ այլ տեղեկատվություն, հսկողության բնույթը (ինչի հիման վրա է այդ անձը (անձինք) հսկում բանկին):

“Արժեթղթերի շուկայի մասին” ՀՀ օրենքի իմաստով «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն գտնվում է.

1. Սուքիասյանների ընտանիքի ուղղակի հսկողության տակ, քանի որ նրանք հանդիսանում են «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի բաժնետոմսերի 66.43%-ի սեփականատեր.

Սուքիասյան Սարիբեկ՝ 25.9% (ք. Երևան, Զավարյան 6, բն. 1-5),
Սուքիասյան Խաչատուր՝ 14.38% (ք. Երևան, Զավարյան 6, բն. 1-5),
Սուքիասյան Ռոբերտ՝ 14.97%, (ք. Երևան, Զավարյան 6, բն. 1-5),
Սուքիասյան Էդուարդ՝ 11.18%, (ք. Երևան, Զավարյան 6, բն. 1-5):

2. Վերակառուցման և Ջարգացման Եվրոպական Բանկի (European Bank for Reconstruction and Development Անգլիա, ՉՄՆ, EC2A, Լոնդոն, Իքսչեյնջ Սթրիտ մեկ) ուղղակի հսկողության տակ, քանի որ այն հանդիսանում է «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի 11.05% գումարած 1 բաժնետոմսի սեփականատեր:

17. ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ

2015թ.

Հոդվածը	Բաժնետերեր	Հիմնական դեկավար անձնակազմ	Դուստր ընկերություններ և ընկերություններ որտեղ Բանկ ունի ներդրում
Հաճախորդներին տրված վարկեր			
Հունվարի 1-ի դրությամբ վճարման ենթակա վարկեր, համախառն	774,927	19,080	-
Տարվա ընթացքում տրված վարկեր	656,696	249,676	-
Տարվա ընթացքում վարկերի մարում	(642,109)	(191,217)	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ վճարման ենթակա վարկեր, համախառն	789,514	77,539	-
Նվազեցված՝ արժեզրկումից կորուստ	(7,604)	(787)	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ վճարման ենթակա վարկեր	781,910	76,752	-
Վարկերի գծով տոկոսային եկամուտ	112,571	5,985	-
Վարկերի գծով կորուստների արժեզրկման գծով մասնահանումներ/(վերականգնումներ)	145	(588)	-
Հաճախորդներին վճարման ենթակա գումարներ			
Ավանդներ հունվարի 1-ի դրությամբ	1,134,180	13,297	-
Տարվա ընթացքում ներդրված ավանդներ	47,430,801	794,455	-
Տարվա ընթացքում մարված ավանդներ	(47,373,691)	(569,723)	-
Ավանդներ դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,191,290	238,029	-
Տոկոսային ծախս ավանդների գծով	100,490	17,985	-
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ			
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ հունվարի 1-ի դրությամբ	2,027,113	-	196,829
Ավելացումներ տարվա ընթացքում	340	-	5,727,861
Նվազումներ տարվա ընթացքում	(1,014,404)	-	(5,659,318)
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,013,049	-	265,372
Տոկոսային ծախս	255,446	-	34,924
Ստորադաս փոխառություն			
Ստորադաս փոխառություն հունվարի 1-ի դրությամբ	-	-	-
Թողարկված տարվա ընթացքում	4,425,604	-	4,425,604
Ստորադաս փոխառություն դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,425,604	-	4,425,604
Տոկոսային ծախս	394,836	-	394,836
Բաժնետոմսերի թողարկման համար ստացված կանխավճարներ			
Հունվարի 1-ի դրությամբ	-	-	-
Ավելացումներ	4,001,688	-	4,001,688

Դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,001,688	-	4,001,688
Հիմնական միջոցների ձեռքբերում	26,684		
Տրամադրված երաշխիքներ	96,750	-	6,000
Այլ ծախսեր			
Կոմիսիոն և այլ միջնորդավճարների գծով եկամուտ	2,750	171	193
Գովազդային ծախսեր	47,794	-	-
Ապահովագրական ծախսեր	-	-	91,441
Ինկասացիոն ծախսեր	-	-	-
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	261,640	-	-
Գործուղման ծախսեր	13,631	-	-
Այլ ծախսեր	200	-	-

18. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԲԱՆԿԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍԻՆ

1) Պատմական ֆինանսական տեղեկատվություն

Պատմական ֆինանսական ժամանակաշրջանի համար անկախ աուդիտորական եզրակացությամբ հաստատված տարեկան ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաև անկախ աուդիտորական եզրակացության բովանդակությունն ամբողջությամբ.

Ներկայացված են Ազդագրին կից հավելվածում:

3) Բանկի ֆինանսական վիճակի էական փոփոխությունները.

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ		(հազ. դրամ)	
		31.12.2015	31.03.2016
1	Ընդհանուր ակտիվներ	108,395,188	106,660,749
2	Ընդհանուր պարտավորություններ	93,395,112	88,192,761
3	Սեփական կապիտալ	15,000,076	18,467,988
4	Շահույթ նախքան շահութահարկով հարկումը	613,542	135,467
5	Զուտ տոկոսային եկամուտ (տոկոսային եկամուտ-տոկոսային ծախս)	4,540,923	1,189,917

4) Դատական, արբիտրաժային և վարչական վարույթների մասին տեղեկատվություն

Ներկայացվում է ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող 12 ամսվա ընթացքում թողարկողի ներգրավվածությամբ դատական, արբիտրաժային և (կամ) վարչական վարույթների նկարագիրը, որոնք թողարկողի ֆինանսական վիճակի կամ շահութաբերության վրա ունեցել են էական ազդեցություն.

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ կողմից 13.04.2015թ. հայցադիմում է ներկայացվել դատարան խնդրահարույց վարկի գծով հոգուտ բանկի 4,098,828 ՀՀ դրամ գումար բռնագանձելու պահանջի մասին:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ կողմից 15.04.2015թ. հայցադիմում է ներկայացվել դատարան խնդրահարույց վարկի գծով հոգուտ բանկի 3,102,659 ՀՀ դրամ գումար բռնագանձելու պահանջի մասին:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ կողմից 22.05.2015թ. հայցադիմում է ներկայացվել ընդհանուր իրավասության դատարան խնդրահարույց վարկի գծով հոգուտ բանկի 3,532,112.3 ՀՀ դրամ գումար բռնագանձելու պահանջի մասին:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ կողմից 02.06.2015թ. հայցադիմում է ներկայացվել ընդհանուր իրավասության դատարան խնդրահարույց վարկի գծով հոգուտ բանկի 3,103,367 ՀՀ դրամ գումար բռնագանձելու պահանջի մասին:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ կողմից 04.06.2015թ. հայցադիմումներ է ներկայացվել ընդհանուր իրավասության դատարան խնդրահարույց վարկերի գծով հոգուտ բանկի 9,187,020 և 4,453,120 ՀՀ դրամ գումար բռնագանձելու պահանջի մասին:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ կողմից 03.07.2015թ. հայցադիմում է ներկայացվել ընդհանուր իրավասության դատարան խնդրահարույց վարկի գծով հոգուտ բանկի 9,405,674 ՀՀ դրամ գումար բռնագանձելու պահանջի մասին:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ կողմից 08.07.2015թ. հայցադիմում է ներկայացվել ընդհանուր իրավասության դատարան խնդրահարույց վարկի գծով հոգուտ բանկի 1,961,251.8 ՀՀ դրամ գումար բռնագանձելու պահանջի մասին:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ կողմից 22.07.2015թ. հայցադիմում է ներկայացվել ընդհանուր իրավասության դատարան խնդրահարույց վարկի գծով հոգուտ բանկի 1,066,451.4 ՀՀ դրամ գումար բռնագանձելու պահանջի մասին:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ կողմից 27.07.2015թ. հայցադիմում է ներկայացվել ընդհանուր իրավասության դատարան խնդրահարույց վարկի գծով հոգուտ բանկի 4,199,699 ՀՀ դրամ գումար բռնագանձելու պահանջի մասին:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ կողմից 30.07.2015թ. հայցադիմում է ներկայացվել ընդհանուր իրավասության դատարան խնդրահարույց վարկի գծով հոգուտ բանկի 42,488.59 ԱՄՆ դոլարին և 45,243.74 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ գումար բռնագանձելու պահանջի մասին:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ կողմից 31.07.2015թ. հայցադիմում է ներկայացվել ընդհանուր իրավասության դատարան խնդրահարույց վարկի գծով հոգուտ բանկի 1,317,072 ՀՀ դրամ գումար բռնագանձելու պահանջի մասին:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ կողմից 06.08.2015թ. հայցադիմում է ներկայացվել ընդհանուր իրավասության դատարան խնդրահարույց վարկի գծով հոգուտ բանկի 13,910,455 ՀՀ դրամ գումար բռնագանձելու պահանջի մասին:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ կողմից 07.08.2015թ. հայցադիմում է ներկայացվել ընդհանուր իրավասության դատարան խնդրահարույց վարկի գծով հոգուտ բանկի 1,923.62 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ գումար բռնագանձելու պահանջի մասին:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ կողմից 13.08.2015թ. հայցադիմումներ է ներկայացվել ընդհանուր իրավասության դատարան խնդրահարույց վարկերի գծով հոգուտ բանկի 3,579,539 ՀՀ դրամ և 3,470,738.3 ՀՀ դրամ գումար բռնագանձելու պահանջի մասին:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ կողմից 25.08.2015թ. հայցադիմում է ներկայացվել ընդհանուր իրավասության դատարան խնդրահարույց վարկի գծով հոգուտ բանկի 3,440,437.0 ՀՀ դրամ գումար բռնագանձելու պահանջի մասին:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ կողմից 01.09.2015թ. հայցադիմում է ներկայացվել ընդհանուր իրավասության դատարան խնդրահարույց վարկի գծով հոգուտ բանկի 814,896.0 ՀՀ դրամ, 205,151.0 ՀՀ դրամ և 3,251.64 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ գումար բռնագանձելու պահանջի մասին:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ կողմից 07.09.2015թ. հայցադիմում է ներկայացվել ընդհանուր իրավասության դատարան խնդրահարույց վարկի գծով հոգուտ բանկի 856,631.0 և 4,749,964.0 ՀՀ դրամ գումար բռնագանձելու պահանջի մասին:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ կողմից 11.09.2015թ. հայցադիմում է ներկայացվել ընդհանուր իրավասության դատարան խնդրահարույց վարկի գծով հոգուտ բանկի 8,362,987 ՀՀ դրամ գումար բռնագանձելու պահանջի մասին:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ կողմից 15.09.2015թ. հայցադիմում է ներկայացվել ընդհանուր իրավասության դատարան խնդրահարույց վարկի գծով հոգուտ բանկի 6,374,926 ՀՀ դրամ գումար բռնագանձելու պահանջի մասին:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ կողմից 16.09.2015թ. հայցադիմումներ է ներկայացվել ընդհանուր իրավասության դատարան խնդրահարույց վարկերի գծով հոգուտ բանկի 2,503,259 ՀՀ դրամ և 2,448.84 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ գումար բռնագանձելու պահանջի մասին:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ կողմից 23.09.2015թ. հայցադիմում է ներկայացվել ընդհանուր իրավասության դատարան խնդրահարույց վարկի գծով հոգուտ բանկի 5,231,265 ՀՀ դրամ գումար բռնագանձելու պահանջի մասին:

Բանկը որպես հաշվետու թողարկող, իր արժեթղթերի սեփականատերերին է ներկայացնում <<Էական փաստերի և տեղեկությունների վերաբերյալ>> հաշվետվություններ (վերոնշյալ տեղեկատվությունը բացահայտվել է նաև որպես <<Էական փաստերի և տեղեկությունների վերաբերյալ>> հաշվետվություն), որոնք տեղադրված են բանկի ինտերնետային կայքի՝ www.aeb.am՝ **<<Բաժնետերեր և ներդրողներ>>** բաժնում:

5) Հարկային արտոնությունները

Թողարկողի համար հատուկ հարկային արտոնություններ սահմանված չեն:

19. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1) Կանոնադրական կապիտալը

Տեղեկատվությունը 30.04.2016թ. դրությամբ.

- ա. կանոնադրական կապիտալի մեծությունը՝ 3,167,022,500 դրամ,
- բ. հայտարարված բաժնետոմսերի քանակը՝ 2,000,000 հատ սովորական բաժնետոմս,
- գ. թողարկված և լրիվ վճարված բաժնետոմսերի քանակը՝ 1,266,809 հատ սովորական բաժնետոմս, թողարկված, բայց ոչ լրիվ վճարված բաժնետոմսերի քանակը՝ 0,
- դ. մեկ բաժնետոմսի անվանական արժեքը՝ 2,500 ՀՀ դրամ,

Ե. բանկին կամ նրա դուստր ընկերությանը պատկանող՝ բանկի թողարկած բաժնետոմսերի քանակը՝ 1,027, անվանական և հաշվեկշռային արժեքները՝ 2,567,500 ՀՀ դրամ և 12,324,000 ՀՀ դրամ: Համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների՝ Բանկի կողմից իրականացվել է սույն թվականի մարտի 18-ին կայացած «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ժողովում ««ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ և «ԲՏԱ Բանկ» ՓԲԸ միացման վերաբերյալ» ժողովի օրակարգի երկրորդ հարցին դեմ քվեարկելու/այդ հարցով քվեարկությանը չմասնակցելու արդյունքում հետգնաման իրավունք ձեռքբերած և համապատասխան դիմում ներկայացրած բաժնետերերին պատկանող թվով 1,027 հատ սովորական բաժնետոմսերի հետգնում (2,567,500 ՀՀ դրամ ընդհանուր անվանական և 12,324,000 ՀՀ դրամ ընդհանուր հաշվեկշռային արժեքներով):

2) Կանոնադրությունը

ա. բանկի նպատակը և գործունեության ոլորտը՝ նշելով թե բանկի կանոնադրության որ մասում կարելի է գտնել դրանք,

Բանկը ՀՀ կենտրոնական բանկից ստացած լիցենզիայի հիման վրա իրականացնում է բանկային գործունեություն և գործունեությունը շահույթ ստանալու նպատակ է հետապնդում:

Կանոնադրության կետ 1.5:

բ. օրենքի, ենթաօրենսդրական ակտերի և (կամ) կանոնադրության այն հոդվածները, որոնք կարգավորում են բանկի կառավարման մարմինների իրավունքներն ու պարտականություններ՝ ներկայացնելով դրանց համառոտ նկարագիրը,

Բանկի կառավարման մարմինների իրավունքներն ու պարտականությունները սահմանված են կանոնադրության գլուխ 6-ով, որոնք ներկայացված են Ազդագրի Բաժին 3, կետ 12-ում, ինչպես նաև «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի Հոդված 21-Հոդված 21¹⁰-ով:

գ. բանկի բաժնետոմսերի յուրաքանչյուր դասի սեփականատերերի իրավունքների և պարտականությունների նկարագիրը՝ ըստ կանոնադրության, ինչպես նաև այդ արժեթղթերի հետ կապված սահմանափակումները,

1. Բանկի կանոնադրական հիմնադրամի ձևավորմանը կարող են մասնակցել ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ օտարերկրյա ֆիզիկական և իրավաբանական անձինք:

2. Բանկի բաժնետերերը պարտավոր են.

ա/ չիրապարակել Բանկի գործունեության վերաբերյալ գաղտնիք հանդիսացող տեղեկություններ,

բ/ բաժնետերերը կարող են կրել Բանկի կանոնադրությամբ նախատեսված և օրենքին ու այլ իրավական ակտերին չհակասող այլ պարտավորություններ,

գ/ ձեռնպահ մնալ գործունեության այն բոլոր տեսակներից, որոնք կարող են վնաս պատճառել Բանկին:

3. Բանկի յուրաքանչյուր սովորական բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքները: Սովորական բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերն իրավունք ունի.

ա/ մասնակցել Բանկի ընդհանուր ժողովին վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով,

բ/ մասնակցել Բանկի կառավարմանը,

գ/ ստանալ շահութաբաժիններ Բանկի գործունեությունից առաջացած շահույթից,

դ/ ստանալ Բանկի գործունեության վերաբերյալ օրենքով սահմանված ցանկացած տեղեկատվություն,

ե/ ժողովներում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձին,

զ/ հանդես գալ առաջարկություններով բաժնետերերի ընդհանուր ժողովում,

է/ Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով,

ը/ հայցով դիմել դատարան Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընդունված և գործող օրենքների ու այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով,

թ/ Բանկի լուծարման դեպքում ստանալ գույքի իր հասանելիք մասը,

ժ/ ձեռք բերել իրեն պատկանող բաժնետոմսերի հետգնման պահանջի իրավունք, եթե՝

- որոշում է ընդունվել Բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու մասին, և տվյալ բաժնետերը քվեարկել է Բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու դեմ կամ այդ հարցերով քվեարկությանը չի մասնակցել.
- կանոնադրության մեջ լրացումներ կամ փոփոխություններ են կատարվել, կամ հաստատվել է կանոնադրությունը նոր խմբագրությամբ, որի հետևանքով սահմանափակվել է նշված բաժնետերի իրավունքները, և նա դեմ է քվեարկել կամ չի մասնակցել այդ հարցի քվեարկությանը,

ժա/ օգտվել օրենքով նախատեսված այլ իրավունքներից:

4. Արտոնյալ բաժնետոմս ունեցող բաժնետերերն իրավունք ունեն՝

ա/ մասնակցել Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովին առանց ձայնի իրավունքի,

բ/ ստանալ շահութաբաժիններ Բանկի գործունեությունից առաջացած շահույթից՝ բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ սահմանված չափով և կարգով

գ/ ստանալ Բանկի գործունեության վերաբերյալ օրենքով սահմանված ցանկացած տեղեկատվություն,

դ/ ստանալ Բանկի գույքի իր հասանելիք մասը Բանկի լուծարման դեպքում:

Արժեթղթերի հետ կապված սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ազդագրի Բաժին 2-ի կետ 3-ի «ը» ենթակետում:

դ. ինչ քայլեր է պետք ձեռնարկել բաժնետերերի իրավունքներում փոփոխություններ մտցնելու համար,

Բաժնետերերի իրավունքները սահմանված են կանոնադրության գլուխ 4-ով: Բաժնետերերի իրավունքներում փոփոխություններ մտցնելու համար պետք է ժողովի օրակարգի վերաբերյալ առաջարկություն ներկայացնել հետևյալ կերպ.

Համաձայն «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման» կարգի.

1. Բանկի բաժնետոմսերի առնվազն 2%-ի ձայնի իրավունք ունեցող սեփականատերը, Բանկի ֆինանսական տարվա ավարտից 30 օրվա ընթացքում իրավունք ունի երկուսից ոչ ավել առաջարկություններ ներկայացնել ժողովի օրակարգի վերաբերյալ, ինչպես նաև առաջարկել ընկերության խորհրդի անդամության թեկնածուներ, ընդ որում՝ առաջարկվող թեկնածուների քանակը չի կարող գերազանցել այդ մարմիններում անդամների սահմանված քանակը:

2. Օրակարգի վերաբերյալ առաջարկությունները ներկայացվում են գրավոր՝ նշելով հարցի առաջարկման հիմքերը, հարցն առաջադրող բաժնետիրոջ անվանումը /անուն-ազգանունը/, նրան պատկանող բաժնետոմսերի քանակը:

3. Բանկի խորհրդի անդամության թեկնածուի վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելիս, նշվում է կարգի 7.5.2. կետով պահանջվող տվյալները:

4. Բանկի խորհուրդը քննարկում է ներկայացված առաջարկները և որոշում ընդունում 1 կետում նշված ժամկետը լրանալուց 15 օրվա ընթացքում:

5. Մերժման վերաբերյալ որոշում կարող է ընդունվել եթե՝

- առաջարկ ներկայացրած բաժնետիրոջ կողմից խախտվել է վերը նշված 30 օրյա ժամկետը,
- առաջարկ ներկայացրած բաժնետերը չի տնօրինում առնվազն 2% ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի քանակը,
- թեկնածուների վերաբերյալ առաջարկությունները չեն պարունակում սահմանված անհրաժեշտ տվյալները,
- առաջարկը չի համապատասխանում գործող օրենսդրությանը:

6. Բանկի խորհրդի հիմնավորված մերժման որոշումը ուղղվում է առաջարկ ներկայացրած բաժնետիրոջը՝ որոշումն ընդունելու պահից 3 օրվա ընթացքում: Մերժման մասին որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Ե. հերթական և արտահերթ բաժնետերերի ժողովների հրավիրման կարգը, դրանց մասնակցելու կարգը,

Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը գումարվում է բանկի հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեց ամսվա ընթացքում, համաձայն բանկի բաժնետերերի 19.06.2015թ. տարեկան ժողովի հաստատած ««ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման» կարգի:

Բանկի բաժնետերերի տարեկան ժողովից բացի գումարվող բաժնետերերի ընդհանուր ժողովները, որոնք հրավիրվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար՝ համարվում են արտահերթ: Բանկի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովները գումարվում են Բանկի խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, գործադիր մարմնի, Բանկի արտաքին աուդիտին իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ բանկի առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:

Համաձայն ««ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման» կարգի.

1. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեն.

- ✓ Բանկի տեղաբաշխված բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը՝ 1 բաժնետոմս 1 ձայն քվեարկության իրավունքով, ինչպես նաև անվանատերերը /հիմնավորող փաստաթղթերի ներկայացման դեպքում/,
- ✓ Բանկի մասնակից չհանդիսացող Խորհրդի և Գործադիր մարմնի անդամները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով,
- ✓ Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման անդամները՝ որպես դիտորդ,
- ✓ Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձը՝ որպես դիտորդ (եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող ընդհանուր ժողովի օրակարգի հարցերում),
- ✓ ՀՀ կենտրոնական բանկի ներկայացուցիչները՝ որպես դիտորդ,
- ✓ հրավիրված անձինք, հյուրեր:

2. Բանկի Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի մասնակիցների ցուցակը կազմվում է պատասխանատու ստորաբաժանման կողմից՝ Բանկի ռեեստրի տվյալների հիման վրա /ամենամյա ռեեստր և հետագա ստացված պաշտոնական տեղեկանքներ/, Բանկի Խորհրդի կողմից հաստատված ամսաթվի դրությամբ: Ընդ որում, ցուցակ կազմելու ամսաթիվը չի կարող սահմանվել ավելի վաղ, քան ընդհանուր ժողով գումարելու մասին որոշման ամսաթիվը և ավելի ուշ, քան ընդհանուր ժողովի գումարումից 45 օր առաջ (հեռակա քվեարկության դեպքում՝ 35 օրից պակաս լինել):

3. Բաժնետոմսերի անվանատերը պարտավոր է, ցուցակը կազմելու համար, այն կազմելու ամսաթվի դրությամբ տվյալներ տրամադրել այն անձանց մասին, որոնց շահերը ներկայացնելու նպատակով նա տնօրինում է բաժնետոմսերը:

4. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի մասնակիցների ցուցակում նշվում են տվյալներ յուրաքանչյուր մասնակցի անվան /անվանման/, գտնվելու վայրի /հասցեի/ և նրան պատկանող բաժնետոմսերի քանակի մասին:

5. Վերը նշված Բանկի մասնակիցների ցուցակը ծանոթացման նպատակով պետք է տրամադրվի Բանկի այն մասնակիցներին, որոնք գրանցված են Բանկի մասնակիցների ռեեստրում: Բանկը, մասնակցի պահանջով, կարող է տալ տեղեկանք՝ ցուցակում նրա ընդգրկման մասին:

6. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակում փոփոխություններ կարող են կատարվել միայն ցուցակի կազմման ընթացքում թույլ տրված սխալներն ուղղելու կամ դրանում չընդգրկված բաժնետերերի խախտված օրինական իրավունքների և շահերի վերականգնման նպատակով:

7. Բանկի Ընդհանուր ժողովի գումարման մասին բաժնետերերի Ծանուցումը հրապարակվում է ժողովի գումարման օրվանից առնվազն 15 օր առաջ, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում: Եթե տվյալ ժամանակամիջոցում նշված օրաթերթը լույս չի տեսնում, ապա բաժնետերերի ժողովի գումարման ծանուցումը հրապարակվում է խորհրդի որոշմամբ սահմանվող այլ օրաթերթում:

8. Բանկի բաժնետերերը և ժողովին մասնակցելու իրավունք ունեցող այլ անձինք ժողովի գումարման մասին ծանուցվում են համապատասխան գրավոր ծանուցմամբ փոստով ուղարկելու, էլեկտրոնային փոստով կամ առձեռն տրամադրելու միջոցով, ժողովի գումարումից առնվազն 15 օր առաջ:

9. Ընդհանուր ժողովի մասին ծանուցումը ներառում է՝

- ✓ Բանկի անվանումը և գտնվելու վայրը,
- ✓ ժողովի գումարման ամսաթիվը, ժամանակը և վայրը,

✓ ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու ամսաթիվը,

✓ ժողովի օրակարգում ընդգրկված հարցերը:

10. Բաժնետերերին տրամադրվող նյութերի ցանկը, որն ընդգրկում է.

✓ Բանկի տարեկան հաշվետվությունը,

✓ Բանկի տարեկան ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը,

✓ տեղեկություններ Բանկի խորհրդի անդամների առաջադրվող թեկնածությունների վերաբերյալ, հետևյալ բնույթի.

ա/ Անուն Ազգանուն Հայրանուն, ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը,

բ/ մասնագիտությունը և կրթությունը,

գ/ վերջին 10 տարվա ընթացքում զբաղեցրած պաշտոնները,

դ/ տվյալ պաշտոնում ընտրվելու /նշանակվելու/ տարին, ամիսը, ամսաթիվը և պաշտոնից ազատվելու տարին, ամիսը, ամսաթիվը

ե/ տվյալ պաշտոնում վերընտրվելու քանակը

զ/ նրանց և նրա հետ փոխկապակցված անձանց պատկանող Բանկի քվեարկող բաժնետոմսերի քանակը

է/ տեղեկություններ այն իրավաբանական անձանց մասին, որոնցում տվյալ անձը զբաղեցնում է ղեկավար պաշտոններ

ը/ փոխհարաբերությունների բնույթը տվյալ Բանկի և Բանկի հետ կապված անձանց հետ

✓ տեղեկություններ Հաշվիչ հանձնաժողովի առաջադրվող թեկնածությունների մասին,

✓ Բանկի Կանոնադրության փոփոխությունների և լրացումների նախագիծը կամ նախագիծը նոր խմբագրությամբ,

✓ օրակարգում ընդգրկված հարցերի հետ կապված այլ նյութեր,

✓ քվեաթերթիկը,

✓ օրենքով սահմանված այլ նյութեր /բաժնետերերի միավորման պայմանագրի պատճենը, առաջարկվող խորհրդի անդամի մասին, փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերի խորհրդում առաջարկվող մասնակցի մասին (հեռակա քվեարկության դեպքում)/:

11. Բանկի կանոնադրական կապիտալում 10% մասնակցություն կազմելու նպատակով միավորված բաժնետերերի խմբի ստեղծման պայմանագիրը պետք է տրամադրվի Բանկին 10 կետի նյութերի կազմում ժողովի բոլոր մասնակիցներին դրա պատճենները տրամադրելու համար՝ ժողովի կայացման, իսկ հեռակա կարգով քվեարկության դեպքում՝ լրացված քվեաթերթիկները Բանկի կողմից ընդունելու համար սահմանված ժամկետի վերջին օրվանից առնվազն 30 օր առաջ: Նշված Պայմանագիրը պետք է պարունակի հետևյալ պայմաններն ու տեղեկությունները.

• Բանկի միավորվող մասնակիցների վերաբերյալ տվյալներ, ներառյալ նրանց պատկանող Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի քանակը,

• միավորվող մասնակիցների կողմից առաջարկվող խորհրդի անդամի թեկնածուի վերաբերյալ.

ա/ Անուն Ազգանուն Հայրանուն, ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը,

բ/ մասնագիտությունը և կրթությունը,

գ/ վերջին 10 տարվա ընթացքում զբաղեցրած պաշտոնները,

դ/ նրան և նրա հետ փոխկապակցված անձանց պատկանող Բանկի քվեարկող բաժնետոմսերի քանակը,

ե/ տեղեկություններ այն իրավաբանական անձանց մասին, որոնցում տվյալ անձը զբաղեցնում է ղեկավար պաշտոններ,

զ/ փոխհարաբերությունների բնույթը տվյալ Բանկի և Բանկի հետ կապված անձանց հետ,

է/ միավորվող մասնակիցների հայեցողությամբ այլ տվյալներ:

12. Բանկի կանոնադրական հիմնադրամում փոքր մասնակցություն ունեցող մասնակիցների ներկայացուցչի մասին տեղեկատվությունը, պետք է տրամադրվեն Բանկին 10 կետի նյութերի կազմում ժողովի բոլոր մասնակիցներին դրա պատճենները տրամադրելու համար՝ ժողովի կայացման, իսկ հեռակա կարգով քվեարկության դեպքում՝ լրացված քվեաթերթիկները Բանկի կողմից ընդունելու համար սահմանված ժամկետի վերջին օրվանից առնվազն 30 օր առաջ: Տարեկան ընդհանուր ժողովում փոքր բաժնետերերի ընդգրկումը Խորհրդի կազմում կատարվում է համաձայն Բանկի Կանոնադրության 6.20 ենթակետի պահանջների:

13. Ընդհանուր ժողովը հեռակա քվեարկությամբ գումարելիս նույնպես, բաժնետերերին, քվեաթերթիկների և օրակարգի հետ մեկտեղ, տրամադրվում են անհրաժեշտ տեղեկությունները և նյութերը:

զ. օրենքի, ենթաօրենսդրական ակտերի և (կամ) կանոնադրության այն հոդվածները, որոնց հիման վրա պահանջվում է բանկի մոտ մասնակցություն ձեռք բերելիս բացահայտել դրա մասին տեղեկատվություն,

Բանկի մոտ մասնակցություն ձեռք բերելիս դրա մասին տեղեկատվության բացահայտում կանոնակարգվում է.

- «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 153-157 հոդվածներով, 169 հոդվածով
- «Հաշվետու թողարկողի կանոնադրական կապիտալում մասնակցության ձեռքբերման, ավելացման և նվազման վերաբերյալ տեղեկացման և բացահայտման կարգը» Կանոնակարգ 4/15-ով,
- «Հաշվետու թողարկողի ղեկավարի, նրա և թողարկողի հետ փոխկապակցված անձանց կողմից իրենց հաշվին՝ թողարկողի բաժնետոմսերով, ածանցյալ գործիքներով կամ այդպիսի ածանցյալների հետ կապված այլ արժեթղթերով կնքված գործարքների վերաբերյալ Կենտրոնական բանկին ներկայացվող հաշվետվություններում ներառվող տեղեկությունների կազմը, հաշվետվությունների ձևը և ներկայացման կարգը» Կանոնակարգ 4/16-ով:

է. կանոնադրության այն դրույթների նկարագիրը, որոնցով ավելի խիստ պահանջներ են սահմանվում, քան սահմանված է համապատասխան օրենքներով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով:

Չկան:

20. ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ

Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 2 տարվա ընթացքում բանկի կողմից բնականոն գործունեության շրջանակներից դուրս կնքված և գործողության մեջ գտնվող այն պայմանագրերի էական պայմանները, որոնց գինը գերազանցում է բանկի վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում նշված սեփական կապիտալի արժեքի 5 տոկոսը:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ և շինարարական կազմակերպության միջև կնքված «ԳՅՈՒՄՐԻ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ շենքի վերակառուցման կապիտալ շինարարական աշխատանքների իրականացման շինարարական պայմանագրի օբյեկտային նախահաշվի գումարը կազմում է 780,540,600 ՀՀ դրամ:

21. ՓՈՐՁԱԳԵՏԻ, ԳՆԱՀԱՏՈՂԻ, ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ԿԱՄ ՀԱՇՎԱՊԱՀԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ ԵՎ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑԻՑ ՎԵՐՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Փորձագետ կամ խորհրդատու, որի կարծիքը օգտագործվել է հայտարարագրում կամ երրորդ անձանցից վերցված տեղեկատվություն՝ չկա:

22. ԱՅԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայտարարություն այն մասին, որ ազդագրի կիրառության ողջ ժամկետի ընթացքում ներքոհիշյալ տեղեկատվությունը և փաստաթղթերը (կամ դրանց պատճեն) մշտապես մատչելի են հանրությանը.

- 1) Բանկի կանոնադրությունը,
- 2) Փորձագիտական եզրակացությունները կամ հաշվետվությունները, անկախ գնահատումները և վերլուծական նյութերը, որոնք պատրաստվել են բանկի պատվերով և որոնք կամ որոնց մի մասն օգտագործվել է ազդագրում.

Ազդագրի կիրառության ողջ ժամկետի ընթացքում Բանկի կանոնադրությունը, միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվությունները, տարեկան անկախ աուդիտորական եզրակացությունները, ինչպես նաև որպես հաշվետու թողարկող, ներդրողների համար պատրաստվող տարեկան և միջանկյալ հաշվետվություն-վերլուծությունները, էական փաստերի և տեղեկությունների վերաբերյալ հաշվետվությունները մշտապես մատչելի են հանրությանը ինչպես էլեկտրոնային, այնպես էլ թղթային ձևով: Նշված փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները տեղադրված են Բանկի ինտերնետային կայքում՝ www.aeb.am, իսկ թղթային տարբերակով ստանալու համար ներդրողները կարող են դիմել Բանկի գլխավոր գրասենյակ:

23. ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՅԼ ԱՆՁԱՆՑ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ

Այն անձանց մասին տեղեկատվություն, որտեղ բանկն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ունի ձայնի իրավունք տվող 5 և ավելի տոկոսի մասնակցություն՝ նշելով

այդ անձանց անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, գտնվելու վայրը, բանկին պատկանող բաժնային արժեթղթերի քանակը և մասնակցության չափը:

Թողարկողն ուղղակիորեն ունի ձայնի իրավունք տվող 5 և ավելի տոկոսի մասնակցություն «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ում և «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ում:

Անվանում՝ «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերություն՝ ԱՓԲԸ,

Կազմակերպական-իրավական ձևը՝ փակ բաժնետիրական ընկերություն,

Բանկի պատկանող բաժնային արժեթղթերի քանակը՝ 29,900 հատ սովորական բաժնետոմս,

Մասնակցության չափը՝ 15.17%,

Գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Արամի 3 և 5:

Անվանում՝ «Արմենիան Քարդ » փակ բաժնետիրական ընկերություն՝ ՓԲԸ,

Կազմակերպական-իրավական ձևը՝ փակ բաժնետիրական ընկերություն,

Բանկի պատկանող բաժնային արժեթղթերի քանակը՝ 4 հատ սովորական բաժնետոմս,

Մասնակցության չափը՝ 5%

Գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Գարեգին Նժդեհի 32/1:

Հավելված

Պատմական ֆինանսական ժամանակաշրջանի համար անկախ աուդիտորական եզրակացությամբ հաստատված տարեկան ֆինանսական հաշվետվությունները, անկախ աուդիտորական եզրակացությունը



«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» Բաց Բաժնետիրական Ընկերություն

Ֆինանսական հաշվետվություններ
2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 2013Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ և ՀԱՍՏԱՏՄԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ.....	1
ԱՆԿԱԽ ԱՌԻԴՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	2
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2013Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ.....	4
ՇԱՀՈՒՑԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ և ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐԺԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ	5
ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ	6
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31- ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ	8
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2013Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31- ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ	10
1. ԲԱՆԿԸ.....	10
2. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	10
3. ԿԱՐԵՈՐ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՆՈՐՈՇՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՂՅՈՒՆՆԵՐԸ	23
4. ՆՈՐ և ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ	25
5. ԶՈՒՏ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏ	29
6. ԿՈՄԻՍԻՈՆ և ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍՔՈՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ և ԾԱԽՄԵՐ.....	30
7. ԶՈՒՏ ԵԿԱՄՈՒՏ ԱՐՏԱՐԺՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ	30
8. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ.....	30
9. ՏՈԿՈՍԱԿԻՐ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐԺԵԶՐԿՄԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ.....	31
10. ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԳԾՈՎ ԾԱԽՄԵՐ.....	31
11. ԱՅԼ ԾԱԽՄԵՐ	31
12. ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԾԱԽՄ	32
13. ՄԵԿ ԲԱԺՆԵՏՈՄՄԻՆ ԸՆԿՆՈՂ ՇԱՀՈՒՑԹ	34
14. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ և ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐ	34
15. ՊԱՀԱՆՋՆԵՐ ԲԱՆԿԵՐԻ և ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ	34
16. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ՎԱՐԿԵՐ	35
17. ՎՃԱՆՔԻ ՀԱՄԱՐ ՄԱՏՉԵԼԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ	42
18. ՓՈԽԱՑՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ և ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	42
19. ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ ԱՍՈՑԻԱՅՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	43
20. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	45
21. ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ.....	46
22. ԱՅԼ ԱԿՏԻՎՆԵՐ	47
23. ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻՑ և ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՍՏԱՅՎԱԾ ՎԱՐԿԵՐ	47
24. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՆԿԵՐԻ և ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ	48
25. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՍՏԱՅՎԱԾ ՎԱՐԿԵՐ և ԱՎԱՆԴԱՆԵՐ	48
26. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ	49
27. ՇԱՀՈՒՑԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔՈՎ ՉՍՓՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	50
28. ԱՅԼ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	50
29. ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ	51
30. ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ և ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	51
31. ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ԿԱՊԱԿՑՎԱԾ ԿՈՂՄԵՐԻ ՀԵՏ	53
32. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ	56
33. ԿԱՊԻՏԱԼԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	58
34. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	59

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 2013Թ. ՂԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ և ՀԱՍՏԱՏՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Ղեկավարությունը պատասխանատու է «Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) 2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական վիճակը, գործունեության արդյունքները, դրամական միջոցների հոսքերը և սեփական կապիտալում փոփոխությունները ճշմարիտ ներկայացման, ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտներին (այսուհետ՝ ՖՀՄՍ) համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է՝

- հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճ ընտրության և կիրառման համար,
- հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ ներկայացվող տեղեկատվության համապատասխանության, վստահելիության, համեմատականության և հասկանալիության համար,
- լրացուցիչ բացահայտումների տրամադրման համար, երբ ՖՀՄՍ-ի հատուկ պահանջների համապատասխանությունը բավարար չէ, որպեսզի օգտագործողները պատկերացում կազմեն որոշակի գործարքների էության, Բանկի ֆինանսական վիճակի և ֆինանսական գործունեության այլ իրադարձությունների և պայմանների վերաբերյալ, և
- Բանկի գործունեության անընդհատության գնահատման համար:

Ղեկավարությունը նաև պատասխանատու է՝

- Բանկի ներքին վերահսկողության արդյունավետ համակարգի մշակման, ներդրման և պահպանման համար,
- համապատասխան հաշվապահական գրանցումներ վարելու համար, որոնք բավարար կլինեն Բանկի գործառնությունները արտացոլելու և ներկայացնելու համար, և ցանկացած ժամանակ ողջամիտ ճշգրտությամբ բացահայտելու Բանկի ֆինանսական վիճակը, ինչպես նաև հնարավորություն կընձեռեն Ղեկավարությանը հավաստիանալու, որ Բանկի ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ՖՀՄՍ-ներին,
- ՀՀ օրենսդրության և հաշվապահական ստանդարտների պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում վարելու համար,
- Բանկի ակտիվների անվտանգության ապահովման համար խելամիտ քայլերի իրականացման և խարդախությունների և նմանատիպ այլ երևույթների բացահայտման և կանխարգելման համար:

2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները հաստատված են հրապարակման համար 2014թ. ապրիլի 29-ին:

Ստորագրված է Բանկի ղեկավարության անունից՝

Արմեն Նալչյան
Գործադիր տնօրեն

Դավիթ Ազատյան
Գլխավոր հաշվապահ

29 ապրիլի 2014թ.

Երևան, Հայաստանի Հանրապետություն

ԱՆԿԱՆ ԱՌԻԴԵՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերին և Խորհրդին

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը 31 դեկտեմբերի 2013թ. դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Բանկի ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների համապատասխան սույն ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համակարգի ապահովման համար, որը ղեկավարությունը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է մեր կողմից իրականացված աուդիտի արդյունքում կարծիք արտահայտել ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն իրականացրեցինք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետևենք էթիկայի պահանջներին և աուդիտը պլանավորենք ու իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի դատողություններից, ներառյալ խարդախությամբ կամ սխալներով պայմանավորված՝ ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը՝ նպատակ ունենալով մշակել համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ կարծիք արտահայտել կազմակերպության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ: Աուդիտորական աշխատանքները նաև ներառում են ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների հիմնավորվածության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար են և համապատասխան՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիք

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2013թ դեկտեմբերի 31-ի դրությամբ «Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերության ֆինանսական վիճակը, և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների:

Այլ նշում

«Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերության 2012 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացվել է այլ աուդիտորական ընկերության կողմից, որն այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ ներկայացրել է չձևավորված աուդիտորական կարծիք 2013թ. ապրիլի 15-ին:

Սրբուհի Հակոբյան
Գործադիր տնօրեն

Արփինե Ասատյան
Աուդիտի ղեկավար

Երևան, Հայաստանի Հանրապետություն
Դեկտյբ Արմենիա ՓԲԸ



29 ապրիլի, 2014թ.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

(հազար դրամ)	Ծան.	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	14	17,866,741	14,988,251
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	27	-	20,030
Պահանջներ բանկերի և ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	15	2,521,027	5,244,878
Հակադարձ հետգնման պայմանագրեր	18	1,379,833	1,348,482
Հաճախորդներին տրված վարկեր	16	40,693,742	33,379,320
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	17	-	-
- Բանկի կողմից պահվող	-	2,521,046	864,758
- Հետգնման պայմանագրերով գրավադրված	18	4,624,479	4,037,132
Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում	19	245,192	262,160
Հիմնական միջոցներ	20	3,625,023	3,067,514
Ոչ նյութական ակտիվներ	21	88,497	100,674
Այլ ակտիվներ	22	597,760	576,529
ԸՆԴԱՄԵՆԸ՝ ԱԿՏԻՎՆԵՐ		74,163,340	63,889,728
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	27	6,740	8,012
ՀՀ Կենտրոնական բանկից և ՀՀ կառավարությունից ստացված վարկեր	23	2,522,985	3,559,005
Պարտավորություններ բանկերի և ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	24	6,574,534	1,575,613
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և ավանդներ	25	4,093,722	8,353,140
Հետգնման պայմանագրեր	18	4,504,784	4,255,724
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	26	44,391,776	36,240,698
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություններ	-	147,359	22,455
Հետաձգված հարկային պարտավորություններ	12	206,396	9,214
Այլ պարտավորություններ	28	651,495	411,093
ԸՆԴԱՄԵՆԸ՝ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		63,099,791	54,434,954
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Բաժնետիրական կապիտալ	29	2,333,338	2,333,338
Գլխավոր պահուստ	-	5,405,133	5,405,133
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ	-	1,071,594	179,520
Զբաղիված շահույթ	-	2,253,484	1,536,783
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		11,063,549	9,454,774
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		74,163,340	63,889,728

Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են 2014թ. Ապրիլի 29-ին Գործադիր տնօրենի և Գլխավոր հաշվապահի կողմից:

Արմեն Նալչյան
Գործադիր տնօրեն

Դավիթ Ազատյան
Գլխավոր հաշվապահ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 2013 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)	Ծան.	2013թ.	2012թ.
Տոկոսային եկամուտ	5	7,236,646	6,187,823
Տոկոսային ծախս	5	(3,501,022)	(2,894,434)
Զուտ տոկոսային եկամուտ նախքան տոկոսակիր ակտիվների գծով արժեզրկումից կորուստները		3,735,624	3,293,389
Տոկոսակիր ակտիվների գծով արժեզրկումից կորուստներ	9	(139,918)	(139,590)
Զուտ տոկոսային եկամուտ		3,595,706	3,153,799
Զուտ օգուտ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներից և պարտավորություններից		93,863	33,508
Զուտ եկամուտ արտարժույթային գործառնություններից	7	909,672	810,961
Կոմիսիոն և այլ վճարումների տեսքով եկամուտներ	6	1,558,460	1,200,134
Կոմիսիոն և այլ վճարումների տեսքով ծախսեր	6	(385,398)	(272,851)
Զուտ օգուտ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով		35,623	61,073
Այլ եկամուտ	8	181,825	146,680
Զուտ ոչ տոկոսային եկամուտ		2,394,045	1,979,505
Գործառնական եկամուտ		5,989,751	5,133,304
Անձնակազմի գծով ծախսեր	10	(2,972,299)	(2,343,750)
Հիմնական միջոցների մաշվածություն	20	(275,104)	(590,644)
Ոչ նյութական միջոցների ամորտիզացիա	21	(14,563)	(14,056)
Այլ ծախսեր	11	(1,738,671)	(1,649,508)
Գործառնական ծախսեր		(5,000,637)	(4,597,958)
Ասոցիացված կազմակերպություններում շահույթի/(վնասի) բաժին	19	(18,531)	(37,481)
Շահույթը նախքան շահութահարկով հարկումը		970,583	497,865
Շահութահարկի գծով ծախս	12	(253,882)	(152,380)
Տարվա շահույթ		716,701	345,485
Այլ համապարփակ եկամուտ			
Հետագայում շահույթում կամ վնասում վերադասակարգման ենթակա հոդվածներ			
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի գուտ		923,498	192,364
փոփոխություն, հարկերից հետո			
Շահույթին կամ վնասին փոխանցված՝ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի գուտ փոփոխություն, հարկերից հետո		(32,987)	(95,611)
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ասոցիացված կազմակերպության այլ համապարփակ արդյունքում ձևակերպված արդյունքի ներդրողի բաժնեմաս, ադ թվում՝			
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի գուտ		1,563	967
փոփոխություն, հարկերից հետո			
Շահույթին կամ վնասին փոխանցված՝ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի գուտ փոփոխություն, հարկերից հետո		-	(326)
Հաշվետու տարվա այլ համապարփակ եկամուտ, նախքան շահութահարկով հարկումը		892,074	97,394
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ		1,608,775	442,879
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ			
Բազային և նուսրացված	13	0.77	0.37
Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են 2014թ. ապրիլի 29-ին Գործադիր տնօրենի և Գլխավոր հաշվապահի կողմից:			

Արմեն Նալչյան
Գործադիր տնօրեն

Գլխավոր հաշվապահ

Մեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 2013 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)	Ծան.	Բաժնետիրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ	Զբաղիված Շահույթ	Ընդամենը
Մնացորդը 2012թ. հունվարի 1-ի դրությամբ		2,333,338	5,405,133	82,126	1,401,298	9,221,895
Ընդամենը համապարփակ եկամուտ	-	-	-	-	-	-
Տարվա շահույթ	-	-	-	345,485	345,485	345,485
Այլ համապարփակ եկամուտ շահութահարկից հետո	-	-	-	-	-	-
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի գուտ փոփոխություն, հարկերից հետո	-	-	-	192,364	-	192,364
Շահույթին կամ վնասին փոխանցված՝ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի գուտ փոփոխություն, հարկերից հետո	-	-	-	(95,611)	-	(95,611)
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող աստղիացված կազմակերպության այլ համապարփակ արդյունքում ճանաչված արդյունքի ներդրողի բաժնեմաս, ադ թվում	-	-	-	-	-	-
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի գուտ փոփոխություն, հարկերից հետո	-	-	-	967	-	967
Շահույթին կամ վնասին փոխանցված՝ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի գուտ փոփոխություն, հարկերից հետո	-	-	-	(326)	-	(326)
Ընդամենը այլ համապարփակ եկամուտ	-	-	-	97,394	-	97,394
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ	-	-	-	97,394	345,485	442,879
Հայտարարված շահաբաժիններ	-	-	-	(210,000)	(210,000)	(210,000)
Մնացորդը 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2,333,338	5,405,133	179,520	1,536,783	9,454,774

(հազար դրամ)	Ծան.	Բաժնետիրական կապիտալ	Գլխավոր սպահուստ	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման սպահուստ	Զբաղյալ Շահույթ	Ընդամենը
Հաշվետու տարվա շահույթ	-	-	-	-	716,701	716,701
Այլ համապարփակ եկամուտ շահութահարկից հետո	-	-	-	-	-	-
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի գուտ փոփոխություն, հարկերից հետո	-	-	-	923,498	-	923,498
Շահույթին կամ վնասին փոխանցված՝ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի գուտ փոփոխություն, հարկերից հետո	-	-	-	(32,987)	-	(32,987)
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ասոցիացված կազմակերպության այլ համապարփակ արդյունքում ճանաչված արդյունքի ներդրողի բաժնեմաս, ադ թվում	-	-	-	1,563	-	1,563
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի գուտ փոփոխություն, հարկերից հետո	-	-	-	892,074	-	892,074
Ընդամենը այլ համապարփակ եկամուտ	-	-	-	892,074	716,701	1,608,775
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ	-	-	-	892,074	716,701	1,608,775
Մնացորդը 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,333,338	5,405,133	1,071,594	2,253,484	11,063,549	11,063,549

Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են 2014թ. ապրիլի 29-ին Գործադիր տնօրենի և Գլխավոր հաշվապահի կողմից:

Արմեն Նալչյան
Գործադիր տնօրեն

Դավիթ Ազատյան
Գլխավոր հաշվապահ

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 2013 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)	Ծան.	2013թ.	2012թ.
ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Տարվա շահույթ		716,701	345,485
Շահութահարկի գծով ծախս		253,882	152,380
Ոչ դրամական հոդվածների ճշգրտումներ՝			
Տոկոսակիր ակտիվների արժեզրկումից կորուստ		139,918	139,590
Մաշվածություն և ամորտիզացիա		289,667	604,700
Հիմնական միջոցների օտարումից օգուտ		(9,785)	(4,367)
Եկամուտ դրամաշնորհներից		(507)	(507)
Արտարժույթի փոխանակման գործարքներից զուտ վնասներ		131,981	56,267
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներից զուտ օգուտ		(35,623)	(22,242)
Ասոցիացված կազմակերպություններում վնասի բաժին		18,531	37,481
Այլ եկամուտ		5,408	4,395
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից, նախքան գործառնական ակտիվներում կամ պարտավորություններում փոփոխությունները		1,510,173	1,313,182
Գործառնական ակտիվներում կամ պարտավորություններում փոփոխություններ			
(Ավելացում)/նվազում գործառնական ակտիվներում			
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ		2,713,116	(486,198)
Հակադարձ հետգնման պայմանագրեր		(31,351)	(1,348,842)
Հաճախորդներին տրված վարկեր		(7,380,539)	(3,511,354)
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		20,030	(20,030)
Այլ ակտիվներ		(33,178)	116,005
Ավելացում/(նվազում) գործառնական պարտավորություններում			
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ		5,079,750	(1,654,247)
Հետգնման պայմանագրեր		249,060	751,852
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ		7,894,502	3,744,308
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ		(1,272)	(2,281)
Այլ պարտավորություններ		233,832	(50,729)
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից, մինչև շահութահարկը		10,254,123	(1,148,334)
Վճարված շահութահարկ		(154,424)	(291,276)
Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր		10,099,699	(1,439,610)
ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների ձեռքբերում		(2,280,209)	(4,188,527)
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրացումից ստացված միջոցներ		1,155,323	2,426,393
Հիմնական միջոցների ձեռքբերումներ		(841,917)	(471,386)
Հիմնական միջոցների վաճառքից ստացված միջոցներ		19,359	4,985
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(2,656)	(6,197)
Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում		-	(25,000)
Ներդրումային գործունեությունից զուտ դրամական հոսքեր		(1,950,100)	(2,259,732)

(հազար դրամ)	Ծան.	2013թ.	2012թ.
ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՄՔԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
ՀՀ Կենտրոնական բանկից և ՀՀ կառավարությունից ստացված վարկերի մարում		(1,036,018)	(82,451)
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերի մարում		(4,328,859)	(662,019)
Վճարված շահաբաժիններ		(6,582)	(203,227)
Ֆինանսական գործունեությունից զուտ դրամական հոսքեր		(5,371,459)	(947,697)
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը արտարժույթով պահվող դրամական միջոցների մնացորդների վրա		100,350	302,403
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐԻ ՋՈՒՏ ԱՃ/ (ՆՎԱՋՈՒՄ)		2,878,490	(4,344,636)
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐ	14	14,988,251	19,332,887
ՏԱՐԵՄԱԶՔԻ ԴՈՒԹՅԱՄԲ			
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐ	14	17,866,741	14,988,251
ՏԱՐԵՎԵՐՋԻ ԴՈՒԹՅԱՄԲ			
Լրացուցիչ տեղեկություններ			
Ստացված տոկոսներ		7,255,832	6,198,605
Վճարված տոկոսներ		(3,527,539)	(2,899,032)

Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են 2014թ. ապրիլի 29-ին Գործադիր տնօրենի և Գլխավոր հաշվապահի կողմից:

Արմեն Նալչյան
Գործադիր տնօրեն

Դավիթ Ազատյան
Գլխավոր հաշվապահ



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2013թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

1. Բանկը

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն (Այսուհետ՝ «Բանկ») հիմնվել է 1991 թվականին Հայաստանի Հանրապետությունում ԽՍՀՄ Բնակարկային հայկական Հանրապետական բանկի (1991-1993թ-ի «Հայպետբանկ» ՓԲԸ) հիման վրա և 1995թ.-ին վերակազմավորվել է որպես բաց բաժնետիրական ընկերություն: Բանկի գործունեությունը կարգավորվում է ՀՀ օրենսդրությամբ հիման վրա և այն գործում է ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից տրամադրված թիվ 1 արտոնագրի հիման վրա:

Բանկն ընդունում է ավանդներ և տրամադրում է վարկեր, ինչպես նաև մատուցում է այլ բանկային ծառայություններ իրավաբանական և ֆիզիկական անձանց:

Բանկի գլխամասային գրասենյակը և թվով 19 մասնաճյուղերը գտնվում են Երևանում, 20 մասնաճյուղեր՝ ՀՀ տարբեր մարզերում և 1 մասնաճյուղ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում: Բանկի իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, Ամիրյան 23/1:

2. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն

Համապատասխանության մասին հայտարարություն: Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են այն ենթադրության հիման վրա, որ Բանկը գործում է անընդհատության հիմունքով և կշարունակի իր գործունեությունը տեսանելի ապագայում:

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են պատմական արժեքի հիման վրա, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք չափվում են իրական արժեքով յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի վերջի դրությամբ, ինչպես ներկայացված է ստորև հաշվապահական հաշվառման քաղաքականությունում:

Պատմական արժեքը սովորաբար հիմնված է ապրանքների և ծառայությունների դիմաց տրված հատուցման իրական արժեքի վրա:

Իրական արժեքն այն գումարն է, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքի արդյունքում կստացվեր ակտիվը վաճառելիս, կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելիս՝ անկախ նրանից, թե արդյոք այդ գինն ուղղակիորեն դիտարկելի է կամ գնահատվել է՝ օգտագործելով այլ գնահատման մեթոդներ: Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը գնահատելիս Բանկը հաշվի է առնում ակտիվի կամ պարտավորության այնպիսի բնութագրերը, որոնք շուկայի մասնակիցները հաշվի կառնեն չափման ամսաթվի դրությամբ ակտիվի կամ պարտավորության գինը որոշելիս: Այս ֆինանսական հաշվետվություններում չափման և/կամ այլ բացահայտումների նպատակով իրական արժեքը որոշվում է նման սկզբունքներով:

Ի լրումն՝ ֆինանսական հաշվետվությունների նպատակով իրական արժեքի չափումները դասակարգվում են մակարդակ 1, 2 և 3-ի՝ ելնելով իրական արժեքի չափումներում օգտագործված սկզբնական տվյալների դիտարկելիության աստիճանից, ինչպես նաև այդ սկզբնական տվյալների՝ իրական արժեքով չափման ամբողջական պատկերի վրա ազդեցության էականության աստիճանից: Այդ մակարդակները կարելի է նկարագրել հետևյալ կերպ՝

- Մակարդակ 1-ի դեպքում մուտքային տվյալներ են հանդիսանում ակտիվ շուկայում համանման ակտիվների կամ պարտավորությունների նշված գները (չճշգրտված), որոնք Բանկին հասանելի են չափման ամսաթվի դրությամբ:

- Մակարդակ 2-ի մուտքային տվյալները իրենցից ներկայացնում են մակարդակ 1-ում նշված գներից տարբերվող մուտքային տվյալները, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են ակտիվների կամ պարտավորությունների գծով:
- Մակարդակ 3-ի մուտքային տվյալներն իրենցից ներկայացնում են ակտիվների կամ պարտավորությունների գծով ոչ դիտարկելի մուտքային տվյալներ:

Բանկն ընդհանուր առմամբ ներկայացնում է իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունն ըստ իրացվելիության: Ստացվելիք և վճարվելիք գումարներին վերաբերող վերլուծությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվության օրվանից հետո 12 ամիսների ընթացքում (ընթացիկ) և ֆինանսական վիճակի մասին հաշվետվության օրվանից ավելի քան 12 ամիսների ընթացքում (ոչ ընթացիկ) ներկայացված են Ծանոթագրություն 34-ում:

Գործառնական արժույթ: Ֆինանսական հաշվետվություններում ներառված միավորները չափվում են այն տնտեսական միջավայրում գործող արժույթով, որում Բանկն իրականացնում է իր գործունեությունը («Գործառնական արժույթ»): Բանկի գործառնական արժույթը ՀՀ դրամն է (այսուհետև՝ դրամ): Դրամը նաև սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթն է: Բոլոր արժեքները կլորացված են հազար դրամի չափով, եթե այլ բան նշված չէ:

Հաշվանցում: Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով գուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հաշվարկը գուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն: Եկամուտները և ծախսերը չեն հաշվանցվում շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե դա չի պահանջվում կամ թույլատրվում որևէ հաշվապահական հաշվառման ստանդարտով կամ մեկնաբանությամբ և հստակ բացահայտված չէ Բանկի հաշվապահական քաղաքականության մեջ:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են ստորև:

Տոկոսային եկամուտներ և ծախսեր: Ֆինանսական ակտիվներից տոկոսային եկամուտները ճանաչվում են, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Բանկ և եկամտի գումարը կարող է արժանահավատորեն չափվել: Տոկոսային եկամուտները և ծախսերը ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության (կամ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների խմբի) ամորտիզացված արժեքի հաշվարկման և համապատասխան ժամանակահատվածի կտրվածքով տոկոսային ծախսի և տոկոսային եկամտի բաշխման մեթոդն է:

Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի կամ, համապատասխան դեպքերում, ավելի կարճ ժամանակահատվածի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները զեղչում է ճշգրիտ մինչև ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության գուտ հաշվեկշռային արժեքը:

Այն դեպքերում, երբ տեղի է ունենում ֆինանսական ակտիվի կամ նմանատիպ ակտիվների խմբի արժեքի նվազում (մասնակի նվազում) արժեզրկումից կորստի հետևանքով, տոկոսային եկամուտն այսուհետև ճանաչվում է՝ կիրառելով այն տոկոսադրույքը, որը կիրառվել էր արժեզրկումից կորուստը չափելու նպատակով ապագա դրամական հոսքերը զեղչելիս:

Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրերից եկամուտ. վերը նշված գործիքների վաճառքից օգուտը/վնասը ճանաչվում է որպես տոկոսային եկամուտ կամ ծախս՝ շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում՝ հիմնվելով հետևյալ երկու մեծությունների տարբերության վրա՝ հետգնման արժեքի, որը կուտակվել է հաշվետու ամսաթվի դրությամբ՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը և վաճառքի գնի, երբ այդ գործիքները վաճառվում են երրորդ անձանց: Երբ

հակադարձ հետգնումը/հետգնումը տեղի է ունենում իր սկզբնական պայմաններով, վաճառքի և պայմանագրի սկզբնական փուլում բանակցված հետգնման գնի միջև արդյունավետ օգուտը/տոկոսը ճանաչվում է արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով:

Ծառայության վճարներ և միջնորդավճարներ: Վարկի տրամադրման վճարները հետաձգվում են հարակից ուղղակի ծախսումների հետ միասին և ճանաչվում են որպես վարկի արդյունավետ տոկոսադրույքի ճշգրտում: Երբ հավանական է, որ վարկ տրամադրելու պարտավորությունը կհանգեցնի որոշակի պայմաններով վարկային համաձայնության, վարկային պարտավորության ստանձնման վճարները հետաձգվում են հարակից ուղղակի ծախսումների հետ միասին և հետագայում ճանաչվում որպես տրամադրված վարկի արդյունավետ տոկոսադրույքի ճշգրտում: Երբ քիչ հավանական է, որ վարկ տրամադրելու պարտավորությունը կհանգեցնի որոշակի վարկային համաձայնագրի, վարկ տրամադրելու պարտավորության ստանձնման վճարները ճանաչվում են շահույթում կամ վնասում վարկի տրամադրման պարտավորության մնացած ժամանակահատվածի ընթացքում: Այն դեպքում, երբ վարկ տրամադրելու պարտավորությունն ավարտվում է առանց վարկի տրամադրման, ապա վարկ տրամադրելու պարտավորության վճարները ճանաչվում են ֆինանսական արդյունքում՝ պարտավորության ավարտի պահին: Վարկի սպասարկման վճարները եկամտագրվում են, երբ համապատասխան ծառայությունները մատուցվում են: Բոլոր այլ միջնորդավճարները ճանաչվում են այն ժամանակ, երբ ծառայությունները մատուցվում են:

Ֆինանսական գործիքներ

Բանկը ճանաչում է ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ այն դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կանոնավոր կերպով գնումները և վաճառքը հաշվառվում են վերջնահաշվարկի ամսաթվի դրությամբ: Ֆինանսական գործիքների կանոնավոր գնումները կամ վաճառքն իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվների այն գնումները կամ վաճառքը, որոնք պահանջում են ակտիվների մատակարարում շուկայում ընդունված պայմաններով սահմանված կարգով:

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը: Գործարքի գծով ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը, անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվներ: Ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների՝ ա) շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ, բ) մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ, գ) տրամադրված վարկեր և դեբիտորական պարտքեր, դ) վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ: Դասակարգումը կախված է ֆինանսական ակտիվների ձեռքբերման բնույթից և նպատակից և որոշվում է սկզբնական ճանաչման պահին:

ա) Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ: Ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվը պահվում է վաճառքի համար կամ նախատեսված է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ակտիվ:

Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես վաճառքի համար պահվող, եթե՝

- այն ձեռք է բերվել հիմնականում տեսանելի ապագայում վաճառքի նպատակով, կամ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2013 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

- սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Բանկի կողմից համատեղ կառավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ
- այն հանդիսանում է ածանցյալ գործիք, որը նախատեսված չէ կամ չի օգտագործվում որպես հեղջավորման գործիք:

Ֆինանսական ակտիվը, բացի վաճառքի համար պահվող ֆինանսական ակտիվներից, կարող է ճանաչման պահին դասակարգվել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

- եթե նման դասակարգումը բացառում, կամ զգալիորեն կրճատում է չափման կամ ճանաչման անհամապատասխանությունը, որն այլապես կառաջանար, կամ՝
- ֆինանսական ակտիվը կազմում է ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների կամ այդ երկուսի խմբի մի մաս, որը կառավարվում է, և դրա կատարողականը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, Բանկի փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային ռազմավարության համաձայն, և խմբավորման վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է ներքին կարգով՝ այդ հիմունքներով, կամ
- այն կազմում է պայմանագրի մի մաս, որը պարունակում է ներկառուցված ածանցյալ գործիքներից մեկը կամ մի քանիսը և ՀՀՄՍ 39. *Ֆինանսական գործիքներ: Ընկերությունը և չափումը* թույլ է տալիս ողջ պայմանագիրը (ակտիվները կամ պարտավորությունները) դասակարգել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները ներկայացվում են իրական արժեքով՝ ներառյալ ողջ օգուտը կամ վնասները, որոնք առաջանում են եկամուտներում կամ ծախսերում ճանաչվող վերաչափման արդյունքում: Շահույթում կամ վնասում ճանաչվող զուտ օգուտը կամ վնասները ներառում են ֆինանսական ակտիվի գծով վաստակած բոլոր շահաբաժինները և տոկոսները և ներառվում են «այլ օգուտներ և վնասներ» և «տոկոսային եկամուտ» տողում, շահույթի, վնասի և այլ համապարփակ եկամուտների մասին հաշվետվությունում:

բ) Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ: Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնց գծով Բանկն ունի մինչև մարման ժամկետը պահելու հաստատուն մտադրություն և կարողություն: Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը՝ հանած արժեզրկումը:

Եթե Բանկը որոշեր վաճառել կամ վերադասակարգել մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների զգալի մասը նախքան դրանց մարման ժամկետը (բացառությամբ հատուկ հանգամանքների առկայության), ողջ դասը կորակազրկվեր և պետք է դասակարգվեր որպես վաճառքի համար մատչելի: Ավելին, Բանկը ընթացիկ տարում և դրան հաջորդող երկու տարիների ընթացքում հնարավորություն չէր ունենա որևէ ֆինանսական ակտիվ դասակարգել որպես մինչև մարման ժամկետը պահվող ակտիվ:

գ) վարկեր և դեբիտորական պարտքեր: Առևտրային դեբիտորական պարտքերը, վարկերը և այլ դեբիտորական պարտքերը, որոնք ունեն ֆիքսված կամ որոշելի վճարումներ, որոնք գնանշված չեն ակտիվ շուկայում (ներառյալ բանկերից ստացվելիք միջոցներ, հաճախորդներին տրված վարկեր և այլ ֆինանսական ակտիվներ) դասակարգվում են որպես «վարկեր և դեբիտորական պարտքեր»: Վարկերը և դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը՝ հանած արժեզրկումը: Տոկոսային եկամուտը ճանաչվում է՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը, բացառությամբ կարճաժամկետ դեբիտորական պարտքերի, որոնց դեպքում տոկոսի ճանաչումը էական ազդեցություն չէր ունենա:

դ) Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները ոչ ածանցյալ ֆինանսական գործիքներ են, որոնք դասակարգվում են որպես վաճառքի համար մատչելի, կամ չեն դասակարգվում որպես (ա) իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով ճանաչվող ֆինանսական ակտիվներ, (բ) մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ կամ

(գ) վարկեր և դեբիտորական պարտքեր:

Վաճառքի համար մատչելի՝ կանոնադրական կապիտալում ներդրումները, որոնք չունեն գնանշված շուկայական արժեք և որոնց իրական արժեքը չի կարող արժանահավատորեն չափվել, չափվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի վերջին գնահատվում են արժեզրկման հայտանիշների առկայությունը որոշելու նպատակով: Ֆինանսական ակտիվները համարվում են արժեզրկված, եթե առկա է օբյեկտիվ վկայություն այն մասին, որ ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի դեպքեր կարող են ազդեցություն ունենալ ներդրման գծով գնահատված ապագա դրամական հոսքերի վրա:

Որպես վաճառքի համար մատչելի դասակարգված՝ գնանշված կամ չգնանշված կապիտալի ներդրումներում արժեքի իրական արժեքի զգալի կամ տևական անկումն ինքնարժեքից համարվում է արժեզրկման օբյեկտիվ վկայություն: Բոլոր այլ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման օբյեկտիվ վկայություն կարող են համարվել հետևյալ հայտանիշները

- թողարկողի կամ կոնտրագենտի զգալի ֆինանսական դժվարությունները, կամ
- պայմանագրի խախտումը, մասնավորապես տոկոսների կամ մայր գումարի վճարման ուշացումը կամ չկատարումը, կամ
- տոկոսների կամ մայր գումարի վճարման ուշացումը կամ չկատարումը, կամ
- փոխառուի կողմից սնանկության կամ ֆինանսական վերակազմակերպման գործընթացի նախաձեռնումը, կամ
- ֆինանսական դժվարությունների արդյունքում տվյալ ֆինանսական ակտիվի գծով ակտիվ շուկայի անհետացումը:

Ֆինանսական ակտիվների որոշ կատեգորիաների համար, ինչպիսիք են՝ վարկերը և դեբիտորական պարտքերը, ակտիվները, որոնք ըստ գնահատականների առանձին արժեզրկված չեն, ի լրումն գնահատվում են նաև խմբային արժեզրկման տեսանկյունից: Վարկային պորտֆելի արժեզրկման օբյեկտիվ վկայություն կարող է համարվել Բանկի նախկին փորձը վճարումների հավաքագրման գծով, հետաձգված վճարումների թվի աճը պորտֆելում ինչպես նաև ազգային կամ տեղական մակարդակում դիտարկելի փոփոխությունները, որոնք կարող են հանգեցնել դեբիտորական պարտքի անհավաքագրելիության:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման գծով ծախսի գումարն իրենից ներկայացնում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և գնահատված ապագա դրամական հոսքերի տարբերությունը՝ զեղչված ֆինանսական ակտիվի համար սկզբնապես սահմանված տոկոսադրույքով:

Ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է արժեզրկումից կորստի չափով անմիջականորեն բոլոր ակտիվների գծով, բացառությամբ վարկերի և դեբիտորական պարտքերի, որոնց դեպքում հաշվեկշռային արժեքը նվազեցվում է պահուստային հաշվի միջոցով: Երբ ակտիվը կամ դեբիտորական պարտքը համարվում է անհուսալի, այն դուրս է գրվում պահուստային հաշվի միջոցով: Հետագայում դուրս գրված գումարների վերականգնումը կատարվում է դրանք պահուստային հաշվին կրեդիտագրելու միջոցով: Պահուստային հաշվի հաշվեկշռային արժեքի փոփոխությունները ճանաչվում են եկամուտներում կամ ծախսերում:

Երբ վաճառքի համար պահվող ֆինանսական ակտիվը համարվում է արժեզրկված, այլ համապարփակ եկամուտում ճանաչված կուտակային օգուտները կամ վնասները վերադասակարգվում են որպես տվյալ ժամանակաշրջանի շահույթ կամ վնաս:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների համար այն դեպքում, եթե հաջորդող ժամանակաշրջանում արժեզրկումից կորուստի գումարը նվազում է, և նվազեցումը կարող է օբյեկտիվորեն վերագրվել արժեզրկման ճանաչումից հետո տեղի ունեցող դեպքերի, նախկինում ճանաչված արժեզրկումից կորուստը հակադարձվում է շահույթի կամ վնասի միջոցով այնքանով, որքանով արժեզրկման ամսաթվի դրությամբ ներդրման հաշվեկշռային արժեքը չի գերազանցում ամորտիզացված արժեքն այն դեպքում, եթե այդ արժեզրկումը ճանաչված չլիներ:

Ինչ վերաբերում է վաճառքի համար մատչելի կանոնադրական արժեթղթերին, ապա նախկինում շահույթում կամ վնասում հաշվառված արժեզրկումից վնասները չեն հակադարձվում շահույթի կամ վնասի միջոցով: Իրական արժեքի ցանկացած փոփոխություն, որը տեղի է ունենում արժեզրկումից կորուստի ճանաչումից հետո, ճանաչվում է այլ համապարփակ եկամուտում և կուտակվում է ներդրումների վերագնահատման պահուստի տակ:

Վարկերի և կանխավճարների դուրսգրում: Վարկերի և կանխավճարների արժեզրկումից կորուստները վերագրվում են պահուստներին, երբ համարվում են անհավաքագրելի: Վարկերը և կանխավճարները դուրս են գրվում Բանկի ղեկավարության կողմից գումարների հավաքագրման ուղղությամբ իրականացված բոլոր հնարավորություններն օգտագործելուց և գրավները վաճառելուց հետո: Դուրս գրված գումարների հետագա հավաքագրումը համապարփակ եկամուտների մասին հաշվետվությունում արտացոլվում է որպես ֆինանսական ակտիվների արժեզրկման պահուստներին կատարած մասհանումների վերադարձ հավաքագրման ժամանակաշրջանում:

Ֆինանսական ակտիվների ապաճանաչում: Բանկն ապաճանաչում է ֆինանսական ակտիվները, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ երրորդ կողմին է փոխանցվում ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական միջոցների նկատմամբ իրավունքը: Եթե Բանկը չի փոխանցում և չի պահպանում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա Բանկը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև դրա հետ կապված պարտավորությունը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ: Եթե Բանկը պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները, ապա Բանկը պետք է շարունակի ճանաչել ֆինանսական ակտիվը:

Ֆինանսական ակտիվը ամբողջությամբ ապաճանաչելիս հաշվեկշռային արժեքի և ստացված հատուցման այլ համապարփակ եկամուտում նախկինում ճանաչված կուտակված որևէ օգուտի կամ վնասի գումարի տարբերությունը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում:

Եթե Բանկի շարունակվող ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի միայն մի մասով է (օրինակ՝ երբ Բանկը պահպանում է փոխանցված ակտիվի մի մասը հետգնելու օպցիոնը), ապա Բանկը ֆինանսական ակտիվի նախկին հաշվեկշռային արժեքը բաշխում է այն մասի, որն այն շարունակում է ճանաչել շարունակվող ներգրավվածության ներքո, և այն մասի միջև, որն այն այլևս չի ճանաչում՝ փոխանցման ամսաթվի դրությամբ այդ մասերի հարաբերական իրական արժեքների հիման վրա: Այլևս չճանաչվող մասի վրա բաշխված հաշվեկշռային արժեքի և այլևս չճանաչվող մասի դիմաց ստացված հատուցման և դրա վրա բաշխված այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված կուտակված որևէ օգուտի կամ վնասի գումարների տարբերությունը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում: Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված կուտակված օգուտը կամ վնասը բաշխվում է այն մասի, որը շարունակվում է ճանաչվել, և այլևս չճանաչվող մասի միջև՝ այդ մասերի հարաբերական իրական արժեքների հիման վրա:

Ֆինանսական պարտավորություններ: Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող կամ որպես այլ ֆինանսական պարտավորություններ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2013 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող այն դեպքում երբ ֆինանսական պարտավորությունը պահվում է վաճառքի համար կամ դասակարգվում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ֆինանսական պարտավորությունը դասակարգվում է որպես վաճառքի համար պահվող, եթե՝

- այն ձեռք է բերվել հիմնականում կարճաժամկետ կտրվածքով հետգնման նպատակով, կամ
- սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Բանկի կողմից համատեղ ղեկավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մասս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ
- այն հանդիսանում է ածանցյալ գործիք, որը չի նախատեսված կամ օգտագործվում որպես հեղջավորման գործիք:

Ֆինանսական պարտավորությունը, բացի վաճառքի համար պահվող ֆինանսական պարտավորություններից, կարող է ճանաչման պահին դասակարգվել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե՝

- նման դասակարգումը բացառում, կամ զգալիորեն կրճատում է չափման կամ ճանաչման անհամապատասխանությունը, որն այլապես կառաջանար, կամ՝
- ֆինանսական պարտավորությունը կազմում է ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների կամ այդ երկուսի խմբի մի մաս, որը կառավարվում է, և դրա կատարողականը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, բանկի փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային ռազմավարության համաձայն և խմբավորման վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է ներքին կարգով՝ այդ հիմունքներով, կամ
- այն կազմում է պայմանագրի մի մաս, որը պարունակում է ներկառուցված ածանցյալ գործիքներից մեկը կամ մի քանիսի և ՀՀՄՍ 39. Ֆինանսական գործիքներ: Ճանաչումը և չափումը, թույլ է տալիս ողջ պայմանագիրը (ակտիվները կամ պարտավորությունները) դասակարգել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Արժեթղթերի հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր և արժեթղթերի փոխառության գործարքներ. սովորական գործունեության ընթացքում Բանկը կնքում է ֆինանսական ակտիվների վաճառքի և հետգնման (ռեպո), ինչպես նաև ֆինանսական ակտիվների գնման և հետվաճառքի (հակադարձ ռեպո) պայմանագրեր: Ռեպո և հակադարձ ռեպո համաձայնագրերը օգտագործվում են Բանկի կողմից որպես գանձապետական կառավարման տարր:

Ռեպո համաձայնագիրը իրենից ներկայացնում է վճարի կամ այլ հատուցման դիմաց ֆինանսական ակտիվի փոխանցում մեկ այլ կողմի և համապատասխան պարտավորություն՝ հետ գնելու այդ ֆինանսական ակտիվն ապագայում փոխանակման համար օգտագործված կանխիկ կամ այլ հատուցման գումարը գումարած տոկսը: Այս պայմանագրերը հաշվառվում են որպես ֆինանսական գործարքներ:

Բանկը կնքում է արժեթղթերի հետգնման պայմանագրեր և արժեթղթերի փոխառության պայմանագրեր, ըստ որոնց այն ստանում կամ փոխանցում է գրավի առարկան՝ շուկայում ընդունված պրակտիկայի համաձայն: Հետգնման գործարքների ստանդարտ պայմաններով Հայաստանի Հանրապետությունում, գրավառուն իրավունք ունի վաճառել կամ վերագրավադրել գրավի առարկան, պայմանով որ դրա դիմաց կվերադարձնի համարժեք արժեթղթեր՝ գործարքի փակման ամսաթվին:

Արժեթղթերի փոխանցումը կոնտրագենտներին միայն արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, եթե դրա հետ միասին փոխացվում են նաև սեփականության հետ կապված ռիսկերը և օգուտները:

Այլ ֆինանսական պարտավորություններ: Այլ ֆինանսական պարտավորությունները, ներառյալ այլ փոխառու միջոցները, ենթակա (սուբորդինացված) պարտավորությունները և այլ ֆինանսական պարտավորությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով, առանց գործարքի ծախսերի:

Այլ ֆինանսական պարտավորությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ տոկոսային ծախսը ճանաչելով արդյունավետության հիմունքով:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդն իրենից ներկայացնում է որոշակի ժամանակահատվածում ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի հաշվարկի մեթոդ: Արդյունավետ տոկոսադրույքն այն տոկոսադրույքն է, որը ճշգրտորեն գեղջում է ապագա գնահատված կանխիկ վճարումները (ներառյալ բոլոր տեսակի միջնորդավճարները և ստացված կամ վճարված գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, գործարքի հետ կապված ծախսերը և այլ պարգևավճարներ կամ գեղջեր) ֆինանսական պարտավորության ակնկալվող գործողության ժամանակահատվածի ողջ ընթացքում, կամ (ըստ անհրաժեշտության) ավելի կարճ ժամանակահատվածում՝ հասցնելով սկզբնական ճանաչման պահին առկա զուտ հաշվեկշռային արժեքին:

Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչումը: Բանկն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունները միայն այն ժամանակ, երբ Բանկի պարտավորությունները մարվում են, չեղյալ են համարվում կամ ուժը կորցնում են: Երբ միևնույն փոխատուի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է այլ ֆինանսական պարտավորությամբ, որի պայմաններն էականորեն տարբերվում են նախորդից, կամ եթե տեղի է ունեցել առկա պարտավորության պայմանների էական փոփոխություն, ապա նմանատիպ փոխանակումը կամ փոփոխությունը ճանաչվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված և վճարվելիք հատուցման տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքում:

Ֆինանսական երաշխավորության պայմանագրեր. Ֆինանսական երաշխավորության պայմանագիրը մի այնպիսի պայմանագիր է, որի արդյունքում այդ պայմանագիրը տրամադրողը պարտավորվում է կատարել որոշակի վճարումներ, պայմանագիրը ստացողին փոխհատուցելով այն կորուստները, որը վերջինս կրում է որոշակի պարտապանի կողմից պարտքային գործիքի համաձայն սահմանված ամսաթվին վճարումներ չկատարելու արդյունքում:

Բանկի կողմից տրամադրված ֆինանսական երաշխավորության պայմանագրերը սկզբնապես չափվում են դրանց իրական արժեքով, և եթե չեն դասակարգվում որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, հետագայում չափվում են հետևյալ երկու մեծություններից առավելագույնով:

- ՀՀՄՍ 37. *Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ* ստանդարտի համաձայն որոշված պայմանագրով նախատեսված պարտավորության գումարի, և
- Ի սկզբանե ճանաչված գումարի՝ նվազեցված, ըստ անհրաժեշտության, հասույթի ճանաչման քաղաքականության համաձայն ճանաչված՝ կուտակված արժեզրկման չափով

Ածանցյալ ֆինանսական գործիքներ: Իր բնականոն գործունեության ընթացքում Բանկն արտարժույթային ռիսկը կառավարելու նպատակով կնքում է գործարքներ տարբեր ածանցյալ ֆինանսական գործիքներով, այդ թվում՝ արտարժույթի սվոփեր և արտարժույթի փոխանակման պայմանագրեր: Նման ֆինանսական գործիքները դասակարգվում են որպես առևտրային նպատակով պահվող և դրանց հաշվառումն իրականացվում է ֆինանսական գործիքների սկզբնական ճանաչման քաղաքականությունների համաձայն, այնուհետև դրանք չափվում են իրական արժեքով: Կախված գործիքի շուկայական կամ պայմանագրային արժեքից, ինչպես նաև մի շարք այլ գործոններից, իրական արժեքը որոշվում է շուկայական գնանշումներով կամ գնային մոդելներով: Ածանցյալ ֆինանսական գործիքները համարվում են ակտիվներ, եթե դրանց իրական արժեքը դրական է և պարտավորություններ, եթե դրանց արժեքը բացասական է: Գործարքների շահույթը և վնասը վերոնշյալ գործիքների դեպքում գրանցվում են համապարփակ եկամտի մասին հաշվետվություններում՝ որպես իրական արժեքով շահույթի և վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների/պարտավորությունների գործարքներից առաջացած զուտ օգուտ կամ վնաս: Ածանցյալ գործիքների իրական արժեքի փոփոխությունները ներառվում են օգուտում կամ վնասում:

Բանկը որպես վարձակալ: Գործառնական վարձակալության վճարները ծախսագրվում են գծային մեթոդով վարձակալության ժամկետի ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ որևէ այլ պարբերական հիմունք ավելի ճշգրիտ է ներկայացնում վարձակալությունից տնտեսական օգուտների ստացման ժամանակային բաշխումը: Գործառնական վարձակալության պայմանագրով նախատեսված պայմանական վարձավճարները ծախսագրվում են այն ժամանակաշրջանում, երբ դրանք առաջանում են:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ: Դրամական միջոցներն և դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները, թղթակցային հաշիվների մնացորդները, որոնք գերծ են սահմանափակումներից և ժամկետային ավանդները, որոնց մարման նախնական ժամկետը չի գերազանցում 90 օրը, որոնք կարճ ժամկետում կարող են փոխարկվել կանխիկի և որոնք ծանրաբեռնված չեն պայմանագրային պարտավորություններով:

Թանկարժեք մետաղներ: Ոսկին և այլ թանկարժեք մետաղները հաշվառվում են ՀՀ ԿԲ կողմից սահմանվող գներով, ինչը մոտավորապես դրանց իրական արժեքն է և հիմնված է Լոնդոնի Թանկարժեք Մետաղների բորսայի գնանշումների վրա: Գների տատանումներն արտացոլվում են թանկարժեք մետաղներով գործառնություններից զուտ եկամուտ հոդվածում՝ այլ եկամուտներում կամ ծախսերում:

Առգրավված ակտիվներ: Որոշակի հանգամանքներում, ակտիվներն առգրավվում են ժամկետանց վարկերի գծով գրավադրված գույքի վրա արգելանքի կիրառման դեպքում: Առգրավված ակտիվները չափվում են հաշվեկշռային արժեքից և վաճառքի ինքնարժեքից նվազագույնով:

Հիմնական միջոցներ: Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկման կորուստները, եթե այդպիսիք կան:

Մաշվածությունը հաշվարկվում է հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի հիման վրա և նախատեսված է զրոյացնելու ակտիվների արժեքը դրանց օգտակար ծառայության վերջում: Մաշվածությունը հաշվարկվում է ուղիղ գծային մեթոդով հետևյալ օգտակար ծառայության ժամկետներով՝

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ) 2013թ.	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ) 2012թ.
Շենքեր	50	20
Համակարգիչներ	3-5	3-5
Մեքենաներ	8	5
Այլ	8	5

Վարձակալված ակտիվների բարելավումները ամորտիզացվում են վարձակալության ժամկետի և օգտակար ծառայության ժամկետից նվազագույնով, եթե առկա չէ ողջամիտ համոզվածություն այն մասին, որ Բանկը կստանա ակտիվի նկատմամբ սեփականության իրավունքը վարձակալության ժամկետի վերջում կամ կերկարաձգի վարձակալության ժամկետը:

Հիմնական միջոցների տարրը ապաճանաչվում է այն օտարելիս կամ, երբ այդ ակտիվի շարունակական օգտագործումից այլևս տնտեսական օգուտներ չեն ենթադրվում: Հիմնական միջոցների վաճառքից կամ շրջանառությունից դուրսբերումից առաջացած ցանկացած օգուտ կամ վնաս հաշվարկվում է որպես ակտիվի վաճառքից ստացված միջոցների և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ճանաչվում է ֆինանսական արդյունքում:

Ոչ նյութական ակտիվներ

Առանձին ձեռքբերված ոչ նյութական ակտիվներ: Որոշակի օգտակար ծառայության ժամկետ ունեցող ոչ նյութական ակտիվները, որոնք առանձին են ձեռք բերվել, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները: Ամորտիզացիան օգտակար ծառայության ժամանակահատվածում հաշվարկվում է ուղիղ գծային մեթոդով: Օգտակար ծառայության ժամանակահատվածը և ամորտիզացիայի հաշվարկման մեթոդը վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու տարվա վերջում՝ գնահատումներում ցանկացած փոփոխություն հաշվառելով առաջընթաց կերպով: Անորոշ օգտակար ծառայության ժամկետով ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել առանձին, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված արժեզրկումից կորուստները:

Ոչ նյութական ակտիվների ապաճանաչում: Ոչ նյութական ակտիվներն ապաճանաչվում են դրանք օտարելիս կամ երբ այլևս դրանց օգտագործումից կամ օտարումից չեն ակնկալվում հետագա տնտեսական օգուտներ: Ապաճանաչումից օգուտները կամ վնասները չափվում են որպես ակտիվի օտարումից գուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ճանաչվում են ֆինանսական արդյունքում այն ժամանակաշրջանում, երբ ակտիվն ապաճանաչվում է:

Նյութական և ոչ նյութական ակտիվների արժեզրկում, բացի գուղվիլից: Յուրաքանչյուր հաշվետու տարվա վերջում Բանկը վերանայում է իր նյութական և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքները՝ որոշելու համար արդյոք կա որևէ հայտանիշ, որ այս ակտիվներում եղել են արժեզրկումից կորուստներ: Եթե առկա է որևէ նմանատիպ հայտանիշ, ապա գնահատվում է ակտիվների փոխհատուցվող գումարը, որպեսզի որոշվեն արժեզրկումից կորուստները (եթե այդպիսիք կան): Եթե առանձին ակտիվի փոխհատուցվող գումարը հնարավոր չէ որոշել, Բանկը գնահատում է այն դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը, որին այդ ակտիվը պատկանում է: Եթե հնարավոր է որոշել բաշխման ողջամիտ և հետևողական հիմունք, ապա կորպորատիվ ակտիվները ևս բաշխվում են առանձին դրամաստեղծ միավորներին, այլապես դրանք բաշխվում են դրամաստեղծ ակտիվների փոքրագույն խմբին, որոնց համար կարելի է որոշել խելամիտ և հետևողական հիմունք:

Անորոշ օգտակար ծառայությամբ և օգտագործման համար դեռևս ոչ մատչելի ոչ նյութական ակտիվները ստուգվում են արժեզրկման առկայության տեսանկյունից առնվազն տարին մեկ անգամ, ինչպես նաև երբ առկա է հայտանիշ, որ ակտիվը կարող է արժեզրկված լինել:

Փոխհատուցվող գումարն իրական արժեքից (հանած վաճառքի հետ կապված ծախսերը) և օգտագործման արժեքից առավելագույնն է. օգտագործման արժեքը գնահատելիս ակնկալվող ապագա դրամական հոսքերը բերվում են ներկա արժեքի՝ կիրառելով տոկոսադրույք մինչև հարկումը, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումը և ակտիվին բնորոշ ռիսկերը, որոնցով ապագա գնահատված հոսքերը չեն ճշգրտվել:

Եթե ակտիվի (կամ դրամաստեղծ միավորի) փոխհատուցվող գումարը գնահատվում է ավելի քիչ քան հաշվեկշռային արժեքը, ապա հաշվեկշռային արժեքն իջեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստն անհապաղ ճանաչվում է ֆինանսական արդյունքում, եթե տվյալ ակտիվը չի հաշվառվում վերագնահատված արժեքով: Վերջինիս դեպքում արժեզրկումից կորուստը դիտարկվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Եթե հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի (կամ դրամաստեղծ միավորի) հաշվեկշռային արժեքն ավելացվում է մինչև վերանայված փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ավելացումից հետո հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը կորոշվեր, եթե նախորդ ժամանակաշրջաններում ակտիվի (կամ դրամաստեղծ միավորի) գծով արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ: Արժեզրկումից կորստի հակադարձումը անմիջապես ճանաչվում է ֆինանսական արդյունքում, եթե տվյալ ակտիվը չի հաշվառվում վերագնահատված արժեքով, ինչի դեպքում արժեզրկումից կորստի հակադարձումը դիտարկվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

Ներդրումներ ասոցիացված ընկերություններում: Ասոցիացված ընկերությունը կազմակերպություն է, որտեղ Բանկն ունի նշանակալի ազդեցություն, բայց չի վերահսկում նրան առաձին կամ համատեղ՝ ներդրման օբյեկտի ֆինանսական և գործառնական քաղաքականության գծով որոշումներ ընդունելու միջոցով: Ներդրման օբյեկտի ակտիվներն ու պարտավորությունները, ինչպես նաև գործունեության արդյունքներում ներդրողի բաժնեմասը ֆինանսական հաշվետվություններում արտացոլվում են բաժնեմասնակցության մեթոդով, բացի այն դեպքերից, երբ ներդրումը դասակարգվում է վաճառքի համար մատչելի:

Ասոցիացված ընկերություններում ներդրումները հաշվառվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում սկզբնական արժեքով, և ճշգրտվում են ասոցիացված ընկերության զուտ ակտիվներում Բանկի մասնակցության փոփոխությանը համապատասխան, հաշվի առնելով առանձին ներդրումների արժեքի արժեզրկումից կորուստները: Բանկի բաժնեմասը գերազանցող՝ ասոցիացված ընկերության վնասները չեն ճանաչվում:

Ներդրման ամսաթվով ասոցիացված ընկերության զուտ ակտիվների իրական արժեքը գերազանցող ներդրման մասը ճանաչվում է որպես գուղվիլ:

Ասոցիացված ընկերությունում ձեռքբերման ամսաթվի դրությամբ զուտ որոշելի ակտիվների իրական արժեքում Բանկի ունեցած մասնակցությունից ցածր ձեռքբերման արժեքի տարբերությունը (ձեռքբերման գծով զեղչը) կրեդիտագրվում է շահույթում կամ վնասում՝ ձեռքբերման ժամանակահատվածում:

Այն դեպքում երբ Բանկը գոծարքի մեջ է մտնում Բանկի հետ ասոցիացված ընկերության հետ, շահույթները կամ վնասները մարվում են Բանկի՝ տվյալ ասոցիացված կազմակերպությունում ունեցած մասնակցության չափով: Կորուստները կարող են վկայել փոխանցվող ակտիվի արժեզրկման մասին, և այդ դեպքում համապատասխան արժեզրկման գծով պահուստավորում է պահանջվում:

Հարկում

Շահութահարկի գծով ծախսը ներառում է ընթացիկ հարկի գծով պարտավորությունը և հետաձգված հարկը:

Ընթացիկ հարկ: Ընթացիկ հարկի գծով պարտավորությունը հիմնված է տարվա հարկվող շահույթի վրա: Հարկվող շահույթը տարբերվում է համապարփակ եկամուտների մասին հաշվետվությունում ներկայացվող շահույթից եկամտի և ծախսի այնպիսի տարբերի պատճառով, որոնք հարկման կամ նվազեցման ենթակա են այլ հաշվետու ժամանակաշրջաններում, ինչպես նաև այն տարբերի, որոնք երբևէ չեն հարկվելու կամ նվազեցվելու: Բանկի ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ուժի մեջ մտած կամ, ըստ էության, ուժի մեջ մտած հարկի դրույքաչափերը:

Հետաձգված հարկ: Հետաձգված հարկերը ճանաչվում են ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկման բազաների միջև: Հետաձգված հարկային պարտավորությունները ընդհանուր առմամբ ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվները ընդհանուր առմամբ ճանաչվում են բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով միայն այն չափով որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունները: Նմանատիպ հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման պահին այնպիսի գործարքների արդյունքում, որոնք ազդեցություն չունեն ինչպես հաշվապահական, այնպես էլ հարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են հարկվող ժամանակավոր տարբերությունների գծով՝ կապված հիմնական միջոցների և հաճախորդներին տրված վարկերի հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկն ի վիճակի է վերահսկել ժամանակավոր տարբերության մարման ժամանակային բաշխումը, կամ հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի մարվի տեսանելի ապագայում: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով, կապված վերը նշված ներդրումների հետ, ճանաչվում են միայն այն չափով, որով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող է օգտագործվել ժամանակավոր տարբերությունը և ժամանակավոր տարբերությունը կմարի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը պետք է վերանայվի յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվի այն չափով, որով այլևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները պետք է չափվեն հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային օրենքները), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումը պետք է արտացոլի հարկային հետևանքները, որոնք կառաջանան՝ կախված այն եղանակից, որով Բանկը հաշվետու ժամանակաշրջանի վերջում, ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Տարվա ընթացիկ և հետաձգված հարկեր: Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են ֆինանսական արդյունքում, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք վերաբերում են տարբեր, որոնք ճանաչվել են այլ համապարփակ եկամուտներում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում, ինչի դեպքում ընթացիկ և հետաձգված հարկերը նույնպես ճանաչվում են այլ համապարփակ եկամուտներում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

Գործունեության հետ կապված հարկեր: Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են տարբեր այլ հարկատեսակներ ևս, որոնց գծով գումարների հաշվարկը կապված է Բանկի գործունեության հետ: Այս հարկերը ներառվում են համապարփակ եկամուտների մասին հաշվետվությունում՝ որպես գործառնական ծախսերի բաղադրիչ:

Պահուստներ: Պահուստները ճանաչվում են, երբ Բանկն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական), որպես անցյալ դեպքերի արդյունք և հավանական է, որ Բանկից կպահանջվի կատարել պարտականությունը և պարտականության գումարը հավաստիորեն կարող է գնահատվել:

Պահուստում ճանաչված գումարն իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ լավագույն գնահատականը, որը կպահանջվի ներկա պարտականությունը մարելու համար՝ հաշվի առնելով հարակից ռիսկերն և անորոշությունները: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը պետք է իրենից ներկայացնի այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար:

Եթե ակնկալվում է, որ որևէ այլ կողմ ամբողջությամբ կամ մասամբ փոխհատուցելու է պահուստը մարելու համար պահանջվող ծախսումները, ապա փոխհատուցումը պետք է դիտվի որպես առանձին ակտիվ, երբ ըստ էության որոշակի է, որ կազմակերպության կողմից պարտականությունը մարելու դեպքում փոխհատուցումը կստացվի և փոխհատուցման գումարը կարող է արժանահավատորեն չափվել:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2013 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Պայմանական ակտիվներ և պարտավորություններ: Պայմանական պարտավորությունները չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում սակայն բացահայտվում են, բացառությամբ այն դեպքերի, երբ տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսքի հավանականությունը շատ փոքր է: Պայմանական ակտիվները չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, բայց դրանք բացահայտվում են հաշվետվություններին կից ծանոթագրություններում այն դեպքերում, երբ դրանց հետ կապված տնտեսական օգուտների ներհոսքը համարվում է հավանական:

Արտարժույթ: Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Բանկի գործառնական արժույթից տարբեր այլ արտարժույթով կատարված գործարքները ճանաչվում են գործարքի օրվա փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում արտարժույթով արտահայտված դրամային հոդվածները (տարբեր) վերահաշվարկվում են այդ օրվա փոխարժեքով: Իրական արժեքով հաշվառվող արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածները, վերահաշվարկվում են իրական արժեքի սահմանման օրվա փոխարժեքով: Արտարժույթով հաշվարկված սկզբնական արժեքով հաշվառվող ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում:

Դրամային հոդվածների գծով առաջացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում դրանց առաջացման ժամանաշրջանում :

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Բանկի կողմից կիրառված փոխարժեքները տարվա վերջում հետևյալն են՝

	Միջին փոխարժեք		Միտք փոխարժեք	
	2013թ.	2012թ.	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	409.55	401.76	405.64	403.58
ՀՀ դրամ/1 ԵՎԸ	544.06	516.39	559.54	532.24
	12.87	12.93	12.44	13.27

Գրավ: Բանկը որպես հաճախորդի պարտավորությունների ապահովման միջոց է ընդունում գրավ, երբ դա նպատակահարմար է համարվում: Գրավը հիմնականում լինում է հաճախորդի ակտիվների նկատմամբ կոշտ գրավի տեսքով և Բանկին պահանջի իրավունք է տալիս այս ակտիվների նկատմամբ հաճախորդի առկա և ապագա պարտավորությունների դիմաց:

Բաժնետիրական կապիտալ: Բաժնետիրական կապիտալի համալրումները ճանաչվում են սկզբնական արժեքով: Թողարկված նոր բաժնեմասերին ուղղակիորեն վերագրելի ծախսերը, բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության միավորումներից, նվազեցվում են սեփական կապիտալից՝ առանց շահութահարկի:

Վերադասակարգումներ: Որոշակի վերադասակարգումներ են տեղի ունեցել 2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններում՝ 2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա տեղեկատվության ներկայացմանը համապատասխանություն ապահովելու նպատակով:

Սեզոնական փոփոխություններ

Գործառնական սեզոնները Բանկի թաղադրիչն է, որը ներգրավված է ձեռնարկատիրական գործունեություններում, որոնցից այն կարող է վաստակել հասույթներ և կրել ծախսեր (ներառյալ Բանկի այլ թաղադրիչների հետ գործառնականություններին վերաբերող հասույթները և ծախսերը): Գործառնական սեզոնների գործառնական արդյունքները կանոնավոր կերպով վերանայվում են Բանկի գլխավոր գործառնական որոշում կայացնողի կողմից՝ սեզոններին միջոցների թափանցական վերաբերյալ որոշում կայացնելու և դրա գործունեության արդյունքները գնահատելու նպատակով: Գործառնական սեզոնների գծով առկա է առանձին ֆինանսական տեղեկատվություն:

Բանկի գործառնությունները բավականին ինտեգրացված են և կազմում են մեկ գործարար սեզմենտ ըստ ՖՀՄՍ 8 «Գործառնական սեզմենտներ» ստանդարտի պահանջների: Ղեկավարությունն առանձին հիմունքով չի ուսումնասիրում Բանկի բաղադրիչների գործառնական արդյունքները: Բանկի ակտիվները հիմնականում գտնվում են Հայաստանի Հանրապետությունում, իսկ իր հասույթի և շահույթի մեծ մասը Բանկը ստանում է Հայաստանի Հանրապետությունում իրականացվող և Հայաստանի Հանրապետության հետ կապված գործառնություններից: Գլխավոր գործառնական որոշում կայացնողը, որը Բանկի դեպքում հանդիսանում է Խորհուրդը, միայն ստանում և ուսումնասիրում է Բանկին՝ որպես մեկ ամբողջությանը վերաբերող տեղեկատվությունը:

3. Կարևոր հաշվապահական դատողությունների և գնահատումների հետ կապված անորոշության հիմնական աղբյուրները

Բանկի հաշվապահական քաղաքականությունը կիրառելիս Բանկի ղեկավարությանն անհրաժեշտ է լինում կատարել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնք այլ աղբյուրներից ակնհայտ չեն երևում: Գնահատումներն և դրա հետ կապված ենթադրությունները հիմնված են նախկին փորձի և այլ համապատասխան գործոնների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումներն և ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումներում փոփոխությունները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, երբ փոփոխությունը տեղի է ունենում, եթե փոփոխությունը վերաբերում է միայն այդ ժամանակաշրջանին կամ փոփոխությունը ճանաչվում է այդ և ապագա ժամանակաշրջաններում, եթե փոփոխությունն ազդում է ընթացիկ և ապագա ժամանակաշրջանների վրա:

Անորոշության գնահատման չափանիշների հիմնական աղբյուրները: Ստորև ներկայացվում են ապագային վերաբերող հիմնական ենթադրությունները և ժամանակաշրջանի վերջի դրությամբ գնահատումներից բխող անորոշության այլ հիմնական աղբյուրները, որոնք կրում են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների՝ հաջորդող ֆինանսական տարում էական ճշգրտումների առաջացման զգալի ռիսկ:

Վարկերի արժեզրկում: Բանկը կանոնավոր կերպով վերանայում է իր վարկերն և դեբիտորական պարտքերը՝ դրանք արժեզրկման տեսանկյունից գնահատելու համար: Բանկի վարկերի արժեզրկման պահուստները սահմանվում են վարկերի և դեբիտորական պարտքերի պորտֆելում առաջացած արժեզրկումից կորուստները ճանաչելու համար: Բանկը վարկերի և դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստին կատարվող մասհատումների վերաբերյալ գնահատումները դիտարկում է որպես գնահատման անորոշությունների հիմնական աղբյուր, որովհետև ա) դրանք բավականին զգայուն են մի ժամանակաշրջանից մյուսը տեղի ունեցող փոփոխությունների նկատմամբ, քանի որ հիմնված են չվճարումների չափերի և ապագա կորուստների գնահատման վերաբերյալ ենթադրությունների վրա, որոնք կատարվել են անցյալ գործունեության փորձի հիման վրա և բ) ցանկացած զգալի տարբերություն Բանկի կողմից գնահատված կորուստների և դրանց փաստացի չափերի միջև կհանգեցնի անհրաժեշտության, որ Բանկը գրանցի հավելյալ պահուստներ, որոնք կարող են ունենալ նշանակալի ազդեցություն նրա ապագա ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունների վրա:

Բանկը կիրառում է անհատական և խմբային գնահատումների համադրություն՝ հաշվետու ամսաթվի դրությամբ արժեզրկման պահուստին մասհատումները որոշելիս:

Անհատական գնահատումները կիրառվում են այն վարկերի և դեբիտորական պարտքերի համար, որոնք առանձին վերցված նշանակալի են: Վարկերը և դեբիտորական պարտքերը, որոնց մնացորդը սեփական կապիտալի 2%-ից ավելին է կազմում, առանձին վերցված համարվում են նշանակալի: Բանկն

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2013 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

օգտագործում է ղեկավարության գնահատումը՝ գնահատելու համար արժեզրկումից կորուստների գումարները, այն դեպքում երբ վարկառու ունի ֆինանսական դժվարություններ, և առկա են սակավաթիվ պատմական տվյալներ՝ կապված համանման վարկառուների հետ:

Առանձին վերցված նշանակալի վարկերն և դեբիտորական պարտքերը, որոնք արժեզրկված չեն, ինչպես նաև բոլոր այն վարկերն և դեբիտորական պարտքերը, որոնք անհատապես չեն գնահատվել, ներառվում են խմբային հիմունքով գնահատվող վարկերի և դեբիտորական պարտքերի մեջ: Խմբային հիմունքով գնահատվող վարկերն և դեբիտորական պարտքերը խմբավորվում են ըստ նմանատիպ վարկային ռիսկի բնութագրիչների և կետանցվածության կարգավիճակի և գնահատվում համապատասխանաբար: Բանկը ապագա դրամական հոսքերում փոփոխությունները գնահատում է՝ ելնելով նախկին ցուցանիշներից, հաճախորդների նախկին վարքագծից, տվյալ խմբի վարկառուների կողմից վճարումների կատարման իրավիճակի վատթարացման դիտարկելի տվյալներից, ինչպես նաև տնտեսական պայմաններից, որոնք առնչություն ունեն խմբի ակտիվների գծով պարտավորությունների չկատարման հետ: Ղեկավարությունն օգտագործում է գնահատականներ՝ ելնելով վնասների գծով առկա փորձից այն ակտիվների գծով, որոնք ունեն վարկային ռիսկին բնորոշ հատկանիշներ և առկա է վարկերի խմբին համանման արժեզրկման հայտանիշ: Բանկը հիմնվում է ղեկավարության դատողության վրա՝ վարկերի խմբի գծով դիտարկելի տվյալները ճշգրտելու համար այնպես, որ դրանք արտացոլեն պատմական տվյալներում չարտացոլված ընթացիկ հանգամանքները:

Խմբային հիմունքով գնահատման մեթոդոլոգիայի խնդիրն է՝ ապահովել, որ արժեզրկումից կորստի պահուստը արտացոլի կորստի պատճառ հանդիսացող իրադարձությունները, որոնք արդեն տեղի են ունեցել, սակայն դեռ չեն գնահատվել անհատական հիմունքով:

Ֆինանսական հաշվետվություններում ֆինանսական ակտիվների արժեզրկման գծով պահուստավորումը որոշվում է ելնելով ներկա տնտեսական և քաղաքական հանգամանքներից: Բանկը հնարավորություն չունի կանխատեսելու հանգամանքների փոփոխությունները Հայաստանում և դրանց հնարավոր ազդեցությունները ֆինանսական ակտիվների արժեզրկումից կորուստների պահուստի համարժեքության վրա ապագա ժամանակաշրջաններում:

2013 և 2012թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախառն վարկերն կազմում էին համապատասխանաբար՝ 41,511,187 և 34,041,797 հազար դրամ, իսկ պահուստին մասնահանումը՝ համապատասխանաբար 817,445 և 662,477 հազար դրամ:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ: 2013թ. Բանկն ավարտել է իր հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների վերանայումը: Հիմնական միջոցների պատմական օգտագործման ժամանակահատվածի և օգտագործումն ավելացնելու համար իրականացվող կանխարգելիչ գործողությունների արդյունքների հիման վրա, Բանկը բացահայտել է, որ որոշ դասի ակտիվների փաստացի օգտագործման ժամկետները սովորաբար ավելի երկար են մաշվածքի նպատակով կիրառվող օգտակար ծառայության ժամկետներից: Այդ իսկ պատճառով Բանկը երկարաձգել է գնահատված օգտակար ծառայության ժամկետները հիմնական միջոցների որոշ դասերի համար 2013 թվականի հունվարի 1-ից և այս փոփոխությունները կիրառել է օգտակար գործողության ժամկետների վրա առաջընթաց սկզբունքով՝ հաշվառելով դա որպես գնահատման փոփոխություն ՀՀՄՍ 8-ի համաձայն: Գնահատման այս փոփոխության արդյունքում 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մաշվածության ծախսը նվազել է 307,274 հազար ՀՀ դրամով և մեկ բաժնետոմսի հաշվով եկամուտը աճել է 329 ՀՀ դրամով:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2013 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ) մինչև 2013 թվականի հունվարի 1-ը	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ) 2013 թվականի հունվարի 1-ից հետո
Շենքեր	20	50
Համակարգիչներ	3	3-5
Մեքենաներ	5	8
Այլ	5	8

4. Նոր և վերանայված ֆինանսական հաշվետվություններին միջազգային ստանդարտների կիրառումը

4.1 ՖՀՄՄ-ների ուղղումներ, որոնք ազդում են ֆինանսական հաշվետվություններին վրա

Հաշվետու տարում ընդունվել են հետևյալ նոր և վերանայված ստանդարտները և դրանց մեկնաբանությունները, որոնք ազդեցություն են գործել ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների վրա:

Ֆինանսական հաշվետվություններին վրա ազդեցություն ունեցող ստանդարտներ

ՖՀՄՄ 1 Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում ստանդարտի փոփոխություններ (փոփոխությունների ամսաթիվ՝ հունիս 2011): Բանկը կիրառել է ՀՀՄՄ 1-ի փոփոխությունները՝ «Այլ համապարփակ եկամտի հոդվածների ներկայացում»: Փոփոխության արդյունքում մեծանում է համապարփակ եկամտի մասին հաշվետվությունում բացահայտման պահանջը:

Այս փոփոխության ազդեցության արդյունքում պետք է վերլուծել համապարփակ եկամտի մասին հաշվետվությունում հոդվածները՝ տարանջատելով շահույթում կամ վնասում չվերադասակարգվող հոդվածների և հետագայում շահույթում կամ վնասում վերադասակարգման ենթակա հոդվածների՝ այն ՖՀՄՄ համապատասխան ստանդարտի համաձայն, որին այդ հոդվածը վերաբերում է: Ֆինանսական հաշվետվությունները նաև փոփոխվել են միևնույն հիմունքով եկամտահարկի վերլուծության տեսանկյունից: Փոփոխությունները կիրառվել են հետընթաց կերպով, համապատասխանաբար՝ համապարփակ եկամտի հոդվածները ներկայացվել են վերափոխված կերպով՝ այդ փոփոխություններն արտացոլելու համար: Բացի վերը նշված ներկայացման փոփոխություններից, ՀՀՄՄ 1-ի փոփոխությունը որևէ այլ ազդեցություն չի ունեցել շահույթի կամ վնասի փոփոխությունների, համապարփակ եկամտի, կամ ընդհանուր համապարփակ եկամտի վրա:

ՖՀՄՄ 13 Իրական արժեքով չափում: Բանկն այս տարի առաջին անգամ է կիրառել ՖՀՄՄ 13-ը: Այն սահմանում է իրական արժեքով չափման և իրական արժեքով չափումների բացահայտման վերաբերյալ մեկ միասնական ուղեցույց: ՖՀՄՄ 13-ի շրջանակը լայն է. ՖՀՄՄ 13-ի իրական արժեքով չափման պահանջները կիրառվում են թե ֆինանսական գործիքների հոդվածների, և թե ոչ ֆինանսական գործիքների հոդվածների նկատմամբ, որոնց գծով այլ ՖՀՄՄ-ներով պահանջվում կամ թույլատրվում է իրական արժեքով չափում և իրական արժեքով չափման բացահայտումներ, բացառությամբ բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների գործարքների, որոնք կարգավորվում են ՖՀՄՄ 2. Բաժնետոմսերի վրա հիմնված վճարում ստանդարտով, վարձակալության գործարքների, որոնք կարգավորվում են ՀՀՄՄ 17 Վարձակալություն ստանդարտով և չափումների, որոնք ունեն իրական արժեքի հետ որոշակի նմանություններ, սակայն չեն հանդիսանում իրական արժեքով չափումներ (օր՝ զուտ իրացվելի արժեքը պաշարների չափման համար, կամ օգտագործման արժեքը արժեզրկման գնահատման նպատակներով):

ՖՀՄՍ 13-ը սահմանում է իրական արժեքը որպես գին, որը չափման ամսաթվի դրությամբ, ընթացիկ շուկայական պայմաններում, հիմնական (կամ ամենաբարենպաստ) շուկայում կստացվեր սովորական գործարքում ակտիվը վաճառելու կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելու դիմաց, անկախ նրանից՝ այդ գինն ուղղակիորեն դիտելի է, թե գնահատվում է օգտագործելով գնահատման մեկ այլ մեթոդ: Բացի այդ ՖՀՄՍ 13-ը սահմանում է բացահայտման զգալի պահանջներ:

ՖՀՄՍ 13-ով պահանջվում է առաջընթաց կիրառում 2013թ. հունվարի 1-ից: Բացի այդ, կազմակերպությունների համար սահմանվել են առանձնահատուկ անցումային դրույթներ, ըստ որոնց, նրանք չպետք է կիրառեն Ստանդարտում սահմանված բացահայտման պահանջները՝ Ստանդարտի առաջին կիրառումից առաջ ընկած ժամանակահատվածներում ներկայացված համեմատական տեղակատվությունում: Բացի լրացուցիչ բացահայտումներից, ՖՀՄՍ 13-ի կիրառումը այլ էական ազդեցություն չի ունեցել համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա:

Ստանդարտներ, որոնք չեն ազդում հաշվետվության արդյունքների կամ ֆինանսական դրության վրա:

Ընթացիկ տարում ընդունվել են հետևյալ նոր և վերանայված ստանդարտները և դրանց մեկնաբանությունները: Դրանց ընդունումը զգալի ազդեցություն չի ունեցել ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների վրա:

Նոր և վերանայված ստանդարտներ համախմբման, համատեղ պայմանավորվածությունների, ասոցիացված կազմակերպությունների և բացահայտումների վերաբերյալ

2011թ. մայիսին ընդունվել են համախմբման, համատեղ, ասոցիացված կազմակերպությունների և բացահայտումների վերաբերյալ հինգ նոր ստանդարտներ, որոնցից են՝ ՖՀՄՍ 10՝ *Համախմբված ֆինանսական հաշվետվություններ*, ՖՀՄՍ 11 *Համատեղ պայմանավորվածություններ*, ՖՀՄՍ 12 *Այլ կազմակերպություններում մասնակցության բացահայտում*, ՀՀՄՍ 27 (2011թ. փոփոխություն) *Առանձին ֆինանսական հաշվետվություններ և ՀՀՄՍ 28 (2011թ. փոփոխություն) Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում*: Այս ստանդարտների ընդունումից հետո, թողարկվեցին փոփոխություններ ՖՀՄՍ 10, 11, 12-ում, որոնցով բացատրվեցին որոշակի անցումային դրույթներ այս ստանդարտների առաջին անգամ կիրառման վերաբերյալ:

Ընթացիկ տարում, Բանկն առաջին անգամ է կիրառել ՖՀՄՍ 10, ՖՀՄՍ 11, ՖՀՄՍ 12 և ՀՀՄՍ 28 28 (2011թ. փոփոխություն), ինչպես նաև փոփոխությունները ՖՀՄՍ 10, 11, 12-ում՝ անցումային դրույթների վերաբերյալ: ՀՀՄՍ 27-ը (2011թ. փոփոխություն) կիրառելի չէ Բանկի հանդեպ, քանի որ այն օգտագործում է միայն առանձին ֆինանսական հաշվետվություններ:

ՀՀՄՍ 19 Աշխատակիցների հատուցումներ (2011թ. փոփոխություն): Ընթացիկ տարում Բանկը կիրառել է ՀՀՄՍ 19 (2011թ. փոփոխություն): Աշխատակիցների հատուցումներ ստանդարտը և դրան առնչվող հետագա փոփոխությունները՝ նախքան դրանց ուժի մեջ մտնելու ամսաթիվը: Բանկը կիրառել է ՀՀՄՍ 19 (2011թ. փոփոխություն) հետընթաց սկզբունքով և համաձայն ՀՀՄՍ 19.173-ում նշված անցումային դրույթների: Այս անցումային դրույթները ազդեցություն չունեն հետագա ժամանակահատվածների վրա: Համաձայն ՀՀՄՍ 19-ի փոփոխությունների նախասահմանված հատուցումների և արձակման նպատների սխեմաների հաշվառումը ենթարկվում է փոփոխության: Ըստ այս փոփոխությունների, պահանջվում է սահմանված նպաստների գծով պարտավորություններում, ինչպես նաև սխեմայի ակտիվների իրական արժեքի փոփոխությունների ճանաչումը դրանց տեղի ունենալու պահին, այդպիսով բացառելով «միջանցային» մոտեցումը, որը թույլատրելի էր նախորդ ՀՀՄՍ 19-ով, և աճում է նախորդ ծառայությունների արժեքի ճանաչումը: Բոլոր ակտուարային օգուտները և վնասները անմիջապես ճանաչվում են այլ համապարփակ եկամուտում, այնպես, որ գուտ կենսաթոշակային ակտիվը կամ պարտավորությունը, որը ճանաչվում է համախմբված հաշվեկշռում, արտացոլի սխեմայի դեֆիցիտի կամ ավելցուկի ամբողջական արժեքը: Ավելին, տոկոսային ծախսը և ակնկալվող եկամուտը սխեմայի ակտիվների գծով, որը կիրառվում էր նախորդ ՀՀՄՍ 19-ում փոխարինվել է գուտ տոկոսային գումարով ըստ նոր ՀՀՄՍ 19 (2011թ. փոփոխություն), որը հաշվարկվում է օգտագործելով գեղջված դրույթաչափ գուտ սահմանված հատուցման պարտավորության կամ ակտիվի նկատմամբ: Նոր ՀՀՄՍ

19 (2011թ. փոփոխություն) սահմանում է նաև ավելի մեծ բացահայտման պահանջներ սահմանված հատուցումների ծախսերի ներկայացման գծով:

Փոփոխություններ ՀՀՄՍ 1 Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում (որպես ՖՀՄՍների տարեկան բարելավման մաս՝ 2009 – 2011թթ բարելավման ցիկլ առ մայիս 2012թ.): 2009-2011թթ ՖՀՄՍ-ների տարեկան բարելավումների արդյունքում մի շարք փոփոխություններ են տեղի ունեցել ՖՀՄՍ-ներում: Բանկի համար էական են ՖՀՄՍ 1-ում տեղի ունեցած փոփոխությունները, որոնք վերաբերում են ժամանակաշրջանի սկզբի ֆինանսական վիճակի մասին հաշվետվության (ֆինանսական վիճակի մասին 3-րդ հաշվետվություն) և հարակից ծանոթագրությունների ներկայացման ժամկետներին: Այս փոփոխություններով սահմանվում է, որ ֆինանսական վիճակի մասին երրորդ հաշվետվությունը պահանջվում է ներկայացնել այն ժամանակ, երբ ա) կազմակերպությունը կիրառում է հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետընթաց կերպով կամ հետընթաց կերպով կատարում է ֆինանսական հաշվետվությունների միավորների վերաներկայացում կամ վերադասակարգում և բ) հետընթաց կիրառումը, վերաներկայացումը կամ վերադասակարգումը էական ազդեցություն ունի ֆինանսական վիճակի մասին երրորդ հաշվետվությունում ներկայացված տեղեկատվության վրա: Ըստ այդ փոփոխությունների հարակից ծանոթագրությունները չպետք է կից լինեն ֆինանսական վիճակի մասին հաշվետվությանը:

Փոփոխություններ ՀՀՄՍ 12՝ Շահութահարկ ստանդարտում: Բանկը կիրառել է ՀՀՄՍ 12 Շահութահարկ ստանդարտի փոփոխությունները (2010թ. դեկտեմբեր)՝ հետաձգված հարկ. Հիմքում ընկած ակտիվների վերականգնում վերնագրով: Ըստ այդ փոփոխությունների, գործնական մոտեցում է սահմանվում հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափման համար այն դեպքում, երբ ներդրումային գույքը չափվում է իրական արժեքի մոդելի օգտագործմամբ ՀՀՄՍ 40. Ներդրումային գույք ստանդարտում: Այս փոփոխություններով կատարվում է ենթադրություն, ըստ որի ներդրումային գույքը ամբողջապես վերականգնվում է վաճառքի միջոցով: Այ ենթադրությունը չի գործում, եթե ներդրումային գույքը պահվում է բիզնես մոդելում, որի նպատակն է՝ օգտագործել ներդրումային գույքում մարմնավորված հիմնականում բոլոր տնտեսական օգուտները ժամանակի ընթացքում, այլ ոչ թե վաճառքի միջոցով:

4.2 Նոր և վերանայված, սակայն դեռևս չգործող ՖՀՄՍ-ներ

Բանկը դեռևս չի կիրառել հետևյալ նոր և վերանայված ՖՀՄՍ-ները, որոնք հրապարակվել են, սակայն դեռևս չեն գործում:

ՖՀՄՍ 9

Ֆինանսական գործիքներ. Գործում է 2015թ. հունվարի 1-ին սկսվող տարեկան ժամանակահատվածների համար, և թույլատրվում է դրանց ավելի վաղ կիրառումը:

Փոփոխություններ ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7-ում

Պարտադիր ուժի մեջ մտնելու ամսաթիվը և ՖՀՄՍ 9 անցման բացահայտումներ:

Փոփոխություններ ՖՀՄՍ 10 , ՖՀՄՍ 12 և ՀՀՄՍ 27-ում

Ներդրումային ընկերություններ. Գործում է 2014թ. հունվարի 1-ին սկսվող կամ դրանից հետո ընկած տարեկան ժամանակահատվածների համար, և թույլատրվում է դրանց ավելի վաղ կիրառումը:

Փոփոխություններ ՀՀՄՍ 32-ում

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում. Գործում է 2014թ. հունվարի 1-ին սկսվող կամ դրանից հետո ընկած տարեկան ժամանակահատվածների համար, և թույլատրվում է դրանց ավելի վաղ կիրառումը:

ՖՀՄՍ 9 Ֆինանսական գործիքներ: ՖՀՄՍ 9՝ թողարկված 2009թ. նոյեմբերին, նոր պահանջներ է սահմանել ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման համար: ՖՀՄՍ 9 փոփոխվել է 2010թ.

հոկտեմբերին՝ ներառելով ֆինանսական պարտավորությունների դասակարգման և չափման, ինչպես նաև ապաճանաչման պահանջներ:

ՖՀՄՍ 9-ի հիմնական պահանջները

- Բոլոր ճանաչված ֆինանսական ակտիվները, որոնք գտնվում են ՀՀՄՍ 39 *Ֆինանսական գործիքներ: Ճանաչումը և չափումը* ստանդարտի շրջանակներում, պետք է այնուհետև չափվեն ամորտիզացված արժեքով՝ կամ իրական արժեքով: Մասնավորապես, բիզնես մոդելում պահվող պարտքային ներդրումները, որոնք նպատակ ունեն ապահովել պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի հավաքագրումը և ունեն պայմանագրով նախատեսված դրամական միջոցների հոսքեր որոնք իրենցից ներկայացնում են միմիայն մայր գումարի և մայր գումարի գծով վճարման ենթակա տոկոսների մարում, սովորաբար չափվում են իրենց իրական արժեքով՝ համապատասխան հաշվապահական ժամանակաշրջաններում: Բոլոր մնացած պարտքային ներդրումները և սեփական կապիտալում ներդրումները չափվում են իրենց իրական արժեքով՝ համապատասխան հաշվապահական ժամանակաշրջանների վերջում: Բացի այդ, համաձայն ՖՀՄՍ 9-ի, կազմակերպությունները կարող են փոփոխության ոչ ենթակա որոշում կայացնել հետագա փոփոխությունները ներկայացնել սեփական կապիտալում ներդրման (որը չի պահվում վաճառքի համար) իրական արժեքով այլ համապարփակ եկամուտում, և շահույթում կամ վնասում սովորաբար ճանաչել միայն շահաբաժինների տեսքով եկամուտը:
- Ինչ վերաբերում է շահույթում կամ վնասում իրական արժեքով ֆինանսական պարտավորությունների չափմանը, ՖՀՄՍ 9 պահանջում է, որպեսզի ֆինանսական պարտավորության իրական արժեքի փոփոխության գումարը, որը վերագրելի է այդ պարտավորության վարկային ռիսկի փոփոխությանը, ներկայացվի այլ համապարփակ եկամուտում, եթե պարտավորության վարկային ռիսկի փոփոխությունների ազդեցության ճանաչումը այլ համապարփակ եկամուտում չի ստեղծի կամ մեծացնի շահույթի կամ վնասի միջև հաշվապահական անհամապատասխանությունը: Իրական արժեքի փոփոխությունները, որոնք վերագրելի են ֆինանսական պարտավորության վարկային ռիսկին, այնուհետև չեն վերադասակարգվում շահույթի կամ վնասի: Համաձայն ՀՀՄՍ 39, ֆինանսական պարտավորության իրական արժեքի ողջ գումարը որը նախատեսված է շահույթում կամ վնասում իրական արժեքով չափվող, ներկայացվում է շահույթում կամ վնասում:

Բանկի ղեկավարությունը ակնկալում է, որ ՖՀՄՍ 9-ի կիրառումը ապագայում կարող է եական ազդեցություն ունենալ Բանկի ֆինանսական ակտիվներում և ֆինանսական պարտավորություններում հաշվառված գումարների վրա (օրինակ՝ Բանկի ներդրումը հետգնվող արժեթղթերում, որը ներկայումս դասակարգված է որպես վաճառքի համար պահվող ֆինանսական ակտիվներ, պետք է չափվեն իրական արժեքով՝ համապատասխան հաշվետու ժամանակահատվածներում՝ իրական արժեքի փոփոխությունները ճանաչելով շահույթում կամ վնասում): Սակայն ՖՀՄՍ 9-ի ազդեցության ողջամիտ գնահատական տալը գործնականում հիմնավորված չէ այնքան ժամանակ, քանի դեռ չի իրականացվել մանրամասն ստուգում:

Փոփոխություններ ՀՀՄՍ 32 Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

ՀՀՄՍ 32-ի փոփոխություններով պարզաբանվում են ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցմանը վերաբերվող պահանջները: Մասնավորապես, ըստ այդ փոփոխությունների հստակեցվել են «ներկայումս ունի հաշվանցման օրենսդրորեն կիրառելի իրավունք» և «համաժամանակյա իրացում և փոխադարձ հաշվարկ» հասկացությունները:

Բանկի ղեկավարությունը չի ակնկալում, որ այդ փոփոխությունների կատարումը ՀՀՄՍ 32-ում եական ազդեցություն կունենա Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա, քանի որ Բանկը չունի ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ, որոնց գծով անհրաժեշտ է փոխադարձ հաշվարկ:

ՖՀՄՍ 10 Համախմբված ֆինանսական հաշվետվություններ. ՖՀՄՍ 10-ը փոխարինում է ՖՀՄՍ 27՝ Համախմբված և առանձին ֆինանսական հաշվետվություններ ստանդարտի մի մասին, որն առնչվում է

համախմբված ֆինանսական հաշվետվություններին և ՍՄԿ 12՝ Համախմբում՝ հատուկ նշանակության միավորներ մեկնաբանությանը:

Համաձայն ՖՀՄՍ 10-ի, բոլոր կազմակերպությունների համար կա համախմբման միայն մի հիմունք, և դա վերահսկողությունն է: Այս փոփոխությունը վերացնում է առկա անհամապատասխանությունը ՀՀՄՍ 27 և ՍՄԿ 12-ի միջև՝ նախկինում օգտագործված վերահսկողության հասկացության վերաբերյալ, և ավելի մեծ կարևորություն է հաղորդում ռիսկերին և օգուտներին:

ՖՀՄՍ 10-ը ներառում է ռիսկերի ավելի մանրամասն սահմանումներ՝ ՀՀՄՍ 27 նախորդ տարբերակում վերահսկողության սահմանման թերությունների վերացման նպատակով: ՖՀՄՍ 10-ում վերահսկողության սահմանումը ներառում է հետևյալ տարրերը՝

- ա) Ներդրվող կազմակերպության հանդեպ ունեցած իրավասությունները
- բ) ներդրող կազմակերպության փոփոխական եկամուտների գծով իրավունքների կամ այդ եկամուտների ստացման գծով ռիսկերը
- գ) ներդրվող կազմակերպության հանդեպ ունեցած լիազորություններն օգտագործելու հնարավորություն ներդրողի շահույթի վրա ազդեցություն գործելու նպատակով

Բոլոր երեք տարրերը պետք է բավարարվեն, որպեսզի ներդրողը վերահսկողություն ունենա ներդրվող կազմակերպության նկատմամբ:

5. Զուտ տոկոսային եկամուտ

(հազար դրամ)	2013թ.	2012թ.
Տոկոսային եկամուտ		
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ		
- Վարկեր հաճախորդներին	6,246,994	5,173,504
- Հակադարձ հետգնման պայմանագրեր	177,750	215,873
- Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	85,677	293,394
- Այլ տոկոսային եկամուտ	385	603
Ընդամենը տոկոսային եկամուտ ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով	6,510,806	5,683,374
Իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ		
- Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	725,840	504,449
Ընդամենը տոկոսային եկամուտ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով	725,840	504,449
Ընդամենը տոկոսային եկամուտ	7,236,646	6,187,823
Տոկոսային ծախս		
Տոկոսային ծախս ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորությունների գծով		
- Ընթացիկ հաշիվներ և հաճախորդներից ներգրավված ավանդներ	1,900,027	1,597,144
- Վարկեր միջազգային ֆինանսական կազմակերպություններից	542,208	694,721
- Ավանդներ և մնացորդներ բանկերում	395,289	187,626
- Հետգնման պայմանագրեր	369,140	93,258
- Վարկեր ՀՀ Կենտրոնական բանկից և ՀՀ կառավարությունից	284,256	295,586
- Այլ տոկոսային ծախս	10,102	26,099
Ընդամենը տոկոսային ծախս	3,501,022	2,894,434
Զուտ տոկոսային եկամուտ նախքան տոկոսակիր ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստները	3,735,624	3,293,389

6. Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

(հազար դրամ)	2013թ.	2012թ.
Հաշվարկային փոխանցումներ	777,822	589,144
Վճարային քարտերով գործառնություններ	410,968	266,583
Դրամարկդային գործառնություններ	181,161	186,704
Արտարժույթով և արժեթղթերով գործառնություններ	53,736	23,488
Երաշխիքներ և ակրեդիտիվներ	15,987	14,091
Պետական և տեղական բյուջեի հետ հաշիվների սպասարկման գծով վճարներ	-	4,037
Այլ վճարներ և կոմիսիոն եկամուտներ	118,786	116,087
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարումների տեսքով եկամուտներ	1,558,460	1,200,134
Վճարային քարտերով գործառնություններ	176,524	146,644
Արտարժույթով և արժեթղթերով գործառնություններ	90,899	43,277
Հաշվարկային փոխանցումներ	69,255	56,135
Երաշխիքներ	7,376	4,170
Թղթակցային հաշիվների սպասարկում	4,102	3,358
Այլ վճարներ և կոմիսիոն ծախսեր	37,242	19,267
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարումների տեսքով ծախսեր	385,398	272,851

7. Զուտ եկամուտ արտարժույթային գործառնություններից

(հազար դրամ)	2013թ.	2012թ.
Արտարժույթի առք ու վաճառքից զուտ օգուտ	1,041,653	867,228
Վնաս արտարժույթի փոխարկումից	(131,981)	(56,267)
Ընդամենը զուտ եկամուտ արտարժույթային գործառնություններից	909,672	810,961

8. Այլ եկամուտներ

(հազար դրամ)	2013թ.	2012թ.
Ստացված տույժեր և տուգանքներ	128,880	103,306
Թանկարժեք մետաղների և ոսկու ձուլակտորների վաճառքից և վերագնահատումից օգուտ	10,875	4,681
Հիմնական միջոցների վաճառքից օգուտ	9,785	4,367
Եկամուտ դրամաշնորհներից	507	507
Այլ եկամուտ	31,778	33,819
Ընդամենը այլ եկամուտներ	181,825	146,680

9. Տոկոսակիր ակտիվների գծով արժեզրկման կորուստներ

(հազար դրամ)	2013թ.	2012թ.
Հաճախորդներին տրված վարկեր (Ծան. 16)	143,858	137,466
Այլ	(2,173)	4,428
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ (Ծան. 15)	(1,767)	(2,304)
Ընդամենը վարկային կորուստների արժեզրկման ծախս	139,918	139,590

10. Անձնակազմի գծով ծախսեր

(հազար դրամ)	2013թ.	2012թ.
Աշխատավարձ և այլ վճարներ	2,972,299	2,096,985
Սոցիալական ապահովագրության վճարներ	-	246,765
Ընդամենը անձնակազմի գծով ծախս	2,972,299	2,343,750

2013թ.-ի հունվարի 1-ին Հայաստանի Հանրապետությունում ուժի մեջ մտել է կամտային հարկի մասին նոր օրենք: Փոփոխությունների համաձայն ֆիզիկական անձանց եկամտահարկը և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները փոխարինվել են մեկ միասնական եկամտային հարկով, որը տատանվում է 24.4%-ից մինչև 36%՝ ըստ հարկվող հիմքի և հաշվարկվում է սանդղակի մեթոդով:

11. Այլ ծախսեր

(հազար դրամ)	2013թ.	2012թ.
Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման ծախսեր	262,424	247,986
Ինկասացիոն ծախսեր	247,500	232,690
Գովազդի և ներկայացուցչական ծախսեր	234,612	228,345
Հարկեր (բացառությամբ շահութահարկի)	167,068	171,068
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	148,764	122,032
Պլաստիկ քարտերի գծով կատարված ծախսեր	111,973	91,863
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	104,338	118,605
Գրասենյակային ծախսեր	81,993	92,500
Գործուղման ծախսեր	54,993	63,852
Ապահովագրության գծով ծախսեր	54,158	35,578
Վճարումներ ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին	50,533	41,578
Անվտանգության գծով ծախսեր	44,730	40,846
Խորհրդատվական և մասնագիտական ծառայություններ	28,861	17,484
Վճարված տուգանքներ	2,147	777
Այլ գործառնական ծախսեր	144,577	144,304
Ընդամենը այլ ծախսեր	1,738,671	1,649,508

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2013 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

12. Շահութահարկի գծով ծախս

(հազար դրամ)	2013թ.	2012թ.
Ընթացիկ հարկ	279,328	175,957
Հետաձգված հարկ	(25,446)	(23,138)
Նախորդ ժամանակաշրջանի ընթացիկ հարկի ճշգրտում	-	(439)
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	253,882	152,380

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 20% (2012թ.՝ 20%): ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՄ-ի միջև եղած տարբերությունները մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջ են բերում ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների կազմման նպատակներով դրանց հաշվեկշռային արժեքների և հարկման բազայի միջև: Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է՝ կիրառելով 20% հիմնական դրույքաչափը:

Ստորև ներկայացվում է շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը:

(հազար դրամ)	2013թ.	Արդյունավետ դրույքաչափ (%)	2012թ.	Արդյունավետ դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը	970,583		497,865	
Շահութահարկ՝ 20% դրույքաչափով	194,117	20	99,573	20
Զհարկվող եկամուտ	(101)	-	(101)	-
Զնվազեցվող ծախսեր	38,535	3	46,030	9
Արտարժույթի փոխարկումից կորուստներ	26,396	3	11,253	2
Այլ վերագնահատումներ	1,082		879	
Այլ արտոնություններ	(6,147)	(1)	(4,815)	(1)
Նախորդ ժամանակաշրջանի շահութահարկի փոխհատուցում փոխհատուցում	-	-	(439)	-
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	253,882	25	152,380	30

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2013 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ.

(հազար դրամ)

	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ եկամտում ճանաչված	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կուտակված ծախսեր և այլ պարտավորություններ	68,196	41,212	-	109,408
Ածանցյալ գործիքներ	4,558	(4,558)	-	-
Հիմնական միջոցներ	1,348	978	-	2,326
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	74,102	37,632	-	111,734
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	(44,199)	396	(222,628)	(266,431)
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(15,333)	4,617	-	(10,716)
Պայմանական պարտավորություններ	(4,932)	(1,131)	-	(6,063)
Վարկեր հաճախորդներին	(18,852)	(16,068)	-	(34,920)
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն	(83,316)	(12,186)	(222,628)	(318,130)
Զուտ հետաձգված հարկային պարտավորություն	(9,214)	25,446	(222,628)	(206,396)

(հազար դրամ)

	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ եկամտում ճանաչված	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կուտակված ծախսեր և այլ պարտավորություններ	55,213	12,983	-	68,196
Այլ ակտիվներ	1,812	(1,812)	-	-
Ածանցյալ ֆինանսական գործիքներ	-	4,558	-	4,558
Հիմնական միջոցներ	-	1,348	-	1,348
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	57,025	17,077	-	74,102
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	(20,169)	158	(24,188)	(44,199)
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(8,795)	(6,538)	-	(15,333)
Պայմանական պարտավորություններ	(4,194)	(738)	-	(4,932)
Հաճախորդներին տրված վարկեր	(32,031)	13,179	(24,188)	(18,852)
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն	(65,189)	6,061	-	(83,316)
Զուտ հետաձգված հարկային պարտավորություն	(8,164)	23,138	(24,188)	(9,214)

13. Մեկ բաժնետոմսին ընկնող շահույթ

(հազար դրամ)	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընթացիկ ժամանակաշրջանի շահույթ	716,701	345,485
Շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թիվ	933,335	933,335
Մեկ բաժնետոմսին ընկնող բազային շահույթ	0.77	0.37

14. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

(հազար դրամ)	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ դրամական միջոցներ	8,466,289	6,887,594
Թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	5,002,552	4,383,253
Թղթակցային հաշիվներ բանկերում	4,397,900	3,717,404
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	17,866,741	14,988,251

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ թղթակցային հաշիվները ՀՀ ԿԲ-ում ներառում են նաև ՀՀ ԿԲ-ում տեղաբաշխված պարտադիր պահուստները, որոնք հաշվարկվում են Բանկի կողմից ներգրավված դրամային և արտարժույթով որոշ միջոցների գծով Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգի համաձայն: Այդ միջոցների ելքագրումն արգելված չէ, սակայն պահուստավորման նվազագույն չափը չպահպանելը կարող է հանգեցնել ՀՀ կենտրոնական բանկի կողմից տույժերի կիրառման: ՀՀ ԿԲ-ում ունեցած դրամական միջոցների, այլ դրամական տեղաբաշխումների, թղթակցից հաշիվների ավանդների և պարտադիր պահուստների համար Բանկը տոկոսներ չի ստանում:

15. Պահանջներ բանկերի և ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

(հազար դրամ)	2013թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարկային քարտերով վճարումների ավանդ ՀՀ ԿԲ-ում	1,270,000	1,270,000
Ստացվելիք գումարներ վճարային համակարգերով	477,484	897,294
Վարկեր և ավանդներ	225,268	2,428,307
Բանկերում դեպոնացված գումարներ	71,183	131,316
Այլ ֆինանսական կազմակերպություններում դեպոնացված գումարներ	99,177	98,673
Բանկերից և ֆինանսական կազմակերպություններից ստացման ենթակա այլ գումարներ	405,424	448,564
Նվազեցում արժեզրկման պահուստների գծով	(27,509)	(29,276)
Ընդամենը պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	2,521,027	5,244,878

2013թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ «պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ» տողում ներառված են Բանկի կողմից տրամադրված երաշխիքային գումարները՝ 44,620 հազար ՀՀ դրամ գումարով VISA վճարահաշվարկային

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2013 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

համակարգով, 54,557 հազար ՀՀ դրամ MasterCard վճարահաշվարկային համակարգով գործառնություններ իրականացնելու նպատակով (2012թ. 44,394 հազար ՀՀ դրամ գումարով և 54,279 հազար ՀՀ դրամ գումարով):

Ավանդային հաշիվները ՀՀ ԿԲ-ում իրենցից ներկայացնում են ԱրՔա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների երաշխիքային ավանդ:

Այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով արժեզրկման կորուստների հատկացումների շարժը հետևյալն է.

(հազար դրամ)	Ընդամենը
31 դեկտեմբերի, 2011թ.	31,580
Ժամանակաշրջանի հակադարձում	(2,304)
31 դեկտեմբերի, 2012թ.	29,276
31 դեկտեմբերի, 2012թ.	29,276
Ժամանակաշրջանի հակադարձում	(1,767)
31 դեկտեմբերի, 2013թ.	27,509

16. Հաճախորդներին տրված վարկեր

(հազար դրամ)	2013թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարկեր հաճախորդներին	38,996,756	32,629,991
Օվերդրաֆտ	2,514,431	1,411,806
	41,511,187	34,041,797
Նվազեցում վարկերի արժեզրկման պահուստների գծով	(817,445)	(662,477)
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	40,693,742	33,379,320

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված վարկերի միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 19.93 % ՀՀ դրամով վարկերի համար (2012թ.՝ 17.33 %) և ԱՄՆ դոլարով, Եվրոյով և այլ ազատ փոխարկելի արտարժույթներով վարկերի համար 14.43% (2012թ.՝ 14.34%):

2013թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի կենտրոնացում տրամադրված վարկերի գծով 8,342,381 հազար դրամ (համախառն վարկային պորտֆելի 20.5%) ընդհանուր գումարով, տրամադրված 10 վարկառուների և նրանց հետ փոխկապակցված անձանց (2012թ.՝ 6,708,262 հազար դրամ կամ 20%՝ տրամադրված թվով 10 վարկառուների և նրանց հետ կապակցված անձանց): 213,861 հազար դրամի չափ պահուստ է ձևավորվել այդ վարկերի համար (2012թ.՝ 156,807 հազար դրամ):

Վարկերն ըստ ոլորտների ներկայացված են ստորև.

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2013 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)

	2013թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ
Սպառողական	12,891,853	8,575,939
Առևտուր	8,719,094	8,397,063
Արդյունաբերություն	7,546,671	6,235,520
Հիփոթեքային	3,189,897	3,168,351
Գյուղատնտեսություն	1,978,443	3,348,087
Շինարարություն	752,081	373,905
Այլ ճյուղեր	6,433,148	3,942,932
	41,511,187	34,041,797
Նվազեցված արժեզրկման կորուստի պահուստը	(817,445)	(662,477)
Ընդամենը վարկեր	40,693,742	33,379,320

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վճարման ենթակա վարկերի որակական վերլուծությունը ներկայացված է ստորև՝

(հազար դրամ)	Համախառն վարկեր	Արժեզրկման գծով պահուստ	Զուտ վարկեր	Համախառն վարկերի արժեզրկման պահուստ
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
Արտադրություն				
Ոչ ժամկետանց	7,535,777	140,224	7,395,553	1.9%
Ժամկետանց				
- 1-ից 30 օր ժամկետանց	388	39	349	10.1%
- 31-ից 60 օր ժամկետանց	-	-	-	-
- 61-ից 90 օր ժամկետանց	-	-	-	-
- 91-ից 180 օր ժամկետանց	10,506	5,253	5,253	50.0%
- 180 օրից ավել ժամկետանց	-	-	-	-
Ընդամենը	7,546,671	145,516	7,401,155	1.9%
Գյուղատնտեսություն				
Ոչ ժամկետանց	1,973,852	30,250	1,943,602	1.5%
Ժամկետանց				
- 1-ից 30 օր ժամկետանց	3,647	438	3,209	12.0%
- 31-ից 60 օր ժամկետանց	377	45	332	11.9%
- 61-ից 90 օր ժամկետանց	401	48	353	12.0%
- 91-ից 180 օր ժամկետանց	166	100	66	60.2%
- 180 օրից ավել ժամկետանց	-	-	-	-
Ընդամենը	1,978,443	30,881	1,947,562	1.6%
Շինարարություն				
Ոչ ժամկետանց	752,081	27,734	724,347	3.7%
Ժամկետանց				
- 1-ից 30 օր ժամկետանց	-	-	-	-
- 31-ից 60 օր ժամկետանց	-	-	-	-
- 61-ից 90 օր ժամկետանց	-	-	-	-
- 91-ից 180 օր ժամկետանց	-	-	-	-
- 180 օրից ավել ժամկետանց	-	-	-	-
Ընդամենը	752,081	27,734	724,347	3.7%
Առևտուր				
Ոչ ժամկետանց	8,689,872	150,454	8,539,418	1.7%
Ժամկետանց				
- 1-ից 30 օր ժամկետանց	-	-	-	-
- 31-ից 60 օր ժամկետանց	-	-	-	-
- 61-ից 90 օր ժամկետանց	-	-	-	-
- 91-ից 180 օր ժամկետանց	20,631	4,945	15,686	24.0%

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2013 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)	Համախառն վարկեր	Արժեզրկման գծով պահուստ	Զուտ վարկեր	Համախառն վարկերի արժեզրկման պահուստ
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
- 180 օրից ավել ժամկետանց	8,591	4,457	4,134	51.9%
Ընդամենը	8,719,094	159,856	8,559,238	1.8%
Սպառողական				
Ոչ ժամկետանց ժամկետանց	12,807,495	217,954	12,589,541	1.7%
- 1-ից 30 օր ժամկետանց	22,190	2,231	19,959	10.1%
- 31-ից 60 օր ժամկետանց	13,309	1,331	11,978	10.0%
- 61-ից 90 օր ժամկետանց	15,699	2,092	13,607	13.3%
- 91-ից 180 օր ժամկետանց	33,160	10,409	22,751	31.4%
- 180 օրից ավել ժամկետանց				
Ընդամենը	12,891,853	234,017	12,657,836	1.8%
Հիփոթեքային				
Ոչ ժամկետանց ժամկետանց	3,183,773	43,033	3,140,740	1.4%
- 1-ից 30 օր ժամկետանց	-	-	-	-
- 31-ից 60 օր ժամկետանց	2,986	299	2,687	10.0%
- 61-ից 90 օր ժամկետանց	2,788	279	2,509	10.0%
- 91-ից 180 օր ժամկետանց	350	84	266	24.0%
- 180 օրից ավել ժամկետանց	-	-	-	-
Ընդամենը	3,189,897	43,695	3,146,202	1.4%
Այլ ոլորտներ				
Ոչ ժամկետանց ժամկետանց	6,294,101	143,321	6,150,780	2.3%
- 1-ից 30 օր ժամկետանց	10,223	1,227	8,996	12.0%
- 31-ից 60 օր ժամկետանց	-	-	-	-
- 61-ից 90 օր ժամկետանց	25,492	6,116	19,376	24.0%
- 91-ից 180 օր ժամկետանց	103,332	25,082	78,250	24.3%
- 180 օրից ավել ժամկետանց	-	-	-	-
Ընդամենը	6,433,148	175,748	6,257,401	2.7%

2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վճարման ենթակա վարկերի որակական վերլուծությունը ներկայացված է ստորև՝

(հազար դրամ)	Համախառն վարկեր	Արժեզրկման գծով պահուստ	Զուտ վարկեր	Համախառն վարկերի արժեզրկման պահուստ
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
Արտադրություն				
Ոչ ժամկետանց ժամկետանց	6,235,520	165,119	6,070,401	2.6%
- 1-ից 30 օր ժամկետանց	-	-	-	-
- 31-ից 60 օր ժամկետանց	-	-	-	-
- 61-ից 90 օր ժամկետանց	-	-	-	-
- 91-ից 180 օր ժամկետանց	-	-	-	-
- 180 օրից ավել ժամկետանց	-	-	-	-
Ընդամենը	6,235,520	165,119	6,070,401	2.3%
Գյուղատնտեսություն				
Ոչ ժամկետանց ժամկետանց	3,346,442	49,620	3,296,822	1.5%
- 1-ից 30 օր ժամկետանց	726	87	639	12.0%
- 31-ից 60 օր ժամկետանց	18	2	16	11.1%

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2013 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)	Համախառն վարկեր	Արժեզրկման գծով պահուստ	Զուտ վարկեր	Համախառն վարկերի արժեզրկման պահուստ
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
- 61-ից 90 օր ժամկետանց	59	7	52	11.9%
- 91-ից 180 օր ժամկետանց	842	505	337	60.0%
- 180 օրից ավել ժամկետանց				
Ընդամենը	3,348,087	50,221	3,297,866	1.5%
Շինարարություն				
Ոչ ժամկետանց ժամկետանց	373,905	60,018	313,887	16.1%
- 1-ից 30 օր ժամկետանց	-	-	-	-
- 31-ից 60 օր ժամկետանց	-	-	-	-
- 61-ից 90 օր ժամկետանց	-	-	-	-
- 91-ից 180 օր ժամկետանց	-	-	-	-
- 180 օրից ավել ժամկետանց	-	-	-	-
Ընդամենը	373,905	60,018	313,887	16,1%
Առևտուր				
Ոչ ժամկետանց ժամկետանց	8,397,063	133,742	8,263,321	1.6%
- 1-ից 30 օր ժամկետանց	-	-	-	-
- 31-ից 60 օր ժամկետանց	-	-	-	-
- 61-ից 90 օր ժամկետանց	-	-	-	-
- 91-ից 180 օր ժամկետանց	-	-	-	-
- 180 օրից ավել ժամկետանց	-	-	-	-
Ընդամենը	8,397,063	133,742	8,263,321	1.6%
Սպառողական				
Ոչ ժամկետանց ժամկետանց	8,559,949	150,863	8,409,086	1.8%
- 1-ից 30 օր ժամկետանց	3,458	346	3,112	10.0%
- 31-ից 60 օր ժամկետանց	1,618	162	1,456	10.0%
- 61-ից 90 օր ժամկետանց	150	15	135	10.0%
- 91-ից 180 օր ժամկետանց	9,952	1,990	7,962	20.0%
- 180 օրից ավել ժամկետանց	812	406	406	50.0%
Ընդամենը	8,575,939	153,782	8,422,157	1.8%
Հիփոթեքային				
Ոչ ժամկետանց ժամկետանց	3,167,308	52,852	3,114,456	1.7%
- 1-ից 30 օր ժամկետանց	1,043	125	918	12.0%
- 31-ից 60 օր ժամկետանց	-	-	-	-
- 61-ից 90 օր ժամկետանց	-	-	-	-
- 91-ից 180 օր ժամկետանց	-	-	-	-
- 180 օրից ավել ժամկետանց	-	-	-	-
Ընդամենը	3,168,351	52,977	3,115,374	1.7%
Այլ ոլորտներ				
Ոչ ժամկետանց ժամկետանց	3,916,667	40,339	3,876,328	1.0%
- 1-ից 30 օր ժամկետանց	-	-	-	-
- 31-ից 60 օր ժամկետանց	-	-	-	-

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2013 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)	Համախառն վարկեր	Արժեզրկման գծով պահուստ	Զուտ վարկեր	Համախառն վարկերի արժեզրկման պահուստ
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
- 61-ից 90 օր ժամկետանց	205	25	180	12.2%
- 91-ից 180 օր ժամկետանց	26,060	6,254	19,806	24.0%
- 180 օրից ավել ժամկետանց				
Ընդամենը	3,942,932	46,618	3,896,314	1.2%



Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2013 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Ստորև ներկայացված է 2013թ. վարկերի արժեզրկման փոփոխությունների վերլուծությունը:

(հազար դրամ)	Արտադրու- թյուն	Գյուղատնտե- սություն	Շինարարու- թյուն	Առևտուր	Սպառողա- կան	Հիփոթեքա- յին	Այլ	Ընդամենը
1 հունվարի, 2013թ.	165,119	50,221	60,018	133,742	153,782	52,977	46,618	662,477
Մասնահանումներ պահուստին/ վերականգնումներ	(24,622)	(19,879)	(32,284)	25,382	79,213	(41,942)	157,990	143,858
Դուրսգրված գումարներ	-	(11,422)	-	(13,738)	(23,534)	-	(28,862)	(77,556)
Վերականգնումներ	5,019	11,961	-	14,470	24,556	32,660	-	88,666
31 դեկտեմբերի, 2013թ.	145,516	30,881	27,734	159,856	234,017	43,695	175,746	817,445
Անհատական արժեզրկում	-	-	-	-	25,968	-	-	25,968
Խմբային արժեզրկում	145,516	30,881	27,734	159,856	208,049	43,695	175,746	791,477
	145,516	30,881	27,734	159,856	234,017	43,695	175,746	817,445
Անհատապես արժեզրկված վարկերի համախառն գումարը (մինչև անհատապես գնահատված արժեզրկման պահուստներով զտելը)	-	-	-	-	240,326	-	-	240,326

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2013 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Ստորև ներկայացված է 2012թ. վարկերի արժեզրկման փոփոխությունների վերլուծությունը:

(հազար դրամ)	Արտադրություն	Գյուղատնտեսություն	Շինարարություն	Առևտուր	Մպառուղական	Հիփոթեքային	Այլ	Ընդամենը
1 հունվարի, 2013թ.	187,870	67,059	3,267	169,186	79,437	52,844	66,166	625,829
Մասնահանումներ պահուստին/վերականգնումներ	(22,888)	(12,790)	56,751	36,357	80,874	29,751	(30,589)	137,466
Դուրսգրված գումարներ	-	(5,491)		(79,397)	(26,383)	(32,451)		(143,722)
Վերականգնումներ	137	1,443	-	7,596	19,854	2,833	11,041	42,904
31 դեկտեմբերի, 2013թ.	165,119	50,221	60,018	133,742	153,782	52,977	46,618	662,477
Անհատական արժեզրկում	21,684	-	51,832		22,587	5,615	2,883	104,601
Խմբային արժեզրկում	143,435	50,221	8,186	133,742	131,195	47,362	43,735	557,876
	165,119	50,221	60,018	133,742	153,782	52,977	46,618	662,477
Անհատապես արժեզրկված վարկերի համախառն գումարը (մինչև անհատապես գնահատված արժեզրկման պահուստներով զտելը)	243,430	-	155,762	-	64,931	42,817	41,148	548,088

Գրավի առարկայի վերլուծությունը դիրտակվում է ծանոթագրություն 34-ում:

17. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

(հազար դրամ)	2013թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ
Բանկի կողմից պահվող Պարտքային գործիքներ		
ՀՀ պետական արժեթղթեր	2,375,194	693,754
Կապիտալի գործիքներ		
ՀՀ-ում գործող ընկերությունների արժեթղթեր	144,137	169,186
ՀՀ-ից դուրս գործող ընկերությունների արժեթղթեր	1,715	1,818
	145,852	171,004
Ընդամենը Բանկի կողմից պահվող	2,521,046	864,758
Գրավադրված արժեթղթեր, ծան 18.		
Պարտքային գործիքներ		
ՀՀ պետական արժեթղթեր	4,624,479	4,037,132
Ընդամենը վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	7,145,525	4,901,890

Պարտքային գործիքներն իրենցից ներկայացնում են Հայաստանի Ֆինանսների նախարարության կողմից թողարկված արժեթղթեր տարեկան ֆիքսված տոկոսադրույքով, որը տատանվում է 10%-ի և 13%-ի միջակայքում (2012թ. տարեկան 10 - 13.5%) և որն ուժի մեջ է 2015 – 2032թթ. (2012թ.՝ 2015 – 2032թթ.): Այս գործիքների իրական արժեքը չափվում է օգտագործելով գնահատման տեխնիկա՝ հիմնված տվյալ պահին գործող տոկոսադրույքների վրա, որպես տվյալ ֆինանսական գործիքի ապագա դրամական հոսքերի գեղջատոկոս:

ՀՀ-ի ներսում և ՀՀ-ից դուրս գործող կազմակերպությունների բաժնետոմսերի գծով սեփական կապիտալի գործիքներն իրենցից ներկայացնում են կապիտալի գործիքներ չգնանշված ընկերություններում՝ հաշվառված ինքնարժեքով և ճշգրտված արժեզրկումից կորուստներով, քանի որ դրանց իրական արժեքը հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել: Այսպիսի ներդրումների համար շուկա չկա և Բանկը մտադիր է դրանք պահել երկարաժամկետ կտրվածքով:

18. Փոխանցված ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ

Բանկն ունի գործարքներ հետգնման և հակադարձ հետգնման համաձայնագրերով: Ռեպո համաձայնագրերով փոխառվություն տրված կամ վաճառված արժեթղթերը փոխանցվում են երրորդ կողմին Բանկի կողմից ստացած կանխիկ դրամի փոխարեն: Այս ֆինանսական ակտիվները կարող են վերագրավադրվել կամ վերավաճառվել գործընկերների կողմից Բանկի կողմից պարտավորությունների չկատարման (դեֆոլտի) բացակայության դեպքում, սակայն գործընկերը պարտավորվում է վերադարձնել արժեթղթերը պայմանագրի ավարտին: Բանկի սահմանմամբ այդ արժեթղթերի գծով բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվել են և այդ իսկ պատճառով դրանք չեն ապաճանաչվել: Այս գործարքներն իրականացվում են այն պայմաններով, որոնք ընդունված են ստանդարտ վարկավորման և արժեթղթերի փոխառության ու վարկային գործունեության ժամանակ, ինչպես նաև այնպիսի փոխանակման գործարքներում, որտեղ Բանկը հանդես է գալիս որպես միջնորդ:

Հակադարձ հետզնման պայմանագրեր

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի հակադարձ հետզնման պայմանագրեր ֆինանսական ոլորտում գործող կազմակերպությունների հետ 1,379,833 հազար ՀՀ դրամ (2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: 1,348,482 հազար ՀՀ դրամ): 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ որպես գրավ ստացված ակտիվների իրական արժեքը այս հակադարձ հետզնման պայմանագրերով, որը ներկայացնում է պետական պարտքային արժեթղթեր, կազմում էր 1,387,149 հազար ՀՀ դրամ (2012թ.՝ 1,037,098 հազար ՀՀ դրամ): Բանկը պարտավոր է վերադարձնել համարժեք գումարի արժեթղթեր:

Հետզնման պայմանագրեր

(հազար դրամ)

	2013թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հետզնման պայմանագրերով փոխանցված և գրավադրված՝ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքը	4,624,479	4,037,132
Հակադարձ հետզնման պայմանագրերով որպես գրավ ստացված վերագրավադրված ակտիվների իրական արժեքը	-	-
Ընդամենը հետզնման պայմանագրերով փոխանցված և գրավադրված ֆինանսական ակտիվներ	4,624,479	4,037,132
Հարակից պարտավորությունների հաշվեկշռային արժեք	4,504,784	4,255,724

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեկշռային արժեքում ներառված հարակից պարտավորությունները հետզնման պայմանագրերի գծով՝ 4,504,784 հազար ՀՀ դրամ (2012թ.՝ 4,255,724 հազար ՀՀ դրամ) գումարով, ներառում են ՀՀ կենտրոնական բանկի հետ ստորագրված հետզնման պայմանագրեր՝ 4,003,448 հազար ՀՀ դրամ գումարով (2012թ.՝ 2,847,780 հազար գումարով):

19. Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում

Ստորև ներկայացված աղյուսակում ներկայացվում են ասոցիացված կազմակերպություններում ներդրումների հաշվեկշռային արժեքներում շարժը 2013 և 2012թթ. ավարտված ֆինանսական տարիներին՝

(հազար դրամ)	2013թ.	2012թ.
1 հունվարի	262,160	-
Ներդրումների դասակարգումներում փոփոխություն	-	274,000
Ներդրումների աճ	-	25,000
Մեփական կապիտալում հաշվառվող ներդրումների գծով տարվա շահույթի/(վնասի) մաս	(18,531)	(37,481)
Այլ համապարփակ եկամուտի մաս	1,563	641
31 դեկտեմբերի 2013թ.	245,192	262,160

Ներդրումների մանրամասները 31 դեկտեմբերի 2013թ. և 2012թ. դրությամբ հետևյալն են՝

Անվանումը	Գործունեության տեսակը	Գրանցման երկիրը	Ներդրման չափը (հազար ՀՀ դրամ)	Մասնակցություն %
ՄԻԼ Ինշուրանս ԱՓԲԸ	Ապահովագրություն	ՀՀ	299,000	20%

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2013 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

31 դեկտեմբերի 2013թ. և 2012թ. դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա համար բանկի մասնակցությունը իր ասոցիացված կազմակերպություններում և դրա ամփոփ ֆինանսական տեղեկատվությունը, ներառյալ ընդհանուր ակտիվները, պարտավորությունները, հասույթը, շահույթը կամ վնասը, ներակայացված է հետևյալ աղյուսակում:

(հազար դրամ)		31 դեկտեմբերի 2013թ.								
	Մասնակցության չափը (%)	Ընդամենը ակտիվներ	Ընդամենը պարտավորություններ	Զուտ ակտիվներ	Զուտ ակտիվներում բանկի մասնաբաժինը	Հասույթ	Շահույթ / (վնաս)	Շահույթում / (վնասում) բանկի մասնաբաժինը	Այլ համապարփակ եկամուտ	Այլ համապարփակ եկամուտում բանկի մասնաբաժինը
Անվանումը										
Միլիոն դրամ										
ԱՓԲԸ	20.00	3,024,166	1,567,833	1,456,333	291,266	2,484,775	(92,656)	(18,531)	7,815	1,563
(հազար դրամ)		31 դեկտեմբերի 2012թ.								
	Մասնակցության չափը (%)	Ընդամենը ակտիվներ	Ընդամենը պարտավորություններ	Զուտ ակտիվներ	Զուտ ակտիվներում բանկի մասնաբաժինը	Հասույթ	Շահույթ / (վնաս)	Շահույթում / (վնասում) բանկի մասնաբաժինը	Այլ համապարփակ եկամուտ	Այլ համապարփակ եկամուտում բանկի մասնաբաժինը
Միլիոն դրամ										
ԱՓԲԸ	20.00	2,595,329	1,054,153	1,541,176	308,235	1,541,176	(187,406)	(37,481)	3,205	641

Ասոցիացված կազմակերպությունների գծով հաշվետու ամսաթիվն է՝ 31 դեկտեմբերի: Ասոցիացված կազմակերպությունների բաժնետոմսերը հրապարակայնորեն ցուցակված չեն: Հաշվետու տարում Բանկը չի ստացել շահաբաժիններ ասոցիացված կազմակերպություններից (2012թ: նույնը):

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2013 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

20. Հիմնական միջոցներ

(հազար դրամ)

	Հոդ և շենքեր	Փոխադ- րամիջոց	Համակարգ- չային սարքավո- րումներ	Կապիտալ ներդրումներ վարձակալ- ված հիմնական միջոցներում	Այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք						
1 հունվարի 2012թ.	3,003,055	372,543	1,549,326	153,686	997,447	6,076,057
Ավելացումներ	98,061	42,897	192,677	1,062	136,689	471,386
Օտարումներ	-	(62,037)	(60,932)	-	(17,059)	(140,028)
Վերադասակարգումներ	-	-	(443)	-	443	-
31 դեկտեմբերի, 2012թ.	3,101,116	353,403	1,680,628	154,748	1,117,520	6,407,415
1 հունվարի 2013թ.	3,101,116	353,403	1,680,628	154,748	1,117,520	6,407,415
Ավելացումներ	271,125	177,310	200,270	10,228	182,984	841,917
Օտարումներ	-	(39,482)	(54,654)	-	(19,899)	(114,035)
31 դեկտեմբերի, 2013թ.	3,372,241	491,231	1,826,244	164,976	1,280,605	7,135,297
ՄԱՇՎԱԾՈՒԹՅՈՒՆ						
1 հունվարի 2012թ.	1,110,685	172,005	975,735	21,881	608,361	2,888,667
Մաշվածության ծախս	159,083	63,603	230,023	5,948	131,987	590,644
Օտարում	-	(62,037)	(60,314)	-	(17,059)	(139,410)
Վերադասակարգում	-	-	(328)	-	328	-
31 դեկտեմբերի, 2013թ.	1,269,768	173,571	1,145,116	27,829	723,617	3,339,901
1 հունվարի 2013թ.	1,269,768	173,571	1,145,116	27,829	723,617	3,339,901
Մաշվածության ծախս	40,649	36,186	115,645	10,316	72,308	275,104
Օտարում	-	(30,189)	(54,654)	-	(19,888)	(104,731)
Վերադասակարգում	1,310,417	179,568	1,206,107	38,145	776,037	3,510,274
31 դեկտեմբերի, 2013թ.						
ՀԱՇՎԵԿՇՈՒՑԻՆ						
ԱՐԺԵՔ						
31 դեկտեմբերի, 2013թ.	2,061,824	311,663	620,137	126,831	504,568	3,625,023
31 դեկտեմբերի, 2012թ.	1,831,348	179,832	535,512	126,919	393,903	3,067,514
31 դեկտեմբերի, 2011թ.	1,892,370	200,538	573,591	131,805	389,086	3,187,390

Ամբողջությամբ մաշված ակտիվներ

31 դեկտեմբերի 2013թ. դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկզբնական արժեքը կազմում է 1,119,426 հազար դրամ (2012թ.՝ 1,235,252 հազար դրամ): 2012թ. Բանկն ավարտել է իր հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների վերանայումը:

Բանկը որոշել է, որ հիմնվելով սպառման պատմականորեն ձևավորված ժամկետների վրա և կանխարգելիչ սպասարկման աշխատանքների արդյունքում որոշակի ակտիվների կատեգորիաների համար փաստացի օգտագործման ժամկետներն ավելի երկար են, քան մաշվածության նպատակով հաշվարկված ժամկետները: Հետևաբար, Բանկը երկարաձգել է որոշակի կատեգորիայի հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները 2013թ. հունվարի 1-ից սկսած և այդ փոփոխությունները առաջընթաց կերպով կիրառել է

օգտակար ծառայության ժամկետների վրա՝ դրանք հաշվառելով որպես գնահատումներում փոփոխություններ՝ համաձայն ՀՀՄՍ 8-ի: Այս փոփոխության ազդեցության արդյունքում մաշվածության գծով ծախսը 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ նվազել է 307,274 հազար ՀՀ դրամով, և մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթը մեծացել է 329 ՀՀ դրամով:

Պայմանագրային պարտավորություններ

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ուներ պայմանագրային պարտավորություններ՝ կապված հիմնական միջոցների հետ՝ 446,101 հազար ՀՀ դրամ գումարով (2012թ. 284,723 հազար), որը ենթակա է վճարման 2014թ. Բանկի ղեկավարությունը արդեն հատկացրել է անհրաժեշտ ռեսուրսները այս պարտավորության գծով: Բանկի ղեկավարությունը կարծում է, որ ապագա գուտ հասույթները և ֆինանսավորումը բավարար կլինեն այս և համանման այլ պարտավորությունների կատարման համար:

21. Ոչ նյութական ակտիվներ

(հազար դրամ)	Լիցենզիաներ	Համակարգչային ծրագրեր	Այլ	Ընդամենը
ՄԿՁԲՆԱԿԱՆ ԱՐԺԵՔ				
2012թ. հունվարի 1-ի դրությամբ	116,268	22,079	14,407	152,754
Ավելացումներ	6,197			6,197
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	122,465	22,079	14,407	158,951
2013թ. հունվարի 1-ի դրությամբ	122,465	22,079	14,407	158,951
Ավելացումներ	1,536	1,120		2,656
Օտարումներ		(2,002)		(2,002)
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	124,001	21,197	14,407	159,605
ՄԱՇՎԱԾՈՒԹՅՈՒՆ				
2012թ. հունվարի 1-ի դրությամբ	23,176	17,658	3,387	44,221
Ամորտիզացիայի գծով ծախս	11,719	1,027	1,310	14,056
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	34,895	18,685	4,697	58,277
2013թ. հունվարի 1-ի դրությամբ	34,895	18,685	4,697	58,277
Ամորտիզացիայի գծով ծախս	12,287	1,065	1,211	14,563
Օտարումներ	-	(1,732)		(1,732)
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	47,182	18,018	5,908	71,108
ՀԱՇՎԵԿԵՐԱՅԻՆ ԱՐԺԵՔ				
Զուտ հաշվեկշռային արժեքը 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	76,819	3,179	8,499	88,497
Զուտ հաշվեկշռային արժեքը 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	87,570	3,394	9,710	100,674
Զուտ հաշվեկշռային արժեքը 2012թ. հունվարի 1-ի դրությամբ	93,092	4,421	11,020	108,533

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2013 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

22. Այլ ակտիվներ

(հազար դրամ)

Ստացվելիք գումարներ
Այլ ֆինանսական ակտիվների արժեզրկման կորուստ

Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ

Կանխավճարներ և այլ դեբիտորական պարտք

Նյութեր

Թանկարժեք մետաղներ

Աշխատակիցներին տրված հատուցումներ

Այլ ակտիվներ

Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ

Նվազեցված՝ արժեզրկման պահուստ

Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ

Ընդամենը այլ ակտիվներ

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
83,455	65,722
(835)	(657)
82,620	65,065
213,305	171,979
191,978	236,067
23,883	57,002
23,828	2,549
73,750	51,402
526,744	518,999
(11,604)	(7,535)
515,140	511,464
597,760	576,529

Այլ ակտիվների գծով արժեզրկման կորուստների պահուստի շարժը հետևյալն է.

(հազար դրամ)

2012թ. հունվարի 1-ի դրությամբ

Տարեկան հակադարձում

Դուրս գրված գումարներ

Վերականգնում

2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

2013թ. հունվարի 1-ի դրությամբ

Տարեկան ծախս

Դուրս գրված գումարներ

Վերականգնում

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Ընդամենը

20,903

4,428

(18,681)

1,542

8,192

8,192

(2,173)

(7,080)

13,500

12,439

23. ՀՀ Կենտրոնական բանկից և ՀՀ կառավարությունից ստացված վարկեր

(հազար դրամ)

Վարկեր ՀՀ Կենտրոնական բանկից

Վարկեր ՀՀ կառավարությունից

**Ընդամենը վարկեր ՀՀ Կենտրոնական բանկից և
ՀՀ կառավարությունից**

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
2,479,292	2,534,849
43,693	1,024,156
2,522,985	3,559,005

ՀՀ ԿԲ-ից և ՀՀ Կառավարությունից ստացված վարկերը ներկայացնում են վարկեր ստացված Գերմանա-հայկական հիմնադրամի «Փոքր և միջին բիզնեսի վարկային ծրագրի» ֆինանսավորման շրջանակներում, «Վերականգնվող էներգետիկա» և «Բնակարանային ֆինանսավորում» ծրագրերի շրջանակներում ներգրավված միջոցները:

2013թ. և 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կառավարությունից ստացված վարկերը ներառում են վարկեր ստացված Գերմանա-հայկական հիմնադրամի «Փոքր և միջին բիզնեսի վարկավորման ծրագրի» և

«Տնտեսության կայունացման վարկավորում» ծրագրերի ֆինանսավորման շրջանակներում ներգրաված միջոցները:

24. Պարտավորություններ բանկերի և ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

(հազար դրամ)	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարկեր և ավանդներ այլ բանկերից և ֆինանսական կազմակերպություններից	5,847,363	919,324
Ֆինանսական կազմակերպությունների ընթացիկ հաշիվներ	451,796	354,491
Այլ բանկերի թրթակցային հաշիվներ	99,341	129,962
Այլ	176,034	171,836
Ընդամենը պարտավորություններ բանկերի և ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	6,574,534	1,575,613

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերը և ավանդներն իրենցից ներկայացնում են ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ բանկերից ստացված վարկեր: 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկերից մեկից ստացված մնացորդը կազմում է ընդհանուր առմամբ բանկերից և ֆինանսական հաստատություններից ստացված ընդհանուր վարկերի և ավանդների 35%:

25. Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և ավանդներ

Միջազգային ֆինանսական կազմակերպություններից վարկերը և ավանդները ներառում են Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկից, Սնծովյան Առևտրի և Զարգացման Բանկից Միջազգային Ֆինանսական Կորպորացիայի և Նիդեռլանդների Ֆինանսական Զարգացման Կորպորացիայի կողմից ստացված վարկերը:

2013թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ միջազգային ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ ՀՀ դրամով պարտավորությունների գծով միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 7.8% (2012թ.՝ 9.13%), ԱՄՆ դոլարով, Եվրոյով և այլ ազատ փոխարկելի արտարժույթներով պարտավորությունների համար 5.8% (2012 թ.: 6.12%):

2013թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտված ֆինանսական տարվա համար Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2012: նույնպես):

Ընդհանուր առմամբ 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկերից և ժամկետային ավանդներից պայմաններ ունեցող վարկերը և, ներառյալ հաշվեգրված տոկոսները, ներկայացված է ստորև բերված աղյուսակում:

(հազար դրամ)	Արժույթ	Ժամկետ	Անվանական դրույք %	2013թ. դեկտեմբերի 31	Անվանական դրույք %	2012թ. դեկտեմբերի 31
Սնծովյան Առևտրի և Զարգացման Բանկ	ԱՄՆ դոլար	1-3 տարի	6.42%	1,352,133	6.64%	2,017,900
ՄՖԿ	ԱՄՆ	1 տարի	3.89%	81,128	6.25%	941,687
ՎԶԵԲ	ՀՀ դրամ	1-5 տարի	10.30%	2,353,137	12.90%	2,347,980
ՎԶԵԲ	ԱՄՆ	1-5 տարի	6.04%	307,324	5.5%	2,176,100
ՎԶԵԲ	Եվրո	1 տարի		-	5.8%	62,804,
Ընդամենը				4,093,722		7,546,471

2013 և 2012թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ միայն ՎԶԵԲ, ՄՖԿ և Սնծովյան Սնծովյան Առևտրի և Զարգացման Բանկից ստացված վարկերի և ավանդների գծով էին առկա պայմանագրային պարտավորության դրույթներ: Բանկը պարտավոր է համապատասխանություն ապահովել փոխառու միջոցների գծով առկա ֆինանսական դրույթների հետ: Այդ դրույթները ներառում են սահմանված դրույթաչափերը, վարկ/կապիտալ հարաբերակցությունը և ֆինանսական գործունեությանն առնչվող մի շարք այլ տվյալներ: Բանկի կողմից չի արձանագրվել այս դրույթներից որևէ մեկի խախտում 2013թ. և 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Բացառություն են կազմում հետևյալ դեպքերը

1. ՄՖԿ գծով հիմնական միջոցներ գումարած կապիտալ ներդրումների գործակիցը և համախառն տոկոսադրույքի ռիսկի գործակիցը
2. Սնծովյան Առևտրի և Զարգացման Բանկի գծով գործառնական ծախս/գործառնական արդյունք գործակիցը

Այս պայմանագրային դրույթների համար երկու ամսաթվերի դրությամբ էլ Բանկն ունի Սնծովյան Առևտրի և Զարգացման Բանկի և ՄՖԿ-ից ստացված զիջում:

26. Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ

(հազար դրամ)	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Իրավաբանական անձինք		
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	10,102,347	9,293,622
Ժամկետային ավանդներ	5,308,581	3,278,336
	15,410,928	12,571,958
Ֆիզիկական անձինք		
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	10,141,180	9,838,291
Ժամկետային ավանդներ	18,839,668	13,830,449
	28,980,848	23,668,740
Ընդամենը պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	44,391,776	36,240,698

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրավաբանական անձ հաճախորդների հանդեպ պարտավորությունները կազմում են 1,492,915 հազար դրամ գումարով ավանդներ (2012թ.: 266,786 հազար դրամ), որոնք իրենցից ներկայացնում են վարկերի, ակրեդիտիվների, երաշխիքների և այլ պայմանական պարտավորությունների գծով ապահովվածություններ: Այդ ավանդների իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին:

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի տասը ամենամեծ հաճախորդների ավանդների ընդհանուր գումարը կազմում է 7,834,789 հազար դրամ (2012թ.: 5,950,188 հազար դրամ) կամ հաճախորդների միջոցների ընդհանուր գումարի 23% (2012թ.: 22%):

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդների նկատմամբ ՀՀ դրամով պարտավորությունների գծով միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 4.09% (2012թ.: 4.0 %), ԱՄՆ դոլարով, եվրոյով և այլ ազատ փոխարկելի արտարժույթներով պարտավորությունների համար 5.44% (2012թ.: 4.64 %):

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2012թ.: նույնպես):

27. Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ

(հազար դրամ)	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
	Պայմանական գումար	Ակտիվների իրական արժեք	Պարտավորությունների իրական արժեք	Պայմանական գումար	Ակտիվների իրական արժեք	Պարտավորությունների իրական արժեք
Առևտրային ածանցյալ գործիքներ						
Արտարժույթային սվոփեր	1,119,080	-	6,740	2,224,790	20,030	8,012
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքներ	1,119,080	-	6,740	2,224,790	20,030	8,012

Արտարժույթի սվոփ պայմանագրեր

Ստորև բերվող աղյուսակում, հիմնական արտարժույթների կտրվածքով, ներկայացված են արտարժույթի փոխանակման սվոփ պայմանագրերի գումարները դեկտեմբերի 31-ի դրությամբ: Ստորև ներկայացված արտարժույթով արտահայտված գումարները փոխարկվում են հաշվետու ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքներով:

(հազար դրամ)	Անվանական գումար	
	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱՄՆ դոլարի առք, ՀՀ դրամի վաճառք	-	1,614,320
Ռուբլու առք, Եվրոյի վաճառք	-	161,629
Եվրոյի առք, ռուբլու վաճառք	1,119,080	448,841
	1,119,080	2,224,790

28. Այլ պարտավորություններ

(հազար դրամ)	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կրեդիտորական պարտք	35,974	38,277
Այլ պարտավորություններ	134,208	24,633
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	170,182	62,910
Աշխատակիցներին վճարվելիք հատուցումներ	351,147	223,202
Վճարման ենթակա հարկեր, բացի շահութահարկից	91,608	79,841
Վճարվելիք շահաբաժիններ	38,558	45,140
Ընդամենը ոչ ֆինանսական պարտավորություններ	481,313	348,183
Ընդամենը այլ պարտավորություններ	651,495	411,093

29. Մեփական կապիտալ

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում էր 2,333,338 հազ. դրամ (2011թ.՝ 2,333,338 հազ.դրամ): Համաձայն կանոնադրության, համալրված բաժնետիրական կապիտալը բաղկացած է թվով 933,335 հատ սովորական անվանական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը համապատասխանաբար 2,500 դրամ անվանական արժեքով: Բանկի հայտարարված սովորական անվանական բաժնետոմսերի առավելագույն չափը սահմանված է 1,066,665 հատ բաժնետոմս:

2013թ.և 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի բաժնետերերն են.

(հազար դրամ)	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Վճարված բաժնետիրական կապիտալ	Ընդամենը վճարված կապիտալի %	Վճարված բաժնետիրական կապիտալ	Ընդամենը վճարված կապիտալի %
Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ	583,338	25.0	583,338	25.0
Սարիբեկ Սուքիասյան	527,573	22.6	527,573	22.6
Խաչատուր Սուքիասյան	455,413	19.5	455,413	19.5
Ռոբերտ Սուքիասյան	240,930	10.3	240,930	10.3
Էդուարդ Սուքիասյան	49,040	2.1	49,040	2.1
Այլ բաժնետերեր	477,044	20.5	477,044	20.5
	2,333,338	100.0	2,333,338	100.0

2013թ. և 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի սեփականության իրավունքով իրեն պատկանող բաժնետոմսեր: Սովորական բաժնետոմսերի բաժնետերերը իրավունք ունեն ստանալու շահաբաժին և ունեն մեկ բաժնետոմսի դիմաց մեկ ձայնի իրավունք Բանկի տարեկան և ընդհանուր ժողովներում:

ՎԶԵԲ-ի բաժնեմասը կազմում է 25% գումարած մեկ բաժնետոմս: Բանկի՝ բաշխման ենթակա պահուստները սահմանափակվում են կուտակված շահույթով: Բաշխման ոչ ենթակա միջոցները ներկայացված են գլխավոր պահուստով, որը ստեղծված է համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների՝ ընդհանուր բանկային ռիսկերը, ներառյալ հնարավոր կորուստները և այլ չնախատեսված ռիսկերը և ծախսերը փոխհատուցելու նպատակով: Պահուստը ստեղծվել է համաձայն կանոնադրության, որը նախատեսում է պահուստի ստեղծում այդ նպատակների համար ոչ պակաս քան հաշվապահական հաշվառման հաշիվներում արտացոլված բաժնետիրական կապիտալի 15 %-ի չափով:

30. Պայմանագրային և պայմանական պարտավորություններ

Իրավական և հարկային հարցեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը կարգավորող օրենսդրական դաշտն այժմ է ընկնում հաճախակի կատարվող փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են և պահանջում են մեկնաբանություններ: Շատ դեպքերում, այս կամ այն հարցում տարբեր հարկային և իրավասու մարմիններ ունեն տարբեր մեկնաբանություններ:

Հաճախ հարկային մարմինները պահանջում են լրացուցիչ հարկեր այնպիսի գործարքների և հաշվապահական մեթոդների համար, որոնց գծով պահանջներ չեն ներկայացվել: Արդյունքում կարող են առաջանալ հավելյալ տույժեր և տուգանքներ: Հարկային ստուգումը կարող է ներառել ստուգմանն անմիջապես նախորդող 3 տարին: Որոշ հանգամանքներում հարկերի ստուգումը կարող է ընդգրկել ավելի վաղ ժամանակահատվածներ:

Ղեկավարությունը համոզված է, որ Բանկն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և պատշաճ կերպով կատարել է իր հարկային պարտավորությունները:

Ղեկավարությունը նաև կարծում է, որ հիմնական պարտավորությունը, որը բխում է Բանկի դեմ հարուցված դատական հայցերից և բողոքներից, բացասական ազդեցություն չի ունենա Բանկի ֆինանսական վիճակի կամ հետագա գործունեության վրա:

Վարկային պարտավորվածություններ, երաշխիքներ և այլ ֆինանսական պայմանագրեր

Իր գործունեության ընթացքում Բանկը տրամադրում է իր հաճախորդներին հետհաշվեկշռային ռիսկ պարունակող ֆինանսական գործիքներ հաճախորդների կարիքները բավարարելու համար: Նշված ֆինանսական գործիքները ունեն պարտքային ռիսկի տարբեր մակարդակներ և չեն արտացոլում հաշվեկշռում:

Այս պայմանագրային պարտավորությունների, երաշխիքների և այլ պայմանական պարտավորությունների անվանական կամ պայմանագրային գումարները դեկտեմբերի 31-ի դրությամբ հետևյալն են.

(հազար դրամ)	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Զօգտագործված վարկային գծեր	2,557,262	1,809,201
Ակրեդիտիվներ	-	39,787
Երաշխիքներ	474,077	422,947
Ընդամենը պայմանագրային պարտավորություններ, երաշխիքներ և այլ պայմանական պարտավորություններ	3,031,339	2,271,935

Պարտավորություններ գործառնական վարձակալության գծով. բանկը որպես վարձակալ

Բանկն իր բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով կնքում է առևտրային վարձակալության պայմանագրեր շենք և տարածքներ վարձակալելու նպատակով:

Չեղյալ չհայտարարվող գործառնական վարձակալության գծով վճարվելիք ապագա ընդհանուր նվազագույն վարձավճարների կառուցվածքը հետևյալն է.

(հազար դրամ)	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մինչև 1 տարի	156,065	133,116
1-5 տարի	605,339	349,285
5 տարուց ավելի	19,150	39,823
Ընդամենը պարտավորություններ գործառնական վարձակալության գծով	780,554	522,224

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում, և այլ երկրներին հատուկ բազմաթիվ ապահովագրության ձևաչափերը հիմնականում դեռևս կիրառելի չեն: Բանկը չի նախատեսում իր գործունեության դադարեցման, ինչպես նաև իր գույքի կամ գործունեության հետ կապված ապահովագրական դեպքերի ժամանակ առաջացող գույքի և շրջակա միջավայրի վնասի՝ երրորդ կողմի նկատմամբ պարտավորության ամբողջական ապահովագրություն: Այնուամենայնիվ, 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, Բանկին սեփականության իրավունքով պատկանող գլխամասային շենքը և փոխադրամիջոցներն ապահովագրված են: Բանկն ունի նաև ապահովագրություն բանկային ընդհանուր պարտավորվածությունների, էլեկտրոնային և համակարգչային հանցագործությունների և մասնագիտական

պատասխանատվության համար: Քանի դեռ Բանկը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ բացասական ազդեցություն Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Սկսած 2005թ.-ից Բանկը հանդիսանում է ավանդների հատուցումը երաշխավորող պարտադիր համակարգի անդամ: Նշված համակարգը գործում է համաձայն օրենսդրության պահանջների և կանոնակարգվում է ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին օրենքով: Ապահովագրությունը մարում է Բանկի պարտավորությունները ֆիզիկական անձանց ավանդների գծով 4,000 հազար դրամ ընդհանուր գումարով (մինչև 2,000 հազար դրամ արտարժույթով ավանդների դեպքում) Բանկի սնանկացման և բանկային արտոնագրի հետկանչման դեպքում:

31. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՄՄ 24 «Կապակցված կողմերի բացահայտում» ստանդարտի, կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Բանկի կապակցված կողմերն են՝ նրա և դուստր ընկերությունների բաժնետերերը, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձինք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

2013թ. դեկտեմբերի 31-ի և 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալի 55.5% (1,272,956 հազար դրամ) պատկանում է Սուքիասյաններին, որոնք հանդիսանում են Բանկի վերջնական վերահսկող:

Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկին են պատկանում բաժնետոմսերի 25%-ը գումարած մեկ բաժնետոմս:

Փոխկապակցված կողմերի հետ գործարքները, մնացորդները, եկամուտներն ու ծախսերը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ հետևյալն են.

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
	Բաժնետերեր	Հիմնական ղեկավար անձնակազմ	Դուստր ընկերություններ և ընկերություններ որտեղ Բանկ ունի ներդրում
Հաճախորդներին տրված վարկեր			
Հունվարի 1-ի դրությամբ վճարման ենթակա վարկեր, համախառն	749,238	70,701	96,184
Տարվա ընթացքում տրված վարկեր	326,486	52,254	55,005
Տարվա ընթացքում վարկերի մարում	(512,704)	(80,380)	(91,189)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ վճարման ենթակա վարկեր, համախառն	563,020	42,575	60,000
Նվազեցված՝ արժեզրկումից կորուստ	(61,220)	(660)	(602)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ վճարման ենթակա վարկեր	501,800	41,915	59,398
Վարկերի գծով տոկոսային եկամուտ	59,993	3,108	14,754

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2013 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Բաժնետերեր	Հիմնական դեկավար անձնակազմ	Դուստր ընկերություններ և ընկերություններ որտեղ Բանկ ունի ներդրում
Վարկերի գծով կոուստների արժեզրկման գծով մասնահանումներ	(25,123)	401	4,749
Հաճախորդներին վճարման ենթակա գումարներ			
Ավանդներ հունվարի 1-ի դրությամբ	615,659	15,005	123
Տարվա ընթացքում ներդրված ավանդներ	5,345,155	281,814	-
Տարվա ընթացքում մարված ավանդներ	(5,698,868)	(260,927)	(123)
Ավանդներ դեկտեմբերի 31-ի դրությամբ	261,946	35,892	-
Տոկոսային ծախս ավանդների գծով	9,487	374	-
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ			
Հունվարի 1-ի դրությամբ	4,620,716	-	49,197
Ավելացումներ	801,383	-	5,053,702
Նվազումներ	(2,767,665)	-	(4,841,323)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,654,434	-	261,576
Տոկոսային ծախս	384,284	-	17,441
 Հիմնական միջոցների ձեռքբերում	 36,717	 -	 36,717
Տրամադրված երաշխիքներ	85,628	-	85,628
 Այլ ծախսեր			
Կոմիսիոն և այլ միջնորդավճարների գծով եկամուտ	7,694	698	361
Գովազդային ծախսեր	48,785		
Ապահովագրական ծախսեր	58,971	-	-
Կանխիկի հավաքագրման գծով ծախսեր	-	-	240,000
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	104,300	-	-
Գործուղման ծախսեր	-	-	-
Այլ ծախսեր	6,680	-	-

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2013 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Բաժնետերեր	Հիմնական դեկավար անձնակազմ	Դուստր ընկերություններ և ընկերություններ որտեղ Բանկ ունի ներդրում
Հաճախորդներին տրված վարկեր			
Հունվարի 1-ի դրությամբ վճարման ենթակա վարկեր, համախառն	609,520	149,302	142,440
Տարվա ընթացքում տրված վարկեր	612,841	34,578	-
Տարվա ընթացքում վարկերի մարում	(473,123)	(113,179)	(46,256)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ վճարման ենթակա վարկեր, համախառն	749,238	70,701	96,184
Նվազեցված՝ արժեզրկումից կորուստ	(36,097)	(1,061)	(4,809)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ վճարման ենթակա վարկեր	713,141	69,640	91,375
Վարկերի գծով տոկոսային եկամուտ	103,771	5,730	10,975
Վարկերի գծով կորուստների արժեզրկման գծով մասնահանումներ/(վերականգնումներ)	12,703	(1,179)	2,672
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ			
Ավանդներ հունվարի 1-ի դրությամբ	274,164	53,122	182
Տարվա ընթացքում ներդրված ավանդներ	8,275,109	323,519	532,574
Տարվա ընթացքում մարված ավանդներ	(7,933,614)	(361,636)	(532,633)
Ավանդներ դեկտեմբերի 31-ի դրությամբ	615,659	15,005	123
Տոկոսային ծախս ավանդների գծով	39,632	594	-
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ			
Հունվարի 1-ի դրությամբ	2,888,514	-	184,553
Ավելացումներ	3,462,499	-	2,499,714
Նվազումներ	(1,730,297)	-	(2,635,070)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,620,716	-	49,197
Տոկոսային ծախս	403,937	-	4,907
Հիմնական միջոցների ձեռքբերում	13,021	-	-
Տրամադրված երաշխիքներ	80,716	-	-

Այլ ծախսեր

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2013 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Բաժնետերեր	Հիմնական դեկավար անձնակազմ	Դուստր ընկերություններ և ընկերություններ որտեղ Բանկ ունի ներդրում
Կոմիսիոն և այլ միջնորդավճարների գծով եկամուտ	5,037	926	103
Գովազդային ծախսեր	89,914	-	-
Ապահովագրական ծախսեր	-	-	35,578
Կանխիկի հավաքագրման գծով ծախսեր	33,690	-	199,000
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	87,360	-	-
Գործուղման ծախսեր	24,153	15,420	-

32. Ֆինանսական գործիքների իրական արժեքը

Բանկը կատարել է իր ֆինանսական գործիքների գնահատում, ինչպես պահանջվում է ՖՀՄՄ 7 Ֆինանսական գործիքները. Բացահայտումներ ստանդարտով:

Գնանշված վաճառքի համար մատչելի ակտիվների գնահատված իրական արժեքները հիմնված են հաշվետվության օրվա դրությամբ շուկայական գների վրա առանց գործարքի ծախսերի նվազեցման: Բոլոր այլ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքները հաշվարկվում են՝ օգտագործելով զեղչված դրամական հոսքերը և հաշվետու օրվա դրությամբ նմանատիպ գործիքների զեղչային դրույքները:

Իրական արժեքի գնահատումը մոտավորապես համապատասխանում է այն գումարին, որով ֆինանսական գործիքը կարող է փոխանակվել իրազեկ, պատրաստական կողմերի միջև: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անորոշությունները և սուբյեկտիվ գնահատումը, իրական արժեքը չպետք է մեկնաբանվի որպես ակտիվների կամ պարտավորությունների անմիջապես վաճառքի գումար:

Բանկը չափում է ֆինանսական գործիքների իրական արժեքը ներկայացված ֆինանսական վիճակի հաշվետվությունում, օգտագործելով հետևյալ իրական արժեքի աստիճանակարգը, որն արտացոլում է գնահատման մեջ կիրառվող չափանիշների նշանակալիությունը.

- Մակարդակ 1: Համանման գնանշված գործիքի շուկայական արժեքը (չճշգրտված) ակտիվ շուկայում
- Մակարդակ 2: Գնահատման մեթոդներ հիմնված դիտարկելի չափանիշների վրա, ուղղակի (օր., ինչպես գները) կամ անուղղակի ձևով (օր., գներից բխող): Այս մակարդակը ներառում է այն գործիքները, որոնք գնահատվում են՝ օգտագործելով ակտիվ շուկայում նման գնանշված գործիքների շուկայական արժեքը, շուկայում գնանշված համանման կամ նմանատիպ գործիքների շուկայական արժեքը, որոնք ենթադրվում են ավելի քիչ ակտիվ շուկա, կամ այլ գնահատման մեթոդներ, որտեղ բոլոր նշանակալի չափանիշները ուղղակի կամ անուղղակի դիտարկելի են շուկայի տվյալներից:
- Մակարդակ 3: Գնահատման մեթոդներ, որոնք օգտագործում են նշանակալի ոչ դիտարկելի չափանիշներ: Այս մակարդակը ներառում է բոլոր գործիքները, որտեղ գնահատման մեթոդը ներառում է չափանիշներ, որոնք հիմնված չեն դիտարկելի տվյալների վրա և ոչ դիտարկելի չափանիշները ունեն նշանակալի ազդեցություն գործիքների գնահատման մեջ: Այս մակարդակը ներառում է այն գործիքները, որոնք գնահատվում են՝ հիմնվելով շուկայական գնի վրա, որտեղ նշանակալի ճշգրտումներ կամ ենթադրություններ են անհրաժեշտ գործիքների տարբերությունները արտացոլելու համար:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2013 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Բանկի ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքը՝ չափված իրական արժեքով շարունակական հիմունքով.
Բանկի ֆինանսական ակտիվներից և ֆինանսական պարտավորություններից մի քանիսը չափվում են իրական արժեքով՝ յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի վերջին: Հետևյալ աղյուսակը տրամադրում է տեղեկատվություն այդ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքների որոշման վերաբերյալ (մասնավորապես գնահատման տեխնիկաները և մուտքային տվյալները):

Ֆինանսական ակտիվներ/ ֆինանսական պարտավորություններ	Իրական արժեքը	Իրական արժեքի հիերարխիա	Գնահատման տեխնիկա(ներ) և հիմնական մուտքային տվյալ(ներ)	Էական ոչ դիտարկելի մուտքային տվյալ(ներ)	Ոչ դիտարկելի մուտքային տվյալների հարաբերակցություն նր իրական արժեքին
	2013 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
ՀՀ պետական արժեթղթեր	2,375,194	693,754	Մակարդակ 2	Ձեռքված դրամական հոսքեր	կ/չ
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	4,624,479	4,037,132	Մակարդակ 2	Նախասահմանված դրամական հոսքերը գեղչված են այն դրույքաչափով, որն արտացոլում է մինչև մարման ժամկետն ընկած շուկայի եկամտաբերությունը Ձեռքված դրամական հոսքեր	կ/չ
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ		20,030	Մակարդակ 2	Նախասահմանված դրամական հոսքերը գեղչված են այն դրույքաչափով, որն արտացոլում է մինչև մարման ժամկետն ընկած շուկայի եկամտաբերությունը Ձեռքված դրամական հոսքեր Ապագա դրամական հոսքերը գնահատված են հիմք ընդունելով գնահատված ապագա փոխարժեքները և պայմանագրերի ապագա ամսաթվերը՝ գեղչված տարբեր կոնտրագենտների վարկային ռիսկերը արտացոլող դրույքաչափով Ձեռքված դրամական հոսքեր	կ/չ
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	6,740	8,012		Ապագա դրամական հոսքերը գնահատված են հիմք ընդունելով գնահատված ապագա փոխարժեքները և պայմանագրերի ապագա ամսաթվերը՝ գեղչված տարբեր կոնտրագենտների վարկային ռիսկերը արտացոլող դրույքաչափով	կ/չ

Այստեղ ներկայացված գնահատումները պարտադիր կերպով չեն արտացոլում այն գումարները, որոնք Բանկը կարող է ստանալ որոշակի գործիքի շուկայական փոխանակման արդյունքում: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է տրամաբանորեն մեկնաբանել շուկայական տվյալները, գնահատված իրական արժեքը որոշելու համար: Հայաստանի Հարապետության շուկան կարելի է բնութագրել որպես զարգացող, և տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել ֆինանսական շուկաներում գործունեության ծավալները: Շուկայի գնանշումները կարող են հնացած լինել կամ արտացոլել վաճառքի գործարքների կրճատում և արդյունքում չեն արտացոլի ֆինանսական գործիքների իրական արժեքները: Ղեկավարությունն օգտագործել է շուկայի ամբողջ հասանելի տեղեկատվությունը ֆինանսական գործիքների իրական արժեքը գնահատելիս:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս իրական արժեքով արտացոլված ֆինանսական գործիքների վերլուծությունը ներկայացնելով այն գործիքները, որոնց իրական արժեքը հիմնված է գնանշված շուկայական արժեքի վրա (Մակարդակ 1) կամ հաշվարկվում է օգտագործելով գնահատման մեթոդները, որտեղ բոլոր չափանիշները դիտարկելի են շուկայում (Մակարդակ 2):

Հաշվետու ժամանակահատվածում տեղի չեն ունեցել փոխանցումներ Մակարդակ 1-ից 2: Իրական արժեքի գնահատումը մոտավորապես համապատասխանում է այն գումարին, որով ֆինանսական գործիքը կարող է փոխանակվել իրագրեկ, պատրաստական կողմերի միջև պարզաձև ձևով հեռավորության գործարքում: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անորոշությունները և սուբյեկտիվ գնահատումը, իրական արժեքը չպետք է մեկնաբանվի որպես ակտիվների կամ պարտավորությունների անմիջական վաճառքի գումար:

Ակնկալվող դրամական հոսքերի գեղջման նպատակով օգտագործված տոկոսադրույքները հիմնված են պետական պարտատոմսերի եկամտաբերության կորի վրա հաշվետու ամսաթվի դրությամբ, գումարած գործիքի արժույթը, ժամկետայնությունը և կոնտրագենտի վարկային ռիսկը՝ հետևյալ կերպ

	<u>2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</u>	<u>2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</u>
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	7.9% - 11.0%	8.7% - 14.5%

Իրական արժեք և հաշվեկշռային արժեք

Ֆիքսված տոկոսադրույքով գործիքների իրական արժեքը սովորաբար հավասար է դրանց հաշվեկշռային արժեքին: Ֆիքսված տոկոսադրույքով գործիքների գնահատված իրական արժեքը հիմնված ապագա գնահատված դրամական հոսքերի վրա, որոնք պետք է ստացվեն՝ համանման վարկային ռիսկ և մնացած մարման ժամկետ ունեցող նոր գործիքների դեպքում գեղջվելով ընթացիկ տոկոսադրույքներից: Վարկերի հաշվեկշռային արժեքը մոտավորապես հավասար է դրանց իրական արժեքին:

Ակտիվ շուկայում չգնանշված՝ ֆիքսված տոկոսադրույքով ավանդների և այլ փոխառությունների գնահատված իրական արժեքը հիմնված է դրանց գեղջված դրամական հոսքերի վրա՝ օգտագործելով համանման մարման ժամկետներով նոր պարտքերի գծով գեղջված տոկոսադրույքները: Ավանդների և այլ փոխառությունների հաշվեկշռային արժեքը մոտավորապես հավասար է դրանց իրական արժեքին:

33. Կապիտալի ռիսկի կառավարում

Բանկը կառավարում է իր կապիտալն՝ ապահովելու Բանկի գործունեության անընդհատության սկզբունքը միևնույն ժամանակ առավելագույնի հասցնելով շահագրգիռ կողմերի հատույցը ներգրաված և սեփական միջոցների հավասարակշռության օպտիմալացման ճանապարհով:

Բանկի կապիտալի կառուցվածքը բաղկացած է պարտքից և բաժնետիրական կապիտալը տնօրինողներին բաշխման ենթակա սեփական կապիտալից, որն իրենից ներկայացնում է թողարկված կապիտալը, պահուստները և չբաշխված շահույթը, ինչպես բացահայտված է սեփական կապիտալի փոփոխությունների մասին հաշվետվությունում:

Տնօրինությունը վերանայում է կապիտալի կառուցվածքը կիսամյակային կտրվածքով: Բանկի կապիտալի համարժեքությունը սահմանվում և վերահսկվում է՝ օգտագործելով ՀՀ ԿԲ կողմից սահմանված սահմանաչափերը: Որպես նման վերանայման մի մաս, Խորհուրդը դիտարկում է կապիտալի ինքնարժեքը և կապիտալի յուրաքանչյուր դասին առնչվող ռիսկերը: Խորհրդի առաջարկությունների հիման վրա Բանկն իր ընդհանուր կապիտալի կառուցվածքը կառուցում է շահութաբաժինների վճարման, նոր բաժնետոմսերի թողարկման, ինչպես նաև պարտքի թողարկման միջոցով: Ի լրումն, Բանկը կառավարում է իր կապիտալը՝ պայմանագրային պահանջների իրականացման համար:

ՀՀ կենտրոնական բանկը Բանկի համար սահմանում և վերահսկում է կապիտալի պահանջները: Ըստ ՀՀ ԿԲ կողմից սահմանված՝ ներկայումս գործող կապիտալի պահանջների, Բանկը 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պետք է ապահովի 5,000,000 հազար ՀՀ դրամ նվազագույն բաժնետիրական կապիտալ (2012թ. դեկտեմբերի 31-ին՝ 5000,000 հազար ՀՀ դրամ) իսկ կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցությունը՝ 12% (2012թ. դեկտեմբերի 31-ին՝ 12%):

Հետևյալ աղյուսակը վերլուծում է Բանկի կանոնակարգային կապիտալի հարաբերակցությունը՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված սկզբունքներին:

(հազար դրամ)	31 դեկտեմբերի 2013թ. աուդիտ չարված	31 դեկտեմբերի 2012թ. աուդիտ չարված
Հիմնական կապիտալ	8,284,674	7,867,644
Լրացուցիչ կապիտալ	1,069,390	178,879
Ընդհանուր կապիտալ	9,354,064	8,046,523
Ռիսկով կշռված ակտիվներ	63,813,398	54,185,340
Ընդհանուր կապիտալը՝ ռիսկով կշռված ակտիվներքում տոկոսային արտահայտությամբ (ընդհանուր կապիտալի հարաբերակցություն)	14,66%	14.85%
Համապատասխանություն նվազագույն բաժնետիրական կապիտալի պահանջներին	Տարվա ընթացքում խախտումներ չեն արձանագրվել	Տարվա ընթացքում խախտումներ չեն արձանագրվել

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ըստ ռիսկերի կշիռների՝ դասակարգված համաձայն յուրաքանչյուր ակտիվի և պայմանագրային հետ առնչվող վարկային, շուկայական և գործառնական ռիսկերի գնահատման, և հաշվի առնելով ցանկացած ընդունելի ապահովվածությունը և երաշխիքները: Համանման մոտեցում է ձևավորված նաև չճանաչված պայմանագրային պարտավորությունների գծով՝ որոշակի ճշգրտումներ կատարելով հնարավոր կորուստների պայմանական բնույթն արտացոլելու նպատակով:

Ընդհանուր կապիտալը կազմված է հիմնական կապիտալից, որը ներառում է կանոնադրական կապիտալը, չբաշխված շահույթը, այդ թվում ընթացիկ տարվա շահույթը, գլխավոր պահուստը: Ընդհանուր կապիտալը հաշվարկվում է ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտների պահանջների համաձայն: Կապիտալի մեկ այլ բաղադրիչ է լրացուցիչ կապիտալը, որն ընդգրկում է վերագնահատման պահուստները:

34. Ռիսկերի կառավարում

Բանկային գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանություն, որը ենթադրում է ռիսկայնության աստիճանների որոշակի համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում: Ռիսկի կրումը ֆինանսական գործունեության անբաժանելի մասն է, ընդ որում գործառնական ռիսկերը գործունեության ընթացքում անխուսափելի են: Այդուհանդերձ, Բանկի նպատակն է հասնել ռիսկերի և օգուտների միջև համապատասխան հավասարակշռության՝ ռիսկ-եկամուտ օպտիմալ հարաբերակցության միջոցով՝ նվազագույնի հասցնելով Բանկի ֆինանսական վիճակի վրա անցանկալի ազդեցությունները:

Բանկի ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է՝ ախտորոշել, բացահայտել, գնահատել և վերլուծել ռիսկերը, սահմանել ռիսկի համապատասխան սահմանաչափեր և հսկողություն, արժանահավատ և նորացված տեղեկատվական համակարգերի միջոցով վերահսկել ռիսկերը և սահմանաչափերի պահպանումը: Բանկը պարբերաբար վերանայում է ռիսկերի կառավարման

քաղաքականությունը և համակարգերը՝ շուկայում, արտաքին միջավայրում տեղի ունեցած փոփոխություններն արտացոլելու և առկա լավագույն փորձին համապատասխանեցնելու համար:

Ռիսկերի կառավարման կառուցվածք

Ռիսկերի բացահայտման և վերահսկման պատասխանատու մարմիններն են՝

Խորհուրդ

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման ընդհանուր վերահսկողության, ռազմավարության հաստատման և ռիսկերի կառավարման սկզբունքների հաստատման համար: Խորհուրդը տրամադրում է սկզբունքներ ռիսկի ամբողջական կառավարման համար, ինչպես նաև քաղաքականություն՝ հատուկ բնագավառների վերաբերյալ, ինչպիսիք են փոխարժեքային (արտարժույթային) ռիսկը, տոկոսադրույքի ռիսկը, վարկային ռիսկը, ածանցյալ և ոչ ածանցյալ ֆինանսական գործիքների կիրառումը:

Վարչություն

Վարչությունը պատասխանատու է ռիսկերի կառավարման գործընթացի անխափան իրականացման և վերահսկման համար: Վարչությունը ընդհանուր պատասխանատվություն է կրում ռիսկերի կառավարման ռազմավարության, սկզբունքների, հայեցակարգերի, քաղաքականության և սահմանների մշակման ու կիրառման համար: Այն պատասխանատու է ռիսկերի կառավարման խնդիրների լուծման համար և վերահսկում է դրանց նկատմամբ ընդունված համապատասխան որոշումների կատարումը:

Ռիսկերի կառավարման ստորաբաժանում

Ռիսկերի կառավարումն իրականացվում է «Ռազմավարության և Ռիսկերի Կառավարման Վարչության» (ՌՌԿՎ) կողմից՝ ըստ Խորհրդի հաստատված քաղաքականության: ՌՌԿՎ կողմից գնահատվում, բացահայտվում, վերլուծվում և հեջավորվում են ռիսկերը՝ գործառնական ստորաբաժանումների հետ սերտ համագործակցության միջոցով: Ռիսկերի կառավարման ստորաբաժանումը պատասխանատու է ռիսկերի կառավարման սկզբունքների վերահսկման, քաղաքականության և Բանկի ռիսկի սահմանաչափերի համար, ինչպես նաև ռիսկերի կառավարման հետ կապված գործընթացների ներդրման և իրականացման համար:

Ներքին աուդիտ

Ներքին աուդիտը պատասխանատու է ռիսկերի կառավարման անկախ գնահատման և հսկողության ընդհանուր միջավայրի համար: Բանկի կողմից իրականացվող ռիսկերի կառավարման գործընթացը յուրաքանչյուր տարի ստուգման է ենթարկվում ներքին աուդիտի կողմից, որը ստուգում է ինչպես ընթացակարգերի ամբողջականությունը, այնպես էլ Բանկի գործունեության համապատասխանությունը ընթացակարգերին: Ներքին աուդիտը անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է ղեկավարության հետ և իր եզրակացություններն ու առաջարկները ներկայացնում է կառավարման համապատասխան մարմիններին:

Ռիսկերի գնահատման և ռիսկերի ներկայացման համակարգեր

Բանկի ռիսկերի գնահատման ընթացքում հաշվի է առնվում ինչպես սպասվող կորուստը, որն իրենից ներկայացնում է գործունեության ընթացքում կորուստների հնարավոր միջին մակարդակ, այնպես էլ հնարավոր անսպասելի կորուստները, որոնք իրենցից ներկայացնում են սպասվող միջին մակարդակը գերազանցող կորուստներ: Բանկը նաև մոդելավորում է քիչ հավանական, սակայն պոտենցիալ էական ազդեցություն ունեցող «վատթարագույն դեպքերը»:

Ռիսկերի մոնիթորինգը և կառավարումը հիմնականում հիմնված է Բանկի կողմից սահմանված ռիսկերի սահմանաչափերի վրա: Այս սահմանաչափերն արտացոլում են Բանկի գործարար ռազմավարությունը և շուկայական պայմանները, որոնցում գործում է Բանկը, ինչպես նաև Բանկի համար ընդունելի ռիսկի մակարդակը, ընդ որում հատուկ ուշադրություն է դարձվում առանձին ոլորտների վրա:

Գործունեության առանձին տեսակների գծով ստացվող տեղեկատվությունն ուսումնասիրվում և մշակվում է ռիսկերի վերլուծության, վերահսկողության և գնահատման նպատակով: Տվյալ տեղեկատվության հիման վրա կազմված հաշվետվությունները պարունակում են տեղեկություններ վարկային ռիսկի չափի, վարկային ցուցանիշների կանխատեսվող մակարդակի, ռիսկի սահմանված սահմանաչափերի, դրանցից

բացառությունների, VaR գնահատականի, իրացվելիության ցուցանիշների և ընդհանուր ռիսկի մակարդակի փոփոխության վերաբերյալ: Բանկի վարչությունը յուրաքանչյուր ամիս ստանում է ռիսկերի վերաբերյալ մանրամասն հաշվետվություն ըստ ոլորտների, հաճախորդների և աշխարհագրական շրջանների, որը պարունակում է ամբողջ անհրաժեշտ տեղեկատվությունը Բանկի ռիսկերի գնահատման և համապատասխան որոշումների կայացման համար:

Յուրաքանչյուր օր անց է կացվում ղեկավարության կարճատև խորհրդակցություն, անհրաժեշտության դեպքում Բանկի այլ աշխատակիցների մասնակցությամբ, որտեղ քննարկվում են սահմանված սահմանաչափերի պահպանումը, վերլուծվում է ռիսկի մակարդակը, ներդրումները, իրացվելիությունը և այլ ընթացիկ հարցեր:

Ռիսկի կենտրոնացումներ

Ռիսկի կենտրոնացումներն առաջանում են, երբ մի շարք փոխառուներ իրականացնում են նմանատիպ գործունեություն, կամ գործունեությունը ծավալվում է միևնույն աշխարհագրական շրջանում, կամ նրանք ունեն համանման տնտեսական հատկանիշներ, և տնտեսական, քաղաքական կամ այլ պայմաններում փոփոխության արդյունքում ցուցաբերում են նմանատիպ ազդեցություն այդ փոխառուների պայմանագրային պարտավորությունների կատարման ունակության վրա: Ռիսկի կենտրոնացումները արտացոլում են Բանկի գործունեության արդյունքների զգայունությունը պայմանների փոփոխություններին, որոնք ազդեցություն են ունենում կոնկրետ բնագավառի կամ աշխարհագրական շրջանի վրա: Կենտրոնացումների բարձր մակարդակից խուսափելու նպատակով Բանկի քաղաքականությունը և գործընթացները ներառում են հատուկ սկզբունքներ ուղղված դիվերսիֆիկացված պորտֆելի պահպանմանը, ինչպես նաև իրականացվում է կենտրոնացումների հաստատված սահմանաչափերի պահպանման անընդհատ մոնիտորինգ և կառավարում:

Վարկային ռիսկ

Բանկի գործունեությունը ենթարկվում է վարկային ռիսկի՝ կապված պարտատիրոջ կողմից պարտավորության չկատարելու հետ, որը Բանկին կորուստներ կարող է պատճառել: Վարկային ռիսկը Բանկի կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով էլ Բանկն այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկում: Վարկային ռիսկը կապված է հիմնականում վարկային գործառնությունների հետ, որոնք հանգեցնում են վարկերի տրամադրմանը և ներդրումային գործունեության հետ, որոնք Բանկի ակտիվների պորտֆելի մեջ ավելացնում են պարտքային արժեթղթեր և այլ պարտքային գործիքներ: Ռիսկն առկա է նաև արտահաշվեկշռային ֆինանսական գործիքներում, ինչպիսիք են վարկային պարտավորությունները: Վարկային ռիսկի կառավարումը և հսկողությունը իրականացվում է Բանկի ՌՌԿՎ և վարկային ստորաբաժանման կողմից, որի վերաբերյալ հաշվետվությունները պարբերաբար ներկայացվում են Բանկի խորհրդին և վարչությանը:

Բանկի ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը լավագույնս ներկայացնում է նրանց վարկային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը՝ առանց հաշվի առնելու պահվող գրավը կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցները:

Վարկային ռիսկի առավելագույն չափը: Բանկի վարկային ռիսկի առավելագույն չափը զգալիորեն տատանվում է և կախված է և՛ անհատական ռիսկերից, և՛ ընդհանուր շուկայական տնտեսության ռիսկերից:

բՀետևյալ աղյուսակը ներկայացնում է վարկային ռիսկի առավելագույն չափը հաշվեկշռային ֆինանսական ակտիվների գծով: Հաշվեկշռային ֆինանսական ակտիվների գծով առավելագույն ռիսկը հավասար է այդ ակտիվների հաշվեկշռային արժեքին նախքան որևէ հաշվանցում կամ գրավի ազդեցություն հաշվի առնելը:

(հազար դրամ)	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	9,400,452	8,100,657
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներ	2,521,027	5,244,878
Հակադարձ հետգնման պայմանագրեր	1,379,833	1,348,482
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	-	20,030
Հաճախորդներին տրված վարկեր	40,693,742	33,379,320
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ		
- Բանկի կողմից պահվող	2,521,046	864,758
- Հետգնման պայմանագրերով գրավադրված	4,624,479	4,037,132
Այլ ակտիվներ	82,620	65,065
	61,223,199	53,060,322

Բանկն ունի վարկերի դիմաց ապահովվածության նպատակով հաճախորդներից ստացված անշարժ գույքի, ակտիվների գծով այլ արժեթղթերի, երաշխիքների տեսքով ստացված գրավներ: Դրանց արժեքների գնահատականը հիմնված է փոխառության պահին գնահատված գրավի արժեքի հիման վրա, և որպես կանոն չեն վերանայվում բացառությամբ այն դեպքերի, երբ վարկն առանձին վերցրած համարվում է արժեզրկված:

Որպես կանոն, գրավ չի պահվում ածանցյալ ֆինանսական գործիքներով առկա հայցերի, արժեթղթերում ներդրումների, բանկերին տրված վարկերի մասով, բացառությամբ այն դեպքերի, երբ արժեթղթերը պահվում են որպես հակադարձ հետգնման և արժեթղթերի փոխառությունների գործառնությունների մաս:

Վարկային ռիսկի առավելագույն կուտակումները

Բանկի ակտիվների և պարտավորությունների աշխարհագրական համակենտրոնացումը 2013թ. և 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված է ստորև՝

(հազար դրամ)	2013թ. դեկտեմբերի 31-ին			
	Հայաստանի Հանրապետություն	Ոչ ՏՀԶԿ երկրներ	ՏՀԶԿ երկրներ	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	13,470,152	2,245,224	2,151,365	17,866,741
Բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ստացման ենթակա գումարներ	2,408,720	-	112,307	2,521,027
Հակադարձ հետգնման պայմանագրեր	1,379,833	-	-	1,379,833
Հաճախորդներին տրված վարկեր	40,693,742	-	-	40,693,742
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ				
- Բանկի կողմից պահվող	2,519,331	-	1,715	2,521,046
- Հետգնման պայմանագրերով գրավադրված	4,624,479	-	-	4,624,479
Այլ ֆինանսական ակտիվներ	82,620	-	-	82,620
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	65,178,877	2,245,224	2,265,387	69,689,488

(հազար դրամ)

	2012թ. դեկտեմբերի 31-ին			
	Հայաստանի Հանրապետու- թյուն	Ոչ ՏՀԶԿ երկրներ	ՏՀԶԿ երկրներ	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	12,540,847	2,447,404	-	14,988,251
Բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ստացման ենթակա գումարներ	5,242,651	1,696	531	5,244,878
Հակադարձ հետգնման պայմանագրեր	1,348,482	-	-	1,348,482
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		20,030	-	20,030
Հաճախորդներին տրված վարկեր	33,378,693	627	-	33,379,320
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	862,940	-	1,818	864,758
Հետգնման համաձայնագրերով գրավադրված արժեթղթեր	4,037,132	-	-	4,037,132
Այլ ֆինանսական ակտիվներ	65,065	-	-	65,065
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	57,475,810	2,469,757	2,349	59,947,916

Ռիսկի սահմանաչափերի վերահսկման և մեղմացման քաղաքականություններ

Բանկը կարգավորում է վարկային ռիսկի մակարդակները՝ մեկ փոխառուի կամ փոխառուների խմբի, ինչպես նաև վարկավորման ճյուղային կամ աշխարհագրական սեգմենտների գծով ընդունելի ռիսկի գումարների սահմանաչափեր սահմանելով:

Նման ռիսկերը պարբերաբար վերահսկվում են և դրանց կառավարումը ենթակա է վերանայման տարեկան կամ ավելի հաճախակի կտրվածքով: Ըստ արդյունաբերության ճյուղերի և երկրների վարկային ռիսկի սահմանաչափերը հաստատվում են Բանկի Խորհրդի կողմից:

Մեկ վարկառուի գծով վարկային ռիսկի չափը, ներառյալ բանկերը և ֆինանսական կազմակերպությունները, ավելի սահմանափակված է Բանկի Խորհրդի կողմից սահմանված լրացուցիչ սահմանաչափերով հաշվեկշռային և հետհաշվեկշռային ռիսկերի համար, ինչպես նաև օրական սահմանաչափերով կապված առևտրային գործարքների հետ, ինչպիսիք են արտարժույթային ֆորվարդի պայմանագրերը: Ընթացիկ ռիսկերի ենթարկվելու սահմանաչափերը վերահսկվում են օրական կտրվածքով: Վարկային ռիսկը նաև կառավարվում է վարկառուների և պոտենցիալ վարկառուների՝ մայր գումարի և տոկոսների վճարման կարողությունը պարբերաբար վերլուծելով և անհրաժեշտության դեպքում վարկի տրամադրման սահմանաչափերը փոխելով:

Ստորև ներկայացված են հատուկ հսկողության և զսպողական մի քանի այլ միջոցներ:

Գրավ

Բանկը կիրառում է բազմաթիվ միջոցներ պարտքային ռիսկը զսպելու համար: Համընդհանուր գործելակերպ է հանդիսանում և հիմնական միջոցներից մեկն է համարվում տրամադրված դրամական միջոցների դիմաց գրավ վերցնելը: Բանկը կանոններ է սահմանում գրավի հատուկ տեսակների ընդունելի լինելու կամ ռիսկերի զսպման վերաբերյալ: Վարկերի համար գրավի հիմնական տեսակներն են.

- հիպոթեքային պայմանագրերով գրավադրվող անշարժ գույք,
- կազմակերպությունների գործառնական ակտիվները՝ շենքերը, պաշարները և այլ հիմնական միջոցներ,
- ֆինանսական գործիքներ՝ պարտքային և բաժնային արժեթղթեր
- դրամական միջոցներ և ոսկյա իրեր

Կազմակերպությունների երկարաժամկետ ֆինանսավորումը և վարկավորումը հիմնականում ապահովվում են, ֆիզիկական անձանց գծով վերաձևակերպվող վարկային գծերը հիմնականում չեն ապահովվում: Ի լրումն, վարկային կորուստը նվազագույնի հասցնելու համար Բանկը վարկառուից

լրացուցիչ երաշխիքներ է պահանջում, հենց որ համապատասխան անհատական վարկերի արժեզրկման հատկանիշներ են նկատվում:

Վարկերից տարբեր ֆինանսական ակտիվներ ապահովող գրավները որոշվում են ֆինանսական գործիքի բնույթով: Հիմնականում ֆինանսական կազմակերպություններին, հատկապես բանկերին, վարկեր և կանխավճարներ տրամադրելու համար գրավներ չեն պահանջվում: Բացառություն են կազմում այն գրավները, որոնք ձեռք են բերվել ըստ հետգնման պայմանագրերի և արժեթղթերի փոխառության գործարքներից:

Պարտատոմսերը և այլ պարտքային արժեթղթերը հիմնականում չեն ապահովվում:

Համախառն վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ ապահովվածության.

(հազար դրամ)	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ. դեկտեմբերի 31- ի դրությամբ
Անշարժ գույքի գրավով ապահովված վարկեր	18,506,766	16,493,824
Փոխադրամիջոցներով (մեքենաներով) ապահովված վարկեր	3,872,395	2,176,317
Սարքավորումներով ապահովված վարկեր	354,827	433,667
Պաշարների գրավով ապահովված վարկեր	154,891	141,639
Երաշխիքով ապահովված վարկեր	7,300,346	4,114,261
Կանխիկով ապահովված վարկեր	1,432,915	266,786
Ոսկու գրավով ապահովված վարկեր	5,448,944	6,926,883
Ոսկու ստանդարտացված ձուլակտորներով ապահովված գրավներ	28,653	-
Այլ գրավ	58,518	82,037
Չապահովված վարկեր	4,352,932	3,406,383
Նվազեցված՝ արժեզրկման կորուստների պահուստը	(817,445)	(662,477)
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	40,693,742	33,379,320

Վերը նշված աղյուսակում ներկայացված արժեքները վարկերի հաշվեկշռային արժեքներն են, և պարտադիր չէ, որ ներկայացնեն գրավների իրական արժեքը: Գրավների շուկայական արժեքների գնահատումները հիմնված են գրավի գնահատման վրա ըստ տրամադրված վարկերի ամսաթվի: Հիմնականում դրանք չեն թարմացվում մինչև վարկերը չգնահատվեն որպես անհատապես արժեզրկված:

Վարկերին առնչվող պայմանական պարտավորություններ

Այս գործիքների հիմնական նպատակը անհրաժեշտության դեպքում հաճախորդներին միջոցներ տրամադրելն է: Երաշխիքները և ակրեդիտիվները ենթակա են նույն պարտքային ռիսկին, ինչ վարկերը: Ապրանքային և թղթային ակրեդիտիվները՝ Բանկի գրավոր հավաստումներն են հաճախորդների անունից, որոնք թույլ են տալիս երրորդ անձանց գումարներ ստանալ բանկից հատուկ պայմանների կատարման դեպքում, ապահովված են դրանց հետ կապված ապրանքների առաքմամբ և հետևաբար դրանք ավելի ապահով են, քան ուղղակի տրամադրվող վարկերը: Վարկի տրամադրման պայմանական պարտավորություններն իրենցից ներկայացնում են վարկային գծերի չօգտագործած մասերը:

Սակայն հնարավոր վնասի իրական գումարն ավելի փոքր է, քան չօգտագործված վարկային գծերի ընդհանուր գումարը, քանի որ վարկային պարտավորությունները տրամադրվում են վարկառուների կողմից վարկերի տրամադրման որոշակի ստանդարտների պահպանման դեպքում: Բանկը հետևում է պարտավորությունների մարման ժամկետներին, քանի որ երկարաժամկետ պարտավորությունները պարունակում են ավելի բարձր վարկային ռիսկ, քան կարճաժամկետ պարտավորությունները:

Արժեզրկում և պահուստավորման քաղաքականություն

Վարկերի արժեզրկման գնահատման հիմնական հատկանիշներն են մայր գումարի կամ տոկոսների վճարումների 90 օրից ավել ուշացումները, վարկառուների դրամական հոսքերի հետ կապված

դժվարությունները, վարկային ռեյտինգների նվազումները, պայմանագրերի նախնական պայմանների խախտումները: Արժեզրկման գնահատումը կատարվում է անհատապես և խմբային եղանակով:

Արժեզրկման գծով պահուստի անհատական գնահատում

Բանկը որոշում է յուրաքանչյուր անհատապես նշանակալի վարկի համապատասխան պահուստի չափը անհատական հիմքով: Պահուստի գումարի որոշման ժամանակ հաշվի առնվող գործոններից են վարկառուի բիզնես ծրագրի վստահելիությունը, ֆինանսական դժվարությունները հաղթահարելու կարողությունը, ծրագրված հասույթները և սպասվող շահաբաժինների վճարումները անվճարունակության դեպքում, այլ ֆինանսական օգնության հնարավորությունը, գրավի իրացվելի արժեքը, սպասվող դրամական հոսքերի ժամկետները: Արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, եթե չկանխատեսված հանգամանքները չեն պահանջում հատուկ ուշադրություն:

Արժեզրկման գծով պահուստի խմբային գնահատում

Խմբային գնահատումը կատարվում է ոչ նշանակալի վարկերի գծով (ներառյալ վարկային քարտերը, հիպոթեքները և չապահովված սպառողական վարկերը), ինչպես նաև անհատապես նշանակալի վարկերի գծով, որոնց համար դեռ չկան արժեզրկման ակնհայտ հատկանիշներ: Արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսվա դրությամբ՝ դասակարգված յուրաքանչյուր խմբի համար առանձին:

Խմբային գնահատումը հաշվի է առնում այն արժեզրկման գումարը, որը հնարավոր է առաջանա պորտֆելում, նույնիսկ եթե անհատական գնահատման մեջ արժեզրկման օբյեկտիվ վկայություն չկա: Արժեզրկման կորուստները գնահատվում են հաշվի առնելով հետևյալ տեղեկատվությունը՝ պորտֆելում կորուստների պատմությունը, ընթացիկ տնտեսական իրավիճակը, կորուստն առաջանալու և որպես անհատապես արժեզրկված վարկ բացահայտվելու մոտավոր ժամկետը, արժեզրկման դեպքում սպասվող վճարումները:

Ֆինանսական երաշխիքների և ակրեդիտիվների արժեզրկման գնահատումը և պահուստավորումն իրականացվում է նույն կերպ՝ ինչ վարկերինը:

Ժամկետանց, բայց չարժեզրկված վարկեր

Ժամկետանց են համարվում այն վարկերը, որոնց գծով վճարումներն ուշացված են միայն մի քանի օրով:

Ժամկետանց վարկերի հիմնական մասը չի համարվում արժեզրկված:

Ժամկետանց, բայց անհատապես չարժեզրկված վարկերի ժամկետանց օրերի վերլուծությունն ըստ դասերի ներկայացվում է ծանոթագրություն 16-ում:

Անհատապես արժեզրկված վարկեր

Մինչև անհատապես գնահատված արժեզրկման պահուստներով գտելը հաճախորդներին տրամադրված անհատապես արժեզրկված վարկերը կազմում են 240,326 հազար դրամ (2012թ` 548,088 հազար դրամ) (ծան. 16):

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ Բանկի շահույթները կամ կապիտալը կամ նրա՝ իր գործունեության նպատակներին հասնելու կարողությունը կվատթարանան շուկայական տոկոսադրույթներում և գներում փոփոխությունների կամ դրանց անկայունության պատճառով: Շուկայական ռիսկն ընդգրկում է տոկոսադրույթի և արժույթային ռիսկերը: Փոփոխություններ տեղի չեն ունեցել Բանկի ռիսկերի գնահատման մոտեցումներում կամ ռիսկի աստիճանում, ինչպես նաև ռիսկերի կառավարման և չափման մեթոդներում:

Տոկոսադրույթի ռիսկ

Տոկոսադրույթի ռիսկը շուկայական տոկոսադրույթների փոփոխման բացասական ազդեցության հնարավորությունն է Բանկի գուտ տոկոսային եկամտի կամ կապիտալի տնտեսական արժեքի վրա: Տոկոսադրույթի ռիսկը ծագում է Բանկի ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների

հոսքերի և նրանց իրական արժեքի վրա տոկոսադրույքների փոփոխությունների ուղղակի ազդեցության հնարավորությունից: Բանկի Տնօրենների Խորհուրդը սահմանել է տոկոսադրույքների միջև տարբերությունների սահմանաչափ ժամկետային կտրվածքով: Դիրքերը վերահսկվում են և հեջավորման ռազամավարություն է օգտագործվում դրանց ռիսկայնությունը ընդունելի շրջանակներում պահելու համար:

Գնային ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքի արժեքը կտատանվի շուկայական գների փոփոխության արդյունքում անկախ նրանից, թե փոփոխությունները հետևանք են առանձին արժեթղթին կամ դրա թողարկողին յուրահատուկ գործոնների, թե շուկայում շրջանառվող բոլոր արժեթղթերի վրա ազդող գործոնների: Բանկը ենթարկվում է իր ապրանքների կամ ծառայությունների շուկայական գների փոփոխության ռիսկին, որոնք ենթակա են թե՛ ընդհանուր և թե՛ յուրահատուկ շուկայական տատանումների:

Բանկը կառավարում է գնային ռիսկը այն պոտենցիալ կորուստների պարբերաբար գնահատման միջոցով, որոնք կարող են առաջանալ շուկայական պայմանների անբարենպաստ փոփոխություններից, ինչպես նաև սահմանելով և պահպանելով համապատասխան վնասների կանխարգելման սահմանաչափեր և միջակայքերի (մարժաներ) և գրավի պահանջներ: Բանկի չտրամադրված վարկային պարտավորվածությունների գծով հնարավոր վնասների գումարը հավասար է այդ պարտավորվածությունների ընդհանուր գումարին: Այնուամենայնիվ, վնասի հավանական գումարը ավելի փոքր է քան այդ գումարը, քանի որ պարտավորվածությունների մեծ մասը պայմանական են՝ կախված մի շարք պայմաններից, որոնք սահմանված են վարկային պայմանագրերում:

Գնային ռիսկ

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս գուտ տոկոսային եկամտի և կապիտալի զգայունությունը տոկոսադրույքների հնարավոր փոփոխությունների նկատմամբ՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով: Զուտ տոկոսային եկամտի և կապիտալի զգայունությունը տոկոսադրույքներում ենթադրվող փոփոխությունների ազդեցությունն է մեկ տարվա գուտ տոկոսային եկամտի և կապիտալի վրա՝ 2013 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեկշռում հաշվառվող լողացող տոկոսադրույքով ոչ առևտրային ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով: Կապիտալի զգայունությունը վերլուծվում է ըստ ակտիվի կամ սկզբի իրացման ժամկետների: Կապիտալի ընդհանուր զգայունության և ըստ գործիքների մարման ժամկետայնության վերլուծությունը հիմնված է եկամտաբերության կորի զուգահեռ տեղաշարժի ենթադրության վրա:

2013թ.

(հազար դրամ)		Կապիտալի զգայունություն						Ընդամենը
		Փոփոխություններ հիմնական տոկոսադրույքներում	Զուտ տոկոսային եկամտի զգայունություն	Մինչև 6 ամիս	6 ամսից 1 տարի	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	
Արժույթ								
ՀՀ դրամ	100	-	1,701	2,688	105,747	218,736	(328,872)	
ԱՄՆ դոլար	100	(9,724)	-	-	-	-	(9,724)	
ՀՀ դրամ	(100)	-	1,717	2,724	110,058	246,071	360,570	
ԱՄՆ դոլար	(100)	9,724	-	-	-	-	9,724	

2012թ.

(հազար դրամ)	Փոփոխություններ հիմնական տոկոսադրույքներում	Կապիտալի զգայունություն					Ավելի քան 5 տարի	Ընդամենը
		Զուտ տոկոսային եկամտի զգայունություն	Մինչև 6 ամիս	6 ամսից 1 տարի	1 -ից 5 տարի			
ՀՀ դրամ	100	-	-	-	(34,779)	(162,787)		(197,566)
ԱՄՆ դոլար	100	(4,484)	-	-	-	-		(4,484)
ՀՀ դրամ	(100)	-	-	-	36,355	222,637		258,992
ԱՄՆ դոլար	(100)	4,484	-	-	-	-		4,484

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոփոխություններում փոփոխությունների հետևանքով: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով, և հեջավորման ռազմավարություն է օգտագործվում դիրքերը սահմանված շրջանակներում պահելու համար: Հետևյալ աղյուսակները ցույց են տալիս այն արտարժույթները, որոնք կարող են ազդել 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների և դրանց կանխատեսված դրամական հոսքերի վրա:

Արտարժույթի փոփոխության գծով ռիսկի ազդեցությունը Բանկի վրա առ 31 դեկտեմբերի 2013թ. ներկայացված է ստորև բերված աղյուսակում՝

(հազար դրամ)	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Ռուբլի	Այլ արժույթ	Ընդամենը
Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	7,183,114	5,240,581	2,601,857	2,611,267	229,922	17,866,741
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1,883,898	588,490	7,293	16,432	24,914	2,521,027
Հակադարձ հետգնման պայմանագրեր	1,379,833					1,379,833
Հաճախորդներին տրված վարկեր	25,000,047	15,693,695	-	-	-	40,693,742
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ						
- Բանկի կողմից պահվող	2,521,046	-	-	-	-	2,521,046
- Հետգնման պայմանագրերով գրավադրված	4,624,479	-	-	-	-	4,624,479
Այլ ֆինանսական ակտիվներ	22,833	50,834	8,953	-	-	82,620
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ	42,615,250	21,573,600	2,618,103	2,627,699	254,836	69,689,488
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
ՀՀ Կենտրոնական բանկից և ՀՀ կառավարությունից	2,522,985	-	-	-	-	2,522,985

(հազար դրամ)	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Ռուբլի	Այլ արժույթ	Ընդամենը
ստացված վարկեր						
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների հանդեպ	1,398,616	4,915,098	260,007	780	33	6,574,534
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և ավանդներ	2,324,959	1,768,763	-	-	-	4,093,722
Հետգնման պայմանագրեր	4,504,784	-	-	-	-	4,504,784
Պարտավորություններ հաճախորդների հանդեպ	24,308,710	16,045,786	3,623,832	309,451	103,997	44,391,776
Այլ ֆինանսական պարտավորություններ	77,720	92,462				170,182
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	35,137,774	22,822,109	3,883,839	310,231	104,030	62,257,983
Զուտ դիրք	7,477,476	(1,248,509)	(1,265,736)	2,317,468	150,806	7,431,505

Արտարժույթի փոխարժեքի գծով ռիսկի ազդեցությունը Բանկի վրա առ 31 դեկտեմբերի 2012թ. ներկայացված է ստորև բերված աղյուսակում՝

(հազար դրամ)	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Ռուբլի	Այլ արժույթ	Ընդամենը
Ակտիվներ						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների պարտավորություններ	6,415,462	4,333,229	2,567,238	1,467,147	205,175	14,988,251
Հակադարձ հետգնման պայմանագրեր	2,467,920	2,388,671	34,619	309,306	44,362	5,244,878
Հաճախորդներին տրված վարկեր	1,348,482	-	-	-	-	1,348,482
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	19,192,325	14,186,995	-	-	-	33,379,320
- Բանկի կողմից պահվող - Հետգնման պայմանագրերով գրավադրված Այլ ֆինանսական	864,758	-	-	-	-	864,758
	4,037,132	-	-	-	-	4,037,132
	49,366	12,851	2,848			65,065
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	34,375,445	20,921,746	2,604,705	1,776,453	249,537	59,927,886
Պարտավորություններ			-			
ՀՀ Կենտրոնական բանկից և ՀՀ կառավարությունից	3,559,005	-	-	-	-	3,559,005
Բանկերի և այլ	1,074,026	448,159	42,202	10,705	521	1,575,613

(հազար դրամ)	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Ռուբլի	Այլ արժույթ	Ընդամենը
Ֆինանսական կազմակերպությունների հանդեպ պարտավորություններ Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և ավանդներ	2,282,452	6,007,768	62,920	-	-	8,353,140
Հետգնման	4,255,724	-	-	-	-	4,255,724
Պարտավորություններ հաճախորդների հանդեպ	18,843,931	14,024,619	3,033,850	138,099	200,199	36,240,698
Այլ ֆինանսական պարտավորություններ	38,277	24,533				62,910
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	30,053,415	20,505,179	3,138,972	148,804	200,720	54,047,090
Զուտ դիրք	4,322,030	416,567	(534,267)	1,627,649	48,817	5,880,796

Արտարժույթի ռիսկի զգայունություն

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է Բանկի զգայունությունը ՀՀ դրամի՝ ԱՄՆ դոլարի, Եվրոյի, Ռուբլու փոխարժեքի 5% աճի կամ նվազման հանդեպ: Տվյալ 5%-ն իրենից ներկայացնում է այն զգայունության տոկոսը, որն օգտագործվում է արտարժույթային ռիսկը հիմնական ղեկավար անձնակազմին ներկայացնելիս և իրենից ներկայացնում է արտարժույթի փոխարժեքի ողջամտորեն հնարավոր փոփոխությունն ըստ ղեկավարության գնահատականի: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն վճարման ենթակա արտարժույթով գնանշված դրամական միավորները և ճշգրտում է դրանց փոխարկումը ժամանակաշրջանի վերջի դրությամբ՝ արտարժույթի փոխարժեքների 5% փոփոխության տեսանկյունից: Զգայունության վերլուծությունը ներառում է արտաքին վարկերը, որոնց դեպքում վարկի գնանշումը կատարված է վարկատուի կամ վարկառուի գործառնական արժույթից տարբեր արժույթով: Ստորև նշված դրական թիվը նշանակում է շահույթի կամ կապիտալի տարրի աճ այն դեպքերում, երբ ՀՀ դրամն արժևորվում է ԱՄՆ դոլարի, Եվրոյի, Ռուբլու նկատմամբ 5%-ի չափով:

(հազար դրամ)	2013				2012	
	Փոխարժեքի փոփոխություն	Ազդեցություն շահույթի վրա նախքան հարկումը		Փոխարժեքի փոփոխություն	Ազդեցություն շահույթի վրա նախքան հարկումը	
		Արժեվորում	Արժեգրկում		Արժեվորում	Արժեգրկում
ԱՄՆ դոլար	5%	(62,425)	62,425	5%	20,828	(20,828)
Եվրո	5%	(63,287)	63,287	5%	(26,713)	26,713
ՌԴ ռուբլի	5%	115,873	(115,873)	5%	81,382	(81,382)

Զգայունության վերլուծության սահմանափակումները: Վերևում բերված աղյուսակում բերված է առանցքային ենթադրության փոփոխության ազդեցությունը այլ ենթադրությունների անփոփոխ պայմանների դեպքում: Իրականում ենթադրությունների, ինչպես նաև այլ գործոնների միջև գոյություն ունի փոխադարձ կապ: Հարկ է նաև նշել, որ այս զգայունությունները ոչ գծային են, և ավելի մեծ կամ փոքր ազդեցությունները չպետք է միջարկվեն (ինտերպոլյացիա) կամ արտարկվեն (էքստրապոլյացիա) այս արդյունքներից:

Զգայունության վերլուծությունում հաշվի չի առնվում այն հանգամանքը, որ Բանկի ակտիվները և պարտավորությունները ակտիվորեն կառավարվում են: Ի լրումն, Բանկի ներկայիս ֆինանսական դիրքը կարող է տարբեր լինել այն ժամանակ, երբ որևէ իրական շուկայական շարժ տեղի ունենա: Օրինակ, Բանկի ֆինանսական ռիսկերի կառավարման ռազմավարությունը նպատակ ունի կառավարելու շուկայական տատանումների ազդեցությանը ենթակա լինելը: Երբ ներդրումային շուկաներն անցնում են զանազան շեմային մակարդակներից, Բանկի ղեկավարության արձագանքը կարող է ներառել այնպիսի գործողություններ, ինչպիսիք են ներդրումների վաճառքը, ներդրումային պորտֆելի բաշխվածության

փոփոխությունը և այլ կանխարգելիչ միջոցառումներ: Հետևաբար, ենթադրությունների իրական փոփոխության ազդեցությունը կարող է որևէ ազդեցություն չունենալ պարտավորությունների վրա, մինչդեռ ակտիվները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվառվում են շուկայական արժեքով: Այս հանգամանքներում, ակտիվների և պարտավորությունների տարբեր չափման հիմունքները կարող են հանգեցնել Բանկի կանոնադրական կապիտալի տատանումների:

Զգայունության վերլուծության այլ սահմանափակումները ներառում են հիպոթետիկ շուկայական շարժերի կիրառումը պոտենցիալ ռիսկերը ներկայացնելու նպատակով, որոնք ընդամենը ներկայացնում են Բանկի տեսակետը մոտակա ժամանակների շուկայական հնարավոր փոփոխությունների վերաբերյալ, որոնք չեն կարող կանխատեսվել որևէ հավաստիությամբ, ինչպես և այն ենթադրությունը, որ բոլոր տոկոսադրույքները շարժվում են համանմանորեն:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիությունը Բանկի ստանձնած պարտավորությունների ամբողջությամբ և սահմանված ժամկետներում կատարման հնարավորությունն է: Իրացվելիության ռիսկը հավանականությունն է, որ Բանկն ի վիճակի չի լինի ճիշտ ժամանակին բավարարել իր պարտատերերի պահանջներն առանց լրացուցիչ կորուստներ կրելու, ինչը բացասաբար կազդի Բանկի շահույթի և/կամ կապիտալի վրա: Իրացվելիության ռիսկը կապված է Բանկի նորմալ և սթրեսային իրավիճակներում ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողության հետ: Այս ռիսկի գսպման նպատակով Բանկը ներգրավում է լրացուցիչ ֆինանսական միջոցներ, ի լրումն իր հիմնական ավանդային բազայի, կառավարում է ակտիվները հաշվի առնելով իրացվելիության ռիսկը և վերլուծում է ապագա դրամական հոսքերը և իրացվելիությունը օրական կտրվածքով: Սա ներառում է նաև սպասվելիք դրամական հոսքերի գնահատումները և բարձր իրացվելի ապահովվածության հասանելիությունը, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորում ստանալու նպատակով:

Բանկը պահում է բարձր իրացվելի և դիվերսիֆիկացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում:

Բացի այդ Բանկը ՀՀ կենտրոնական բանկում պահում է իր որոշ դրամով պարտավորությունների (ներգրավված միջոցների) 8%-ի և որոշ արտարժույթով պարտավորությունների (ներգրավված միջոցների) 12%-ի չափով պահուստավորման գումար (տես ծանոթագրություն 4-ը): Իրացվելիության ռիսկը գնահատվում և կառավարվում է տարբեր հնարավոր սցենարների դեպքում՝ հաշվի առնելով սթրես գործոնները կապված շուկայի հետ ընդհանրապես և Բանկի հետ մասնավորապես:

Բանկի իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը, ֆինանսավորման արտակարգ իրավիճակների ծրագրի առկայությունը և վերահսկել իրացվելիության նորմատիվները կանոնակարգային պահանջներին համապատասխան: Բանկը հաշվարկում է իրացվելիության ցուցանիշները ՀՀ կենտրոնական Բանկի պահանջներին համապատասխան:

Ստորև ներկայացվում է 2012թ. և 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ մարմանը մնացած ժամկետների համաձայն: Ցպահանջ վճարումները դասակարգված են այն ենթադրությամբ, որ վճարումը կպահանջվի անմիջապես: Սակայն Բանկի կարծիքով շատ հաճախորդներ անմիջապես վճարում չեն պահանջի, և աղյուսակը չի արտացոլում սպասվող դրամական հոսքերը Բանկի կողմից ավանդների պահպանման պատմությամբ:



(հազար դրամ)

	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ							
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-3 ամիս	3 ամսից 1 տարի	Ընդամենը մինչև 1 տարի	1 -ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Ընդամենը 1 տարուց ավել	Ընդամենը
Ակտիվներ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	16,539,284	1,327,457	-	17,866,741	-	-	-	17,866,741
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների պարտավորություններ	877,254	60,735	-	937,989	-	1,583,038	1,583,038	2,521,027
Հակադարձ հետգնման պայմանագրեր	1,379,833	-	-	1,379,833	-	-	-	1,379,833
Հաճախորդներին տրված վարկեր	3,142,137	6,671,227	8,821,246	18,634,610	19,211,360	2,847,772	22,059,132	40,693,742
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ								
-Բանկի կողմից պահվող	2,375,194	-	-	2,375,194	-	145,852	145,852	2,521,046
-Հետգնման պայմանագրերով գրավադրված	4,624,479	-	-	4,624,479	-	-	-	4,624,479
Այլ ակտիվներ	-	82,620	-	82,620	-	-	-	82,620
Ընդամենը ակտիվներ	28,938,181	8,142,039	8,821,246	45,901,466	19,211,360	4,576,662	23,788,022	69,689,488
Պարտավորություններ								
ՀՀ Կենտրոնական բանկից և ՀՀ կառավարությունից ստացված վարկեր	86,863	15,437	989,666	1,091,966	1,431,019	-	1,431,019	2,522,985
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների հանդեպ պարտավորություններ	779,917	1,467,650	3,128,434	5,376,001	848,008	350,525	1,198,533	6,574,534
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և ավանդներ	36,474	316,636	1,074,321	1,427,431	2,666,291	-	2,666,291	4,093,722
Հետգնման պայմանագրեր	4,003,448	501,336	-	4,504,784	-	-	-	4,504,784
Պարտավորություններ հաճախորդների հանդեպ	25,221,851	4,707,361	12,601,503	42,530,715	1,697,824	163,237	1,861,061	44,391,776
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	6740	-	-	6740	-	-	-	6,740
Այլ ֆինանսական պարտավորություններ	170,182	-	-	170,182	-	-	-	170,182
	30,305,475	7,008,420	17,793,924	55,107,819	6,643,142	513,762	7,156,904	62,264,723
Զուտ դիրք	(1,367,294)	1,133,619	(8,972,678)	(9,206,353)	12,568,218	4,062,900	16,631,118	7,424,765
Կուտակային տարբերություն ակտիվների և պարտավորությունների միջև	(1,367,294)	(233,675)	(9,206,353)	(9,206,353)	3,361,865	7,424,765	7,424,765	



(հազար դրամ)

	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ							
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-3 ամիս	3 ամսից 1 տարի	Ընդամենը մինչև 1 տարի	1 -ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Ընդամենը 1 տարուց ավել	Ընդամենը
Ակտիվներ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	14,988,251	-	-	14,988,251	-	-	-	14,988,251
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	3,453,371	201,875	29	3,655,275	-	1,589,603	1,589,603	5,244,878
Հակադարձ հետգնման պայմանագրեր	1,348,482	-	-	1,348,482	-	-	-	1,348,482
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	20,030	-	-	20,030	-	-	-	20,030
Հաճախորդներին տրված վարկեր	2,759,589	5,003,118	9,989,070	17,751,777	14,197,892	1,429,651	15,627,543	33,379,320
Վաճառքի համար մատչելի ակտիվներ								
- Բանկի կողմից պահվող	693,754	-	-	693,754	-	171,004	171,004	864,758
- Հետգնման պայմանագրերով գրավադրված	4,037,132	-	-	4,037,132	-	-	-	4,037,132
Այլ ակտիվներ	48,235	-	-	48,235	-	16,830	16,830	65,065
Ընդամենը ակտիվներ	27,348,844	5,204,993	9,989,099	42,542,936	14,197,892	3,207,088	17,404,980	59,947,916
Պարտավորություններ								
ՀՀ Կենտրոնական բանկից և ՀՀ կառավարությունից ստացված վարկեր	55,218	30,729	1,906,690	1,992,637	1,486,196	80,172	1,566,368	3,559,005
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների հանդեպ	711,402	9,040	42,385	762,827	362,863	449,923	812,786	1,575,613
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և ավանդներ	563,777	754,675	3,062,224	4,380,676	3,972,464	-	3,972,464	8,353,140
Հետգնման պայմանագրեր	4,255,724	-	-	4,255,724	-	-	-	4,255,724
Պարտավորություններ հաճախորդների հանդեպ	21,577,123	5,175,154	9,216,432	35,968,709	153,680	118,309	271,989	36,240,698
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	8,012	-	-	8,012	-	-	-	8,012
Այլ ֆինանսական պարտավորություններ	62,910	-	-	62,910	-	-	-	62,910
	27,234,166	5,969,598	14,227,731	47,431,495	5,975,203	648,404	6,623,607	54,055,102
Զուտ դիրք	114,678	(764,605)	(4,238,632)	(4,888,559)	8,222,689	2,558,684	10,781,373	5,892,814
Կուտակային տարբերություն ակտիվների և պարտավորությունների միջև	114,678	(649,927)	(4,888,559)	(4,888,559)	3,334,130	5,892,814	5,892,814	



Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները ներկայացված են առաջին սյունակում՝ մինչև մեկ ամիս՝ քանի որ ըստ բանկի ղեկավարության, դրանք բարձր իրացվելի ակտիվներ են, որոնք կարող են վաճառվել ըստ պահանջի՝ ֆինանսական պարտավորությունների պահանջները բավարարելու նպատակով:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Բանկի ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, հիմնվելով պայմանագրով նախատեսված՝ չգեղջված մարման պարտավորությունների վրա:

(հազար դրամ)	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-3 ամիս	3 ամսից 1 տարի	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Ընդամենը
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
ՀՀ Կենտրոնական բանկից և ՀՀ կառավարությունից ստացված վարկեր	103,980	49,671	1,108,462	1,681,649	-	2,943,762
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների հանդեպ	815,480	1,529,014	3,286,167	1,183,255	-	6,813,916
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և ավանդներ	64,868	373,789	1,334,341	3,418,272	-	5,191,270
Հետգնման պայմանագրեր	4,013,636	501,446	-	-	-	4,515,082
Պարտավորություններ հաճախորդների հանդեպ	26,367,671	4,794,523	15,537,780	3,550,974	664,393	50,915,341
Այլ ֆինանսական պարտավորություններ	170,182	-	-	-	-	170,182
Ընդամենը չգեղջված ոչ ածանցյալ	31,535,817	7,248,443	21,266,750	9,834,150	664,393	70,549,553
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Արտարժույթի սվոփ պայմանագրեր						
Ներհոսք	(1,119,080)	-	-	-	-	(1,119,080)
Արտահոսք	1,125,820	-	-	-	-	1,125,820



Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Բանկի ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, հիմնվելով պայմանագրով նախատեսված՝ չգեղջված մարման պարտավորությունների վրա:

(հազար դրամ)	Ցպահան ջ և մինչև 1 ամիս	1-3 ամիս	3 ամսից 1 տարի	1 -ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Ընդամենը
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
ՀՀ Կենտրոնական բանկից և ՀՀ կառավարությունից ստացված վարկեր	78,311	76,916	2,111,048	1,784,617	85,506	4,136,398
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների հանդեպ	717,610	20,470	94,774	631,457	575,658	2,039,969
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և ավանդներ	616,468	858,519	3,486,163	5,308,214	-	10,269,364
Հետգնման պայմանագրեր	4,264,148	-	-	-	-	4,264,148
Պարտավորություններ հաճախորդների հանդեպ	21,685,152	5,375,261	9,946,928	833,819	164,167	38,005,327
Այլ ֆինանսական պարտավորություններ	62,910	-	-	-	-	62,910
Ընդամենը չգեղջված ոչ ածանցյալ	27,424,599	6,331,166	15,638,913	8,558,107	825,331	58,778,116
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Արտարժույթի սվոփ պայմանագրեր	(2,242,59)	-	-	-	-	(2,242,594)
Ներհոսք	2,227,411	-	-	-	-	2,227,411

Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկն իրենից ներկայացնում է ուղղակի կամ անուղղակի կորուստների վտանգ, որն առաջանում է Բանկի կողմից ֆինանսական գործիքներում ներգրավվածությունից, այդ թվում՝ գործընթացների, տեխնոլոգիաների, ենթակառուցվածքների գծով, և արտաքին գործոնների՝ ազդեցությամբ, բացի վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերից, մասնավորապես՝ իրավական և կանոնակարգային պահանջների արդյունքում առաջացող ռիսկերը և համընդհանուր ընդունված կորպորատիվ վարքագծի ստանդարտները:

Բանկի նպատակն է՝ կառավարել գործառնական ռիսկերն այնպես, որ ֆինանսական կորուստների և վնասի կանխարգելումը համահունչ լինի Բանկի գործնական համբավի և ընդհանուր ծախսային արդյունավետության հետ:

Գործառնական ռիսկի կառավարման մեթոդների մշակման և գործընթացների իրականացման համար հիմնական պատասխանատվությունը կրում է Բանկի գործադիր մարմինը: Այս պատասխանատվությունն ուղեկցվում է գործառնական ռիսկի կառավարման համընդհանուր չափանիշների մշակմամբ հետևյալ ոլորտներում՝

- պարտականությունների համապատասխան տարանջատման պահանջներ, այդ թվում գործարքների անկախ հաստատում,
- գործարքների համաձայնեցման և մոնիթորինգի պահանջներ,
- կարգավորիչ և այլ իրավական պահանջների համապատասխանեցում, ներառյալ ՀՀ ԿԲ ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ նվազագույն պահանջները,
- վերահսկողական մեխանիզմների և ընթացակարգերի փաստաթղթավորում,
- առաջացած գործառնական ռիսկերի պարբերաբար գնահատման պահանջներ, ինչպես նաև ռիսկերի կառավարմանն ուղղված ընթացակարգերի համապատասխանություն,
- գործառնական կորուստների զեկուցման պահանջներ և առաջարկվող մեղմացուցիչ գործողություններ,
- արտակարգ իրավիճակների ծրագրերի մշակում,
- վերապատրաստում և մասնագիտական զարգացում,
- էթիկայի և գործարար չափանիշներ,
- ռիսկերի մեղմացում:

Բանկի ստանդարտներին համապատասխանությունը ուղեկցվում է ներքին աուդիտի կողմից իրականացվող պարբերական դիտարկումներով: Ներքին աուդիտի դիտարկումների արդյունքները քննարկվում են Բանկի ղեկավարության այն ներկայացուցչի հետ, որին դրանք վերաբերում են: Դիտարկումների ամփոփագրերը ներկայացվում են Խորհրդին:



«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» Բաց Բաժնետիրական Ընկերություն

**Ֆինանսական հաշվետվություններ
2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԷԶ

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 2014Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ և ՀԱՍՏԱՏՄԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ	1
ԱՆԿԱՆ ԱՌԻԴՑՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	2
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2014Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ	4
ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ և ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ	5
ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ	6
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ	7
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2014Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ	8
1. ԲԱՆԿԸ	8
2. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	8
3. ԿԱՐԿՈՐ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊԱՎԱԾ ԱՆՈՐՈՇՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՂՔՅՈՒՐՆԵՐԸ	20
4. ՆՈՐ և ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ	22
5. ԶՈՒՏ ՏՈԿՈՍՄԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏ ՆԱԽՔԱՆ ՏՈԿՈՍԱԿԻՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐԺԵԶՐԿՄԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ	31
6. ԿՈՄԻՍԻՈՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ և ԾԱԽՄԵՐ	31
7. ԶՈՒՏ ԱՐՏԱՐԺՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏ	32
8. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏ	32
9. ՏՈԿՈՍԱԿԻՐ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐԺԵԶՐԿՄԱՆ ՀԱԿԱՂԱՐՁՈՒՄՆԵՐ/(ԱՐԺԵԶՐԿՈՒՄԻՑ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ)	32
10. ԱՆՋԱԿԱԶՄԻ ԳԾՈՎ ԾԱԽՄԵՐ	32
11. ԱՅԼ ԾԱԽՄԵՐ	33
12. ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԾԱԽՄ	33
13. ՄԵԿ ԲԱԺՆԵՏՈՄՄԻՆ ԸՆԿՆՈՂ ՇԱՀՈՒՅԹ	34
14. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ և ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐ	35
15. ՊԱՀԱՆՔՆԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ	35
16. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ՎԱՐԿԵՐ	36
17. ՎԱՃԱՌՔԻ ՀԱՄԱՐ ՄՏՁԵԼԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ	40
18. ՓՈԽԱՑՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ և ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	40
19. ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ ԱՍՈՑԻԱՑՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	41
20. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	42
21. ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ	43
22. ԱՅԼ ԱԿՏԻՎՆԵՐ	44
23. ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻՑ և ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՎԱՐԿԵՐ	44
24. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ	45
25. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՎԱՐԿԵՐ և ԱՎԱՆԴՆԵՐ	45
26. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ	46
27. ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔՈՎ ՉՍՓՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	47
28. ԱՅԼ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	47
29. ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ	47
30. ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ և ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	48
31. ԳՈՐԾԱՔՆԵՐ ԿԱՊԱԿՑՎԱԾ ԿՈՂՄԵՐԻ ՀԵՏ	50
32. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ	52
33. ԿԱՊԻՏԱԼԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	54
34. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	55
35. ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻՑ ՀԵՏՈ ՏԵՂԻ ՈՒՆԵՑՈՂ ԴԵՊՔԵՐ	71

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 2014թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ և ՀԱՍՏԱՏՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Ղեկավարությունը պատասխանատու է «Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական վիճակը, գործունեության արդյունքները, դրամական միջոցների հոսքերը և սեփական կապիտալում փոփոխությունները ճշմարիտ ներկայացնող, ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտներին (այսուհետ՝ ՖՀՄՍ) համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է՝

- հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճ ընտրության և կիրառման համար,
- հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ ներկայացվող տեղեկատվության համապատասխանության, վստահելիության, համեմատականության և հասկանալիության համար,
- լրացուցիչ բացահայտումների տրամադրման համար, երբ ՖՀՄՍ-ի հատուկ պահանջների համապատասխանությունը բավարար չէ, որպեսզի օգտագործողները պատկերացում կազմեն որոշակի գործարքների էության, Բանկի ֆինանսական վիճակի և ֆինանսական գործունեության այլ իրադարձությունների և պայմանների վերաբերյալ, և
- Բանկի գործունեության անընդհատության ապահովման կարողությունը գնահատելու համար:

Ղեկավարությունը նաև պատասխանատու է՝

- Բանկի ներքին վերահսկողության արդյունավետ համակարգի մշակման, ներդրման և պահպանման համար,
- համապատասխան հաշվապահական գրանցումներ վարելու համար, որոնք բավարար կլինեն Բանկի գործառնությունները արտացոլելու և ներկայացնելու, և ցանկացած ժամանակ ողջամիտ ճշգրտությամբ բացահայտելու Բանկի ֆինանսական վիճակը, ինչպես նաև հնարավորություն կընձեռեն Ղեկավարությանը հավաստիանալու, որ Բանկի ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ՖՀՄՍ-ներին,
- ՀՀ օրենսդրության և հաշվապահական ստանդարտների պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում վարելու համար,
- Բանկի ակտիվների անվտանգության ապահովման համար խելամիտ քայլերի իրականացման համար, և
- խարդախությունների և նմանատիպ այլ երևույթների բացահայտման և կանխարգելման համար:

2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները հաստատված են հրապարակման համար 2015թ. ապրիլի 29-ին:

Ստորագրված է Բանկի ղեկավարությունից

Արմեն Նալչյան
Գործադիր տնօրեն
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ

Իսկոնկ Ազատյան
Գլխավոր հաշվապահ
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ

29 ապրիլի 2015թ.
Երևան, Հայաստանի Հանրապետություն

ԱՆԿԱՆ ԱՌԻԴՏՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերին և հորհրդին

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերության կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 31 դեկտեմբերի 2014թ. դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

Դեկլարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Դեկլարությունը պատասխանատու է ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների համապատասխան սույն ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համակարգի ապահովման համար, որը դեկլարությունը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է՝ մեր կողմից իրականացված աուդիտի արդյունքում կարծիք արտահայտել ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտը իրականացրեցինք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետևենք էթիկայի պահանջներին և աուդիտը պլանավորենք և իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի դատողություններից, ներառյալ՝ խարդախությամբ կամ սխալներով պայմանավորված՝ ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը՝ նպատակ ունենալով մշակել համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ կարծիք արտահայտել կազմակերպության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ: Աուդիտորական աշխատանքները նաև ներառում են ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, դեկլարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների հիմնավորվածության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար են և համապատասխան՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիք

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերության ֆինանսական վիճակը, և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային ստանդարտների:

Սրբուհի Հակոբյան
Գործադիր տնօրեն



Արփինե Ղևոնդյան
Աուդիտի ղեկավար

Երևան, Հայաստանի Հանրապետություն
Դեկտյե Արմենիա ՓԲԸ

29 ապրիլի, 2015թ.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծան.	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2013թ. դեկտեմբերի 31- ի դրությամբ
(հազար դրամ)			
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	14	22,354,455	17,866,741
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	27	54,263	-
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	15	5,147,575	2,521,027
Հակադարձ հետգնման պայմանագրեր	18	1,255,797	1,379,833
Հաճախորդներին տրված վարկեր	16	52,057,388	40,693,742
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	17		
- Բանկի կողմից պահվող		49,478	2,521,046
- Հետգնման պայմանագրերով գրավադրված	18	6,118,811	4,624,479
Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում	19	194,991	245,192
Հետաձգված հարկային ակտիվներ	12	35,921	-
Հիմնական միջոցներ	20	4,041,033	3,625,023
Ոչ նյութական ակտիվներ	21	95,021	88,497
Այլ ակտիվներ	22	514,278	597,760
Ընդամենը ակտիվներ		<u>91,919,011</u>	<u>74,163,340</u>
Պարտավորություններ և սեփական կապիտալ			
Պարտավորություններ			
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	27	19,659	6,740
ՀՀ Գնեստրոնական բանկից և ՀՀ կառավարությունից ստացված վարկեր	23	2,420,521	2,522,985
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	24	9,601,473	6,574,534
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և ավանդներ	25	3,076,403	4,093,722
Հետգնման պայմանագրեր	18	7,215,899	4,504,784
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	26	57,525,303	44,391,776
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություններ		107,722	147,359
Հետաձգված շահութահարկի գծով պարտավորություններ	12	-	206,396
Այլ պարտավորություններ	28	881,016	651,495
Ընդամենը պարտավորություններ		<u>80,847,996</u>	<u>63,099,791</u>
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	29	2,333,338	2,333,338
Գլխավոր պահուստ		5,405,133	5,405,133
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների պահուստ		262,264	1,071,594
Զբաղիված շահույթ		3,070,280	2,253,484
Ընդամենը սեփական կապիտալ		<u>11,071,015</u>	<u>11,063,549</u>
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		<u>91,919,011</u>	<u>74,163,340</u>

Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են 2015թ. ապրիլի 29-ին Գործադիր տնօրենի և Գլխավոր
հաշվապահի կողմից:

Արմեն Նալչյան
Գործադիր տնօրեն
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ



Գլխավոր Դատյան
Գլխավոր հաշվապահ
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ

**Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին
հաշվետվություն 2014 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

(հազար դրամ)	Ծան.	2014թ.	2013թ.
Տոկոսային եկամուտ	5	8,342,889	7,236,646
Տոկոսային ծախս	5	(4,093,529)	(3,501,022)
Զուտ տոկոսային եկամուտ նախքան տոկոսակիր ակտիվների գծով արժեզրկումից կորուստները		<u>4,249,360</u>	<u>3,735,624</u>
Տոկոսակիր ակտիվների գծով արժեզրկման հակադարձումներ/ (արժեզրկումից կորուստներ)	9	61,283	(142,091)
Զուտ տոկոսային եկամուտ		<u>4,310,643</u>	<u>3,593,533</u>
Զուտ օգուտ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից և պարտավորություններից		130,157	93,863
Զուտ արտարժույթային եկամուտ	7	747,117	909,672
Կոմիսիոն եկամուտներ	6	1,508,982	1,558,460
Կոմիսիոն ծախսեր	6	(401,691)	(385,398)
Զուտ օգուտ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով		171,314	35,623
Այլ եկամուտ	8	318,935	181,825
Զուտ ոչ տոկոսային եկամուտ		<u>2,474,814</u>	<u>2,394,045</u>
Գործառնական եկամուտ		<u>6,785,457</u>	<u>5,987,578</u>
Անձնակազմի գծով ծախսեր	10	(3,393,487)	(2,972,299)
Հիմնական միջոցների մաշվածություն	20	(350,862)	(275,104)
Ոչ նյութական միջոցների ամորտիզացիա	21	(14,905)	(14,563)
Այլ ծախսեր	11	(1,859,453)	(1,738,671)
Արժեզրկումից (կորուստներ)/հակադարձումներ այլ ակտիվների գծով	22	(21,194)	2,173
Գործառնական ծախսեր		<u>(5,639,901)</u>	<u>(4,998,464)</u>
Ասոցիացված կազմակերպության վնասի բաժին	19	(49,552)	(18,531)
Շահույթը նախքան շահութահարկով հարկումը		<u>1,096,004</u>	<u>970,583</u>
Շահութահարկի գծով ծախս	12	(279,208)	(253,882)
Տարվա շահույթ		<u>816,796</u>	<u>716,701</u>
Այլ համապարփակ եկամուտ			
Հետագայում շահույթում կամ վնասում վերադասակարգման ենթակա հոդվածներ			
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից գուտ (վնաս)/օգուտ		(796,283)	1,154,372
Տարվա ընթացքում իրացված վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերադասակարգումից ճշգրտում		(214,568)	(41,233)
Այլ համապարփակ եկամուտի տարրերին վերաբերող շահութահարկ		202,170	(222,628)
Ասոցիացված կազմակերպության՝ այլ համապարփակ եկամուտի բաժինը			
Տարվա ընթացքում վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման ճշգրտումից գուտ (վնաս)/ օգուտ		(811)	1,954
Ասոցիացված կազմակերպության համապարփակ եկամուտի այլ տարրերին վերաբերող շահութահարկ		162	(391)
Հաշվետու տարվա այլ համապարփակ եկամուտ, շահութահարկով հարկումից հետո		<u>(809,330)</u>	<u>892,074</u>
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ		<u>7,466</u>	<u>1,608,775</u>
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ			
Բազային և նոսրացված		0.88	0.77

Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվում են 2015 թ. ապրիլի 29-ին Գործադիր տնօրենի և Գլխավոր հաշվապահի կողմից:

Արմեն Նալչյան
Գործադիր տնօրեն
«Հայեկոնոմբանկ» ԲԲԸ

Դավիթ Ազատյան
Գլխավոր հաշվապահ
«Հայեկոնոմբանկ» ԲԲԸ



Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 2014 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)	Բաժնետիրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ	Զբաղիված շահույթ	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդը 2013թ. հունվարի 1-ի դրությամբ	2,333,338	5,405,133	179,520	1,536,783	9,454,774
Տարվա շահույթ	-	-	-	716,701	716,701
Այլ համապարփակ եկամուտ շահութահարկով հարկումից հետո	-	-	-	-	-
Տարվա ընթացքում վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման ճշգրտումից գուտ օգուտ	-	-	1,154,372	-	1,154,372
Տարվա ընթացքում իրացված վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերադասակարգման ճշգրտում	-	-	(41,233)	-	(41,233)
Այլ համապարփակ եկամուտի տարրերին վերաբերող շահութահարկ	-	-	(222,628)	-	(222,628)
Ասոցիացված կազմակերպության՝ այլ համապարփակ եկամուտի բաժինը	-	-	-	-	-
Տարվա ընթացքում վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման ճշգրտումից գուտ օգուտ	-	-	1,954	-	1,954
Ասոցիացված կազմակերպության համապարփակ եկամուտի այլ տարրերին վերաբերող շահութահարկ	-	-	(391)	-	(391)
Ընդամենը այլ համապարփակ եկամուտ	-	-	892,074	-	892,074
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ	-	-	892,074	716,701	1,608,775
Մնացորդը 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,333,338	5,405,133	1,071,594	2,253,484	11,063,549
Տարվա շահույթ	-	-	-	816,796	816,796
Այլ համապարփակ եկամուտ շահութահարկից հետո	-	-	-	-	-
Տարվա ընթացքում վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման ճշգրտումից գուտ վնաս	-	-	(796,283)	-	(796,283)
Տարվա ընթացքում իրացված վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերադասակարգման ճշգրտում	-	-	(214,568)	-	(214,568)
Այլ համապարփակ եկամուտի տարրերին վերաբերող շահութահարկ	-	-	202,170	-	202,170
Ասոցիացված կազմակերպության՝ այլ համապարփակ եկամուտի բաժինը	-	-	-	-	-
Տարվա ընթացքում վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման ճշգրտումից գուտ վնաս	-	-	(811)	-	(811)
Ասոցիացված կազմակերպության համապարփակ եկամուտի այլ տարրերին վերաբերող շահութահարկ	-	-	162	-	162
Ընդամենը այլ համապարփակ եկամուտ	-	-	(809,330)	-	(809,330)
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ	-	-	(809,330)	816,796	7,466
Մնացորդը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,333,338	5,405,133	262,264	3,070,280	11,071,015

Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են 2015թ. ապրիլի 29-ին Գործադիր տնօրենի և Գլխավոր հաշվապահի կողմից:

Արմեն Նալչյան
Գործադիր տնօրեն
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸԴավիթ Ազատյան
Գլխավոր հաշվապահ
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 2014 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)	Օան.	2014թ.	2013թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
Տարվա շահույթ		816,796	716,701
Ճշգրտումներ			
Շահութահարկի գծով ծախս		279,208	253,882
Արժեզրկումից վնաս/(օգուտ)		(40,089)	139,918
Մաշվածություն և ամորտիզացիա		365,767	289,667
Հիմնական միջոցների օտարումից (օգուտ)/վնաս		2,665	(9,785)
Եկամուտ դրամաշնորհներից		(507)	(507)
Արտարժույթի փոխարկումից զուտ վնաս		211,610	131,981
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներից զուտ օգուտ		(171,314)	(35,623)
Ասոցիացված կազմակերպության վնասի բաժին		49,552	18,531
Այլ եկամուտ		(11,548)	5,408
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ նախքան գործառնական ակտիվներում կամ պարտավորություններում փոփոխությունները		<u>1,502,140</u>	<u>1,510,173</u>
Գործառնական ակտիվներում կամ պարտավորություններում փոփոխություններ			
Գործառնական ակտիվների (աճ)/նվազում			
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ		(2,454,264)	2,713,116
Հակադարձ հետգնման պայմանագրեր		124,036	(31,351)
Հաճախորդների տրված վարկեր		(8,041,480)	(7,380,539)
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		(54,263)	20,030
Այլ ակտիվներ		127,293	(33,178)
Գործառնական պարտավորությունների (աճ)/նվազում			
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ		2,380,279	5,079,750
Հետգնման պայմանագրեր		2,711,115	249,060
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ		9,804,969	7,894,502
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ		12,919	(1,272)
Այլ պարտավորություններ		266,472	233,832
Գործառնական գործունեությունից առաջացած դրամական միջոցներ նախքան շահութահարկով հարկումը		<u>6,379,216</u>	<u>10,254,123</u>
Վճարված շահութահարկ		(358,992)	(154,424)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ		<u>6,020,224</u>	<u>10,099,699</u>
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից			
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների ձեռքբերման դիմաց վճարումներ		(1,727,505)	(2,280,209)
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր		1,865,204	1,155,323
Հիմնական միջոցների ձեռքբերումների դիմաց վճարումներ		(815,378)	(841,917)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր		24,412	19,359
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		-	(2,656)
Ներդրումային գործունեությունում օգտագործված դրամական միջոցներ		<u>(653,267)</u>	<u>(1,950,100)</u>
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից			
ՀՀ Կենտրոնական բանկից և ՀՀ կառավարությունից ստացված վարկերի մարում		(102,464)	(1,036,018)
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերի մարում		(1,195,001)	(4,328,859)
Բաժնետոմսերի գծով վճարված շահաբաժիններ		(2,006)	(6,582)
Ֆինանսական գործունեությունում օգտագործված դրամական միջոցներ		<u>(1,299,471)</u>	<u>(5,371,459)</u>
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը արտարժույթով պահվող դրամական միջոցների մնացորդների վրա		420,228	100,350
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ		<u>4,487,714</u>	<u>2,878,490</u>
Դրամական միջոցներ նորանց համարժեքներ տարեսկզբի դրությամբ		17,866,741	14,988,251
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջի դրությամբ	14	<u>22,354,455</u>	<u>17,866,741</u>
Լրացուցիչ տեղեկություններ			
Ստացված տոկոսներ		8,102,988	7,255,832
Վճարված տոկոսներ		(4,075,910)	(3,527,539)

Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են 2015թ. ապրիլի 29-ին Գործադիր տնօրենի և Գլխավոր հաշվապահի կողմից:

Արմեն Նալչյան
Գործադիր տնօրեն
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ

Խոսիկ Ազատյան
Գլխավոր հաշվապահ
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

1. Բանկը

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն (Այսուհետ՝ «Բանկ») հիմնվել է 1991 թվականին Հայաստանի Հանրապետությունում ԽՍՀՄ Բնակատեցիական հայկական Հանրապետական բանկի (1991-1993թ-ի «Հայպետբանկ» ՓԲԸ) հիման վրա և 1995թ.-ին վերակազմավորվել է որպես բաց բաժնետիրական ընկերության: Բանկի գործունեությունը կարգավորվում է ՀՀ օրենսդրությամբ և այն գործում է ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից տրամադրված թիվ 1 արտոնագրի հիման վրա:

Բանկն ընդունում է ավանդներ և տրամադրում է վարկեր, ինչպես նաև մատուցում է այլ բանկային ծառայություններ իրավաբանական և ֆիզիկական անձանց:

Բանկի գլխամասային գրասենյակը և թվով 19 մասնաճյուղերը գտնվում են Երևանում, 20 մասնաճյուղեր՝ ՀՀ տարբեր մարզերում և 1 մասնաճյուղ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում: Բանկի իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, Ամիրջյան 23/1:

2. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Համապատասխանության մասին հայտարարություն: Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են այն ենթադրության հիման վրա, որ Բանկը գործում է անընդհատության հիմունքով և կշարունակի իր գործունեությունը տեսանելի ապագայում:

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են պատմական արժեքի հիման վրա, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք չափվում են իրական արժեքով յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի վերջի դրությամբ, ինչպես ներկայացված է ստորև՝ հաշվապահական հաշվառման քաղաքականությունում:

Պատմական արժեքը սովորաբար հիմնված է ապրանքների և ծառայությունների դիմաց տրված հատուցման իրական արժեքի վրա:

Իրական արժեքն այն գումարն է, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքի արդյունքում կստացվեր ակտիվը վաճառելիս, կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելիս՝ անկախ նրանից, թե արդյոք այդ գինն ուղղակիորեն դիտարկելի է կամ գնահատվել է՝ օգտագործելով այլ գնահատման մեթոդներ: Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը գնահատելիս՝ Բանկը հաշվի է առնում ակտիվի կամ պարտավորության այնպիսի բնութագրերը, որոնք շուկայի մասնակիցները հաշվի կառնեն չափման ամսաթվի դրությամբ ակտիվի կամ պարտավորության գինը որոշելիս: Այս ֆինանսական հաշվետվություններում չափման և/կամ այլ բացահայտումների նպատակով իրական արժեքը որոշվում է նման սկզբունքներով, բացառությամբ վարձակալության գործարքներից, որոնք նկարագրված են ՀՀՄՍ 17-ում և չափումներից, որոնք թեև համանման են իրական արժեքին, սակայն իրական արժեքով չեն, մասնավորապես օգտագործման արժեքը՝ ըստ ՀՀՄՍ 36-ի:

Ի լրումն՝ ֆինանսական հաշվետվությունների նպատակով իրական արժեքի չափումները դասակարգվում են մակարդակ 1, 2 և 3-ի՝ ելնելով իրական արժեքի չափումներում օգտագործված սկզբնական տվյալների դիտարկելիության աստիճանից, ինչպես նաև այդ սկզբնական տվյալների՝ իրական արժեքով չափման ամբողջական պատկերի վրա ազդեցության էականության աստիճանից: Այդ մակարդակները կարելի է նկարագրել հետևյալ կերպ՝

- Մակարդակ 1-ի դեպքում մուտքային տվյալներ են հանդիսանում ակտիվ շուկայում համանման ակտիվների կամ պարտավորությունների նշված գները (չձգրտված), որոնք Բանկին հասանելի են չափման ամսաթվի դրությամբ:

- Մակարդակ 2-ի մուտքային տվյալները իրենցից ներկայացնում են մակարդակ 1-ում նշված գներից տարբերվող մուտքային տվյալները, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են ակտիվների կամ պարտավորությունների գծով.
- Մակարդակ 3-ի մուտքային տվյալներն իրենցից ներկայացնում են ակտիվների կամ պարտավորությունների գծով ոչ դիտարկելի մուտքային տվյալներ:

Բանկն ընդհանուր առմամբ ներկայացնում է իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունն ըստ իրացվելիության: Ստացվելիք և վճարվելիք գումարներին վերաբերող վերլուծությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվության օրվանից հետո 12 ամիսների ընթացքում (ընթացիկ) և ֆինանսական վիճակի մասին հաշվետվության օրվանից ավելի քան 12 ամիսների ընթացքում (ոչ ընթացիկ) ներկայացված են Ծանոթագրություն 34-ում:

Գործառնական արժույթ: Ֆինանսական հաշվետվություններում ներառված միավորները չափվում են այն տնտեսական միջավայրում գործող արժույթով, որում Բանկն իրականանցում է իր գործունեությունը («Գործառնական արժույթ»): Բանկի գործառնական արժույթը ՀՀ դրամն է (այսուհետև՝ դրամ): Դրամը նաև սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթն է: Բոլոր արժեքները կլորացված են հազար դրամի չափով, եթե այլ բան նշված չէ:

Հաշվանցում: Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով գուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հաշվարկը գուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն: Եկամուտները և ծախսերը չեն հաշվանցվում շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե դա չի պահանջվում կամ թույլատրվում որևէ հաշվապահական հաշվառման ստանդարտով կամ մեկնաբանությամբ և հստակ բացահայտված չէ Բանկի հաշվապահական քաղաքականության մեջ:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են ստորև:

Տոկոսային եկամուտներ և ծախսեր: Ֆինանսական ակտիվներից տոկոսային եկամուտները ճանաչվում են, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Բանկ և եկամտի գումարը կարող է արժանահավատորեն չափվել: Տոկոսային եկամուտները և ծախսերը ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության (կամ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների խմբի) ամորտիզացված արժեքի հաշվարկման և համապատասխան ժամանակահատվածի կտրվածքով տոկոսային ծախսի և տոկոսային եկամտի բաշխման մեթոդն է:

Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի կամ, համապատասխան դեպքերում, ավելի կարճ ժամանակահատվածի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները գեղջում է ճշգրիտ մինչև ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության գուտ հաշվեկշռային արժեքը:

Այն դեպքերում, երբ տեղի է ունենում ֆինանսական ակտիվի կամ նմանատիպ ակտիվների խմբի արժեքի նվազում (մասնակի նվազում) արժեզրկումից կորստի հետևանքով, տոկոսային եկամուտն այնուհետև ճանաչվում է՝ կիրառելով այն տոկոսադրույքը, որը կիրառվել էր արժեզրկումից կորուստը չափելու նպատակով ապագա դրամական հոսքերը գեղջելիս:

Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրերից եկամուտ. վերը նշված գործիքների վաճառքից օգուտը/վնասը ճանաչվում է որպես տոկոսային եկամուտ կամ ծախս՝ շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում՝ հիմնվելով հետևյալ երկու մեծությունների տարբերության վրա՝ հետգնման արժեքի, որը կուտակվել է հաշվետու ամսաթվի դրությամբ՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը և վաճառքի գնի, երբ այդ գործիքները վաճառվում են երրորդ անձանց: Երբ հակադարձ հետգնումը/հետգնումը տեղի է ունենում իր սկզբնական պայմաններով, վաճառքի և պայմանագրի

սկզբնական փուլում բանակցված հետգնման գնի միջև արդյունավետ օգուտը/տոկոսը ճանաչվում է արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով:

Կումիսիոն եկամուտ: Վարկի տրամադրման վճարները հետաձգվում են հարակից ուղղակի ծախսումների հետ միասին և ճանաչվում են որպես վարկի արդյունավետ տոկոսադրույքի ճշգրտում: Երբ հավանական է, որ վարկ տրամադրելու պարտավորությունը կհանգեցնի որոշակի պայմաններով վարկային համաձայնության, վարկային պարտավորության ստանձնման վճարները հետաձգվում են հարակից ուղղակի ծախսումների հետ միասին և հետագայում ճանաչվում որպես տրամադրված վարկի արդյունավետ տոկոսադրույքի ճշգրտում: Երբ քիչ հավանական է, որ վարկ տրամադրելու պարտավորությունը կհանգեցնի որոշակի վարկային համաձայնագրի, վարկ տրամադրելու պարտավորության ստանձնման վճարները ճանաչվում են շահույթում կամ վնասում վարկի տրամադրման պարտավորության մնացած ժամանակահատվածի ընթացքում: Այն դեպքում, երբ վարկ տրամադրելու պարտավորությունն ավարտվում է առանց վարկի տրամադրման, ապա վարկ տրամադրելու պարտավորության վճարները ճանաչվում են ֆինանսական արդյունքում՝ պարտավորության ավարտի պահին: Վարկի սպասարկման վճարները եկամտագրվում են, երբ համապատասխան ծառայությունները մատուցվում են: Բոլոր այլ միջնորդավճարները ճանաչվում են այն ժամանակ, երբ ծառայությունները մատուցվում են:

Ֆինանսական գործիքներ

Բանկը ճանաչում է ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ այն դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կանոնավոր կերպով գնումները և վաճառքը հաշվառվում են վերջնահաշվարկի ամսաթվի դրությամբ: Ֆինանսական գործիքների կանոնավոր գնումները կամ վաճառքն իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվների այն գնումները կամ վաճառքը, որոնք պահանջում են ակտիվների մատակարարում շուկայում ընդունված պայմաններով սահմանված կարգով:

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը: Գործարքի գծով ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը, անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվներ: Ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների՝ ա) շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ, բ) մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ, գ) տրամադրված վարկեր և դեբիտորական պարտքեր, դ) վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ: Դասակարգումը կախված է ֆինանսական ակտիվների ձեռքբերման բնույթից և նպատակից և որոշվում է սկզբնական ճանաչման պահին:

ա) Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ: Ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվը պահվում է վաճառքի համար կամ նախատեսված է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ակտիվ:

Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես վաճառքի համար պահվող, եթե՝

- այն ձեռք է բերվել հիմնականում մոտ ապագայում վաճառքի նպատակով, կամ
- սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Բանկի կողմից համատեղ կառավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ
- այն հանդիսանում է ածանցյալ գործիք, որը նախատեսված չէ կամ չի օգտագործվում որպես հեջավորման գործիք:

Ֆինանսական ակտիվը, բացի վաճառքի համար պահվող ֆինանսական ակտիվներից, կարող է ճանաչման պահին դասակարգվել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

- եթե նման դասակարգումը բացառում, կամ զգալիորեն կրճատում է չափման կամ ճանաչման անհամապատասխանությունը, որն այլապես կառաջանար, կամ՝
- ֆինանսական ակտիվը կազմում է ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների կամ այդ երկուսի խմբի մի մաս, որը կառավարվում է, և դրա կատարողականը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, Բանկի փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային ռազմավարության համաձայն, և խմբավորման վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է ներքին կարգով՝ այդ հիմունքներով, կամ
- այն կազմում է պայմանագրի մի մաս, որը պարունակում է ներկառուցված ածանցյալ գործիքներից մեկը կամ մի քանիսը և ՀՀՄՍ 39. Ֆինանսական գործիքներ: Ընկերությունը թույլ է տալիս ողջ պայմանագիրը (ակտիվները կամ պարտավորությունները) դասակարգել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները ներկայացվում են իրական արժեքով՝ ներառյալ ողջ օգուտը կամ վնասները, որոնք առաջանում են շահույթում կամ վնասում ճանաչվող վերաչափման արդյունքում: Շահույթում կամ վնասում ճանաչվող զուտ օգուտը կամ վնասները ներառում են ֆինանսական ակտիվի գծով վաստակած բոլոր շահաբաժինները և տոկոսները և ներառվում են «այլ օգուտներ և վնասներ» և «տոկոսային եկամուտ» տողում, շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

բ) Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ: Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնց գծով Բանկն ունի մինչև մարման ժամկետը պահելու հաստատուն մտադրություն և կարողություն: Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկումը:

Եթե Բանկը որոշեր վաճառել կամ վերադասակարգել մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների զգալի մասը նախքան դրանց մարման ժամկետը (բացառությամբ հատուկ հանգամանքների առկայության), ողջ դասը կորակվաճկվեր և պետք է դասակարգվեր որպես վաճառքի համար մատչելի: Ավելին, Բանկը ընթացիկ տարում և դրան հաջորդող երկու տարիների ընթացքում հնարավորություն չէր ունենա որևէ ֆինանսական ակտիվ դասակարգել որպես մինչև մարման ժամկետը պահվող ակտիվ:

գ) վարկեր և դեբիտորական պարտքեր: Առևտրային դեբիտորական պարտքերը, վարկերը և այլ դեբիտորական պարտքերը, որոնք ունեն ֆիքսված կամ որոշելի վճարումներ, որոնք գնանշված չեն ակտիվ շուկայում (ներառյալ բանկերից ստացվելիք միջոցներ, հաճախորդներին տրված վարկեր և այլ ֆինանսական ակտիվներ) դասակարգվում են որպես «վարկեր և դեբիտորական պարտքեր»: Վարկերը և դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկումը: Տոկոսային եկամուտը ճանաչվում է՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, բացառությամբ կարճաժամկետ դեբիտորական պարտքերի, որոնց դեպքում տոկոսի ճանաչումը էական ազդեցություն չէր ունենա:

դ) Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները ոչ ածանցյալ ֆինանսական գործիքներ են, որոնք դասակարգվում են որպես վաճառքի համար մատչելի, կամ չեն դասակարգվում որպես (ա) իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով ճանաչվող ֆինանսական ակտիվներ, (բ) մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ կամ (գ) վարկեր և դեբիտորական պարտքեր:

Վաճառքի համար մատչելի՝ բաժնային ներդրումները, որոնք չունեն գնանշված շուկայական արժեք և որոնց իրական արժեքը չի կարող արժանահավատորեն չափվել, չափվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի վերջին գնահատվում են արժեզրկման հայտանիշների առկայությունը որոշելու նպատակով: Ֆինանսական ակտիվները համարվում են արժեզրկված, եթե առկա է օբյեկտիվ վկայություն այն մասին, որ ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի դեպքեր կարող են ազդեցություն ունենալ ներդրման գծով գնահատված ապագա դրամական հոսքերի վրա:

Որպես վաճառքի համար մատչելի դասակարգված՝ գնանշված կամ չգնանշված կապիտալի ներդրումներում արժեթղթի իրական արժեքի զգալի կամ տևական անկումն ինքնարժեքից համարվում է արժեզրկման օբյեկտիվ վկայություն: Բոլոր այլ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման օբյեկտիվ վկայություն կարող են համարվել հետևյալ հայտանիշները՝

- թողարկողի կամ կոնտրագենտի զգալի ֆինանսական դժվարությունները, կամ
- պայմանագրի խախտումը, մասնավորապես տոկոսների կամ մայր գումարի վճարման ուշացումը կամ չկատարումը, կամ
- տոկոսների կամ մայր գումարի վճարման ուշացումը կամ չկատարումը, կամ
- փոխառուի կողմից սնանկության կամ ֆինանսական վերակազմակերպման գործընթացի նախաձեռնումը, կամ
- ֆինանսական դժվարությունների արդյունքում տվյալ ֆինանսական ակտիվի գծով ակտիվ շուկայի անհետացումը:

Ֆինանսական ակտիվների որոշ կատեգորիաների համար, ինչպիսիք են՝ վարկերը և դեբիտորական պարտքերը, ակտիվները, որոնք ըստ գնահատականների առանձին արժեզրկված չեն, ի լրումն գնահատվում են նաև խմբային արժեզրկման տեսանկյունից: Վարկային պորտֆելի արժեզրկման օբյեկտիվ վկայություն կարող է համարվել Բանկի նախկին փորձը վճարումների հավաքագրման գծով, հետաձգված վճարումների թվի աճը պորտֆելում ինչպես նաև ազգային կամ տեղական մակարդակում դիտարկելի փոփոխությունները, որոնք կարող են հանգեցնել դեբիտորական պարտքի անհավաքագրելիության:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման գծով ծախսի գումարն իրենից ներկայացնում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և գնահատված ապագա դրամական հոսքերի տարբերությունը՝ զեղչված ֆինանսական ակտիվի համար սկզբնապես սահմանված տոկոսադրույքով:

Ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է արժեզրկումից կորստի չափով անմիջականորեն բոլոր ակտիվների գծով, բացառությամբ վարկերի և դեբիտորական պարտքերի, որոնց դեպքում հաշվեկշռային արժեքը նվազեցվում է պահուստային հաշվի միջոցով: Երբ ակտիվը կամ դեբիտորական պարտքը համարվում է անհուսալի, այն դուրս է գրվում պահուստային հաշվի միջոցով: Հետագայում դուրս գրված գումարների վերականգնումը կատարվում է դրանք պահուստային հաշվին կրեդիտագրելու միջոցով: Պահուստային հաշվի հաշվեկշռային արժեքի փոփոխությունները ճանաչվում են եկամուտներում կամ ծախսերում:

Երբ վաճառքի համար պահվող ֆինանսական ակտիվը համարվում է արժեզրկված, այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակային օգուտները կամ վնասները վերադասակարգվում են որպես տվյալ ժամանակաշրջանի շահույթ կամ վնաս:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների համար այն դեպքում, եթե հաջորդող ժամանակաշրջանում արժեզրկումից կորուստի գումարը նվազում է, և նվազեցումը կարող է օբյեկտիվորեն վերագրվել արժեզրկման ճանաչումից հետո տեղի ունեցող դեպքերի, նախկինում ճանաչված արժեզրկումից կորուստը հակադարձվում է շահույթի կամ վնասի միջոցով այնքանով, որքանով արժեզրկման ամսաթվի դրությամբ ներդրման հաշվեկշռային արժեքը չի գերազանցում ամորտիզացված արժեքն այն դեպքում, եթե այդ արժեզրկումը ճանաչված չլիներ:

Ինչ վերաբերում է վաճառքի համար մատչելի բաժնային արժեթղթերին, ապա նախկինում շահույթում կամ վնասում հաշվառված արժեզրկումից վնասները չեն հակադարձվում շահույթի կամ վնասի միջոցով:

Իրական արժեքի ցանկացած փոփոխություն, որը տեղի է ունենում արժեզրկումից կորուստի ճանաչումից հետո, ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում և կոտակվում է ներդրումների վերագնահատման պահուստի տակ:

Վարկերի դուրսգրում: Վարկերի արժեզրկումից կորուստները վերագրվում են պահուստներին, երբ համարվում են անհավաքագրելի: Վարկերը դուրս են գրվում Բանկի ղեկավարության կողմից գումարների հավաքագրման ուղղությամբ իրականացված բոլոր հնարավորություններն օգտագործելուց և գրավները վաճառելուց հետո: Դուրս գրված գումարների հետագա հավաքագրումը շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արտացոլվում է որպես ֆինանսական ակտիվների արժեզրկման պահուստներին կատարած մասհանումների վերադարձ հավաքագրման ժամանակաշրջանում:

Ֆինանսական ակտիվների ապաճանաչումը: Բանկն ապաճանաչում է ֆինանսական ակտիվները, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ երրորդ կողմին է փոխանցվում ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական միջոցների նկատմամբ իրավունքը: Եթե Բանկը չի փոխանցում և չի պահպանում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա Բանկը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև դրա հետ կապված պարտավորությունը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ: Եթե Բանկը պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները, ապա Բանկը պետք է շարունակի ճանաչել ֆինանսական ակտիվը:

Ֆինանսական ակտիվը ամբողջությամբ ապաճանաչելիս հաշվեկշռային արժեքի և ստացված հատուցման այլ համապարփակ ֆինանսական արդյունքում նախկինում ճանաչված կուտակված որևէ օգուտի կամ վնասի գումարի տարբերությունը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում:

Եթե Բանկի շարունակվող ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի միայն մի մասով է (օրինակ՝ երբ Բանկը պահպանում է փոխանցված ակտիվի մի մասը հետգնելու օպցիոնը), ապա Բանկը ֆինանսական ակտիվի նախկին հաշվեկշռային արժեքը բաշխում է այն մասի, որն այն շարունակում է ճանաչել շարունակվող ներգրավվածության ներքո, և այն մասի միջև, որն այն այլևս չի ճանաչում՝ փոխանցման ամսաթվի դրությամբ այդ մասերի հարաբերական իրական արժեքների հիման վրա: Այլևս չճանաչվող մասի վրա բաշխված հաշվեկշռային արժեքի և այլևս չճանաչվող մասի դիմաց ստացված հատուցման և դրա վրա բաշխված այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված կուտակված որևէ օգուտի կամ վնասի գումարների տարբերությունը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում: Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված կուտակված օգուտը կամ վնասը բաշխվում է այն մասի, որը շարունակվում է ճանաչվել, և այլևս չճանաչվող մասի միջև՝ այդ մասերի հարաբերական իրական արժեքների հիման վրա:

Ֆինանսական պարտավորություններ: Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող կամ որպես այլ ֆինանսական պարտավորություններ:

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող այն դեպքում երբ ֆինանսական պարտավորությունը պահվում է վաճառքի համար կամ դասակարգվում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ֆինանսական պարտավորությունը դասակարգվում է որպես վաճառքի համար պահվող, եթե՝

- այն ձեռք է բերվել հիմնականում կարճաժամկետ կտրվածքով հետգնման նպատակով, կամ
- սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Բանկի կողմից համատեղ ղեկավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ
- այն հանդիսանում է ածանցյալ գործիք, որը չի նախատեսված կամ օգտագործվում որպես հեջավորման գործիք:

Ֆինանսական պարտավորությունը, բացի վաճառքի համար պահվող ֆինանսական պարտավորություններից, կարող է ճանաչման պահին դասակարգվել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե

- նման դասակարգումը բացառում, կամ զգալիորեն կրճատում է չափման կամ ճանաչման անհամապատասխանությունը, որն այլապես կառաջանար, կամ՝
- ֆինանսական պարտավորությունը կազմում է ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների կամ այդ երկուսի խմբի մի մաս, որը կառավարվում է, և դրա կատարողականը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, բանկի փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային ռազմավարության համաձայն և խմբավորման վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է ներքին կարգով՝ այդ հիմունքներով, կամ
- այն կազմում է պայմանագրի մի մաս, որը պարունակում է ներկառուցված ածանցյալ գործիքներից մեկը կամ մի քանիսի և ՀՀՄՍ 39. Ֆինանսական գործիքներ: Ծանաչումը և չափումը, թույլ է տալիս ողջ պայմանագիրը (ակտիվները կամ պարտավորությունները) դասակարգել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Արժեթղթերի հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր և արժեթղթերի փոխառության գործարքներ. սովորական գործունեության ընթացքում Բանկը կնքում է ֆինանսական ակտիվների վաճառքի և հետգնման (ռեպո), ինչպես նաև ֆինանսական ակտիվների գնման և հետվաճառքի (հակադարձ ռեպո) պայմանագրեր: Ռեպո և հակադարձ ռեպո համաձայնագրերը օգտագործվում են Բանկի կողմից որպես գանձապետական կառավարման տարր:

Ռեպո համաձայնագիրը իրենից ներկայացնում է վճարի կամ այլ հատուցման դիմաց ֆինանսական ակտիվի փոխանցում մեկ այլ կողմի և համապատասխան պարտավորություն՝ հետ գնելու այդ ֆինանսական ակտիվն ապագայում փոխանակման համար օգտագործված կանխիկ կամ այլ հատուցման գումարը գումարած տոկսը: Այս պայմանագրերը հաշվառվում են որպես ֆինանսական գործարքներ:

Բանկը կնքում է արժեթղթերի հետգնման պայմանագրեր և արժեթղթերի փոխառության պայմանագրեր, ըստ որոնց այն ստանում կամ փոխանցում է գրավի առարկան՝ շուկայում ընդունված պրակտիկայի համաձայն: Հետգնման գործարքների ստանդարտ պայմաններով Հայաստանի Հանրապետությունում, գրավառուն իրավունք ունի վաճառել կամ վերագրավադրել գրավի առարկան, պայմանով որ դրա դիմաց կվերադարձնի համարժեք արժեթղթեր՝ գործարքի փակման ամսաթվին:

Արժեթղթերի փոխանցումը կոնտրագենտներին միայն արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, եթե դրա հետ միասին փոխացվում են նաև սեփականության հետ կապված ռիսկերը և օգուտները:

Այլ ֆինանսական պարտավորություններ: Այլ ֆինանսական պարտավորությունները, ներառյալ այլ փոխառու միջոցները, ենթակա (սուբորդինացված) պարտավորությունները և այլ ֆինանսական պարտավորությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով, առանց գործարքի ծախսերի:

Այլ ֆինանսական պարտավորությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ տոկոսային ծախսը ճանաչելով արդյունավետության հիմունքով:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդն իրենից ներկայացնում է որոշակի ժամանակահատվածում ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի հաշվարկի մեթոդ: Արդյունավետ տոկոսադրույքն այն տոկոսադրույքն է, որը ճշգրտորեն գեղչում է ապագա գնահատված կանխիկ վճարումները (ներառյալ բոլոր տեսակի միջնորդավճարները և ստացված կամ վճարված գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, գործարքի հետ կապված ծախսերը և այլ պարգևավճարներ կամ գեղչեր) ֆինանսական պարտավորության ակնկալվող գործողության ժամանակահատվածի ողջ ընթացքում, կամ (ըստ անհրաժեշտության) ավելի կարճ ժամանակահատվածում՝ հասցնելով սկզբնական ճանաչման պահին առկա գուտ հաշվեկշռային արժեքին:

Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչումը: Բանկն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունները միայն այն ժամանակ, երբ Բանկի պարտավորությունները մարվում են, չեղյալ են համարվում կամ ուժը կորցնում են: Երբ միևնույն փոխատուի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է այլ ֆինանսական պարտավորությամբ, որի պայմաններն էականորեն տարբերվում են նախորդից, կամ եթե տեղի է ունեցել առկա պարտավորության պայմանների էական փոփոխություն, ապա նմանատիպ փոխանակումը կամ փոփոխությունը ճանաչվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված և վճարվելիք հատուցման տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքում:

Ֆինանսական երաշխավորության պայմանագրեր. Ֆինանսական երաշխավորության պայմանագիրը մի այնպիսի պայմանագիր է, որի արդյունքում այդ պայմանագիրը տրամադրողը պարտավորվում է կատարել որոշակի վճարումներ, պայմանագիրը ստացողին փոխհատուցելով այն կորուստները, որը վերջինս կրում է որոշակի պարտապանի կողմից պարտքային գործիքի համաձայն սահմանված ամսաթվին վճարումներ չկատարելու արդյունքում:

Բանկի կողմից տրամադրված ֆինանսական երաշխավորության պայմանագրերը սկզբնապես չափվում են դրանց իրական արժեքով, և եթե չեն դասակարգվում որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, հետագայում չափվում են հետևյալ երկու մեծություններից առավելագույնով:

- ՀՀՄՍ 37. Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ ստանդարտի համաձայն որոշված պայմանագրով նախատեսված պարտավորության գումարի, և
- Ի սկզբանե ճանաչված գումարի՝ նվազեցված, ըստ անհրաժեշտության, հատույթի ճանաչման քաղաքականության համաձայն ճանաչված կուտակված արժեզրկման չափով

Ածանցյալ ֆինանսական գործիքներ: Իր բնականոն գործունեության ընթացքում Բանկն արտարժույթային ռիսկը կառավարելու նպատակով կնքում է գործարքներ տարբեր ածանցյալ ֆինանսական գործիքներով, այդ թվում՝ արտարժույթի սվոփեր և արտարժույթի փոխանակման պայմանագրեր: Նման ֆինանսական գործիքները դասակարգվում են որպես առևտրային նպատակով պահվող և դրանց հաշվառումն իրականացվում է ֆինանսական գործիքների սկզբնական ճանաչման քաղաքականությունների համաձայն, այնուհետև դրանք չափվում են իրական արժեքով: Կախված գործիքի շուկայական կամ պայմանագրային արժեքից, ինչպես նաև մի շարք այլ գործոններից, իրական արժեքը որոշվում է շուկայական գնանշումներով կամ գնային մոդելներով: Ածանցյալ ֆինանսական գործիքները համարվում են ակտիվներ, եթե դրանց իրական արժեքը դրական է և պարտավորություններ, եթե դրանց արժեքը բացասական է: Գործարքների շահույթը և վնասը վերոնշյալ գործիքների դեպքում գրանցվում են համապարփակ եկամտի մասին հաշվետվություններում՝ որպես իրական արժեքով շահույթի և վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների/պարտավորությունների գործարքներից առաջացած զուտ օգուտ կամ վնաս: Ածանցյալ գործիքների իրական արժեքի փոփոխությունները ներառվում են օգուտում կամ վնասում:

Բանկը որպես վարձակալ: Գործառնական վարձակալության վճարները ծախսագրվում են գծային մեթոդով վարձակալության ժամկետի ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ որևէ այլ պարբերական հիմունք ավելի ճշգրիտ է ներկայացնում վարձակալությունից տնտեսական օգուտների ստացման ժամանակային բաշխումը: Գործառնական վարձակալության պայմանագրով նախատեսված պայմանական վարձավճարները ծախսագրվում են այն ժամանակաշրջանում, երբ դրանք առաջանում են:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ: Դրամական միջոցներն և դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները, թղթակցային հաշիվների մնացորդները, որոնք գերծ են սահմանափակումներից և ժամկետային ավանդները, որոնց մարման նախնական ժամկետը չի գերազանցում 90 օրը, որոնք կարճ ժամկետում կարող են փոխարկվել կանխիկի և որոնք ծանրաբեռնված չեն պայմանագրային պարտավորություններով:

Թանկարժեք մետաղներ: Ոսկին և այլ թանկարժեք մետաղները հաշվառվում են ՀՀ ԿԲ կողմից սահմանվող գներով, ինչը մոտավորապես դրանց իրական արժեքն է և հիմնված է Լոնդոնի Թանկարժեք

Մետաղների բորսայի գնանշումների վրա: Գների տատանումներն արտացոլվում են թանկարժեք մետաղներով գործառնություններից զուտ եկամուտ հոդվածում՝ այլ եկամուտներում կամ ծախսերում:

Առգրավված ակտիվներ: Որոշակի հանգամանքներում, ակտիվներն առգրավվում են ժամկետանց վարկերի գծով գրավադրված գույքի վրա արգելանքի կիրառման դեպքում: Առգրավված ակտիվները չափվում են հաշվեկշռային արժեքից և վաճառքի ինքնարժեքից նվազագույնով:

Հիմնական միջոցներ: Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկման կորուստները, եթե այդպիսիք կան:

Մաշվածությունը հաշվարկվում է հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի հիման վրա և նախատեսված է զրոյացնելու ակտիվների արժեքը դրանց օգտակար ծառայության վերջում: Մաշվածությունը հաշվարկվում է ուղիղ գծային մեթոդով հետևյալ օգտակար ծառայության ժամկետներով՝

Հիմնական միջոցների դասը	Օգտակար ծառայություն (տարիներ)
Շենքեր	50
Համակարգիչներ	3-5
Մեքենաներ	8
Վարձակալված ակտիվների բարելավումներ	20
Այլ	8

Վարձակալված ակտիվների բարելավումները ամորտիզացվում են վարձակալության ժամկետի և օգտակար ծառայության ժամկետից նվազագույնով, եթե առկա չէ ողջամիտ համոզվածություն այն մասին, որ Բանկը կստանա ակտիվի նկատմամբ սեփականության իրավունքը վարձակալության ժամկետի վերջում կամ կերկարաձգի վարձակալության ժամկետը:

Հիմնական միջոցների տարրը ապաճանաչվում է այն օտարելիս կամ, երբ այդ ակտիվի շարունակական օգտագործումից այլևս տնտեսական օգուտներ չեն ենթադրվում: Հիմնական միջոցների վաճառքից կամ շրջանառությունից դուրսբերումից առաջացած ցանկացած օգուտ կամ վնաս հաշվարկվում է որպես ակտիվի վաճառքից ստացված միջոցների և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ճանաչվում է ֆինանսական արդյունքում:

Ոչ նյութական ակտիվներ

Առանձին ձեռքբերված ոչ նյութական ակտիվներ: Որոշակի օգտակար ծառայության ժամկետ ունեցող առանձին ձեռքբերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները: Ամորտիզացիան օգտակար ծառայության ժամանակահատվածում հաշվարկվում է ուղիղ գծային մեթոդով: Օգտակար ծառայության ժամանակահատվածը և ամորտիզացիայի հաշվարկման մեթոդը վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու տարվա վերջում՝ գնահատումներում ցանկացած փոփոխություն հաշվառելով առաջընթաց կերպով: Անորոշ օգտակար ծառայության ժամկետով ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել առանձին, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված արժեզրկումից կորուստները:

Ոչ նյութական ակտիվների ապաճանաչում: Ոչ նյութական ակտիվներն ապաճանաչվում են դրանք օտարելիս կամ երբ այլևս դրանց օգտագործումից կամ օտարումից չեն ակնկալվում հետագա տնտեսական օգուտներ: Ապաճանաչումից օգուտները կամ վնասները չափվում են որպես ակտիվի օտարումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ճանաչվում են ֆինանսական արդյունքում այն ժամանակաշրջանում, երբ ակտիվն ապաճանաչվում է:

Նյութական և ոչ նյութական ակտիվների արժեզրկում, բացի գուղվից: Յուրաքանչյուր հաշվետու տարվա վերջում Բանկը վերանայում է իր նյութական և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքները՝ որոշելու համար արդյոք կա որևէ հայտանիշ, որ այս ակտիվներում եղել են արժեզրկումից կորուստներ: Եթե առկա է որևէ նմանատիպ հայտանիշ, ապա գնահատվում է ակտիվների փոխհատուցվող գումարը, որպեսզի որոշվեն արժեզրկումից կորուստները (եթե այդպիսիք կան): Եթե

առանձին ակտիվի փոխհատուցվող գումարը հնարավոր չէ որոշել, Բանկը գնահատում է այն դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը, որին այդ ակտիվը պատկանում է: Եթե հնարավոր է որոշել բաշխման ողջամիտ և հետևողական հիմունք, ապա կորպորատիվ ակտիվները ևս բաշխվում են առանձին դրամաստեղծ միավորներին, այլապես դրանք բաշխվում են դրամաստեղծ ակտիվների փոքրագույն խմբին, որոնց համար կարելի է որոշել խելամիտ և հետևողական հիմունք:

Անորոշ օգտակար ծառայությամբ և օգտագործման համար դեռևս ոչ մատչելի ոչ նյութական ակտիվները ստուգվում են արժեզրկման առկայության տեսանկյունից առնվազն տարին մեկ անգամ, ինչպես նաև երբ առկա է հայտանիշ, որ ակտիվը կարող է արժեզրկված լինել:

Փոխհատուցվող գումարն իրական արժեքից (հանած վաճառքի հետ կապված ծախսերը) և օգտագործման արժեքից առավելագույնն է. օգտագործման արժեքը գնահատելիս ակնկալվող ապագա դրամական հոսքերը բերվում են ներկա արժեքի՝ կիրառելով տոկոսադրույք մինչև հարկումը, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումը և ակտիվին բնորոշ ռիսկերը, որոնցով ապագա գնահատված հոսքերը չեն ճշգրտվել:

Եթե ակտիվի (կամ դրամաստեղծ միավորի) փոխհատուցվող գումարը գնահատվում է ավելի քիչ, քան հաշվեկշռային արժեքը, ապա հաշվեկշռային արժեքն իջեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստն անհապաղ ճանաչվում է ֆինանսական արդյունքում, եթե տվյալ ակտիվը չի հաշվառվում վերագնահատված արժեքով: Վերջինիս դեպքում արժեզրկումից կորուստը դիտարկվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Եթե հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի (կամ դրամաստեղծ միավորի) հաշվեկշռային արժեքն ավելացվում է մինչև վերանայված փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ավելացումից հետո հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը կորոշվեր, եթե նախորդ ժամանակաշրջաններում ակտիվի (կամ դրամաստեղծ միավորի) գծով արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ: Արժեզրկումից կորստի հակադարձումը անմիջապես ճանաչվում է ֆինանսական արդյունքում, եթե տվյալ ակտիվը չի հաշվառվում վերագնահատված արժեքով, ինչի դեպքում արժեզրկումից կորստի հակադարձումը դիտարկվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

Ներդրումներ ասոցիացված ընկերություններում: Ասոցիացված ընկերությունը կազմակերպություն է, որտեղ Բանկն ունի նշանակալի ազդեցություն, բայց չի վերահսկում նրան առանձին կամ համատեղ՝ ներդրման օբյեկտի ֆինանսական և գործառնական քաղաքականության գծով որոշումներ ընդունելու միջոցով: Ներդրման օբյեկտի ակտիվներն ու պարտավորությունները, ինչպես նաև գործունեության արդյունքներում ներդրողի բաժնեմասը ֆինանսական հաշվետվություններում արտացոլվում են բաժնեմասնակցության մեթոդով, բացի այն դեպքերից, երբ ներդրումը դասակարգվում է վաճառքի համար մատչելի:

Ասոցիացված ընկերություններում ներդրումները հաշվառվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում սկզբնական արժեքով, և ճշգրտվում են ասոցիացված ընկերության զուտ ակտիվներում Բանկի մասնակցության փոփոխությանը համապատասխան, հաշվի առնելով առանձին ներդրումների արժեքի արժեզրկումից կորուստները: Բանկի բաժնեմասը գերազանցող՝ ասոցիացված ընկերության վնասները չեն ճանաչվում:

Ներդրման ամսաթվով ասոցիացված ընկերության զուտ ակտիվների իրական արժեքը գերազանցող ներդրման մասը ճանաչվում է որպես գույովի: Ասոցիացված ընկերությունում ձեռքբերման ամսաթվի դրությամբ զուտ որոշելի ակտիվների իրական արժեքում Բանկի ունեցած մասնակցությունից ցածր ձեռքբերման արժեքի տարբերությունը (ձեռքբերման գծով գեղչը) կրեդիտագրվում է շահույթում կամ վնասում՝ ձեռքբերման ժամանակահատվածում:

Այն դեպքում երբ Բանկը գոծարքի մեջ է մտնում Բանկի հետ ասոցիացված ընկերության հետ, շահույթները կամ վնասները մարվում են Բանկի՝ տվյալ ասոցիացված կազմակերպությունում ունեցած

մասնակցության չափով: Կորուստները կարող են վկայել փոխանցվող ակտիվի արժեզրկման մասին, և այդ դեպքում համապատասխան արժեզրկման գծով պահուստավորում է պահանջվում:

Հարկում

Շահութահարկի գծով ծախսը ներառում է ընթացիկ հարկի գծով պարտավորությունը և հետաձգված հարկը:

Ընթացիկ հարկ: Ընթացիկ հարկի գծով պարտավորությունը հիմնված է տարվա հարկվող շահույթի վրա: Հարկվող շահույթը նախաձեռն հարկումը տարբերվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներկայացվող շահույթից եկամտի և ծախսի այնպիսի տարրերի պատճառով, որոնք հարկման կամ նվազեցման ենթակա են այլ հաշվետու ժամանակաշրջաններում, ինչպես նաև այն տարրերի, որոնք երբևէ չեն հարկվելու կամ նվազեցվելու: Բանկի ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ուժի մեջ մտած կամ, ըստ էության, ուժի մեջ մտած հարկի դրույքաչափերը:

Հետաձգված հարկ: Հետաձգված հարկերը ճանաչվում են ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկման բազաների միջև: Հետաձգված հարկային պարտավորությունները ընդհանուր առմամբ ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվները ընդհանուր առմամբ ճանաչվում են բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով միայն այն չափով որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունները: Նմանատիպ հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման պահին այնպիսի գործարքների արդյունքում, որոնք ազդեցություն չունեն ինչպես հաշվապահական, այնպես էլ հարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են հարկվող ժամանակավոր տարբերությունների գծով՝ կապված հիմնական միջոցների և հաճախորդներին տրված վարկերի հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկն ի վիճակի է վերահսկել ժամանակավոր տարբերության մարման ժամանակային բաշխումը, կամ հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի մարվի տեսանելի ապագայում: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով, կապված վերը նշված ներդրումների հետ, ճանաչվում են միայն այն չափով, որով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող է օգտագործվել ժամանակավոր տարբերությունը և ժամանակավոր տարբերությունը կմարի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը պետք է վերանայվի յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվի այն չափով, որով այլևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները պետք է չափվեն հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային օրենքները), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումը պետք է արտացոլի հարկային հետևանքները, որոնք կառաջանան՝ կախված այն եղանակից, որով Բանկը հաշվետու ժամանակաշրջանի վերջում, ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Տարվա ընթացիկ և հետաձգված հարկեր: Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք վերաբերում են տարրերի, որոնք ճանաչվել են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում, ինչի դեպքում ընթացիկ և հետաձգված հարկերը նույնպես ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

Գործունեության հետ կապված հարկեր: Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են տարբեր այլ հարկատեսակներ ևս, որոնց գծով գումարների հաշվարկը կապված է Բանկի գործունեության հետ: Այս հարկերը ներառվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ որպես գործառնական ծախսերի բաղադրիչ:

Պահուստներ: Պահուստները ճանաչվում են, երբ Բանկն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական), որպես անցյալ դեպքերի արդյունք և հավանական է, որ Բանկից կպահանջվի կատարել պարտականությունը և պարտականության գումարը հավաստիորեն կարող է գնահատվել:

Պահուստում ճանաչված գումարն իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ լավագույն գնահատականը, որը կպահանջվի ներկա պարտականությունը մարելու համար՝ հաշվի առնելով հարակից ռիսկերն և անորոշությունները: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը պետք է իրենից ներկայացնի այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար:

Եթե ակնկալվում է, որ որևէ այլ կողմ ամբողջությամբ կամ մասամբ փոխհատուցելու է պահուստը մարելու համար պահանջվող ծախսումները, ապա փոխհատուցումը պետք է դիտվի որպես առանձին ակտիվ, երբ ըստ էության որոշակի է, որ կազմակերպության կողմից պարտականությունը մարելու դեպքում փոխհատուցումը կստացվի և փոխհատուցման գումարը կարող է արժանահավատորեն չափվել:

Պայմանական ակտիվներ և պարտավորություններ: Պայմանական պարտավորությունները չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում սակայն բացահայտվում են, բացառությամբ այն դեպքերի, երբ տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսքի հավանականությունը շատ փոքր է: Պայմանական ակտիվները չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, բայց դրանք բացահայտվում են հաշվետվություններին կից ծանոթագրություններում այն դեպքերում, երբ դրանց հետ կապված տնտեսական օգուտների ներհոսքը համարվում է հավանական:

Արտարժույթ: Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Բանկի գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով (արտարժույթով) կատարված գործարքները ճանաչվում են գործարքի օրվա փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում արտարժույթով արտահայտված դրամային հոդվածները (տարրերը) վերահաշվարկվում են այդ օրվա փոխարժեքով: Իրական արժեքով հաշվառվող՝ արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածները, վերահաշվարկվում են իրական արժեքի սահմանման օրվա փոխարժեքով: Արտարժույթով հաշվարկված սկզբնական արժեքով հաշվառվող ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում:

Դրամային հոդվածների գծով առաջացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում դրանց առաջացման ժամանակաշրջանում:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Բանկի կողմից կիրառված փոխարժեքները տարվա վերջում հետևյալն են՝

	Միջին փոխարժեք		Միջին փոխարժեք	
	2014թ.	2013թ.	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	415.75	409.55	474.97	405.64
ՀՀ դրամ/1 ԵՎԸԸ	552.09	544.06	577.47	559.54
ՀՀ դրամ/1 ռուբլի	10.98	12.87	8.15	12.44

Գրավ: Բանկը որպես հաճախորդի պարտավորությունների ապահովման միջոց է ընդունում գրավ, երբ դա նպատակահարմար է համարվում: Գրավը հիմնականում լինում է հաճախորդի ակտիվների նկատմամբ կոշտ գրավի տեսքով և Բանկին պահանջի իրավունք է տալիս այս ակտիվների նկատմամբ հաճախորդի առկա և ապագա պարտավորությունների դիմաց:

Բաժնետիրական կապիտալ: Բաժնետիրական կապիտալի համալրումները ճանաչվում են սկզբնական արժեքով: Թողարկված նոր բաժնեմասերին ուղղակիորեն վերագրելի ծախսերը, բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության միավորումներից, նվազեցվում են սեփական կապիտալից՝ առանց շահութահարկի:

Սեզմենտների ներկայացում: Գործառնական սեզմենտը Բանկի բաղադրիչն է, որը ներգրավված է ձեռնարկատիրական գործունեություններում, որոնցից այն կարող է վաստակել հասույթներ և կրել ծախսեր (ներառյալ Բանկի այլ բաղադրիչների հետ գործառնություններին վերաբերող հասույթները և ծախսերը): Գործառնական սեզմենտների գործառնական արդյունքները կանոնավոր կերպով վերանայվում են Բանկի գլխավոր գործառնական որոշում կայացնողի կողմից՝ սեզմենտին միջոցների բաշխման վերաբերյալ որոշում կայացնելու և դրա գործունեության արդյունքները գնահատելու նպատակով: Գործառնական սեզմենտի գծով առկա է առանձին ֆինանսական տեղեկատվություն:

Բանկի գործառնությունները բավականին ինտեգրացված են և կազմում են մեկ գործարար սեզմենտ ըստ ՖՀՄՄ 8 «Գործառնական սեզմենտներ» ստանդարտի պահանջների: Ղեկավարությունն առանձին հիմունքով չի ուսումնասիրում Բանկի բաղադրիչների գործառնական արդյունքները: Բանկի ակտիվները հիմնականում գտնվում են Հայաստանի Հանրապետությունում, իսկ իր հասույթի և շահույթի մեծ մասը Բանկը ստանում է Հայաստանի Հանրապետությունում իրականացվող և Հայաստանի Հանրապետության հետ կապված գործառնություններից: Գլխավոր գործառնական որոշում կայացնողը, որը Բանկի դեպքում հանդիսանում է Խորհուրդը, միայն ստանում և ուսումնասիրում է Բանկին՝ որպես մեկ ամբողջությամբ վերաբերող տեղեկատվությունը:

3. Կարևոր հաշվապահական դատողությունների և գնահատումների հետ կապված անորոշության հիմնական աղբյուրները

Բանկի հաշվապահական քաղաքականությունը կիրառելիս Բանկի ղեկավարությանն անհրաժեշտ է լինում կատարել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնք այլ աղբյուրներից ակնհայտ չեն երևում: Գնահատումներն և դրա հետ կապված ենթադրությունները հիմնված են նախկին փորձի և այլ համապատասխան գործոնների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումներն և ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումներում փոփոխությունները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, երբ փոփոխությունը տեղի է ունենում, եթե փոփոխությունը վերաբերում է միայն այդ ժամանակաշրջանին կամ փոփոխությունը ճանաչվում է այդ և ապագա ժամանակաշրջաններում, եթե փոփոխությունն ազդում է ընթացիկ և ապագա ժամանակաշրջանների վրա:

Անորոշության գնահատման չափանիշների հիմնական աղբյուրները: Ստորև ներկայացվում են ապագային վերաբերող հիմնական ենթադրությունները և ժամանակաշրջանի վերջի դրությամբ գնահատումներից բխող անորոշության այլ հիմնական աղբյուրները, որոնք կրում են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների՝ հաջորդող ֆինանսական տարում էական ճշգրտումների առաջացման զգալի ռիսկ:

Վարկերի արժեզրկում: Բանկը կանոնավոր կերպով վերանայում է իր վարկերը և դեբիտորական պարտքերը՝ դրանք արժեզրկման տեսանկյունից գնահատելու համար: Բանկի վարկերի արժեզրկման պահուստները սահմանվում են վարկերի և դեբիտորական պարտքերի պորտֆելում առաջացած արժեզրկումից կորուստները ճանաչելու համար: Բանկը վարկերի և դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստին կատարվող մասհանումների վերաբերյալ գնահատումները դիտարկում է

որպես գնահատման անորոշությունների հիմնական աղբյուր, որովհետև ա) դրանք բավականին զգայուն են մի ժամանակաշրջանից մյուսը տեղի ունեցող փոփոխությունների նկատմամբ, քանի որ հիմնված են չվճարումների չափերի և ապագա կորուստների գնահատման վերաբերյալ ենթադրությունների վրա, որոնք կատարվել են անցյալ գործունեության փորձի հիման վրա և բ) ցանկացած զգալի տարբերություն Բանկի կողմից գնահատված կորուստների և դրանց փաստացի չափերի միջև կհանգեցնի անհրաժեշտության, որ Բանկը գրանցի հավելյալ պահուստներ, որոնք կարող են ունենալ նշանակալի ազդեցություն նրա ապագա ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունների վրա:

Բանկը կիրառում է անհատական և խմբային գնահատումների համադրություն՝ հաշվետու ամսաթվի դրությամբ արժեզրկման պահուստին մասհանումները որոշելիս:

Անհատական գնահատումները կիրառվում են այն վարկերի և դեբիտորական պարտքերի համար, որոնք առանձին վերցված նշանակալի են: Վարկերը և դեբիտորական պարտքերը, որոնց մնացորդը սեփական կապիտալի 0.2%-ից ավելին է կազմում, առանձին վերցված համարվում են նշանակալի: Բանկն օգտագործում է ղեկավարության գնահատումը՝ գնահատելու համար արժեզրկումից կորուստների գումարները, այն դեպքում երբ վարկառուն ունի ֆինանսական դժվարություններ, և առկա են սակավաթիվ պատմական տվյալներ՝ կաապված համանման վարկառուների հետ:

Առանձին վերցված նշանակալի վարկերն և դեբիտորական պարտքերը, որոնք արժեզրկված չեն, ինչպես նաև բոլոր այն վարկերն և դեբիտորական պարտքերը, որոնք անհատապես չեն գնահատվել, ներառվում են խմբային հիմունքով գնահատվող վարկերի և դեբիտորական պարտքերի մեջ: Խմբային հիմունքով գնահատվող վարկերն և դեբիտորական պարտքերը խմբավորվում են ըստ նմանատիպ վարկային ռիսկի բնութագրիչների և կետանցվածության կարգավիճակի և գնահատվում համապատասխանաբար: Բանկը ապագա դրամական հոսքերում փոփոխությունները գնահատում է՝ ելնելով նախկին ցուցանիշներից, հաճախորդների նախկին վարքագծից, տվյալ խմբի վարկառուների կողմից վճարումների կատարման իրավիճակի վատթարացման դիտարկելի տվյալներից, ինչպես նաև տնտեսական պայմաններից, որոնք առնչություն ունեն խմբի ակտիվների գծով պարտավորությունների չկատարման հետ: Ղեկավարությունն օգտագործում է գնահատականներ՝ ելնելով վնասների գծով առկա փորձից այն ակտիվների գծով, որոնք ունեն վարկային ռիսկին բնորոշ հատկանիշներ և առկա է վարկերի խմբին համանման արժեզրկման հայտանիշ: Բանկը հիմնվում է ղեկավարության դատողության վրա՝ վարկերի խմբի գծով դիտարկելի տվյալները ճշգրտելու համար այնպես, որ դրանք արտացոլեն պատմական տվյալներում չարտացոլված ընթացիկ հանգամանքները:

Խմբային հիմունքով գնահատման մեթոդաբանության խնդիրն է՝ ապահովել, որ արժեզրկումից կորստի պահուստը արտացոլի կորստի պատճառ հանդիսացող իրադարձությունները, որոնք արդեն տեղի են ունեցել, սակայն դեռ չեն գնահատվել անհատական հիմունքով: 2014թ. ընթացքում Բանկը վերանայել է արժեզրկումից կորստի պահուստի գնահատականը խմբային հիմունքով գնահատվող վարկերի գծով և կիրառել է խմբային արժեզրկման դրույքաչափեր, որոնք տարբեր են մինչ այդ կիրառված դրույքաչափերից: Եթե խմբային հիմունքով գնահատվող վարկերի գծով կիրառվեին նախկինում կիրառված խմբային արժեզրկման դրույքաչափերը, ապա խմբային հիմունքով գնահատվող վարկերի արժեզրկման պահուստի մասնահանումները հաշվետու ժամանակաշրջանի համար կաճեր 290,000 հազար դրամով:

Ֆինանսական հաշվետվություններում ֆինանսական ակտիվների արժեզրկման գծով պահուստավորումը որոշվում է՝ ելնելով ներկա տնտեսական և քաղաքական հանգամանքներից: Բանկը հնարավորություն չունի կանխատեսելու հանգամանքների փոփոխությունները Հայաստանում և դրանց հնարավոր ազդեցությունները ֆինանսական ակտիվների արժեզրկումից կորուստների պահուստի համարժեքության վրա ապագա ժամանակաշրջաններում:

2014 և 2013թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախառն վարկերն կազմում էին համապատասխանաբար՝ 52,793,946 և 41,511,187 հազար դրամ, իսկ պահուստին մասնահանումը՝ համապատասխանաբար՝ 736,558 և 817,445 հազար դրամ:

4. Նոր և վերանայված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների կիրառումը

4.1. Փոփոխություններ ՖՀՄՄ-ներում, որոնք ազդում են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների վրա

Ընթացիկ տարում ընդունվել են հետևյալ նոր և վերանայված Ստանդարտները և դրանց մեկնաբանությունները:

- Փոփոխություններ ՖՀՄՄ 10, ՖՀՄՄ 12 և ՀՀՄՄ 27 ստանդարտներում. *Ներդրումային ընկերություններ*
- Փոփոխություններ ՀՀՄՄ 32 ստանդարտում. *Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում*
- Փոփոխություններ ՀՀՄՄ 36 ստանդարտում. *Վերականգնվող գումարների բացահայտումը ոչ ֆինանսական ակտիվների գծով*
- Փոփոխություններ ՀՀՄՄ 39 ստանդարտում. *Ածանցյալ գործիքների վերաձևակերպում և հեջային հաշվառման շարունակում*
- ՖՀՄՄԿ 21. *Տուրքեր:*

Փոփոխություններ ՖՀՄՄ 10, ՖՀՄՄ 12 և ՀՀՄՄ 27 ստանդարտներում: Ներդրումային ընկերություններ.

ՖՀՄՄ 10-ում տեղի ունեցած փոփոխությունները սահմանում են բացառություններ ներդրումային ընկերության դուստր ընկերությունների համախմբման պահանջներից: Փոխարենը, ներդրումային ընկերությունից պահանջվում է դուստր ընկերություններում ունեցած մասնակցությունը չափել իր համախմբված ֆինանսական հաշվետվություններում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Այս բացառությունը չի առնչվում ներդրումային ընկերության դուստր ընկերություններին, որոնք տրամադրում են ծառայություններ, որոնք առնչվում են ներդրումային ընկերության ներդրումային գործունեությանը:

Որպես ներդրումային ընկերություն որակվելու համար հաշվետու ընկերությունից պահանջվում է՝

- ձեռք բերել միջոցներ մեկ կամ ավելի ներդրողների կողմից՝ մասնագիտական ներդրումային կառավարման ծառայություններ տրամադրելու նպատակով
- Պարտավորություն ստանձնել ներդրող(ներ)ի հանդեպ առ այն, որ իր գործունեության նպատակը միջոցների ներդրումն է կապիտալի արժևորման կամ ներդրումային եկամուտ ստանալու կամ այդ երկուսի համատեղման միջոցով եկամտաբերության ապահովումն է, և
- Գնահատել հիմնականում իր բոլոր ներդրումների կատրոդականը իրական արժեքի սկզբունքով:

Համապատասխան փոփոխություններ են տեղի ունեցել ՖՀՄՄ 12 և ՀՀՄՄ 27-ում՝ ներդրումային կազմակերպությունների կողմից նոր բացահայտումների պահանջները արտացոլելու համար:

Այս փոփոխությունները որևէ ազդեցություն չունեն Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա, քանի որ Բանկը ներդրումային ընկերություն չէ:

Փոփոխություններ ՀՀՄՄ 32 ստանդարտում: Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում:

ՀՀՄՄ 32-ը պարզաբանում է ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցմանը վերաբերող պահանջները: Մասնավորապես, այս փոփոխությունները պարզաբանում են այնպիսի հասկացությունների նշանակությունը, ինչպիսիք են՝ «ներկայումս ունի հաշվանցման իրավաբանորեն գործադրելի իրավունք» և «միաժամանակյա իրացում և մարում»:

Այս փոփոխությունները որևէ ազդեցություն չունեն Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա, քանի որ Բանկը չունի ֆինանսական ակտիվներ կամ ֆինանսական պարտավորություններ, որոնք ենթակա են հաշվանցման:

Փոփոխություններ ՀՀՄՍ 36 ստանդարտում. Վերականգնվող գումարների բացահայտումը ոչ ֆինանսական ակտիվների գծով: ՀՀՄՍ 36 ստանդարտը ակտիվի կամ դրամաստեղծ միավորի վերականգնվող արժեքի հաշվանցման պահանջը սահմանափակում է այն ժամանակահատվածներով, որոնցում արժեզրկումից կորուստը ճանաչվել է կամ հակադարձվել: Ավելին, դրանք ընդլայնում և պարզաբանում են բացահայտման պահանջները այն դեպքերում, երբ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի վերականգնվող արժեքը որոշվել է իրական արժեքից հանած իրացման գին հիմունքներով: Նոր բացահայտումները ներառում են իրական արժեքի հիերարխիան, հիմնական ենթադրությունները և գնահատման տեխնիկաները, որոնք համապատասխանում են ՀՀՄՍ 13 Իրական արժեքով չափումներ ստանդարտով պահանջվող բացահայտումներին:

Այս փոփոխությունները որևէ ազդեցություն չունեն ֆինանսական հաշվետվությունների վրա, քանի որ Բանկը չունի արժեզրկումից կորուստներ ոչ ֆինանսական ակտիվների գծով:

Փոփոխություններ ՀՀՄՍ 39 ստանդարտում. Ածանցյալ գործիքների վերաձևակերպում և հեջային հաշվառման շարունակում: Այս փոփոխությունները թույլ են տալիս շարունակել հեջային հաշվառումը այն դեպքում, երբ ածանցյալ գործիքը վերաձևակերպվում է քլիրինգային գործարքի կողմի վրա և բավարարված են որոշակի պայմաններ: Այս փոփոխությունով նաև պարզաբանվում է, որ վերաձևակերպման արդյունքում հեջավորման գործիք հանդիսացող ածանցյալ գործիքի իրական արժեքի ցանկացած փոփոխություն պետք է ներառվի հեջի արդյունավետության գնահատման և չափման գնահատման գործընթացում:

Այս փոփոխությունները որևէ ազդեցություն չեն ունենում Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա, քանի որ Բանկը չի կիրառում հեջային հաշվառում:

ՀՀՄՄԿ 21 Տուրքեր. Այս մեկնաբանությունը կիրառելի է պետական մարմինների կողմից կիրառվող բոլոր տեսակի վճարումների գծով, բացառությամբ շահութահարկի, որոնք լուսաբանվում են ՀՀՄՍ 12 ստանդարտով, և բացառությամբ օրենքի խախտման դեպքում կիրառվող տույժեր և տուգանքների: Մեկնաբանությունը պարզաբանում է, որ տուրքերի վճարման պարտավորությունը պետք է ճանաչվի միայն այն դեպքում, երբ պարտադրող իրադարձությունը տեղի է ունեցել, և ուղղություն է տալիս այն մասին, թե արդյոք պարտավորությունը պետք է ճանաչվի առաջընթաց սկզբունքով որոշակի ժամանակահատվածի համար, թե ամբողջությամբ պետք է ճանաչվի կոնկրետ ամսաթվի դրությամբ:

Մեկնաբանությունը ազդեցություն չի ունեցել ֆինանսական հաշվետվությունների վրա, բացառությամբ Բանկի քաղաքականության մեջ տեղի ունեցած փոփոխությունների:

Բանկը չի իրականացրել որևէ հրապարակված սակայն դեռևս չգործող ստանդարտի, փոփոխության կամ մեկնաբանության վաղ կիրառություն:

Ընդունված, սակայն դեռևս չգործող նոր և վերանայված ՖՀՄՄ-ներ

Բանկը դեռևս չի կիրառել հետևյալ նոր և վերանայված ՖՀՄՄ-ները, որոնք հրապարակվել են, սակայն դեռևս չեն գործում:

- Փոփոխություններ ՀՀՄՄ 19 ստանդարտում. <i>Մահմանված հատուցումների պլաններ. Աշխատակիցների հատկացումներ</i> - ՖՀՄՄ-ների տարեկան բարելավումներ՝ 2010-2012 թվկ - ՖՀՄՄ-ների տարեկան բարելավումներ՝ 2011-2013 թվկ	Գործում է 2014թ. հուլիսի 1-ին սկսվող կամ դրանից հետո ընկած տարեկան ժամանակահատվածների համար, և թույլատրվում է դրանց ավելի վաղ կիրառումը:
- ՖՀՄՄ-ների տարեկան բարելավումներ՝ 2012-2014 թվկ - ՖՀՄՄ 14. <i>Հետաձգված սակագնային ճշգրտումների հաշիվներ</i> - Փոփոխություններ ՀՀՄՄ 16 և ՀՀՄՄ 38 ստանդարտներում. <i>Մշակվածության և ամրորիզացիայի ընդունելի մեթոդների պարզաբանում</i> - Փոփոխություններ ՀՀՄՄ 27 ստանդարտներում. <i>Բաժնեմասնակցության մեթոդը առանձին ֆինանսական հաշվետվություններում</i> - Փոփոխություններ ՀՀՄՄ 16 և ՀՀՄՄ 41 ստանդարտներում. <i>Գյուղատնտեսություն: Բերքատու բույսեր</i> - Փոփոխություններ ՖՀՄՄ 11 ստանդարտում. <i>Համատեղ գործունեությունում մասնակցության հաշվառում</i> - Փոփոխություններ ՖՀՄՄ 10 և ՀՀՄՄ 28 ստանդարտներում. <i>Ներդրողի և նրա հետ ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկման միջև ակտիվների վաճառք կամ հատկացում</i> - Փոփոխություններ ՀՀՄՄ 1 ստանդարտում: <i>Բացահայտման նախաձեռնության ծրագիր</i>	Գործում է 2016թ. հունվարի 1-ին սկսվող կամ դրանից հետո ընկած տարեկան ժամանակահատվածների համար, և թույլատրվում է դրանց ավելի վաղ կիրառումը:
ՖՀՄՄ 15. Հաճախորդների հետ պայմանագրերի գծով հասույթ	Գործում է 2017թ. հունվարի 1-ին սկսվող կամ դրանից հետո ընկած տարեկան ժամանակահատվածների համար, և թույլատրվում է դրանց ավելի վաղ կիրառումը:
ՖՀՄՄ 9. Ֆինանսական գործիքներ	Գործում է 2018թ. հունվարի 1-ին սկսվող կամ դրանից հետո ընկած տարեկան ժամանակահատվածների համար, և թույլատրվում է դրանց ավելի վաղ կիրառումը:

Փոփոխություններ ՀՀՄՄ 19 ստանդարտում. Մահմանված հատուցումների պլաններ. Աշխատակիցների հատկացումներ. ՀՀՄՄ 19՝ Աշխատակիցների հատուցումներ ստանդարտում տեղի ունեցած փոփոխությունները հստակեցնում են, թե ինչպես աշխատակիցների կամ երրորդ կողմերի հատկացումները, որոնք փոխկապակցված են ծառայության հետ, պետք է վերագրվեն ծառայության ժամանակահատվածներին: Ավելին, փոփոխությունները գործնական կիրառություն են սահմանում այն դեպքում, եթե հատկացումների գումարները կախված չեն աշխատած տարիների քանակից. նման դեպքում հնարավորություն է ընձեռվում, սակայն ոչ՝ պահանջվում, նման հատկացումները ճանաչել որպես ծառայության արժեքի նվազում՝ այն ժամանակահատվածում, երբ մատուցվել է համապատասխան ծառայությունը:

Բանկի ղեկավարությունը չի ակնկալում, որ այս փոփոխությունները ազդեցություն կունենան Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա, քանի որ Բանկը չունի սահմանված հատուցումների պլան:

ՖՀՄՄ 14: Հետաձգված սակագնային ճշգրտումների հաշիվներ. ՖՀՄՄ 14-ը թույլ է տալիս կազմակերպությանը, որն առաջին անգամ է ներդնում ֆինանսական հաշվետվությունների Միջազգային Ստանդարտները, շարունակել հաշվառել հետաձգված սակագնային ճշգրտումների հաշիվներում տեղի ունեցած փոփոխությունները, սակավաթիվ փոփոխություններով, ըստ նախորդ հաշվապահական

հաշվառման ստանդարտի՝ ինչպես ՖՀՄՍ առաջին անգամ ընդունման դեռապքում, այնպես էլ հետգայառում ֆինանսական հաշվետվություններում:

ՖՀՄՍ 14-ի կիրառումը որևէ ազդեցություն չի ունենա Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա, քանի որ Բանկը առաջին անգամ ՖՀՄՍ ներդրում չի իրականացնում:

ՖՀՄՍ 15. Հաճախորդների հետ պայմանագրերի գծով հասույթ. 2014թ. մայիսին հրապարակվել է ՖՀՄՍ 15-ը, որը միասնական համընդհանուր մոդել է սահմանում կազմակերպությունների կողմից հաճախորդների հետ պայմանագրերից գոյացած հասույթի հաշվառման համար: ՖՀՄՍ 15-ը ուժի մեջ մտնելուց հետո կփոխարինի ներկայումս գործող հասույթի ճանաչման ուղեցույցը, այդ թվում՝ ՀՀՄՍ 18 Հասույթ, ՀՀՄՍ 11 Կառուցման պայմանագրեր և դրանց հարակից մեկնաբանությունները:

ՖՀՄՍ 15-ի հիմնական սկզբունքը կայանում է նրանում, որ Բանկը պետք է ճանաչի հասույթը՝ ներկայացնելով խոստացված ապրանքների կամ ծառայությունների՝ հաճախորդին փոխանցման փաստը՝ այն գումարով, որը Բանկը ակնկալում է ստանալ այդ ապրանքների և ծառայությունների դիմաց: Մասնավորապես, ստանդարտը ներկայացնում է որոշակի հիմունքներով մշակված հինգ քայլից բաղկացած մոդել, որը կիրառելի է հաճախորդների հետ ունեցած բոլոր պայմանագրերի գծով:

Մոդելում ներկայացված են հետևյալ հինգ քայլերը՝

- Հաճախորդի հետ ունեցած պայմանագրի սահմանում,
- Պայմանագրի կատարման պարտավորությունների սահմանում,
- Գործարքի գնի որոշում,
- Գործարքի գնի բաշխում պայմանագրի կատարման պարտավորությունների նկատմամբ,
- Հասույթի ճանաչում այն ժամանակ (կամ այն բանից հետո), երբ Բանկը բավարարում է պայմանագրի կատարման պարտավորությունը:

Ըստ ՖՀՄՍ 15-ի, Բանկը ճանաչում է հասույթը այն ժամանակ, կամ այն բանից հետո, երբ պայմանագրի կատարման պարտավորությունը բավարարված է, այսինքն՝ երբ տվյալ կատարման պարտավորությանն առնչվող ապրանքների կամ ծառայությունների վերահսկողությունը փոխանցվում է հաճախորդին: Ավելի նկարագրական ուղեցույց է ավելացվել նաև այնպիսի թեմաների մասով, ինչպիսիք են հասույթի ճանաչման պահը, փոփոխական հատուցման հաշվառումը, պայմանագրի կատարման և ձեռքբերման հետ կապված ծախսերը և մի շարք այլ հարակից հարցեր: Նաև ներկայացված են նոր բացահայտումներ հասույթի գծով:

Բանկի ղեկավարությունը ակնկալում է, որ ՖՀՄՍ 15-ի կիրառումը ապագայում կարող է ազդեցություն ունենալ հասույթի ճանաչման գումարի և ժամկետների վրա: Սակայն նպատակահարմար չէ ՖՀՄՍ 15-ի ազդեցության վերաբերյալ ողջամիտ գնահատում տրամադրելը առանց մանրամասն ուսումնասիրություն իրականացնելու դրա ազդեցության վերաբերյալ:

ՖՀՄՍ 9. Ֆինանսական գործիքներ. 2009թ. նոյեմբերին հրապարակված ՖՀՄՍ 9 նոր պահանջներ է սահմանել ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման համար: ՖՀՄՍ 9 փոփոխվել է 2010թ. հոկտեմբերին՝ ներառելով ֆինանսական պարտավորությունների դասակարգման և չափման, ինչպես նաև ապաճանաչման պահանջներ, ինչպես նաև՝ 2013թ. նոյեմբերին՝ սահմանելով հեջավորման ընդհանուր հաշվառման նոր պահանջներ: 2014թ. հուլիսին ՀՀՄՍԽ-ն թողարկեց ՖՀՄՍ 9-ի լրամշակված տարբերակը, որում հիմնականում ներկայացված են ֆինանսական ակտիվների արժեզրկման գծով պահանջները, ինչպես նաև ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման գծով սահմանափակ թվով փոփոխություններ: ՖՀՄՍ 9 նպատակ ունի փոխարինելու ՀՀՄՍ 39. Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը ստանդարտը:

ՖՀՄՍ 9-ի հիմնական պահանջները հետևյալն են՝

- **Ֆինանսական ակտիվների դասակարգումը և չափումը.** Ֆինանսական ակտիվները դասակարգվում են ըստ բիզնես մոդելի, որով դրանք պահվում են, ինչպես նաև ըստ պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի բնութագրերի: Մասնավորապես, պարտքային գործիքները, որոնք պահվում են բիզնես մոդելում՝ նպատակ ունենալով հավաքագրել պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը, և պայմանագրով նախատեսված դրամական հոսքերն իրենից ներկայացնում են միայն մայր

գումար և դրա չվճարված մասի նկատմամբ հաշվարկված տոկոսների հավաքագրում, սկզբնական ճանաչումից հետո սովորաբար չափվում են ամորտիզացված արժեքով: ՖՀՄՍ 9-ի 2014թ. տարբերակում ներկայացվում է «իրական արժեք այլ համապարփակ եկամտի միջոցով» հասկացությունը այն պարտքային գործիքների գծով, որոնք պահվում են բիզնես մոդելում՝ նպատակ ունենալով թե հավաքագրել պայմանագրային դրամական հոսքերը և թե վաճառել ֆինանսական ակտիվները, և որոնք ըստ պայմանագրի պայմանների բաղկացած են ֆինանսական ակտիվներից, որոնք առաջացնում են որոշակի ամսաթվերի դրությամբ դրամական հոսքեր, որոնք իրենցից ներկայացնում են միմիայն մայր գումար և դրա չվճարված մասի նկատմամբ հաշվարկված տոկոսների հավաքագրում՝ սկզբնական ճանաչումից հետո չափվելով իրական արժեքով այլ համապարփակ եկամտի միջոցով: Բոլոր այլ պարտքային և կապիտալ ներդրումները չափվում են իրենց իրական արժեքով: Ավելին, ՖՀՄՍ 9-ի համաձայն, կազմակերպությունները կարող են փոփոխման ոչ ենթակա որոշում կայացնել հետագա փոփոխությունները ներկայացնելու սեփական կապիտալում (որը չի պահվում առևտրային նպատակներով) ներդրման իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում, ընդ որում շահույթում կամ վնասում ճանաչելով միայն շահութաբաժինների տեսքով եկամուտը:

- **Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը.** Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են նույն կերպ՝ ՀՀՄՍ 39-ի համաձայն, սակայն առկա են տարբերություններ կապված Բանկի սեփական պարտքային ռիսկի չափմանը վերաբերող պահանջների հետ: ՖՀՄՍ 9-ով պահանջվում է, որպեսզի ֆինանսական պարտավորության իրական արժեքի փոփոխությունը, որը վերագրելի է տվյալ պարտավորությանը բնորոշ պարտքային ռիսկին, ներկայացվի այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, եթե պարտավորության պարտքային ռիսկի փոփոխությունների ազդեցության ճանաչումը այլ համապարփակ ֆինանսական արդյունքում չի ստեղծում կամ մեծացնում շահույթում կամ վնասում հաշվառման անհամապատասխանությունը: Ֆինանսական պարտավորության պարտքային ռիսկին վերագրվող՝ իրական արժեքի փոփոխությունները հետագայում չեն դասակարգվում շահույթում կամ վնասում:
- **Արժեզրկում.** ՖՀՄՍ 9-ի 2014թ. տարբերակում ներկայացվում է «Ակնկալվող վարկային վնասի» մոդելը ֆինանսական ակտիվների արժեզրկման չափման նպատակով՝ ի հակադրություն ՀՀՄՍ 39-ով նախատեսված հաշվեզրկված վարկային վնասի մոդելի: Ակնկալվող վարկային վնասի մոդելով պահանջվում է, որպեսզի Բանկը հաշվառի ակնկալվող վարկային վնասները և այդ ակնկալվող վարկային վնասներում տեղի ունեցած փոփոխությունները յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ արտացոլելու համար պարտքային ռիսկում սկզբնական ճանաչման պահից ի վեր տեղի ունեցած փոփոխությունները: Այլ կերպ ասած՝ վարկային պատահարի տեղի ունենալը այլևս անհրաժեշտ պայման չէ վարկային վնաս ճանաչելու տեսանկյունից:
- **Հեջավորման հաշվառում.** Ներկայացնում է հեջավորման հաշվառման նոր մոդել, որը նպատակ ունի սերտ համապատասխանություն ապահովել կազմակերպությունների կողմից ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի հեջավորման ընթացքում գործադրվող ռիսկերի կառավարման գործընթացներին: Ըստ ՖՀՄՍ 9-ի ավելի ճկուն մոտեցում է սկսել կիրառվել հեջային հաշվառման ենթակա գործարքների տեսակների մասով, մասնավորապես, ընդլայնվել են այն գործիքների տեսակները, որոնք կարող են դիտարկվել որպես հեջավորման գործիքներ, և ոչ ֆինանսական միավորների ռիսկի տարրերի տեսակները, որոնք ենթակա են հեջային հաշվառման: Ավելին, արդյունավետության ստուգումը փոխարինվել է «տնտեսական հարաբերությունների» սկզբունքով: Բացի այդ, այլևս չի պահանջվում հեջի արդյունավետության հետընթաց գնահատում: Ներդրվել են նաև Բանկի ռիսկերի կառավարման գործունեության գծով բացահայտման լրացուցիչ պահանջներ:
- **Ապաճանաչում.** Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչման պահանջները շարունակելու են գործել ըստ ՀՀՄՍ 39:

Այս ստանդարտն ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 1-ից և թույլ է տրվում դրա վաղ կիրառումը: Կախված ՖՀՄՍ 9-ի կիրառման ընտրված մոտեցումից, անցումային շրջանում տարբեր պահանջների գծով առաջին անգամ կիրառում կարող է տեղի ունենալ մեկ կամ մեկից ավելի ամսաթվերով:

Բանկի ղեկավարությունը ակնկալում է, որ ՖՀՄՍ 9-ի կիրառումը ապագայում կարող է նշանակալի ազդեցություն ունենալ Բանկի ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների գծով ներկայացված գումարների վրա: Սակայն, նպատակահարմար չէ ՖՀՄՍ 9-ի ազդեցության վերաբերյալ ողջամիտ գնահատում տրամադրելը առանց մանրամասն ուսումնասիրություն իրականացնելու դրա ազդեցության վերաբերյալ:

Փոփոխություններ ՖՀՄՍ 11 ստանդարտում. Համատեղ գործունեությունում մասնակցության հաշվառում: ՖՀՄՍ 11-ում տեղի ունեցած փոփոխությունները ուղեցույց են տրամադրում այն մասին, թե ինչպես հաշվառել համատեղ գործունեության ձեռքբերումը, որը հանդիսանում է ձեռնարկատիրական գործունեության միավորում ըստ ՖՀՄՍ 3-ի: Մասնավորապես, այս փոփոխությամբ սահմանվում է, որ կիրառելի են ՖՀՄՍ 3-ով և այլ ստանդարտներով սահմանված՝ ձեռնարկատիրական գործունեության միավորումների հաշվառման համապատասխան սկզբունքները: Միևնույն պահանջը պետք է կիրառվի համատեղ գործունեության ձևավորման դեպքում, այն և միայն այն դեպքում, եթե գործող ձեռնարկատիրական միավորը հատկացվում է համատեղ գործունեության՝ վերջինիս մասնակցող կողմերից մեկի կողմից: Համատեղ գործունեություն իրականացնողը նաև պետք է բացահայտի համապատասխան տեղեկատվությունը ըստ ՖՀՄՍ 3-ի և ձեռնարկատիրական գործունեության միավորումների համար կիրառելի այլ ստանդարտների:

Բանկի ղեկավարությունը չի ակնկալում, որ այս փոփոխությունների կիրառումը որևէ ազդեցություն կունենա Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա:

Փոփոխություններ ՀՀՄՍ 16 և ՀՀՄՍ 38 ստանդարտներում. Մաշվածության և ամորտիզացիայի ընդունելի մեթոդների պարզաբանում. ՀՀՄՍ 16-ում կատարված փոփոխությունները արգելում են կազմակերպություններին հիմնական միջոցի միավորների նկատմամբ կիրառել հասույթի հիման վրա մաշվածության մեթոդը: ՀՀՄՍ 38 ստանդարտի փոփոխությունները ներկայացնում են վիճարկելի ենթադրություն առ այն, որ հասույթը չի հանդիսանում ակտիվի ամորտիզացիայի համար պատշաճ հիմք: Այս ենթադրությունը կարող է վիճարկվել միայն այն դեպքում, երբ ոչ նյութական ակտիվն արտահայտված է որպես հասույթի չափման միավոր, կամ երբ հնարավոր է ցույց տալ, որ ոչ նյութական ակտիվի գծով հասույթը և դրա գծով տնտեսական օգուտների սպառումը սերտորեն փոխկապակցված են:

Այս փոփոխությունները կիրառվում են առաջընթաց կերպով 2016թ. սկսվող կամ դրանց հաջորդող տարեկան ժամանակահատվածների համար: Ներկայումս Բանկը կիրառում է ուղիղ գծային մեթոդը իր հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մաշվածության և ամորտիզացիայի համար:

Բանկի ղեկավարությունը չի ակնկալում, որ այս փոփոխությունների կիրառումը զգալի ազդեցություն կունենա Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա:

Փոփոխություններ ՀՀՄՍ 16 և ՀՀՄՍ 41 ստանդարտներում. Գյուղատնտեսություն. Բերքատու բույսեր: ՀՀՄՍ 16 և ՀՀՄՍ 41 ստանդարտներում տեղի ունեցած փոփոխությունները սահմանում են բերքատու բույս հասկացությունը և պանաջում, որպեսի բերքատու բույսի հատկանիշներ ունեցող կենսաբանական ակտիվները հաշվառվեն որպես հիմնական միջոց՝ համաձայն ՀՀՄՍ 16 ստանդարտի՝ ՀՀՄՍ 41 ստանդարտի փոխարեն: Բերքատու բույսի վրա աճող բերքը շարունակում է հաշվառվել որպես գյուղատնտեսական արտադրանք ըստ ՀՀՄՍ 41-ի:

Բանկի ղեկավարությունը չի ակնկալում, որ այս փոփոխությունների կիրառումը որևէ ազդեցություն կունենա Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա:

Փոփոխություններ ՀՀՄՍ 27 ստանդարտում: Բաժնեմասնակցության մեթոդը առանձին ֆինանսական հաշվետվություններում: ՀՀՄՍ 27-ում տեղի ունեցած փոփոխությունները թույլ են տալիս կազմակերպությանը՝ կիրառել բաժնեմասնակցության մեթոդը՝ որպես տարբերակ դուստր ընկերություններում, համատեղ ձեռնարկումներում և ասոցիացված կազմակերպություններում ներդրումները առանձին ֆինանսական հաշվետվություններում հաշվառման համար: Փոփոխությունը գործում է 2016թ. հունվարի 1-ին սկսվող կամ դրանից հետո ընկած տարեկան ժամանակահատվածների համար, և թույլատրվում է դրանց ավելի վաղ կիրառումը:

Բանկի ղեկավարությունը չի ակնկալում, որ այս փոփոխությունների կիրառումը որևէ ազդեցություն կունենա ֆինանսական հաշվետվությունների վրա, քանի որ Բանկը չի պատրաստում առանձին հաշվետվություններ:

Փոփոխություններ ՖՀՄՄ 10 և ՀՀՄՄ 28 ստանդարտում. Ներդրողի և նրա հետ ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկման միջև ակտիվների վաճառք կամ հատկացում:

Փոփոխությունները պարզաբանում են, որ ասոցիացված կազմակերպությանը կամ համատեղ ձեռնարկմանը ակտիվների իրացման կամ հատկացման դեպքում, կամ վերահսկողության կորստի դեպքում, եթե համատեղ վերահսկողությունը կամ նշանակալի ազդեցությունը պահպանվում է գործարքում, որում ներգրավված են ասոցիացված կամ համատեղ ձեռնարկումներ, օգուտի և վնասի ճանաչման չափը կախված է նրանից, թե արդյոք ակտիվները կամ դուստր ընկերությունը իրենցից ներկայացնում են ձեռնարկատիրական գործունեության միավոր՝ ինչպես սահմանված է ՖՀՄՄ 3-ում: Եթե ակտիվը կամ դուստր ընկերությունը իրենցից ներկայացնում են ձեռնարկատիրական գործունեության միավոր, ցանկացած օգուտ կամ վնաս ճանաչվում է ամբողջությամբ: Եթե ակտիվը կամ դուստր ընկերությունը իրենցից չեն ներկայացնում ձեռնարկատիրական գործունեության միավոր, ապա կազմակերպության օգուտի կամ վնասի մասը չի ներառվում ճանաչման մեջ:

Փոփոխությունը գործում է 2016թ. հունվարի 1-ին սկսվող կամ դրանից հետո ընկած տարեկան ժամանակահատվածների համար, և թույլատրվում է դրանց ավելի վաղ կիրառումը:

Բանկի ղեկավարությունը չի ակնկալում, որ այս փոփոխությունների կիրառումը որևէ ազդեցություն կունենա ֆինանսական հաշվետվությունների վրա:

Փոփոխություններ ՀՀՄՄ 1 ստանդարտում: Բացահայտման նախաձեռնության ծրագիր. Այս փոփոխություններով պարզաբանվում են տեղեկատվության բացահայտման սկզբունքները: Ընդլայնվում է էականության սահմանումը: Այն սահմանում է տվյալների ընդհանրացման և տարանջատման պահանջները, պարզաբանում է, որ էականությունը կիրառելի է ֆինանսական հաշվետվությունների բոլոր բաժինների վրա, և անգամ այն դեպքերում, եթե ստանդարտներով պահանջվում է առանձնահատուկ բացահայտումների գծով էականության չափանիշների կիրառում: Ստանդարտը նաև ավելի ընդլայնված ուղեցույցներ է պարունակում ֆինանսական վիճակի մասին հաշվետվության և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության ներկայացման, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների հերթականության վերաբերյալ:

Բանկի ղեկավարությունը չի ակնկալում, որ այս փոփոխությունների կիրառումը որևէ ազդեցություն կունենա ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖՀՄՄ-ների տարեկան բարելավումներ՝ 2010-2012 թվականներ

ՖՀՄՄ-ների տարեկան բարելավումների 2010-2012թթ. ընթացքը ներառում է մի շարք ՖՀՄՄ-ների փոփոխություններ, որոնք ներկայացված են ստորև:

ՖՀՄՄ 2-ի փոփոխությամբ տեղի է ունենում փոփոխություն «իրավունքի առաջացման պայմաններ» և «շուկայական պայմաններ» հասկացությունների սահմանման մեջ, ավելացնելով «կատարողական պայմաններ» և «ծառայության պայմաններ» հասկացությունների սահմանումները, որոնք նախկինում ներառված էին «իրավունքի առաջացման պայմանների» սահմանման մեջ:

ՖՀՄՄ 3-ի փոփոխությունները պարզաբանում են, որ պայմանական վճարումը, որը դասակարգվում է որպես ակտիվ կամ պարտավորություն, պետք է չափվի իրական արժեքով յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, անկախ նրանից, թե արդյոք պայմանական վճարը ֆինանսական գործիք է համաձայն ՀՀՄՄ 39-ի կամ ՖՀՄՄ 9-ի, կամ ոչ ֆինանսական ակտիվ կամ պարտավորություն է:

ՖՀՄՄ 8-ում տեղի ունեցած փոփոխություններով պահանջվում է, որպեսզի ընկերությունը բացահայտի ղեկավարության դատողությունները՝ կիրառելով ամբողջականացման չափանիշը գործառնական սեզմենտների նկատմամբ և պարզաբանվում է, որ հաշվետու սեզմենտի ընդհանուր ակտիվների համեմատագրումը ընկերության ակտիվների հետ պետք է տեղի ունենա միայն այն դեպքում, երբ սեզմենտի ակտիվները կանոնավորապես տրամադրվում են գլխավոր գործառնական որոշում կայացնող մարմնին:

ՖՀՄՄ 13-ի եզրակացության հիմքերի վերաբերյալ փոփոխությունները պարզաբանում են, որ ՖՀՄՄ 13-ի թողարկումը և դրան հետևած փոփոխությունները ՀՀՄՄ 39-ում և ՖՀՄՄ 9-ում չեն հանգեցնում

կարճաժամկետ դեբիտորական և կրեդիտորական պարտքի՝ առանց տոկոսադրույքի նշման, հաշիվ-ապրանքագրային արժեքով և առանց գեղչման չափման հնարավորության կասեցման, եթե գեղչման ազդեցությունը նշանակալի չէ: Այս փոփոխություններն ուժի մեջ են մտնում անմիջապես:

ՀՀՄՍ 16-ի և ՀՀՄՍ 38-ի փոփոխությունները վերացնում են առկա անհամապատասխանությունները կուտակված մաշվածության/ամորտիզացիայի հաշվառման գծով այն դեպքում, երբ հիմնական միջոցի միավորը կամ ոչ նյութական ակտիվը վերագնահատվում են: Ըստ վերանայված ստանդարտների պարզաբանվում է, որ համախառն հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի վերագնահատմանը համապատասխան եղանակով և որ կուտակված մաշվածությունը/ամորտիզացիան իրենից ներկայացնում է համախառն հաշվեկշռային արժեքի և կուտակված մաշվածության գծով վնասների հաշվարկով դիտարկված հաշվեկշռային արժեքի միջև տարբերությունը:

ՀՀՄՍ 24-ում տեղի ունեցած փոփոխությունները պարզաբանում են, որ առանցքային ղեկավար անձնակազմի ծառայություններ տրամադրող կառավարչական կազմակերպությունը հանդիսանում է հաշվետու ընկերության հետ փոխկապակցված կողմ: Համապատասխանաբար, հաշվետու ընկերությունը պետք է բացահայտի կառավարչական կազմակերպությանը առանցքային ղեկավար անձնակազմի ծառայությունների տրամադրման դիմաց վճարված կամ վճարման ենթակա բոլոր հաշվեգրված գումարները որպես կապակցված կողմերի հետ գործարքներ: Այնուամենայնիվ, նման փոխհատուցման բացահայտում չի պահանջվում:

Բանկի ղեկավարությունը չի ակնկալում, որ այս փոփոխությունների կիրառումը զգալի ազդեցություն կունենա ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖՀՄՍ-ների տարեկան բարելավումներ՝ 2011-2013 թվականներ

2011-2013 թվականների ՖՀՄՍ-ների տարեկան բարելավումները ներառում են տարբեր ՖՀՄՍ-ների հետևյալ փոփոխությունները:

ՖՀՄՍ 3-ի փոփոխությունը պարզաբանում է, որ ստանդարտը չի կիրառվում բոլոր տեսակի համատեղ ձեռնարկումների ձևավորման հաշվառման նկատմամբ տվյալ համատեղ ձեռնարկման ֆինանսական հաշվետվություններում:

ՖՀՄՍ 13-ի փոփոխությունը պարզաբանում է, որ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների խմբի գույք հիմնվում է իրական արժեքի որոշման համար պորտֆելի բացառման շրջանակը ներառում է բոլոր պայմանագրերը, որոնք կարգավորվում են և հաշվառվում են համաձայն ՀՀՄՍ 39-ի կամ ՖՀՄՍ 9-ի, անկախ այն հանգամանքից, թե արդյոք տվյալ պայմանագրերը համապատասխանում են ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների սահմանմանը համաձայն ՀՀՄՍ 32-ի:

ՀՀՄՍ 40-ի փոփոխությունները պարզաբանում են, որ ՀՀՄՍ 40-ը և ՖՀՄՍ 3-ը փոխադարձաբար բացառելի չեն, և կարող է պահանջվել այդ երկու ստանդարտների միաժամանակ կիրառումը: Համապատասխանաբար, ներդրումային գույք ձեռք բերող ընկերությունը պետք է որոշի, թե արդյոք տվյալ գույքը համապատասխանում է ներդրումային գույքի սահմանմանը՝ համաձայն ՀՀՄՍ 40-ի, և արդյոք՝ գործարքը համապատասխանում է ձեռնարկատիրական գործունեության միավորման սահմանմանը՝ համաձայն ՖՀՄՍ 3-ի:

Բանկի ղեկավարությունը չի ակնկալում, որ այս փոփոխությունների կիրառումը զգալի ազդեցություն կունենա ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖՀՄՍ-ների տարեկան բարելավումներ՝ 2012-2014 թվականներ

2012-2014 թվականների ՖՀՄՍ-ների տարեկան բարելավումները ներառում են տարբեր ՖՀՄՍ-ների հետևյալ փոփոխությունները:

ՖՀՄՍ 5-ի փոփոխությունները պարզաբանում են, որ ակտիվի վերադասակարգումը կամ օտարումը՝ վաճառքի համար պահվող ակտիվից սեփականատերերին բաշխման համար պահվող ակտիվի կամ

հակառակը, չպետք է համարվի վաճառքի պլանի կամ սեփականատերերին բաշխման պլանի փոփոխություն և պետք է կիրառվեն օտարման նոր մեթոդի հանդեպ կիրառելի դասակարգման, ներկայացման և չափման պահանջները: Ավելին, այս փոփոխություններով պարզաբանվում է, որ ակտիվները, որոնք այլևս չեն համապատասխանում սեփականատերերին բաշխման համար պահվող ակտիվի չափանիշներին, պետք է դիտարկվեն նույն կերպ, ինչ ակտիվները, որոնք դադարում են դասակարգվել որպես վաճառքի համար պահվող: Այս փոփոխությունը պետք է կիրառվի առաջընթաց կերպով:

ՖՀՄՍ 7-ի փոփոխությունները տրամադրում են լրացուցիչ պարզաբանում այն մասին, թե արդյոք սպասարկման պայմանագիրն իրենից ներկայացնում է փոխանցված ակտիվում շարունակական մասնակցություն՝ փոխանցված ակտիվների գծով պահանջվող բացահայտումների տեսանկյունից: Ի լրումն, ՖՀՄՍ 7-ի փոփոխությունները նպատակ ունեն պարզաբանելու, որ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցման բացահայտման պահանջները, թեև հստակորեն պարտադիր չէ ներկայացնել բոլոր միջանկյալ ժամանակահատվածների կրճատ միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում, սակայն կարող է պահանջվել այս բացահայտումների ներառումը կրճատ միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում ՀՀՄՍ 34-ի հետ համապատասխանություն ապահովելու տեսանկյունից: Այս փոփոխությունը պետք է կիրառվի հետընթաց կերպով:

ՀՀՄՍ 19-ի փոփոխությունները տրամադրում են պարզաբանում այն մասին, որ բարձր որակի կորպորատիվ պարտատոմսերը, որոնք օգտագործվում են կենսաթոշակային հատուցումների զեղչատոկոսի գնահատման համար, պետք է թողարկվեն հատուցումների վճարման արժույթով: Փոփոխությունները կիրառվում են տվյալ փոփոխությունների առաջին անգամ կիրառմամբ ներկայացված ֆինանսական հաշվետվություններում՝ սկսած ամենավաղ համեմատական ժամանակաշրջանից:

ՀՀՄՍ 34-ի փոփոխությունները պարզաբանում են, որ ՀՀՄՍ 34-ով պահանջվող տեղեկատվությունը, որը ներկայացված միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների որևէ այլ մասում, սակայն միջանկյալ ֆինանսական հաշվետվություններից դուրս, պետք է խաչաձև հղման միջոցով ներկայացվի միջանկյալ հաշվետվության և միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների այլ մասերի միջև, որը հասանելի լինի օգտագործողներին միննույն պայմաններով և միևնույն ժամանակ, ինչ միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները:

Բանկի ղեկավարությունը չի ակնկալում, որ այս փոփոխությունների կիրառումը զգալի ազդեցություն կունենա ֆինանսական հաշվետվությունների վրա:

5. Զուտ տոկոսային եկամուտ նախքան տոկոսակիր ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստները

(հազար դրամ)	2014թ.	2013թ.
Տոկոսային եկամուտ		
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ		
- Հաճախորդներին տրված վարկեր	7,253,122	6,246,994
- Հակադարձ հետգնման պայմանագրեր	200,269	177,750
- Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	97,842	85,677
- Այլ տոկոսային եկամուտ	256	385
Ընդամենը տոկոսային եկամուտ ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով	7,551,489	6,510,806
Իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ		
- Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	791,400	725,840
Ընդամենը տոկոսային եկամուտ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով	791,400	725,840
Ընդամենը տոկոսային եկամուտ	8,342,889	7,236,646
Տոկոսային ծախս		
Տոկոսային ծախս ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորությունների գծով		
- Ընթացիկ հաշիվներ և հաճախորդներից ներգրավված ավանդներ	2,422,730	1,900,027
- Հետգնման պայմանագրեր	560,473	369,140
- Ավանդներ և մնացորդներ բանկերում	546,023	395,289
- Վարկեր միջազգային ֆինանսական կազմակերպություններից	342,134	542,208
- Վարկեր ՀՀ Կենտրոնական բանկից և ՀՀ կառավարությունից	205,177	284,256
- Այլ տոկոսային ծախս	16,992	10,102
Ընդամենը տոկոսային ծախս	4,093,529	3,501,022
Զուտ տոկոսային եկամուտ նախքան տոկոսակիր ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստները	4,249,360	3,735,624

6. Կոմիսիոն եկամուտներ և ծախսեր

(հազար դրամ)	2014թ.	2013թ.
Հաշվարկային փոխանցումներ	749,125	777,822
Վճարային քարտերով գործառնություններ	408,627	410,968
Դրամարկղային գործառնություններ	177,862	181,161
Արտարժույթով և արժեթղթերով գործառնություններ	10,305	53,736
Երաշխիքներ և ակրեդիտիվներ	9,155	15,987
Այլ կոմիսիոն եկամուտներ	153,908	118,786
Ընդամենը կոմիսիոն եկամուտներ	1,508,982	1,558,460
Վճարային քարտերով գործառնություններ	178,259	176,524
Հաշվարկային փոխանցումներ	123,401	58,492
Արտարժույթով և արժեթղթերով գործառնություններ	51,183	97,864
Երաշխիքներ	-	7,377
Թղթակցային հաշիվների սպասարկում	10,012	7,898
Այլ կոմիսիոն ծախսեր	38,836	37,243
Ընդամենը կոմիսիոն ծախսեր	401,691	385,398

7. Զուտ արտարժույթային եկամուտ

(հազար դրամ)	2014թ.	2013թ.
Արտարժույթի առք ու վաճառքից զուտ օգուտ	958,727	1,041,653
Արտարժույթի փոխարկումից վնաս	(211,610)	(131,981)
Ընդամենը զուտ եկամուտ արտարժույթային գործառնություններից	747,117	909,672

8. Այլ եկամուտ

(հազար դրամ)	2014թ.	2013թ.
Ստացված տույժեր և տուգանքներ	176,364	128,880
Թանկարժեք մետաղների և ոսկու ձուլակտորների վաճառքից և վերագնահատումից օգուտ	37,804	10,875
Հիմնական միջոցների վաճառքից օգուտ	-	9,785
Եկամուտ դրամաշնորհներից	507	507
Այլ եկամուտ	104,260	31,778
Ընդամենը այլ եկամուտներ	318,935	181,825

2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար այլ եկամուտը ներառում է ապահովագրված ակտիվների կորստի գծով ապահովագրական ընկերություններից ստացված մուտքեր 40 մլն ՀՀ դրամ գումարով:

9. Տոկոսակիր ակտիվների գծով արժեզրկման հակադարձումներ/(արժեզրկումից կորուստներ)

(հազար դրամ)	2014թ.	2013թ.
Հաճախորդներին տրված վարկեր (Ծան. 16)	66,153	(143,858)
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ (Ծան. 15)	(4,870)	1,767
Ընդամենը վարկային կորուստների արժեզրկման ծախս	61,283	(142,091)

10. Անձնակազմի գծով ծախսեր

(հազար դրամ)	2014թ.	2013թ.
Աշխատավարձ և այլ վճարներ	3,393,487	2,972,299
Ընդամենը անձնակազմի գծով ծախս	3,393,487	2,972,299

2013թ.-ի հունվարի 1-ին Հայաստանի Հանրապետությունում ուժի մեջ մտել եկամտային հարկի մասին նոր օրենք: Փոփոխությունների համաձայն ֆիզիկական անձանց եկամտահարկը և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները փոխարինվել են մեկ միասնական եկամտային հարկով, որը տատանվում է 24.4%-ից մինչև 36%՝ ըստ հարկվող հիմքի և հաշվարկվում է սանդղակի մեթոդով:

11. Այլ ծախսեր

(հազար դրամ)	2014թ.	2013թ.
Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման ծախսեր	298,601	262,424
Ինկասացիոն ծառայությունների գծով ծախսեր	250,000	247,500
Գովազդի և ներկայացուցչական ծախսեր	248,052	234,612
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	218,957	148,764
Հարկեր (բացառությամբ շահութահարկի)	181,330	167,068
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	98,934	104,338
Գրասենյակային ծախսեր	92,211	81,993
Ապահովագրության գծով ծախսեր	69,904	54,158
Վճարումներ ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին	62,439	50,533
Անվտանգության գծով ծախսեր	61,597	44,730
Գործուղման ծախսեր	52,990	54,993
Պլաստիկ քարտերի գծով կատարված ծախսեր	35,089	111,973
Խորհրդատվական և մասնագիտական ծառայություններ	21,512	28,861
Հիմնական միջոցների օտարումից վնասներ	2,665	-
Վճարված տուգանքներ	1,826	2,147
Այլ գործառնական ծախսեր	163,346	144,577
Ընդամենը այլ ծախսեր	1,859,453	1,738,671

12. Շահութահարկի գծով ծախս

(հազար դրամ)	2014թ.	2013թ.
Ընթացիկ հարկի գծով ծախս	319,355	279,328
Հետաձգված հարկ	(40,147)	(25,446)
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	279,208	253,882

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 20% (2013թ.՝ 20%): ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՄ-ի միջև եղած տարբերությունները մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջ են բերում ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների կազմման նպատակներով դրանց հաշվեկշռային արժեքների և հարկման բազայի միջև: Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է՝ կիրառելով 20% հիմնական դրույքաչափը:

Ստորև ներկայացվում է շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը:

(հազար դրամ)	2014թ.	Արդյունավետ դրույքաչափ (%)	2013թ.	Արդյունավետ դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը	1,096,004		970,583	
Շահութահարկ՝ 20% դրույքաչափով	219,201	20	194,117	20
Չհարկվող եկամուտ	(745)	-	(101)	-
Չնվազեցվող ծախսեր	26,859	2	38,535	3
Արտարժույթի փոխարկումից կորուստներ	42,322	4	26,396	3
Այլ վերագնահատումներ	(2,310)	-	1,082	-
Այլ արտոնություններ	(6,119)	(1)	(6,147)	(1)
Շահութահարկի գծով ծախս	279,208	25	253,882	25

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ.

(հազար դրամ)	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	2014թ. դեկտեմբերի 31- ի դրությամբ
Կուտակված ծախսեր և այլ պարտավորություններ	77,232	22,384	-	99,616
Հիմնական միջոցներ	2,326	(2,326)	-	-
Հաճախորդներին տրված վարկեր	-	23,616	-	23,616
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	79,558	43,674	-	123,232
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	(266,431)	-	202,170	(64,261)
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(10,716)	512	-	(10,204)
Պայմանական պարտավորություններ	(6,063)	(2,080)	-	(8,143)
Հաճախորդներին տրված վարկեր	(2,744)	2,744	-	-
Հիմնական միջոցներ	-	(4,703)	-	(4,703)
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն	(285,954)	(3,527)	202,170	(87,311)
Զուտ հետաձգված հարկային պարտավորություն	(206,396)	40,147	202,170	35,921
(հազար դրամ)	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	2013թ. դեկտեմբերի 31- ի դրությամբ
Կուտակված ծախսեր և այլ պարտավորություններ	68,196	9,036	-	77,232
Ածանցյալ գործիքներ	4,558	(4,558)	-	-
Հիմնական միջոցներ	1,348	978	-	2,326
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	74,102	5,456	-	79,558
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	(44,199)	396	(222,628)	(266,431)
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(15,333)	4,617	-	(10,716)
Պայմանական պարտավորություններ	(4,932)	(1,131)	-	(6,063)
Հաճախորդներին տրված վարկեր	(18,852)	16,108	-	(2,744)
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն	(83,316)	19,990	(222,628)	(285,954)
Զուտ հետաձգված հարկային պարտավորություն	(9,214)	25,446	(222,628)	(206,396)

13. Մեկ բաժնետոմսին ընկնող շահույթ

(հազար դրամ)	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընթացիկ ժամանակաշրջանի շահույթ	816,796	716,701
Մովորական բաժնետոմսերի կշռված միջին քանակ	933,335	933,335
Մեկ բաժնետոմսին ընկնող բազային շահույթ	0.88	0.77

14. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

(հազար դրամ)	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	13,937,991	5,002,552
Կանխիկ դրամական միջոցներ	5,392,027	8,466,289
Թղթակցային հաշիվներ բանկերում	3,024,437	4,397,900
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	22,354,455	17,866,741

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ թղթակցային հաշիվները ՀՀ ԿԲ-ում ներառում են նաև ՀՀ ԿԲ-ում տեղաբաշխված պարտադիր պահուստները, որոնք հաշվարկվում են Բանկի կողմից ներգրավված դրամային և արտարժույթով որոշ միջոցների գծով Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգի համաձայն: Այդ միջոցների ելքագրումն արգելված չէ, սակայն պահուստավորման նվազագույն չափը չպահպանելը կարող է հանգեցնել ՀՀ կենտրոնական բանկի կողմից տույժերի կիրառման: ՀՀ ԿԲ-ում ունեցած դրամական միջոցների, այլ դրամական տեղաբաշխումների, թղթակցային հաշիվների ավանդների և պարտադիր պահուստների համար Բանկը տոկոսներ չի ստանում:

15. Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

(հազար դրամ)	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարկեր և ավանդներ	2,624,298	225,268
Վարկային քարտերով վճարումների ավանդ ՀՀ ԿԲ-ում	1,270,000	1,270,000
Վճարային համակարգերով ստացվելիք գումարներ	842,288	477,484
Բանկերում դեպոնացված գումարներ	116,377	99,177
Այլ ֆինանսական կազմակերպություններում դեպոնացված գումարներ	82,725	71,183
Բանկերից ստացման ենթակա այլ գումարներ	244,266	405,424
	5,179,954	2,548,536
Նվազեցում՝ արժեզրկման պահուստների գծով	(32,379)	(27,509)
Ընդամենը պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	5,147,575	2,521,027

2014թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ «պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ» տողում ներառված են Բանկի կողմից տրամադրված երաշխիքային գումարները՝ 52,495 հազար ՀՀ դրամ գումարով VISA վճարահաշվարկային համակարգով, 63,881 հազար ՀՀ դրամ MasterCard վճարահաշվարկային համակարգով գործառնություններ իրականացնելու նպատակով (2013թ. 44,620 հազար ՀՀ դրամ գումարով 54,557 հազար ՀՀ դրամ գումարով):

Ավանդային հաշիվները ՀՀ ԿԲ-ում իրենցից ներկայացնում են ԱրՔա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների երաշխիքային ավանդ:

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով արժեզրկման կորուստների հատկացումների շարժը հետևյալն է.

(հազար դրամ)	Ընդամենը
2013թ. հունվարի 1-ի դրությամբ	29,276
Տարվա հակադարձում	(1,767)
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	27,509
2014թ. հունվարի 1-ի դրությամբ	27,509
Տարվա ծախս	4,870
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	32,379

16. Հաճախորդներին տրված վարկեր

(հազար դրամ)	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հաճախորդներին տրված վարկեր	46,682,610	38,996,756
Օվերդրաֆտ	6,111,336	2,514,431
	52,793,946	41,511,187
Նվազեցում՝ վարկերի արժեզրկման պահուստների գծով	(736,558)	(817,445)
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	52,057,388	40,693,742

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված վարկերի միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 20.05% ՀՀ դրամով վարկերի համար (2013թ.՝ 19.93%) և ԱՄՆ դոլարով, Եվրոյով և այլ ազատ փոխարկելի արտարժույթներով վարկերի համար 12.86% (2012թ.՝ 14.43%):

2014թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի կենտրոնացում երրորդ անձանց տրամադրված վարկերի գծով 10,066,671 հազար դրամ (համախառն վարկային պորտֆելի 19.45%) ընդհանուր գումարով, (2013թ.՝ 8,342,381 հազար դրամ կամ համախառն վարկային պորտֆելի 20.5%): Այդ վարկերի համար ձևավորվել է 100,666 հազար դրամի չափով պահուստ (2013թ.՝ 213,861 հազար դրամ):

Վարկերն ըստ ոլորտների ներկայացված են ստորև.

(հազար դրամ)	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Սպառողական	19,097,594	12,891,853
Առևտուր	11,597,481	8,719,094
Արդյունաբերություն	7,018,876	7,546,671
Հիփոթեքային	3,195,868	3,189,897
Գյուղատնտեսություն	1,773,552	1,978,443
Շինարարություն	1,479,100	752,081
Այլ ճյուղեր	8,631,475	6,433,148
	52,793,946	41,511,187
Նվազեցում՝ արժեզրկման պահուստների գծով	(736,558)	(817,445)
Ընդամենը վարկեր	52,057,388	40,693,742

2014 և 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վճարման ենթակա վարկերի որակական վերլուծությունը ներկայացված է ստորև.

(հազար դրամ)	Համախառն վարկեր	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		Համախառն վարկերի արժեզրկման պահուստ
		Արժեզրկման գծով պահուստ	Զուտ վարկեր	
Արտադրություն				
Ոչ ժամկետանց ժամկետանց	7,013,698	70,137	6,943,561	1.0%
- 1-ից 30 օր	-	-	-	-
- 31-ից 60 օր	-	-	-	-
- 61-ից 90 օր	-	-	-	-
- 91-ից 180 օր	-	-	-	-
- 180 օրից ավել	5,178	2,589	2,589	50%
Ընդամենը	7,018,876	72,726	6,946,150	1.0%
Գյուղատնտեսություն				
Ոչ ժամկետանց ժամկետանց	1,766,227	34,666	1,731,561	2.0%
- 1-ից 30 օր	5,590	671	4,919	12.0%
- 31-ից 60 օր	1,227	147	1,080	12.0%
- 61-ից 90 օր	-	-	-	-
- 91-ից 180 օր	508	180	328	35.4%
- 180 օրից ավել	-	-	-	-
Ընդամենը	1,773,552	35,664	1,737,888	2.0%
Շինարարություն				
Ոչ ժամկետանց ժամկետանց	1,479,100	14,791	1,464,309	1.0%
- 1-ից 30 օր	-	-	-	-
- 31-ից 60 օր	-	-	-	-
- 61-ից 90 օր	-	-	-	-
- 91-ից 180 օր	-	-	-	-
- 180 օրից ավել	-	-	-	-
Ընդամենը	1,479,100	14,791	1,464,309	1.0%
Առևտուր				
Ոչ ժամկետանց ժամկետանց	11,596,120	116,265	11,479,855	1.0%
- 1-ից 30 օր	-	-	-	-
- 31-ից 60 օր	-	-	-	-
- 61-ից 90 օր	-	-	-	-
- 91-ից 180 օր	1,361	272	1,089	20.0%
- 180 օրից ավել	-	-	-	-
Ընդամենը	11,597,481	116,537	11,480,944	1.0%
Սպառողական				
Ոչ ժամկետանց ժամկետանց	18,847,555	257,253	18,590,302	1.4%
- 1-ից 30 օր	60,421	8,367	52,054	13.8%
- 31-ից 60 օր	81,124	11,738	69,386	14.5%
- 61-ից 90 օր	9,345	996	8,349	10.7%
- 91-ից 180 օր	77,260	17,818	59,442	23.1%
- 180 օրից ավել	21,889	11,104	10,785	51.0%
Ընդամենը	19,097,594	307,276	18,790,318	1.6%
Հիփոթեքային				
Ոչ ժամկետանց ժամկետանց	3,176,142	43,327	3,132,815	1.40%
- 1-ից 30 օր	-	-	-	-
- 31-ից 60 օր	6,539	654	5,885	10.0%
- 61-ից 90 օր	6,606	793	5,813	12.0%
- 91-ից 180 օր	6,581	3,290	3,291	50.0%
- 180 օրից ավել	-	-	-	-
Ընդամենը	3,195,868	48,064	3,147,804	1.5%
Այլ ոլորտներ				
Ոչ ժամկետանց ժամկետանց	8,629,288	141,281	8,488,007	1.6%
- 1-ից 30 օր	2,187	219	1,968	10.0%
- 31-ից 60 օր	-	-	-	-
- 61-ից 90 օր	-	-	-	-
- 91-ից 180 օր	-	-	-	-
- 180 օրից ավել	-	-	-	-
Ընդամենը	8,631,475	141,500	8,489,975	1.6%

(հազար դրամ)	Համախառն վարկեր	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		Համախառն վարկերի արժեզրկման պահուստ
		Արժեզրկման գծով պահուստ	Զուտ վարկեր	
Արտադրություն				
Ոչ ժամկետանց ժամկետանց՝	7,535,777	140,224	7,395,553	1.9%
- 1-ից 30 օր	388	39	349	10.1%
- 31-ից 60 օր	-	-	-	
- 61-ից 90 օր	-	-	-	
- 91-ից 180 օր	10,506	5,253	5,253	50.0%
- 180 օրից ավել	-	-	-	
Ընդամենը	7,546,671	145,516	7,401,155	1.9%
Գյուղատնտեսություն				
Ոչ ժամկետանց ժամկետանց՝	1,973,852	30,250	1,943,602	1.5%
- 1-ից 30 օր	3,647	438	3,209	12.0%
- 31-ից 60 օր	377	45	332	11.9%
- 61-ից 90 օր	401	48	353	12.0%
- 91-ից 180 օր	166	100	66	60.2%
- 180 օրից ավել	-	-	-	
Ընդամենը	1,978,443	30,881	1,947,562	1.6%
Շինարարություն				
Ոչ ժամկետանց ժամկետանց՝	752,081	27,734	724,347	3.7%
- 1-ից 30 օր	-	-	-	-
- 31-ից 60 օր	-	-	-	-
- 61-ից 90 օր	-	-	-	-
- 91-ից 180 օր	-	-	-	-
- 180 օրից ավել	-	-	-	-
Ընդամենը	752,081	27,734	724,347	3.7%
Առևտուր				
Ոչ ժամկետանց ժամկետանց՝	8,689,872	150,454	8,539,418	1.7%
- 1-ից 30 օր	-	-	-	-
- 31-ից 60 օր	-	-	-	-
- 61-ից 90 օր	-	-	-	-
- 91-ից 180 օր	20,631	4,945	15,686	24.0%
- 180 օրից ավել	8,591	4,457	4,134	51.9%
Ընդամենը	8,719,094	159,856	8,559,238	1.8%
Սպառողական				
Ոչ ժամկետանց ժամկետանց՝	12,807,495	217,954	12,589,541	1.7%
- 1-ից 30 օր	22,190	2,231	19,959	10.1%
- 31-ից 60 օր	13,309	1,331	11,978	10.0%
- 61-ից 90 օր	15,699	2,092	13,607	13.3%
- 91-ից 180 օր	33,160	10,409	22,751	31.4%
- 180 օրից ավել	-	-	-	-
Ընդամենը	12,891,853	234,017	12,657,836	1.8%
Հիփոթեքային				
Ոչ ժամկետանց ժամկետանց՝	3,183,773	43,033	3,140,740	1.4%
- 1-ից 30 օր	-	-	-	-
- 31-ից 60 օր	2,986	299	2,687	10.0%
- 61-ից 90 օր	2,788	279	2,509	10.0%
- 91-ից 180 օր	350	84	266	24.0%
- 180 օրից ավել	-	-	-	-
Ընդամենը	3,189,897	43,695	3,146,202	1.4%
Այլ ոլորտներ				
Ոչ ժամկետանց ժամկետանց՝	6,294,101	143,321	6,150,780	2.3%
- 1-ից 30 օր	10,223	1,227	8,996	12.0%
- 31-ից 60 օր	-	-	-	-
- 61-ից 90 օր	25,492	6,116	19,376	24.0%
- 91-ից 180 օր	103,332	25,082	78,250	24.3%
- 180 օրից ավել	-	-	-	-
Ընդամենը	6,433,148	175,746	6,257,402	2.7%

Ստորև ներկայացված է 2014թ. վարկերի արժեզրկման փոփոխությունների վերլուծությունը:

(հազար դրամ)	Արտադրություն	Գյուղատնտեսություն	Շինարարություն	Առևտուր	Սպառողական	Հիփոթեքային	Այլ	Ընդամենը
2014թ. հունվարի 1-ի դրությամբ	145,516	30,881	27,734	159,856	234,017	43,695	175,746	817,445
Մասնահանումներ պահուստին/ (հակադարձումներ) տարվա ընթացքում	(72,853)	7,102	(27,563)	(62,577)	119,790	4,784	(34,836)	(66,153)
Դուրսգրված գումարներ	-	(4,646)	-	(44,678)	(65,281)	(2,963)	(1,093)	(118,661)
Վերականգնումներ	63	2,327	14,620	63,936	18,750	2,548	1,683	103,927
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	72,726	35,664	14,791	116,537	307,276	48,064	141,500	736,558
Անհատական արժեզրկում	824	-	-	-	21,583	5,332	-	27,739
Խմբային արժեզրկում	71,902	35,664	14,791	116,537	285,693	42,732	141,500	708,819
Անհատապես արժեզրկված վարկերի համախառն գումարը (մինչև անհատապես զնահատված արժեզրկման պահուստներով զտելը)	5,178	-	-	-	99,592	13,186	-	117,956
Պահուստ	(824)	-	-	-	(21,583)	(5,332)	-	(27,739)
Զուտ	4,354	-	-	-	78,009	7,854	-	90,217

Ստորև ներկայացված է 2013թ. վարկերի արժեզրկման փոփոխությունների վերլուծությունը:

(հազար դրամ)	Արտադրություն	Գյուղատնտեսություն	Շինարարություն	Առևտուր	Սպառողական	Հիփոթեքային	Այլ	Ընդամենը
2013թ. հունվարի 1-ի դրությամբ	165,119	50,221	60,018	133,742	153,782	52,977	46,618	662,477
Մասնահանումներ պահուստին/ (վերականգնումներ) տարվա ընթացքում	(24,622)	(19,879)	(32,284)	25,382	79,213	(41,942)	157,990	143,858
Դուրսգրված գումարներ	-	(11,422)	-	(13,738)	(23,534)	-	(28,862)	(77,556)
Վերականգնումներ	5,019	11,961	-	14,470	24,556	32,660	-	88,666
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	145,516	30,881	27,734	159,856	234,017	43,695	175,746	817,445
Անհատական արժեզրկում	-	-	-	-	25,968	-	-	25,968
Խմբային արժեզրկում	145,516	30,881	27,734	159,856	208,049	43,695	175,746	791,477
Անհատապես արժեզրկված վարկերի համախառն գումարը (մինչև անհատապես զնահատված արժեզրկման պահուստներով զտելը)	-	-	-	-	240,326	-	-	240,326
Պահուստ	-	-	-	-	(25,968)	-	-	(25,968)
Զուտ	-	-	-	-	214,358	-	-	214,358

Գրավի առարկայի վերլուծությունը դիրտակվում է ծանոթագրություն 34-ում:

17. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

(հազար դրամ)	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Բանկի կողմից պահվող		
<i>Պարտքային գործիքներ</i>		
ՀՀ պետական արժեթղթեր	-	2,375,194
Ոչ պետական արժեթղթեր	-	46,576
	-	2,421,770
<i>Կապիտալի գործիքներ</i>		
ՀՀ-ում գործող ընկերությունների արժեթղթեր	47,561	97,561
ՀՀ-ից դուրս գործող ընկերությունների արժեթղթեր	1,917	1,715
	49,478	99,276
Ընդամենը Բանկի կողմից պահվող	49,478	2,521,046
Գրավադրված արժեթղթեր, ծան 18.		
<i>Պարտքային գործիքներ</i>		
ՀՀ պետական արժեթղթեր	5,824,469	4,624,479
Ոչպետական արժեթղթեր	294,342	-
Ընդամենը գրավադրված արժեթղթեր	6,118,811	4,624,479
Ընդամենը վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	6,168,289	7,145,525

Պարտքային գործիքներն իրենցից ներկայացնում են Հայաստանի Ֆինանսների նախարարության կողմից թողարկված արժեթղթեր տարեկան արժեկտրոնային ֆիքսված տոկոսադրույքով, որը տատանվում է 10%-ի և 13.5%-ի միջակայքում (2013թ.՝ տարեկան 10 - 13%) և որն ուժի մեջ է 2015 – 2032թթ. (2012թ.՝ 2015 – 2032թթ.): Այս գործիքների իրական արժեքը չափվում է օգտագործելով գնահատման տեխնիկա՝ հիմնված տվյալ պահին գործող տոկոսադրույքների վրա, որպես տվյալ ֆինանսական գործիքի ապագա դրամական հոսքերի զեղչատոկոս:

ՀՀ-ի ներսում և ՀՀ-ից դուրս գործող կազմակերպությունների բաժնետոմսերի գծով բաժնային գործիքներն իրենցից ներկայացնում են չգնանշված ընկերություններում բաժնային գործիքներ՝ հաշվառված ինքնարժեքով և ճշգրտված արժեզրկումից կորուստներով, քանի որ դրանց իրական արժեքը հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել: Այսպիսի ներդրումների համար շուկա չկա և Բանկը մտադիր է դրանք պահել երկարաժամկետ կտրվածքով:

18. Փոխանցված ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ

Բանկն ունի գործարքներ հետգնման և հակադարձ հետգնման համաձայնագրերով: Ռեալ համաձայնագրերով փոխատվություն տրված կամ վաճառված արժեթղթերը փոխանցվում են երրորդ կողմին Բանկի կողմից ստացած կանխիկ դրամի փոխարեն: Այս ֆինանսական ակտիվները կարող են վերագրավադրվել կամ վերավաճառվել գործընկերների կողմից Բանկի կողմից պարտավորությունների չկատարման (դեֆոլտի) բացակայության դեպքում, սակայն գործընկերը պարտավորվում է վերադարձնել արժեթղթերը պայմանագրի ավարտին: Բանկի սահմանմամբ այդ արժեթղթերի գծով բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվել են և այդ իսկ պատճառով դրանք չեն ապաճանաչվել: Այս գործարքներն իրականացվում են այն պայմաններով, որոնք ընդունված են ստանդարտ վարկավորման և արժեթղթերի փոխառության ու վարկային գործունեության ժամանակ, ինչպես նաև այնպիսի փոխանակման գործարքներում, որտեղ Բանկը հանդես է գալիս որպես միջնորդ:

Հակադարձ հետգնման պայմանագրեր

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի հակադարձ հետգնման պայմանագրեր ֆինանսական ոլորտում գործող կազմակերպությունների հետ 1,255,797 հազար ՀՀ դրամ (2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: 1,379,833 հազար ՀՀ դրամ): 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս հակադարձ հետգնման պայմանագրերով որպես գրավ ստացված ակտիվների իրական արժեքը, որոնք իրենցից ներկայացնում են

պետական պարտքային արժեթղթեր, կազմում էր 1,265,179 հազար ՀՀ դրամ (2013թ.՝ 1,387,149 հազար ՀՀ դրամ): Բանկը պարտավոր է վերադարձնել համարժեք գումարի արժեթղթեր:

Հետգնման պայմանագրեր

(հազար դրամ)	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հետգնման պայմանագրերով փոխանցված և գրավադրված՝ վաճառքի համար մատչելի սեփական ֆինանսական ակտիվների իրական արժեքը	6,118,811	4,624,479
Հակադարձ հետգնման պայմանագրերով որպես գրավ ստացված վերագրավադրված ակտիվների իրական արժեքը	1,265,179	-
Ընդամենը հետգնման պայմանագրերով փոխանցված և գրավադրված ֆինանսական ակտիվներ՝	7,383,990	4,624,479
Հարակից պարտավորությունների հաշվեկշռային արժեք	7,215,899	4,504,784

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեկշռային արժեքում ներառված հարակից պարտավորությունները հետգնման պայմանագրերի գծով՝ 7,215,899 հազար ՀՀ դրամ (2013թ.՝ 4,003,448 հազար ՀՀ դրամ) գումարով, ներառում են ՀՀ կենտրոնական բանկի հետ ստորագրված հետգնման պայմանագրեր:

19. Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում

Ստորև ներկայացված աղյուսակում ներկայացվում է 2014թ. և 2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիներին ասոցիացված կազմակերպություններում ներդրումների հաշվեկշռային արժեքներում շարժը:

(հազար դրամ)	2014թ.	2013թ.
1 հունվարի	245,192	262,160
Ներդրումների դասակարգումներում փոփոխություն	-	-
Ներդրումների աճ	-	-
Մեփական կապիտալում հաշվառվող ներդրումների գծով տարվա վնասի մաս	(49,552)	(18,531)
Այլ համապարփակ եկամուտի մաս	(649)	1,563
31 դեկտեմբերի	194,991	245,192

Ներդրումների մանրամասները 2014թ. և 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետևյալն են՝

(հազար դրամ)	Գործունեության տեսակը	Գրանցման երկիրը	Ներդրման չափը	Մասնակցությունը %
ՄԻԼ Ինշուրանս ԱՓԲԸ	Ապահովագրություն	ՀՀ	299,000	20%

31 դեկտեմբերի 2014թ. և 2013թ. դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարիների համար բանկի մասնակցությունը իր ասոցիացված կազմակերպություններում և դրա ամփոփ ֆինանսական տեղեկատվությունը, ներառյալ՝ ընդհանուր ակտիվները, պարտավորությունները, հասույթը, շահույթը կամ վնասը, ներակայացված է հետևյալ աղյուսակում:

(հազար դրամ)		31 դեկտեմբերի 2014թ.							
Անվանում	Մասնակ- ցության չափը (%)	Ընդամենը ակտիվներ	Ընդամենը պարտա- վորու- թյուններ	Զուտ ակտիվ- ներ	Զուտ բանկի մասնա- բաժինը	Շահույթ / (վնաս)	Շահույթ / (վնաս)	Շահույթում (վնասում) բանկի Այլ համա- պարփակ եկամուտ	Այլ համապարփակ եկամուտում բանկի մասնաբաժինը
ՄԻԼ Ինշուրանս ԱՓԲԸ	20.00	3,117,273	1,911,947	1,205,326	241,065	2,983,156 (247,762)	(49,552)	(3,245)	(649)

(հազար դրամ)		31 դեկտեմբերի 2013թ.								
Անվանում	Մասնակցության չափը (%)	Ընդամենը ակտիվներ	Ընդամենը պարտավորություններ	Զուտ ակտիվներ	Զուտ ակտիվներ բանկի մասնաբաժինը	Հասույթ Հասույթ	Շահույթ / (վնաս)	Շահույթ / մասնաբաժինը	Այլ համապարփակ եկամուտ	Այլ համապարփակ եկամուտ բանկի մասնաբաժինը
Միլ Բնշուրանս ԱՓԲԸ	20.00	3,024,166	1,567,833	1,456,333	291,266	2,484,775	(92,656)	(18,531)	7,815	1,563

Ասոցիացված կազմակերպությունների գծով հաշվետու ամսաթիվը դեկտեմբերի 31-ն է: Ասոցիացված կազմակերպությունների բաժնետոմսերը հրապարակայնորեն ցուցակված չեն: Հաշվետու տարում Բանկը չի ստացել շահաբաժիններ ասոցիացված կազմակերպություններից (2013թ: նույնը):

20. Հիմնական միջոցներ

(հազար դրամ)	Հոդ և շենքեր	Փոխադրամիջոց	Համակարգչային սարքավորումներ	Կապիտալ ներդրումներ վարձակալված հիմնական միջոցներում	Այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք						
1 հունվարի 2013թ.	3,101,116	353,403	1,680,628	154,748	1,117,520	6,407,415
Ավելացումներ	271,125	177,310	200,270	10,228	182,984	841,917
Օտարումներ	-	(39,482)	(54,654)	-	(19,899)	(114,035)
31 դեկտեմբերի 2013թ.	3,372,241	491,231	1,826,244	164,976	1,280,605	7,135,297
1 հունվարի 2014թ.	3,372,241	491,231	1,826,244	164,976	1,280,605	7,135,297
Ավելացումներ	443,049	100,865	101,115	1,308	147,612	793,949
Օտարումներ	-	(89,279)	(93,019)	-	(31,549)	(213,847)
31 դեկտեմբերի 2014թ.	3,815,290	502,817	1,834,340	166,284	1,396,668	7,715,399
Կուտակված մաշվածություն						
1 հունվարի 2013թ.	1,269,768	173,571	1,145,116	27,829	723,617	3,339,901
Մաշվածության ծախս	40,649	36,186	115,645	10,316	72,308	275,104
Օտարումներ	-	(30,189)	(54,654)	-	(19,888)	(104,731)
31 դեկտեմբերի 2013թ.	1,310,417	179,568	1,206,107	38,145	776,037	3,510,274
1 հունվարի 2014թ.	1,310,417	179,568	1,206,107	38,145	776,037	3,510,274
Մաշվածության ծախս	44,077	49,106	150,181	8,857	98,641	350,862
Օտարումներ	-	(63,699)	(93,019)	-	(30,052)	(186,770)
31 դեկտեմբերի 2014թ.	1,354,494	164,975	1,263,269	47,002	844,626	3,674,366
Զուտ հաշվեկշռային արժեք						
31 դեկտեմբերի 2014թ.	2,460,796	337,842	571,071	119,282	552,042	4,041,033
31 դեկտեմբերի 2013թ.	2,061,824	311,663	620,137	126,831	504,568	3,625,023
31 դեկտեմբերի 2012թ.	1,831,348	179,832	535,512	126,919	393,903	3,067,514

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկզբնական արժեքը կազմում է 1,038,614 հազար դրամ (2013թ.՝ 1,119,426 հազար դրամ):

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ուներ պայմանագրային պարտավորություններ՝ կապված հիմնական միջոցների հետ՝ 279,240 հազար ՀՀ դրամ գումարով (2013թ. 446,101 հազար), որը ենթակա է

վճարման 2015թ. Բանկի ղեկավարությունը արդեն հատկացրել է անհրաժեշտ ռեսուրսները այս պարտավորության գծով: Բանկի ղեկավարությունը կարծում է, որ ապագա գուտ հասույթները և ֆինանսավորումը բավարար կլինեն այս և համանման այլ պարտավորությունների կատարման համար:

Բանկն իր հիմնական միջոցները հաշվառում է պատմական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը: Ղեկավարության գնահատմամբ Բանկի հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքները էականորեն մոտ են դրանց իրական արժեքներին՝ բացառությամբ շենքերի: Ղեկավարությունը ներգրավել է անկախ մասնագիտացած լիցենզավորված գնահատողի՝ հաշվետու ամսաթվի դրությամբ շենքերի իրական արժեքների գնահատմանը օժանդակելու նպատակով: Ըստ ղեկավարության գնահատականների, եթե Բանկն իր շենքերը հաշվառեր վերագնահատված գումարներով հաշվետու ամսաթվի դրությամբ, ապա շենքերի հաշվեկշռային արժեքն ավելի բարձր կլիներ՝ 3,428,546 հազար դրամից 3,940,993 հազար դրամի միջակայքում գտնվող գումարով (աուդիտ չարված):

21. Ոչ նյութական ակտիվներ

(հազար դրամ)	Լիցենզիաներ	Համակարգչային ծրագրեր	Այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք				
1 հունվարի 2013թ.	122,465	22,079	14,407	158,951
Ավելացումներ	1,536	1,120	-	2,656
Օտարումներ	(2,002)	-	-	(2,002)
31 դեկտեմբերի 2013թ.	121,999	23,199	14,407	159,605
1 հունվարի 2014թ.	121,999	23,199	14,407	159,605
Ավելացումներ	7,084	14,345	-	21,429
31 դեկտեմբերի 2014թ.	129,083	37,544	14,407	181,034
Կուտակված ամորտիզացիա				
1 հունվարի 2013թ.	34,895	18,685	4,697	58,277
Ամորտիզացիայի գծով ծախս	12,287	1,065	1,211	14,563
Օտարումներ	(1,732)	-	-	(1,732)
31 դեկտեմբերի 2013թ.	45,450	19,750	5,908	71,108
1 հունվարի 2014թ.	45,450	19,750	5,908	71,108
Ամորտիզացիայի գծով ծախս	11,744	1,960	1,201	14,905
31 դեկտեմբերի 2014թ.	57,194	21,710	7,109	86,013
Զուտ հաշվեկշռային արժեք				
Զուտ հաշվեկշռային արժեք՝ 31 դեկտեմբերի 2014թ. դրությամբ	71,889	15,834	7,298	95,021
Զուտ հաշվեկշռային արժեք՝ 31 դեկտեմբերի 2013թ. դրությամբ	76,549	3,449	8,499	88,497
Զուտ հաշվեկշռային արժեք՝ 31 դեկտեմբերի 2012թ. դրությամբ	87,570	3,394	9,710	100,674

22. Այլ ակտիվներ

(հազար դրամ)	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ստացվելիք գումարներ	35,028	83,455
Այլ ֆինանսական ակտիվների արժեզրկման կորուստ	(350)	(835)
Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ	34,678	82,620
Կանխավճարներ և այլ դեբիտորական պարտք	220,668	213,305
Նյութեր	138,599	191,978
Աշխատակիցներին տրված հատուցումներ	41,442	23,828
Թանկարժեք մետաղներ	8,825	23,883
Այլ ակտիվներ	73,151	73,750
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	482,685	526,744
Նվազեցված արժեզրկման պահուստ	(3,085)	(11,604)
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	479,600	515,140
Ընդամենը այլ ակտիվներ	514,278	597,760

Այլ ակտիվների գծով արժեզրկման կորուստների պահուստի շարժը հետևյալն է.

(հազար դրամ)	Ընդամենը
2013թ. հունվարի 1-ի դրությամբ	8,192
Տարվա հակադարձում	(2,173)
Դուրս գրված գումարներ	(7,080)
Վերականգնում	13,500
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	12,439
2014թ. հունվարի 1-ի դրությամբ	12,439
Տարվա ծախս	21,194
Դուրս գրված գումարներ	(42,423)
Վերականգնում	12,225
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,435

23. ՀՀ Կենտրոնական բանկից և ՀՀ կառավարությունից ստացված վարկեր

(հազար դրամ)	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարկեր ՀՀ Կենտրոնական բանկից	2,416,891	2,479,292
Վարկեր ՀՀ կառավարությունից	3,630	43,693
Ընդամենը վարկեր ՀՀ Կենտրոնական բանկից և ՀՀ կառավարությունից	2,420,521	2,522,985

ՀՀ ԿԲ-ից և ՀՀ Կառավարությունից ստացված վարկերը ներկայացնում են վարկեր ստացված Գերմանա-հայկական հիմնադրամի «Փոքր և միջին բիզնեսի վարկային ծրագրի» ֆինանսավորման շրջանակներում, «Վերականգնվող էներգետիկա» և «Բնակարանային ֆինանսավորում» ծրագրերի շրջանակներում ներգրավված միջոցները:

2014թ. և 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կառավարությունից ստացված վարկերը ներառում են վարկեր ստացված Գերմանա-հայկական հիմնադրամի «Փոքր և միջին բիզնեսի վարկավորման ծրագրի» և «Տնտեսության կայունացման վարկավորում» ծրագրերի ֆինանսավորման շրջանակներում ներգրավված միջոցները:

24. Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

(հազար դրամ)	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարկեր և ավանդներ ֆինանսական կազմակերպություններից	9,176,888	5,847,363
Ֆինանսական կազմակերպությունների ընթացիկ հաշիվներ	194,558	451,796
Այլ բանկերի թղթակցային հաշիվներ	129,113	99,341
Այլ	100,914	176,034
Ընդամենը պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	9,601,473	6,574,534

2014թ. և 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերը և ավանդներն իրենցից ներկայացնում են ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ բանկերից ստացված վարկեր:

25. Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և ավանդներ

Միջազգային ֆինանսական կազմակերպություններից վարկերը և ավանդները ներառում են Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկից (ՎԶԵԲ), Սնծովյան Առևտրի և Զարգացման Բանկից Միջազգային Ֆինանսական Կորպորացիայի և Նիդեռլանդների Ֆինանսական Զարգացման Կորպորացիայի կողմից ստացված վարկերը:

2014թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ միջազգային ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ ՀՀ դրամով պարտավորությունների գծով միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 10,3% (2013թ.՝ 10,3%), ԱՄՆ դոլարով, Եվրոյով և այլ ազատ փոխարկելի արտարժույթներով պարտավորությունների համար 5,37 % (2013 թ.: 5.8 %):

2014թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտված ֆինանսական տարվա համար Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2013թ.՝ նույնը):

Ընդհանուր առմամբ 2014թ. և 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկերից և ժամկետային ավանդներից պայմաններ ունեցող վարկերը և, ներառյալ հաշվեգրված տոկոսները, ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

(հազար դրամ)	Արժույթ	Ժամկետ	Անվանական դրույք %	2014թ. դեկտեմբերի 31	Անվանական դրույք %	2013թ. դեկտեմբերի 31
Սնծովյան Առևտրի և Զարգացման						
Բանկ	ԱՄՆ դոլար	1-3 տարի	6.42%	1,055,489	6.42%	1,352,133
ՄՖԿ	ԱՄՆ դոլար	1 տարի	-	-	3.89%	81,128
ՎԶԵԲ	ՀՀ դրամ	1-5 տարի	10.3%	1,665,468	10.30%	2,353,137
ՎԶԵԲ	ԱՄՆ դոլար	1-5 տարի	6.04%	171,389	6.04%	307,324
ՎԶԵԲ	Եվրո	1 տարի	3.66%	184,057	-	-
Ընդամենը				3,076,403		4,093,722

Բանկը պարտավոր է համապատասխանություն ապահովել փոխառու միջոցների գծով առկա ֆինանսական դրույթների հետ: Այդ դրույթները ներառում են սահմանված դրույքաչափերը, վարկ/կապիտալ հարաբերակցությունը և ֆինանսական գործունեությանն առնչվող մի շարք այլ տվյալներ: Բանկի կողմից չի արձանագրվել այս դրույթներից որևէ մեկի խախտում 2014թ. և 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Բացառություն են կազմում հետևյալները.

1. Սնծովյան Առևտրի և Զարգացման Բանկի գծով գործառնական ծախս/գործառնական արդյունք գործակիցը (31 դեկտեմբերի 2013թ. և 31 դեկտեմբերի 2014թ. դրությամբ):

2. ՄՖԿ գծով հիմնական միջոցներ գումարած կապիտալ ներդրումների գործակիցը և համախառն տոկոսադրույքի ռիսկի գործակիցը (31 դեկտեմբերի 2013թ. դրությամբ):
3. Սեփական կապիտալի գծով մեկ կոնսոլիդացիոն առավելագույն ռիսկի ենթարկվածությունը՝ կապված Սնծովյան Առևտրի և Զարգացման Բանկից ստացված վարկի հետ (31 դեկտեմբերի 2013թ. և 31 դեկտեմբերի 2014թ. դրությամբ):
4. Իրացվելի ակտիվների գործակիցը՝ կապված ՎԶԵԲ-ից ստացված վարկի հետ (31 դեկտեմբերի 2014թ. դրությամբ):
5. Մեկ կողմի գծով ռիսկի ենթարկվածության գործակիցը՝ կապված կապված ՎԶԵԲ-ից ստացված վարկի հետ (31 դեկտեմբերի 2014թ. դրությամբ):

Այս պայմանագրային դրույթների համար երկու ամսաթվերի դրությամբ էլ Բանկն ունի Սնծովյան Առևտրի և Զարգացման Բանկի, ՎԶԵԲ և ՄՖԿ-ից ստացված զիջում:

26. Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ

(հազար դրամ)

	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Իրավաբանական անձ հաճախորդներ		
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	18,009,758	10,102,347
Ժամկետային ավանդներ	4,879,264	5,308,581
	22,889,022	15,410,928
Ֆիզիկական անձինք		
Ընթացիկ/ցպահանջ հաշիվներ	11,607,880	10,141,180
Ժամկետային ավանդներ	23,028,401	18,839,668
	34,636,281	28,980,848
Ընդամենը պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	57,525,303	44,391,776

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրավաբանական անձ հաճախորդների հանդեպ պարտավորությունները կազմում են 782,624 հազար դրամ գումարով ավանդներ (2013թ.: 1,432,915 հազար դրամ), որոնք իրենցից ներկայացնում են վարկերի, ակրեդիտիվների, երաշխիքների և այլ պայմանական պարտավորությունների գծով ապահովվածություններ: Այդ ավանդների իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին:

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի տասը ամենամեծ հաճախորդների ավանդների ընդհանուր գումարը կազմում է 7,663,094 հազար դրամ (2013թ.: 7,834,789 հազար դրամ) կամ հաճախորդների միջոցների ընդհանուր գումարի 13% (2012թ.: 18%):

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդների նկատմամբ ՀՀ դրամով պարտավորությունների գծով միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 5.4% (2013թ.: 4.09 %), ԱՄՆ դոլարով, եվրոյով և այլ ազատ փոխարկելի արտարժույթներով պարտավորությունների համար 6.3 % (2013թ.: 5.44 %):

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2013թ.: նույնպես):

27. Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ

(հազար դրամ)	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
	Պայմանական գումար	Ակտիվների իրական արժեք	Պարտավորությունների իրական արժեք	Պայմանական գումար	Ակտիվների իրական արժեք	Պարտավորությունների իրական արժեք
Առևտրային ածանցյալ գործիքներ						
Արտարժույթային սվոփեր	1,945,071	54,263	-	1,119,080	-	6,740
Արտարժույթային սվոփեր	1,752,069	-	19,659	-	-	-
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքներ	3,697,140	54,263	19,659	1,119,080	-	6,740

Արտարժույթային սվոփի պայմանագրեր

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են արտարժույթի փոխանակման սվոփ պայմանագրերի գումարները հիմնական արտարժույթների կտրվածքով՝ դեկտեմբերի 31-ի դրությամբ: Ստորև ներկայացված արտարժույթով արտահայտված գումարները փոխարկվում են հաշվետու ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքներով:

(հազար դրամ)	Անվանական գումար	
	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ՀՀ դրամի առք, ԱՄՆ դոլարի վաճառք	1,394,620	-
Ռուբլու առք, Եվրոյի վաճառք	550,451	-
ԱՄՆ դոլարի առք, Եվրոյի վաճառք	1,752,069	-
Եվրոյի առք, ռուբլու վաճառք	-	1,119,080
	3,697,140	1,119,080

28. Այլ պարտավորություններ

(հազար դրամ)	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Պահանջներ անհատների նկատմամբ	191,896	134,208
Կրեդիտորական պարտք	54,051	35,974
Վճարվելիք շահաբաժիններ	36,552	38,558
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	282,499	208,740
Աշխատակիցներին վճարվելիք հատուցումներ	452,272	351,147
Վճարման ենթակա հարկեր, բացի շահութահարկից	141,754	91,608
Այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	4,491	-
Ընդամենը ոչ ֆինանսական պարտավորություններ	598,517	442,755
Ընդամենը այլ պարտավորություններ	881,016	651,495

29. Սեփական կապիտալ

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում էր 2,333,338 հազ. դրամ (2013թ.՝ 2,333,338 հազ.դրամ): Համաձայն կանոնադրության, համալրված բաժնետիրական կապիտալը բաղկացած է թվով 933,335 հատ սովորական անվանական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը համապատասխանաբար 2,500 դրամ անվանական արժեքով: Բանկի

հայտարարված սովորական անվանական բաժնետոմսերի առավելագույն չափը սահմանված է 1,066,665 հատ բաժնետոմս:

2014թ. և 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի բաժնետերերն են.

(հազար դրամ)	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Վճարված բաժնետիրական կապիտալ	Ընդամենը վճարված կապիտալի %	Վճարված բաժնետիրական կապիտալ	Ընդամենը վճարված կապիտալի %
Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ	583,338	25.0	583,338	25.0
Սարիքեկ Սուքիասյան	527,573	22.6	527,573	22.6
Խաչատուր Սուքիասյան	455,413	19.5	455,413	19.5
Ռոբերտ Սուքիասյան	240,930	10.3	240,930	10.3
Էդուարդ Սուքիասյան	49,040	2.1	49,040	2.1
Այլ բաժնետերեր	477,044	20.5	477,044	20.5
	2,333,338	100.0	2,333,338	100.0

2014թ. և 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի սեփականության իրավունքով իրեն պատկանող բաժնետոմսեր: Սովորական բաժնետոմսերի բաժնետերերը իրավունք ունեն ստանալու շահաբաժին և ունեն մեկ բաժնետոմսի դիմաց մեկ ձայնի իրավունք Բանկի տարեկան և ընդհանուր ժողովներում:

ՎԶԵԲ-ի բաժնեմասը կազմում է 25% գումարած մեկ բաժնետոմս: Բանկի՝ բաշխման ենթակա պահուստները սահմանափակվում են կուտակված շահույթով: Բաշխման ոչ ենթակա միջոցները ներկայացված են գլխավոր պահուստով, որը ստեղծված է համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների՝ ընդհանուր բանկային ռիսկերը, ներառյալ հնարավոր կորուստները և այլ չնախատեսված ռիսկերը և ծախսերը փոխհատուցելու նպատակով: Պահուստը ստեղծվել է համաձայն կանոնադրության, որը նախատեսում է պահուստի ստեղծում այդ նպատակների համար ոչ պակաս քան հաշվապահական հաշվառման հաշիվներում արտացոլված բաժնետիրական կապիտալի 15 %-ի չափով:

30. Պայմանագրային և պայմանական պարտավորություններ

Իրավական և հարկային հարցեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը կարգավորող օրենսդրական դաշտն աչքի է ընկնում հաճախակի կատարվող փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են և պահանջում են մեկնաբանություններ: Շատ դեպքերում, այս կամ այն հարցում տարբեր հարկային և իրավասու մարմիններ ունեն տարբեր մեկնաբանություններ:

Հաճախ հարկային մարմինները պահանջում են լրացուցիչ հարկեր այնպիսի գործարքների և հաշվապահական մեթոդների համար, որոնց գծով պահանջներ չեն ներկայացվել: Արդյունքում կարող են առաջանալ հավելյալ տույժեր և տուգանքներ: Հարկային ստուգումը կարող է ներառել ստուգման անմիջապես նախորդող 3 տարին: Որոշ հանգամանքներում հարկերի ստուգումը կարող է ընդգրկել ավելի վաղ ժամանակահատվածներ: Ղեկավարությունը համոզված է, որ Բանկն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և պատշաճ կերպով կատարել է իր հարկային պարտավորությունները:

Ղեկավարությունը նաև կարծում է, որ հիմնական պարտավորությունը, որը բխում է Բանկի դեմ հարուցված դատական հայցերից և բողոքներից, բացասական ազդեցություն չի ունենա Բանկի ֆինանսական վիճակի կամ հետագա գործունեության վրա:

Վարկային պարտավորություններ, երաշխիքներ և այլ ֆինանսական պայմանագրեր

Իր գործունեության ընթացքում Բանկը տրամադրում է իր հաճախորդներին արտահաշվեկշռային ռիսկ պարունակող ֆինանսական գործիքներ հաճախորդների կարիքները բավարարելու համար: Նշված ֆինանսական գործիքները ունեն պարտքային ռիսկի տարբեր մակարդակներ և չեն արտացոլվում հաշվեկշռում:

Այս պայմանագրային պարտավորությունների, երաշխիքների և այլ պայմանական պարտավորությունների անվանական կամ պայմանագրային գումարները դեկտեմբերի 31-ի դրությամբ հետևյալն են.

(հազար դրամ)	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Չօգտագործված վարկային գծեր	1,973,894	2,557,262
Ակրեդիտիվներ	1,746,930	-
Երաշխիքներ	350,643	474,077
Ընդամենը պայմանագրային պարտավորություններ, երաշխիքներ և այլ պայմանական պարտավորություններ	4,071,467	3,031,339

Պարտավորություններ գործառնական վարձակալության գծով. Բանկը որպես վարձակալ

Բանկն իր բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով կնքում է առևտրային վարձակալության պայմանագրեր շենք և տարածքներ վարձակալելու նպատակով:

(հազար դրամ)	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մինչև 1 տարի	269,560	156,065
1-5 տարի	919,018	605,339
5 տարուց ավելի	3,020	19,150
Ընդամենը պարտավորություններ գործառնական վարձակալության գծով	1,191,598	780,554

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում, և այլ երկրներին հատուկ բազմաթիվ ապահովագրության ձևաչափերը հիմնականում դեռևս կիրառելի չեն: Բանկը չի նախատեսում իր գործունեության դադարեցման, ինչպես նաև իր գույքի կամ գործունեության հետ կապված ապահովագրական դեպքերի ժամանակ առաջացող գույքի և շրջակա միջավայրի վնասի՝ երրորդ կողմի նկատմամբ պարտավորության ամբողջական ապահովագրություն: Այնուամենայնիվ, 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, Բանկին սեփականության իրավունքով պատկանող գլխամասային շենքը և փոխադրամիջոցներն ապահովագրված են: Բանկն ունի նաև ապահովագրություն բանկային ընդհանուր պարտավորվածությունների, էլեկտրոնային և համակարգչային հանցագործությունների և մասնագիտական պատասխանատվության համար: Քանի դեռ Բանկը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ բացասական ազդեցություն Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Սկսած 2005թ.-ից Բանկը հանդիսանում է ավանդների հատուցումը երաշխավորող պարտադիր համակարգի անդամ: Նշված համակարգը գործում է համաձայն օրենսդրության պահանջների և կանոնակարգվում է ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին օրենքով: Ապահովագրությունը մարում է Բանկի պարտավորությունները ֆիզիկական անձանց ավանդների գծով 4,000 հազար դրամ ընդհանուր գումարով (մինչև 2,000 հազար դրամ արտաբնական ավանդների դեպքում) Բանկի սնանկացման և բանկային արտոնագրի հետևանքման դեպքում:

31. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտում» ստանդարտի, կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Բանկի կապակցված կողմերն են՝ նրա և դուստր ընկերությունների բաժնետերերը, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձինք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

2014թ. դեկտեմբերի 31-ի և 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալի 54.5% (1,272,956 հազար դրամ) պատկանում է Սուբխասյաններին, որոնք հանդիսանում են Բանկի վերջնական վերահսկող: Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկին են պատկանում բաժնետոմսերի 25%-ը գումարած մեկ բաժնետոմս:

Փոխկապակցված կողմերի հետ գործարքները, մնացորդները, եկամուտներն ու ծախսերը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ հետևյալն են.

	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
	Բաժնետերեր	Հիմնական ղեկավար անձնակազմ	Դուստր ընկերություններ և ընկերություններ որտեղ Բանկ ունի ներդրում
Հաճախորդներին տրված վարկեր			
Հունվարի 1-ի դրությամբ վճարման ենթակա վարկեր, համախառն	568,854	55,852	136,396
Տարվա ընթացքում տրված վարկեր	904,608	19,296	-
Տարվա ընթացքում վարկերի մարում	(698,535)	(56,068)	(136,396)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ վճարման ենթակա վարկեր, համախառն	774,927	19,080	-
Նվազեցված՝ արժեզրկումից կորուստ	(7,749)	(199)	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ վճարման ենթակա վարկեր	767,178	18,881	-
Վարկերի գծով տոկոսային եկամուտ	92,416	2,506	434
Վարկերի գծով կոռուստների արժեզրկման գծով մասնահանումներ/(վերականգնումներ)	(4,495)	(605)	(2,126)
Հաճախորդներին վճարման ենթակա գումարներ			
Ավանդներ հունվարի 1-ի դրությամբ	261,946	35,892	-
Տարվա ընթացքում ներդրված ավանդներ	15,502,985	312,850	-
Տարվա ընթացքում մարված ավանդներ	(14,630,751)	(335,445)	-
Ավանդներ դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,134,180	13,297	-
Տոկոսային ծախս ավանդների գծով	82,193	106	-
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ			
Հունվարի 1-ի դրությամբ	2,654,434	-	261,576
Ավելացումներ	731,266	-	5,674,831
Նվազումներ	(1,358,587)	-	(5,739,578)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,027,113	-	196,829
Տոկոսային ծախս	274,571	-	21,314
Հիմնական միջոցների ձեռքբերում	37,588	-	-
Տրամադրված երաշխիքներ	81,606	-	4,500
Այլ ծախսեր			
Կոմիսիոն և այլ միջնորդավճարների գծով եկամուտ	3,904	53	216
Գովազդային ծախսեր	48,413	-	-
Ապահովագրական ծախսեր	-	-	70,600
Ինկասացիոն ծախսեր	-	-	160,000
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	185,420	-	-
Գործուղման ծախսեր	-	-	-
Այլ ծախսեր	1,200	-	-

	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
	Բաժնետերեր	Հիմնական դեկավար անձնակազմ	Դուստր ընկերություններ և ընկերություններ որտեղ Բանկ ունի ներդրում
Հաճախորդներին տրված վարկեր			
Հունվարի 1-ի դրությամբ վճարման ենթակա վարկեր, համախառն	749,238	70,701	96,184
Տարվա ընթացքում տրված վարկեր	326,486	52,254	115,224
Տարվա ընթացքում վարկերի մարում	(506,870)	(67,103)	(75,012)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ վճարման ենթակա վարկեր, համախառն	568,854	55,852	136,396
Նվազեցված՝ արժեզրկումից կորուստ	(12,244)	(804)	(2,126)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ վճարման ենթակա վարկեր	556,610	55,048	134,270
Վարկերի գծով տոկոսային եկամուտ	59,993	3,921	14,754
Վարկերի գծով կոուստների արժեզրկման գծով մասնահանումներ/(վերականգնումներ)	25,584	(257)	(2,683)
Հաճախորդներին վճարման ենթակա գումարներ			
Ավանդներ հունվարի 1-ի դրությամբ	615,659	15,005	123
Տարվա ընթացքում ներդրված ավանդներ	5,345,155	281,814	-
Տարվա ընթացքում մարված ավանդներ	(5,698,868)	(260,927)	(123)
Ավանդներ դեկտեմբերի 31-ի դրությամբ	261,946	35,892	-
Տոկոսային ծախս ավանդների գծով	9,487	374	-
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ			
Հունվարի 1-ի դրությամբ	4,620,716	-	49,197
Ավելացումներ	801,383	-	5,053,702
Նվազումներ	(2,767,665)	-	(4,841,323)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,654,434	-	261,576
Տոկոսային ծախս	384,284	-	17,441
Հիմնական միջոցների ձեռքբերում	36,717	-	36,717
Տրամադրված երաշխիքներ	85,628	-	85,628
Այլ ծախսեր			
Կումիսիոն և այլ միջնորդավճարների գծով եկամուտ	7,694	698	361
Գովազդային ծախսեր	48,785	-	-
Ապահովագրական ծախսեր	58,971	-	-
Կանխիկի հավաքագրման գծով ծախսեր	-	-	240,000
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	104,300	-	-
Գործուղման ծախսեր	-	-	-
Այլ ծախսեր	6,680	-	-

2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարում տնօրենների և առանցքային ղեկավար անձնակազմի ընդհանուր վարձատրության չափը կազմել է 307,060 ՀՀ դրամ (2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարում՝ 232,256 հազար ՀՀ դրամ): Առանցքային ղեկավար անձնակազմը ներառում է Տնօրինության և Տնօրենների խորհրդի անդամներին:

32. Ֆինանսական գործիքների իրական արժեքը

Բանկը կատարել է իր ֆինանսական գործիքների գնահատում, ինչպես պահանջվում է ՖՀՄՍ 7 Ֆինանսական գործիքները. Բացահայտումներ ստանդարտով:

Գնանշված վաճառքի համար մատչելի ակտիվների գնահատված իրական արժեքները հիմնված են հաշվետվության օրվա դրությամբ շուկայական գների վրա առանց գործարքի ծախսերի նվազեցման: Բոլոր այլ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքները հաշվարկվում են՝ օգտագործելով գեղջված դրամական հոսքերը և հաշվետու օրվա դրությամբ նմանատիպ գործիքների գեղջային դրույքները:

Իրական արժեքի գնահատումը մոտավորապես համապատասխանում է այն գումարին, որով ֆինանսական գործիքը կարող է փոխանակվել իրագել, պատրաստական կողմերի միջև: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անորոշությունները և սուբյեկտիվ գնահատումը, իրական արժեքը չպետք է մեկնաբանվի որպես ակտիվների կամ պարտավորությունների անմիջապես վաճառքի գումար:

Բանկը չափում է ֆինանսական գործիքների իրական արժեքը ներկայացված ֆինանսական վիճակի հաշվետվությունում, օգտագործելով հետևյալ իրական արժեքի աստիճանակարգը, որն արտացոլում է գնահատման մեջ կիրառվող չափանիշների նշանակալիությունը.

- Մակարդակ 1: Համանման գնանշված գործիքի շուկայական արժեքը (չճշգրտված) ակտիվ շուկայում
- Մակարդակ 2: Գնահատման մեթոդներ հիմնված դիտարկելի չափանիշների վրա, ուղղակի (օր., ինչպես գները) կամ անուղղակի ձևով (օր., գներից բխող): Այս մակարդակը ներառում է այն գործիքները, որոնք գնահատվում են՝ օգտագործելով ակտիվ շուկայում նման գնանշված գործիքների շուկայական արժեքը, շուկայում գնանշված համանման կամ նմանատիպ գործիքների շուկայական արժեքը, որոնք ենթադրվում են ավելի քիչ ակտիվ շուկա, կամ այլ գնահատման մեթոդներ, որտեղ բոլոր նշանակալի չափանիշները ուղղակի կամ անուղղակի դիտարկելի են շուկայի տվյալներից:
- Մակարդակ 3: Գնահատման մեթոդներ, որոնք օգտագործում են նշանակալի ոչ դիտարկելի չափանիշներ: Այս մակարդակը ներառում է բոլոր գործիքները, որտեղ գնահատման մեթոդը ներառում է չափանիշներ, որոնք հիմնված չեն դիտարկելի տվյալների վրա և ոչ դիտարկելի չափանիշները ունեն նշանակալի ազդեցություն գործիքների գնահատման մեջ: Այս մակարդակը ներառում է այն գործիքները, որոնք գնահատվում են՝ հիմնվելով շուկայական գնի վրա, որտեղ նշանակալի ճշգրտումներ կամ ենթադրություններ են անհրաժեշտ գործիքների տարբերությունները արտացոլելու համար:

Բանկի ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքը՝ չափված իրական արժեքով շարունակական հիմունքով. Բանկի ֆինանսական ակտիվներից և ֆինանսական պարտավորություններից մի քանիսը չափվում են իրական արժեքով՝ յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի վերջին: Հետևյալ աղյուսակը տրամադրում է տեղեկատվություն այդ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքների որոշման վերաբերյալ (մասնավորապես գնահատման տեխնիկաները և մուտքային տվյալները).

Ֆինանսական ակտիվներ/ ֆինանսական պարտավորություններ	Իրական արժեքը		Իրական արժեքի հիերարխիա	Գնահատման տեխնիկա(ներ) և հիմնական մուտքային տվյալ(ներ)	Էական ոչ դիտարկելի մուտքային տվյալ(ներ)	Ոչ դիտարկելի մուտքային տվյալների հարաբերակցու-թյունը իրական արժեքին
	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
ՀՀ պետական արժեթղթեր	-	2,375,194	Մակարդակ 2	Զեղչված դրամական հոսքեր Նախասահմանված դրամական հոսքերը զեղչված են այն դրույքաչափով, որն արտացոլում է մինչև մարման ժամկետն ընկած շուկայի եկամտաբերությունը	կ/չ	կ/չ
ՀՀ ոչ պետական արժեթղթեր	-	46,576	Մակարդակ 2	Զեղչված դրամական հոսքեր Նախասահմանված դրամական հոսքերը զեղչված են այն դրույքաչափով, որն արտացոլում է մինչև մարման ժամկետն ընկած շուկայի եկամտաբերությունը		
Հետգնման պայմանագրերով գրավադրված ոչ պետական արժեթղթեր	294,342	-	Մակարդակ 2	Նախասահմանված դրամական հոսքերը զեղչված են այն դրույքաչափով, որն արտացոլում է մինչև մարման ժամկետն ընկած շուկայի եկամտաբերությունը	կ/չ	կ/չ
Հետգնման պայմանագրերով գրավադրված ՀՀ պետական արժեթղթեր	5,824,469	4,624,479	Մակարդակ 2	Զեղչված դրամական հոսքեր Նախասահմանված դրամական հոսքերը զեղչված են այն դրույքաչափով, որն արտացոլում է մինչև մարման ժամկետն ընկած շուկայի եկամտաբերությունը	կ/չ	կ/չ
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	54,263	-	Մակարդակ 2	Ապագա դրամական հոսքերը գնահատված են հիմք ընդունելով գնահատված ֆորվարդային փոխարժեքները և պայմանագրերի ֆորվարդային դրույքաչափերը՝ զեղչված տարբեր կոնտրագենտների վարկային ռիսկերը արտացոլող դրույքաչափով	կ/չ	կ/չ
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	19,659	6,740	Մակարդակ 2	Ապագա դրամական հոսքերը գնահատված են հիմք ընդունելով գնահատված ֆորվարդային փոխարժեքները և պայմանագրերի ֆորվարդային դրույքաչափերը՝ զեղչված տարբեր կոնտրագենտների վարկային ռիսկերը արտացոլող դրույքաչափով	կ/չ	կ/չ

Այստեղ ներկայացված գնահատումները պարտադիր կերպով չեն արտացոլում այն գումարները, որոնք Բանկը կարող է ստանալ որոշակի գործիքի շուկայական փոխանակման արդյունքում: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է տրամաբանորեն մեկնաբանել շուկայական տվյալները, գնահատված իրական արժեքը որոշելու համար: Հայաստանի Հարապետության շուկան կարելի է բնութագրել որպես զարգացող, և տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել ֆինանսական շուկաներում գործունեության ծավալները: Շուկայի գնանշումները կարող են հնացած լինել կամ արտացոլել վաճառքի գործարքների կրճատում և արդյունքում չեն արտացոլի ֆինանսական գործիքների իրական արժեքները: Ղեկավարությունն օգտագործել է շուկայի ամբողջ հասանելի տեղեկատվությունը ֆինանսական գործիքների իրական արժեքը գնահատելիս:

Հաշվետու ժամանակահատվածում տեղի չեն ունեցել փոխանցումներ Մակարդակ 1-ից 2: Իրական արժեքի գնահատումը մոտավորապես համապատասխանում է այն գումարին, որով ֆինանսական գործիքը կարող է փոխանակվել իրագել, պատրաստական կողմերի միջև պարզած ձեռքի հետաժողովության գործարքում: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անորոշությունները և սուբյեկտիվ գնահատումը, իրական արժեքը չպետք է մեկնաբանվի որպես ակտիվների կամ պարտավորությունների անմիջական վաճառքի գումար:

Ակնկալվող դրամական հոսքերի գեղջման նպատակով օգտագործված տոկոսադրույքները հիմնված են պետական պարտատոմսերի եկամտաբերության կորի վրա հաշվետու ամսաթվի դրությամբ, գումարած գործիքի արժույթը, ժամկետայնությունը և կոնտրագենտի վարկային ռիսկը՝ հետևյալ կերպ

	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	8.36%-14.36%	7.9% - 11.0%

Իրական արժեք և հաշվեկշռային արժեք

Ֆիքսված տոկոսադրույքով գործիքների իրական արժեքը սովորաբար հավասար է դրանց հաշվեկշռային արժեքին: Ֆիքսված տոկոսադրույքով գործիքների գնահատված իրական արժեքը հիմնված ապագա գնահատված դրամական հոսքերի վրա, որոնք պետք է ստացվեն՝ համանման վարկային ռիսկ և մնացած մարման ժամկետ ունեցող նոր գործիքների դեպքում գեղջվելով ընթացիկ տոկոսադրույքներից: Վարկերի հաշվեկշռային արժեքը մոտավորապես հավասար է դրանց իրական արժեքին:

Ակտիվ շուկայում չգնանշված՝ ֆիքսված տոկոսադրույքով ավանդների և այլ փոխառությունների գնահատված իրական արժեքը հիմնված է դրանց գեղջված դրամական հոսքերի վրա՝ օգտագործելով համանման մարման ժամկետներով նոր պարտքերի գծով գեղջված տոկոսադրույքները: Ավանդների և այլ փոխառությունների հաշվեկշռային արժեքը մոտավորապես հավասար է դրանց իրական արժեքին:

33. Կապիտալի ռիսկի կառավարում

Բանկը կառավարում է իր կապիտալն՝ ապահովելու Բանկի գործունեության անընդհատության սկզբունքը միևնույն ժամանակ առավելագույնի հասցնելով շահագրգիռ կողմերի հատույցը ներգրաված և սեփական միջոցների հավասարակշռության օպտիմալացման ճանապարհով:

Բանկի կապիտալի կառուցվածքը բաղկացած է պարտքից և բաժնետիրական կապիտալը տնօրինողներին բաշխման ենթակա սեփական կապիտալից, որն իրենից ներկայացնում է թողարկված կապիտալը, պահուստները և չբաշխված շահույթը, ինչպես բացահայտված է սեփական կապիտալի փոփոխությունների մասին հաշվետվությունում:

Տնօրինությունը վերանայում է կապիտալի կառուցվածքը կիսամյակային կտրվածքով: Բանկի կապիտալի համարժեքությունը սահմանվում և վերահսկվում է՝ օգտագործելով ՀՀ ԿԲ կողմից սահմանված սահմանաչափերը: Որպես նման վերանայման մի մաս, Խորհուրդը դիտարկում է կապիտալի ինքնարժեքը և կապիտալի յուրաքանչյուր դասին առնչվող ռիսկերը: Խորհրդի առաջարկությունների հիման վրա Բանկն իր ընդհանուր կապիտալի կառուցվածքը կառուցում է շահութաբաժինների վճարման, նոր բաժնետոմսերի թողարկման, ինչպես նաև պարտքի թողարկման միջոցով: Ի լրումն, Բանկը կառավարում է իր կապիտալը՝ պայմանագրային պահանջների իրականացման համար:

ՀՀ կենտրոնական բանկը Բանկի համար սահմանում և վերահսկում է կապիտալի պահանջները: Ըստ ՀՀ ԿԲ կողմից սահմանված՝ ներկայումս գործող կապիտալի պահանջների, Բանկը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պետք է ապահովի 5,000,000 հազար ՀՀ դրամ նվազագույն բաժնետիրական կապիտալ (2013թ.

դեկտեմբերի 31-ին՝ 5,000,000 հազար ՀՀ դրամ) իսկ կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցությունը՝ 12% (2013թ. դեկտեմբերի 31-ին՝ 12%):

Հետևյալ աղյուսակը վերլուծում է Բանկի կանոնակարգային կապիտալի հարաբերակցությունը՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված սկզբունքների:

(հազար դրամ)	31 դեկտեմբերի 2014թ. աուդիտ չարված	31 դեկտեմբերի 2013թ. աուդիտ չարված
Հիմնական կապիտալ	8,957,704	8,284,674
Լրացուցիչ կապիտալ	338,037	1,069,390
Ընդհանուր կապիտալ	9,295,741	9,354,064
Ռիսկով կշռված ակտիվներ	73,458,606	63,813,398
Ընդհանուր կապիտալը՝ ռիսկով կշռված ակտիվներում տոկոսային արտահայտությամբ (ընդհանուր կապիտալի հարաբերակցություն)	12.65%	14.66%
Համապատասխանություն նվազագույն բաժնետիրական կապիտալի պահանջներին	Տարվա ընթացքում խախտումներ չեն արձանագրվել	Տարվա ընթացքում խախտումներ չեն արձանագրվել

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ըստ ռիսկերի կշիռների՝ դասակարգված համաձայն յուրաքանչյուր ակտիվի և պայմանագրային կողմի հետ առնչվող վարկային, շուկայական և գործառնական ռիսկերի գնահատման, և հաշվի առնելով ցանկացած ընդունելի ապահովվածությունը և երաշխիքները:

Համանման մոտեցում է ձևավորված նաև չճանաչված պայմանագրային պարտավորությունների գծով՝ որոշակի ճշգրտումներ կատարելով հնարավոր կորուստների պայմանական բնույթն արտացոլելու նպատակով:

Ընդհանուր կապիտալը կազմված է հիմնական կապիտալից, որը ներառում է կանոնադրական կապիտալը, չբաշխված շահույթը, այդ թվում ընթացիկ տարվա շահույթը, գլխավոր պահուստը: Ընդհանուր կապիտալը հաշվարկվում է ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտների պահանջների համաձայն: Կապիտալի մեկ այլ բաղադրիչ է լրացուցիչ կապիտալը, որն ընդգրկում է վերագնահատման պահուստները:

2014թ. ՀՀ կենտրոնական բանկը ՀՀ տարածքում գործող բանկերի և բանկային լիցենզիա ունեցող ֆինանսական կազմակերպությունների համար 2017թ. հունվարի 1-ի դրությամբ սահմանել է 30,000,000 հազար ՀՀ դրամ նվազագույն կապիտալի պահանջ:

34. Ռիսկերի կառավարում

Բանկային գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանություն, որը ենթադրում է ռիսկայնության աստիճանների որոշակի համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում: Ռիսկի կրումը ֆինանսական գործունեության անբաժանելի մասն է, ընդ որում գործառնական ռիսկերը գործունեության ընթացքում անխուսափելի են: Այդուհանդերձ, Բանկի նպատակն է հասնել ռիսկերի և օգուտների միջև համապատասխան հավասարակշռության՝ ռիսկ-եկամուտ օպտիմալ հարաբերակցության միջոցով՝ նվազագույնի հասցնելով Բանկի ֆինանսական վիճակի վրա անցանկալի ազդեցությունները: Բանկի ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է՝ ախտորոշել, բացահայտել, գնահատել և վերլուծել ռիսկերը, սահմանել ռիսկի համապատասխան սահմանաչափեր և հսկողություն, արժանահավատ և նորացված տեղեկատվական համակարգերի միջոցով վերահսկել ռիսկերը և սահմանաչափերի պահպանումը: Բանկը պարբերաբար վերանայում է ռիսկերի կառավարման քաղաքականությունը և համակարգերը՝ շուկայում, արտաքին միջավայրում տեղի ունեցած փոփոխություններն արտացոլելու և առկա լավագույն փորձին համապատասխանեցնելու համար:

Ռիսկերի կառավարման կառուցվածք

Ռիսկերի բացահայտման և վերահսկման պատասխանատու մարմիններն են՝

Խորհուրդ

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման ընդհանուր վերահսկողության, ռազմավարության հաստատման և ռիսկերի կառավարման սկզբունքների հաստատման համար: Խորհուրդը տրամադրում է սկզբունքներ ռիսկի ամբողջական կառավարման համար, ինչպես նաև քաղաքականություն՝ հատուկ բնագավառների վերաբերյալ, ինչպիսիք են փոխարժեքային (արտարժույթային) ռիսկը, տոկոսադրույքի ռիսկը, վարկային ռիսկը, ածանցյալ և ոչ ածանցյալ ֆինանսական գործիքների կիրառումը:

Վարչություն

Վարչությունը պատասխանատու է ռիսկերի կառավարման գործընթացի անխափան իրականացման և վերահսկման համար: Վարչությունը ընդհանուր պատասխանատվություն է կրում ռիսկերի կառավարման ռազմավարության, սկզբունքների, հայեցակարգերի, քաղաքականության և սահմանների մշակման ու կիրառման համար: Այն պատասխանատու է ռիսկերի կառավարման խնդիրների լուծման համար և վերահսկում է դրանց նկատմամբ ընդունված համապատասխան որոշումների կատարումը:

Ռիսկերի կառավարման ստորաբաժանում

Ռիսկերի կառավարումն իրականացվում է «Ռազմավարության և Ռիսկերի Կառավարման Վարչության» (ՌՌԿՎ) կողմից՝ ըստ Խորհրդի հաստատված քաղաքականության: ՌՌԿՎ կողմից գնահատվում, բացահայտվում, վերլուծվում և հեջավորվում են ռիսկերը՝ գործառնական ստորաբաժանումների հետ սերտ համագործակցության միջոցով: Ռիսկերի կառավարման ստորաբաժանումը պատասխանատու է ռիսկերի կառավարման սկզբունքների վերահսկման, քաղաքականության և Բանկի ռիսկի սահմանաչափերի համար, ինչպես նաև ռիսկերի կառավարման հետ կապված գործընթացների ներդրման և իրականացման համար:

Ներքին աուդիտ

Ներքին աուդիտը պատասխանատու է ռիսկերի կառավարման անկախ գնահատման և հսկողության ընդհանուր միջավայրի համար: Բանկի կողմից իրականացվող ռիսկերի կառավարման գործընթացը յուրաքանչյուր տարի ստուգման է ենթարկվում ներքին աուդիտի կողմից, որը ստուգում է ինչպես ընթացակարգերի ամբողջականությունը, այնպես էլ Բանկի գործունեության համապատասխանությունը ընթացակարգերին: Ներքին աուդիտը անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է ղեկավարության հետ և իր եզրակացություններն ու առաջարկները ներկայացնում է կառավարման համապատասխան մարմիններին:

Ռիսկերի գնահատման և ռիսկերի ներկայացման համակարգեր

Բանկի ռիսկերի գնահատման ընթացքում հաշվի է առնվում ինչպես սպասվող կորուստը, որն իրենից ներկայացնում է գործունեության ընթացքում կորուստների հնարավոր միջին մակարդակ, այնպես էլ հնարավոր անսպասելի կորուստները, որոնք իրենցից ներկայացնում են սպասվող միջին մակարդակը գերազանցող կորուստներ: Բանկը նաև մոդելավորում է քիչ հավանական, սակայն պոտենցիալ էական ազդեցություն ունեցող «վատթարագույն դեպքերը»:

Ռիսկերի մոնիթորինգը և կառավարումը հիմնականում հիմնված է Բանկի կողմից սահմանված ռիսկերի սահմանաչափերի վրա: Այս սահմանաչափերն արտացոլում են Բանկի գործարար ռազմավարությունը և շուկայական պայմանները, որոնցում գործում է Բանկը, ինչպես նաև Բանկի համար ընդունելի ռիսկի մակարդակը, ընդ որում հատուկ ուշադրություն է դարձվում առանձին ոլորտների վրա:

Գործունեության առանձին տեսակների գծով ստացվող տեղեկատվությունն ուսումնասիրվում և մշակվում է ռիսկերի վերլուծության, վերահսկողության և գնահատման նպատակով: Տվյալ տեղեկատվության հիման վրա կազմված հաշվետվությունները պարունակում են տեղեկություններ վարկային ռիսկի չափի, վարկային ցուցանիշների կանխատեսվող մակարդակի, ռիսկի սահմանված սահմանաչափերի, դրանցից

բացառությունների, VaR գնահատականի, իրացվելիության ցուցանիշների և ընդհանուր ռիսկի մակարդակի փոփոխության վերաբերյալ: Բանկի վարչությունը յուրաքանչյուր ամիս ստանում է ռիսկերի վերաբերյալ մանրամասն հաշվետվություն ըստ ոլորտների, հաճախորդների և աշխարհագրական շրջանների, որը պարունակում է ամբողջ անհրաժեշտ տեղեկատվությունը Բանկի ռիսկերի գնահատման և համապատասխան որոշումների կայացման համար:

Յուրաքանչյուր օր անց է կացվում ղեկավարության կարճատև խորհրդակցություն, անհրաժեշտության դեպքում Բանկի այլ աշխատակիցների մասնակցությամբ, որտեղ քննարկվում են սահմանված սահմանաչափերի պահպանումը, վերլուծվում է ռիսկի մակարդակը, ներդրումները, իրացվելիությունը և այլ ընթացիկ հարցեր:

Ռիսկերի նվազեցում

Ռիսկերի նվազեցման գործընթացն իրենից ներկայացնում է ռիսկերի առաջացման հնարավորությունը կամ դրա ազդեցությունը նվազեցնելու, կամ այդ երկու գործոնների մեղմման ուղղությամբ ձեռնարկվող լրացուցիչ միջոցառումների իրականացում: Իր ընդհանուր ռիսկերի կառավարման գործընթացի շրջանակներում Բանկն օգտագործում է ածանցյալ և այլ գործիքներ: Բանկն ակտիվորեն օգտագործում է գրավի միջոցները՝ վարկային ռիսկը նվազեցնելու ուղղությամբ (ավելի մանրամասն՝ տես ստորև):

Ռիսկի համակենտրոնացումներ

Ռիսկի համակենտրոնացումներն առաջանում են, երբ մի շարք փոխառուներ իրականացնում են նմանատիպ գործունեություն, կամ գործունեությունը ծավալվում է միևնույն աշխարհագրական շրջանում, կամ նրանք ունեն համանման տնտեսական հատկանիշներ, և տնտեսական, քաղաքական կամ այլ պայմաններում փոփոխության արդյունքում ցուցաբերում են նմանատիպ ազդեցություն այդ փոխառուների պայմանագրային պարտավորությունների կատարման ունակության վրա: Ռիսկի համակենտրոնացումները արտացոլում են Բանկի գործունեության արդյունքների զգայունությունը պայմանների փոփոխություններին, որոնք ազդեցություն են ունենում կոնկրետ բնագավառի կամ աշխարհագրական շրջանի վրա: Համակենտրոնացումների բարձր մակարդակից խուսափելու նպատակով Բանկի քաղաքականությունը և գործընթացները ներառում են հատուկ սկզբունքներ ուղղված դիվերսիֆիկացված պորտֆելի պահպանմանը, ինչպես նաև իրականացվում է համակենտրոնացումների հաստատված սահմանաչափերի պահպանման անընդհատ մոնիտորինգ և կառավարում:

Վարկային ռիսկ

Բանկի գործունեությունը ենթարկվում է վարկային ռիսկի՝ կապված պարտատիրոջ կողմից պարտավորության չկատարելու հետ, ինչը կարող է Բանկին կորուստներ պատճառել: Վարկային ռիսկը Բանկի կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով էլ Բանկն այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկում: Վարկային ռիսկը կապված է հիմնականում վարկային գործառնությունների հետ, որոնք հանգեցնում են վարկերի տրամադրմանը և ներդրումային գործունեության հետ, որոնք Բանկի ակտիվների պորտֆելի մեջ ավելացնում են պարտքային արժեթղթեր և այլ պարտքային գործիքներ: Ռիսկն առկա է նաև արտհաշվեկշռային ֆինանսական գործիքներում, ինչպիսիք են վարկային պարտավորությունները: Վարկային ռիսկի կառավարումը և հսկողությունը իրականացվում է Բանկի ՌՌԿՎ և վարկային ստորաբաժանման կողմից, որի վերաբերյալ հաշվետվությունները պարբերաբար ներկայացվում են Բանկի Խորհրդին և վարչությանը:

Բանկի ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը լավագույնս ներկայացնում է նրանց վարկային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը՝ առանց հաշվի առնելու պահվող գրավը կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցները:

Վարկային ռիսկի առավելագույն չափը: Բանկի վարկային ռիսկի առավելագույն չափը զգալիորեն տատանվում է և կախված է և՛ անհատական ռիսկերից, և՛ ընդհանուր շուկայական տնտեսության ռիսկերից:

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է վարկային ռիսկի առավելագույն չափը հաշվեկշռային ֆինանսական ակտիվների գծով: Հաշվեկշռային ֆինանսական ակտիվների գծով առավելագույն ռիսկը հավասար է այդ ակտիվների հաշվեկշռային արժեքին նախքան որևէ հաշվանցում կամ գրավի ազդեցություն հաշվի առնելը:

(հազար դրամ)	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	16,962,428	9,400,452
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	54,263	-
Հակադարձ հետգնման պայմանագրեր	5,147,575	2,521,027
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող		
ֆինանսական ակտիվներ	1,255,797	1,379,833
Հաճախորդներին տրված վարկեր	52,057,388	40,693,742
<i>Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ</i>		
- Բանկի կողմից պահվող	49,478	2,521,046
- Հետգնման պայմանագրերով գրավադրված	6,118,811	4,624,479
Այլ ակտիվներ	34,678	82,620
	81,680,418	61,223,199

Բանկն ունի վարկերի դիմաց ապահովվածության նպատակով հաճախորդներից ստացված անշարժ գույքի, ակտիվների գծով այլ արժեթղթերի, երաշխիքների տեսքով ստացված գրավներ: Դրանց արժեքների գնահատականը հիմնված է փոխառության պահին գնահատված գրավի արժեքի հիման վրա, և որպես կանոն չեն վերանայվում, բացառությամբ այն դեպքերի, երբ վարկն առանձին վերցրած համարվում է արժեզրկված:

Որպես կանոն, գրավ չի պահվում ածանցյալ ֆինանսական գործիքներով առկա հայցերի, արժեթղթերում ներդրումների, բանկերին տրված վարկերի մասով, բացառությամբ այն դեպքերի, երբ արժեթղթերը պահվում են որպես հակադարձ հետգնման և արժեթղթերի փոխառությունների գործառնությունների մաս:

Վարկային ռիսկի առավելագույն չափի համակենտրոնացումը

Բանկի ակտիվների և պարտավորությունների աշխարհագրական համակենտրոնացումը 2014թ. և 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված է ստորև՝

(հազար դրամ)	2014թ. դեկտեմբերի 31-ին			
	Հայաստանի Հանրապետություն	Ոչ ՏՀԶԿ երկրներ	ՏՀԶԿ երկրներ	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	19,407,684	2,237,335	709,436	22,354,455
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	27,244	-	27,019	54,263
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	2,599,300	873,412	1,674,863	5,147,575
Հակադարձ հետգնման պայմանագրեր	1,255,797	-	-	1,255,797
Հաճախորդներին տրված վարկեր	52,057,388	-	-	52,057,388
<i>Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ</i>				
- Բանկի կողմից պահվող	47,561	-	1,917	49,478
- Հետգնման պայմանագրերով գրավադրված	6,118,811	-	-	6,118,811
Այլ ֆինանսական ակտիվներ	34,678	-	-	34,678
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	81,548,463	3,110,747	2,413,235	87,072,445

(հազար դրամ)

	2013թ. դեկտեմբերի 31-ին			
	Հայաստանի Հանրապետություն	Ոչ ՏՀԶԿ երկրներ	ՏՀԶԿ երկրներ	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	13,470,152	2,245,224	2,151,365	17,866,741
Պահանջներ ֆինանսական	2,408,720	-	112,307	2,521,027
կազմակերպությունների նկատմամբ				
Հակադարձ հետգնման պայմանագրեր	1,379,833	-	-	1,379,833
Հաճախորդներին տրված վարկեր	40,693,742	-	-	40,693,742
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ				
- Բանկի կողմից պահվող	2,519,331	-	1,715	2,521,046
- Հետգնման պայմանագրերով գրավադրված	4,624,479	-	-	4,624,479
Այլ ֆինանսական ակտիվներ	82,620	-	-	82,620
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	65,178,877	2,245,224	2,265,387	69,689,488

Ռիսկի սահմանաչափերի վերահսկման և մեղմացման քաղաքականություններ

Բանկը կարգավորում է վարկային ռիսկի մակարդակները՝ մեկ վարկառուի կամ վարկառուների խմբի, ինչպես նաև վարկավորման ճյուղային կամ աշխարհագրական սեգմենտների գծով ընդունելի ռիսկի գումարների սահմանաչափեր սահմանելով:

Նման ռիսկերը պարբերաբար վերահսկվում են և դրանց կառավարումը ենթակա է վերանայման տարեկան կամ ավելի հաճախակի կտրվածքով: Ըստ արդյունաբերության ճյուղերի և երկրների վարկային ռիսկի սահմանաչափերը հաստատվում են Բանկի Խորհրդի կողմից:

Մեկ վարկառուի, ներառյալ ֆինանսական կազմակերպությունների գծով վարկային ռիսկի չափը նաև սահմանափակված է Բանկի Խորհրդի կողմից սահմանված լրացուցիչ սահմանաչափերով հաշվեկշռային և արտահաշվեկշռային ռիսկերի համար, ինչպես նաև առևտրային գործարքների, օրինակ՝ արտարժույթային ֆորվարդի պայմանագրերի, օրական սահմանաչափերով: Ընթացիկ ռիսկերի ենթարկվելու սահմանաչափերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Վարկային ռիսկը նաև կառավարվում է վարկառուների և հնարավոր վարկառուների՝ մայր գումարի և տոկոսների վճարման կարողությունը պարբերաբար վերլուծությունների և անհրաժեշտության դեպքում վարկի տրամադրման սահմանաչափերի փոփոխման միջոցով:

Ստորև ներկայացված են հատուկ հսկողության և մեղմիչ մի քանի այլ միջոցներ:

Գրավ

Բանկը կիրառում է բազմաթիվ միջոցներ պարտքային ռիսկը զսպելու համար: Համընդհանուր գործելակերպ է հանդիսանում և հիմնական միջոցներից մեկն է համարվում տրամադրված դրամական միջոցների դիմաց գրավ վերցնելը: Բանկը կանոններ է սահմանում գրավի հատուկ տեսակների ընդունելի լինելու կամ ռիսկերի զսպման վերաբերյալ: Վարկերի համար գրավի հիմնական տեսակներն են.

- հիպոթեքային պայմանագրերով գրավադրվող անշարժ գույք,
- կազմակերպությունների գործառնական ակտիվները՝ շենքերը, պաշարները և այլ հիմնական միջոցներ,
- ֆինանսական գործիքներ՝ պարտքային և բաժնային արժեղիքներ
- դրամական միջոցներ և ոսկյա իրեր

Կազմակերպությունների երկարաժամկետ ֆինանսավորումը և վարկավորումը հիմնականում ապահովվում են, ֆիզիկական անձանց գծով վերաձևակերպվող վարկային գծերը հիմնականում չեն ապահովվում: Ի լրումն, վարկային կորուստը նվազագույնի հասցնելու համար Բանկը վարկառուից լրացուցիչ երաշխիքներ է պահանջում, հենց որ համապատասխան անհատական վարկերի արժեզրկման հատկանիշներ են նկատվում:

Վարկերից տարբեր ֆինանսական ակտիվների ապահովման միջոց հանդիսացող գրավների տեսակները որոշվում են ֆինանսական գործիքի բնույթով: Հիմնականում ֆինանսական կազմակերպություններին, հատկապես բանկերին, վարկեր և կանխավճարներ տրամադրելու համար գրավներ չեն պահանջվում: Բացառություն են կազմում այն գրավները, որոնք ձեռք են բերվել հետգնման պայմանագրերի և արժեթղթերի փոխառության գործարքներից: Պարտատոմսերը և այլ պարտքային արժեթղթերը հիմնականում չեն ապահովվում:

Համախառն վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ ապահովվածության.

(հազար դրամ)	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Անշարժ գույքի գրավով ապահովված վարկեր	24,732,809	18,506,766
Երաշխիքով ապահովված վարկեր	6,834,411	7,300,346
Փոխադրամիջոցներով (մեքենաներով) ապահովված վարկեր	6,313,328	3,872,395
Ոսկու գրավով ապահովված վարկեր	5,736,340	5,448,944
Կանխիկով ապահովված վարկեր	782,624	1,432,915
Պաշարների գրավով ապահովված վարկեր	299,751	154,891
Մարքավորումներով ապահովված վարկեր	39,027	354,827
Ոսկու ստանդարտացված ձուլակտորներով ապահովված գրավներ	19,985	28,653
Այլ գրավ	4,096	58,518
Զապահովված վարկեր	8,031,575	4,352,932
	52,793,946	41,511,187
Նվազեցված՝ արժեզրկման կորուստների պահուստը	(736,558)	(817,445)
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	52,057,388	40,693,742

Վերը նշված աղյուսակում ներկայացված արժեքները վարկերի հաշվեկշռային արժեքներն են, և պարտադիր չէ, որ ներկայացնեն գրավների իրական արժեքը: Գրավների շուկայական արժեքների գնահատումները հիմնված են գրավի գնահատման վրա ըստ տրամադրված վարկերի ամսաթվի: Հիմնականում դրանք չեն թարմացվում մինչև վարկերը չգնահատվեն որպես անհատապես արժեզրկված:

Վարկերին առնչվող պայմանական պարտավորություններ

Այս գործիքների հիմնական նպատակը անհրաժեշտության դեպքում հաճախորդներին միջոցներ տրամադրելն է: Երաշխիքները և ակրեդիտիվները ենթակա են նույն պարտքային ռիսկին, ինչ վարկերը: Ապրանքային և թղթային ակրեդիտիվները՝ Բանկի գրավոր հավաստումներն են հաճախորդների անունից, որոնք թույլ են տալիս երրորդ անձանց գումարներ ստանալ բանկից հատուկ պայմանների կատարման դեպքում, ապահովված են դրանց հետ կապված ապրանքների առաքմամբ և հետևաբար դրանք ավելի ապահով են, քան ուղղակի տրամադրվող վարկերը: Վարկի տրամադրման պայմանական պարտավորություններն իրենցից ներկայացնում են վարկային գծերի չօգտագործած մասերը:

Սակայն հնարավոր վնասի իրական գումարն ավելի փոքր է, քան չօգտագործված վարկային գծերի ընդհանուր գումարը, քանի որ վարկային պարտավորությունները տրամադրվում են վարկառուների կողմից վարկերի տրամադրման որոշակի ստանդարտների պահպանման դեպքում: Բանկը հետևում է պարտավորությունների մարման ժամկետներին, քանի որ երկարաժամկետ պարտավորությունները պարունակում են ավելի բարձր վարկային ռիսկ, քան կարճաժամկետ պարտավորությունները:

Արժեզրկում և պահուստավորման քաղաքականություն

Վարկերի արժեզրկման գնահատման հիմնական հատկանիշներն են մայր գումարի կամ տոկոսների վճարումների 90 օրից ավել ուշացումները, վարկառուների դրամական հոսքերի հետ կապված դժվարությունները, վարկային ռեյտինգների նվազումները, պայմանագրերի նախնական պայմանների խախտումները: Արժեզրկման գնահատումը կատարվում է անհատապես և խմբային եղանակով:

Արժեզրկման գծով պահուստի անհատական գնահատում

Բանկը որոշում է յուրաքանչյուր անհատապես նշանակալի վարկի համապատասխան պահուստի չափը անհատական հիմքով: Պահուստի գումարի որոշման ժամանակ հաշվի առնվող գործոններից են վարկառուի բիզնես ծրագրի վստահելիությունը, ֆինանսական դժվարությունները հաղթահարելու կարողությունը, ծրագրված հասույթները և սպասվող շահաբաժինների վճարումները անվճարունակության դեպքում, այլ ֆինանսական օգնության հնարավորությունը, գրավի իրացվելի արժեքը, սպասվող դրամական հոսքերի ժամկետները: Արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, եթե չկանխատեսված հանգամանքները չեն պահանջում հատուկ ուշադրություն:

Արժեզրկման գծով պահուստի խմբային գնահատում

Խմբային գնահատումը կատարվում է ոչ նշանակալի վարկերի գծով (ներառյալ վարկային քարտերը, հիպոթեքները և չապահովված սպառողական վարկերը), ինչպես նաև անհատապես նշանակալի վարկերի գծով, որոնց համար դեռ չկան արժեզրկման ակնհայտ հատկանիշներ: Արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսվա դրությամբ՝ դասակարգված յուրաքանչյուր խմբի համար առանձին: Խմբային գնահատումը հաշվի է առնում այն արժեզրկման գումարը, որը հնարավոր է առաջանա պորտֆելում, նույնիսկ եթե անհատական գնահատման մեջ արժեզրկման օբյեկտիվ վկայություն չկա:

Արժեզրկման կորուստները գնահատվում են հաշվի առնելով հետևյալ տեղեկատվությունը՝ պորտֆելում կորուստների պատմությունը, ընթացիկ տնտեսական իրավիճակը, կորուստն առաջանալու և որպես անհատապես արժեզրկված վարկ բացահայտվելու մոտավոր ժամկետը, արժեզրկման դեպքում սպասվող վճարումները:

Ֆինանսական երաշխիքների և ակրեդիտիվների արժեզրկման գնահատումը և պահուստավորումն իրականացվում է նույն կերպ՝ ինչ վարկերինը:

Ժամկետանց, սակայն չարժեզրկված վարկեր

Ժամկետանց են համարվում այն վարկերը, որոնց գծով վճարումներն ուշացված են միայն մի քանի օրով: Ժամկետանց վարկերի հիմնական մասը չի համարվում արժեզրկված: Ժամկետանց, սակայն անհատապես չարժեզրկված վարկերի ժամկետանց օրերի վերլուծությունն ըստ դասերի ներկայացվում է ծանոթագրություն 16-ում:

Անհատապես արժեզրկված վարկեր

Մինչև անհատապես գնահատված արժեզրկման պահուստներով զտելը հաճախորդներին տրամադրված անհատապես արժեզրկված վարկերը կազմում են 117,957 հազար դրամ (2013թ.՝ 240,326 հազար դրամ) (ծան. 16):

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ Բանկի շահույթները կամ կապիտալը կամ նրա՝ իր գործունեության նպատակներին հասնելու կարողությունը կվատթարանան շուկայական տոկոսադրույթներում և գներում փոփոխությունների կամ դրանց անկայունության պատճառով: Շուկայական ռիսկն ընդգրկում է տոկոսադրույթի և արժույթային ռիսկերը: Փոփոխություններ տեղի չեն ունեցել Բանկի ռիսկերի գնահատման մոտեցումներում կամ ռիսկի աստիճանում, ինչպես նաև ռիսկերի կառավարման և չափման մեթոդներում:

Տոկոսադրույթի ռիսկ

Տոկոսադրույթի ռիսկը շուկայական տոկոսադրույթների փոփոխման բացասական ազդեցության հնարավորությունն է Բանկի գուտ տոկոսային եկամտի կամ կապիտալի տնտեսական արժեքի վրա: Տոկոսադրույթի ռիսկը ծագում է Բանկի ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքերի և նրանց իրական արժեքի վրա տոկոսադրույթների փոփոխությունների ուղղակի ազդեցության հնարավորությունից: Բանկի Տնօրենների Խորհուրդը սահմանել է տոկոսադրույթների միջև տարբերությունների սահմանաչափ ժամկետային կտրվածքով: Դիրքերը վերահսկվում են և հեջավորման ռազմավարություն է օգտագործվում դրանց ռիսկայնությունը ընդունելի շրջանակներում պահելու համար:

Գնային ռիսկ

Գնային ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքի արժեքը կտատանվի շուկայական գների փոփոխության արդյունքում անկախ նրանից, թե փոփոխությունները հետևանք են առանձին արժեթղթին կամ դրա թողարկողին յուրահատուկ գործոնների, թե շուկայում շրջանառվող բոլոր արժեթղթերի վրա ազդող գործոնների: Բանկը ենթարկվում է իր ապրանքների կամ ծառայությունների շուկայական գների փոփոխության ռիսկին, որոնք ենթակա են թե՛ ընդհանուր և թե՛ յուրահատուկ շուկայական տատանումների:

Բանկը կառավարում է գնային ռիսկը այն պոտենցիալ կորուստների պարբերաբար գնահատման միջոցով, որոնք կարող են առաջանալ շուկայական պայմանների անբարենպաստ փոփոխություններից, ինչպես նաև սահմանելով և պահպանելով համապատասխան վնասների կանխարգելման սահմանաչափեր և միջակայքերի (մարժաներ) և գրավի պահանջներ: Բանկի չտրամադրված վարկային պարտավորվածությունների գծով հնարավոր վնասների գումարը հավասար է այդ պարտավորվածությունների ընդհանուր գումարին: Այնուամենայնիվ, վնասի հավանական գումարը ավելի փոքր է քան այդ գումարը, քանի որ պարտավորվածությունների մեծ մասը պայմանական են՝ կախված մի շարք պայմաններից, որոնք սահմանված են վարկային պայմանագրերում:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս զուտ տոկոսային եկամտի և կապիտալի զգայունությունը տոկոսադրույքների հնարավոր փոփոխությունների նկատմամբ՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով: Զուտ տոկոսային եկամտի և կապիտալի զգայունությունը տոկոսադրույքներում ենթադրվող փոփոխությունների ազդեցությունն է մեկ տարվա զուտ տոկոսային եկամտի և կապիտալի վրա՝ 2014թ. և 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեկշռում հաշվառվող լողացող տոկոսադրույքով ոչ առևտրային ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով: Կապիտալի զգայունությունը վերլուծվում է ըստ ակտիվի կամ սկզբի իրացման ժամկետների: Կապիտալի ընդհանուր զգայունության և ըստ գործիքների մարման ժամկետայնության վերլուծությունը հիմնված է եկամտաբերության կորի զուգահեռ տեղաշարժի ենթադրության վրա:

(հազար դրամ)		2014թ.		
Արժույթ	Փոփոխություններ հիմնական տոկոսադրույքներում	Զուտ տոկոսային եկամտի զգայունություն	Կապիտալի զգայունություն	Ընդամենը
ՀՀ դրամ	100	-	(221,152)	(221,152)
ԱՄՆ դոլար	100	(14,109)	-	(14,109)
ՀՀ դրամ	(100)	-	240,407	240,407
ԱՄՆ դոլար	(100)	14,109	-	14,109
(հազար դրամ)		2013թ.		
Արժույթ	Փոփոխություններ հիմնական տոկոսադրույքներում	Զուտ տոկոսային եկամտի զգայունություն	Կապիտալի զգայունություն	Ընդամենը
ՀՀ դրամ	100	-	(328,872)	(328,872)
ԱՄՆ դոլար	100	(9,724)	-	(9,724)
ՀՀ դրամ	(100)	-	360,570	360,570
ԱՄՆ դոլար	(100)	9,724	-	9,724

Արժույթային ռիսկ

Արժույթային ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքներում փոփոխությունների հետևանքով: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով, և հեջավորման ռազմավարություն է օգտագործվում դիրքերը սահմանված շրջանակներում պահելու համար:

Հետևյալ աղյուսակները ցույց են տալիս այն արտարժույթները, որոնք կարող են ազդել 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների և դրանց կանխատեսված դրամական հոսքերի վրա:

Արտարժույթի փոխարժեքի գծով ռիսկի ազդեցությունը Բանկի վրա առ 31 դեկտեմբերի 2014թ. ներկայացված է ստորև բերված աղյուսակում՝

(հազար դրամ)	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Ռուբլի	Այլ արժույթ	Ընդամենը
Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	9,659,935	8,519,335	3,115,780	822,258	237,147	22,354,455
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1,656,573	3,080,372	10,911	399,719	-	5,147,575
Հակադարձ հետգնման պայմանագրեր	1,255,797	-	-	-	-	1,255,797
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	29,113,120	22,314,671	629,597	-	-	52,057,388
- Բանկի կողմից պահվող	49,478	-	-	-	-	49,478
- Հետգնման պայմանագրերով գրավադրված	6,118,811	-	-	-	-	6,118,811
Այլ ֆինանսական ակտիվներ	19,915	11,799	2,946	18	-	34,678
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ	47,873,629	33,926,177	3,759,234	1,221,995	237,147	87,018,182
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
ՀՀ Կենտրոնական բանկից և ՀՀ կառավարությունից ստացված վարկեր	2,420,521	-	-	-	-	2,420,521
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	2,824,804	5,993,765	737,215	44,591	1,098	9,601,473
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր	1,665,466	1,239,547	171,390	-	-	3,076,403
Հետգնման պայմանագրեր	7,215,899	-	-	-	-	7,215,899
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	24,636,297	27,136,273	5,167,958	454,159	130,616	57,525,303
Այլ ֆինանսական պարտավորություններ	111,906	41,425	2,956	126,189	23	282,499
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	38,874,893	34,411,010	6,079,519	624,939	131,737	80,122,098
Հաշվեկշռային բաց դիրք	8,998,736	(484,833)	(2,320,285)	597,056	105,410	6,896,084
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ						
Համախառն մարվող արժույթային սվոփեր	(1,397,666)	(327,159)	2,309,880	(550,451)	-	34,604
Բաց դիրք	7,601,070	(811,992)	(10,405)	46,605	105,410	6,930,688

Արտարժույթի փոխարժեքի գծով ռիսկի ազդեցությունը Բանկի վրա առ 31 դեկտեմբերի 2013թ. ներկայացված է ստորև բերված աղյուսակում՝

(հազար դրամ)	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Ռուբլի	Այլ արժույթ	Ընդամենը
Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	7,183,114	5,240,581	2,601,857	2,611,267	229,922	17,866,741
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1,883,898	588,490	7,293	16,432	24,914	2,521,027
Հակադարձ հետգնման պայմանագրեր	1,379,833	-	-	-	-	1,379,833
Հաճախորդներին տրված վարկեր	25,000,047	15,693,695	-	-	-	40,693,742
<i>Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ</i>						
- Բանկի կողմից պահվող	2,521,046	-	-	-	-	2,521,046
- Հետգնման պայմանագրերով գրավադրված	4,624,479	-	-	-	-	4,624,479
Այլ ֆինանսական ակտիվներ	22,833	50,834	8,953	-	-	82,620
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ	42,615,250	21,573,600	2,618,103	2,627,699	254,836	69,689,488
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
ՀՀ Կենտրոնական բանկից և ՀՀ կառավարությունից ստացված վարկեր	2,522,985	-	-	-	-	2,522,985
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1,398,616	4,915,098	260,007	780	33	6,574,534
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և ավանդներ	2,324,959	1,768,763	-	-	-	4,093,722
Հետգնման պայմանագրեր	4,504,784	-	-	-	-	4,504,784
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	24,308,710	16,045,786	3,623,832	309,451	103,997	44,391,776
Այլ ֆինանսական պարտավորություններ	116,278	92,462	-	-	-	208,740
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	35,176,332	22,822,109	3,883,839	310,231	104,030	62,296,541
Հաշվեկշռային բաց դիրք	7,438,918	(1,248,509)	(1,265,736)	2,317,468	150,806	7,392,947
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ						
Համախառն մարվող արժույթային սվոփեր	-	-	(1,125,820)	1,119,080	-	(6,740)
Բաց դիրք	7,438,918	(1,248,509)	2,391,556	3,436,548	150,806	7,386,207

Արտարժույթի ռիսկի զգայունություն

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է Բանկի զգայունությունը ՀՀ դրամի՝ ԱՄՆ դոլարի, Եվրոյի, Ռուբլու փոխարժեքի 10% աճի կամ նվազման հանդեպ: Տվյալ 10%-ն իրենից ներկայացնում է այն

զգայունության տոկոսը, որն օգտագործվում է արտարժույթային ռիսկը հիմնական դեկավար անձնակազմին ներկայացնելիս և իրենից ներկայացնում է արտարժույթի փոխարժեքի ողջամտորեն հնարավոր փոփոխությունն ըստ դեկավարության գնահատականի: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն վճարման ենթակա արտարժույթով գնանշված դրամական միավորները և ճշգրտում է դրանց փոխարկումը ժամանակաշրջանի վերջի դրությամբ՝ արտարժույթի փոխարժեքների 10% փոփոխության տեսանկյունից: Զգայունության վերլուծությունը ներառում է արտաքին վարկերը, որոնց դեպքում վարկի գնանշումը կատարված է վարկատուի կամ վարկառուի գործառնական արժույթից տարբեր արժույթով: Ստորև նշված դրական թիվը նշանակում է շահույթի կամ կապիտալի տարրի աճ այն դեպքերում, երբ ՀՀ դրամն արժևորվում է ԱՄՆ դոլարի, Եվրոյի, Ռուբլու նկատմամբ 10%-ի չափով:

(հազար դրամ)	Փոխարժեքի փոփոխություն	2014թ.		Փոխարժեքի փոփոխություն	2013թ.	
		Ազդեցություն շահույթի վրա նախքան հարկումը			Ազդեցություն շահույթի վրա նախքան հարկումը	
		Արժևորում	Արժեզրկում		Արժևորում	Արժեզրկում
ԱՄՆ դոլար	10%	(81,199)	81,199	10%	(124,850)	124,850
Եվրո	10%	(1,040)	1,040	10%	239,156	(239,156)
ՌԴ ռուբլի	10%	4,660	(4,660)	10%	343,654	(343,654)

Զգայունության վերլուծության սահմանափակումները: Վերևում բերված աղյուսակում բերված է առանցքային ենթադրության փոփոխության ազդեցությունը այլ ենթադրությունների անփոփոխ պայմանների դեպքում: Իրականում ենթադրությունների, ինչպես նաև այլ գործոնների միջև գոյություն ունի փոխադարձ կապ: Հարկ է նաև նշել, որ այս զգայունությունները ոչ գծային են, և ավելի մեծ կամ փոքր ազդեցությունները չպետք է միջարկվեն (ինտերպոլյացիա) կամ արտարկվեն (էքստրապոլյացիա) այս արդյունքներից:

Զգայունության վերլուծությունում հաշվի չի առնվում այն հանգամանքը, որ Բանկի ակտիվները և պարտավորությունները ակտիվորեն կառավարվում են: Ի լրումն, Բանկի ներկայիս ֆինանսական դիրքը կարող է տարբեր լինել այն ժամանակ, երբ որևէ իրական շուկայական շարժ տեղի ունենա: Օրինակ, Բանկի ֆինանսական ռիսկերի կառավարման ռազմավարությունը նպատակ ունի կառավարելու շուկայական տատանումների ազդեցությանը ենթակա լինելը: Երբ ներդրումային շուկաներն անցնում են զանազան շեմային մակարդակներից, Բանկի դեկավարության արձագանքը կարող է ներառել այնպիսի գործողություններ, ինչպիսիք են ներդրումների վաճառքը, ներդրումային պորտֆելի բաշխվածության փոփոխությունը և այլ կանխարգելիչ միջոցառումներ: Հետևաբար, ենթադրությունների իրական փոփոխության ազդեցությունը կարող է որևէ ազդեցություն չունենալ պարտավորությունների վրա, մինչդեռ ակտիվները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվառվում են շուկայական արժեքով: Այս հանգամանքներում, ակտիվների և պարտավորությունների տարբեր չափման հիմունքները կարող են հանգեցնել Բանկի կանոնադրական կապիտալի տատանումներին:

Զգայունության վերլուծության այլ սահմանափակումները ներառում են հիպոթետիկ շուկայական շարժերի կիրառումը պոտենցիալ ռիսկերը ներկայացնելու նպատակով, որոնք ընդամենը ներկայացնում են Բանկի տեսակետը մոտակա ժամանակների շուկայական հնարավոր փոփոխությունների վերաբերյալ, որոնք չեն կարող կանխատեսվել որևէ հավաստիությամբ, ինչպես և այն ենթադրությունը, որ բոլոր տոկոսադրույքները շարժվում են համանմանորեն:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիությունը Բանկի ստանձնած պարտավորությունների ամբողջությամբ և սահմանված ժամկետներում կատարման հնարավորությունն է:

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Բանկն ի վիճակի չի լինի ժամանակին բավարարել իր պարտատերերի պահանջները բնականոն և արտասովոր պայմաններում: Այս ռիսկի զսպման նպատակով Բանկը ներգրավում է լրացուցիչ ֆինանսական միջոցներ, ի լրումն իր հիմնական ավանդային բազայի, կառավարում է ակտիվները հաշվի առնելով իրացվելիության ռիսկը և վերլուծում է ապագա դրամական հոսքերը և իրացվելիությունը օրական կտրվածքով: Սա ներառում է նաև սպասվելիք դրամական հոսքերի

գնահատումները և բարձր իրացվելի գրավների հասանելիությունը, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորում ստանալու նպատակով:

Բանկը պահում է բարձր իրացվելի և դիվերսիֆիկացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում: Բացի այդ Բանկը ՀՀ կենտրոնական բանկում պահում է պահուստավորման նվազագույն պարտադիր ռեզերվը (տես ծանոթագրություն 14-ը): Իրացվելիության ռիսկը գնահատվում և կառավարվում է տարբեր հնարավոր սցենարների դեպքում՝ հաշվի առնելով սթրես գործոնները կապված շուկայի հետ ընդհանրապես և Բանկի հետ մասնավորապես:

Բանկի իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը, ֆինանսավորման արտակարգ իրավիճակների ծրագրի առկայությունը և վերահսկել իրացվելիության նորմատիվները կանոնակարգային պահանջներին համապատասխան: Բանկը հաշվարկում է իրացվելիության ցուցանիշները ՀՀ կենտրոնական Բանկի պահանջներին համապատասխան:

Ստորև ներկայացվում է 2014թ. և 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ մարմանը մնացած ժամկետների համաձայն: Ցպահանջ վճարումները դասակարգված են այն ենթադրությամբ, որ վճարումը կպահանջվի անմիջապես: Սակայն Բանկի կարծիքով շատ հաճախորդներ անմիջապես վճարում չեն պահանջի, և աղյուսակը չի արտացոլում սպասվող դրամական հոսքերը Բանկի կողմից ավանդների պահպանման պատմությամբ:

(հազար դրամ)

	Ցուցանիշ և միջին 1 ամիս	1-3 ամիս	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			Ավելի քան 5 տարի	Ընդամենը 1 տարուց ավել	Ընդամենը
			3 ամսից 1 տարի	Ընդամենը մինչև 1 տարի	1 -ից 5 տարի			
Ակտիվներ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	22,353,492	963	-	22,354,455	-	-	-	22,354,455
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	54,263	-	-	54,263	-	-	-	54,263
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	2,407,635	1,139,874	-	3,547,509	1,600,066	-	1,600,066	5,147,575
Հակադարձ հետգնման պայմանագրեր	1,255,797	-	-	1,255,797	-	-	-	1,255,797
Հաճախորդներին տրված վարկեր	3,458,020	4,821,430	12,658,676	20,938,126	24,866,295	6,252,967	31,119,262	52,057,388
<i>Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ</i>								
-Բանկի կողմից պահվող	-	-	-	-	-	49,478	49,478	49,478
-Հետգնման պայմանագրերով գրավադրված	6,118,811	-	-	6,118,811	-	-	-	6,118,811
Այլ ֆինանսական ակտիվներ	29,801	3,604	-	33,405	1,273	-	1,273	34,678
	35,677,819	5,965,871	12,658,676	54,302,366	26,467,634	6,302,445	32,720,601	87,072,445
Պարտավորություններ								
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	19,659	-	-	19,659	-	-	-	19,659
ՀՀ Կենտրոնական բանկից և ՀՀ կառավարությունից ստացված վարկեր	71,356	743	331,331	403,430	2,017,091	-	2,017,091	2,420,521
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1,259,481	1,832,909	5,114,529	8,206,919	1,138,767	255,787	1,394,554	9,601,473
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և ավանդներ	109,710	348,800	1,083,871	1,542,381	1,534,022	-	1,534,022	3,076,403
Հետգնման պայմանագրեր	7,215,899	-	-	7,215,899	-	-	-	7,215,899
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	30,700,857	7,482,667	18,146,028	56,329,552	1,042,984	152,767	1,195,751	57,525,303
Այլ ֆինանսական պարտավորություններ	274,441	5,132	2,926	282,499	-	-	-	282,499
	39,651,403	9,670,251	24,678,685	74,000,339	5,732,864	408,554	6,141,418	80,141,757
Զուտ դիրք	(3,973,584)	(3,704,380)	(12,020,009)	(19,697,973)	20,734,770	5,893,891	26,579,183	6,930,688
Կուտակային տարբերություն ակտիվների և պարտավորությունների միջև	(3,973,584)	(7,677,964)	(19,697,973)	(19,697,973)	1,036,797	6,930,688	6,930,688	

(հազար դրամ)

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-3 ամիս	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			Ավելի քան 5 տարի	Ընդամենը 1 տարուց ավել	Ընդամենը
			3 ամսից 1 տարի	Ընդամենը մինչև 1 տարի	1 -ից 5 տարի			
Ակտիվներ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	16,539,284	1,327,457	-	17,866,741	-	-	-	17,866,741
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	877,254	60,735	-	937,989	-	1,583,038	1,583,038	2,521,027
Հակադարձ հետգնման պայմանագրեր	1,379,833	-	-	1,379,833	-	-	-	1,379,833
Հաճախորդներին տրված վարկեր	3,142,137	6,671,227	8,821,246	18,634,610	19,211,360	2,847,772	22,059,132	40,693,742
<i>Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ</i>								
-Բանկի կողմից պահվող	2,375,194	-	-	2,375,194	-	145,852	145,852	2,521,046
-Հետգնման պայմանագրերով գրավադրված	4,624,479	-	-	4,624,479	-	-	-	4,624,479
Այլ ֆինանսական ակտիվներ	-	82,620	-	82,620	-	-	-	82,620
	28,938,181	8,142,039	8,821,246	45,901,466	19,211,360	4,576,662	23,788,022	69,689,488
Պարտավորություններ								
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	6740	-	-	6740	-	-	-	6,740
ՀՀ Կենտրոնական բանկից և ՀՀ կառավարությունից ստացված վարկեր	86,863	15,437	989,666	1,091,966	1,431,019	-	1,431,019	2,522,985
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	779,917	1,467,650	3,128,434	5,376,001	848,008	350,525	1,198,533	6,574,534
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և ավանդներ	36,474	316,636	1,074,321	1,427,431	2,666,291	-	2,666,291	4,093,722
Հետգնման պայմանագրեր	4,003,448	501,336	-	4,504,784	-	-	-	4,504,784
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	25,221,851	4,707,361	12,601,503	42,530,715	1,697,824	163,237	1,861,061	44,391,776
Այլ ֆինանսական պարտավորություններ	208,740	-	-	208,740	-	-	-	208,740
	30,344,033	7,008,420	17,793,924	55,146,377	6,643,142	513,762	7,156,904	62,303,281
Զուտ դիրք	(1,405,852)	1,133,619	(8,972,678)	(9,244,911)	12,568,218	4,062,900	16,631,118	7,386,207
Կուտակային տարբերություն ակտիվների և պարտավորությունների միջև	(1,405,852)	(272,233)	(9,244,911)	(9,244,911)	3,323,307	7,386,207	7,386,207	

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները ներկայացված են առաջին սյունակում «մինչև մեկ ամիս», քանի որ ըստ բանկի ղեկավարության, դրանք բարձր իրացվելի ակտիվներ են, որոնք կարող են վաճառվել ըստ պահանջի՝ ֆինանսական պարտավորությունների պահանջները բավարարելու նպատակով: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Բանկի ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, հիմնվելով պայմանագրով նախատեսված՝ չգեղջված մարման պարտավորությունների վրա:

(հազար դրամ)	Ցայահանջ և մինչև 1 ամիս	1-3 ամիս	3 ամսից 1 տարի	1 -ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Ընդամենը
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
ՀՀ Կենտրոնական բանկից և ՀՀ կառավարությունից ստացված վարկեր	87,930	33,892	468,471	2,268,099	-	2,858,392
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1,310,826	1,908,622	5,296,074	1,484,619	341,607	10,341,748
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և ավանդներ	139,070	407,007	1,347,677	1,990,744	-	3,884,498
Հետգնման պայմանագրեր	7,259,344	-	-	-	-	7,259,344
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	30,878,959	7,804,329	18,983,993	1,207,930	199,334	59,074,545
Այլ ֆինանսական պարտավորություններ	282,499	-	-	-	-	282,499
Ընդամենը չգեղջված ոչ ածանցյալ	39,958,628	10,153,850	26,096,215	6,951,392	540,941	83,701,026
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Արտարժույթի սվոփ պայմանագրեր						
Ներհոսք	3,734,790	-	-	-	-	3,734,790
Արտահոսք	(3,697,140)	-	-	-	-	(3,697,140)

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Բանկի ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, հիմնվելով պայմանագրով նախատեսված՝ չգեղջված մարման պարտավորությունների վրա:

(հազար դրամ)	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-3 ամիս	3 ամսից 1 տարի	1 -ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Ընդամենը
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
ՀՀ Կենտրոնական բանկից և ՀՀ կառավարությունից ստացված վարկեր	103,980	49,671	1,108,462	1,681,649	-	2,943,762
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	815,480	1,529,014	3,286,167	1,183,255	-	6,813,916
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և ավանդներ	64,868	373,789	1,334,341	3,418,272	-	5,191,270
Հետգնման պայմանագրեր	4,013,636	501,446	-	-	-	4,515,082
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	26,367,671	4,794,523	15,537,780	3,550,974	664,393	50,915,341
Այլ ֆինանսական պարտավորություններ	208,740	-	-	-	-	208,740
Ընդամենը չգեղջված ոչ ածանցյալ	31,574,375	7,248,443	21,266,750	9,834,150	664,393	66,073,029
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Արտարժույթի սվոփ պայմանագրեր						
Ներհոսք	(1,125,820)	-	-	-	-	(1,125,820)
Արտահոսք	1,119,080	-	-	-	-	1,119,080

Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկն իրենից ներկայացնում է ուղղակի կամ անուղղակի կորուստների վտանգ, որն առաջանում է Բանկի կողմից ֆինանսական գործիքներում ներգրավվածությունից, այդ թվում՝ գործընթացների, տեխնոլոգիաների, ենթակառուցվածքների գծով, և արտաքին գործոնների ազդեցությամբ, բացի վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերից, մասնավորապես՝ իրավական և կանոնակարգային պահանջների արդյունքում առաջացող ռիսկերը և համընդհանուր ընդունված կորպորատիվ վարքագծի ստանդարտները:

Բանկի նպատակն է՝ կառավարել գործառնական ռիսկերն այնպես, որ ֆինանսական կորուստների և վնասի կանխարգելումը համահունչ լինի Բանկի գործնական համբավի և ընդհանուր ծախսային արդյունավետության հետ:

Գործառնական ռիսկի կառավարման մեթոդների մշակման և գործընթացների իրականացման համար հիմնական պատասխանատվությունը կրում է Բանկի գործադիր մարմինը: Այս պատասխանատվությունն ուղեկցվում է գործառնական ռիսկի կառավարման համընդհանուր չափանիշների մշակմամբ հետևյալ ոլորտներում՝

- պարտականությունների համապատասխան տարանջատման պահանջներ, այդ թվում գործարքների անկախ հաստատում,
- գործարքների համաձայնեցման և մոնիթորինգի պահանջներ,
- կարգավորիչ և այլ իրավական պահանջների համապատասխանեցում, ներառյալ ՀՀ ԿԲ ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ նվազագույն պահանջները,
- վերահսկողական մեխանիզմների և ընթացակարգերի փաստաթղթավորում,
- առաջացած գործառնական ռիսկերի պարբերաբար գնահատման պահանջներ, ինչպես նաև ռիսկերի կառավարմանն ուղղված ընթացակարգերի համապատասխանություն,
- գործառնական կորուստների զեկուցման պահանջներ և առաջարկվող մեղմացույցիչ գործողություններ,
- արտակարգ իրավիճակների ծրագրերի մշակում,
- վերապատրաստում և մասնագիտական զարգացում,
- էթիկայի և գործարար չափանիշներ,
- ռիսկերի մեղմացում:

Բանկի ստանդարտներին համապատասխանությունը ուղեկցվում է ներքին աուդիտի կողմից իրականացվող պարբերական դիտարկումներով: Ներքին աուդիտի դիտարկումների արդյունքերը քննարկվում են Բանկի ղեկավարության այն ներկայացուցչի հետ, որին դրանք վերաբերում են: Դիտարկումների ամփոփագրերը ներկայացվում են Խորհրդին:

35. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Բանկը ստորադաս փոխառություն է ներգրավել իր բաժնետերերից. 2015թ. մարտի 15-ին Էդուարդ Սուքիասյանից՝ 1,200,000 հազար դրամ գումարով, 2015թ. ապրիլի 17-ին՝ Խաչատուր Սուքիասյանից՝ 1,500,000 հազար դրամ գումարով և 2015թ. ապրիլի 15-ին՝ Մարիբեկ Սուքիասյանից՝ 3,500,000 ԱՄՆ դոլար գումարով:



«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» Բաց Բաժնետիրական Ընկերություն

Ֆինանսական հաշվետվություններ

2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԷԶ

ԴԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 2015Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ և ՀԱՍՏԱՏՄԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ	1
ԱՆԿԱՌ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	2
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2015Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ	4
ՇԱՀՈՒՑՑԻ ԿԱՍ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2015Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ	5
ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2015Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ	6
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2015Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ	7
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2015Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ	8
1. Բանկը	8
2. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն	8
3. Կարևոր հաշվապահական դատողությունների և գնահատումների հետ կապված անորոշության հիմնական աղբյուրները	20
4. Նոր և վերանայված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների կիրառումը	22
5. Ձուտ տոկոսային եկամուտ նախքան տոկոսակիր ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստները	28
6. Կոմիսիոն եկամուտներ և ծախսեր	28
7. Ձուտ արտարժույթային եկամուտ	28
8. Այլ եկամուտ	29
9. Տոկոսակիր ակտիվների գծով (արժեզրկումից կորուստներ)/արժեզրկման հակադարձումներ	29
10. Անձնակազմի գծով ծախսեր	29
11. Այլ ծախսեր	29
12. Շահութահարկի գծով ծախս	29
13. Մեկ բաժնետոմսին ընկնող շահույթ	31
14. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	31
15. Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	31
16. Հաճախորդներին տրված վարկեր	32
17. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	37
18. Փոխանցված ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ	37
19. Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում	38
20. Հիմնական միջոցներ	39
21. Ոչ նյութական ակտիվներ	40
22. Այլ ակտիվներ	40
23. ՀՀ Կենտրոնական բանկից և ՀՀ կառավարությունից ստացված վարկեր	41
24. Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	41
25. Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և ավանդներ	41
26. Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	43
27. Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ	43
28. Ստորադաս փոխառություն	44
29. Այլ պարտավորություններ	44
30. Սեփական կապիտալ	44
31. Պայմանագրային և պայմանական պարտավորություններ	45
32. Գործարքներ կապակցված կողմերի հետ	47
33. Ֆինանսական գործիքների իրական արժեքը	49
34. Կապիտալի ռիսկի կառավարում	51
35. Ռիսկերի կառավարում	53
36. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր	69

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 2015Թ. ՂԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ և ՀԱՍՏԱՏՄԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Ղեկավարությունը պատասխանատու է «Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակը, նույն ամսաթվին ավարտված տարվա գործունեության արդյունքները, դրամական միջոցների հոսքերը և սեփական կապիտալում փոփոխությունները ճշմարիտ ներկայացնող, ֆինանսական հաշվետվությունների Միջազգային Ստանդարտներին (ՖՀՄՍ) համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է՝

- հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճ ընտրության և կիրառման համար,
- հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ ներկայացվող տեղեկատվության համապատասխանության, վստահելիության, համեմատականության և հասկանալիության համար,
- լրացուցիչ բացահայտումների տրամադրման համար, երբ ՖՀՄՍ-ի հատուկ պահանջների համապատասխանությունը բավարար չէ, որպեսզի օգտագործողները պատկերացում կազմեն որոշակի գործարքների էության, Բանկի ֆինանսական վիճակի և ֆինանսական գործունեության այլ իրադարձությունների և պայմանների վերաբերյալ, և
- Բանկի գործունեության անընդհատության ապահովման կարողությունը գնահատելու համար:

Ղեկավարությունը նաև պատասխանատու է՝

- Բանկի ներքին վերահսկողության արդյունավետ համակարգի մշակման, ներդրման և պահպանման համար,
- համապատասխան հաշվապահական գրանցումներ վարելու համար, որոնք բավարար կլինեն Բանկի գործառնությունները արտացոլելու և ներկայացնելու, և ցանկացած ժամանակ ողջամիտ ճշգրտությամբ բացահայտելու Բանկի ֆինանսական վիճակը, ինչպես նաև հնարավորություն կընձեռեն Ղեկավարությանը հավաստիանալու, որ Բանկի ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ՖՀՄՍ-ներին,
- ՀՀ օրենսդրության և հաշվապահական ստանդարտների պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում վարելու համար,
- Բանկի ակտիվների անվտանգության ապահովման համար խելամիտ քայլերի իրականացման համար, և
- խարդախությունների և նմանատիպ այլ երևույթների բացահայտման և կանխարգելման համար:


2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները հաստատված են հրապարակման համար 2016թ. ապրիլի 28-ին:

Ստորագրված է Բանկի ղեկավարության անունից՝


Արմեն Նալչյան
Գործադիր տնօրեն


Ռուբեն Ագադյան
Գլխավոր հաշվապահ

28 ապրիլի 2016թ.
Երևան, Հայաստանի Հանրապետություն



ԱՆԿԱՆ ԱՌԴԴՏՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերին և Խորհրդին

Մեր կողմից իրականացվել է «Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերության կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների համապատասխան սույն ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համակարգի ապահովման համար, որը ղեկավարությունը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է՝ մեր կողմից իրականացված աուդիտի արդյունքում կարծիք արտահայտել ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտը իրականացրեցինք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետևենք Էթիկայի պահանջներին և աուդիտը պլանավորենք և իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ հավաստիացում ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի դատողություններից, ներառյալ՝ խարդախությամբ կամ սխալներով պայմանավորված՝ ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը՝ նպատակ ունենալով մշակել համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ կարծիք արտահայտել կազմակերպության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ: Աուդիտորական աշխատանքները նաև ներառում են ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման կանոնների և մեթոդների համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների հիմնավորվածության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար են և համապատասխան՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիք

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերության ֆինանսական վիճակը, և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների:

Հարցի շեշտադրում

Կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են այն ենթադրության հիման վրա, որ Բանկը կապահովի իր գործունեության անընդհատությունը: Ինչպես ներկայացված է ֆինանսական հաշվետվությունների Ծան. 34-ում, 2017թ. հունվարի 1-ի դրությամբ Բանկը պարտավոր է ապահովել համապատասխանություն 30,000,000 հազար ՀՀ դրամի չափով նվազագույն կապիտալի կանոնակարգային նոր պահանջների հետ: Ղեկավարության ծրագրերն այս կապակցությամբ նույնպես դիտարկված են ֆինանսական հաշվետվությունների Ծան. 34-ում և 36-ում: Ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում ճշգրտումներ, որոնք կարող էին առաջանալ 2017թ. հունվարի 1-ի դրությամբ կանոնակարգային պահանջի չպահպանման հետևանքով: Մեր կարծիքը ձևավորված չէ այս հարցի առնչությամբ:




Սրբուհի Հակոբյան
Գործադիր տնօրեն



Երևան, Հայաստանի Հանրապետություն
Դեկտյե Արմենիա ՓԲԸ

28 ապրիլի, 2016թ.



Արմինե Ղուկասյան
Առևտրի ղեկավար

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ

	Ծան.	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	14	27,550,590	22,354,455
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	27	-	54,263
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	15	7,128,134	5,147,575
Հակադարձ հետգնման պայմանագրեր	18	832,166	1,255,797
Հաճախորդներին տրված վարկեր	16	59,175,240	52,057,388
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	17,18	-	-
- Բանկի կողմից պահվող		338,213	49,478
- Հետգնման պայմանագրերով գրավադրված		8,527,788	6,118,811
Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում	19	-	194,991
Շահութահարկի գծով կանխավճար		97,099	-
Հետաձգված հարկային ակտիվներ	12	105,444	35,921
Հիմնական միջոցներ	20	4,133,786	4,041,033
Ոչ նյութական ակտիվներ	21	83,116	95,021
Այլ ակտիվներ	22	423,612	514,278
Ընդամենը ակտիվներ		108,395,188	91,919,011
Պարտավորություններ և սեփական կապիտալ			
Պարտավորություններ			
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	27	693	19,659
Հետգնման պայմանագրեր	18	9,104,678	7,215,899
ՀՀ Կենտրոնական բանկից և ՀՀ կառավարությունից ստացված վարկեր	23	2,764,173	2,420,521
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	24	11,185,602	9,601,473
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և ավանդներ	25	2,997,550	3,076,403
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	26	61,973,987	57,525,303
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություններ		-	107,722
Ստորադաս փոխառություն	28	4,425,604	-
Այլ պարտավորություններ	29	942,825	881,016
Ընդամենը պարտավորություններ		93,395,112	80,847,996
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	30	2,333,338	2,333,338
Բաժնետոմսերի թողարկման համար ստացված կանխավճարներ	30,36	4,001,688	-
Գլխավոր պահուստ		6,000,000	5,405,133
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների պահուստ		(96,295)	262,264
Զբաղիված շահույթ		2,761,345	3,070,280
Ընդամենը սեփական կապիտալ		15,000,076	11,071,015
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		108,395,188	91,919,011

Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են 2016թ. ապրիլի 28-ին:

Արմեն Նալջյան
Գործադիր տնօրեն

Դավիթ Ազատյան
Գլխավոր հաշվապահ

**Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին
հաշվետվություն 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**
Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ

	Ծան.	2015թ.	2014թ.
Տոկոսային եկամուտ	5	9,858,009	8,342,889
Տոկոսային ծախս	5	(5,317,086)	(4,093,529)
Ձուտ տոկոսային եկամուտ նախքան տոկոսակիր ակտիվների գծով արժեզրկումից կորուստները		4,540,923	4,249,360
Տոկոսակիր ակտիվների գծով (արժեզրկումից կորուստներ)/արժեզրկման հակադարձումներ		(358,600)	61,283
Ձուտ տոկոսային եկամուտ	9	4,182,323	4,310,643
Ձուտ (վնաս)/օգուտ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից և պարտավորություններից		(242,318)	130,157
Ձուտ արտարժույթային եկամուտ	7	885,591	747,117
Կոմիսիոն եկամուտներ	6	1,460,908	1,508,982
Կոմիսիոն ծախսեր	6	(386,072)	(401,691)
Ձուտ օգուտ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով		6,347	171,314
Այլ եկամուտ	8	397,996	318,935
Ձուտ ոչ տոկոսային եկամուտ		2,122,452	2,474,814
Գործառնական եկամուտ		6,304,775	6,785,457
Անձնակազմի գծով ծախսեր	10	(3,338,583)	(3,393,487)
Հիմնական միջոցների մաշվածություն	20	(371,992)	(350,862)
Ոչ նյութական միջոցների ամորտիզացիա	21	(15,636)	(14,905)
Այլ ծախսեր	11	(1,979,338)	(1,859,453)
Արժեզրկումից հակադարձումներ /(կորուստներ) այլ ակտիվների գծով	22	4,622	(21,194)
Գործառնական ծախսեր		(5,700,927)	(5,639,901)
Ասոցիացված կազմակերպության օգուտի/(վնասի) բաժին	19	9,694	(49,552)
Շահույթը նախքան շահութահարկով հարկումը		613,542	1,096,004
Շահութահարկի գծով ծախս	12	(164,276)	(279,208)
Տարվա շահույթ		449,266	816,796
Այլ համապարփակ եկամուտ			
Հետագայում շահույթում կամ վնասում վերադասակարգման ենթակա հոդվածներ			
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից օգուտ (վնաս)/օգուտ տարվա համար		(428,066)	(796,283)
Տարվա ընթացքում իրացված վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերադասակարգումից ճշգրտում		(18,189)	(214,568)
Այլ համապարփակ եկամուտի տարրերին վերաբերող շահութահարկ		89,251	202,170
Ասոցիացված կազմակերպության՝ այլ համապարփակ եկամուտի բաժինը			
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման ճշգրտումից օգուտ (վնաս) տարվա համար		(1,943)	(811)
Ասոցիացված կազմակերպության համապարփակ եկամուտի այլ տարրերին վերաբերող շահութահարկ		388	162
Հաշվետու տարվա այլ համապարփակ եկամուտ, շահութահարկով հարկումից հետո		(358,559)	(809,330)
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ		90,707	7,466
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ	13		
Բազային		0.48	0.88
Նուսրացված		0.47	0.88

Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են 2016թ. ապրիլի 28-ին:

Արմեն Նալջյան
Գործադիր տնօրեն

Դավիթ Ազատյան
Գլխավոր հաշվապահ



Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ

Ծան	Բաժնե- տիրական կապիտալ	Բաժնետոմսերի թողարկման համար ստացված կանխավճարներ	Գլխավոր պահուստ	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդը 2014թ. հունվարի 1-ի դրությամբ	2,333,338	-	5,405,133	1,071,594	2,253,484	11,063,549
Տարվա շահույթ	-	-	-	-	816,796	816,796
Տարվա այլ համապարփակ եկամուտ	-	-	-	-	-	-
Տարվա այլ համապարփակ եկամուտ շահութահարկով հարկումից հետո	-	-	-	(808,681)	-	(808,681)
Աստղիացված կազմակերպության այլ համապարփակ եկամուտի մասնաբաժին շահութահարկից հետո	-	-	-	(649)	-	(649)
Ընդամենը տարվա այլ համապարփակ եկամուտ	-	-	-	(809,330)	-	(809,330)
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ	-	-	-	(809,330)	816,796	7,466
Մնացորդը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,333,338	-	5,405,133	262,264	3,070,280	11,071,015
Տարվա շահույթ	-	-	-	-	449,266	449,266
Տարվա այլ համապարփակ եկամուտ	-	-	-	-	-	-
Տարվա այլ համապարփակ եկամուտ շահութահարկով հարկումից հետո	-	-	-	(357,004)	-	(357,004)
Աստղիացված կազմակերպության այլ համապարփակ եկամուտի մասնաբաժին շահութահարկից հետո	-	-	-	(1,555)	-	(1,555)
Ընդամենը տարվա այլ համապարփակ եկամուտ	-	-	-	(358,559)	-	(358,559)
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ	-	-	-	(358,559)	449,266	90,707
Հայտարարված շահաբաժիններ	30	-	-	-	(163,334)	(163,334)
Բաժնետոմսերի թողարկման համար ստացված կանխավճարներ	30	4,001,688	-	-	-	4,001,688
Գլխավոր պահուստի ավելացում	30	-	594,867	-	(594,867)	-
Մնացորդը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,333,338	4,001,688	6,000,000	(96,295)	2,761,345	15,000,076

Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են 2016թ. ապրիլի 28-ին:

Արմեն Նալչյան
Գործադիր տնօրեն

Դավիթ Ազատյան
Գլխավոր հաշվապահ

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ

	Ծան.	2015թ.	2014թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
Տարվա շահույթ		449,266	816,796
Ճշգրտումներ			
Շահութահարկի գծով ծախս		164,276	279,208
Արժեզրկումից վնաս/(օգուտ)		353,978	(40,089)
Մաշվածություն և ամորտիզացիա		387,628	365,767
Հիմնական միջոցների օտարումից վնաս		4,625	2,665
Եկամուտ դրամաշնորհներից		(507)	(507)
Արտարժույթի փոխարկումից զուտ վնաս		(117,403)	211,610
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներից զուտ օգուտ		(6,347)	(171,314)
Ասոցիացված կազմակերպության (օգուտի)/վնասի բաժին		(9,694)	49,552
Այլ եկամուտ		(446)	(11,548)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ նախքան գործառնական ակտիվներում կամ պարտավորություններում փոփոխությունները		1,225,376	1,502,140
Գործառնական ակտիվներում կամ պարտավորություններում փոփոխություններ			
Գործառնական ակտիվների (աճ)/նվազում			
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ		(2,107,157)	(2,454,264)
Հակադարձ հետգնման պայմանագրեր		423,631	124,036
Հաճախորդներին տրված վարկեր		(7,001,287)	(8,041,480)
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		54,263	(54,263)
Այլ ակտիվներ		92,463	127,293
Գործառնական պարտավորությունների աճ/(նվազում)			
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ		1,648,099	2,380,279
Հետգնման պայմանագրեր		1,888,779	2,711,115
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ		4,508,413	9,804,969
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ		(18,966)	12,919
Այլ պարտավորություններ		70,265	266,472
Գործառնական գործունեությունից առաջացած դրամական միջոցներ նախքան շահութահարկով հարկումը		783,879	6,379,216
Վճարված շահութահարկ		(349,365)	(358,992)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ		434,514	6,020,224
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից			
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների ձեռքբերում		(3,811,200)	(1,727,505)
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր		877,243	1,865,204
Հիմնական միջոցների ձեռքբերում		(535,507)	(815,378)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր		66,137	24,412
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(3,731)	-
Ներդրումային գործունեությունում օգտագործված զուտ դրամական միջոցներ		(3,407,058)	(653,267)
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից			
ՀՀ Կենտրոնական բանկից և ՀՀ կառավարությունից վարկերի ստացում/(մարում)		343,652	(102,464)
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերից մուտքեր		1,451,945	-
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերի մարում		(1,549,365)	(1,195,001)
Ստորադաս փոխառությունից մուտքեր		4,386,429	-
Բաժնետոմսերի թողարկման համար ստացված կանխավճարներ		4,001,688	-
Բաժնետոմսերի գծով վճարված շահաբաժիններ		(147,063)	(2,006)
Ֆինանսական գործունեությունից ստացված/ (ֆինանսական գործունեությունում օգտագործված) դրամական միջոցներ		8,487,286	(1,299,471)
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը արտարժույթով պահվող դրամական միջոցների մնացորդների վրա		(318,607)	420,228
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ		5,196,135	4,487,714
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեկանի դրությամբ	14	22,354,455	17,866,741
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեկանի դրությամբ	14	27,550,590	22,354,455
Լրացուցիչ տեղեկություններ			
Ստացված տոկոսներ		9,345,327	8,102,988
Վճարված տոկոսներ		(5,270,327)	(4,075,910)

Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են 2016թ. ապրիլի 28-ին:

Արմեն Նալչյան

Գործադիր տնօրեն

8-70 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

Դավիթ Ազատյան

Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

1. Բանկը

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն (Այսուհետ՝ «Բանկ») հիմնվել է 1991 թվականին Հայաստանի Հանրապետությունում ԽՍՀՄ Բնակսոցքանկի հայկական Հանրապետական բանկի (1991-1993թ.-ին «Հայպետբանկ» ՓԲԸ) հիման վրա և 1995թ.-ին վերակազմավորվել է որպես բաց բաժնետիրական ընկերության: Բանկի գործունեությունը կարգավորվում է ՀՀ օրենսդրությամբ և այն գործում է ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից տրամադրված թիվ 1 արտոնագրի հիման վրա:

Բանկն ընդունում է ավանդներ և տրամադրում է վարկեր, ինչպես նաև մատուցում է այլ բանկային ծառայություններ իրավաբանական և ֆիզիկական անձանց:

Բանկի գլխամասային գրասենյակը և թվով 19 մասնաճյուղերը գտնվում են Երևանում, 20 մասնաճյուղեր՝ ՀՀ տարբեր մարզերում և 1 մասնաճյուղ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում: Բանկի իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, Ամիրյան 23/1:

2. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Համապատասխանության մասին հայտարարություն: Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են այն ենթադրության հիման վրա, որ Բանկը գործում է անընդհատության հիմունքով և կշարունակի իր գործունեությունը տեսանելի ապագայում: Ինչպես ներկայացված է ֆինանսական հաշվետվությունների Ծան. 34-ում, 2017թ. հունվարի 1-ի դրությամբ Բանկը պարտավոր է ապահովել համապատասխանություն 30,000,000 հազար ՀՀ դրամի չափով նվազագույն կապիտալի կանոնակարգային նոր պահանջների հետ: Ղեկավարության ծրագրերն այս կապակցությամբ նույնպես դիտարկված են ֆինանսական հաշվետվությունների Ծան. 34-ում և 36-ում: Ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում ճշգրտումներ, որոնք կարող էին առաջանալ 2017թ. հունվարի 1-ի դրությամբ կանոնակարգային պահանջի չպահպանման հետևանքով:

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են պատմական արժեքի հիման վրա, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք չափվում են իրական արժեքով յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի վերջի դրությամբ, ինչպես ներկայացված է ստորև հաշվապահական հաշվառման քաղաքականությունում:

Պատմական արժեքը սովորաբար հիմնված է ապրանքների և ծառայությունների դիմաց տրված հատուցման իրական արժեքի վրա:

Իրական արժեքն այն գումարն է, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքի արդյունքում կստացվեր ակտիվը վաճառելիս, կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելիս՝ անկախ նրանից, թե արդյոք այդ գինն ուղղակիորեն դիտարկելի է կամ գնահատվել է՝ օգտագործելով այլ գնահատման մեթոդներ: Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը գնահատելիս՝ Բանկը հաշվի է առնում ակտիվի կամ պարտավորության այնպիսի բնութագրերը, որոնք շուկայի մասնակիցները հաշվի կառնեին չափման ամսաթվի դրությամբ ակտիվի կամ պարտավորության գինը որոշելիս: Այս ֆինանսական հաշվետվություններում չափման և/կամ այլ բացահայտումների նպատակով իրական արժեքը որոշվում է նման սկզբունքներով, բացառությամբ վարձակալության գործարքներից, որոնք նկարագրված են ՀՀՄՍ 17-ում և չափումներից, որոնք թեև համանման են իրական արժեքին, սակայն իրական արժեքով չեն, մասնավորապես օգտագործման արժեքը՝ ըստ ՀՀՄՍ 36-ի:

Ի լրումն՝ ֆինանսական հաշվետվությունների նպատակով իրական արժեքի չափումները դասակարգվում են մակարդակ 1, 2 և 3-ի՝ ելնելով իրական արժեքի չափումներում օգտագործված սկզբնական տվյալների դիտարկելիության աստիճանից, ինչպես նաև այդ սկզբնական տվյալների՝ իրական արժեքով չափման

ամբողջական պատկերի վրա ազդեցության էականության աստիճանից: Այդ մակարդակները կարելի է նկարագրել հետևյալ կերպ՝

- Մակարդակ 1-ի դեպքում ելակետային տվյալներ են հանդիսանում ակտիվ շուկայում համանման ակտիվների կամ պարտավորությունների նշված գները (չճշգրտված), որոնք Բանկին հասանելի են չափման ամսաթվի դրությամբ:
- Մակարդակ 2-ի ելակետային տվյալները իրենցից ներկայացնում են մակարդակ 1-ում նշված գներից տարբերվող ելակետային տվյալները, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են ակտիվների կամ պարտավորությունների գծով:
- Մակարդակ 3-ի ելակետային տվյալներն իրենցից ներկայացնում են ակտիվների կամ պարտավորությունների գծով ոչ դիտարկելի ելակետային տվյալներ:

Բանկն ընդհանուր առմամբ ներկայացնում է իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունն ըստ իրացվելիության: Ստացվելիք և վճարվելիք գումարներին վերաբերող վերլուծությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվության օրվանից հետո 12 ամիսների ընթացքում (ընթացիկ) և ֆինանսական վիճակի մասին հաշվետվության օրվանից ավելի քան 12 ամիսների ընթացքում (ոչ ընթացիկ) ներկայացված են Ծանոթագրություն 35-ում:

Գործառնական արժույթ: Ֆինանսական հաշվետվություններում ներառված միավորները չափվում են այն տնտեսական միջավայրում գործող արժույթով, որում Բանկն իրականանցում է իր գործունեությունը («Գործառնական արժույթ»): Բանկի գործառնական արժույթը ՀՀ դրամն է (այսուհետև՝ դրամ): Դրամը նաև սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթն է: Բոլոր արժեքները կլորացված են հազար ՀՀ դրամի չափով, եթե այլ բան նշված չէ:

Հաշվանցում: Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով գուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հաշվարկը գուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն: Եկամուտները և ծախսերը չեն հաշվանցվում շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե դա չի պահանջվում կամ թույլատրվում որևէ հաշվապահական հաշվառման ստանդարտով կամ մեկնաբանությամբ և հստակ բացահայտված չէ Բանկի հաշվապահական քաղաքականության մեջ:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են ստորև:

Տոկոսային եկամուտներ և ծախսեր: Ֆինանսական ակտիվներից տոկոսային եկամուտները ճանաչվում են, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Բանկ և եկամտի գումարը կարող է արժանահավատորեն չափվել: Տոկոսային եկամուտները և ծախսերը ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության (կամ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների խմբի) ամորտիզացված արժեքի հաշվարկման և համապատասխան ժամանակահատվածի կտրվածքով տոկոսային ծախսի և տոկոսային եկամտի բաշխման մեթոդն է:

Արդյունավետ տոկոսադրույթն այն դրույթն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի կամ, համապատասխան դեպքերում, ավելի կարճ ժամանակահատվածի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները զեղչում է ճշգրիտ մինչև ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության գուտ հաշվեկշռային արժեքը:

Այն դեպքերում, երբ տեղի է ունենում ֆինանսական ակտիվի կամ նմանատիպ ակտիվների խմբի արժեքի նվազում (մասնակի նվազում) արժեզրկումից կորստի հետևանքով, տոկոսային եկամուտն այնուհետև ճանաչվում է՝ կիրառելով այն տոկոսադրույթը, որը կիրառվել էր արժեզրկումից կորուստը չափելու նպատակով ապագա դրամական հոսքերը զեղչելիս:

Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրերից եկամուտ. վերը նշված գործիքների վաճառքից օգուտը/վնասը ճանաչվում է որպես տոկոսային եկամուտ կամ ծախս՝ շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում՝ հիմնվելով հետևյալ երկու մեծությունների տարբերության վրա՝ հետգնման արժեքի, որը կուտակվել է հաշվետու ամսաթվի դրությամբ՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը և վաճառքի գնի, երբ այդ գործիքները վաճառվում են երրորդ անձանց: Երբ հակադարձ հետգնումը/հետգնումը տեղի է ունենում իր սկզբնական պայմաններով, վաճառքի և պայմանագրի սկզբնական փուլում բանակցված հետգնման գնի միջև արդյունավետ օգուտը/տոկոսը ճանաչվում է արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով:

Կումիսիոն եկամուտ: Վարկի տրամադրման վճարները հետաձգվում են հարակից ուղղակի ծախսումների հետ միասին և ճանաչվում են որպես վարկի արդյունավետ տոկոսադրույքի ճշգրտում: Երբ հավանական է, որ վարկ տրամադրելու պարտավորությունը կհանգեցնի որոշակի պայմաններով վարկային համաձայնության, վարկային պարտավորության ստանձնման վճարները հետաձգվում են հարակից ուղղակի ծախսումների հետ միասին և հետագայում ճանաչվում որպես տրամադրված վարկի արդյունավետ տոկոսադրույքի ճշգրտում: Երբ քիչ հավանական է, որ վարկ տրամադրելու պարտավորությունը կհանգեցնի որոշակի վարկային համաձայնագրի, վարկ տրամադրելու պարտավորության ստանձնման վճարները ճանաչվում են շահույթում կամ վնասում վարկի տրամադրման պարտավորության մնացած ժամանակահատվածի ընթացքում: Այն դեպքում, երբ վարկ տրամադրելու պարտավորությունն ավարտվում է առանց վարկի տրամադրման, ապա վարկ տրամադրելու պարտավորության վճարները ճանաչվում են ֆինանսական արդյունքում՝ պարտավորության ավարտի պահին: Վարկի սպասարկման վճարները եկամտագրվում են, երբ համապատասխան ծառայությունները մատուցվում են: Բոլոր այլ միջնորդավճարները ճանաչվում են այն ժամանակ, երբ ծառայությունները մատուցվում են:

Ֆինանսական գործիքներ

Բանկը ճանաչում է ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ այն դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կանոնավոր կերպով գնումները և վաճառքը հաշվառվում են վերջնահաշվարկի ամսաթվի դրությամբ: Ֆինանսական գործիքների կանոնավոր գնումները կամ վաճառքն իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվների այն գնումները կամ վաճառքը, որոնք պահանջում են ակտիվների մատակարարում շուկայում ընդունված պայմաններով սահմանված կարգով:

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը: Գործարքի գծով ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը, անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվներ: Ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների՝ ա) շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ, բ) մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ, գ) տրամադրված վարկեր և դեբիտորական պարտքեր, դ) վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ: Դասակարգումը կախված է ֆինանսական ակտիվների ձեռքբերման բնույթից և նպատակից և որոշվում է սկզբնական ճանաչման պահին:

ա) Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ: Ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվը պահվում է վաճառքի համար կամ նախատեսված է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ակտիվ:

Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես վաճառքի համար պահվող, եթե՝

- այն ձեռք է բերվել հիմնականում մոտ ապագայում վաճառքի նպատակով, կամ
- սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Բանկի կողմից համատեղ կառավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ
- այն հանդիսանում է ածանցյալ գործիք, որը նախատեսված չէ կամ չի օգտագործվում որպես հեջավորման գործիք:

Ֆինանսական ակտիվը, բացի վաճառքի համար պահվող ֆինանսական ակտիվներից, կարող է ճանաչման պահին դասակարգվել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող.

- եթե նման դասակարգումը բացառում, կամ զգալիորեն կրճատում է չափման կամ ճանաչման անհամապատասխանությունը, որն այլապես կառաջանար, կամ՝
- ֆինանսական ակտիվը կազմում է ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների կամ այդ երկուսի խմբի մի մաս, որը կառավարվում է, և դրա կատարողականը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, Բանկի փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային ռազմավարության համաձայն, և խմբավորման վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է ներքին կարգով՝ այդ հիմունքներով, կամ
- այն կազմում է պայմանագրի մի մաս, որը պարունակում է ներկառուցված ածանցյալ գործիքներից մեկը կամ մի քանիսը և ՀՀՄՍ 39. *Ֆինանսական գործիքներ: Ճանաչումը և չափումը* թույլ է տալիս ողջ պայմանագիրը (ակտիվները կամ պարտավորությունները) դասակարգել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները ներկայացվում են իրական արժեքով՝ ներառյալ ողջ օգուտը կամ վնասները, որոնք առաջանում են շահույթում կամ վնասում ճանաչվող վերաչափման արդյունքում: Շահույթում կամ վնասում ճանաչվող զուտ օգուտը կամ վնասները ներառում են ֆինանսական ակտիվի գծով վաստակած բոլոր շահաբաժինները և տոկոսները և ներառվում են «այլ օգուտներ և վնասներ» և «տոկոսային եկամուտ» տողում, շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

բ) Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ: Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնց գծով Բանկն ունի մինչև մարման ժամկետը պահելու հաստատուն մտադրություն և կարողություն: Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկումը:

Եթե Բանկը որոշեր վաճառել կամ վերադասակարգել մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների զգալի մասը նախքան դրանց մարման ժամկետը (բացառությամբ հատուկ հանգամանքների առկայության), ողջ դասը կորակազրկվեր և պետք է դասակարգվեր որպես վաճառքի համար մատչելի: Ավելին, Բանկը ընթացիկ տարում և դրան հաջորդող երկու տարիների ընթացքում հնարավորություն չէր ունենա որևէ ֆինանսական ակտիվ դասակարգել որպես մինչև մարման ժամկետը պահվող ակտիվ:

գ) Վարկեր և դեբիտորական պարտքեր: Առևտրային դեբիտորական պարտքերը, վարկերը և այլ դեբիտորական պարտքերը, որոնք ունեն ֆիքսված կամ որոշելի վճարումներ, որոնք գնանշված չեն ակտիվ շուկայում (ներառյալ բանկերից ստացվելիք միջոցներ, հաճախորդներին տրված վարկեր և այլ ֆինանսական ակտիվներ) դասակարգվում են որպես «վարկեր և դեբիտորական պարտքեր»: Վարկերը և դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկումը: Տոկոսային եկամուտը ճանաչվում է՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, բացառությամբ կարճաժամկետ դեբիտորական պարտքերի, որոնց դեպքում տոկոսի ճանաչումը էական ազդեցություն չէր ունենա:

դ) Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները ոչ ածանցյալ ֆինանսական գործիքներ են, որոնք դասակարգվում են որպես վաճառքի համար մատչելի, կամ չեն դասակարգվում որպես (ա) իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով ճանաչվող ֆինանսական ակտիվներ, (բ) մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ կամ (գ) վարկեր և դեբիտորական պարտքեր:

Վաճառքի համար մատչելի՝ կապիտալ ներդրումները, որոնք չունեն գնանշված շուկայական արժեք և որոնց իրական արժեքը չի կարող արժանահավատորեն չափվել, չափվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի վերջին գնահատվում են արժեզրկման հայտանիշների առկայությունը որոշելու նպատակով: Ֆինանսական ակտիվները համարվում են արժեզրկված, եթե առկա է օբյեկտիվ վկայություն այն մասին, որ ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի դեպքեր կարող են ազդեցություն ունենալ ներդրման գծով գնահատված ապագա դրամական հոսքերի վրա:

Որպես վաճառքի համար մատչելի դասակարգված՝ գնանշված կամ չգնանշված կապիտալ ներդրումներում արժեթղթի իրական արժեքի զգալի կամ տևական անկումն ինքնարժեքից համարվում է արժեզրկման օբյեկտիվ վկայություն: Բոլոր այլ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման օբյեկտիվ վկայություն կարող են համարվել հետևյալ հայտանիշները

- թողարկողի կամ կոնտրագենտի զգալի ֆինանսական դժվարությունները, կամ
- պայմանագրի խախտումը, մասնավորապես տոկոսների կամ մայր գումարի վճարման ուշացումը կամ չկատարումը, կամ
- տոկոսների կամ մայր գումարի վճարման ուշացումը կամ չկատարումը, կամ
- փոխառուի կողմից սնանկության կամ ֆինանսական վերակազմակերպման գործընթացի նախաձեռնումը, կամ
- ֆինանսական դժվարությունների արդյունքում տվյալ ֆինանսական ակտիվի գծով ակտիվ շուկայի անհետացումը:

Ֆինանսական ակտիվների որոշ կատեգորիաների համար, ինչպիսիք են՝ վարկերը և դեբիտորական պարտքերը, ակտիվները, որոնք ըստ գնահատականների առանձին արժեզրկված չեն, ի լրումն գնահատվում են նաև խմբային արժեզրկման տեսանկյունից: Վարկային պորտֆելի արժեզրկման օբյեկտիվ վկայություն կարող է համարվել Բանկի նախկին փորձը վճարումների հավաքագրման գծով, հետաձգված վճարումների թվի աճը պորտֆելում ինչպես նաև ազգային կամ տեղական մակարդակում դիտարկելի փոփոխությունները, որոնք կարող են հանգեցնել դեբիտորական պարտքի անհավաքագրելիության:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման գծով ծախսի գումարն իրենից ներկայացնում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և գնահատված ապագա դրամական հոսքերի տարբերությունը՝ զեղչված ֆինանսական ակտիվի համար սկզբնապես սահմանված տոկոսադրույքով:

Ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է արժեզրկումից կորստի չափով անմիջականորեն բոլոր ակտիվների գծով, բացառությամբ վարկերի և դեբիտորական պարտքերի, որոնց դեպքում հաշվեկշռային արժեքը նվազեցվում է պահուստային հաշվի միջոցով: Երբ ակտիվը կամ դեբիտորական պարտքը համարվում է անհուսալի, այն դուրս է գրվում պահուստային հաշվի միջոցով: Հետագայում դուրս գրված գումարների վերականգնումը կատարվում է դրանք պահուստային հաշվին կրեդիտագրելու միջոցով: Պահուստային հաշվի հաշվեկշռային արժեքի փոփոխությունները ճանաչվում են եկամուտներում կամ ծախսերում:

Երբ վաճառքի համար պահվող ֆինանսական ակտիվը համարվում է արժեզրկված, այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակային օգուտները կամ վնասները վերադասակարգվում են որպես տվյալ ժամանակաշրջանի շահույթ կամ վնաս:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների համար այն դեպքում, եթե հաջորդող ժամանակաշրջանում արժեզրկումից կորուստի գումարը նվազում է, և նվազեցումը կարող է օբյեկտիվորեն վերագրվել արժեզրկման ճանաչումից հետո տեղի ունեցող դեպքերի, նախկինում ճանաչված արժեզրկումից կորուստը հակադարձվում է շահույթի կամ վնասի միջոցով այնքանով, որքանով արժեզրկման ամսաթվի դրությամբ ներդրման հաշվեկշռային արժեքը չի գերազանցում ամորտիզացված արժեքն այն դեպքում, եթե այդ արժեզրկումը ճանաչված չլիներ:

Ինչ վերաբերում է վաճառքի համար մատչելի բաժնային արժեթղթերին, ապա նախկինում շահույթում կամ վնասում հաշվառված արժեզրկումից վնասները չեն հակադարձվում շահույթի կամ վնասի միջոցով: Իրական արժեքի ցանկացած փոփոխություն, որը տեղի է ունենում արժեզրկումից կորուստի ճանաչումից հետո, ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում և կուտակվում է ներդրումների վերագնահատման պահուստի տակ:

Վարկերի դուրսգրում: Վարկերի արժեզրկումից կորուստները վերագրվում են պահուստներին, երբ համարվում են անհավաքագրելի: Վարկերը դուրս են գրվում Բանկի ղեկավարության կողմից գումարների հավաքագրման ուղղությամբ իրականացված բոլոր հնարավորություններն օգտագործելուց և գրավները վաճառելուց հետո: Դուրս գրված գումարների հետագա հավաքագրումը շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արտացոլվում է որպես ֆինանսական ակտիվների արժեզրկման պահուստներին կատարած մասհանումների վերադարձ հավաքագրման ժամանակաշրջանում:

Ֆինանսական ակտիվների ապաճանաչումը: Բանկն ապաճանաչում է ֆինանսական ակտիվները, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ երրորդ կողմին է փոխանցվում ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական միջոցների նկատմամբ իրավունքը: Եթե Բանկը չի փոխանցում և չի պահպանում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա Բանկը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև դրա հետ կապված պարտավորությունը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ: Եթե Բանկը պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները, ապա Բանկը պետք է շարունակի ճանաչել ֆինանսական ակտիվը:

Ֆինանսական ակտիվը ամբողջությամբ ապաճանաչելիս հաշվեկշռային արժեքի և ստացված հատուցման այլ համապարփակ ֆինանսական արդյունքում նախկինում ճանաչված կուտակված որևէ օգուտի կամ վնասի գումարի տարբերությունը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում:

Եթե Բանկի շարունակվող ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի միայն մի մասով է (օրինակ՝ երբ Բանկը պահպանում է փոխանցված ակտիվի մի մասը հետգնելու օպցիոնը), ապա Բանկը ֆինանսական ակտիվի նախկին հաշվեկշռային արժեքը բաշխում է այն մասի, որն այն շարունակում է ճանաչել շարունակվող ներգրավվածության ներքո, և այն մասի միջև, որն այն այլևս չի ճանաչում՝ փոխանցման ամսաթվի դրությամբ այդ մասերի հարաբերական իրական արժեքների հիման վրա: Այլևս չճանաչվող մասի վրա բաշխված հաշվեկշռային արժեքի և այլևս չճանաչվող մասի դիմաց ստացված հատուցման և դրա վրա բաշխված այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված կուտակված որևէ օգուտի կամ վնասի գումարների տարբերությունը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում: Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված կուտակված օգուտը կամ վնասը բաշխվում է այն մասի, որը շարունակվում է ճանաչվել, և այլևս չճանաչվող մասի միջև՝ այդ մասերի հարաբերական իրական արժեքների հիման վրա:

Ֆինանսական պարտավորություններ: Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող կամ որպես այլ ֆինանսական պարտավորություններ:

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող այն դեպքում երբ ֆինանսական պարտավորությունը պահվում է վաճառքի համար կամ դասակարգվում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ֆինանսական պարտավորությունը դասակարգվում է որպես վաճառքի համար պահվող, եթե՝

- այն ձեռք է բերվել հիմնականում կարճաժամկետ կտրվածքով հետգնման նպատակով, կամ
- սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Բանկի կողմից համատեղ ղեկավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ
- այն հանդիսանում է ածանցյալ գործիք, որը չի նախատեսված կամ օգտագործվում որպես հեջավորման գործիք:

Ֆինանսական պարտավորությունը, բացի վաճառքի համար պահվող ֆինանսական պարտավորություններից, կարող է ճանաչման պահին դասակարգվել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե

- նման դասակարգումը բացառում, կամ զգալիորեն կրճատում է չափման կամ ճանաչման անհամապատասխանությունը, որն այլապես կառաջանար, կամ՝
- ֆինանսական պարտավորությունը կազմում է ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների կամ այդ երկուսի խմբի մի մաս, որը կառավարվում է, և դրա կատարողականը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, բանկի փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային ռազմավարության համաձայն և խմբավորման վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է ներքին կարգով՝ այդ հիմունքներով, կամ
- այն կազմում է պայմանագրի մի մաս, որը պարունակում է ներկառուցված ածանցյալ գործիքներից մեկը կամ մի քանիսի և ՀՀՄՍ 39. Ֆինանսական գործիքներ: Ծանաչումը և չափումը, թույլ է տալիս ողջ պայմանագիրը (ակտիվները կամ պարտավորությունները) դասակարգել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Արժեթղթերի հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր և արժեթղթերի փոխառության գործարքներ. սովորական գործունեության ընթացքում Բանկը կնքում է ֆինանսական ակտիվների վաճառքի և հետգնման (ռեպո), ինչպես նաև ֆինանսական ակտիվների գնման և հետվաճառքի (հակադարձ ռեպո) պայմանագրեր: Ռեպո և հակադարձ ռեպո համաձայնագրերը օգտագործվում են Բանկի կողմից որպես գանձապետական կառավարման տարր:

Ռեպո համաձայնագիրը իրենից ներկայացնում է վճարի կամ այլ հատուցման դիմաց ֆինանսական ակտիվի փոխանցում մեկ այլ կողմի և համապատասխան պարտավորություն՝ հետ գնելու այդ ֆինանսական ակտիվն ապագայում փոխանակման համար օգտագործված կանխիկ կամ այլ հատուցման գումարը գումարած տոկսը: Այս պայմանագրերը հաշվառվում են որպես ֆինանսական գործարքներ:

Բանկը կնքում է արժեթղթերի հետգնման պայմանագրեր և արժեթղթերի փոխառության պայմանագրեր, ըստ որոնց այն ստանում կամ փոխանցում է գրավի առարկան՝ շուկայում ընդունված պրակտիկայի համաձայն: Հետգնման գործարքների ստանդարտ պայմաններով Հայաստանի Հանրապետությունում, գրավառում իրավունք ունի վաճառել կամ վերագրավադրել գրավի առարկան, պայմանով որ դրա դիմաց կվերադարձնի համարժեք արժեթղթեր՝ գործարքի փակման ամսաթվին:

Արժեթղթերի փոխանցումը կոնտրագենտներին միայն արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, եթե դրա հետ միասին փոխանցվում են նաև սեփականության հետ կապված ռիսկերը և օգուտները:

Այլ ֆինանսական պարտավորություններ: Այլ ֆինանսական պարտավորությունները, ներառյալ այլ փոխառու միջոցները, ենթակա (սուբորդինացված) պարտավորությունները և այլ ֆինանսական պարտավորությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով, առանց գործարքի ծախսերի:

Այլ ֆինանսական պարտավորությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ տոկոսային ծախսը ճանաչելով արդյունավետության հիմունքով:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդն իրենից ներկայացնում է որոշակի ժամանակահատվածում ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի հաշվարկի մեթոդ: Արդյունավետ

տոկոսադրույքն այն տոկոսադրույքն է, որը ճշգրտորեն զեղչում է ապագա գնահատված կանխիկ վճարումները (ներառյալ բոլոր տեսակի միջնորդավճարները և ստացված կամ վճարված գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, գործարքի հետ կապված ծախսերը և այլ պարգևավճարներ կամ զեղչեր) ֆինանսական պարտավորության ակնկալվող գործողության ժամանակահատվածի ողջ ընթացքում, կամ (ըստ անհրաժեշտության) ավելի կարճ ժամանակահատվածում՝ հասցնելով սկզբնական ճանաչման պահին առկա գույտ հաշվեկշռային արժեքին:

Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչումը: Բանկն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունները միայն այն ժամանակ, երբ Բանկի պարտավորությունները մարվում են, չեղյալ են համարվում կամ ուժը կորցնում են: Երբ միևնույն փոխատուի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է այլ ֆինանսական պարտավորությամբ, որի պայմաններն էականորեն տարբերվում են նախորդից, կամ եթե տեղի է ունեցել առկա պարտավորության պայմանների էական փոփոխություն, ապա նմանատիպ փոխանակումը կամ փոփոխությունը ճանաչվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված և վճարվելիք հատուցման տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքում:

Ֆինանսական երաշխավորության պայմանագրեր. Ֆինանսական երաշխավորության պայմանագիրը մի այնպիսի պայմանագիր է, որի արդյունքում այդ պայմանագիրը տրամադրողը պարտավորվում է կատարել որոշակի վճարումներ, պայմանագիրը ստացողին փոխհատուցելով այն կորուստները, որը վերջինս կրում է որոշակի պարտապանի կողմից պարտքային գործիքի համաձայն սահմանված ամսաթվին վճարումներ չկատարելու արդյունքում:

Բանկի կողմից տրամադրված ֆինանսական երաշխավորության պայմանագրերը սկզբնապես չափվում են դրանց իրական արժեքով, և եթե չեն դասակարգվում որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, հետագայում չափվում են հետևյալ երկու մեծություններից առավելագույնով:

- ՀՀՄՍ 37. Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ ստանդարտի համաձայն որոշված պայմանագրով նախատեսված պարտավորության գումարի, և
- Ի սկզբնաճանաչված գումարի՝ նվազեցված, ըստ անհրաժեշտության, հասույթի ճանաչման քաղաքականության համաձայն ճանաչված՝ կուտակված արժեզրկման չափով

Ածանցյալ ֆինանսական գործիքներ: Իր բնականոն գործունեության ընթացքում Բանկն արտարժույթային ռիսկը կառավարելու նպատակով կնքում է գործարքներ տարբեր ածանցյալ ֆինանսական գործիքներով, այդ թվում՝ արտարժույթի սվոփեր և արտարժույթի փոխանակման պայմանագրեր: Նման ֆինանսական գործիքները դասակարգվում են որպես առևտրային նպատակով պահվող և դրանց հաշվառումն իրականացվում է ֆինանսական գործիքների սկզբնական ճանաչման քաղաքականությունների համաձայն, այնուհետև դրանք չափվում են իրական արժեքով: Կախված գործիքի շուկայական կամ պայմանագրային արժեքից, ինչպես նաև մի շարք այլ գործոններից, իրական արժեքը որոշվում է շուկայական գնանշումներով կամ գնային մոդելներով: Ածանցյալ ֆինանսական գործիքները համարվում են ակտիվներ, եթե դրանց իրական արժեքը դրական է և պարտավորություններ, եթե դրանց արժեքը բացասական է: Գործարքների շահույթը և վնասը վերոնշյալ գործիքների դեպքում գրանցվում են համապարփակ եկամտի մասին հաշվետվություններում՝ որպես իրական արժեքով շահույթի և վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների/պարտավորությունների գործարքներից առաջացած գույտ օգուտ կամ վնաս: Ածանցյալ գործիքների իրական արժեքի փոփոխությունները ներառվում են օգուտում կամ վնասում:

Բանկը որպես վարձակալ: Գործառնական վարձակալության վճարները ծախսագրվում են գծային մեթոդով վարձակալության ժամկետի ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ որևէ այլ պարբերական հիմունք ավելի ճշգրիտ է ներկայացնում վարձակալությունից տնտեսական օգուտների ստացման ժամանակային բաշխումը: Գործառնական վարձակալության պայմանագրով նախատեսված պայմանական վարձավճարները ծախսագրվում են այն ժամանակաշրջանում, երբ դրանք առաջանում են:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ: Դրամական միջոցներն և դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները, թղթակցային հաշիվների մնացորդները, որոնք զերծ են սահմանափակումներից և ժամկետային ավանդները, որոնց մարման նախնական ժամկետը չի գերազանցում 90 օրը, որոնք կարճ

ժամկետում կարող են փոխարկվել կանխիկի և որոնք ծանրաբեռնված չեն պայմանագրային պարտավորություններով:

Թանկարժեք մետաղներ: Ոսկին և այլ թանկարժեք մետաղները հաշվառվում են ՀՀ ԿԲ կողմից սահմանվող գներով, ինչը մոտավորապես դրանց իրական արժեքն է և հիմնված է Լոնդոնի Թանկարժեք Մետաղների բորսայի գնանշումների վրա: Գների տատանումներն արտացոլվում են թանկարժեք մետաղներով գործառնություններից զուտ եկամուտ հոդվածում՝ այլ եկամուտներում կամ ծախսերում:

Առգրավված ակտիվներ: Որոշակի հանգամանքներում, ակտիվներն առգրավվում են ժամկետանց վարկերի գծով գրավադրված գույքի վրա արգելանքի կիրառման դեպքում: Առգրավված ակտիվները չափվում են հաշվեկշռային արժեքից և վաճառքի ինքնարժեքից նվազագույնով:

Հիմնական միջոցներ: Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկման կորուստները, եթե այդպիսիք կան:

Մաշվածությունը հաշվարկվում է հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի հիման վրա և նախատեսված է զրոյացնելու ակտիվների արժեքը դրանց օգտակար ծառայության վերջում: Մաշվածությունը հաշվարկվում է ուղիղ գծային մեթոդով հետևյալ օգտակար ծառայության ժամկետներով՝

Հիմնական միջոցների դասը	Օգտակար ծառայություն (տարիներ)
Շենքեր	50
Համակարգիչներ	3-5
Մեքենաներ	8
Վարձակալված ակտիվների բարելավումներ	20
Այլ	8

Վարձակալված ակտիվների բարելավումները ամորտիզացվում են վարձակալության ժամկետի և օգտակար ծառայության ժամկետից նվազագույնով, եթե առկա չէ ողջամիտ համոզվածություն այն մասին, որ Բանկը կստանա ակտիվի նկատմամբ սեփականության իրավունքը վարձակալության ժամկետի վերջում կամ կերկարաձգի վարձակալության ժամկետը:

Հիմնական միջոցների տարրը ապաճանաչվում է այն օտարելիս կամ, երբ այդ ակտիվի շարունակական օգտագործումից այլևս տնտեսական օգուտներ չեն ենթադրվում: Հիմնական միջոցների վաճառքից կամ շրջանառությունից դուրսբերումից առաջացած ցանկացած օգուտ կամ վնաս հաշվարկվում է որպես ակտիվի վաճառքից ստացված միջոցների և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ճանաչվում է ֆինանսական արդյունքում:

Ոչ նյութական ակտիվներ

Առանձին ձեռքբերված ոչ նյութական ակտիվներ: Որոշակի օգտակար ծառայության ժամկետ ունեցող առանձին ձեռքբերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները: Ամորտիզացիան օգտակար ծառայության ժամանակահատվածում հաշվարկվում է ուղիղ գծային մեթոդով: Օգտակար ծառայության ժամանակահատվածը և ամորտիզացիայի հաշվարկման մեթոդը վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու տարվա վերջում՝ գնահատումներում ցանկացած փոփոխություն հաշվառելով առաջընթաց կերպով: Անորոշ օգտակար ծառայության ժամկետով ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել առանձին, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված արժեզրկումից կորուստները:

Ոչ նյութական ակտիվների ապաճանաչում: Ոչ նյութական ակտիվներն ապաճանաչվում են դրանք օտարելիս կամ երբ այլևս դրանց օգտագործումից կամ օտարումից չեն ակնկալվում հետագա տնտեսական օգուտներ: Ապաճանաչումից օգուտները կամ վնասները չափվում են որպես ակտիվի օտարումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ճանաչվում են ֆինանսական արդյունքում այն ժամանակաշրջանում, երբ ակտիվն ապաճանաչվում է:

Նյութական և ոչ նյութական ակտիվների արժեզրկում, բացի գույքից: Յուրաքանչյուր հաշվետու տարվա վերջում Բանկը վերանայում է իր նյութական և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքները՝ որոշելու համար արդյոք կա որևէ հայտանիշ, որ այս ակտիվներում եղել են արժեզրկումից կորուստներ: Եթե առկա է որևէ նմանատիպ հայտանիշ, ապա գնահատվում է ակտիվների փոխհատուցվող գումարը, որպեսզի որոշվեն արժեզրկումից կորուստները (եթե այդպիսիք կան): Եթե առանձին ակտիվի փոխհատուցվող գումարը հնարավոր չէ որոշել, Բանկը գնահատում է այն դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը, որին այդ ակտիվը պատկանում է: Եթե հնարավոր է որոշել բաշխման ողջամիտ և հետևողական հիմունք, ապա կորպորատիվ ակտիվները ևս բաշխվում են առանձին դրամաստեղծ միավորներին, այլապես դրանք բաշխվում են դրամաստեղծ ակտիվների փոքրագույն խմբին, որոնց համար կարելի է որոշել խելամիտ և հետևողական հիմունք:

Անորոշ օգտակար ծառայությամբ և օգտագործման համար դեռևս ոչ մատչելի ոչ նյութական ակտիվները ստուգվում են արժեզրկման առկայության տեսանկյունից առնվազն տարին մեկ անգամ, ինչպես նաև երբ առկա է հայտանիշ, որ ակտիվը կարող է արժեզրկված լինել:

Փոխհատուցվող գումարն իրական արժեքից (հանած վաճառքի հետ կապված ծախսերը) և օգտագործման արժեքից առավելագույնն է. օգտագործման արժեքը գնահատելիս ակնկալվող ապագա դրամական հոսքերը բերվում են ներկա արժեքի՝ կիրառելով տոկոսադրույք մինչև հարկումը, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումը և ակտիվին բնորոշ ռիսկերը, որոնցով ապագա գնահատված հոսքերը չեն ճշգրտվել:

Եթե ակտիվի (կամ դրամաստեղծ միավորի) փոխհատուցվող գումարը գնահատվում է ավելի քիչ, քան հաշվեկշռային արժեքը, ապա հաշվեկշռային արժեքն իջեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստն անհապաղ ճանաչվում է ֆինանսական արդյունքում, եթե տվյալ ակտիվը չի հաշվառվում վերագնահատված արժեքով: Վերջինիս դեպքում արժեզրկումից կորուստը դիտարկվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Եթե հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի (կամ դրամաստեղծ միավորի) հաշվեկշռային արժեքն ավելացվում է մինչև վերանայված փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ավելացումից հետո հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը կորոշվեր, եթե նախորդ ժամանակաշրջաններում ակտիվի (կամ դրամաստեղծ միավորի) գծով արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ: Արժեզրկումից կորստի հակադարձումը անմիջապես ճանաչվում է ֆինանսական արդյունքում, եթե տվյալ ակտիվը չի հաշվառվում վերագնահատված արժեքով, ինչի դեպքում արժեզրկումից կորստի հակադարձումը դիտարկվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

Ներդրումներ ասոցիացված ընկերություններում: Ասոցիացված ընկերությունը կազմակերպություն է, որտեղ Բանկն ունի նշանակալի ազդեցություն, բայց չի վերահսկում նրան առանձին կամ համատեղ՝ ներդրման օբյեկտի ֆինանսական և գործառնական քաղաքականության գծով որոշումներ ընդունելու միջոցով: Ներդրման օբյեկտի ակտիվներն ու պարտավորությունները, ինչպես նաև գործունեության արդյունքներում ներդրողի բաժնեմասը ֆինանսական հաշվետվություններում արտացոլվում են բաժնեմասնակցության մեթոդով, բացի այն դեպքերից, երբ ներդրումը դասակարգվում է վաճառքի համար մատչելի:

Ասոցիացված ընկերություններում ներդրումները հաշվառվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում սկզբնական արժեքով, և ճշգրտվում են ասոցիացված ընկերության գուտ ակտիվներում Բանկի մասնակցության փոփոխությանը համապատասխան, հաշվի առնելով առանձին ներդրումների արժեքի արժեզրկումից կորուստները: Բանկի բաժնեմասը գերազանցող՝ ասոցիացված ընկերության վնասները չեն ճանաչվում:

Ներդրման ամսաթվով ասոցիացված ընկերության գուտ ակտիվների իրական արժեքը գերազանցող ներդրման մասը ճանաչվում է որպես գույքի: Ասոցիացված ընկերությունում ձեռքբերման ամսաթվի դրությամբ գուտ որոշելի ակտիվների իրական արժեքում բանկի ունեցած մասնակցությունից ցածր

ձեռքբերման արժեքի տարբերությունը (ձեռքբերման գծով զեղչը) կրեդիտագրվում է շահույթում կամ վնասում՝ ձեռքբերման ժամանակահատվածում:

Այն դեպքում երբ Բանկը գոծարքի մեջ է մտնում Բանկի հետ ասոցիացված ընկերության հետ, շահույթները կամ վնասները մարվում են Բանկի՝ տվյալ ասոցիացված կազմակերպությունում ունեցած մասնակցության չափով: Կորուստները կարող են վկայել փոխանցվող ակտիվի արժեզրկման մասին, և այդ դեպքում համապատասխան արժեզրկման գծով պահուստավորում է պահանջվում:

Հարկում

Շահութահարկի գծով ծախսը ներառում է ընթացիկ հարկի գծով պարտավորությունը և հետաձգված հարկը:

Ընթացիկ հարկ: Ընթացիկ հարկի գծով պարտավորությունը հիմնված է տարվա հարկվող շահույթի վրա: Հարկվող շահույթը նախաձեռն հարկումը տարբերվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներկայացվող շահույթից եկամտի և ծախսի այնպիսի տարրերի պատճառով, որոնք հարկման կամ նվազեցման ենթակա են այլ հաշվետու ժամանակաշրջաններում, ինչպես նաև այն տարրերի, որոնք երբևէ չեն հարկվելու կամ նվազեցվելու: Բանկի ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ուժի մեջ մտած կամ, ըստ էության, ուժի մեջ մտած հարկի դրույքաչափերը:

Հետաձգված հարկ: Հետաձգված հարկերը ճանաչվում են ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկման բազաների միջև: Հետաձգված հարկային պարտավորությունները ընդհանուր առմամբ ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվները ընդհանուր առմամբ ճանաչվում են բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով միայն այն չափով որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունները: Նմանատիպ հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման պահին այնպիսի գործարքների արդյունքում, որոնք ազդեցություն չունեն ինչպես հաշվապահական, այնպես էլ հարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են հարկվող ժամանակավոր տարբերությունների գծով՝ կապված հիմնական միջոցների և հաճախորդներին տրված վարկերի հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկն ի վիճակի է վերահսկել ժամանակավոր տարբերության մարման ժամանակային բաշխումը, կամ հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի մարվի տեսանելի ապագայում: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով, կապված վերը նշված ներդրումների հետ, ճանաչվում են միայն այն չափով, որով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող է օգտագործվել ժամանակավոր տարբերությունը և ժամանակավոր տարբերությունը կմարի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը պետք է վերանայվի յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվի այն չափով, որով այլևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները պետք է չափվեն հարկերի այն դրույքներին օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային օրենքները), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումը պետք է արտացոլի հարկային հետևանքները, որոնք կառաջանան՝ կախված այն եղանակից, որով Բանկը

հաշվետու ժամանակաշրջանի վերջում, ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Տարվա ընթացիկ և հետաձգված հարկեր: Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք վերաբերում են տարրերի, որոնք ճանաչվել են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում, ինչի դեպքում ընթացիկ և հետաձգված հարկերը նույնպես ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

Գործունեության հետ կապված հարկեր: Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են տարբեր այլ հարկատեսակներ ևս, որոնց գծով գումարների հաշվարկը կապված է Բանկի գործունեության հետ: Այս հարկերը ներառվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ որպես գործառնական ծախսերի բաղադրիչ:

Պահուստներ: Պահուստները ճանաչվում են, երբ Բանկն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական), որպես անցյալ դեպքերի արդյունք և հավանական է, որ Բանկից կպահանջվի կատարել պարտականությունը և պարտականության գումարը հավաստիորեն կարող է գնահատվել:

Պահուստում ճանաչված գումարն իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ լավագույն գնահատականը, որը կպահանջվի ներկա պարտականությունը մարելու համար՝ հաշվի առնելով հարակից ռիսկերն և անորոշությունները: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը պետք է իրենից ներկայացնի այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար:

Եթե ակնկալվում է, որ որևէ այլ կողմ ամբողջությամբ կամ մասամբ փոխհատուցելու է պահուստը մարելու համար պահանջվող ծախսումները, ապա փոխհատուցումը պետք է դիտվի որպես առանձին ակտիվ, երբ ըստ էության որոշակի է, որ կազմակերպության կողմից պարտականությունը մարելու դեպքում փոխհատուցումը կստացվի և փոխհատուցման գումարը կարող է արժանահավատորեն չափվել:

Պայմանական ակտիվներ և պարտավորություններ: Պայմանական պարտավորությունները չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում սակայն բացահայտվում են, բացառությամբ այն դեպքերի, երբ տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսքի հավանականությունը շատ փոքր է: Պայմանական ակտիվները չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, բայց դրանք բացահայտվում են հաշվետվություններին կից ծանոթագրություններում այն դեպքերում, երբ դրանց հետ կապված տնտեսական օգուտների ներհոսքը համարվում է հավանական:

Արտարժույթ: Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Բանկի գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով (արտարժույթով) կատարված գործարքները ճանաչվում են գործարքի օրվա փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում արտարժույթով արտահայտված դրամային հոդվածները (տարրերը) վերահաշվարկվում են այդ օրվա փոխարժեքով: Իրական արժեքով հաշվառվող՝ արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածները, վերահաշվարկվում են իրական արժեքի սահմանման օրվա փոխարժեքով: Արտարժույթով հաշվարկված սկզբնական արժեքով հաշվառվող ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում:

Դրամային հոդվածների գծով առաջացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում դրանց առաջացման ժամանակաշրջանում:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Բանկի կողմից կիրառված փոխարժեքները տարվա վերջում հետևյալն են՝

	Միջին փոխարժեք		Միջին փոխարժեք	
	2015թ.	2014թ.	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	477.82	415.75	483.75	474.97
ՀՀ դրամ/1 ԵՎԸ	530.84	552.09	528.69	577.47
ՀՀ դրամ/1 ռուբլի	7.90	10.98	6.62	8.15

Գրավ: Բանկը որպես հաճախորդի պարտավորությունների ապահովման միջոց է ընդունում գրավ, երբ դա նպատակահարմար է համարվում: Գրավը հիմնականում լինում է հաճախորդի ակտիվների նկատմամբ կոշտ գրավի տեսքով և Բանկին պահանջի իրավունք է տալիս այս ակտիվների նկատմամբ հաճախորդի առկա և ապագա պարտավորությունների դիմաց:

Բաժնետիրական կապիտալ: Բաժնետիրական կապիտալի համալրումները ճանաչվում են սկզբնական արժեքով: Թողարկված նոր բաժնեմասերին ուղղակիորեն վերագրելի ծախսերը, բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության միավորումներից, նվազեցվում են սեփական կապիտալից՝ առանց շահութահարկի:

Սեզմենտների ներկայացում: Գործառնական սեզմենտը Բանկի բաղադրիչն է, որը ներգրավված է ձեռնարկատիրական գործունեություններում, որոնցից այն կարող է վաստակել հասույթներ և կրել ծախսեր (ներառյալ Բանկի այլ բաղադրիչների հետ գործառնականություններին վերաբերող հասույթները և ծախսերը): Գործառնական սեզմենտների գործառնական արդյունքները կանոնավոր կերպով վերանայվում են Բանկի գլխավոր գործառնական որոշում կայացնողի կողմից՝ սեզմենտին միջոցների բաշխման վերաբերյալ որոշում կայացնելու և դրա գործունեության արդյունքները գնահատելու նպատակով: Գործառնական սեզմենտի գծով առկա է առանձին ֆինանսական տեղեկատվություն:

Բանկի գործառնականությունները բավականին ինտեգրացված են և կազմում են մեկ գործարար սեզմենտ ըստ ՖՀՄՍ 8 «Գործառնական սեզմենտներ» ստանդարտի պահանջների: Ղեկավարությունն առանձին հիմունքով չի ուսումնասիրում Բանկի բաղադրիչների գործառնական արդյունքները: Բանկի ակտիվները հիմնականում գտնվում են Հայաստանի Հանրապետությունում, իսկ իր հասույթի և շահույթի մեծ մասը Բանկը ստանում է Հայաստանի Հանրապետությունում իրականացվող և Հայաստանի Հանրապետության հետ կապված գործառնականություններից: Գլխավոր գործառնական որոշում կայացնողը, որը Բանկի դեպքում հանդիսանում է Խորհուրդը, միայն ստանում և ուսումնասիրում է Բանկին՝ որպես մեկ ամբողջությանը վերաբերող տեղեկատվությունը:

3. Կարևոր հաշվապահական դատողությունների և գնահատումների հետ կապված անորոշության հիմնական աղբյուրները

Բանկի հաշվապահական քաղաքականությունը կիրառելիս Բանկի ղեկավարությանն անհրաժեշտ է լինում կատարել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնք այլ աղբյուրներից ակնհայտ չեն երևում: Գնահատումներն և դրա հետ կապված ենթադրությունները հիմնված են նախկին փորձի և այլ համապատասխան գործոնների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումներն և ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումներում փոփոխությունները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, երբ փոփոխությունը տեղի է ունենում, եթե փոփոխությունը վերաբերում է միայն այդ ժամանակաշրջանին կամ փոփոխությունը ճանաչվում է այդ և ապագա ժամանակաշրջաններում, եթե փոփոխությունն ազդում է ընթացիկ և ապագա ժամանակաշրջանների վրա:

Անորոշության գնահատման չափանիշների հիմնական աղբյուրները: Ստորև ներկայացվում են ապագային վերաբերող հիմնական ենթադրությունները և ժամանակաշրջանի վերջի դրությամբ գնահատումներից բխող անորոշության այլ հիմնական աղբյուրները, որոնք կրում են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների՝ հաջորդող ֆինանսական տարում էական ճշգրտումների առաջացման զգալի ռիսկ:

Վարկերի արժեզրկում: Բանկը կանոնավոր կերպով վերանայում է իր վարկերը և դեբիտորական պարտքերը՝ դրանք արժեզրկման տեսանկյունից գնահատելու համար: Բանկի վարկերի արժեզրկման պահուստները սահմանվում են վարկերի և դեբիտորական պարտքերի պորտֆելում առաջացած արժեզրկումից կորուստները ճանաչելու համար: Բանկը վարկերի և դեբիտորական պարտքերի

արժեզրկման պահուստին կատարվող մասհանումների վերաբերյալ գնահատումները դիտարկում է որպես գնահատման անորոշությունների հիմնական աղբյուր, որովհետև ա) դրանք բավականին զգայուն են մի ժամանակաշրջանից մյուսը տեղի ունեցող փոփոխությունների նկատմամբ, քանի որ հիմնված են չվճարումների չափերի և ապագա կորուստների գնահատման վերաբերյալ ենթադրությունների վրա, որոնք կատարվել են անցյալ գործունեության փորձի հիման վրա և բ) ցանկացած զգալի տարբերություն Բանկի կողմից գնահատված կորուստների և դրանց փաստացի չափերի միջև կհանգեցնի անհրաժեշտության, որ Բանկը գրանցի հավելյալ պահուստներ, որոնք կարող են ունենալ նշանակալի ազդեցություն նրա ապագա ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունների վրա:

Բանկը կիրառում է անհատական և խմբային գնահատումների համադրություն՝ հաշվետու ամսաթվի դրությամբ արժեզրկման պահուստին մասհանումները որոշելիս:

Անհատական գնահատումները կիրառվում են այն վարկերի և դեբիտորական պարտքերի համար, որոնք առանձին վերցված նշանակալի են: Վարկերը և դեբիտորական պարտքերը, որոնց մնացորդը սեփական կապիտալի 0.2%-ից ավելին է կազմում, առանձին վերցված համարվում են նշանակալի: Բանկն օգտագործում է ղեկավարության գնահատումը՝ գնահատելու համար արժեզրկումից կորուստների գումարները, այն դեպքում երբ վարկառուն ունի ֆինանսական դժվարություններ, և առկա են սակավաթիվ պատմական տվյալներ՝ կապված համանման վարկառուների հետ:

Առանձին վերցված նշանակալի վարկերն և դեբիտորական պարտքերը, որոնք արժեզրկված չեն, ինչպես նաև բոլոր այն վարկերն և դեբիտորական պարտքերը, որոնք անհատապես չեն գնահատվել, ներառվում են խմբային հիմունքով գնահատվող վարկերի և դեբիտորական պարտքերի մեջ: Խմբային հիմունքով գնահատվող վարկերն և դեբիտորական պարտքերը խմբավորվում են ըստ նմանատիպ վարկային ռիսկի բնութագրիչների և կետանցվածության կարգավիճակի և գնահատվում համապատասխանաբար: Բանկը ապագա դրամական հոսքերում փոփոխությունները գնահատում է՝ ելնելով նախկին ցուցանիշներից, հաճախորդների նախկին վարքագծից, տվյալ խմբի վարկառուների կողմից վճարումների կատարման իրավիճակի վատթարացման դիտարկելի տվյալներից, ինչպես նաև տնտեսական պայմաններից, որոնք առնչություն ունեն խմբի ակտիվների գծով պարտավորությունների չկատարման հետ: Ղեկավարությունն օգտագործում է գնահատականներ՝ ելնելով վնասների գծով առկա փորձից այն ակտիվների գծով, որոնք ունեն վարկային ռիսկին բնորոշ հատկանիշներ և առկա է վարկերի խմբին համանման արժեզրկման հայտանիշ: Բանկը հիմնվում է ղեկավարության դատողության վրա՝ վարկերի խմբի գծով դիտարկելի տվյալները ճշգրտելու համար այնպես, որ դրանք արտացոլեն պատմական տվյալներում չարտացոլված ընթացիկ հանգամանքները:

Խմբային հիմունքով գնահատման մեթոդաբանության խնդիրն է՝ ապահովել, որ արժեզրկումից կորստի պահուստը արտացոլի կորստի պատճառ հանդիսացող իրադարձությունները, որոնք արդեն տեղի են ունեցել, սակայն դեռ չեն գնահատվել անհատական հիմունքով:

Ֆինանսական հաշվետվություններում ֆինանսական ակտիվների արժեզրկման գծով պահուստավորումը որոշվում է՝ ելնելով ներկա տնտեսական և քաղաքական հանգամանքներից: Բանկը հնարավորություն չունի կանխատեսելու հանգամանքների փոփոխությունները Հայաստանում և դրանց հնարավոր ազդեցությունները ֆինանսական ակտիվների արժեզրկումից կորուստների պահուստի համարժեքության վրա ապագա ժամանակաշրջաններում:

2015 և 2014թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախառն վարկերն կազմում էին համապատասխանաբար՝ 60,177,631 և 52,793,946 հազար ՀՀ դրամ, իսկ պահուստին մասնահանումը՝ համապատասխանաբար 1,002,391 և 736,558 հազար ՀՀ դրամ:

4. Նոր և վերանայված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների կիրառումը

Փոփոխություններ ՖՀՄՄ-ներում, որոնք ազդում են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների վրա: Ընթացիկ տարում ընդունվել/վերանայվել են հետևյալ Ստանդարտները և դրանց մեկնաբանությունները: Այս նոր և վերանայված ստանդարտները և դրանց մեկնաբանությունները էական ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վրա:

- ՖՀՄՄ-ների տարեկան բարելավումներ՝ 2010-2012 թվականներ
- ՖՀՄՄ-ների տարեկան բարելավումներ՝ 2011-2013 թվականներ

ՖՀՄՄ-ների տարեկան բարելավումներ՝ 2010-2012 թվականներ: ՖՀՄՄ-ների տարեկան բարելավումների 2010-2012թթ. ընթացքում ներառում է մի շարք ՖՀՄՄ-ների փոփոխություններ, որոնք ներկայացված են ստորև:

ՖՀՄՄ 2-ի փոփոխությամբ տեղի է ունենում փոփոխություն «իրավունքի առաջացման պայմաններ» և «շուկայական պայմաններ» հասկացության սահմանման մեջ, ավելացնելով «կատարողական պայմաններ» և «ծառայության պայմաններ» հասկացությունների սահմանումները, որոնք նախկինում ներառված էին «իրավունքի առաջացման պայմանների» սահմանման մեջ:

ՖՀՄՄ 3-ի փոփոխությունները պարզաբանում են, որ պայմանական վճարումը, որը դասակարգվում է որպես ակտիվ կամ պարտավորություն, պետք է չափվի իրական արժեքով յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, անկախ նրանից, թե արդյոք պայմանական վճարն իրենից ներկայացնում է ֆինանսական գործիք՝ համաձայն ՀՀՄՄ 39-ի կամ ՖՀՄՄ 9-ի, կամ ոչ ֆինանսական ակտիվ կամ պարտավորություն:

ՖՀՄՄ 8-ում տեղի ունեցած փոփոխություններով պահանջվում է, որպեսզի Ընկերությունը բացահայտի ղեկավարության դատողությունները՝ կիրառելով ամբողջականացման չափանիշը գործառնական սեզոնների նկատմամբ և պարզաբանվում է, որ հաշվետու սեզոնների ընդհանուր ակտիվների համեմատադրումը Ընկերության ակտիվների հետ պետք է տեղի ունենա միայն այն դեպքում, երբ սեզոնների ակտիվները կանոնավորապես տրամադրվում են գլխավոր գործառնական որոշում կայացնող մարմին:

ՖՀՄՄ 13-ի եզրակացության հիմքերի վերաբերյալ փոփոխությունները պարզաբանում են, որ ՖՀՄՄ 13-ի թողարկումը և դրան հետևած փոփոխությունները ՀՀՄՄ 39-ում և ՖՀՄՄ 9-ում չեն հանգեցնում կարճաժամկետ դեբիտորական և կրեդիտորական պարտքի՝ առանց տոկոսադրույքի նշման, հաշիվ-ապրանքագրային արժեքով և առանց զեղչման չափման հնարավորության կասեցման, եթե զեղչման ազդեցությունը նշանակալի չէ:

ՀՀՄՄ 16-ի և ՀՀՄՄ 38-ի փոփոխությունները վերացնում են առկա անհամապատասխանությունները կուտակված մաշվածության/ամորտիզացիայի հաշվառման գծով այն դեպքում, երբ հիմնական միջոցի միավորը կամ ոչ նյութական ակտիվը վերագնահատվում են: Ըստ վերանայված ստանդարտների պարզաբանվում է, որ համախառն հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի վերագնահատմանը համապատասխան եղանակով և որ կուտակված մաշվածությունը/ամորտիզացիան իրենից ներկայացնում է համախառն հաշվեկշռային արժեքի և կուտակված մաշվածության գծով վնասների հաշվարկով դիտարկված հաշվեկշռային արժեքի միջև տարբերություն:

ՀՀՄՄ 24-ում տեղի ունեցած փոփոխությունները պարզաբանում են, որ առանցքային ղեկավար անձնակազմի ծառայություններ տրամադրող կառավարչական կազմակերպությունը հանդիսանում է հաշվետու ընկերության հետ փոխկապակցված կողմ: Համապատասխանաբար, հաշվետու ընկերությունը պետք է բացահայտի կառավարչական կազմակերպությանը առանցքային ղեկավար անձնակազմի ծառայությունների տրամադրման դիմաց վճարված կամ վճարման ենթակա բոլոր հաշվեկշռված

գումարները որպես կապակցված կողմերի հետ գործարքներ: Այնուամենայնիվ, նման փոխհատուցման բացահայտում չի պահանջվում:

ՖՀՄՄ-ների տարեկան բարելավումներ՝ 2011-2013 թվականներ

2011-2013 թվականների ՖՀՄՄ-ների տարեկան բարելավումները ներառում են տարբեր ՖՀՄՄ-ների հետևյալ փոփոխությունները:

ՖՀՄՄ 3-ի փոփոխությունը պարզաբանում է, որ ստանդարտը չի կիրառվում բոլոր տեսակի համատեղ ձեռնարկումների ձևավորման հաշվառման նկատմամբ տվյալ համատեղ ձեռնարկման ֆինանսական հաշվետվություններում:

ՖՀՄՄ 13-ի փոփոխությունը պարզաբանում է, որ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների խմբի գույք հիմունքով իրական արժեքի որոշման համար պորտֆելի բացառման շրջանակը ներառում է բոլոր պայմանագրերը, որոնք կարգավորվում են և հաշվառվում են համաձայն ՀՀՄՄ 39-ի կամ ՖՀՄՄ 9-ի, անկախ այն հանգամանքից, թե արդյոք տվյալ պայմանագրերը համապատասխանում են ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների սահմանմանը համաձայն ՀՀՄՄ 32-ի:

ՀՀՄՄ 40-ի փոփոխությունները պարզաբանում են, որ ՀՀՄՄ 40-ը և ՖՀՄՄ 3-ը փոխադարձաբար բացառելի չեն, և կարող է պահանջվել այդ երկու ստանդարտների միաժամանակ կիրառումը: Համապատասխանաբար, ներդրումային գույք ձեռք բերող ընկերությունը պետք է որոշի, թե արդյոք տվյալ գույքը համապատասխանում է ներդրումային գույքի սահմանմանը՝ համաձայն ՀՀՄՄ 40-ի, և արդյոք գործարքը համապատասխանում է ձեռնարկատիրական գործունեության միավորման սահմանմանը՝ համաձայն ՖՀՄՄ 3-ի:

Ընդունված, սակայն դեռևս չգործող նոր և վերանայված ՖՀՄՄ-ներ

Բանկը դեռևս չի կիրառել հետևյալ նոր և վերանայված ՖՀՄՄ-ները, որոնք հրապարակվել են, սակայն դեռևս չեն գործում:

Նոր կամ վերանայված ստանդարտ կամ մեկնաբանություն

Գործողության ամսաթիվը¹ - Հետևյալ ամսաթվերի սկսվող կամ դրանց հաջորդող տարեկան ժամանակաշրջաններում

ՖՀՄՄ 9. <i>Ֆինանսական գործիքներ</i>	1 հունվարի 2018թ.
ՖՀՄՄ 15. <i>Հաճախորդների հետ պայմանագրերի գծով հասույթ</i>	1 հունվարի 2018թ.
ՖՀՄՄ 16 <i>Վարձակալություն</i>	1 հունվարի 2019թ.
Փոփոխություններ ՀՀՄՄ 1 ստանդարտում. <i>Բացահայտման նախաձեռնություն</i>	1 հունվարի 2016թ.
Փոփոխություններ ՀՀՄՄ 16 և ՀՀՄՄ 38 ստանդարտներում. <i>Մաշվածության և ամորտիզացիայի ընդունելի մեթոդների պարզաբանում</i>	1 հունվարի 2016թ.
ՖՀՄՄ-ների տարեկան բարելավումներ՝ 2012-2014 թվականներ	1 հունվարի 2016թ.
Փոփոխություններ ՀՀՄՄ 12 ստանդարտում. <i>Չիրացված վնասների գծով հետաձգված հարկային ակտիվների ճանաչում</i>	1 հունվարի 2017թ.

¹ Թույլատրվում է նոր կամ վերանայված ստանդարտների կամ մեկնաբանությունների վաղ կիրառումը: ՖՀՄՄ 16-ը կարող է վաղ կիրառվել եթե ՖՀՄՄ 15. *Հաճախորդների հետ պայմանագրերի գծով հասույթ* ստանդարտը նույնպես կիրառվել է:

ՖՀՄՍ 9. Ֆինանսական գործիքներ

ՖՀՄՍ 9-ի հիմնական պահանջները հետևյալն են՝

- **Ֆինանսական ակտիվների դասակարգումը և չափումը:** Բոլոր ճանաչված ֆինանսական ակտիվները, որոնք գտնվում են ՀՀՄՍ 39 «Ֆինանսական գործիքներ. Ճանաչումը և չափումը» ստանդարտի շրջանակներում, պետք է հետազայում դասակարգվեն ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով: Մասնավորապես, պարտքային գործիքները, որոնք պահվում են բիզնես մոդելում, որի նպատակն է հավաքագրել պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը, և պայմանագրով նախատեսված դրամական հոսքերն իրենից ներկայացնում են միայն մայր գումար և դրա չվճարված մասի նկատմամբ հաշվարկված տոկոսների հավաքագրում, սկզբնական ճանաչումից հետո սովորաբար չափվում են ամորտիզացված արժեքով: Բիզնես մոդելում պահվող պարտքային գործիքները, որոնց նպատակն իրագործվում է թե պայմանագրային դրամական հոսքերի հավաքագրման և թե ֆինանսական ակտիվների վաճառքի միջոցով, և որոնք ունեն ֆինանսական ակտիվին բնորոշ պայմանագրային պայմաններ, ըստ որոնց առաջանում են դրամական հոսքերի որոշակի ժամկետներ, որոնք իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և դրա վրա կուտակված տոկոսի մարում՝ որպես կանոն չափվում են իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով: Բոլոր այլ պարտքային և կապիտալ ներդրումները չափվում են իրենց իրական արժեքով: Ավելին, ՖՀՄՍ 9-ի համաձայն, կազմակերպությունները կարող են անփոփոխ որոշում կայացնել հետագա փոփոխությունները ներկայացնելու սեփական կապիտալում (որը չի պահվում առևտրային նպատակներով) ներդրման իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, ընդ որում շահույթում կամ վնասում ճանաչելով միայն շահութաբաժինների տեսքով եկամուտը:
- **Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը:** Ինչ վերաբերում է շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններին, ըստ ՖՀՄՍ 9-ի պահանջվում է, որպեսզի ֆինանսական պարտավորության իրական արժեքի փոփոխությունը, որը վերագրելի է տվյալ պարտավորությանը բնորոշ վարկային ռիսկին, ներկայացվի այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, եթե պարտավորության վարկային ռիսկի փոփոխությունների ազդեցության ճանաչումը այլ համապարփակ ֆինանսական արդյունքում չի ստեղծում կամ մեծացնում շահույթում կամ վնասում հաշվառման անհամապատասխանությունը: Ֆինանսական պարտավորության վարկային ռիսկին վերագրվող իրական արժեքի փոփոխությունները հետազայում չեն դասակարգվում շահույթում կամ վնասում: Ըստ ՀՀՄՍ 39-ի, շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվի իրական արժեքի փոփոխության ամբողջ գումարը ներկայացվում է շահույթում կամ վնասում:
- **Արժեզրկում:** Ինչ վերաբերում է ֆինանսական ակտիվների արժեզրկմանը, ՖՀՄՍ 9-ով պահանջվում է «Ակնկալվող վարկային վնասի» մոդելը ֆինանսական ակտիվների արժեզրկման չափման նպատակով՝ ի հակադրություն ՀՀՄՍ 39-ով նախատեսված հաշվեգրված վարկային վնասի մոդելի: Ակնկալվող վարկային վնասի մոդելով պահանջվում է, որպեսզի կազմակերպությունը հաշվառի ակնկալվող վարկային վնասները և այդ ակնկալվող վարկային վնասներում տեղի ունեցած փոփոխությունները յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ արտացոլելու համար վարկային ռիսկում սկզբնական ճանաչման պահից ի վեր տեղի ունեցած փոփոխությունները: Այլ կերպ ասած՝ վարկային պատահարի տեղի ունենալը այլևս անհրաժեշտ պայման չէ վարկային վնաս ճանաչելու տեսանկյունից:
- **Հեջավորման հաշվառում:** Ներկայացնում է հեջավորման հաշվառման նոր մոդել, որում պահպանվում են ներկայումս ՀՀՄՍ 39-ով սահմանված հեջային հաշվառման մեխանիզմները: Ըստ ՖՀՄՍ 9-ի ավելի ձկուն մոտեցում է սկսել կիրառվել հեջային հաշվառման ենթակա գործարքների տեսակների մասով, մասնավորապես, ընդլայնվել են այն գործիքների տեսակները, որոնք կարող են դիտարկվել որպես հեջավորման գործիքներ, և ոչ ֆինանսական միավորների ռիսկի տարրերի տեսակները, որոնք ենթակա են հեջային հաշվառման: Ավելին, արդյունավետության ստուգումը փոխարինվել է «տնտեսական հարաբերություններին» սկզբունքով: Բացի այդ, այլևս չի պահանջվում հեջի արդյունավետության հետընթաց գնահատում: Ներդրվել են նաև ռիսկերի կառավարման գործունեության գծով բացահայտման լրացուցիչ պահանջներ:

Բանկի ղեկավարությունը ակնկալում է, որ ՖՀՄՍ 9-ի կիրառումը ապագայում կարող է նշանակալի ազդեցություն ունենալ Բանկի ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների գծով

ներկայացված գումարների վրա: Սակայն, նպատակահարմար չէ ՖՀՄՄ 9-ի ազդեցության վերաբերյալ ողջամիտ գնահատում տրամադրելը առանց մանրամասն ուսումնասիրություն իրականացնելու դրա ազդեցության վերաբերյալ:

ՖՀՄՄ 15. Հաճախորդների հետ պայմանագրերի գծով հասույթ

ՖՀՄՄ 15-ը միասնական համընդհանուր մոդել է սահմանում կազմակերպությունների կողմից հաճախորդների հետ պայմանագրերից գոյացած հասույթի հաշվառման համար: ՖՀՄՄ 15-ը ուժի մեջ մտնելուց հետո կփոխարինի ներկայումս գործող հասույթի ճանաչման ուղեցույցը, այդ թվում՝ ՀՀՄՄ 18 Հասույթ, ՀՀՄՄ 11 Կառուցման պայմանագրեր և դրանց հարակից մեկնաբանությունները:

ՀՀՄՄ 15-ի հիմնական սկզբունքը կայանում է նրանում, որ կազմակերպությունը պետք է ճանաչի հասույթը՝ խոստացված ապրանքների կամ ծառայությունների՝ հաճախորդին փոխանցման փաստը ներկայացնելով այն գումարով, որն կազմակերպությունը ակնկալում է ստանալ այդ ապրանքների և ծառայությունների դիմաց: Մասնավորապես, ստանդարտը ներկայացնում է որոշակի հիմունքներով մշակված հինգ քայլից բաղկացած մոդել, որը կիրառելի է հաճախորդների հետ ունեցած բոլոր պայմանագրերի գծով:

Մոդելում ներկայացված են հետևյալ հինգ քայլերը՝

- հաճախորդի հետ ունեցած պայմանագրի սահմանում,
- պայմանագրի կատարման պարտավորությունների սահմանում,
- գործարքի գնի որոշում,
- գործարքի գնի բաշխում պայմանագրի կատարման պարտավորությունների նկատմամբ,
- հասույթի ճանաչում այն ժամանակ (կամ այն բանից հետո), երբ կազմակերպությունը բավարարում է պայմանագրի կատարման պարտավորությունը:

Ըստ ՖՀՄՄ 15-ի, կազմակերպությունը ճանաչում է հասույթը այն ժամանակ, կամ այն բանից հետո, երբ պայմանագրի կատարման պարտավորությունը բավարարված է, այսինքն՝ երբ տվյալ կատարման պարտավորությանն առնչվող ապրանքների կամ ծառայությունների վերահսկողությունը փոխանցվում է հաճախորդին: Ավելի նկարագրական ուղեցույց է ավելացվել նաև այնպիսի թեմաների մասով, ինչպիսիք են՝ հասույթի ճանաչման պահը, փոփոխական հատուցման հաշվառումը, պայմանագրի կատարման և ձեռքբերման հետ կապված ծախսերը և մի շարք այլ հարակից հարցեր: Նաև ներկայացված են նոր բացահայտումներ հասույթի գծով:

Բանկի ղեկավարությունը ակնկալում է, որ ՖՀՄՄ 15-ի կիրառումը ապագայում կարող է նշանակալի ազդեցություն ունենալ Բանկի ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վրա:

ՖՀՄՄ 16. Վարձակալություն

ՖՀՄՄ 16-ով հաշվեկշռում ներկայացված վարձակալությունների մեծամասնությունը բերվում է մեկ միասնական մոդելի ներքո՝ նվազեցնելով տարբերակումը գործառնական և ֆինանսական վարձակալությունների միջև: Վարձատուի հաշվառումը այնուամենայնիվ մեծամասամբ մնում է անփոփոխ և պահպանվում է տարբերակումը գործառնական և ֆինանսական վարձակալությունների միջև:

ՖՀՄՄ 16-ով վարձակալը ճանաչում է օգտագործման իրավունքով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն: Օգտագործման իրավունքով ակտիվը ճանաչվում է նույն կերպ, ինչ որ այլ ոչ ֆինանսական ակտիվները և համապատասխանաբար ճանաչվում է մաշվածություն, իսկ պարտավորության գծով հաշվեկշռվում է տոկոս: Վարձակալության գծով պարտավորությունը սկզբնապես չափվում է վարձակալական վճարի ներկա արժեքով, որը ենթակա է վճարման վարձակալության ժամկետի ընթացքում՝ գեղչելով այն վարձակալությանը բնորոշ դրույքաչափով, կամ վերջինիս անմիջական որոշումն անհնար լինելու դեպքում, վարձակալը օգտագործում է կուտակային փոխառության տոկոսադրույք:

Ինչ վերաբերում է ՀՀՄՄ 17-ին, վարձակալը դասակարգում է վարձակալությունը որպես գործառնական կամ ֆինանսական՝ ըստ դրանց բնույթի: Վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական վարձակալություն այն դեպքում, եթե փոխանցվում են ակտիվի սեփականությանը բնորոշ ըստ էության բոլոր ռիսկերը և հատույցները: Այլապես, վարձակալությունը դասակարգվում է որպես գործառնական

վարձակալություն: Ֆինանսական վարձակալության դեպքում վարձատուն ճանաչում է ֆինանսական եկամուտ վարձակալության ժամկետի ընթացքում՝ հիմք ընդունելով զուտ ներդրման գծով կայուն պարբերական շահութաբերությունը: Վարձատուն ճանաչում է գործառնական վարձակալության գծով վճարները որպես եկամուտ գծային հիմունքով, կամ այլ պարբերական հիմունքով, եթե վերջինս ավելի լավ է արտացոլում համապատասխան ակտիվի օգտագործումից ակնկալվող օգուտների սպառման եղանակը:

Բանկի ղեկավարությունը ակնկալում է, որ ՖՀՄՍ 16-ի կիրառումը ապագայում կարող է նշանակալի ազդեցություն ունենալ Բանկի ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վրա:

Փոփոխություններ ՀՀՄՍ 1 ստանդարտում. Բացահայտման նախաձեռնություն

ՀՀՄՍ 1-ի այս փոփոխություններով պարզաբանվում են էականության գործնական կիրառության խնդիրները:

ՀՀՄՍ 1-ի փոփոխությունը գործում է 2016թ. հունվարի 1-ին սկսվող կամ դրանից հետո ընկած տարեկան ժամանակահատվածների համար, և թույլատրվում է դրա ավելի վաղ կիրառումը: Բանկի ղեկավարությունը չի ակնկալում, որ այս փոփոխությունների կիրառումը էական ազդեցություն կունենա ֆինանսական հաշվետվությունների վրա:

Փոփոխություններ ՀՀՄՍ 16 և ՀՀՄՍ 38 ստանդարտներում. Մաշվածության և ամորտիզացիայի ընդունելի մեթոդների պարզաբանում

ՀՀՄՍ 16-ում կատարված փոփոխությունները արգելում են կազմակերպություններին հիմնական միջոցի միավորների նկատմամբ կիրառել հասույթի հիման վրա մաշվածության մեթոդը: ՀՀՄՍ 38 ստանդարտի փոփոխությունները ներկայացնում են վիճարկելի ենթադրություն առ այն, որ հասույթը չի հանդիսանում ակտիվի ամորտիզացիայի համար պատշաճ հիմք: Այս ենթադրությունը կարող է վիճարկվել միայն այն դեպքում, երբ ոչ նյութական ակտիվն արտահայտված է որպես հասույթի չափման միավոր, կամ երբ հնարավոր է ցույց տալ, որ ոչ նյութական ակտիվի գծով հասույթը և դրա գծով տնտեսական օգուտների սպառումը սերտորեն փոխկապակցված են:

Այս փոփոխությունները կիրառվում են առաջընթաց կերպով 2016թ. սկսվող կամ դրան հաջորդող տարեկան ժամանակահատվածների համար: Ներկայումս Բանկն իր հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մաշվածության և ամորտիզացիայի համար կիրառում է գծային մեթոդը: Բանկի ղեկավարության կարծիքով գծային մեթոդը առավել պատշաճ է ներկայացնում համապատասխան ակտիվներում պարունակվող տնտեսական օգուտների սպառումը և հետևաբար, չի ակնկալում, որ այս փոփոխությունների կիրառումը զգալի ազդեցություն կունենա ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖՀՄՍ-ների տարեկան բարելավումներ՝ 2012-2014 թվականներ

2012-2014 թվականի ՖՀՄՍ-ների տարեկան բարելավումները ներառում են տարբեր ՖՀՄՍ-ների հետևյալ փոփոխությունները:

ՖՀՄՍ 5-ի փոփոխությունները պարզաբանում են, որ ակտիվի վերադասակարգումը կամ օտարումը՝ վաճառքի համար պահվող ակտիվից սեփականատերերին բաշխման համար պահվող ակտիվի կամ հակառակը, չպետք է համարվի վաճառքի պլանի կամ սեփականատերերին բաշխման պլանի փոփոխություն և պետք է կիրառվեն օտարման նոր մեթոդի հանդեպ կիրառելի դասակարգման, ներկայացման և չափման պահանջները: Ավելին, այս փոփոխություններով պարզաբանվում է, որ ակտիվները, որոնք այլևս չեն համապատասխանում սեփականատերերին բաշխման համար պահվող ակտիվի չափանիշներին, պետք է դիտարկվեն նույն կերպ, ինչ ակտիվները, որոնք դադարում են դասակարգվել որպես վաճառքի համար պահվող: Այս փոփոխությունը պետք է կիրառվի առաջընթաց կերպով:

ՖՀՄՍ 7-ի փոփոխությունները լրացուցիչ պարզաբանում են, թե արդյոք սպասարկման պայմանագիրն իրենից ներկայացնում է փոխանցված ակտիվում շարունակական մասնակցություն՝ փոխանցված ակտիվների գծով պահանջվող բացահայտումների տեսանկյունից: Ի լրումն, ՖՀՄՍ 7-ի փոփոխությունները նպատակ ունեն

պարզաբանելու, որ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցման բացահայտման պահանջները, թեև հստակորեն պարտադիր չէ ներկայացնել բոլոր միջանկյալ ժամանակահատվածների կրճատ միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում, սակայն կարող է պահանջվել այս բացահայտումների ներառումը կրճատ միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում ՀՀՄՍ 34-ի հետ համապատասխանություն ապահովելու տեսանկյունից: Այս փոփոխությունը պետք է կիրառվի հետընթաց կերպով:

ՀՀՄՍ 19-ի փոփոխությունները պարզաբանում են, որ բարձր որակի կորպորատիվ պարտատոմսերը, որոնք օգտագործվում են կենսաթոշակային հատուցումների զեղչատոկոսի գնահատման համար, պետք է թողարկվեն հատուցումների վճարման արժույթով: Փոփոխությունները կիրառվում են տվյալ փոփոխությունների առաջին անգամ կիրառմամբ ներկայացված ֆինանսական հաշվետվություններում՝ սկսած ամենավաղ համեմատական ժամանակաշրջանից:

ՀՀՄՍ 34-ի փոփոխությունները պարզաբանում են, որ ՀՀՄՍ 34-ով պահանջվող տեղեկատվությունը, որը ներկայացված է միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների որևէ այլ մասում, սակայն միջանկյալ ֆինանսական հաշվետվություններից դուրս, պետք է խաչաձև հղման միջոցով ներկայացվի միջանկյալ հաշվետվության և միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների այլ մասերի միջև, որը պետք է հասանելի լինի օգտագործողներին միևնույն պայմաններով և միևնույն ժամանակ, ինչ միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները:

Բանկի ղեկավարությունը չի ակնկալում, որ այս փոփոխությունների կիրառումը զգալի ազդեցություն կունենա ֆինանսական հաշվետվությունների վրա:

Փոփոխություններ ՀՀՄՍ 12 ստանդարտում. Զիրացված վնասների գծով հետաձգված հարկային ակտիվների ճանաչում

Այս փոփոխություններով պարզաբանվում է, որ պարտքային գործիքների գծով չիրացված օգուտները ֆինանսական հաշվետվություններում իրական արժեքով, իսկ հարկային նպատակներով՝ ինքնարժեքով չափելը կարող է առաջացնել նվազեցվող ժամանակավոր տարբերություններ: Փոփոխություններով նաև պարզաբանվում է, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չի սահմանափակում ապագա հնարավոր հարկվող շահույթի գնահատականները, և հարկվող ժամանակավոր տարբերությունները ապագա հարկվող շահույթի հետ համեմատելիս, ապագա հարկվող շահույթը չի ներառում հարկային նվազեցումները, որոնք արդյունք են այդ նվազեցվող ժամանակային տարբերությունների հակադարձման: Այս փոփոխությունները կիրառելի են հետադարձ կերպով և ուժի մեջ են մտնում 2017թ. հունվարի 1-ից: Թույլատրվում է դրանց ավելի վաղ կիրառումը:

Բանկի ղեկավարությունը ակնկալում է, որ ՀՀՄՍ 12-ի կիրառումը ապագայում կարող է նշանակալի ազդեցություն ունենալ Բանկի ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների գծով ներկայացված գումարների վրա: Սակայն, նպատակահարմար չէ ՀՀՄՍ 12-ի ազդեցության վերաբերյալ ողջամիտ գնահատում տրամադրելը առանց մանրամասն ուսումնասիրություն իրականացնելու դրա ազդեցության վերաբերյալ:

5. Զուտ տոկոսային եկամուտ նախքան տոկոսակիր ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստները

	2015թ.	2014թ.
Տոկոսային եկամուտ		
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ		
- Հաճախորդներին տրված վարկեր	8,248,220	7,253,122
- Հակադարձ հետգնման պայմանագրեր	413,252	200,269
- Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	128,183	97,842
- Այլ տոկոսային եկամուտ	86	256
Ընդամենը տոկոսային եկամուտ ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով	8,789,741	7,551,489
Իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ		
- Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	1,068,268	791,400
Ընդամենը տոկոսային եկամուտ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով	1,068,268	791,400
Ընդամենը տոկոսային եկամուտ	9,858,009	8,342,889
Տոկոսային ծախս		
Տոկոսային ծախս ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորությունների գծով		
- Ընթացիկ հաշիվներ և հաճախորդներից ներգրավված ավանդներ	2,573,520	2,422,730
- Հետգնման պայմանագրեր	1,033,870	560,473
- Ավանդներ և մնացորդներ բանկերում	804,429	546,023
- Վարկեր միջազգային ֆինանսական կազմակերպություններից	315,983	342,134
- Վարկեր ՀՀ Կենտրոնական բանկից և ՀՀ կառավարությունից	194,448	205,177
- Ստորադաս փոխառություն	394,836	-
- Այլ տոկոսային ծախս	-	16,992
Ընդամենը տոկոսային ծախս	5,317,086	4,093,529
Զուտ տոկոսային եկամուտ նախքան տոկոսակիր ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստները	4,540,923	4,249,360

6. Կոմիսիոն եկամուտներ և ծախսեր

	2015թ.	2014թ.
Հաշվարկային փոխանցումներ	698,022	749,125
Վճարային քարտերով գործառնություններ	441,285	408,627
Դրամարկղային գործառնություններ	155,648	177,862
Արտարժույթով և արժեթղթերով գործառնություններ	13,467	10,305
Երաշխիքներ և ակրեդիտիվներ	23,635	9,155
Այլ կոմիսիոն եկամուտներ	128,851	153,908
Ընդամենը կոմիսիոն եկամուտներ	1,460,908	1,508,982
Վճարային քարտերով գործառնություններ	194,613	178,259
Հաշվարկային փոխանցումներ	134,741	123,401
Արտարժույթով և արժեթղթերով գործառնություններ	23,383	51,183
Թղթակցային հաշիվների սպասարկում	4,549	10,012
Այլ կոմիսիոն ծախսեր	28,786	38,836
Ընդամենը կոմիսիոն ծախսեր	386,072	401,691

7. Զուտ արտարժույթային եկամուտ

	2015թ.	2014թ.
Արտարժույթի առք ու վաճառքից զուտ օգուտ	768,188	958,727
Արտարժույթի փոխարկումից օգուտ/(վնաս)	117,403	(211,610)
Ընդամենը զուտ եկամուտ արտարժույթային գործառնություններից	885,591	747,117

8. Այլ եկամուտ

	2015թ.	2014թ.
Ստացված տույժեր և տուգանքներ	290,758	176,364
Թանկարժեք մետաղների վաճառքից և վերագնահատումից օգուտ	1,969	37,804
Եկամուտ դրամաշնորհներից	507	507
Այլ եկամուտ	104,762	104,260
Ընդամենը այլ եկամուտներ	397,996	318,935

2015թ. այլ եկամուտը ներառում է Բանկի և մեկ այլ գործընկեր Բանկի հետ կատարված փոխհաշվարկի արդյունքում արաջացած եկամուտ 49,829 հազար ՀՀ դրամ գումարով:

2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար այլ եկամուտը ներառում է ապահովագրված ակտիվների կորստի գծով ապահովագրական ընկերություններից ստացված մուտքեր 40 մլն ՀՀ դրամ գումարով:

9. Տոկոսակիր ակտիվների գծով (արժեզրկումից կորուստներ)/արժեզրկման հակադարձումներ

	2015թ.	2014թ.
Հաճախորդներին տրված վարկեր (Ծան. 16)	(385,930)	66,153
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ (Ծան. 15)	27,330	(4,870)
Ընդամենը վարկային կորուստների արժեզրկման (ծախս)/հակադարձում	(358,600)	61,283

10. Անձնակազմի գծով ծախսեր

	2015թ.	2014թ.
Աշխատավարձ և այլ վճարներ	3,338,583	3,393,487
Ընդամենը անձնակազմի գծով ծախս	3,338,583	3,393,487

11. Այլ ծախսեր

	2015թ.	2014թ.
Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման ծախսեր	300,167	298,601
Գովազդի և ներկայացուցչական ծախսեր	296,702	248,052
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	274,344	218,957
Ինկասացիոն ծառայությունների գծով ծախսեր	258,371	250,000
Հարկեր (բացառությամբ շահութահարկի)	198,049	181,330
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	96,876	98,934
Ապահովագրության գծով ծախսեր	84,999	69,904
Գրասենյակային ծախսեր	81,981	92,211
Վճարումներ ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին	67,887	62,439
Անվտանգության գծով ծախսեր	67,379	61,597
Գործուղման ծախսեր	44,700	52,990
Պլաստիկ քարտերի գծով կատարված ծախսեր	44,531	35,089
Մասնագիտական ծառայություններ	15,459	21,512
Հիմնական միջոցների օտարումից վնասներ	4,625	2,665
Վճարված տուգանքներ	-	1,826
Այլ գործառնական ծախսեր	143,268	163,346
Ընդամենը այլ ծախսեր	1,979,338	1,859,453

12. Շահութահարկի գծով ծախս

	2015թ.	2014թ.
Ընթացիկ հարկի գծով ծախս	144,049	319,355
Նախորդ տարիների հարկի գծով ծախս	499	-
Հետաձգված հարկի գծով ծախս/(օգուտ)	19,728	(40,147)
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	164,276	279,208

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 20% (2014թ.՝ 20%): ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՄ-ի միջև եղած տարբերությունները մի շարք ակտիվների և

պարտավորությունների գծով առաջ են բերում ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների կազմման նպատակներով դրանց հաշվեկշռային արժեքների և հարկման բազայի միջև: Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է՝ կիրառելով 20% հիմնական դրույքաչափը:

Ստորև ներկայացվում է շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը:

	2015թ.	Արդյունավետ դրույքաչափ (%)	2014թ.	Արդյունավետ դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը	613,542		1,096,004	
Շահութահարկ՝ 20% դրույքաչափով	122,708	20	219,201	20
Չհարկվող եկամուտ	(101)	-	(745)	-
Չնվազեցվող ծախսեր	79,973	13	26,859	2
Արտարժույթի փոխարկումից (օգուտ)/վնաս	(23,481)	(4)	42,322	4
Այլ վերագնահատումներից օգուտ	(455)	-	(2,310)	-
Այլ չհարկվող եկամուտ և արտոնություններ	(14,867)	(2)	(6,119)	(1)
Ընթացիկ տարում ճանաչված ճշգրտում նախորդ տարվա ընթացիկ հարկերի գծով	499	-	-	-
Շահութահարկի գծով ծախս	164,276	27	279,208	25

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ.

	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կուտակված ծախսեր և այլ պարտավորություններ	99,616	6,790	-	106,406
Հաճախորդներին տրված վարկեր	23,616	8,342	-	31,958
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	123,232	15,132	-	138,364
Վաճառքի համար մատչելի ներդրումներ Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(64,261)	(28,846)	89,251	(3,856)
Պայմանական պարտավորություններ Չիմնական միջոցներ	(10,204)	(4,272)	-	(14,476)
	(8,143)	(2,862)	-	(11,005)
	(4,703)	1,120	-	(3,583)
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն	(87,311)	(34,860)	89,251	(32,920)
Զուտ հետաձգված հարկային պարտավորություն	35,921	(19,728)	89,251	105,444
	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կուտակված ծախսեր և այլ պարտավորություններ	77,232	22,384	-	99,616
Չիմնական միջոցներ	2,326	(2,326)	-	-
Հաճախորդներին տրված վարկեր	-	23,616	-	23,616
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	79,558	43,674	-	123,232
Վաճառքի համար մատչելի ներդրումներ Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(266,431)	-	202,170	(64,261)
Պայմանական պարտավորություններ Հաճախորդներին տրված վարկեր	(10,716)	512	-	(10,204)
	(6,063)	(2,080)	-	(8,143)
	(2,744)	2,744	-	-
Չիմնական միջոցներ	-	(4,703)	-	(4,703)
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն	(285,954)	(3,527)	202,170	(87,311)
Զուտ հետաձգված հարկային ակտիվ	(206,396)	40,147	202,170	35,921

13. Մեկ բաժնետոմսին ընկնող շահույթ

	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընթացիկ ժամանակաշրջանի շահույթ	448,980	816,796
Սովորական բաժնետոմսերի կշռված միջին քանակ	933,335	933,335
Մեկ բաժնետոմսին ընկնող բազային շահույթ	0.48	0.88
Սովորական բաժնետոմսերի նույնացված քանակը (ծան. 30)	963,734	933,335
Մեկ բաժնետոմսին ընկնող նույնացված շահույթ	0.47	0.88

14. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ դրամական միջոցներ	9,133,956	5,392,027
Թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	16,251,012	13,937,991
Թղթակցային հաշիվներ բանկերում	2,165,622	3,024,437
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	27,550,590	22,354,455

2015 և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ թղթակցային հաշիվները ՀՀ ԿԲ-ում ներառում են նաև ՀՀ ԿԲ-ում տեղաբաշխված պարտադիր պահուստները, որոնք հաշվարկվում են Բանկի կողմից ներգրավված դրամային և արտարժույթով որոշ միջոցների գծով Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգի համաձայն: Այդ միջոցների ելքագրումն արգելված չէ, սակայն պահուստավորման նվազագույն չափը չպահպանելը կարող է հանգեցնել ՀՀ կենտրոնական բանկի կողմից տույժերի կիրառման: ՀՀ ԿԲ-ում ունեցած դրամական միջոցների, այլ դրամական տեղաբաշխումների, թղթակցից հաշիվների ավանդների և պարտադիր պահուստների համար Բանկը տոկոսներ չի ստանում:

Դրամական միջոցներից և դրանց համարժեքներից որևէ մեկը ժամկետանց կամ արժեզրկված չէ:

15. Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարկեր և ավանդներ	3,585,216	2,624,298
Վարկային քարտերով վճարումների ավանդ ՀՀ ԿԲ-ում	1,520,000	1,270,000
Բաժնետիրական կապիտալի համալրման նպատակով ՀՀ ԿԲ-ում պահվող միջոցներ, Ծան. 30	1,145,316	-
Վճարային համակարգերով ստացվելիք գումարներ	406,331	842,288
Այլ կազմակերպություններում դեպոնացված գումարներ	118,615	116,377
Բանկերում դեպոնացված գումարներ	83,781	82,725
Ֆինանսական կազմակերպություններից ստացման ենթակա այլ գումարներ	273,924	244,266
	7,133,183	5,179,954
Նվազեցում՝ արժեզրկման պահուստների գծով	(5,049)	(32,379)
Ընդամենը պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	7,128,134	5,147,575

2015 և 2014թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ «պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ» տողում ներառված են Բանկի կողմից տրամադրված երաշխիքային գումարները՝ 53,553 հազար ՀՀ դրամ գումարով VISA վճարահաշվարկային համակարգով, 65,062 հազար ՀՀ դրամ MasterCard վճարահաշվարկային համակարգով գործառնություններ իրականացնելու նպատակով (2014թ. 52,495 հազար ՀՀ դրամ գումարով 63,881 հազար ՀՀ դրամ գումարով):

Ավանդային հաշիվները ՀՀ ԿԲ-ում իրենցից ներկայացնում են ԱրՔա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների երաշխիքային ավանդ:

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով արժեզրկման կորուստների հատկացումների շարժը հետևյալն է.

	Ընդամենը
2014թ. հունվարի 1-ի դրությամբ	27,509
Տարվա ծախս	4,870
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	32,379
2015թ. հունվարի 1-ի դրությամբ	32,379
Տարվա հակադարձում	(27,330)
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,049

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներից որևէ մեկը ժամկետանց կամ արժեզրկված չէ:

16. Հաճախորդներին տրված վարկեր

	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հաճախորդներին տրված վարկեր	51,461,492	46,682,610
Օվերդրաֆտ	8,716,139	6,111,336
	60,177,631	52,793,946
Նվազեցում՝ վարկերի արժեզրկման պահուստների գծով	(1,002,391)	(736,558)
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	59,175,240	52,057,388

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված վարկերի միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 20.40% ՀՀ դրամով վարկերի համար (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 20.05%) և ԱՄՆ դոլարով, Եվրոյով և այլ ազատ փոխարկելի արտարժույթներով վարկերի համար 12.57% (2014թ.՝ 12.86%):

2015թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի կենտրոնացում երրորդ անձանց տրամադրված վարկերի գծով 14,986,273 հազար ՀՀ դրամ (համախառն վարկային պորտֆելի 24.90%) ընդհանուր գումարով, (2014թ.՝ 10,066,671 հազար ՀՀ դրամ կամ համախառն վարկային պորտֆելի 19.45%): Այդ վարկերի համար ձևավորվել է 149,863 հազար ՀՀ դրամի չափով պահուստ (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 100,666 հազար ՀՀ դրամ):

Վարկերն ըստ ոլորտների ներկայացված են ստորև.

	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Սպառողական	18,876,453	19,097,594
Առևտուր	10,716,641	11,597,481
Արտադրություն	9,206,363	7,018,876
Շինարարություն	4,268,965	1,479,100
Հիփոթեքային	3,216,232	3,195,868
Գյուղատնտեսություն	1,939,702	1,773,552
Այլ ճյուղեր	11,953,275	8,631,475
	60,177,631	52,793,946
Նվազեցում՝ արժեզրկման պահուստների գծով	(1,002,391)	(736,558)
Ընդամենը վարկեր	59,175,240	52,057,388

Վարկերն ըստ աշխարհագրական համակենտրոնացման ներկայացված է Ծան. 35-ում: Վճարման ենթակա վարկերի որակական վերլուծությունը ներկայացված է ստորև.

	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
	Համախառն վարկեր	Արժեզրկման գծով պահուստ	Զուտ վարկեր	Համախառն վարկերի արժեզրկման պահուստ
Սպառողական				
Ոչ ժամկետանց ժամկետանց՝	18,428,482	226,699	18,201,783	1.2%
- 1-ից 30 օր	133,636	22,938	110,698	17.2%
- 31-ից 60 օր	57,424	5,773	51,651	10.1%
- 61-ից 90 օր	55,932	5,498	50,434	9.8%
- 91-ից 180 օր	99,069	21,262	77,807	21.5%
- 180 օրից ավել	101,910	51,242	50,668	50.3%
Ընդամենը	18,876,453	333,412	18,543,041	1.8%
Առևտուր				
Ոչ ժամկետանց ժամկետանց՝	10,264,384	108,198	10,156,186	1.1%
- 1-ից 30 օր	-	-	-	-
- 31-ից 60 օր	-	-	-	-
- 61-ից 90 օր	-	-	-	-
- 91-ից 180 օր	452,257	157,200	295,057	34.8%
- 180 օրից ավել	-	-	-	-
Ընդամենը	10,716,641	265,398	10,451,243	2.5%
Արտադրություն				
Ոչ ժամկետանց ժամկետանց՝	9,184,161	91,842	9,092,319	1.0%
- 1-ից 30 օր	2,303	230	2,073	10.0%
- 31-ից 60 օր	-	-	-	-
- 61-ից 90 օր	4,909	491	4,418	10.0%
- 91-ից 180 օր	10,245	2,049	8,196	20.0%
- 180 օրից ավել	4,745	2,372	2,373	50.0%
Ընդամենը	9,206,363	96,984	9,109,379	1.1%
Շինարարություն				
Ոչ ժամկետանց ժամկետանց՝	4,268,965	42,690	4,226,275	1.0%
- 1-ից 30 օր	-	-	-	-
- 31-ից 60 օր	-	-	-	-
- 61-ից 90 օր	-	-	-	-
- 91-ից 180 օր	-	-	-	-
- 180 օրից ավել	-	-	-	-
Ընդամենը	4,268,965	42,690	4,226,275	1.0%
Հիփոթեքային				
Ոչ ժամկետանց ժամկետանց՝	3,197,640	39,728	3,157,912	1.2%
- 1-ից 30 օր	-	-	-	-
- 31-ից 60 օր	2,028	203	1,825	10.0%
- 61-ից 90 օր	4,712	521	4,191	11.1%
- 91-ից 180 օր	3,231	775	2,456	24.0%
- 180 օրից ավել	8,621	4,975	3,646	57.7%
Ընդամենը	3,216,232	46,202	3,170,030	1.4%
Գյուղատնտեսություն				
Ոչ ժամկետանց ժամկետանց՝	1,914,548	37,983	1,876,565	2.0%
- 1-ից 30 օր	4,485	538	3,947	12.0%
- 31-ից 60 օր	1,707	210	1,497	12.3%
- 61-ից 90 օր	934	144	790	15.4%
- 91-ից 180 օր	11,765	2,946	8,819	25.0%
- 180 օրից ավել	6,263	3,758	2,505	60.0%
Ընդամենը	1,939,702	45,579	1,894,123	2.3%
Այլ ոլորտներ				
Ոչ ժամկետանց ժամկետանց՝	11,901,529	147,029	11,754,500	1.2%
- 1-ից 30 օր	-	-	-	-
- 31-ից 60 օր	-	-	-	-
- 61-ից 90 օր	1,940	194	1,746	10.0%
- 91-ից 180 օր	-	-	-	-
- 180 օրից ավել	49,806	24,903	24,903	50.0%
Ընդամենը	11,953,275	172,126	11,781,149	1.4%
ԸՆԴԱՄԵՆԸ	60,177,631	1,002,391	59,175,240	1.7%

	Համախառն վարկեր	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		Համախառն վարկերի արժեզրկման պահուստ
		Արժեզրկման գծով պահուստ	Զուտ վարկեր	
Սպառողական				
Ոչ ժամկետանց ժամկետանց՝	18,847,555	257,253	18,590,302	1.4%
- 1-ից 30 օր	60,421	8,367	52,054	13.8%
- 31-ից 60 օր	81,124	11,738	69,386	14.5%
- 61-ից 90 օր	9,345	996	8,349	10.7%
- 91-ից 180 օր	77,260	17,818	59,442	23.1%
- 180 օրից ավել	21,889	11,104	10,785	51.0%
Ընդամենը	19,097,594	307,276	18,790,318	1.6%
Առևտուր				
Ոչ ժամկետանց ժամկետանց՝	11,596,120	116,265	11,479,855	1.0%
- 1-ից 30 օր	-	-	-	-
- 31-ից 60 օր	-	-	-	-
- 61-ից 90 օր	-	-	-	-
- 91-ից 180 օր	1,361	272	1,089	20.0%
- 180 օրից ավել	-	-	-	-
Ընդամենը	11,597,481	116,537	11,480,944	1.0%
Արտադրություն				
Ոչ ժամկետանց ժամկետանց՝	7,013,698	70,137	6,943,561	1.0%
- 1-ից 30 օր	-	-	-	-
- 31-ից 60 օր	-	-	-	-
- 61-ից 90 օր	-	-	-	-
- 91-ից 180 օր	-	-	-	-
- 180 օրից ավել	5,178	2,589	2,589	50%
Ընդամենը	7,018,876	72,726	6,946,150	1.0%
Շինարարություն				
Ոչ ժամկետանց ժամկետանց՝	1,479,100	14,791	1,464,309	1.0%
- 1-ից 30 օր	-	-	-	-
- 31-ից 60 օր	-	-	-	-
- 61-ից 90 օր	-	-	-	-
- 91-ից 180 օր	-	-	-	-
- 180 օրից ավել	-	-	-	-
Ընդամենը	1,479,100	14,791	1,464,309	1.0%
Հիփոթեքային				
Ոչ ժամկետանց ժամկետանց՝	3,176,142	43,327	3,132,815	1.40%
- 1-ից 30 օր	-	-	-	-
- 31-ից 60 օր	6,539	654	5,885	10.0%
- 61-ից 90 օր	6,606	793	5,813	12.0%
- 91-ից 180 օր	6,581	3,290	3,291	50.0%
- 180 օրից ավել	-	-	-	-
Ընդամենը	3,195,868	48,064	3,147,804	1.5%
Գյուղատնտեսություն				
Ոչ ժամկետանց ժամկետանց՝	1,766,227	34,666	1,731,561	2.0%
- 1-ից 30 օր	5,590	671	4,919	12.0%
- 31-ից 60 օր	1,227	147	1,080	12.0%
- 61-ից 90 օր	-	-	-	-
- 91-ից 180 օր	508	180	328	35.4%
- 180 օրից ավել	-	-	-	-
Ընդամենը	1,773,552	35,664	1,737,888	2.0%
Այլ ոլորտներ				
Ոչ ժամկետանց ժամկետանց՝	8,629,288	141,281	8,488,007	1.6%
- 1-ից 30 օր	2,187	219	1,968	10.0%
- 31-ից 60 օր	-	-	-	-
- 61-ից 90 օր	-	-	-	-
- 91-ից 180 օր	-	-	-	-
- 180 օրից ավել	-	-	-	-
Ընդամենը	8,631,475	141,500	8,489,975	1.6%
ԸՆԴԱՄԵՆԸ	52,793,946	736,558	52,057,388	1.4%

Ստորև ներկայացված է 2015թ. և 2014թ. վարկերի արժեզրկման փոփոխությունների վերլուծությունը:

	Սպառողական	Առևտուր	Արտադրություն	Շինարարություն	Հիփոթեքային	Գյուղատնտեսություն	Այլ	Ընդամենը
2015թ. հունվարի 1-ի դրությամբ	307,276	116,537	72,726	14,791	48,064	35,664	141,500	736,558
Տարվա ծախս	162,686	124,369	24,258	27,899	9,920	11,283	25,515	385,930
Դուրսգրված գումարներ	(296,654)	(10,030)	(4,727)	-	(30,482)	(15,829)	(313)	(358,035)
Վերականգնումներ	160,104	34,522	4,727	-	18,700	14,461	5,424	237,938
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	333,412	265,398	96,984	42,690	46,202	45,579	172,126	1,002,391
Անհատական արժեզրկում	13,987	204,087	-	-	4,976	-	-	223,050
Խմբային արժեզրկում	319,425	61,311	96,984	42,690	41,226	45,579	172,126	779,341
Անհատապես արժեզրկված վարկերը մինչև անհատապես գնահատված արժեզրկման պահուստին մասնահանումները	91,187	547,312	-	-	8,621	-	-	647,120
Արժեզրկման պահուստին մասնահանումներ	(13,987)	(204,087)	-	-	(4,976)	-	-	(223,050)
Անհատապես արժեզրկված վարկերը անհատապես գնահատված արժեզրկման պահուստին մասնահանումներից հետո	77,200	343,225	-	-	3,645	-	-	424,070

2015թ. հուլիսին Բանկը դիմել է Հայաստանի բանկերի միության ֆինանսական արբիտրաժ՝ ստանալու համար մեկ փոխառուի գրավների առգրավման հաստատում, ելնելով նրանից, որ այդ փոխառուի վարկը շարունակում է մնալ ժամկետանց սահմանված ժամանակահատվածից հետո: Սրան հետևել է փոխառուի կողմից դատական գործի հարուցումը Բանկի դեմ՝ գրավի և դրա առգրավման գծով իր իրավունքների գծով: 2015թ. հոկտեմբերի 9-ին Հայաստանի բանկերի միության ֆինանսական արբիտրաժը բավարարել է Բանկի հայցը: Արբիտրաժային դատարանի որոշման հիման վրա առաջին ատյանի դատարանը տվել է կատարողական թերթ, որը վարկառուի կողմից բողոքարկվել է նախ վերաքննիչ դատարան (վերաքննիչ դատարանը թողել է անփոփոխ), ապա ՀՀ վճռաբեկ դատարան:

Սույն ֆինանսական հաշվետվությունների թողարկման ամսաթվի դրությամբ դատական գործընթացը դեռևս ընթացքում էր: Ղեկավարությունն ակնկալում է, որ հետագա հայցադիմումները ևս կմերժվեն և գրավը իրավական փաստաթղթերով կձևակերպվի որպես Բանկի սեփականություն: Վարկի գումարի չմարված մնացորդը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 547,312 հազար ՀՀ դրամ՝ նախքան արժեզրկման գծով պահուստին մասնահանումը՝ 204,087 հազար ՀՀ դրամ գումարով:

Ստորև ներկայացված է 2014թ. վարկերի արժեզրկման փոփոխությունների վերլուծությունը:

	Սպառողական	Առևտուր	Արտադրություն	Շինարարություն	Հիփոթեքային	Գյուղատնտեսություն	Այլ	Ընդամենը
2014թ. հունվարի 1-ի դրությամբ	234,017	159,856	145,516	27,734	43,695	30,881	175,746	817,445
Մասնահանումներ պահուստին/ (հակադարձումներ) տարվա ընթացքում	119,790	(62,577)	(72,853)	(27,563)	4,784	7,102	(34,836)	(66,153)
Դուրսգրված գումարներ	(65,281)	(44,678)	-	-	(2,963)	(4,646)	(1,093)	(118,661)
Վերականգնումներ	18,750	63,936	63	14,620	2,548	2,327	1,683	103,927
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	307,276	116,537	72,726	14,791	48,064	35,664	141,500	736,558
Անհատական արժեզրկում	21,583	-	824	-	5,332	-	-	27,739
Խմբային արժեզրկում	285,693	116,537	71,902	14,791	42,732	35,664	141,500	708,819
Անհատապես արժեզրկված վարկերը մինչև անհատապես գնահատված արժեզրկման պահուստին մասնահանումները	99,592	-	5,178	-	13,186	-	-	117,956
Արժեզրկման պահուստին մասնահանումներ	(21,583)	-	(824)	-	(5,332)	-	-	(27,739)
Անհատապես արժեզրկված վարկերը անհատապես գնահատված արժեզրկման պահուստին մասնահանումներից հետո	78,009	-	4,354	-	7,854	-	-	90,217

Գրավի առարկայի վերլուծությունը դիտարկվում է Ծան. 35-ում: Առգրավված ակտիվները ներկայացված են Ծան. 22-ում:

17. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Բանկի կողմից պահվող		
<i>Պարտքային գործիքներ</i>		
ՀՀ պետական արժեթղթեր	84,751	-
	84,751	-
<i>Գապիտալի գործիքներ</i>		
ՀՀ-ում գործող ընկերությունների արժեթղթեր	251,510	47,561
ՀՀ-ից դուրս գործող ընկերությունների արժեթղթեր	1,952	1,917
	253,462	49,478
Ընդամենը Բանկի կողմից պահվող	338,213	49,478
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր, ծան 18.		
<i>Պարտքային գործիքներ</i>		
ՀՀ պետական արժեթղթեր	8,244,031	5,824,469
Ոչպետական արժեթղթեր	283,757	294,342
Ընդամենը հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	8,527,788	6,118,811
Ընդամենը վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	8,866,001	6,168,289

Պետական պարտքային արժեթղթերն իրենցից ներկայացնում են Հայաստանի Ֆինանսների նախարարության կողմից թողարկված արժեթղթեր տարեկան արժեկտրոնային ֆիքսված տոկոսադրույքով, որը տատանվում է 10%-ի և 13%-ի միջակայքում (2014թ.՝ տարեկան 10 – 13.5%) և որն ուժի մեջ է 2016 – 2032թթ. (2014թ.՝ 2015 – 2032թթ.): Այս գործիքների իրական արժեքը չափվում է օգտագործելով գնահատման տեխնիկա՝ հիմնված տվյալ պահին գործող տոկոսադրույքների վրա, որպես տվյալ ֆինանսական գործիքի ապագա դրամական հոսքերի զեղչատոկոս: Ոչ պետական պարտքային արժեթղթերն իրենցից ներկայացնում են Հայաստանի Հանրապետության ֆինանսական ծառայությունների հատվածում գործող ընկերության կողմից թողարկված պարտատոմսեր՝ տարեկան 10 -ից 12% ֆիքսված արժեկտրոնային տոկոսադրույքով և 2017թ. և 2020թ. միջակայքում ժամկետայնությամբ:

Հայաստանի Հանրապետությունում գործող կազմակերպությունների բաժնետոմսերի գծով բաժնային գործիքներն իրենցից ներկայացնում են չգնանշված ընկերություններում բաժնային գործիքներ՝ հաշվառված ինքնարժեքով և ճշգրտված արժեզրկումից կորուստներով, քանի որ դրանց իրական արժեքը հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել: Այսպիսի ներդրումների համար շուկա չկա և Բանկը մտադիր է դրանք պահել երկարաժամկետ կտրվածքով: Տես՝ Ծան.19 հաշվետու ժամանակաընթացքում ծանագված լրացուցիչ բաժնային գործիքների վերաբերյալ:

Վաճառքի համար մատչելի ակտիվներից որևէ մեկը ժամկետանց կամ արժեզրկված չէ:

18. Փոխանցված ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ

Բանկն ունի գործարքներ հետգնման և հակադարձ հետգնման համաձայնագրերով: Ռեպո համաձայնագրերով փոխառվություն տրված կամ վաճառված արժեթղթերը փոխանցվում են երրորդ կողմին Բանկի կողմից ստացած կանխիկ դրամի փոխարեն: Այս ֆինանսական ակտիվները կարող են վերագրավադրվել կամ վերավաճառվել գործընկերների կողմից Բանկի կողմից պարտավորությունների չկատարման (դեֆոլտի) բացակայության դեպքում, սակայն գործընկերը պարտավորվում է վերադարձնել արժեթղթերը պայմանագրի ավարտին: Բանկի սահմանմամբ այդ արժեթղթերի գծով բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվել են և այդ իսկ պատճառով դրանք չեն ապաճանաչվել: Այս գործարքներն իրականացվում են այն պայմաններով, որոնք ընդունված են ստանդարտ վարկավորման և արժեթղթերի փոխառության ու վարկային գործունեության ժամանակ, ինչպես նաև այնպիսի փոխանակման գործարքներում, որտեղ Բանկը հանդես է գալիս որպես միջնորդ:

Հակադարձ հետզնման պայմանագրեր

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի հակադարձ հետզնման պայմանագրեր ֆինանսական ոլորտում գործող կազմակերպությունների հետ 832,166 հազար ՀՀ դրամ (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: 1,255,797 հազար ՀՀ դրամ): 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս հակադարձ հետզնման պայմանագրերով որպես գրավ ստացված ակտիվների իրական արժեքը, որոնք իրենցից ներկայացնում են պետական պարտքային արժեթղթեր, կազմում էր 856,786 հազար ՀՀ դրամ (2014թ.՝ 1,265,179 հազար ՀՀ դրամ): Բանկը պարտավոր է վերադարձնել համարժեք գումարի արժեթղթեր:

Հետզնման պայմանագրեր

	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հետզնման պայմանագրերով փոխանցված և գրավադրված՝ վաճառքի համար մատչելի սեփական ֆինանսական ակտիվների իրական արժեքը	8,527,788	6,118,811
Հակադարձ հետզնման պայմանագրերով որպես գրավ ստացված վերագրավադրված ակտիվների իրական արժեքը	856,786	1,265,179
Ընդամենը հետզնման պայմանագրերով փոխանցված և գրավադրված ֆինանսական ակտիվներ	9,384,574	7,383,990
Հարակից պարտավորությունների հաշվեկշռային արժեք	9,104,678	7,215,899

2015 և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեկշռային արժեքում ներառված հարակից պարտավորությունները հետզնման պայմանագրերի գծով իրենցից ներկայացնում են ՀՀ կենտրոնական բանկի հետ ստորագրված հետզնման պայմանագրեր:

19. Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում

Ստորև ներկայացված աղյուսակում ներկայացվում է 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիներին ասոցիացված կազմակերպություններում ներդրումների հաշվեկշռային արժեքներում շարժը:

	2015թ.	2014թ.
1 հունվարի	194,991	245,192
Սեփական կապիտալում հաշվառվող ներդրումների գծով տարվա վնասի մաս	9,694	(49,552)
Այլ համապարփակ եկամուտի մաս	(737)	(649)
Սեփական կապիտալում հաշվառվող ասոցիացված կազմակերպություններում ներդրումների նվազում	(203,948)	-
31 դեկտեմբերի	-	194,991

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ուներ Հայաստանում գործող ապահովագրական ընկերությունում ներդրում, որը հաշվառված էր որպես ներդրում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառված ասոցիացված կազմակերպություններում: 2015թ. ընթացքում Բանկի սեփականությունը իր ասոցիացված կազմակերպությունում ներդրման գծով նվազել է 20%-ից մինչև 15.17%՝ ասոցիացված կազմակերպության կողմից լրացուցիչ բաժնետոմսերի թողարկման արդյունքում: Գործարքի ամսաթվի դրությամբ Բանկը ապաճանաչել է ասոցիացված կազմակերպությունում ներդրումը 203,948 հազար ՀՀ դրամ գումարով և ճանաչել ներդրում վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվում՝ ապաճանաչման ամսաթվին ներդրման հաշվեկշռային արժեքով՝ 203,948 հազար ՀՀ դրամ գումարով, արդյունքում՝ այդ ամսաթվի դրությամբ օգուտ կամ վնաս չի առաջացել: Ասոցիացված կազմակերպությունում ներդրումը ապաճանաչելուց առաջ, ասոցիացված կազմակերպության շահույթի մասնաբաժինը ճանաչվել է շահույթում կամ վնասում՝ 9,694 հազար ՀՀ դրամ գումարով, այլ համապարփակ վնասի մասնաբաժինը ճանաչվել է այլ համապարփակ վնասում՝ 737 հազար ՀՀ դրամ գումարով, շահութահարկով հարկումից հետո:

Տես նաև Ծան. 32:

20. Հիմնական միջոցներ

	Հոդ և շենքեր	Փոխադրամիջոց	Համակարգչային սարքավորումներ	Կապիտալ ներդրումներ վարձակալված հիմնական միջոցներում	Այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք						
1 հունվարի 2014թ.	3,372,241	491,231	1,826,244	164,976	1,280,605	7,135,297
Ավելացումներ	443,049	100,865	101,115	1,308	147,612	793,949
Օտարումներ	-	(89,279)	(93,019)	-	(31,549)	(213,847)
31 դեկտեմբերի 2014թ.	3,815,290	502,817	1,834,340	166,284	1,396,668	7,715,399
Ավելացումներ	260,834	140,860	60,767	8,925	64,121	535,507
Օտարումներ	(15,033)	(89,447)	(67,511)	(1,062)	(29,533)	(202,586)
31 դեկտեմբերի 2015թ.	4,061,091	554,230	1,827,596	174,147	1,431,256	8,048,320
Կուտակված մաշվածություն						
1 հունվարի 2014թ.	1,310,417	179,568	1,206,107	38,145	776,037	3,510,274
Մաշվածության ծախս	44,077	49,106	150,181	8,857	98,641	350,862
Օտարումներ	-	(63,699)	(93,019)	-	(30,052)	(186,770)
31 դեկտեմբերի 2014թ.	1,354,494	164,975	1,263,269	47,002	844,626	3,674,366
Մաշվածության ծախս	45,756	56,896	159,144	10,536	99,660	371,992
Օտարումներ	-	(38,720)	(63,759)	(185)	(29,160)	(131,824)
31 դեկտեմբերի 2015թ.	1,400,250	183,151	1,358,654	57,353	915,126	3,914,534
Զուտ հաշվեկշռային արժեք						
31 դեկտեմբերի 2015թ.	2,660,841	371,079	468,942	116,794	516,130	4,133,786
31 դեկտեմբերի 2014թ.	2,460,796	337,842	571,071	119,282	552,042	4,041,033
1 հունվարի 2014թ.	2,061,824	311,663	620,137	126,831	504,568	3,625,023

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկզբնական արժեքը կազմում է 1,050,144 հազար ՀՀ դրամ (2014թ.՝ 1,038,614 հազար ՀՀ դրամ):

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ուներ պայմանագրային պարտավորություններ՝ կապված հիմնական միջոցների հետ՝ 279,240 հազար ՀՀ դրամ գումարով (2014թ.՝ 279,240 հազար), որը ենթակա է վճարման 2016թ. Բանկի ղեկավարությունը արդեն հատկացրել է անհրաժեշտ ռեսուրսները այս պարտավորության գծով: Բանկի ղեկավարությունը կարծում է, որ ապագա զուտ հատկությունները և ֆինանսավորումը բավարար կլինեն այս և համանման այլ պարտավորությունների կատարման համար:

Բանկն իր հիմնական միջոցները հաշվառում է պատմական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը: Ղեկավարության գնահատմամբ Բանկի հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքները էականորեն մոտ են դրանց իրական արժեքներին՝ բացառությամբ հողի և շենքերի: Հաշվետու ժամանակաշրջանից հետո հողի և շենքերի արժեքը վերագնահատվել է անկախ գնահատողի կողմից, որի արդյունքում հողի և շենքերի վերագնահատված արժեքը աճել է 5.5 մլրդ. ՀՀ դրամով: Վերագնահատված արժեքը աուդիտի չի ենթարկվել:

21. Ոչ նյութական ակտիվներ

	Լիցենզիաներ	Համակարգչային ծրագրեր	Այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք				
1 հունվարի 2014թ.	121,999	23,199	14,407	159,605
Ավելացումներ	7,084	14,345	-	21,429
31 դեկտեմբերի 2014թ.	129,083	37,544	14,407	181,034
Ավելացումներ	3,731	-	-	3,731
31 դեկտեմբերի 2015թ.	132,814	37,544	14,407	184,765
Կուտակված ամորտիզացիա				
1 հունվարի 2014թ.	45,450	19,750	5,908	71,108
Ամորտիզացիայի գծով ծախս	11,744	1,960	1,201	14,905
31 դեկտեմբերի 2014թ.	57,194	21,710	7,109	86,013
Ամորտիզացիայի գծով ծախս	12,187	2,248	1,201	15,636
31 դեկտեմբերի 2015թ.	69,381	23,958	8,310	101,649
Չուտ հաշվեկշռային արժեք				
Չուտ հաշվեկշռային արժեք				
31 դեկտեմբերի 2015թ. դրությամբ	63,433	13,586	6,097	83,116
Չուտ հաշվեկշռային արժեք				
31 դեկտեմբերի 2014թ. դրությամբ	71,889	15,834	7,298	95,021
Չուտ հաշվեկշռային արժեք 2014թ. հունվարի 1-ի դրությամբ	76,549	3,449	8,499	88,497

22. Այլ ակտիվներ

	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ստացվելիք գումարներ	19,785	35,028
Այլ ֆինանսական ակտիվների արժեզրկման կորուստ	(198)	(350)
Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ	19,587	34,678
Կանխավճարներ և այլ դեբիտորական պարտք	116,973	220,668
Նյութեր	127,570	138,599
Աշխատակիցներին տրված հատուցումներ	55,296	41,442
Բռնագանձված գույք	83,100	55,351
Թանկարժեք մետաղներ	476	8,825
Այլ ակտիվներ	23,579	17,800
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	406,994	482,685
Նվազեցված արժեզրկման պահուստ	(2,969)	(3,085)
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	404,025	479,600
Ընդամենը այլ ակտիվներ	423,612	514,278

Այլ ակտիվների գծով արժեզրկման կորուստների պահուստի շարժը հետևյալն է.

	Ընդամենը
2014թ. հունվարի 1-ի դրությամբ	12,439
Տարվա ծախս	21,194
Դուրս գրված գումարներ	(42,423)
Վերականգնում	12,225
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,435
Տարվա հակադարձում	(4,622)
Դուրս գրված գումարներ	(317)
Վերականգնում	4,671
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,167

23. ՀՀ Կենտրոնական բանկից և ՀՀ կառավարությունից ստացված վարկեր

	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարկեր ՀՀ Կենտրոնական բանկից	2,759,398	2,416,891
Վարկեր ՀՀ կառավարությունից	4,775	3,630
Ընդամենը վարկեր ՀՀ Կենտրոնական բանկից և ՀՀ կառավարությունից	2,764,173	2,420,521

ՀՀ ԿԲ-ից և ՀՀ Կառավարությունից ստացված վարկերը ներկայացնում են վարկեր ստացված Գերմանա-հայկական հիմնադրամի «Փոքր և միջին բիզնեսի վարկային ծրագրի» ֆինանսավորման շրջանակներում, «Վերականգնվող էներգետիկա» և «Բնակարանային ֆինանսավորում» ծրագրերի շրջանակներում ներգրավված միջոցները:

2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կառավարությունից ստացված վարկերը ներառում են վարկեր ստացված Գերմանա-հայկական հիմնադրամի «Փոքր և միջին բիզնեսի վարկավորման ծրագրի» և «Տնտեսության կայունացման վարկավորում» ծրագրերի ֆինանսավորման շրջանակներում ներգրավված միջոցները:

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ից և ՀՀ Կառավարությունից ստացված վարկերի արժույթը ՀՀ դրամն է: Տարեկան ֆիքսված տոկոսադրույքը տատանվում է 5,5%-ից 9% միջակայքում, ժամկետայնությունը՝ 2016 հունվարի 15-ից մինչև 2020թ. դեկտեմբերի 21-ը:

24. Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարկեր և ավանդներ ֆինանսական կազմակերպություններից	10,608,996	9,176,888
Ֆինանսական կազմակերպությունների ընթացիկ հաշիվներ	447,693	194,558
Այլ բանկերի թղթակցային հաշիվներ	69,905	129,113
Այլ	59,008	100,914
Ընդամենը պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	11,185,602	9,601,473

2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերը և ավանդներն իրենցից ներկայացնում են ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ բանկերից ստացված վարկեր և ավանդներ:

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորություններն արտահայտված են ՀՀ դրամով, Եվրոյով և ԱՄՆ դոլարով, տարեկան ֆիքսված տոկոսադրույքը տատանվում է 0,5%-ից 15% միջակայքում, ժամկետայնությունը՝ 2016 հունվարի 15-ից մինչև 2018թ. հունիսի 29-ը: Տես Ծան. 35-ը:

25. Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և ավանդներ

Միջազգային ֆինանսական կազմակերպություններից վարկերը և ավանդները ներառում են Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկից (ՎԶԵԲ), Սնծովյան Առևտրի և Զարգացման Բանկից Միջազգային Ֆինանսական Կորպորացիայի և Բլյու Օրչարդ Մայքրոֆայնենս Հիմնադրամի (The Blue Orchard Microfinance fund LLC) կողմից ստացված վարկերը:

2015թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ միջազգային ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ ՀՀ դրամով պարտավորությունների գծով միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 13.46% (2014թ. 10.3%), ԱՄՆ դոլարով, Եվրոյով և այլ ազատ փոխարկելի արտարժույթներով պարտավորությունների համար 6.70 % (2014 թ. 5.37 %):

2015թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտված ֆինանսական տարվա համար Բանկը չի ունեցել Միջազգային ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների մայր գումարի կամտոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2014թ.՝ նույնը):

Ընդհանուր առմամբ 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կապիտալի և ֆինանսական որոշակի սահմանված պայմաններ ունեցող վարկերը, ներառյալ հաշվեգրված տոկոսները, ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

	Արժույթ	Ժամկետ	Անվանական դրույթ %	2015թ. դեկտեմբերի 31	Անվանական դրույթ %	2014թ. դեկտեմբերի 31
Բյու Օրչարդ						
Մայքրոֆայնենս						
Հիմնադրամ	ԱՄՆ դոլար	1-2 տարի	Libor 6մ+5.5%	1,451,945	-	-
ՎԶԵԲ	ՀՀ դրամ	1-2 տարի	13.46%	1,001,202	10.30%	1,665,468
Սնծովյան Առևտրի և			Libor			
Զարգացման Բանկ	ԱՄՆ դոլար	1 տարի	6մ+6%	544,403	6.42%	1,055,489
ՎԶԵԲ	ԱՄՆ դոլար	1 տարի	-	-	6.04%	171,389
ՎԶԵԲ	Եվրո	1 տարի	-	-	3.66%	184,057
Ընդամենը				2,997,550		3,076,403

Բանկը պարտավոր է համապատասխանություն ապահովել վերոնշյալ փոխառու միջոցների գծով առկա ֆինանսական դրույթների հետ: Այդ դրույթները ներառում են սահմանված դրույթաչափերը, վարկ/կապիտալ հարաբերակցությունը և ֆինանսական գործունեությանն առնչվող մի շարք այլ տվյալներ: Բանկի կողմից չի արձանագրվել այս դրույթներից որևէ մեկի խախտում 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Բացառություն են կազմում հետևյալները.

1. Գործառնական ծախս/գործառնական արդյունք գործակիցը, Սնծովյան Առևտրի և Զարգացման Բանկ (2015թ. դեկտեմբերի 31-ի և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ)
2. Մեփական կապիտալի գծով մեկ փոխառուի առավելագույն ռիսկի ենթարկվածությունը, Սնծովյան Առևտրի և Զարգացման Բանկ (2015թ. դեկտեմբերի 31-ի և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ)
3. Մեփական կապիտալի գծով Բանկի հետ կապակցված մեկ փոխառուի առավելագույն ռիսկի ենթարկվածությունը՝ Սնծովյան Առևտրի և Զարգացման Բանկ (31 դեկտեմբերի 2015թ. դրությամբ):
4. Մեփական կապիտալի նկատմամբ իրացվելիության բացասական ճեղքվածքի հարաբերակցությունը, Սնծովյան Առևտրի և Զարգացման Բանկ (2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ):
5. Մեկ կողմի գծով ռիսկի ենթարկվածության գործակիցը՝ ՎԶԵԲ (2015թ. դեկտեմբերի 31-ի և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ)
6. Իրացվելի ակտիվների գործակիցը, ՎԶԵԲ (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ):

Այս պայմանագրային դրույթների համար 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը դիմել և 2016թ. փետրվարին Սնծովյան Առևտրի և Զարգացման Բանկից ստացել է զիջում: Նախքան հաշվետու տարվա ավարտը և հետագայում ևս ՎԶԵԲ-ը Բանկին հայտնել է, որ 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՎԶԵԲ-ը համարում է զիջված, սակայն պաշտոնական զիջման նամակ չի տրամադրել Բանկի կողմից տեղի ունեցած խախտումների գծով, հաշվի առնելով հաշվետու ամսաթվին հաջորդող ժամանակաշրջանում Բանկի կապիտալի համալրումը (տես Ծան. 36) և, որպես այդպիսին, պայմանագրային դրույթների խախտումների վերացումը: 2016թ. մարտի 21-ի դրությամբ Բանկը չունեւ ՎԶԵԲ-ից ստացված փոխառությունների գծով խախտումներ: Բանկի իրացվելիության վիճակի վերլուծության նպատակով՝ հաշվի առնելով, որ Սնծովյան Առևտրի և Զարգացման Բանկից ստացված փոխառության գծով ստացված զիջումը տեղի է ունեցել հաշվետու ամսաթվից հետո, ղեկավարությունը ներառել է համապատասխան փոխառությունները ցյախանջ կատեգորիայում, Տես Ծան. 35: Ղեկավարության հաստատուն համոզվածությունն այնպիսին է, որ նշված վարկերն ամբողջությամբ կմարվեն ըստ իրենց պայմանագրով նախատեսված ժամկետների:

26. Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ

	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Իրավաբանական անձ հաճախորդներ		
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	20,300,642	18,009,758
Ժամկետային ավանդներ	5,742,607	4,879,264
	26,043,249	22,889,022
Ֆիզիկական անձինք		
Ընթացիկ/ցպահանջ հաշիվներ	12,641,953	11,607,880
Ժամկետային ավանդներ	23,288,785	23,028,401
	35,930,738	34,636,281
Ընդամենը պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	61,973,987	57,525,303

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրավաբանական անձ հաճախորդների հանդեպ պարտավորությունները կազմում են 722,726 հազար ՀՀ դրամ գումարով ավանդներ (2014թ.: 782,624 հազար ՀՀ դրամ), որոնք իրենցից ներկայացնում են վարկերի, ակրեդիտիվների, երաշխիքների և այլ հարակից գործիքների գծով ապահովվածություններ: Այդ ավանդների իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին:

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի տասը ամենամեծ հաճախորդների ավանդների ընդհանուր գումարը կազմում է 21,085,895 հազար ՀՀ դրամ (2014թ.: 7,663,094 հազար ՀՀ դրամ) կամ հաճախորդների միջոցների ընդհանուր գումարի 34% (2014թ.: 13%):

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդների նկատմամբ ՀՀ դրամով պարտավորությունների գծով միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 5.3% (2014թ.: 5.4%), ԱՄՆ դոլարով, եվրոյով և այլ ազատ փոխարկելի արտարժույթներով պարտավորությունների համար 4.4 % (2014թ.: 4.7 %):

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չի ունեցել իր հաճախորդների նկատմամբ պարտավորությունների մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2014թ.: նույնպես):

27. Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ

	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
	Պայմանա- կան գումար	Ակտիվների իրական արժեք	Պարտավո- րությունների իրական արժեք	Պայմանա- կան գումար	Ակտիվների իրական արժեք	Պարտավո- րությունների իրական արժեք
Առևտրային ածանցյալ գործիքներ						
Արտարժույթային սվոփեր	725,970	-	693	1,945,071	54,263	-
Արտարժույթային սվոփեր	-	-	-	1,752,069	-	19,659
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքներ	725,970	-	693	3,697,140	54,263	19,659

Արտարժույթային սվոփի պայմանագրեր

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են արտարժույթի փոխանակման սվոփ պայմանագրերի գումարները հիմնական արտարժույթների կտրվածքով՝ դեկտեմբերի 31-ի դրությամբ: Ստորև ներկայացված արտարժույթով արտահայտված գումարները փոխարկվում են հաշվետու ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքներով:

	Անվանական գումար	
	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ՀՀ դրամի առք, ԱՄՆ դոլարի վաճառք	725,970	1,394,620
Ռուբլու առք, Եվրոյի վաճառք	-	550,451
ԱՄՆ դոլարի առք, Եվրոյի վաճառք	-	1,752,069
	725,970	3,697,140

28. Ստորադաս փոխառություն

2015թ. ընթացքում Բանկը թողարկել է ստորադաս փոխառություն՝ 2,700,000 հազար ՀՀ դրամի և 3,500,000 ԱՄՆ դոլարի չափով իր վերջնական վերահսկողին՝ Սուբիասյան ընտանիքի անդամներին: 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ԱՄՆ դոլարով գնանշված պարտքի մնացորդը կազմել է 1,702,820 հազար ՀՀ դրամ, իսկ ՀՀ դրամով գնանշված պարտքի մնացորդը կազմել է 2,722,784 հազար ՀՀ դրամ, ներառյալ հաշվեգրված տոկոսը: Ստորադաս փոխառությունների անվանական և արդյունավետ տոկոսադրույքը ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով գնանշված փոխառությունների համար կազմում է համապատասխանաբար 9.5% և 14% և ենթակա են վճարման 7 տարվա ընթացքում: Ստորադաս փոխառության թողարկման արդյունքում ստացված գումարներն ուղղվել են Բանկի կապիտալի համալրմանը և ներառվել են լրացուցիչ կապիտալում (տես նաև Ծան.36):

29. Այլ պարտավորություններ

	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Պարտավորություններ ֆիզիկական անձանց նկատմամբ	173,999	191,896
Կրեդիտորական պարտք	92,586	54,051
Վճարվելիք շահաբաժիններ	52,823	36,552
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	319,408	282,499
Աշխատակիցներին վճարվելիք հատուցումներ	474,496	452,272
Վճարման ենթակա հարկեր, բացի շահութահարկից	148,921	141,754
Այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	-	4,491
Ընդամենը ոչ ֆինանսական պարտավորություններ	623,417	598,517
Ընդամենը այլ պարտավորություններ	942,825	881,016

30. Մեփական կապիտալ

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում էր 2,333,338 հազ. դրամ (2014թ.՝ 2,333,338 հազ.դրամ): Համաձայն կանոնադրության, համալրված բաժնետիրական կապիտալը բաղկացած է թվով 933,335 հատ սովորական անվանական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը համապատասխանաբար 2,500 դրամ անվանական արժեքով: 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի թողարկման ենթակա կապիտալը բաղկացած է եղել 2,500 դրամ անվանական արժեքով 1,066,665 հատ հասարակ բաժնետոմսից:

2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի բաժնետերերն են.

	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Վճարված բաժնետիրական կապիտալ	Ընդամենը վճարված կապիտալի %	Վճարված բաժնետիրական կապիտալ	Ընդամենը վճարված կապիտալի %
Վերակառուցման և Զարգացման				
Եվրոպական Բանկ	466,670	20.0	583,338	25.0
Սարիբեկ Սուբիասյան	527,573	22.6	527,573	22.6
Խաչատուր Սուբիասյան	455,413	19.5	455,413	19.5
Ռոբերտ Սուբիասյան	357,598	15.3	240,930	10.3
Էդուարդ Սուբիասյան	49,040	2.1	49,040	2.1
Այլ բաժնետերեր	477,044	20.5	477,044	20.5
	2,333,338	100.0	2,333,338	100.0

2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում Բանկը հայտարարել և սկսել է 416,670 նոր բաժնետոմսերի բաց բաժանորդագրություն մեկ բաժնետոմսի դիմաց 12,000 ՀՀ դրամ բաժանորդագրության արժեքով: 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը ստացել է 4,001,688 հազար ՀՀ դրամ՝ 333,474 նոր բաժանորդագրված բաժնետոմսերի դիմաց: Ըստ օրենսդրական և կանոնակարգային պահանջների,

ստացված դրամական միջոցները պահվում են ՀՀ կենտրոնական բանկում և սեփական հաշիվներում՝ մինչև նոր բաժանորդագրված բաժնետոմսերի գրանցումը կանոնադրությունում: Բանկը մտադիր է գրանցել և հաշվառել բաժնետիրական կապիտալում տեղի ունեցած փոփոխությունները 2016թ. ընթացքում՝ այդ պահի դրությամբ առկա նոր բաժանորդագրված բաժնետոմսերի համար: Տես նաև ծան. 36:

2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում Ռոբերտ Սուքիասյանը գնել է 46,664 բաժնետոմս ՎՋԵԲ-ից՝ այդպիսով իր բաժնեմասնակցությունը մեծացնելով 10.3%-ից մինչև 15.3% 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: 2015թ. դեկտեմբերի 31-ին ՎՋԵԲ-ին էր պատկանում Բանկի բաժնետոմսերի 20%-ը՝ գումարած մեկ բաժնետոմս (2014թ.՝ Բանկի բաժնետոմսերի 25%-ը՝ գումարած մեկ բաժնետոմս):

2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի սեփականության իրավունքով իրեն պատկանող բաժնետոմսեր: Սովորական բաժնետոմսերի բաժնետերերը իրավունք ունեն ստանալու շահաբաժին և ունեն մեկ բաժնետոմսի դիմաց մեկ ձայնի իրավունք Բանկի տարեկան և ընդհանուր ժողովներում:

Բաժնետերերի միջև բաշխման ենթակա պահուստները հավասար են չբաշխված շահույթի գումարին՝ համաձայն ՀՀ օրենսդրության: Չբաշխվող պահուստներն իրենցից ներկայացնում են պահուստային ֆոնդը, որը ստեղծված է համաձայն կանոնակարգային պահանջների՝ բանկի ընդհանուր ռիսկերի, այդ թվում՝ ապագա կորուստների և այլ չնախատեսված ռիսկերի և այլ պայմանական ռեպլերի համար: Պահուստային ֆոնդը ձևավորվել է ըստ կանոնադրական պահանջների, որտեղ սահմանված է այս նպատակներով պահուստի ձևավորում՝ տեղական օրենսդրության համաձայն ձևակերպված բաժնետիրական կապիտալի ոչ պակաս քան 15% -ի չափով:

Համաձայն 2015թ. մայիսի 12-ին տեղի ունեցած՝ Բանկի բաժնետերերի ժողովի, հայտարարվել են շահաբաժիններ մեկ բաժնետոմսի դիմաց 175 ՀՀ դրամ գումարով, ընդամենը՝ 163,334 հազար ՀՀ դրամ: Նույն ժողովի ժամանակ, պարտադիր ընդհանուր պահուստը համալրվել է՝ կազմելով 6,000,000 հազար ՀՀ դրամ:

31. Պայմանագրային և պայմանական պարտավորություններ

Իրավական և հարկային հարցեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը կարգավորող օրենսդրական դաշտն աչքի է ընկնում հաճախակի կատարվող փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են և պահանջում են մեկնաբանություններ: Շատ դեպքերում, այս կամ այն հարցում տարբեր հարկային և իրավասու մարմիններ ունեն տարբեր մեկնաբանություններ:

Հաճախ հարկային մարմինները պահանջում են լրացուցիչ հարկեր այնպիսի գործարքների և հաշվապահական մեթոդների համար, որոնց գծով պահանջներ չեն ներկայացվել: Արդյունքում կարող են առաջանալ հավելյալ տույժեր և տուգանքներ: Հարկային ստուգումը կարող է ներառել ստուգմանն անմիջապես նախորդող 3 տարին: Որոշ հանգամանքներում հարկերի ստուգումը կարող է ընդգրկել ավելի վաղ ժամանակահատվածներ: Ղեկավարությունը համոզված է, որ Բանկն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և պատշաճ կերպով կատարել է իր հարկային պարտավորությունները:

Ղեկավարությունը նաև կարծում է, որ հիմնական պարտավորությունը, որը բխում է Բանկի դեմ հարուցված դատական հայցերից և բողոքներից, բացասական ազդեցություն չի ունենա բանկի ֆինանսական վիճակի կամ հետագա գործունեության վրա:

Վարկային պարտավորություններ, երաշխիքներ և այլ ֆինանսական պայմանագրեր

Իր գործունեության ընթացքում Բանկը տրամադրում է իր հաճախորդներին արտահաշվեկշռային ռիսկ պարունակող ֆինանսական գործիքներ հաճախորդների կարիքները բավարարելու համար: Նշված ֆինանսական գործիքները ունեն պարտքային ռիսկի տարբեր մակարդակներ և չեն արտացոլվում հաշվեկշռում:

Այս պայմանագրային պարտավորությունների, երաշխիքների և այլ պայմանական պարտավորությունների անվանական կամ պայմանագրային գումարները դեկտեմբերի 31-ի դրությամբ հետևյալն են.

	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Չօգտագործված վարկային գծեր	4,547,262	1,973,894
Ակրեդիտիվներ	25,377	1,746,930
Երաշխիքներ	929,707	350,643
Ընդամենը պայմանագրային պարտավորություններ, երաշխիքներ և այլ պայմանական պարտավորություններ	5,502,346	4,071,467

Պարտավորություններ գործառնական վարձակալության գծով. Բանկը որպես վարձակալ

Բանկն իր բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով կնքում է առևտրային վարձակալության պայմանագրեր շենք և տարածքներ վարձակալելու նպատակով:

	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մինչև 1 տարի	355,489	269,560
1-5 տարի	1,106,714	919,018
5 տարուց ավելի	-	3,020
Ընդամենը պարտավորություններ գործառնական վարձակալության գծով	1,462,203	1,191,598

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում, և այլ երկրներին հատուկ բազմաթիվ ապահովագրության ձևաչափերը հիմնականում դեռևս կիրառելի չեն: Բանկը չի նախատեսում իր գործունեության դադարեցման, ինչպես նաև իր գույքի կամ գործունեության հետ կապված ապահովագրական դեպքերի ժամանակ առաջացող գույքի և շրջակա միջավայրի վնասի՝ երրորդ կողմի նկատմամբ պարտավորության ամբողջական ապահովագրություն: Այնուամենայնիվ, 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, Բանկին սեփականության իրավունքով պատկանող գլխամասային շենքը և փոխադրամիջոցներն ապահովագրված են: Բանկն ունի նաև ապահովագրություն բանկային ընդհանուր պարտավորվածությունների, էլեկտրոնային և համակարգչային հանցագործությունների և մասնագիտական պատասխանատվության համար: Քանի դեռ Բանկը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ բացասական ազդեցություն Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Սկսած 2005թ.-ից Բանկը հանդիսանում է ավանդների հատուցումը երաշխավորող պարտադիր համակարգի անդամ: Նշված համակարգը գործում է համաձայն օրենսդրության պահանջների և կանոնակարգվում է ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին օրենքով: Ապահովագրությունը մարում է Բանկի պարտավորությունները ֆիզիկական անձանց ավանդների գծով 10,000 հազար ՀՀ դրամ ընդհանուր գումարով (մինչև 5,000 հազար ՀՀ դրամ արտարժույթով ավանդների դեպքում) Բանկի սնանկացման և բանկային արտոնագրի հետևանքման դեպքում:

32. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՄՄ 24 «Կապակցված կողմերի բացահայտում» ստանդարտի, կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Բանկի կապակցված կողմերն են՝ նրա և դուստր ընկերությունների բաժնետերերը, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձինք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալի 59.5% (1,389,624 հազար ՀՀ դրամ) պատկանում է Սուքիասյաններին, որոնք հանդիսանում են Բանկի վերջնական վերահսկող: Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկին են պատկանում բաժնետոմսերի 20%-ը գումարած մեկ բաժնետոմս:

Փոխկապակցված կողմերի հետ գործարքները, մնացորդները, եկամուտներն ու ծախսերը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ հետևյալն են.

	2015թ.		
	Բաժնետերեր	Հիմնական ղեկավար անձնակազմ	Դուստր ընկերություններ և ընկերություններ որտեղ Բանկ ունի ներդրում
Հաճախորդներին տրված վարկեր			
Հունվարի 1-ի դրությամբ վճարման ենթակա վարկեր, համախառն	774,927	19,080	-
Տարվա ընթացքում տրված վարկեր	656,696	249,676	-
Տարվա ընթացքում վարկերի մարում	(642,109)	(191,217)	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ վճարման ենթակա վարկեր, համախառն	789,514	77,539	-
Նվազեցված՝ արժեզրկումից կորուստ	(7,604)	(787)	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ վճարման ենթակա վարկեր	781,910	76,752	-
Վարկերի գծով տոկոսային եկամուտ	112,571	5,985	-
Վարկերի գծով կորուստների արժեզրկման գծով մասնահանումներ/(վերականգնումներ)	145	(588)	-
Հաճախորդներին վճարման ենթակա գումարներ			
Ավանդներ հունվարի 1-ի դրությամբ	1,134,180	13,297	-
Տարվա ընթացքում ներդրված ավանդներ	47,430,801	794,455	-
Տարվա ընթացքում մարված ավանդներ	(47,373,691)	(569,723)	-
Ավանդներ դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,191,290	238,029	-
Տոկոսային ծախս ավանդների գծով	100,490	17,985	-
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ			
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ հունվարի 1-ի դրությամբ	2,027,113	-	196,829
Ավելացումներ տարվա ընթացքում	340	-	5,727,861
Նվազումներ տարվա ընթացքում	(1,014,404)	-	(5,659,318)
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,013,049	-	265,372
Տոկոսային ծախս	255,446	-	34,924
Ստորադաս փոխառություն			
Ստորադաս փոխառություն հունվարի 1-ի դրությամբ	-	-	-
Թողարկված տարվա ընթացքում	4,425,604	-	4,425,604
Ստորադաս փոխառություն դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,425,604	-	4,425,604
Տոկոսային ծախս	394,836	-	394,836
Բաժնետոմսերի թողարկման համար ստացված կանխավճարներ			
Հունվարի 1-ի դրությամբ	-	-	-
Ավելացումներ	4,001,688	-	4,001,688
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,001,688	-	4,001,688

	2015թ.		
	Բաժնետերեր	Հիմնական դեկավար անձնակազմ	Դուստր ընկերություններ և ընկերություններ որտեղ Բանկ ունի ներդրում
Հիմնական միջոցների ձեռքբերում	26,684		
Տրամադրված երաշխիքներ	96,750	-	6,000
Այլ ծախսեր			
Կոմիսիոն և այլ միջնորդավճարների գծով եկամուտ	2,750	171	193
Գովազդային ծախսեր	47,794	-	-
Ապահովագրական ծախսեր	-	-	91,441
Ինկասացիոն ծախսեր	-	-	-
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	261,640	-	-
Գործուղման ծախսեր	13,631	-	-
Այլ ծախսեր	200	-	-
	2014թ.		
	Բաժնետերեր	Հիմնական դեկավար անձնակազմ	Դուստր ընկերություններ և ընկերություններ որտեղ Բանկ ունի ներդրում
Հաճախորդներին տրված վարկեր			
Հունվարի 1-ի դրությամբ վճարման ենթակա վարկեր, համախառն	568,854	55,852	136,396
Տարվա ընթացքում տրված վարկեր	904,608	19,296	-
Տարվա ընթացքում վարկերի մարում	(698,535)	(56,068)	(136,396)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ վճարման ենթակա վարկեր, համախառն	774,927	19,080	-
Նվազեցված՝ արժեզրկումից կորուստ	(7,749)	(199)	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ վճարման ենթակա վարկեր	767,178	18,881	-
Վարկերի գծով տոկոսային եկամուտ	92,416	2,506	434
Վարկերի գծով կոուստների արժեզրկման գծով վերականգնումներ	(4,495)	(605)	(2,126)
Հաճախորդներին վճարման ենթակա գումարներ			
Ավանդներ հունվարի 1-ի դրությամբ	261,946	35,892	-
Տարվա ընթացքում ներդրված ավանդներ	15,502,985	312,850	-
Տարվա ընթացքում մարված ավանդներ	(14,630,751)	(335,445)	-
Ավանդներ դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,134,180	13,297	-
Տոկոսային ծախս ավանդների գծով	82,193	106	-
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ			
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ հունվարի 1-ի դրությամբ	2,654,434	-	261,576
Ավելացումներ տարվա ընթացքում	731,266	-	5,674,831
Նվազումներ տարվա ընթացքում	(1,358,587)	-	(5,739,578)
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,027,113	-	196,829
Տոկոսային ծախս	274,571	-	21,314
Հիմնական միջոցների ձեռքբերում	37,588	-	-
Տրամադրված երաշխիքներ	81,606	-	4,500
Այլ ծախսեր			
Կոմիսիոն և այլ միջնորդավճարների գծով եկամուտ	3,904	53	216
Գովազդային ծախսեր	48,413	-	-
Ապահովագրական ծախսեր	-	-	70,600
Ինկասացիոն ծախսեր	-	-	160,000
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	185,420	-	-
Գործուղման ծախսեր	-	-	-
Այլ ծախսեր	1,200	-	-

2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարում տնօրենների և առանցքային ղեկավար անձնակազմի ընդհանուր վարձատրության չափը կազմել է 306,982 ՀՀ դրամ (2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարում՝ 307,060 հազար ՀՀ դրամ): Առանցքային ղեկավար անձնակազմը ներառում է Տնօրինության և Տնօրենների խորհրդի անդամներին:

2015թ. ընթացքում Բանկի ներդրումը իր ասոցիացված կազմակերպությունում նվազել է 20%-ից մինչև 15.17%՝ ասոցիացված կազմակերպության կողմից լրացուցիչ բաժնետոմսերի թողարկման արդյունքում: Լրացուցիչ բաժնետոմսերը գնվել են Բանկի բաժնետիրոջ կողմից, որը Սուբհասյանների ընտանիքի անդամ է:

33. Ֆինանսական գործիքների իրական արժեքը

Բանկը կատարել է իր ֆինանսական գործիքների գնահատում, ինչպես պահանջվում է ՖՀՄՍ 7 Ֆինանսական գործիքները. Բացահայտումներ ստանդարտով:

Գնանշված վաճառքի համար մատչելի ակտիվների գնահատված իրական արժեքները հիմնված են հաշվետվության օրվա դրությամբ շուկայական գների վրա առանց գործարքի ծախսերի նվազեցման: Բոլոր այլ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքները հաշվարկվում են՝ օգտագործելով գեղչված դրամական հոսքերը և հաշվետու օրվա դրությամբ նմանատիպ գործիքների գեղչային դրույքները:

Իրական արժեքի գնահատումը մոտավորապես համապատասխանում է այն գումարին, որով ֆինանսական գործիքը կարող է փոխանակվել իրազեկ, պատրաստական կողմերի միջև: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անորոշությունները և սուբյեկտիվ գնահատումը, իրական արժեքը չպետք է մեկնաբանվի որպես ակտիվների կամ պարտավորությունների անմիջապես վաճառքի գումար:

Բանկը չափում է ֆինանսական գործիքների իրական արժեքը ներկայացված ֆինանսական վիճակի հաշվետվությունում, օգտագործելով հետևյալ իրական արժեքի աստիճանակարգը, որն արտացոլում է գնահատման մեջ կիրառվող չափանիշների նշանակալիությունը.

- Մակարդակ 1: Համանման գնանշված գործիքի շուկայական արժեքը (չճշգրտված) ակտիվ շուկայում
- Մակարդակ 2: Գնահատման մեթոդներ հիմնված դիտարկելի չափանիշների վրա, ուղղակի (օր., ինչպես գները) կամ անուղղակի ձևով (օր., գներից բխող): Այս մակարդակը ներառում է այն գործիքները, որոնք գնահատվում են՝ օգտագործելով ակտիվ շուկայում նման գնանշված գործիքների շուկայական արժեքը, շուկայում գնանշված համանման կամ նմանատիպ գործիքների շուկայական արժեքը, որոնք ենթադրվում են ավելի քիչ ակտիվ շուկա, կամ այլ գնահատման մեթոդներ, որտեղ բոլոր նշանակալի չափանիշները ուղղակի կամ անուղղակի դիտարկելի են շուկայի տվյալներից:
- Մակարդակ 3: Գնահատման մեթոդներ, որոնք օգտագործում են նշանակալի ոչ դիտարկելի չափանիշներ: Այս մակարդակը ներառում է բոլոր գործիքները, որտեղ գնահատման մեթոդը ներառում է չափանիշներ, որոնք հիմնված չեն դիտարկելի տվյալների վրա և ոչ դիտարկելի չափանիշները ունեն նշանակալի ազդեցություն գործիքների գնահատման մեջ: Այս մակարդակը ներառում է այն գործիքները, որոնք գնահատվում են՝ հիմնվելով շուկայական գնի վրա, որտեղ նշանակալի ճշգրտումներ կամ ենթադրություններ են անհրաժեշտ գործիքների տարբերությունները արտացոլելու համար:

Բանկի ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքը՝ չափված իրական արժեքով շարունակական հիմունքով. Բանկի ֆինանսական ակտիվներից և ֆինանսական պարտավորություններից մի քանիսը չափվում են իրական արժեքով՝ յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի վերջին: Հետևյալ աղյուսակը տրամադրում է տեղեկատվություն այդ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքների որոշման վերաբերյալ (մասնավորապես գնահատման տեխնիկաները և ելակետային տվյալները).

Ֆինանսական ակտիվներ/ ֆինանսական պարտավորություններ	Իրական արժեքը		Իրական արժեքի հիերարխիա	Գնահատման տեխնիկա(ներ) և հիմնական ելակետային տվյալ(ներ)	Էական ոչ դիտարկելի եղակետային տվյալ(ներ)	Ոչ դիտարկելի եղակետային տվյալների հարաբերակցությունը իրական արժեքին
	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
Հետգնման պայմանագրերով գրավադրված ոչ պետական արժեթղթեր	283,757	294,342	Մակարդակ 2	Նախասահմանված դրամական հոսքերը գեղջված են այն դրույթաչափով, որն արտացոլում է մինչև մարման ժամկետն ընկած շուկայի եկամտաբերությունը	կ/չ	կ/չ
Բանկի կողմից պահվող ՀՀ պետական արժեթղթեր	84,751	-	Մակարդակ 2	Նախասահմանված դրամական հոսքերը գեղջված են այն դրույթաչափով, որն արտացոլում է մինչև մարման ժամկետն ընկած շուկայի եկամտաբերությունը	կ/չ	կ/չ
Հետգնման պայմանագրերով գրավադրված ՀՀ պետական արժեթղթեր	8,244,031	5,824,469	Մակարդակ 2	Զեղջված դրամական հոսքեր Նախասահմանված դրամական հոսքերը գեղջված են այն դրույթաչափով, որն արտացոլում է մինչև մարման ժամկետն ընկած շուկայի եկամտաբերությունը	կ/չ	կ/չ
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	-	54,263	Մակարդակ 2	Ապագա դրամական հոսքերը գնահատված են հիմք ընդունելով գնահատված ֆորվարդային փոխարժեքները և պայմանագրերի ֆորվարդային դրույթաչափերը՝ գեղջված տարբեր գործընկերների վարկային ռիսկերը արտացոլող դրույթաչափով	կ/չ	կ/չ
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	693	19,659	Մակարդակ 2	Ապագա դրամական հոսքերը գնահատված են հիմք ընդունելով գնահատված ֆորվարդային փոխարժեքները և պայմանագրերի ֆորվարդային դրույթաչափերը՝ գեղջված տարբեր գործընկերների վարկային ռիսկերը արտացոլող դրույթաչափով	կ/չ	կ/չ

Իրական արժեքի գնահատումը մոտավորապես համապատասխանում է այն գումարին, որով ֆինանսական գործիքը կարող է փոխանակվել իրագել, պատրաստական կողմերի միջև: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անորոշությունները և սուբյեկտիվ գնահատումը, իրական արժեքը չպետք է մեկնաբանվի որպես ակտիվների կամ պարտավորությունների անմիջապես վաճառքի գումար, ինչպես նաև այստեղ ներկայացված գնահատումները պարտադիր կերպով չեն արտացոլում այն գումարները, որոնք Բանկը կարող է ստանալ որոշակի գործիքի շուկայական փոխանակման արդյունքում: Անհրաժեշտ է տրամաբանորեն մեկնաբանել շուկայական տվյալները, գնահատված իրական արժեքը որոշելու համար: Հայաստանի Հարապետության շուկան կարելի է բնութագրել որպես զարգացող, և տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել ֆինանսական շուկաներում գործունեության ծավալները: Շուկայի գնանշումները կարող են հնացած լինել կամ արտացոլել վաճառքի գործարքների կրճատում և արդյունքում չեն արտացոլի ֆինանսական գործիքների իրական արժեքները: Ղեկավարությունն օգտագործել է շուկայի ամբողջ հասանելի տեղեկատվությունը ֆինանսական գործիքների իրական արժեքը գնահատելու:

Վերը նշված աղյուսակը չի ներառում վաճառքի համար մատչելի բաժնային գործիքները՝ 253,463 հազար ՀՀ դրամ գումարով (2014թ. դեկտեմբերի 31-ին՝ 49,478 հազար ՀՀ դրամ), որի գծով առկա չէ ակտիվ շուկայում գնանշված շուկայական գին և որի իրական արժեքը հնարավոր չէ արժանահավատորեն չափել՝ նման գործիքների շուկայից ելնելով: Ներկայումս Բանկը մտադիր չէ օտարել այդ գործիքները:

Հաշվետու ժամանակահատվածում տեղի չեն ունեցել փոխանցումներ Մակարդակ 1-ից 2:

Ակնկալվող դրամական հոսքերի գեղջման նպատակով օգտագործված տոկոսադրույքները հիմնված են պետական պարտատոմսերի եկամտաբերության կորի վրա հաշվետու ամսաթվի դրությամբ, գումարած գործիքի արժույթը, ժամկետայնությունը և գործընկերոջ վարկային ռիսկը՝ հետևյալ կերպ

	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	10.90%-15.74%	8.36%-14,36%

Բանկի՝ շարունակական հիմունքով իրական արժեքով չչափվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեք և հաշվեկշռային արժեք

Ֆիքսված տոկոսադրույքով գործիքների գնահատված իրական արժեքը հիմնված են գնահատված ապագա դրամական հոսքերի վրա, որոնք պետք է ստացվեն՝ համանման վարկային ռիսկ և մնացած մարման ժամկետ ունեցող նոր գործիքների դեպքում գեղջվելով ընթացիկ տոկոսադրույքներից: Բացառությամբ ստորև նշված դեպքերի, դեկավարությունը գտնում է, որ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը մոտավորապես հավասար է դրանց իրական արժեքին:

Ակտիվ շուկայում չգնանշված՝ ֆիքսված տոկոսադրույքով ավանդների և այլ փոխառությունների գնահատված իրական արժեքը հիմնված է դրանց գեղջված դրամական հոսքերի վրա՝ օգտագործելով համանման մարման ժամկետներով նոր պարտքերի գծով գեղջված տոկոսադրույքները: Բացառությամբ ստորև նշված դեպքերի, դեկավարությունը գտնում է, որ ֆինանսական պարտավորությունների հաշվեկշռային արժեքը մոտավորապես հավասար է դրանց իրական արժեքին:

	31 դեկտեմբերի, 2015թ.		31 դեկտեմբերի, 2014թ.	
	Հաշվեկշռային արժեք	Իրական արժեք	Հաշվեկշռային արժեք	Իրական արժեք
Հաճախորդներին տրված վարկեր	59,175,240	57,673,874	52,057,388	51,269,897
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	(61,973,987)	(61,926,558)	(57,525,303)	(57,498,541)

34. Կապիտալի ռիսկի կառավարում

Բանկը կառավարում է իր կապիտալն՝ ապահովելու Բանկի գործունեության անընդհատության սկզբունքը միևնույն ժամանակ առավելագույնի հասցնելով շահագրգիռ կողմերի հատույցը ներգրավված և սեփական միջոցների հավասարակշռության օպտիմալացման ճանապարհով:

Բանկի կապիտալի կառուցվածքը բաղկացած է պարտքից և բաժնետիրական կապիտալը տնօրինողներին բաշխման ենթակա սեփական կապիտալից, որն իրենից ներկայացնում է թողարկված կապիտալը, պահուստները և չբաշխված շահույթը, ինչպես բացահայտված է սեփական կապիտալի փոփոխությունների մասին հաշվետվությունում:

Տնօրինությունը վերանայում է կապիտալի կառուցվածքը կիսամյակային կտրվածքով: Բանկի կապիտալի համարժեքությունը սահմանվում և վերահսկվում է՝ օգտագործելով ՀՀ ԿԲ կողմից սահմանված սահմանաչափերը: Որպես նման վերանայման մի մաս, Խորհուրդը դիտարկում է կապիտալի ինքնարժեքը և կապիտալի յուրաքանչյուր դասին առնչվող ռիսկերը: Խորհրդի առաջարկությունների հիման վրա Բանկն իր ընդհանուր կապիտալի կառուցվածքը կառուցում է շահութաբաժինների վճարման, նոր բաժնետոմսերի թողարկման, ինչպես նաև պարտքի թողարկման միջոցով: Ի լրումն, Բանկը կառավարում է իր կապիտալը՝ պայմանագրային պահանջների իրականացման համար:

ՀՀ կենտրոնական բանկը Բանկի համար սահմանում և վերահսկում է կապիտալի պահանջները: Ըստ ՀՀ ԿԲ կողմից սահմանված՝ ներկայումս գործող կապիտալի պահանջների, Բանկը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պետք է ապահովի 5,000,000 հազար ՀՀ դրամ նվազագույն բաժնետիրական կապիտալ (2014թ. դեկտեմբերի 31-ին՝ 5,000,000 հազար ՀՀ դրամ) իսկ կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցությունը՝ 12% (2014թ. դեկտեմբերի 31-ին՝ 12%):

Հետևյալ աղյուսակը վերլուծում է Բանկի կանոնակարգային կապիտալի հարաբերակցությունը՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված սկզբունքների:

	31 դեկտեմբերի 2015թ. աուդիտ չարված	31 դեկտեմբերի 2014թ. աուդիտ չարված
Հիմնական կապիտալ	8,885,655	8,957,704
Լրացուցիչ կապիտալ	4,385,733	338,037
Ընդհանուր կապիտալ	13,271,388	9,295,741
Ռիսկով կշռված ակտիվներ	81,922,148	73,458,606
Ընդհանուր կապիտալը՝ ռիսկով կշռված ակտիվներում տոկոսային արտահայտությամբ (ընդհանուր կապիտալի հարաբերակցություն)	16.20%	12.65%
Համապատասխանություն նվազագույն բաժնետիրական կապիտալի և ընդհանուր կապիտալի պահանջներին	Տարվա ընթացքում խախտումներ չեն արձանագրվել	Տարվա ընթացքում խախտումներ չեն արձանագրվել

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ըստ ռիսկերի կշիռների՝ դասակարգված համաձայն յուրաքանչյուր ակտիվի և պայմանագրային կողմի հետ առնչվող վարկային, շուկայական և գործառնական ռիսկերի գնահատման, և հաշվի առնելով ցանկացած ընդունելի ապահովվածությունը և երաշխիքները:
Համանման մոտեցում է ձևավորված նաև չճանաչված պայմանագրային պարտավորությունների գծով՝ որոշակի ճշգրտումներ կատարելով հնարավոր կորուստների պայմանական բնույթն արտացոլելու նպատակով:

Ընդհանուր կապիտալը կազմված է հիմնական կապիտալից, որը ներառում է կանոնադրական կապիտալը, չբաշխված շահույթը, այդ թվում ընթացիկ տարվա շահույթը, գլխավոր պահուստը: Ընդհանուր կապիտալը հաշվարկվում է ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտների պահանջների համաձայն: Կապիտալի մեկ այլ բաղադրիչ է լրացուցիչ կապիտալը, որն ընդգրկում է վերագնահատման պահուստները:

2014թ. ՀՀ կենտրոնական բանկը ՀՀ տարածքում գործող բանկերի և բանկային լիցենզիա ունեցող ֆինանսական կազմակերպությունների համար 2017թ. հունվարի 1-ի դրությամբ սահմանել է 30,000,000 հազար ՀՀ դրամ նվազագույն կապիտալի պահանջ: Բանկը այս պահանջը բավարարելու է 2017թ. հունվարի 1-ի դրությամբ՝ այդ նպատակով Հայաստանի Հանրապետությունում գործող մեկ այլ բանկի հետ համաձայնեցված և հայտարարված միացման, ստորադաս փոխառության և լրացուցիչ բաժնետոմսերի թողարկման, ինչպես նաև ևս մեկ միացման վերաբերյալ ընթացող բանակցությունների միջոցով: Սույն ֆինանսական հաշվետվությունների թողարկման ամսաթվի դրությամբ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ տես Ծան.36:

35. Ռիսկերի կառավարում

Բանկային գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանություն, որը ենթադրում է ռիսկայնության աստիճանների որոշակի համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում: Ռիսկի կրումը ֆինանսական գործունեության անբաժանելի մասն է, ընդ որում գործառնական ռիսկերը գործունեության ընթացքում անխուսափելի են: Այդուհանդերձ, Բանկի նպատակն է հասնել ռիսկերի և օգուտների միջև համապատասխան հավասարակշռության՝ ռիսկ-եկամուտ օպտիմալ հարաբերակցության միջոցով՝ նվազագույնի հասցնելով Բանկի ֆինանսական վիճակի վրա անցանկալի ազդեցությունները: Բանկի ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է՝ ախտորոշել, բացահայտել, գնահատել և վերլուծել ռիսկերը, սահմանել ռիսկի համապատասխան սահմանաչափեր և հսկողություն, արժանահավատ և նորացված տեղեկատվական համակարգերի միջոցով վերահսկել ռիսկերը և սահմանաչափերի պահպանումը: Բանկը պարբերաբար վերանայում է ռիսկերի կառավարման քաղաքականությունը և համակարգերը՝ շուկայում, արտաքին միջավայրում տեղի ունեցած փոփոխություններն արտացոլելու և առկա լավագույն փորձին համապատասխանեցնելու համար:

Ռիսկերի կառավարման կառուցվածք

Ռիսկերի բացահայտման և վերահսկման պատասխանատու մարմիններն են՝

Խորհուրդ

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման ընդհանուր վերահսկողության, ռազմավարության հաստատման և ռիսկերի կառավարման սկզբունքների հաստատման համար: Խորհուրդը տրամադրում է սկզբունքներ ռիսկի ամբողջական կառավարման համար, ինչպես նաև քաղաքականություն՝ հատուկ բնագավառների վերաբերյալ, ինչպիսիք են փոխարժեքային (արտարժույթային) ռիսկը, տոկոսադրույքի ռիսկը, վարկային ռիսկը, ածանցյալ և ոչ ածանցյալ ֆինանսական գործիքների կիրառումը:

Վարչություն

Վարչությունը պատասխանատու է ռիսկերի կառավարման գործընթացի անխափան իրականացման և վերահսկման համար: Վարչությունը ընդհանուր պատասխանատվություն է կրում ռիսկերի կառավարման ռազմավարության, սկզբունքների, հայեցակարգերի, քաղաքականության և սահմանների մշակման ու կիրառման համար: Այն պատասխանատու է ռիսկերի կառավարման խնդիրների լուծման համար և վերահսկում է դրանց նկատմամբ ընդունված համապատասխան որոշումների կատարումը:

Ռիսկերի կառավարման ստորաբաժանում

Ռիսկերի կառավարումն իրականացվում է «Ռազմավարության և Ռիսկերի Կառավարման Վարչության» (ՌՌԿՎ) կողմից՝ ըստ Խորհրդի հաստատած քաղաքականության: ՌՌԿՎ կողմից գնահատվում, բացահայտվում, վերլուծվում և հեջավորվում են ռիսկերը՝ գործառնական ստորաբաժանումների հետ սերտ համագործակցության միջոցով: Ռիսկերի կառավարման ստորաբաժանումը պատասխանատու է ռիսկերի կառավարման սկզբունքների վերահսկման, քաղաքականության և Բանկի ռիսկի սահմանաչափերի համար, ինչպես նաև ռիսկերի կառավարման հետ կապված գործընթացների ներդրման և իրականացման համար:

Ներքին աուդիտ

Ներքին աուդիտը պատասխանատու է ռիսկերի կառավարման անկախ գնահատման և հսկողության ընդհանուր միջավայրի համար: Բանկի կողմից իրականացվող ռիսկերի կառավարման գործընթացը յուրաքանչյուր տարի ստուգման է ենթարկվում ներքին աուդիտի կողմից, որը ստուգում է ինչպես ընթացակարգերի ամբողջականությունը, այնպես էլ Բանկի գործունեության համապատասխանությունը ընթացակարգերին: Ներքին աուդիտը անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է ղեկավարության հետ և իր եզրակացություններն ու առաջարկները ներկայացնում է կառավարման համապատասխան մարմիններին:

Ռիսկերի գնահատման և ռիսկերի ներկայացման համակարգեր

Բանկի ռիսկերի գնահատման ընթացքում հաշվի է առնվում ինչպես սպասվող կորուստը, որն իրենից ներկայացնում է գործունեության ընթացքում կորուստների հնարավոր միջին մակարդակ, այնպես էլ հնարավոր անսպասելի կորուստները, որոնք իրենցից ներկայացնում են սպասվող միջին մակարդակը գերազանցող կորուստներ: Բանկը նաև մոդելավորում է քիչ հավանական, սակայն պոտենցիալ էական ազդեցություն ունեցող «վատթարագույն դեպքերը»:

Ռիսկերի մոնիթորինգը և կառավարումը հիմնականում հիմնված է Բանկի կողմից սահմանված ռիսկերի սահմանաչափերի վրա: Այս սահմանաչափերն արտացոլում են Բանկի գործարար ռազմավարությունը և շուկայական պայմանները, որոնցում գործում է Բանկը, ինչպես նաև Բանկի համար ընդունելի ռիսկի մակարդակը, ընդ որում հատուկ ուշադրություն է դարձվում առանձին ոլորտների վրա:

Գործունեության առանձին տեսակների գծով ստացվող տեղեկատվությունն ուսումնասիրվում և մշակվում է ռիսկերի վերլուծության, վերահսկողության և գնահատման նպատակով: Տվյալ տեղեկատվության հիման վրա կազմված հաշվետվությունները պարունակում են տեղեկություններ վարկային ռիսկի չափի, վարկային ցուցանիշների կանխատեսվող մակարդակի, ռիսկի սահմանված սահմանաչափերի, դրանցից բացառությունների, VaR գնահատականի, իրացվելիության ցուցանիշների և ընդհանուր ռիսկի մակարդակի փոփոխության վերաբերյալ: Բանկի վարչությունը յուրաքանչյուր ամիս ստանում է ռիսկերի վերաբերյալ մանրամասն հաշվետվություն ըստ ոլորտների, հաճախորդների և աշխարհագրական շրջանների, որը պարունակում է ամբողջ անհրաժեշտ տեղեկատվությունը Բանկի ռիսկերի գնահատման և համապատասխան որոշումների կայացման համար:

Յուրաքանչյուր օր անց է կացվում ղեկավարության կարճատև խորհրդակցություն, անհրաժեշտության դեպքում Բանկի այլ աշխատակիցների մասնակցությամբ, որտեղ քննարկվում են սահմանված սահմանաչափերի պահպանումը, վերլուծվում է ռիսկի մակարդակը, ներդրումները, իրացվելիությունը և այլ ընթացիկ հարցեր:

Ռիսկերի նվազեցում

Ռիսկերի նվազեցման գործընթացն իրենից ներկայացնում է ռիսկերի առաջացման հնարավորությունը կամ դրա ազդեցությունը նվազեցնելու, կամ այդ երկու գործոնների մեղմման ուղղությամբ ձեռնարկվող լրացուցիչ միջոցառումների իրականացում: Իր ընդհանուր ռիսկերի կառավարման գործընթացի շրջանակներում Բանկն օգտագործում է ածանցյալ և այլ գործիքներ: Բանկն ակտիվորեն օգտագործում է գրավի միջոցները՝ վարկային ռիսկը նվազեցնելու ուղղությամբ (ավելի մանրամասն՝ տես ստորև):

Ռիսկի համակենտրոնացումներ

Ռիսկի համակենտրոնացումներն առաջանում են, երբ մի շարք փոխառուներ իրականացնում են նմանատիպ գործունեություն, կամ գործունեությունը ծավալվում է միևնույն աշխարհագրական շրջանում, կամ նրանք ունեն համանման տնտեսական հատկանիշներ, և տնտեսական, քաղաքական կամ այլ պայմաններում փոփոխության արդյունքում ցուցաբերում են նմանատիպ ազդեցություն այդ փոխառուների պայմանագրային պարտավորությունների կատարման ունակության վրա: Ռիսկի համակենտրոնացումները արտացոլում են Բանկի գործունեության արդյունքների զգայունությունը պայմանների փոփոխություններին, որոնք ազդեցություն են ունենում կոնկրետ բնագավառի կամ աշխարհագրական շրջանի վրա: Համակենտրոնացումների բարձր մակարդակից խուսափելու նպատակով Բանկի քաղաքականությունը և գործընթացները ներառում են հատուկ սկզբունքներ ուղղված դիվերսիֆիկացված պորտֆելի պահպանմանը, ինչպես նաև իրականացվում է համակենտրոնացումների հաստատված սահմանաչափերի պահպանման անընդհատ մոնիթորինգ և կառավարում:

Վարկային ռիսկ

Բանկի գործունեությունը ենթարկվում է վարկային ռիսկի՝ կապված պարտատիրոջ կողմից պարտավորության չկատարելու հետ, ինչը կարող է Բանկին կորուստներ պատճառել: Վարկային ռիսկը Բանկի կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով էլ Բանկն այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկում: Վարկային ռիսկը կապված է հիմնականում վարկային գործառնությունների հետ, որոնք հանգեցնում են վարկերի տրամադրմանը և ներդրումային գործունեության հետ, որոնք Բանկի ակտիվների պորտֆելի մեջ ավելացնում են պարտքային արժեթղթեր և այլ պարտքային գործիքներ: Ռիսկն առկա է նաև արտահաշվեկշռային ֆինանսական գործիքներում, ինչպիսիք են վարկային պարտավորությունները: Վարկային ռիսկի կառավարումը և հսկողությունը իրականացվում է Բանկի ՌԻԿՎ և վարկային ստորաբաժանման կողմից, որի վերաբերյալ հաշվետվությունները պարբերաբար ներկայացվում են Բանկի Խորհրդին և վարչությանը:

Բանկի ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը լավագույնս ներկայացնում է նրանց վարկային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը՝ առանց հաշվի առնելու պահվող գրավը կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցները:

Վարկային ռիսկի առավելագույն չափը: Բանկի վարկային ռիսկի առավելագույն չափը զգալիորեն տատանվում է և կախված է և՛ անհատական ռիսկերից, և՛ ընդհանուր շուկայական տնտեսության ռիսկերից:

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է վարկային ռիսկի առավելագույն չափը հաշվեկշռային ֆինանսական ակտիվների գծով: Հաշվեկշռային ֆինանսական ակտիվների գծով առավելագույն ռիսկը հավասար է այդ ակտիվների հաշվեկշռային արժեքին նախքան որևէ հաշվանցում կամ գրավի ազդեցություն հաշվի առնելը:

	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	18,416,634	16,962,428
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	7,167,812	5,147,575
Հակադարձ հետգնման պայմանագրեր	832,166	1,255,797
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող		
ֆինանսական ակտիվներ	-	54,263
Հաճախորդներին տրված վարկեր	59,175,240	52,057,388
<i>Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ</i>		
- Բանկի կողմից պահվող	338,213	49,478
- Հետգնման պայմանագրերով գրավադրված	8,527,788	6,118,811
Այլ ակտիվներ	19,587	34,678
	94,477,440	81,680,418

Բանկի վարկային ռիսկի գնահատման վերլուծությունում հաշվանցման ազդեցությունը էական չէ: Բանկն ունի վարկերի դիմաց ապահովվածության նպատակով հաճախորդներից ստացված անշարժ գույքի, ակտիվների գծով այլ արժեթղթերի, երաշխիքների տեսքով ստացված գրավներ: Դրանց արժեքների գնահատականը հիմնված է փոխառության պահին գնահատված գրավի արժեքի հիման վրա, և որպես կանոն չեն վերանայվում, բացառությամբ այն դեպքերի, երբ վարկն առանձին վերցրած համարվում է արժեզրկված: Վարկային ռիսկի գծով ստացված գրավները քննարկվում ստորև այս ծանոթագրությունում:

Որպես կանոն, գրավ չի պահվում ածանցյալ ֆինանսական գործիքներով առկա հայցերի, արժեթղթերում ներդրումների, բանկերին տրված վարկերի մասով, բացառությամբ այն դեպքերի, երբ արժեթղթերը պահվում են որպես հակադարձ հետգնման և արժեթղթերի փոխառությունների գործառնությունների մաս:

Վարկային ռիսկի առավելագույն չափի համակենտրոնացումը

Բանկը համակարգում է իր ստանձնած վարկային ռիսկի մակարդակը, սահմանափակելով մեկ փոխառուի կամ վարկառուների խմբերի հաշվով ստանձնած ռիսկի գումարը, ինչպես նաև արդյունաբերության ճյուղերը (և աշխարհագրական հատվածները): Վարկային ռիսկի սահմանափակումները վարկառուի և վարկավորման տեսակի (ըստ ոլորտի, ըստ տարածաշրջանի) հաստատվում և վերանայվում են վարչության կողմից: Փաստացի ռիսկերի և դրանց սահմանաչափերի միջև համեմատությունը ենթարկվում է մոնիթորինգի օրական կտրվածքով:

Ըստ անհրաժեշտության, և վարկերի մեծամասնության դեպքում, Բանկը ձեռք է բերում գրավ, ինչպես նաև կորպորատիվ և անհատական մակարդակի երաշխիքներ: Սակայն, վարկերի մի տարատեսակ է ֆիզիկական անձանց վարկավորումը, որտեղ նման գործիքները հնարավոր չէ կիրառել: Նման ռիսկերը վերահսկվում են շարունակական հիմունքներով և ենթակա է տարեկան կամ ավելի հաճախակի վերանայման:

Վարկը տրամադրելու պարտավորությունները իրենցից ներկայացնում են վարկի չօգտագործված մասը վարկերի, երաշխիքների կամ ակրեդիտիվների տեսքով: Վարկային ռիսկը հետհաշվեկշռային ֆինանսական գործիքներում սահմանվում է որպես գործընկերոջ կողմից պայմանագրային ժամկետների և պայմանների պահպանման անկարողության հետևանքով կորուստների հավանականություն: Ինչ վերաբերում է վարկ տրամադրելու պարտավորությունների գծով վարկային ռիսկին, Բանկը ենթարկվում է վնաս կրելու ռիսկի՝ ընդհանուր չօգտագործված պարտավորությունների չափով: Սակայն, հավանական վնասի չափն ավելի պակաս է քան ընդհանուր չօգտագործված պարտավորությունների չափը, քանի որ վարկավորման պարտավորությունների ստանձնումը պայմանավորված է հաճախորդների կողմից վարկավորման որոշակի չափանիշներին պահպանմամբ: Բանկը պայմանական պարտավորությունների նկատմամբ կիրառում է նույն

վարկային քաղաքականությունը, ինչ որ հաշվեկշռային ֆինանսական գործիքների նկատմամբ, այսինքն՝ վարկի տրամադրման ընթացակարգերի պահպանում՝ կիրառելով ռիսկի մեղմման սահմանաչափեր և ընթացիկ մոնիտորինգի միջոցառումներ: Բանկը իրականացնում է հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների մոնիտորինգ, քանի որ երկարաժամկետ պարտավորությունները, ընդհանուր առմամբ, պարունակում են ավելի մեծ վարկային ռիսկ, քան կարճաժամկետ պարտավորությունները:

Վերանայված վարկեր և փոխատվություններ

Վարկերը և փոխատվությունները, ընդհանուր առմամբ, վերանայվում են կամ հաճախորդների հետ շարունակական փոխհարաբերությունների շրջանակներում կամ վարկառուի դրության անբարենպաստ փոփոխության արդյունքում: Վերջինի դեպքում, վերանայումը կարող է հանգեցնել մարման ժամկետի կամ մարման ժամանակացույցի երկարաձգման, համաձայն որի, Բանկն իրապես անբարենպաստ վիճակում գտնվող վարկառուներին առաջարկում է զեղչային տոկոսադրույքներ: Արդյունքում՝ տվյալ ակտիվը շարունակում է մնալ ժամկետանց և անհատապես արժեզրկված, ընդ որում՝ տոկոսի և մայր գումարի վճարումը թույլ չի տալիս վերականգնել ակտիվի սկզբնական հաշվեկշռային արժեքը: Այլ դեպքերում, վերանայումը կհանգեցնի նոր պայմանագրի ստորագրման, որն ըստ էության կդիտվի որպես նոր վարկ: 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված՝ վերանայված վարկերի հաշվեկշռային արժեքը կազմել է 2,087,513 հազար ՀՀ դրամ և 2,969,067 հազար ՀՀ դրամ, համապատասխանաբար:

Աշխարհագրական համակենտրոնացում

Բանկի ակտիվների և պարտավորությունների աշխարհագրական համակենտրոնացումը 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված է ստորև՝

	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
	Հայաստանի Հանրապետություն	Ոչ ՏՀԶԿ երկրներ	ՏՀԶԿ երկրներ	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	25,404,710	845,707	1,300,173	27,550,590
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	6,634,519	94,447	399,168	7,128,134
Հակադարձ հետգնման պայմանագրեր	832,166	-	-	832,166
Հաճախորդներին տրված վարկեր	59,171,497	-	3,743	59,175,240
<i>Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ</i>				
- Բանկի կողմից պահվող	336,260	-	1,953	338,213
- Հետգնման պայմանագրերով գրավադրված	8,527,788	-	-	8,527,788
Այլ ֆինանսական ակտիվներ	19,587	-	-	19,587
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	100,926,527	940,154	1,705,037	103,571,718

	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
	Հայաստանի Հանրապետություն	Ոչ ՏՀԶԿ երկրներ	ՏՀԶԿ երկրներ	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	19,407,684	2,237,335	709,436	22,354,455
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	27,244	-	27,019	54,263
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	2,599,300	873,412	1,674,863	5,147,575
Հակադարձ հետգնման պայմանագրեր	1,255,797	-	-	1,255,797
Հաճախորդներին տրված վարկեր	52,057,388	-	-	52,057,388
<i>Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ</i>				
- Բանկի կողմից պահվող	47,561	-	1,917	49,478
- Հետգնման պայմանագրերով գրավադրված	6,118,811	-	-	6,118,811
Այլ ֆինանսական ակտիվներ	34,678	-	-	34,678
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	81,548,463	3,110,747	2,413,235	87,072,445

Բանկի համար վարկային ռիսկ գոյացնող գործընկերները չունեն արտաքին վարկանշում: Բանկն օգտագործում է ներքին գործընթացներ և քաղաքականություն՝ գործընկերների վարկանշման և համապատասխան ռիսկի ախտորոշակը որոշելու համար:

Ռիսկի սահմանաչափերի վերահսկման և մեղմացման քաղաքականություններ

Բանկը կարգավորում է վարկային ռիսկի մակարդակները՝ մեկ վարկառուի կամ վարկառուների խմբի, ինչպես նաև վարկավորման ճյուղային կամ աշխարհագրական սեգմենտների գծով ընդունելի ռիսկի գումարների սահմանաչափեր սահմանելով:

Նման ռիսկերը պարբերաբար վերահսկվում են և դրանց կառավարումը ենթակա է վերանայման տարեկան կամ ավելի հաճախակի կտրվածքով: Ըստ արդյունաբերության ճյուղերի և երկրների վարկային ռիսկի սահմանաչափերը հաստատվում են Բանկի Խորհրդի կողմից:

Մեկ վարկառուի, ներառյալ ֆինանսական կազմակերպությունների գծով վարկային ռիսկի չափը նաև սահմանափակված է Բանկի Խորհրդի կողմից սահմանված լրացուցիչ սահմանաչափերով հաշվեկշռային և արտահաշվեկշռային ռիսկերի համար, ինչպես նաև առևտրային գործարքների, օրինակ՝ արտարժույթային ֆորվարդի պայմանագրերի, օրական սահմանաչափերով: Ընթացիկ ռիսկերի ենթարկվելու սահմանաչափերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Վարկային ռիսկը նաև կառավարվում է վարկառուների և հնարավոր վարկառուների՝ մայր գումարի և տոկոսների վճարման կարողությունը պարբերաբար վերլուծությունների և անհրաժեշտության դեպքում վարկի տրամադրման սահմանաչափերի փոփոխման միջոցով:

Ստորև ներկայացված են հատուկ հսկողության և մեղմիչ մի քանի այլ միջոցներ:

Գրավ

Բանկը կիրառում է բազմաթիվ միջոցներ պարտքային ռիսկը զսպելու համար: Համընդհանուր գործելակերպ է հանդիսանում և հիմնական միջոցներից մեկն է համարվում տրամադրված դրամական միջոցների դիմաց գրավ վերցնելը: Բանկը կանոններ է սահմանում գրավի հատուկ տեսակների ընդունելի լինելու կամ ռիսկերի զսպման վերաբերյալ: Վարկերի համար գրավի հիմնական տեսակներն են.

- հիպոթեքային պայմանագրերով գրավադրվող անշարժ գույք,
- կազմակերպությունների գործառնական ակտիվները՝ շենքերը, պաշարները և այլ հիմնական միջոցներ,
- ֆինանսական գործիքներ՝ պարտքային և բաժնային արժեթղթեր
- դրամական միջոցներ և ոսկյա իրեր

Կազմակերպությունների երկարաժամկետ ֆինանսավորումը և վարկավորումը հիմնականում ապահովվում են, ֆիզիկական անձանց գծով վերաձևակերպվող վարկային գծերը հիմնականում չեն ապահովվում: Ի լրումն, վարկային կորուստը նվազագույնի հասցնելու համար Բանկը վարկառուից լրացուցիչ երաշխիքներ է պահանջում, հենց որ համապատասխան անհատական վարկերի արժեզրկման հատկանիշներ են նկատվում:

Վարկերից տարբեր ֆինանսական ակտիվների ապահովման միջոց հանդիսացող գրավների տեսակները որոշվում են ֆինանսական գործիքի բնույթով: Հիմնականում ֆինանսական կազմակերպություններին, հատկապես բանկերին, վարկեր և կանխավճարներ տրամադրելու համար գրավներ չեն պահանջվում: Բացառություն են կազմում այն գրավները, որոնք ձեռք են բերվել հետգնման պայմանագրերի և արժեթղթերի փոխառության գործարքներից: Պարտատոմսերը և այլ պարտքային արժեթղթերը հիմնականում չեն ապահովվում:

Գրավի նախնական գնահատումը տեղի է ունենում վարկային հաստատման գործընթացի ընթացքում, երբ Բանկը հավաքում է տեղեկատվություն, որը հնարավորություն է տալիս կատարել հիմնավորված գնահատում: Գրավի առարկայի արժեքը այն գնահատված գումարն է, որով այն կարող է վաճառվել է գնահատման ամսաթվին՝ ճշգրտված արժեք՝ նվազեցմամբ: Արժեքի նվազեցմամբ չափվում է այն ռիսկը, որ Բանկը չի կարողանա վաճառել գրավի առարկան ակնկալվող շուկայական արժեքին հավասար գնով: Անշարժ գույքի և հիմնական միջոցների համար նման նվազեցումը սովորաբար տատանվում է շուկայական արժեքի 20%-ից 40%-ի միջակայքում: Ղեկավարությունն իրականացնում է գրավի շուկայական արժեքների մոնիտորինգ և պահանջում է ապահովման հավելյալ միջոց՝ հիմնական համաձայնագրին համապատասխան, ինչպես նաև հետևում է ստացված ապահովման միջոցների շուկայական արժեքին՝ վարկի արժեզրկման պահուստի բավարարության ստուգման ընթացքում:

Համախառն վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ ապահովվածության.

	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարկերի ապահովվածություն՝		
Անշարժ գույքի գրավով	29,406,054	24,732,809
Երաշխիքով	8,072,116	6,834,411
Ոսկու գրավով	6,066,610	5,736,340
Փոխադրամիջոցներով (մեքենաներով)	4,914,298	6,313,328
Կանխիկով	723,813	782,624
Պաշարների գրավով	144,029	299,751
Սարքավորումներով	51,437	39,027
Ոսկու ստանդարտացված ձուլակտորներով	336	19,985
Այլ գրավով	24,396	4,096
Չապահովված վարկեր	10,774,542	8,031,575
	60,177,631	52,793,946
Նվազեցված՝ արժեզրկման կորուստների պահուստը	(1,002,391)	(736,558)
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	59,175,240	52,057,388

Վերը նշված աղյուսակում ներկայացված արժեքները վարկերի հաշվեկշռային արժեքներն են, և պարտադիր չէ, որ ներկայացնեն գրավների իրական արժեքը: Գրավների շուկայական արժեքների գնահատումները հիմնված են գրավի գնահատման վրա ըստ տրամադրված վարկերի ամսաթվի: Հիմնականում դրանք չեն թարմացվում մինչև վարկերը չգնահատվեն որպես անհատապես արժեզրկված:

Վարկերին առնչվող պայմանական պարտավորություններ

Այս գործիքների հիմնական նպատակը անհրաժեշտության դեպքում հաճախորդներին միջոցներ տրամադրելն է: Երաշխիքները և ակրեդիտիվները ենթակա են նույն պարտքային ռիսկին, ինչ վարկերը: Ապրանքային և թղթային ակրեդիտիվները՝ Բանկի գրավոր հավաստումներն են հաճախորդների անունից, որոնք թույլ են տալիս երրորդ անձանց գումարներ ստանալ բանկից հատուկ պայմանների կատարման դեպքում, ապահովված են դրանց հետ կապված ապրանքների առաքմամբ և հետևաբար դրանք ավելի ապահով են, քան ուղղակի տրամադրվող վարկերը: Վարկի տրամադրման պայմանական պարտավորություններն իրենցից ներկայացնում են վարկային գծերի չօգտագործած մասերը:

Սակայն հնարավոր վնասի իրական գումարն ավելի փոքր է, քան չօգտագործված վարկային գծերի ընդհանուր գումարը, քանի որ վարկային պարտավորությունները տրամադրվում են վարկառուների կողմից վարկերի տրամադրման որոշակի ստանդարտների պահպանման դեպքում: Բանկը հետևում է պարտավորությունների մարման ժամկետներին, քանի որ երկարաժամկետ պարտավորությունները պարունակում են ավելի բարձր վարկային ռիսկ, քան կարճաժամկետ պարտավորությունները:

Արժեզրկում և պահուստավորման քաղաքականություն

Վարկերի արժեզրկման գնահատման հիմնական հատկանիշներն են մայր գումարի կամ տոկոսների վճարումների 90 օրից ավել ուշացումները, վարկառուների դրամական հոսքերի հետ կապված դժվարությունները, վարկային ռեյտինգների նվազումները, պայմանագրերի նախնական պայմանների խախտումները: Արժեզրկման գնահատումը կատարվում է անհատապես և խմբային եղանակով:

Արժեզրկման գծով պահուստի անհատական գնահատում

Բանկը որոշում է յուրաքանչյուր անհատապես նշանակալի վարկի համապատասխան պահուստի չափը անհատական հիմքով: Պահուստի գումարի որոշման ժամանակ հաշվի առնվող գործոններից են վարկառուի բիզնես ծրագրի վստահելիությունը, ֆինանսական դժվարությունները հաղթահարելու կարողությունը, ծրագրված հասույթները և սպասվող շահաբաժինների վճարումները անվճարունակության դեպքում, այլ ֆինանսական օգնության հնարավորությունը, գրավի իրացվելի արժեքը, սպասվող դրամական հոսքերի ժամկետները: Արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, եթե չկանխատեսված հանգամանքները չեն պահանջում հատուկ ուշադրություն:

Արժեզրկման գծով պահուստի խմբային գնահատում

Խմբային գնահատումը կատարվում է ոչ նշանակալի վարկերի գծով (ներառյալ վարկային քարտերը, հիպոթեքները և չապահովված սպառողական վարկերը), ինչպես նաև անհատապես նշանակալի վարկերի գծով, որոնց համար դեռ չկան արժեզրկման ակնհայտ հատկանիշներ: Արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսվա դրությամբ՝ դասակարգված յուրաքանչյուր խմբի համար առանձին: Խմբային գնահատումը հաշվի է առնում այն արժեզրկման գումարը, որը հնարավոր է առաջանալ պորտֆելում, նույնիսկ եթե անհատական գնահատման մեջ արժեզրկման օբյեկտիվ վկայություն չկա:

Արժեզրկման կորուստները գնահատվում են հաշվի առնելով հետևյալ տեղեկատվությունը՝ պորտֆելում կորուստների պատմությունը, ընթացիկ տնտեսական իրավիճակը, կորուստն առաջանալու և որպես անհատապես արժեզրկված վարկ բացահայտվելու մոտավոր ժամկետը, արժեզրկման դեպքում սպասվող վճարումները:

Ֆինանսական երաշխիքների և ակրեդիտիվների արժեզրկման գնահատումը և պահուստավորումն իրականացվում է նույն կերպ՝ ինչ վարկերին:

Բանկն իրականացնում է բազմաթիվ գործարքներ, որոնց պայմանագրային կողմերը չեն վարկանշված միջազգային վարկանիշային գործակալությունների կողմից: Ֆինանսական ակտիվների վարկային որակը կառավարվում է Բանկի ներքին վարկանիշների համաձայն:

Բանկի կողմից մշակվել է վարկառուների վարկանշման մեթոդաբանություն՝ կորպորատիվ վարկառուների վարկանիշերը գնահատելու նպատակով: Այս մեթոդը թույլ է տալիս հաշվարկել և շնորհել/հաստատել վարկառուի վարկանիշը և վարկի դիմաց գրավի վարկանիշը: Համակարգը հիմնված է սքորինգային մոդելի վրա՝ պայմանավորված փոխառուի հիմնական կատարողական ցուցանիշներով, որոշված ուղենիշների անբավարար օբյեկտիվության դեպքում աննշան փորձագիտական ճշգրտումների հնարավորությամբ: Այս մեթոդը ապահովում է վարկանիշի շնորհում հետևյալ չափանիշների խմբերի հիման վրա. փոխառուի շուկայական ցուցանիշները, գույքիլը, վարկային պատմությունը, տեղեկատվության թափանցիկությունը և վստահելիությունը, բիզնեսի և գործարար միջավայրի վերաբերյալ տեղեկատվությունը, Բանկի և վարկառուի հարաբերությունները, վարկառուի ֆինանսական վիճակը, ձեռնարկատիրական գործունեությունը և տրամադրված գրավը: Ֆինանսական վիճակը և ձեռնարկատիրական գործունեությունը ամենակարևոր չափանիշներն են: Հետևաբար, սքորինգի մոդելը նախատեսում է վարկառուի և վարկի ընդհանուր գնահատման մոտեցում:

Վարկառուի սքորինգային գնահատման մոդելը մշակվել է Բանկի կողմից՝ փոքր և միջին բիզնեսի վարկերի գնահատման և որոշումների կայացման նպատակով: Սքորինգային մոդելը մշակվել է ստանդարտ վարկատեսակների համար և ներառում է վարկառուների հիմնական ցուցանիշները, ինչպիսիք են՝ ֆինանսական վիճակը, վարկառուի հետ հարաբերությունները, կառավարման որակը, նպատակային օգտագործումը, գտնվելու վայրը, վարկային պատմությունը, գրավը, և այլն:

Վարկառուի չափորոշիչների վրա հիմնված սքորինգային գնահատումը վարկավորման որոշումների կայացման գործընթացի հիմնական գործոններից մեկն է:

Անհատ վարկառուների գնահատման մեթոդաբանությունը հիմնված է հետևյալ չափանիշների վրա՝ կրթական մակարդակը, զբաղվածությունը, ֆինանսական վիճակը, վարկային պատմությունը, վարկառուին սեփականության իրավունքով պատկանող գույքը: Ձեռք բերված տեղեկությունների հիման վրա հաշվարկվում է վարկի առավելագույն սահմանաչափը: Վարկի առավելագույն սահմանաչափը հաշվարկվում է՝ կիրառելով վարկառուի պարտքային ծանրաբեռնվածության հարաբերակցությունը:

Բանկը կիրառում է ներքին մեթոդաբանություններ որոշակի կորպորատիվ վարկերի և մանրածախ վարկերի խմբերի համար: Այս սքորինգային մեթոդները են մշակված են կոնկրետ վարկատեսակների համար և կիրառվում են վարկի ընթացքի տարբեր փուլերում: Որպես հետևանք, հնարավոր չէ կատարել վարկատեսակների խաչաձև սքորինգային համեմատություն, որը կհամապատասխաներ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաճախորդների վարկերի մնացորդին: Այդպիսով, ավելի մանրամասն տեղեկատվություն չի ներկայացվում:

Ատորն ներկայացված են հաճախորդներին տրված վարկերը, որոնք, ըստ գործընկերների կողմից խախտումների ցուցանիշների վերաբերյալ պատմական տվյալների, չեն համարվում ժամկետանց կամ արժեզրկված:

	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Սպառողական	0.32%	0.10%
Առևտուր	-	0.23%
Արտադրություն	-	-
Շինարարություն	-	-
Հիփոթեքային	-	-
Գյուղատնտեսություն	0.06%	0.07%
Այլ ոլորտներ	0.13%	0.05%

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված վարկերին վերաբերող տողերին համապատասխան վարկերի որակական վերլուծությունն ըստ վարկերի դասերի ներկայացված է Ծան. 16-ում:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հաճախորդներին տրված վարկերի, գնահատվում են ըստ միջազգային վարկանիշային գործակալությունների կողմից տրված ընթացիկ վարկանիշերի, եթե դրանք առկա են:

2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկում մնացորդները կազմել են համապատասխանաբար 19,186,328 հազար ՀՀ դրամ և 15,207,991 հազար ՀՀ դրամ: 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վաճառքի համար մատչելի ակտիվների մնացորդները, որոնք իրենցից ներկայացնում են ՀՀ ֆինանսների նախարարության պետական գանձապետական պարտատուներ, կազմել են համապատասխանաբար 8,328,782 հազար ՀՀ դրամ և 5,824,469 հազար ՀՀ դրամ: Հայաստանի Հանրապետությանը միջազգային վարկանիշային գործակալությունների կողմից տրված վարկանիշային գնահատականը համապատասխանում է BB- վարկանիշին:

Ժամկետանց, սակայն չարժեզրկված վարկեր

Ժամկետանց են համարվում այն վարկերը, որոնց գծով վճարումներն ուշացված են միայն մի քանի օրով: Ժամկետանց վարկերի հիմնական մասը չի համարվում արժեզրկված: Ժամկետանց, սակայն անհատապես չարժեզրկված վարկերի ժամկետանց օրերի վերլուծությունն ըստ դասերի ներկայացվում է Ծան. 16-ում:

Անհատապես արժեզրկված վարկեր

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մինչև անհատապես գնահատված արժեզրկման պահուստներով զտելը հաճախորդներին տրամադրված անհատապես արժեզրկված վարկերը կազմում են 647,120 հազար ՀՀ դրամ (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 117,957 հազար ՀՀ դրամ): Տես՝ ծան. 16: Տարվա ընթացքում արժեզրկված վարկերի գծով հաշվեզրկված տոկոսը կազմում է 87,039 հազար դրամ:

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ Բանկի շահույթները կամ կապիտալը կամ նրա՝ իր գործունեության նպատակներին հասնելու կարողությունը կվատթարանան շուկայական տոկոսադրույքներում և գներում փոփոխությունների կամ դրանց անկայունության պատճառով: Շուկայական ռիսկն ընդգրկում է տոկոսադրույքի և արժույթային ռիսկերը: Փոփոխություններ տեղի չեն ունեցել Բանկի ռիսկերի գնահատման մոտեցումներում կամ ռիսկի աստիճանում, ինչպես նաև ռիսկերի կառավարման և չափման մեթոդներում:

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը շուկայական տոկոսադրույքների փոփոխման բացասական ազդեցության հնարավորությունն է Բանկի գուտ տոկոսային եկամտի կամ կապիտալի տնտեսական արժեքի վրա: Տոկոսադրույքի ռիսկը ծագում է Բանկի ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքերի և նրանց իրական արժեքի վրա տոկոսադրույքների փոփոխությունների ուղղակի ազդեցության հնարավորությունից: Բանկի Տնօրենների Խորհուրդը սահմանել է տոկոսադրույքների միջև տարբերությունների սահմանաչափ ժամկետային կտրվածքով: Դիրքերը վերահսկվում են և հեջավորման ռազամավարություն է օգտագործվում դրանց ռիսկայնությունը ընդունելի շրջանակներում պահելու համար:

Գնային ռիսկ

Գնային ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքի արժեքը կտատանվի շուկայական գների փոփոխության արդյունքում անկախ նրանից, թե փոփոխությունները հետևանք են առանձին արժեթղթին կամ դրա թողարկողին յուրահատուկ գործոնների, թե շուկայում շրջանառվող բոլոր արժեթղթերի վրա ազդող գործոնների: Բանկը ենթարկվում է իր ապրանքների կամ ծառայությունների շուկայական գների փոփոխության ռիսկին, որոնք ենթակա են թե՛ ընդհանուր և թե՛ յուրահատուկ շուկայական տատանումների:

Բանկը կառավարում է գնային ռիսկը այն պոտենցիալ կորուստների պարբերաբար գնահատման միջոցով, որոնք կարող են առաջանալ շուկայական պայմանների անբարենպաստ փոփոխություններից, ինչպես նաև սահմանելով և պահպանելով համապատասխան վնասների կանխարգելման սահմանաչափեր և միջակայքերի (մարժաներ) և գրավի պահանջներ: Բանկի չտրամադրված վարկային պարտավորվածությունների գծով հնարավոր վնասների գումարը հավասար է այդ պարտավորվածությունների ընդհանուր գումարին: Այնուամենայնիվ, վնասի հավանական գումարը ավելի փոքր է քան այդ գումարը, քանի որ պարտավորվածությունների մեծ մասը պայմանական են՝ կախված մի շարք պայմաններից, որոնք սահմանված են վարկային պայմանագրերում:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս զուտ տոկոսային եկամտի և կապիտալի զգայունությունը տոկոսադրույքների հնարավոր փոփոխությունների նկատմամբ՝ շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի մասին հաշվետվությունում, այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով: Շահույթի կամ վնասի զգայունությունը տոկոսադրույքներում ենթադրվող փոփոխությունների ազդեցությունն է մեկ տարվա զուտ տոկոսային եկամտի և կապիտալի վրա՝ 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեկշռում հաշվառվող լողացող տոկոսադրույքով ոչ առևտրային ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով: Կապիտալի զգայունությունը վերլուծվում է ըստ ակտիվի կամ սվոփի իրացման ժամկետների: Կապիտալի ընդհանուր զգայունության և ըստ գործիքների մարման ժամկետայնության վերլուծությունը հիմնված է եկամտաբերության կորիի զուգահեռ տեղաշարժի ենթադրության վրա:

Արժույթ	Փոփոխություններ հիմնական տոկոսադրույքներում	2015թ. Զուտ տոկոսային եկամտի զգայունություն	Կապիտալի զգայունություն	Ընդամենը
ՀՀ դրամ	100	-	(256,885)	(256,885)
ԱՄՆ դոլար	100	(19,963)	-	(19,963)
ՀՀ դրամ	(100)	-	272,936	272,936
ԱՄՆ դոլար	(100)	19,963	-	19,963

Արժույթ	Փոփոխություններ հիմնական տոկոսադրույքներում	2014թ. Զուտ տոկոսային եկամտի զգայունություն	Կապիտալի զգայունություն	Ընդամենը
ՀՀ դրամ	100	-	(221,152)	(221,152)
ԱՄՆ դոլար	100	(14,109)	-	(14,109)
ՀՀ դրամ	(100)	-	240,407	240,407
ԱՄՆ դոլար	(100)	14,109	-	14,109

Արժույթային ռիսկ

Արժույթային ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքներում փոփոխությունների հետևանքով: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով, և հեջավորման ռազմավարություն է օգտագործվում դիրքերը սահմանված շրջանակներում պահելու համար: Հետևյալ աղյուսակները ցույց են տալիս այն արտարժույթները, որոնք կարող են ազդել 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների և դրանց կանխատեսված դրամական հոսքերի վրա:

Արտարժույթի փոխարժեքի գծով ռիսկի ազդեցությունը Բանկի վրա առ 31 դեկտեմբերի 2015թ. ներկայացված է ստորև բերված աղյուսակում՝

	<u>ՀՀ դրամ</u>	<u>ԱՄՆ դոլար</u>	<u>Եվրո</u>	<u>Ռուբլի</u>	<u>Այլ արժույթ</u>	<u>Ընդամենը</u>
Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	14,417,058	9,306,138	3,108,108	540,069	179,217	27,550,590
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	2,840,823	4,084,566	34,894	167,851	-	7,128,134
Հակադարձ հետգնման պայմանագրեր	832,166	-	-	-	-	832,166
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	26,866,343	31,874,375	434,522	-	-	59,175,240
<i>Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ</i>						-
- Բանկի կողմից պահվող	338,213	-	-	-	-	338,213
- Հետգնման պայմանագրերով գրավադրված	8,527,788	-	-	-	-	8,527,788
Այլ ֆինանսական ակտիվներ	13,597	3,379	2,608	3	-	19,587
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ	53,835,988	45,268,458	3,580,132	707,923	179,217	103,571,718
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Հետգնման պայմանագրեր	9,104,678					9,104,678
ՀՀ Կենտրոնական բանկից և ՀՀ կառավարությունից ստացված վարկեր	2,764,173	-	-	-	-	2,764,173
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	3,275,224	7,420,105	430,097	60,120	56	11,185,602
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր	1,001,202	1,996,348	-	-	-	2,997,550
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	23,293,409	34,834,003	3,150,624	652,650	43,301	61,973,987
Այլ ֆինանսական պարտավորություններ	157,143	120,210	3,188	38,846	21	319,408
Ստորադաս փոխառություններ	2,722,784	1,702,820	-	-	-	4,425,604
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	42,318,613	46,073,486	3,583,909	751,616	43,378	92,771,002
Հաշվեկշռային բաց դիրք	11,517,375	(805,028)	(3,777)	(43,693)	135,839	10,800,716
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ						
Համախառն մարվող արժույթային սվոփեր	725,625	(726,318)	-	-	-	(693)
Բաց դիրք	12,243,000	(1,531,346)	(3,777)	(43,693)	135,839	10,800,023

Արտարժույթի փոխարժեքի գծով ռիսկի ազդեցությունը Բանկի վրա առ 31 դեկտեմբերի 2014թ. ներկայացված է ստորև բերված աղյուսակում՝

	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Ռուբլի	Այլ արժույթ	Ընդամենը
Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	9,659,935	8,519,335	3,115,780	822,258	237,147	22,354,455
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1,656,573	3,080,372	10,911	399,719	-	5,147,575
Հակադարձ հետգնման պայմանագրեր	1,255,797	-	-	-	-	1,255,797
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	29,113,120	22,314,671	629,597	-	-	52,057,388
<i>Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ</i>						
- Բանկի կողմից պահվող	49,478	-	-	-	-	49,478
- Հետգնման պայմանագրերով գրավադրված	6,118,811	-	-	-	-	6,118,811
Այլ ֆինանսական ակտիվներ	19,915	11,799	2,946	18	-	34,678
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ	47,873,629	33,926,177	3,759,234	1,221,995	237,147	87,018,182
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Հետգնման պայմանագրեր	7,215,899	-	-	-	-	7,215,899
ՀՀ Կենտրոնական բանկից և ՀՀ կառավարությունից ստացված վարկեր	2,420,521	-	-	-	-	2,420,521
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	2,824,804	5,993,765	737,215	44,591	1,098	9,601,473
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր	1,665,466	1,239,547	171,390	-	-	3,076,403
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	24,636,297	27,136,273	5,167,958	454,159	130,616	57,525,303
Այլ ֆինանսական պարտավորություններ	111,906	41,425	2,956	126,189	23	282,499
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	38,874,893	34,411,010	6,079,519	624,939	131,737	80,122,098
Հաշվեկշռային բաց դիրք	8,998,736	(484,833)	(2,320,285)	597,056	105,410	6,896,084
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ						
Համախառն մարվող արժույթային սվոփեր	(1,397,666)	(327,159)	2,309,880	(550,451)	-	34,604
Բաց դիրք	7,601,070	(811,992)	(10,405)	46,605	105,410	6,930,688

Արտարժույթի ռիսկի զգայունություն

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է Բանկի զգայունությունը ՀՀ դրամի՝ ԱՄՆ դոլարի, Եվրոյի, Ռուբլու փոխարժեքի 10% աճի կամ նվազման հանդեպ: Տվյալ 10%-ն իրենից ներկայացնում է այն զգայունության տոկոսը, որն օգտագործվում է արտարժույթային ռիսկը հիմնական ղեկավար անձնակազմին ներկայացնելիս և իրենից ներկայացնում է արտարժույթի փոխարժեքի ողջամտորեն հնարավոր փոփոխությունն ըստ ղեկավարության գնահատականի: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն վճարման ենթակա արտարժույթով գնանշված դրամական միավորները և ճշգրտում է դրանց փոխարկումը ժամանակաշրջանի վերջի դրությամբ՝ արտարժույթի փոխարժեքների 10% փոփոխության տեսանկյունից: Զգայունության վերլուծությունը ներառում է արտաքին վարկերը, որոնց դեպքում վարկի գնանշումը կատարված է վարկատուի կամ վարկառուի գործառնական արժույթից տարբեր արժույթով: Ստորև նշված դրական թիվը նշանակում է շահույթի կամ կապիտալի տարրի աճ այն դեպքերում, երբ ՀՀ դրամն արժևորվում է ԱՄՆ դոլարի, Եվրոյի, Ռուբլու նկատմամբ 10%-ի չափով:

	Փոխարժեքի փոփոխություն	2015թ.		Փոխարժեքի փոփոխություն	2014թ.	
		Ազդեցություն շահույթի վրա նախքան հարկումը			Ազդեցություն շահույթի վրա նախքան հարկումը	
		Արժևորում	Արժեզրկում		Արժևորում	Արժեզրկում
ԱՄՆ դոլար	10%	153,135	(153,135)	10%	81,199	(81,199)
Եվրո	10%	378	(378)	10%	1,040	(1,040)
ՌԴ ռուբլի	10%	4,369	(4,369)	10%	(4,660)	4,660

Զգայունության վերլուծության սահմանափակումները: Վերևում բերված աղյուսակում բերված է առանցքային ենթադրության փոփոխության ազդեցությունը այլ ենթադրությունների անփոփոխ պայմանների դեպքում: Իրականում ենթադրությունների, ինչպես նաև այլ գործոնների միջև գոյություն ունի փոխադարձ կապ: Հարկ է նաև նշել, որ այս զգայունությունները ոչ գծային են, և ավելի մեծ կամ փոքր ազդեցությունները չպետք է միջարկվեն (ինտերպոլացիա) կամ արտարկվեն (էքստրապոլացիա) այս արդյունքներից:

Զգայունության վերլուծությունում հաշվի չի առնվում այն հանգամանքը, որ Բանկի ակտիվները և պարտավորությունները ակտիվորեն կառավարվում են: Ի լրումն, Բանկի ներկայիս ֆինանսական դիրքը կարող է տարբեր լինել այն ժամանակ, երբ որևէ իրական շուկայական շարժ տեղի ունենա: Օրինակ, Բանկի ֆինանսական ռիսկերի կառավարման ռազմավարությունը նպատակ ունի կառավարելու շուկայական տատանումների ազդեցությանը ենթակա լինելը: Երբ ներդրումային շուկաներն անցնում են զանազան շեմային մակարդակներից, Բանկի ղեկավարության արձագանքը կարող է ներառել այնպիսի գործողություններ, ինչպիսիք են ներդրումների վաճառքը, ներդրումային պորտֆելի բաշխվածության փոփոխությունը և այլ կանխարգելիչ միջոցառումներ: Հետևաբար, ենթադրությունների իրական փոփոխության ազդեցությունը կարող է որևէ ազդեցություն չունենալ պարտավորությունների վրա, մինչդեռ ակտիվները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվառվում են շուկայական արժեքով: Այս հանգամանքներում, ակտիվների և պարտավորությունների տարբեր չափման հիմունքները կարող են հանգեցնել Բանկի կանոնադրական կապիտալի տատանումների:

Զգայունության վերլուծության այլ սահմանափակումները ներառում են հիպոթետիկ շուկայական շարժերի կիրառումը պոտենցիալ ռիսկերը ներկայացնելու նպատակով, որոնք ընդամենը ներկայացնում են Բանկի տեսակետը մոտակա ժամանակների շուկայական հնարավոր փոփոխությունների վերաբերյալ, որոնք չեն կարող կանխատեսվել որևէ հավաստիությամբ, ինչպես և այն ենթադրությունը, որ բոլոր տոկոսադրույքները շարժվում են համանմանորեն:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիությունը Բանկի ստանձնած պարտավորությունների ամբողջությամբ և սահմանված ժամկետներում կատարման հնարավորությունն է:

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Բանկն ի վիճակի չի լինի ժամանակին բավարարել իր պարտատերերի պահանջները բնականոն և արտասովոր պայմաններում: Այս ռիսկի գսպման նպատակով Բանկը ներգրավում է լրացուցիչ ֆինանսական միջոցներ, ի լրումն իր հիմնական ավանդային բազայի, կառավարում է ակտիվները հաշվի առնելով իրացվելիության ռիսկը և վերլուծում է ապագա դրամական հոսքերը և իրացվելիությունը օրական կտրվածքով: Սա ներառում է նաև սպասվելիք դրամական հոսքերի գնահատումները և բարձր իրացվելի գրավների հասանելիությունը, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորում ստանալու նպատակով:

Բանկը պահում է բարձր իրացվելի և դիվերսիֆիկացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում: Բացի այդ Բանկը ՀՀ կենտրոնական բանկում պահում է պահուստավորման նվազագույն պարտադիր ռեզերվը (տես ծանոթագրություն 14-ը): Իրացվելիության ռիսկը գնահատվում և կառավարվում է տարբեր հնարավոր սցենարների դեպքում՝ հաշվի առնելով սթրես գործոնները կապված շուկայի հետ ընդհանրապես և Բանկի հետ մասնավորապես:

Բանկի իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը, ֆինանսավորման արտակարգ իրավիճակների ծրագրի առկայությունը և վերահսկել իրացվելիության նորմատիվները կանոնակարգային պահանջներին համապատասխան: Բանկը հաշվարկում է իրացվելիության ցուցանիշները ՀՀ կենտրոնական Բանկի պահանջներին համապատասխան:

Ստորև ներկայացվում է 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ մարմանը մնացած ժամկետների համաձայն: Ցպահանջ վճարումները դասակարգված են այն ենթադրությամբ, որ վճարումը կպահանջվի անմիջապես: Սակայն Բանկի կարծիքով շատ հաճախորդներ անմիջապես վճարում չեն պահանջի, և աղյուսակը չի արտացոլում սպասվող դրամական հոսքերը Բանկի կողմից ավանդների պահպանման պատմությամբ: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները, բացի բաժնային գործիքներից, ներկայացված են ցպահանջ և պակաս քան մեկ ամիս կատեգորիաներում, քանի որ Բանկի ղեկավարությունը կարծում է, որ դրանք բարձր իրացվելի ակտիվներ են, որոնք կարող են վաճառվել ըստ պահանջի՝ ֆինանսական պարտավորությունների գծով դրամական միջոցների արտահոսքի պահանջն ապահովելու համար: Հաշվի առնելով Բանկի կողմից պայմանագրային պահանջների խախտումները փոխառու միջոցների մասով, Բանկը ստորև աղյուսակում 544,403 հազար ՀՀ դրամ գումարով դասակարգել է ցպահանջ փոխառու միջոց, սակայն ունի հաստատուն համոզվածություն առ այն, որ այս փոխառությունների գծով դրամական միջոցների հոսքերը տեղի կունենան համաձայն պայմանագրային պայմանների: Տարվա վերջից հետո Բանկը ստացել է զիջում այս խախտումների գծով:

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-3 ամիս	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			Ավելի քան 5 տարի	Ընդամենը 1 տարուց ավել	Ընդամենը
			3 ամսից 1 տարի	Ընդամենը մինչև 1 տարի	1 -ից 5 տարի			
Ակտիվներ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	27,550,195	394	1	27,550,590	-	-	-	27,550,590
Պահանջներ ֆինանսական								
կազմակերպությունների նկատմամբ	2,877,192	194,699	2,418,814	5,490,705	-	1,637,429	1,637,429	7,128,134
Հակադարձ հետգնման պայմանագրեր	832,166	-	-	832,166	-	-	-	832,166
Հաճախորդներին տրված վարկեր	3,964,279	4,447,789	14,221,954	22,634,022	29,962,570	6,578,648	36,541,218	59,175,240
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ								
-Բանկի կողմից պահվող	-	-	-	-	-	338,213	338,213	338,213
-Հետգնման պայմանագրերով գրավադրված	8,527,788	-	-	8,527,788	-	-	-	8,527,788
Այլ ֆինանսական ակտիվներ	19,587	-	-	19,587	-	-	-	19,587
	43,771,207	4,642,882	16,640,769	65,054,858	29,962,570	8,554,290	38,516,860	103,571,718
Պարտավորություններ								
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական								
պարտավորություններ	693	-	-	693	-	-	-	693
Հետգնման պայմանագրեր	-	9,104,678	-	9,104,678	-	-	-	9,104,678
ՀՀ Կենտրոնական բանկից և ՀՀ								
կառավարությունից ստացված վարկեր	64,957	6,144	638,247	709,348	2,054,825	-	2,054,825	2,764,173
Պարտավորություններ ֆինանսական								
կազմակերպությունների նկատմամբ	1,735,271	3,095,874	4,805,349	9,636,494	1,260,095	289,013	1,549,108	11,185,602
Միջազգային ֆինանսական								
կազմակերպություններից ստացված վարկեր և ավանդներ	1,532,160	-	739,765	2,271,925	725,625	-	725,625	2,997,550
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	35,819,515	5,229,048	18,282,406	59,330,969	2,470,354	172,664	2,643,018	61,973,987
Այլ ֆինանսական պարտավորություններ	271,194	45,860	2,354	319,408	-	-	-	319,408
Ստորադաս փոխառություններ	32,479	-	-	32,479	-	4,393,125	4,393,125	4,425,604
	39,456,269	17,481,604	24,468,121	81,405,994	6,510,899	4,854,802	11,365,701	92,771,695
Զուտ դիրք	4,314,938	(12,838,722)	(7,827,352)	(16,351,136)	23,451,671	3,699,488	27,151,159	10,800,023
Կուտակային տարբերություն ակտիվների և պարտավորությունների միջև	4,314,938	(8,523,784)	(16,351,136)	(16,351,136)	7,100,535	10,800,023	10,800,023	

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-3 ամիս	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			Ավելի քան 5 տարի	Ընդամենը 1 տարուց ավել	Ընդամենը
			3 ամսից 1 տարի	Ընդամենը մինչև 1 տարի	1 -ից 5 տարի			
Ակտիվներ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	22,353,492	963	-	22,354,455	-	-	-	22,354,455
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	54,263	-	-	54,263	-	-	-	54,263
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	2,407,635	1,139,874	-	3,547,509	1,600,066	-	1,600,066	5,147,575
Հակադարձ հետգնման պայմանագրեր	1,255,797	-	-	1,255,797	-	-	-	1,255,797
Հաճախորդներին տրված վարկեր	3,458,020	4,821,430	12,658,676	20,938,126	24,866,295	6,252,967	31,119,262	52,057,388
<i>Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ</i>								
-Բանկի կողմից պահվող	-	-	-	-	-	49,478	49,478	49,478
-Հետգնման պայմանագրերով գրավադրված	6,118,811	-	-	6,118,811	-	-	-	6,118,811
Այլ ֆինանսական ակտիվներ	29,801	3,604	-	33,405	1,273	-	1,273	34,678
	35,677,819	5,965,871	12,658,676	54,302,366	26,467,634	6,302,445	32,720,601	87,072,445
Պարտավորություններ								
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	19,659	-	-	19,659	-	-	-	19,659
ՀՀ Կենտրոնական բանկից և ՀՀ կառավարությունից ստացված վարկեր	71,356	743	331,331	403,430	2,017,091	-	2,017,091	2,420,521
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1,259,481	1,832,909	5,114,529	8,206,919	1,138,767	255,787	1,394,554	9,601,473
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և ավանդներ	109,710	348,800	1,083,871	1,542,381	1,534,022	-	1,534,022	3,076,403
Հետգնման պայմանագրեր	7,215,899	-	-	7,215,899	-	-	-	7,215,899
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	30,700,857	7,482,667	18,146,028	56,329,552	1,042,984	152,767	1,195,751	57,525,303
Այլ ֆինանսական պարտավորություններ	274,441	5,132	2,926	282,499	-	-	-	282,499
	39,651,403	9,670,251	24,678,685	74,000,339	5,732,864	408,554	6,141,418	80,141,757
Զուտ դիրք	(3,973,584)	(3,704,380)	(12,020,009)	(19,697,973)	20,734,770	5,893,891	26,579,183	6,930,688
Կուտակային տարբերություն ակտիվների և պարտավորությունների միջև	(3,973,584)	(7,677,964)	(19,697,973)	(19,697,973)	1,036,797	6,930,688	6,930,688	

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Բանկի ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, հիմնվելով պայմանագրով նախատեսված՝ չգեղջված մարման պարտավորությունների վրա:

	Ցայահանջ և մինչև 1 ամիս	1-3 ամիս	3 ամսից 1 տարի	1 -ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Ընդամենը
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Հետգնման պայմանագրեր	18,713	9,104,678	-	-	-	9,123,391
ՀՀ Կենտրոնական բանկից և ՀՀ կառավարությունից ստացված վարկեր	83,657	43,499	795,859	2,365,473	-	3,288,488
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1,797,491	3,194,002	5,054,456	1,651,817	408,761	12,106,527
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և ավանդներ	1,572,663	-	823,516	823,516	-	3,219,695
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	36,007,266	5,587,319	19,180,156	2,626,491	220,642	63,621,874
Այլ ֆինանսական պարտավորություններ	273,690	45,860	2,354	-	-	321,904
Ստորադաս փոխառություններ	76,767	88,578	405,981	2,155,388	5,079,119	7,805,833
Ընդամենը չգեղջված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	39,830,247	18,063,936	26,262,322	9,622,685	5,708,522	99,487,712

Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ

Արտարժույթի սվոփ պայմանագրեր

Ներհոսք	727,625	-	-	-	-	725,625
Արտահոսք	(727,532)	-	-	-	-	(727,532)

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Բանկի ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, հիմնվելով պայմանագրով նախատեսված՝ չգեղջված մարման պարտավորությունների վրա:

	Ցայահանջ և 1 ամիս	1-3 ամիս	3 ամսից 1 տարի	1 -ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Ընդամենը
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
ՀՀ Կենտրոնական բանկից և ՀՀ կառավարությունից ստացված վարկեր	87,930	33,892	468,471	2,268,099	-	2,858,392
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1,310,826	1,908,622	5,296,074	1,484,619	341,607	10,341,748
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և ավանդներ	139,070	407,007	1,347,677	1,990,744	-	3,884,498
Հետգնման պայմանագրեր	7,259,344	-	-	-	-	7,259,344
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	30,878,959	7,804,329	18,983,993	1,207,930	199,334	59,074,545
Այլ ֆինանսական պարտավորություններ	282,499	-	-	-	-	282,499
Ընդամենը չգեղջված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	39,958,628	10,153,850	26,096,215	6,951,392	540,941	83,701,026

Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ

Արտարժույթի սվոփ պայմանագրեր

Ներհոսք	3,734,790	-	-	-	-	3,734,790
Արտահոսք	(3,697,140)	-	-	-	-	(3,697,140)

Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկն իրենից ներկայացնում է ուղղակի կամ անուղղակի կորուստների վտանգ, որն առաջանում է Բանկի կողմից ֆինանսական գործիքներում ներգրավվածությունից, այդ թվում՝ գործընթացների, տեխնոլոգիաների, ենթակառուցվածքների գծով, և արտաքին գործոնների ազդեցությամբ, բացի վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերից, մասնավորապես՝ իրավական և կանոնակարգային պահանջների արդյունքում առաջացող ռիսկերը և համընդհանուր ընդունված կորպորատիվ վարքագծի ստանդարտները:

Բանկի նպատակն է՝ կառավարել գործառնական ռիսկերն այնպես, որ ֆինանսական կորուստների և վնասի կանխարգելումը համահունչ լինի բանկի գործնական համբավի և ընդհանուր ծախսային արդյունավետության հետ:

Գործառնական ռիսկի կառավարման մեթոդների մշակման և գործընթացների իրականացման համար հիմնական պատասխանատվությունը կրում է բանկի գործադիր մարմինը: Այս պատասխանատվությունն ուղեկցվում է գործառնական ռիսկի կառավարման համընդհանուր չափանիշների մշակմամբ հետևյալ ոլորտներում՝

- պարտականությունների համապատասխան տարանջատման պահանջներ, այդ թվում գործարքների անկախ հաստատում,
- գործարքների համաձայնեցման և մոնիթորինգի պահանջներ,
- կարգավորիչ և այլ իրավական պահանջների համապատասխանեցում, ներառյալ ՀՀ ԿԲ ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ նվազագույն պահանջները,
- վերահսկողական մեխանիզմների և ընթացակարգերի փաստաթղթավորում,
- առաջացած գործառնական ռիսկերի պարբերաբար գնահատման պահանջներ, ինչպես նաև ռիսկերի կառավարմանն ուղղված ընթացակարգերի համապատասխանություն,
- գործառնական կորուստների զեկուցման պահանջներ և առաջարկվող մեղմացուցիչ գործողություններ,
- արտակարգ իրավիճակների ծրագրերի մշակում,
- վերապատրաստում և մասնագիտական զարգացում,
- էթիկայի և գործարար չափանիշներ,
- ռիսկերի մեղմացում:

Բանկի ստանդարտներին համապատասխանությունը ուղեկցվում է ներքին աուդիտի կողմից իրականացվող պարբերական դիտարկումներով: Ներքին աուդիտի դիտարկումների արդյունքները քննարկվում են Բանկի ղեկավարության այն ներկայացուցչի հետ, որին դրանք վերաբերում են: Դիտարկումների ամփոփագրերը ներկայացվում են Խորհրդին:

36. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

2016թ. մարտի 7-ին Բաժնետերերի Ընդհանուր Ժողովը որոշում է կայացրել Բանկի բաժնետիրական կապիտալի՝ 2,333,338 հազար ՀՀ դրամից մինչև 3,167,023 հազար ՀՀ դրամ մեծացման մասին, և համապատասխան փոփոխություն կատարել Բանկի կանոնադրության մեջ՝ նշված փոփոխությունն արտացոլելու համար: Թողարկվելիք բաժնետոմսերի գծով մինչ ժողովի գումարման ամսաթիվը ստացված միջոցները՝ 4,001,688 հազար ՀՀ դրամ, որոնք բաղկացած են թողարկվելիք 333,474 բաժնետոմսից՝ մեկ բաժնետոմսի դիմաց 2,500 դրամ արժեքով, ուղղվել են բաժնետիրական կապիտալի համալրմանը: Անվանական արժեքի (2,500 դրամ) և փաստացի ստացված վճարի (12,000 դրամ) միջև տարբերությունը ճանաչվել է որպես էմիսիոն եկամուտ՝ 3,168,003 հազար դրամ գումարով թողարկման ենթակա բաժնետոմսերի ընդհանուր քանակի դիմաց: 2016թ. մարտի 18-ին փոփոխված կանոնադրությունը հաստատվել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

2016թ. մարտի 18-ին Բաժնետերերի Ընդհանուր Ժողովը որոշում է կայացրել Բանկի՝ մեկ այլ բանկի հետ ակնկալվող միացման պայմանների և ժամկետների համաձայնեցման, ինչպես նաև այդ բանկի հետ Բանկի բաժնետոմսերի փոխանակման պայմանների շուրջ: Նաև համաձայնություն է ձեռք բերվել հաստատելու միացման պայմանագրի նախագիծը, որը դեռևս ենթակա է ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատման:

Ակնկալվող միացման ավարտը տեղի կունենա 2016թ.՝ պայմանով, որ ձեռք բերվեն կարգավորող մարմնի կողմից պահանջվող բոլոր հաստատումները:

2016թ. ապրիլի 4-ին Բանկը թողարկել է ստորադաս փոխառություն՝ 2,000,000 ԱՄՆ դոլար անվանական գումարով՝ իր վերջնական վերահսկողի՝ Սուքիասյան ընտանիքի անդամներին: Ստորադաս փոխառության անվանական և արդյունավետ տոկոսադրույքն է՝ 10.5%, և այն ենթակա է մարման 7 տարում: Ստացված մուտքերն ուղղվել են Բանկի կապիտալի կայունացմանը և ներառված են Բանկի կանոնակարգային կապիտալի կառուցվածքում որպես լրացուցիչ կապիտալ:

Սույն ֆինանսական հաշվետվությունների թողարկման ամսաթվի դրությամբ Բանկը բանակցություններ է վարում երրորդ բանկի հետ միացման վերաբերյալ: Հաշվի առնելով 2015թ. ընթացքում և տարեվերջին հաջորդած ժամանակահատվածում ձեռնարկված միջոցառումները, դեկլարությունը հաստատուն համոզվածություն ունի այն մասին, որ իրեն կհաջողվի սահմանված ամսաթվի դրությամբ համապատասխանություն ապահովել 30,000,000 հազար դրամի չափով կապիտալի գծով կանոնակարգային պահանջին: